
ՅՈՋԵՖ ԿԱՐՍՏ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2002

Սույն գիրքը նվիրում եմ
իմ հարգարժան ուսուցչին,
պրն. պրոֆեսոր դ-ր Հ. ՀՅՈՒԲՇՄԱՆԻՆ՝
երախտագիտության զգացումով
ՅՈՋԵՖ ԿԱՐՍ



Գիրքը հրատարակվել է
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

JOSEPH KARST

HISTORISCHE GRAMMATIK KILIKISCH - ARMENISCHEN

STRASBURG - 1901

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈԶԵՖ ԿԱՐՍՏ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գերմաներենից թարգմանեց՝
ԴՄԻՏՐԻ ԱԼԻԿՆՅԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2002

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Կ - 364

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Խմբագրական հանձնախումբ

Ռ.Մ. Մարտիրոսյան (նախագահ), Գ.Բ. Ջահուկյան,
Ա.Գ. Մադոյան, Պ.Գ. Ստեփանյան (քարտուղար)

Հրատարակության պատրաստեց և
խմբագրեց բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Ս. ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՅՈՉԵՖ ԿԱՐՍՏ

Կ - 364 Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, եր.: Երևանի համալս. հրատ., էջ 412, 2002:

Գերմանացի նշանավոր լեզվաբան-հայագետ Յոզեֆ Կարստի աշխատությունը բաղկացած է երկու հիմնական մասից. առաջինը նվիրված է հնչյունաբանությանը, երկրորդը՝ ձևաբանությանը: Այդ մասերում քննվում են կիլիկյան հայերենի հնչյունաբանության և ձևաբանության հետ կապված երևույթները՝ իրենց պատմական զարգացման մեջ, ինչպես և հավելվածում՝ ընդհանուր գծերով շարահյուսական առանձնահատկությունները:

3 $\frac{4602020100}{704\ (02)\ 02}$ 2002

ԳՄԴ 81.2Հ

ISBN 5-8084-0413-4

© ԴԻՏՈՒՐԻ ԱԼԻՎՆՅԱԿ, 2002 թ.

ՅՈՉԵՖ ԿԱՐՍՏԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1990 թվականին Հայաստանի Ազգային գրադարանում մեր ձեռքն ընկավ մի գիրք, որի վրա կար շատ ուշագրավ մի մակագրություն՝ «Ներկայ հատորի ընթերցումէն ետք, ինքզինքս աւելի հպարտ կ'զգամ հայ ըլլալուս»: Մակագրության հեղինակն անհայտ է, բայց նրա հպարտությունը՝ միանգամայն հասկանալի և օրինաչափ, քանի որ նրան բախտ էր վիճակվել կարդալու հայ ժողովրդի նախապատմության մութ էջերը լուսաբանող արտատպված մի գիրք՝ «Ակնարկներ բասկերի, իբերների և ցեղակից ժողովուրդների ծագման մասին» խորագրով:

Գրքի հեղինակը գերմանացի մեծ հայագետ Յոզեֆ Կարստն էր:

Կարստի թողած վիթխարի հայագիտական ժառանգությունը թույլ է տալիս նրա անունը դնել Հայնրիխ Հյուբշմանի և Անտուան Մեյեի անունների կողքին: Սակայն, ի տարբերություն իր երկու խոշորագույն ժամանակակիցների, Յոզեֆ Կարստն օժտված էր զուտ լեզվաբանական երևակայությամբ և մարդկային մեծ քաջությամբ: Նա չքայլեց տրորված ճանապարհով, չփորձեց հանուն դափնիների փառաբանել իրեն խորթ ու անհասկանալի տեսություններն ու մոտեցումները, այլ ստեղծեց *հայագիտության իր սեփական աշխարհը*, որը խորապես տարբերվում էր ավանդական պատկերացումներից: Ականավոր հայագետը շատ քանկ վճարեց իր խիզախության համար, ձեռք բերեց բազմաթիվ հակառակորդներ, արժանացավ ջախջախիչ քննադատության, բայց երբեք չշեղվեց իր որդեգրած մոտեցումներից: Նա քննադատություններն ընդունում էր աներևակայելի սառնասրտությամբ և լռելյայն շարունակում էր իր գործը՝ ներքուստ ապավինելով պատմության անաչառ գնահատանքին:

Յոզեֆ Կարստի կենսագրական տվյալները շատ սուղ են. ծնվել է 1871 թվականին, Լոթարինգիայի Քետրինգ քաղաքում: Սկզբնապես սովորել է տեղի դպրոցում, իսկ 1892 թվականից ուսումը շարունակել է Ստրասբուրգի համալսարանում՝ աշակերտելով Հայնրիխ Հյուբշմանին: Հետագայում, պաշտպանելով դոկտորական թեզ, Կարստը դասախոսի պաշտոն է ստանձնում Ստրասբուրգի համալսարանում և դառնում պրոֆեսոր:

Բավական մշուշապատ է Յոզեֆ Կարստի կյանքի վերջին շրջանը: Հայտնի չէ անգամ նրա մահվան ստույգ թվականը: «Հայկական սովետական հանրագիտարանը» և «Հայերենագիտական բառարանը» նշում են

1941 թվականը, որը, սակայն, իրականությանը չի համապատասխանում: Բոլորովին վերջերս Կարստի աշակերտներից մեկը՝ Հայր Սահակ Քեշիշյանը, մեզ հանձնեց մի շարք ուշագրավ փաստաթղթեր, այդ թվում նաև՝ Կարստի ինքնագիր նամակները, որոնցից մեկի վրա նշված է ամսաթիվը՝ 10. 03. 1948: Ըստ Սահակ Քեշիշյանի ունեցած տեղեկությունների, Կարստը վախճանվել է 1962 թվականին, թեև փաստացի ապացույցներ առայժմ չկան:

Ցավոք սրտի, կցկտուր են նաև Կարստի աշխատությունների վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները: Բավական է ասել, որ մինչև օրս գոյություն չունի նրա աշխատությունների փոքրիշատե ամբողջական մատենագիտական ցանկ, որի նշանակությունը դժվար է գերագնահատել:

Հայագիտական շրջանակներին հայտնի են գերազանցապես հայ իրավունքին և միջին հայերենին նվիրված աշխատությունները, որոնցից առավել արժեքավորներն են՝ «Կիլիկյան հայերենի արտասանությունն ու ձայնավորները» (1899), «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» (1901), «Ակնարկ հայ իրավունքի պատմության» (1905-1906) ուսումնասիրությունները: Սակայն Կարստի գիտական գործունեությունը չի սահմանափակվել այդ երկու խնդիրներով: Վերը հիշատակված նամակում Յոզեֆ Կարստը ներկայացնում է իր հրատարակած և հրատարակության պատրաստ երկերի ցանկը, որը պարունակում է շուրջ երեք տասնյակ մենագրություն: Վերջիններիս թվում առանձնանում են հատկապես հայ-բասկյան ցեղակցությանն առնչվող աշխատությունները, որոնցից հիշատակելի են՝ «Ալարոդներ և նախաբասկեր» (1928), «Հայ բանասիրության պատմություն» (1930), «Ակնարկ բասկերի, իբերների և ցեղակից ժողովուրդների ծագման մասին» (1954), «Լիգուրները» (1930), «Հայ-կովկասյան և խեթա-ասիանիկ առասպելաբանություն» (1948) մենագրությունները:

Յոզեֆ Կարստը առաջին հայագետն էր, որը գերազանց տիրապետում էր հայերենին ու բասկերենին և հնարավորություն ուներ նկատելու և գնահատելու երկու լեզուների միջև առկա ընդհանրությունները: Բացի այդ, Կարստը միակ հայագետն էր, որը քաջ ծանոթ էր և՛ հայագիտական, և՛ բասկագիտական սկզբնաղբյուրներին: Ըստ էության, Կարստի շնորհիվ հայագիտությունը ուղղակի շփման մեջ մտավ բասկագիտության հետ, ճանաչեց խոշորագույն բասկագետներ Ասկուեին, Գավելին, Սալաբեռիին, իսկ բասկերն իրենց հերթին տեղեկություններ ստացան Հյուբշմանի, Մեյեի, Աճառյանի և այլ հայագետների աշխատությունների մասին:

Դժբախտաբար, Կարստի հայագիտական-բասկագիտական ուսումնասիրություններն արժանացան մի շարք հեղինակավոր հայագետների խիստ և միակողմանի քննադատությանը, որի հետևանքով տևական ժամանակ դուրս մղվեցին գիտական շրջանառությունից: Եվ միայն 1993 թվականին, երբ Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնում բացվեց «Հայ-բասկյան առնչություններ» թեման և սկսվեց հայերի ու բաս-

կերի ցեղակցության վարկածի գիտական ուսումնասիրությունը, Կարստի աշխատությունները ստացան նոր հնչեղություն և դարձան հայագիտական այդ կարևորագույն հարցի հիմնական սկզբնաղբյուրները:

Յոզեֆ Կարստը շոշափելի ներդրում ունի նաև կովկասագիտության ասպարեզում: Այդ են վկայում, մասնավորապես, «Վրաց քրիստոնեական գրականություն» (1934), «Այա-Կոլխիդան և հյուսիսային քամիտները» (1934), «Համառոտ ուրվագիծ վրաց դրամագիտության» (1938), «Իբերա-կովկասյան դատաստանագրքեր» (1938-39) և այլ աշխատությունները:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատությունը լույս է տեսել 1901 թվականին, Ստրասբուրգում, գերմաներեն: Ըստ էության, այս գրքում Կարստը քննության է առել միջին հայերենի կազմավորման պատմությունն ու տվել դրա ամբողջական նկարագրությունը: Ժամանակագրական առումով միջին հայերենն ընդգրկում է 12-16-րդ դարերը, բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով և ներկայացված է բազմաթիվ գրավոր հուշարձաններով:

Ինչ խոսք, ձեռքի տակ ունենալով Կարստի գիրքը, այլև միջին հայերենին վերաբերող բազմաթիվ այլ աշխատություններ՝ ընթերցողը կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ հայոց լեզվի զարգացման այդ փուլի մասին, և մենք ամենևին նպատակ չունենք խորանալ գրքի բովանդակության մանրամասների մեջ: Սակայն կա մի հարց՝ միջին հայերենի ձևավորման հանգուցային խնդիրներից մեկը, որը դեռևս պատշաճ բացատրություն չի ստացել, ուստի, օգտվելով առիթից, կցանկանայինք ներկայացնել մի քանի համառոտ նկատառում:

Միջին հայերենի առավել բնորոշ ձևաբանական հատկանիշներից է ներկայի կազմության *կու* մասնիկը՝ *կու տամ, կու բերեմ* և այլն, որը, ըստ ավանդական պատկերացումների, գոյություն չի ունեցել գրաբարում և առաջին անգամ վկայվել է 12-րդ դարում, Մխիթար Հերացու երկերում: Հետագա ժամանակաշրջանում *կու* մասնիկը աստիճանաբար տարածվում է հայերենի բոլոր բարբառներում՝ առաջ բերելով ձևաբանական կարգի շատ լուրջ փոփոխություններ, որոնց հետևանքով նվազում է հասկանալիության աստիճանը գրաբարի և աշխարհաբարի միջև: Եվ պատահական չէ, որ Յոզեֆ Կարստն իր գրքում զգալի տեղ է հատկացրել այս կազմիչի քննությանը՝ այն համարելով գրաբարի և միջին հայերենի ձևաբանական սահմանագիծը:

Գոյություն ունեն *կու* մասնիկի ծագման վերաբերյալ ամենատարբեր կարծիքներ: Հետազոտողներից ոմանք (Մառ, Մուրվալյան) այդ կազմիչին վերագրել են կովկասյան ծագում, Այտընյանը և նրա հետևությամբ՝ Աճառյանը բխեցրել են *կայ+ու* կազմությունից՝ ենթադրելով *ա*-ի անկում: Մեր կարծիքով, այս և մնացած տեսակետները բավարար հիմնավորում չունեն և առաջ են բերում հնչյունական և գործառական կարգի անհաղթահարելի

դժվարություններ, բացի այդ, նշված փորձերը չեն կարողանում համոզիչ կերպով *գրաբարը կապել միջին հայերենի հետ*: Այստեղ հիմնական դժվարությունն այն է, որ անհրաժեշտ է հայտնաբերել գրաբարը միջին հայերենին կապող *միջակա օղակները*, այսինքն՝ *կու* մասնիկի հետքերը գրաբարում, և բացատրել ոչ միայն հնչյունական, այլև ձևաբանական զարգացման օրինաչափությունները:

Մեր կարծիքով, գրաբարից միջին հայերեն անցումը պետք է դիտարկվի հայոց լեզվի պատմական զարգացման ընդհանուր համապատկերի վրա՝ հաշվի առնելով նաև միջին հայերենից աշխարհաբար անցման առանձնահատկությունները: Այս հարցերի շուրջ շատ հետաքրքիր դիտողություններ ունի Հրաչյա Աճառյանը: Իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ խոսելով արևելյան աշխարհաբարի կազմավորման մասին՝ Աճառյանը գրում է հետևյալը. «... *-ում* մասնիկի գործածությամբ թեև բայական ձևերը պարզվեցին, բայց տեղ-տեղ երկդիմություն առաջացավ: Անպատեհությունն այն է, որ *-ում* ձևով ներկան (կամ անկատարը) ձևի նույնության պատճառով շփոթվում է նախ *-ում* ձևով ներգոյականի հետ և երկրորդ՝ *-ում* վերջավորությամբ գոյականների հետ... *-ում, -մամ, -նել* ձևերի կազմությունը նորանշան մի երևույթ էր հայերենի մեջ, դրանով խոնարհման դրությունը քայքայվեց և հոլովումը խոնարհում դարձավ» (հտ. 4, Բ, էջ 198-199): Ինչպես տեսնում ենք, Աճառյանը միանգամայն ճիշտ է բացատրել գրաբարից աշխարհաբար անցման հիմնական առանձնահատկությունները՝ դրանց պատճառը համարելով այն, որ *գրաբարի պարզ խոնարհման համակարգը փոխարինվել է հոլովման համակարգով*, կամ, ավելի ճիշտ՝ *խոնարհման համակարգում ներմուծվել են հոլովման տարրեր, այսինքն՝ տարածական հարաբերություններ արտահայտող հոլովական կազմիչները սկսել են արտահայտել ժամանակային հարաբերություններ:* Կարելի է ասել, որ *-ում* մասնիկը, որը ներգոյական հոլովի կազմիչն է, արևելյան աշխարհաբարում առաջացրել է նույնպիսի արմատական փոփոխություններ, որպիսիք միջին հայերենում առաջացրել է *կու* մասնիկը:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ խոնարհման քայքայումը կամ *խոնարհման համակարգում հոլովման տարրերի ներմուծումը* անընդհատ և շարունակական մի ընթացք է, որը բնորոշ է եղել հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերին:

Արդ՝ եթե արևելյան աշխարհաբարի խոնարհման առանցքը կազմող *-ում* վերջածանցը գրաբարի ներգոյական հոլովի կազմիչն է, ապա ո՞րտեղից է ծագում *կու* մասնիկը և ի՞նչ հոլովական հարաբերություն է արտահայտել գրաբարում:

Այս հարցերի պատասխանները տալիս են հայերեն բարբառներում պահպանված փաստերը:

Մինչև օրս հետազոտողները փորձել են *կու* մասնիկի հետքեր գտնել գրաբարում, սակայն կատարված որոնումները սահմանափակված են եղել

միայն *կու* մասնիկի նախադաս կիրառությամբ՝ անուշադրության մատնելով այն կարևոր հանգամանքը, որ *կու* մասնիկը գործածվում է ոչ միայն նախադաս դիրքում, այլև՝ հետադաս՝ *երթամ գը, ասեմ գը* և այլն, ուստի բացառված չէ, որ *կու* մասնիկը նախապես լինի գրաբարյան վերջածանց, հոլովական որևէ հարաբերություն արտահայտող կազմիչ, որը կարող էր անջատվել բառի հիմքից, գիտակցվել իբրև անկախ տարր և գործածվել նաև նախադաս դիրքում:

Այս նկատառումները հիմք են տալիս ենթադրելու, որ միջին հայերենի *կու* մասնիկը ծագումնաբանորեն կապված է գրաբարի *-կու* վերջածանցի հետ, որը վկայված է *յուժկու* և *յաղթկու* ածականներում: Գ. Ջահուկյանը *-կու* վերջածանցը նույնացնում է ածականակերտ *-ու* կազմիչի հետ (հմմտ. *հատու, կծու, քթու* ևն)՝ *-կ* ածականով (տե՛ս «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1998, էջ 28): Այս ստուգաբանությունը համոզիչ է՝ այն վերապահությամբ, որ ենթադրյալ *-կ* ածականը կարող էր ինչ-որ գործառություն ունենալ՝ կապված, թերևս, հոլովանջի հետ: Իսկ ինչ վերաբերում է ածականակերտ *-ու* վերջածանցին, ապա այն առանձին և ինքնուրույն ինչ-որ մասնիկ չէ, այլ՝ պարզապես՝ սեռական հոլովի *-ու* կազմիչը:

Մեր առաջ քաշած վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ գրաբարում մի շարք ածականներ բառավերջին ունեն *-կ* կամ *-գ* հնչյունը, ինչպես օրինակ՝ *բարկ, յիղկ, լերկ, ողորկ, մեղկ, եղկ, հեղգ, գիրգ* և այլն: Սրանք հնում կարող էին ենթարկվել *-ու* հոլովման և հետագայում անցնել *-ի* կամ *-ա* հոլովման: Այլ կերպ ասած, բերված ածականների նախնական ձևերը պետք է լինեին՝ **բարկու, *յիղկու, *լերկու, *ողորկու, *մեղկու, *եղկու, *հեղգու, *գիրգու*՝ կազմությամբ՝ համապատասխանելով *յուժկու* և *յաղթկու* ձևերին: Այս կառուցվածքները ոչ այլ ինչ են, քան՝ **բար-, *յիղ-, *լեր-, *ողոր, *մեղ-, *եղ-, *հեղ-, *գիր-, յաղթ, ուժ* արմատական տարրերի սեռական հոլովաձևերը:

Ասվածը հաստատենք մեկ օրինակով: Եթե *յաղթկու* «հաղթող, հաղթական» ածականը վերածենք բայի, ապա կստանանք **յաղթկուել* ձևը, որից էլ՝ **յաղթկուեմ* «հաղթեմ», իսկ միջին հայերենում և աշխարհաբարում ունենք *կու յաղթեմ* և *կիաղթեմ* ձևերը, որոնք վերականգնված **յաղթկուեմ* կառուցվածքից կտարբերվեն միայն *կու* մասնիկի դիրքով: Գրաբարին ավելի մոտ է *հաղթեմ գը* բարբառային տարբերակը, որում *կու* մասնիկը հետադաս է:

Գալով *կու* մասնիկի անջատմանը և ինքնուրույն գործածության ձեռք բերելուն, ապա դա շատ հեշտ է պատկերացնել շարույթում, քանի որ *յուժկու առնեմ* կազմությունը հեշտությամբ կարող էր վերածվել *կու առնեմ*-ի, որն էլ կդառնար *կ'առնեմ*:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ միջին հայերենի *կու* մասնիկը գալիս է գրաբարյան *-(կ)ու* սեռականի մասնիկից, որը անջատվելով բառահիմքից, ձեռք է բերել անկախ կիրառություն և վերածվել խոնարհման կազ-

միչի՝ տարածական հարաբերություններին գուգահեռ արտահայտելով նաև ժամանակային հարաբերություններ: Հենց սրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ սեռականի *կու* մասնիկը կազմում է նաև ապառնի ժամանակներ՝ *կգամ* «գալու եմ», *կասեի* «ասելու էի» և այլն, քանի որ ապառնիի մյուս ձևերը նույնպես կազմվում են անորոշ դերբայի սեռական հոլովաձևով՝ *գնալու եմ* «կգնամ», *ասելու էի* «կասեի» և այլն:

Դառնանք կրկին Կարստի աշխատությանը:

Կարստը քննության է առնում միջին հայերենի ողջ քերականական համակարգը՝ ներառելով հնչյունաբանությունը, ձևաբանությունն ու բառապաշարը: Մասնագետների գնահատմամբ, «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» միջին հայերենին նվիրված առավել ամբողջական և հանգամանալից ուսումնասիրությունն է: Կարելի է ասել, որ հայագիտության պատմության մեջ միջին հայերենի գիտական քննությունը սկսել է Յոզեֆ Կարստը, որից հետագայում օգտվել են այլ հեղինակներ: Ճիշտ է, «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» մինչև օրս չի հրատարակվել առանձին գրքով, սակայն հայագիտությունը՝ շնորհիվ Հրաչյա Աճառյանի, բավարար չափով ծանոթ է եղել այդ կարևորագույն աշխատության հիմնական բովանդակությանը:

Հրաչյա Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատորյակում տվել է միջին հայերենի համառոտ նկարագիրը՝ օգտվելով հիմնականում Կարստի աշխատությունից: Ընդ որում, Աճառյանը Կարստի գրքից քաղել է միջին հայերենի ձևաբանությանը վերաբերող գրեթե բոլոր կարևորագույն հատվածները՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ և այլն: Մեր հաշվումներով, «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը պարունակում է Կարստի գրքից քաղված շուրջ երկու հարյուր էջ:

Դժբախտաբար, Հրաչյա Աճառյանը բավարարվել է միայն Կարստի գիրքը հեղելով, և այս հանգամանքը թույլ չի տալիս հստակորեն կողմնորոշվել, թե *ո՛րտեղ* է վերջանում Կարստի խոսքը, և որտեղ են սկսվում Աճառյանի մտքերը:

Գալով Կարստի մյուս աշխատություններին, ապա դրանց գերակշիռ մեծամասնությունը Աճառյանին անծանոթ է եղել: Բացառություն է կազմում միայն «Հայոց ազգագրական դիրքը» (1911) հոդվածը, որին Աճառյանը քանիցս անդրադարձել է «Հայերեն արմատական բառարանում»՝ հիշատակելով Կարստի առաջարկած այս կամ այն համեմատությունը:

Սակայն Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» պրպտելիս մենք նկատեցինք արտառոց մի փաստ, որը վրիպել է մասնագետների ուշադրությունից:

«Արմատական բառարանում» Աճառյանը քանիցս հղում է Յոզեֆ Կարստի «Հայ բանասիրության պատմություն» գիրքը՝ նշելով վերջինիս համառոտ վերնագիրը՝ Karst, *Gesch. d. arm. Phil.*: Միայն առաջին հատորում

կա երկու նման հղում՝ *ապուր* և *բան* բառահոդվածների տակ: Այս հղումները լույջ տարակուսանք են հարուցում, քանի որ «Հայերեն արմատական բառարանի» առաջին հատորը լույս է տեսել 1926 թվականին, մինչդեռ Կարստի «Հայ բանասիրության պատմություն» գիրքը հրատարակվել է դրանից չորս տարի հետո՝ 1930 թվականին: Մենք ստուգեցինք հղումների հավաստիությունը, և պարզվեց, որ ամեն ինչ համընկնում է էջերով ու օրինակներով: Սակայն ինչպե՞ս է Աճառյանն օգտվել մի գրքից, որը հրատարակվելու էր չորս տարի հետո՝ մեզ մնաց անբացատրելի: Թերևս, կարելի է ենթադրել, որ Աճառյանն իր ձեռքի տակ ունեցել է Կարստի գրքի համառոտ տարբերակը, որը հոդվածի տեսքով հրատարակված է եղել մեզ անհայտ ինչ-որ պարբերականում, առավել ևս, որ Աճառյանի հղումները վերաբերում են Կարստի գրքի առաջին էջերին:

Հիմնականում այսքանը կցանկանայինք ասել Յոզեֆ Կարստի գիտական ժառանգության և «Կիլիկյան հայերենի պատմական քերականության» մասին: Ճիշտ է, Կարստի մյուս աշխատությունները նույնպես սպասում են իրենց աստեղային ժամին, բայց կարևորը սկիզբն է: Այս հրատարակության համար գիտական հասարակայնությունը պարտական է առաջին հերթին Երևանի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնին, ուր իրականացվել է գրքի թարգմանությունը, և որտեղ շարունակվում է Կարստի գիտական ժառանգության ուսումնասիրությունը:

Թարգմանության վրա զգացվում է գրքի խմբագիր, միջին հայերենի լավագույն մասնագետ Ռուբեն Ղազարյանի հմուտ ձեռքը:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել «Գալուստ Գյուլբենկյան» հաստատությանը՝ գրքի հրատարակությանը սատարելու և առհասարակ հայագիտության նկատմամբ շահագրգիռ և՛ նախանձախնդիր վերաբերմունքի համար: Ներկա հրատարակությունը նաև հարգանքի տուրք է գերմանացի մեծ հայագետի հիշատակին, և հուսանք, որ այն վերջինը չի լինի:

Վահան Սարգսյան
Երևանի պետական համալսարանի
Հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր հայերենի հետ համեմատած, որի բարբառները բազմաթիվ են և բաժանվում են երկու խմբի՝ արևմտյան ու արևելյան[1], հին հայերենը, ինչպես որ այն ներկայացված է՝ գրականության մեջ, համեմատաբար միասնական է և, ի տարբերություն հին վերին գերմանական գրականության, բարբառային տարբերակներ չի ցուցաբերում, այնուամենայնիվ մի շարք մատենագիրների մոտ նշմարվում են ոչ դասական լեզվի հետքերը:

Դա վերաբերում է հատկապես լեզվական աչքի ընկնող առանձնահատկություններին, որոնք խորթ են սովորական գրական լեզվին. օրինակ՝ -եար և -ան մասնիկներով հոգնակիի ձևերը[2]: Դասական լեզվին անհարիր այդ տարրերը պետք է որ ծագեին նույն ժամանակվա ժողովրդական (ռամկական) կենդանի լեզվից: Ժողովրդական լեզվի՝ գրական կյանքի հնագույն շրջանից զգայվող այդ ազդեցությունը գնալով մեծացել է, բայց այնուամենայնիվ Ե-Ժ դարերի ընթացքում ռամկական լեզվական տարրը դեռևս երկրորդական դեր է խաղացել: Ճիշտ է, դասական հայերենը Ժ դարից շատ առաջ էր դադարել կենդանի լեզու լինելուց, բայց այն հաստատել էր իրեն որպես ընդհանուր, ավանդությամբ սրբազործված մի գրական լեզու, նաև որպես հայ ազգի ժառանգության: Այս անբնական վիճակը չէր կարող տևել երկար ժամանակ: Երբ ԺԱ դարում Ռուբինյանների հարստության կառավարության

---

[1] Հնչյունաբանական տեսակետից արևմտյան ու արևելյան հայերենը բաժանում է բաղաձայնների երկրորդ հայկական տեղաշարժը. արևմտահայերենում p, t, k, c, č հին նրբերը (խուլերը) դարձել են համապատասխան միջակներ (ձայնեղներ) b, d, g, j, j հին միջակները (ձայնեղները)՝ համապատասխան նրբեր (խուլեր), իսկ արևելահայերենը պահպանել է հին վիճակը: Բարբառախմբերի այլ տարբերությունների մասին տե՛ս WZKM 1, էջ 182, ինչպես նաև Патк. Диал. էջ 16:

[2] Այդ մասին մանրամասնորեն տե՛ս Այտընյանի «Քննական քերականությունը», Ա, էջ 61-120:

ներքո Կիլիկիայում ստեղծվել էր հայ ազգային նոր թագավորություն, և ազգային կյանքի կենտրոնը հին երկրից տեղափոխվել էր այդտեղ, քաղաքական կյանքի վերածննդի հետ միասին վերելք էր ապրել նաև հոգևոր կյանքը Ինչպես որ հրաժարվում են մի շարք հնացած ավանդույթներից, այնպես էլ ազատվում են մեռած գրական լեզվի կապանքներից, և վերջինս մինչև օրս պահպանվում է սոսկ որպես դիտնականների և եկեղեցու լեզուն Եվ ահա առաջին անգամ երևան է գալիս մի ժողովրդական գրականություն որի լեզուն իր հիմքում ժողովրդի բերանում ապրող ժամանակակից լեզու է Դա վերաբերում է հատկապես ազգային ու ժողովրդական կյանքի, իրավաբանության, հողագործության, բժշկության, երկրի կառավարման հետ առնչվող գրվածքներին Այդպիսինների են Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարություն» /1184 թ/, «Գիրք վաստակոց» /ԺԳ դար/, Ասորա-հռոմեական դատաստանագիրքը /ԺԳ դար/, Սմբատի Ժամանակագրությունը /ԺԳ դար/, նույնի «Առնիզ Առտիոքայ» /ԺԳ դար/, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» նույն Սմբատի ռամկական մշակումը /ԺԳ դար/, բազմաթիվ բժշկական ճեռագրեր, կիլիկյան դիվանատան ակտեր և այլն Ճիշտ է, դասական տարրը դեռ ամբողջապես դուրս մղված չէ այդ գրականությունից[3] հատկապես ավելի հին գրվածքներից, սակայն այն չի զգայվում ժողովրդական լեզվանյութի առատության կողքին Վերջինս տարբերվում է ինչպես հին, այնպես էլ նոր հայերենից և իրենից ներկայացնում է մի առանձին լեզվական փուլ, որ կարելի է անվանել ***միջին հայերեն***

Այսպիսով, միջին հայերեն մենք անվանում ենք անցման փուլը հին ու նոր հայերենի միջև, երբ հին հայերենը հնչյունաբանական առումով կորցրել է իր նախնական ամբողջականությունն ու ենթարկվել նկատելի փոփոխությունների Դրանք են ա-ի կորուստը միջին վանկում, երկբարբառների արդեն հիմնականում ավարտված պարզեցումը և բաղաձայնների երկրորդ հայկական տեղաշարժը Ձևաբանական տեսակետից տեղի են ունենում, համաբանության սկզբունքով պայմանավորված, նկատելի նորագոյացություններ Միջին հայերենի շրջանը տևում է մոտավորապես Ժ դարից մինչև ԺԵ դարը, երբ սկսվում է նոր հայերենի շրջանը, որի լեզուն նույնպես որոշ հատկանիշներով տարբերվում է միջին հայերենից[4]

---

[3] Դասական ու ռամկական տարրերի հարաբերակցության մասին այդ գրականության մեջ հմմտ Ղ Յովնանեան, «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ», հատոր Ա և Բ Վիեննա 1897

[4] Այսպես նոր հայերենում հին ներանվանական *ն* մասնիկը բաղաձայններից առաջ փոխարինվում է *ը*-ով, իսկ հոլովական նախդիրները՝ բացառականի *ի*-ն, հայցականի

Թեև, ի հակադրումբյուն հին ու նոր հայերենի և նրանց բնութագրող հատկանիշների, միջին հայերենը երևում է որպես մի ամբողջություն, այնուամենայնիվ այն ոչ մի դեպքում իրենից չի ներկայացնում միատարր մի լեզու, այլ հանդես է բերում բարբառային զգալի տարբերություններ[5] Այսպես՝ Մխիթար Հերացու լեզուն Սմբատի լեզվից տարբերվում է հետևյալ հատկանիշներով

ա) Հոգնակի ուղղականի *-ս* վերջավորությունը /Սմբատի մոտ միայն չորս բառում բ) *-Ը* -ն հաճախ դառնում է *-ի-*, օր *չի* ժխտական մասնիկը /Սմբ *չը*/, *իսպիտակ* և այլն դ) Վաղակատար դերբայի *-եր* վերջավորությունը /Սմբ *-ել*/ - Լեզվական այդ երկու ճևերից դարձյալ տարբերվում է Բջնիի 1358 թվականի արճանագրության լեզուն[6], որին հատուկ են հետևյալ ճևերը *էսիր* /Սմբ այսոր/[7], *ճորտերի*-ն /Սմբ *ճորտեր*-ն/, *հեծելի* /Սմբ *հեծելո*/, *քերայ* /Սմբ *եքեր*/ Այդ բառաճևերից ոչ մեկի հետ չի համընկնում միջին հայերեն Ախրապատինի[8] լեզուն Այդտեղ մենք կարդում ենք, օրինակ, *տեսնել* /Սմբատի մոտ՝ *տեսնուլ*/, *չափա* «չափ» /Սմբ *չաք*/, *երիկ* «տղամարդ» /Սմբ *այրիկ*/, հետո 3-րդ դեմքի դերանվան ճևերը *ույր* Հ 430-24 35 /Սմբ *իր*/, *ույրեն* Հ 430-4, *յ-ույրմէչն* «իրենից» Հ 430-18 /Սմբ *յիւրմէչն*/ և այլն Դարձյալ նոր երանգավորում ունի Վարդանի ռամկական լեզվանյութը Այնպիսի օրինակներից ելնելով, ինչպես *ի սրտումս դրի զքո*

ղ-ն անհետացել են Առաջացել է հոգնակիի կազմության մի նոր ճև զույգ մասնիկների օգնությամբ (օր - k^{c}- 'er) Նոր հայերենի համար յուրահատուկ են նաև հին նախդիրների հետադաս դիրքը, ներկայի հոգն 1-ին դ - nk^{c} վերջավորության տարածումը անկատարի և անցյալի կատարյալի վրա, ապա ժխտական խոնարհումը, որ հետագա զարգացում է ապրել միջին հայերենի համեմատությամբ, ներգործական նշանակության ճեռքբերումը -ած, -aj, -ac վերջավորությամբ հարակատար դերբայի կողմից և այլն Նոր հայերենին անցնելիս միջին հայերենը կրել է նաև ոչ աննշան հնչյունական փոփոխություններ

[5] Միջին հայերենի բարբառային տրոհման մասին ավելի մանրամասն տե՛ս Մ Հ Մուրադյան, Բարբառային տարբերակվածությունը հայերենի զարգացման միջին շրջանում - Միջազգային հայերենագիտական դիտաժողով Զեկուցումներ - Երևան, 1984 էջ 429-436/, և այդտեղ բերված գրականությունը (Ծան թարգմանչի)

[6] Տե՛ս Շահխաթունեանց Բ էջ 183 և Այտընեան Ա 169 ինչպես նաև մի քիչ տարբեր ճևով Այրարատ, էջ 273, 274

[7] Հմմտ նաև *էնոր* /ուղղ *էն* - դաս *այն*/ Լևոն Ե թագավորի արտոնագրի մեջ Langlois, էջ 186 Հմմտ նույն տեղը, եզ 2-րդ դ անճնական դերանվան *քէ* ճևը /Սմբատի մոտ =k o/

[8] Ըստ Աասրի ճեռագրի Հմմտ Ղ Յովնանեան «Հետազոտութիւնք», տետր Բ

խօսքդ, քեզ աղօթք են առնում[9], մենք լեզվի այս տարբերակը պետք է դիտենք որպես նոր արևելահայերենի կամ արևելահայ որևէ ժամանակակից բարբառի նախատիպ

Չնայած որ հաստատ է միջին հայերենի բարբառային տրոհման փաստը, միևնույնն է, կարելի է խոսել միջին հայերեն միասնական գրական լեզվի մասին Ուսումնասիրվող հուշարձանների մեծամասնության հիմքում ընկած է միևնույն լեզուն Դա կիլիկիացի Սմբատի և կիլիկյան դիվանատան լեզուն է որն, անշուշտ, պետք է իրենից ներկայացներ այն ժամանակվա Կիլիկիայի հայոց ժողովրդական լեզուն Եթե միջին հայերենի այլ բարբառները կամ ընդհանրապես չեն հասել մեզ, կամ հասել են միայն հատվածների և սակավաթիվ հուշարձանների միջոցով, կիլիկյան հայերենը հասել է *յուր ամբողջ ծավալով՝ որպես հարուստ մատենագրության* լեզու Դրա պատճառն այն է որ միաժամանակ կիլիկյան հայերենն արքունիքի լեզուն է եղել, և հենց Կիլիկիայում էր կենտրոնացված հայ ազգի մտավոր ու քաղաքական կյանքը[10] Այսպիսով, եթե կիլիկյան հայերենը միջին հայերենի միակ բարբառը չէ, ապա գոնե ամենից լավ հայտնի և ամենակարևոր բարբառն է

Հնչյունաբանական և քերականական տեսակետից[11] կիլիկյան հայերենը պատկանում է արևմտահայ բարբառներին Անշուշտ, նրանից ծագում է նոր արևմտահայ բարբառների մեծամասնությունը, եթե ոչ ամբողջ արևմտյան խումբը Խնդիրը, սակայն, մանրամասն ուսումնասիրության կարիք ունի, բայց այստեղ դրա տեղը չէ

Ծագման տեսակետից կիլիկյան հայերենն արմատներ ունի հին հայերենի շրջանում Հոգնակիի *-եար* և *-անի* մասնիկներով վերևում բերված ձևերը որոնք հանդիպում են հին գրականության մեջ, *-եր* և *-ի* մասնիկներով հոգնակիների նախատիպն են հանդիսանում Ընդհանրապես վերևում հիշատակված հին հայերենի երևույթները միջին հայերենի նախաձևերն են Քանի որ հայ հին գրականության ոսկեդարյան այդ տարրերն

---

[9] Ավելի մանրամասն տե՛ս Ղ Յովհաննեսեանի «Հետազոտութիւնք», տեսր Ա, էջ 253 հաջ

[10] Կիլիկյան ժողովրդական լեզուն եղել է նաև արքունիքի լեզուն Դա հետևում է այն բանից որ արքայական դիվանի թղթերը, եթե գրվել են ընդհանրապես հայերեն և ոչ որևէ օտար լեզվով, գրվել են հենց կիլիկյան հայերենով

[11] Հին նրբերի (խուլերի) և միջակների (ձայնեղների) արևմտահայերենի համար բնորոշ տեղաշարժն առկա է արդեն կիլիկյան հայերենում Ձևաբանական տեսակետից կիլիկյան հայերենի հոլովումն ու խոնարհումը շատ նման են ժամանակակից արևմտահայերենին

անհրաժեշտությամբ հենված են գրական լեզվի հիմքում ընկած կենդանի ժողովրդական խոսակցության, ոչ թե դրա կողքին գոյություն ունեցող որևէ հին բարբառի վրա[12], դրանից հետևում է, որ կիլիկյան հայերենը շարունակությունն ու հետագա զարգացումն է հայ հին գրական լեզվին համապատասխանող ժողովրդական լեզվի, որն արդեն հին շրջանում պետք է զգալիորեն տարբերվեր շատ քարացած հին գրական հայերենից[13]: Այդ եզրակացությունը հաստատվում է կիլիկյան հայերենի հնչյունական վիճակի դիտումով: Որքան էլ տարբեր լինի այն հին հայերենի վիճակից, այնուամենայնիվ բոլոր տարբերությունները բացատրվում են հնչյունական բնախոսության օգնությամբ՝ որպես մեզ ավանդված հին հայերենի հիմքում ընկած լեզվի բնականոն պատմական զարգացման արդյունք: Դասական հայերենից դուրս որևէ հին բարբառի գոյությունը, որպես կիլիկյան հայերենի աղբյուր, ուղղակի բացառվում է: Բարբառների գոյությունը պայմանավորված է նրանց հնչյունական վիճակի էական տարբերությամբ. հին դասական և կիլիկյան հայերենի միջև այդպիսի տարբերություն գոյություն չունի:

Ասվածից հետևում է, որ կիլիկյան միջին հայերենը մեծ նշանակություն ունի որպես հին ու նոր հայերենը, հատկապես նոր արևմտահայերենը, կապող օղակ: Կիլիկյան այդ ժողովրդական լեզուն հնարավորին չափ մաքուր ճանով ներկայացնել, հանել այն գրականության մեջ մասամբ դեռ նրան շրջապատող դասական պատյանից, ապա պատմական տեսակետից բացատրել հաշվի առնելով հին և նոր հայերենի տվյալները, - այս ամենը մեր ուսումնասիրության նպատակն է: Որքան էլ անկատար լինի այս ուսումնասիրությունը, միևնույն է, հուսով ենք, որ ընդհանուր գծերով լեզվի պատկերը տալիս է: Շարադրանքն ավելի կատարյալ ու մանրամասն դարձնելը դուցե հնարավոր կդառնա ոչ այնքան հեռավոր ժամանակներում օգտագործվող աղբյուրների թվի ընդլայնման շնորհիվ:

Սույն աշխատանքի նյութը քաղված է հետևյալ աղբյուրներից.

ա) Անսիզ Անտիոքայ, *Assises d'Antioche, de Sempad le Connétable, Venise*. 1876. հին ֆրանսերեն կորած մի բնագրի՝ 1265 թվականից առաջ կա-

---

[12] Ընդհանուր լեզվական օրենքի համաճայն, գրական լեզուն հարստանում է և ազդեցություն է կրում համապատասխան ժողովրդական կամ ռամկական լեզվից, բայց ոչ գրական լեզվից դուրս գտնվող բարբառներից:

[13] Նույն ձևով, օրինակ, նոր ժողովրդական հունարենը (իհարկե, բացառությամբ յակոներենի) ծագում է հին աատիկյան բարբառից կամ ուշ հունական χοινή-ից, իսկ բոլոր ռոմանական լեզուները ծագում են հին ժողովրդական լատիներենից:

տարած միջին հայերեն խմբագրությունը, Ղ. Ալիշանի ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ.

բ) Մխիթար Գոշի Դատաստանագրքի («Դատաստանագիրք հայոց») նույն Սմբատի կողմից կազմված խմբագրությունը /1265 թ./, դեռ անտիպ, բայց մեծ քաղվածքներով բերված Հովնանյանի «Հետազոտություններում», էջ 201-227:

գ) Տարեգիրք Սմբատի, ԺԳ դարից, Անանունի կողմից գրված շարունակությամբ, օգտագործվում է Դյուլորիեի հրատարակության մեջ՝ *Recueil des Historiens des Croisad'es, I,* էջ 605-680:

դ) Վիկտոր Լանգլուայի *"Cartulaire de la chancellerie royale des Róupéniens"* գրքում հրատարակված պաշտոնական թղթերը. Լևոն Գ թագավորի՝ Ջենովայի հանրապետությանը շնորհված առևտրի արտոնագիրը /1288 թ./, Օշին թագավորի արտոնագիրը ֆրանսիական Մենպոզիե քաղաքի վաճառականներին /1314 թ. հունվարի 7/, մեկ այլ արտոնագիր նույն քաղաքի վաճառականներին՝ շնորհված Լևոն Ե թագավորի կողմից /1321 թ. մարտի 16/, ապա Սարվանդիքարի պարոնի արտոնագիրը, 1271 թ./ Հովնանյանի մոտ, էջ 258/:

ե) Միջին հայերեն բժշկական գրվածքները, մեծամասնությամբ դեռ անտիպ, բայց ծավալուն հատվածներով բերված Հովնանյանի «Հետազոտություններում», ըստ երկու, մեծ մասամբ իրար համապատասխանող ձեռագրերի /1294 և 1438 թթ./:

զ) Գիրք վաստակոց /Υεωπωνιχά/ հրատ. Վենետիկ 1877, այստեղ նպատակ չի դրվում այդ գործն ապահիչ կերպով օգտագործել թեկուզ այն պատճառով, որ սկզբում ռամկական լեզվով գրած տեքստն ակնհայտորեն վերամշակված և գրականացված է:

է) Հեթում Կոռիկոսեցու միջին հայերեն ժամանակագրությունը, հրատ. Hist. d. Crois. I, էջ 471-490: Ապա Մատթեոս Ուռհայեցու, Միխայիլ Ասորու, Սամվել Անեցու, Գրիգոր Երեցի ժամանակագրությունները, հրատ. Dulaurier, որոնցից վերջինները, չնայած որ Կիլիկիայում չեն ստեղծվել, պարունակում են կիլիկյան լեզվանյութը:

ը) Ասորա-հռոմեական դատաստանագիրքը, ԺԲ կամ ԺԳ դարից, հրատ. Bruns et Sachen, Leipzig, 1880:

Այդ բոլոր գործերի ռամկական լեզուն մաքուր կիլիկյան է: Երկրորդ հերթին, սակայն, աշխատության մեջ հաշվի են առնվում միջին հայերեն մնացած բարբառները, որքանով որ նրանք հանդիպում են գրականության մեջ: Այդպիսիները հանդես են գալիս հետևյալ գրվածքներում. Լևոն Ե թա-

գավորի՝ սիցիլիացիներին պարգևած արտոնագիրը /1331 թվականի նոյեմբերի 24/ Langlois, էջ 186-190, Լևոն արքայազնի գերուժյան մասին ժողովրդական երգը /ԺԴ դար/ Dulaurier, էջ 539-540: Այնուհետև Մխիթարայ բժշկապետի Հերայուոյ Ջերմանց մխիթարուժիւն /Վենետիկ, 1832/, Ախրապատին, արաբերենից թարգմանված բժշկական մի գործ, մասամբ բերված Հովնանյանի «Հետազոտուժյուններում» Բ, էջ 375-448:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՋԲԵՐՄԱՆ ՁԵՎԻ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ա) Հայերեն, հատկապես միջին հայերեն աղբյուրները մեջբերելիս սկզբից դրվում է համապատասխան աղբյուրի համառոտագրությունը, հետո էջերի և տողերի համարները:

«Անսիզ Անտիոքան» մեջբերելիս, սակայն, Անս. Անտ. համառոտագրությունը միշտ բաց է թողնվում, այնպես որ բոլոր հղումները, որտեղ բացակա է աղբյուրի անունը, վերաբերում են «Անսիզներին»:

Էջի համարը տողի համարից բաժանվում է գծիկով /-/: Եթե տողերի համարները մի քանիսն են, դրանք իրարից բաժանվում են կետերով: Օրինակ, *պարոնն* 13-7.24.31 նշանակում է, որ *պարոնն* ձևը վկայված է «Անսիզ Անտիոքայում» էջ 13, տող 7, 24, 31. *Ֆուլան* 13-13, 15-15, 41-7.22 **Ֆուլան** բառը վկայված է Անս. Անտ. էջ 13, տող 13, էջ 15, տող 15 և էջ 41, տող 7 և 22: Նկատենք նաև, որ Վաստակոց գրքից, Մխիթար Հերացու և որոշ այլ աղբյուրներից բերված մեջբերումներում տողի համարն ամեն տեղ չէ, որ նշվում է: Այն դեպքերում, երբ բացակայում է վկայությանն տեղը, մենք հղում ենք դեպի բառարանը*, որ լույս է տեսնելու սույն քերականության հետ միասին:

բ) Մեջբերվող գլխավոր աղբյուրների և գրքերի համառոտագրությունների ցանկ:

Ալահվ. - Յ. Յ. Ալահվերդեան, Ուլնիա կամ Զեյթուն, Կ. Պոլիս, 1884:

Այտ. - Այտընեան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866. Ա. Ներածութիւն, Բ. Քերականութիւն:

Այրար. - *Ղ. Ալիշան, Այրարատ*, Վենետիկ, 1890:

Անս. Անտ. - Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876:

Առճ. բառ. - Առճեան բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

Աս. հռոմ. ԴԳ - Ասորա-հռոմեական դատաստանագիրք - Syrisch - Romisches Rechbuch, ed. Bruns & Sachen, 1880:

Արիստակ. Լաստ. - Արիստակէս Լաստիվերտցի, Վենետիկ, 1844:

Բագրատ. - Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն, Վենետիկ, 1852:

Բազմ. - Բազմավէպ, հայերեն պարբերականը Վենետիկից:

Բառգ. - Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբառ /Նոր արևմտահայերենի բառարան/, Վենետիկ, 1869:

---

* Յ. Կարատը կազմել է նաև միջին հայերենի բառարան («Wörterbuch des Mittelarmenishen»), որը, ցավոք, չի տպագրվել: Այն այժմ ձեռագիր վիճակում պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում: (*Ծան. խմբագրի*):

Բարս Մարկ - Բարսեղ, Մարկոսի Ավետարանի մեկնութիւն /հայերեն/, մոտավորապես 1325 թ

Գանճ - Գանճարան, հոգևոր երգերի ժողովածու

Գարեգ Ա. և Բ - Գարեգին Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Ա. հին մատենագրութիւն, Վենետիկ, 1865 Բ նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878

Գարեգ Մատ - Գարեգին Զարբհանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883

Գարեգ Թարգ - Գարեգին Զարբհանալեան, Մատենաղարան հայկական թարգմանութեանց նախնեաց /դար Դ- ԺԳ/, Վենետիկ, 1889

Գովրիկ. - Գ Գովրիկեան, Հայք յեղիսաբեթուպոլիս Թրանսիլվանիոյ, Վիեննա, 1893

Գր Մագ - Գրիգոր Մագիստրոս, Վենետիկ, 1868

Գր Նար - Գրիգոր Նարեկացի, Վենետիկ, 1840

Դաւ փիլ - Դաւիթ փիլիսոփայ, Վենետիկ, 1833

Դիոն Թր - Grammaire de Denis de Thrace par M Cirbied, Paris, 1830

Լատն երգ - Լատն արքայազնի մասին միջին հայերեն երգը, հրատ Historiens des Croisades I.

Կոստ Ժող - Կ Կոստանեանց, Նոր ժողովածու Միջնադարեան հայոց տաղեր և ոտանավորներ Տետր Ա, Բ, Գ, Թիֆլիս, 1892

Կոստ Յովհ Թլկ - Կ Կոստանեանց, Յովհաննէս Թլկուրանցի և իւր տաղերը, Թիֆլիս, 1892

Հ - Ղ Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1897, հատոր Ա և Բ

Հանդ ամս - Հանդէս ամսօրեայ, հայերեն պարբերականը Վիեննայից

ՁԹԱ - Միջին հայերեն բժշկական մի ճեռագրի 1294 թ խմբագրութիւնը

ՁԹԲ - նույն ճեռագրի 1438 թ խմբագրութիւնը

Ճանիկ - Յ Կ Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895

Ճառընտ - Ճառընտիրք

Մատթ Ուռհ - Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն /Recueil des Historiens des Croisades I, հրատ Դյուլորիեի/

Միխ Ասո - Միխայիլ Ասորի, Ժամանակագրութիւն /Recueil des Historiens des Croisades I, ed Dulaurier/

Մին Լեհ - Մինաս Բժշկեանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830

Մխ Գոշ -Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880

Մխ Հեր - Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832

Ն Լամբր - Ներսես Լամբրոնացի /հայերեն/

Ն. Շնորհ - Ներսես Շնորհալի /հայերեն/

Ն. Հայկ - Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հ Ա-Բ, Վենետիկ, 1836-1837

Շիր - Ղ Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881

Ոդբ Եդ - Ոդբ Եդեսիոյ

Ոդբ Եր - Գրիգոր Տղա, Ոդբ Երուսաղեմի /Ռյուլորիեի մոտ/

Պալաս - Ս Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, հրատ Դ Թիֆլիս, 1894

Պլատ - Պլատոնի հին հայերեն թարգմանութիւնը

Պատմ Վր - Պատմութիւն վրաց, Վենետիկ, 1884

Զախ - Մ Զախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837 (Dizionario armeno-italiano composto dal P. E. Ciakciak, Venezia, 1837):

Զրպ. - Զրպետ, Քերականութիւն արամեան լեզուի, Փարիզ, 1823 (Grammaire de la langue arménienne, par Cirbied, Paris, 1823).

Սամ Անեցի - Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն, ԺԲ դար

Ս Սարգ կամ Սարգ - Ս Սարգսեանց, Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն) Ագուլիսի բարբառի քերականութիւնը տեքստերով, Մոսկվա, 1883

Սիս - Ղ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893

Սիսվ - Ղ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885

Սմբ Ժամ կամ Ժամ - Սմբատի Ժամանակագրութիւն Ռյուլորիեի հրատարակութիւն, "Historiens des Croisades I")

Սմբ ԴԳ - Մխ Գոշի Դատաստանագրքի Սմբատի կողմից կատարված կիլիկյան խմբագրությունը (հատվածաբար ներկայացված է Հովնանյանի «*Հետազոտություններում*»), *հետազոտում ձեջբերվում է միայն Հ տառով*

Տաղ - Տաղարան

Տոնապ. - Տոնապոյց

Փաստ Բուզ - Փաստոս Բուզանդ, Վենետիկ, 1832

Мсер. - Л. Мсерянц, Сравнительная фонетика Мушского диалекта в связи с фонетикою грабара, 1897.

Патк. Диал. - К. П Патканян, Исследование о диалектах армянского языка Петербург, 1869

Патк. Мат. - К. П Патканян, Материалы для изучения армянских наречий. I Говор нахичеванский, Петербург, 1875.

Патк., слов. - К П Патканян, Материалы для армянского словаря I II Петербург, 1882-84

Том. Ах. диал. - А. Томсон, Краткий очерк фонетики и морфологии ахалцихского говора (в "Лингвистических исследованиях" I. Петербург, 1887)

Том. Тифл. диал. - А. Томсон, Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, Петербург, 1890

Arm. Gramm. - Armenische Grammatik von H. Hübschmann, I, Leipzig, 1895, II, Leipzig, 1897

Cart. կամ L. Cart. - V. Langlois, Cartulaire de la chancellerie royale des Róupéniens, Venegig, 1863.

Han. - Dr. Jan Hanusz, O Jézyku Ormian Polskich, Krakau, 1886.

H. Hübschmann, Arm. Stud. - H. Hübschmann, Armenische Studien, Leipzig, 1883

H. Hübschmann. Arm. - H. Hübschmann, Armeniaca, ZDMG, Bd. 35 und 36.

H. Hübschm. Chron. - H. Hübschmann, Zur Chronologie der armenischen Vocalgesetze, "Sprachwiss. Abh. ed. L. v. Potrubany", Budapest, 1898.

H. Hübschm. Sem. Lw. - H. Hübschmann, Die Semitischen Lehnwörter im Altarmenischen, ZDMG, Bd. 46.

L. - V. Langlois, Cartulaire etc **տե՛ս** Cart.

Margol. Syr. - Arm. - Margoliouth, The Syro - Armenian Dialect (**տե՛ս** "Journal of the Royal Asiatig Society" 1898-1899).

Mem. Smp. -Memorial Smpads, **հրատ** "Assises d'Antioche", **էջ** 93

Pet. Gramm. - Petermann, Grammatica Linguae armeniacae. Berlin, 1837

Proleg. Aphr. - Prolegomena in Aphraatis Sapientis Persae Sermones Homileticos, von F Sasse, Leipzig, 1878.

WZKM - Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes

ZDMG - Zeitschrift der deutschen morgenländischen Gessellschaft.

Մնայած դեպքերում, հատկապես հին հայերենի համար, մենք հետևում ենք Հյուբշմանի «Հայերեն քերականության» մեջ օգտագործված համառոտագրություններին

գ) Այլ համառոտագրություններից հիշատակենք

հ հայերեն դաս - դասական հայերեն, **հհ.** - հին հայերեն, **կիլ** - կիլիկյան հայերեն, **միհ** - միջին հայերեն, **նհ** - նոր հայերեն

Համառոտագրություններ հայ բարբառների համար

Ադ. - Ադուլիսի բարբառ (զոկերեն), **Ախ** - Ախալցխայի բարբառ, **Ակ** - Ակնա բարբառ, **Աշտ** - Աշտարակի բարբառ, **Աատր** - Աատրախանի բարբառ, **Եր.** - Երևանի բարբառ, **Զթ** - Զեյթունի բարբառ, **Թֆ** - Թիֆլիսի բարբառ, **Թք** - Թոքատի բարբառ (Եվդոկիայի), **Լհհ.** - Լեհահայոց բարբառ, **Խոյ** - Խոյի բարբառ, **Պար.** - Պարաբաղի բարբառ, **Մշ.** - Մշո բարբառ, **Նխ.** - Նախիջևանի բարբառ, **Ջղ** - Ջուղայի բարբառ, **Սր** - Սիրիայի բարբառ, **Վն**

- Վանի բարբառ, **Տաճկ** - Պոլսի և Փոքր Ասիայի բարբառ կամ տաճկահայերեն

Նույն համառոտագրությունները, բայց փոքրատառ, համապատասխան ածականների նշանակություն ունեն **Օր**, **լեհ** - լեհահայերեն, **տաճկ** - տաճկահայերեն

դ) Օտար լեզուներ **աս** - ասորերեն, **ար** - արաբերեն, **բուլղ** - բյուզանդական, **իտ** - իտալերեն, **հբգ** - հին բարձր գերմաներեն, **հֆր** - հին ֆրանսերեն, **մբգ** - միջին բարձր գերմաներեն, **մլտ** - միջին լատիներեն, **նպ** - նոր պարսկերեն, **սկր** - սանսկրիտ, **տաճկ** - տաճկերեն

Հին հայերենը տառադարձվում է Հ Հյուբշմանի առաջարկված սիստեմով Միայն է-ի համար սովորական ē-ի փոխարեն օգտագործվում է e նշանը Նոր հայերեն ձևերի տառադարձությունը հնարավորին չափ մոտիկացված է միջին հայերենի համաձայն Հեղինակը ներողություն է խնդրում տառադարձության մեջ հնարավոր հատուկենտ անհետևողականությունների համար

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան հայերենի գրավոյթյան համար, բնականաբար, ծառայել է հայոց հին այբուբենը: Բայց քանի որ տառերի մեծ մասի հնչյունական արժեքը փոխվել է ժամանակի ընթացքում, հարկավոր է ամենից առաջ պարզել նրանց հնչյունական արժեքը կիլիկյան հայերենի համար: Այդ նպատակին ծառայում են հետևյալ օժանդակ միջոցները. 1) հին հայերենի ժամանակակից արտասանությունը. 2) հնչյունական վիճակը ժամանակից արևմտահայ բարբառներում, որոնք գոնե մասամբ կարելի է դիտել որպես կիլիկյան հայերենի շարունակությունը. 3) միջինհայերենյան ոտանավորների հանգը. 4) տատանումները որոշ կիլիկյան, ինչպես բուն հայկական, այնպես էլ փոխառյալ բառերի գրավոյթյան մեջ. 5) առաղարձությունը՝ ինչպես կիլիկյան հայերենից օտար լեզուներում, այնպես էլ օտար լեզուներից կիլիկյան հայերենում:

Այդ դիտելիքների հիման վրա կփորձենք վերականգնել կիլիկյան հայերենի գրերի հնչյունական արժեքը[1]:

Ա. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Ձայնավորներից նախնական հնչյունական արժեքը պահպանել են *ա* a, *ի* i, *ու* u, *ը* ə:

§1. *ա* /a/, փոխառությունների մեջ հանդես է գալիս ճայնավորների տեղում. *սամսար* «մինչնորդ»=արաբ. samsār, *մահր* «օժիտ»=արաբ. mahr, *խաբար* xabar «լուր»=արաբ. xabar, *պազար* bazar «շուկա»=նպ. bāzār. *գան* kan «քանոն»=հֆր. canne, cane. *մարիաճ* «ամուսնություն»=հֆր. mariage, *բասաճ* pasaj «խաչակրաց արշավանք»=հֆր. passage, *հառնէզ* «զրահ»= հֆր. harnais և այլն:

§2. *ի*/i/, *համապատասխանում է օտար* i, ī ճայնավորներին. *սիր* «տեր, պարոն»= հֆր. sir, *քիթ* «հանգիստ, ազատ»=հֆր. quitte, *լիճ* liǰ

[1] Հին հայերենի արտասանության մասին հմմտ. Hübschm. Arm. Gramm., էջ 2:

«վասալ»= հֆր lige, *լիվր* «ֆունտ»=հֆր livre, *մինայ* mina «նավահանգիստ»= արաբ mīnā և այլն *ի* տառով տառադարձվում է նաև հունական υ-ն օր *սինօտ* «սահման»= σύνορος: *-իմ* կապակցությունը համապատասխանում է հֆր -un կապակցությանը *գումին* kumin «ընկերություն» բառում /=հֆր commun, comun/:

§3 *ու*/u/, բաղաձայններից առաջ համապատասխանում է օտար u, ū ձայնավորներին *Սուր* «Տյուրոս քաղաքը»=արաբ sūr, *ֆուլան* «այսինչ»=արաբ fulān, *մուրատ* murad «բախտ»=արաբ murād, *մուխթասիպ* muxtᶜasib «շուկայում հարկ հավաքող»=արաբ muxtasib, *աուպլ* «զույգ»=հֆր double, *բուրճէս* purǰeš «քաղաքացի»=հֆր bourgeois և այլն Նույն տառը ձայնավորներից առաջ ունի v հնչյունական արժեքը[2], որ ապացուցվում է գրությունն բազմաթիվ զուգահեռ ձևերով, որտեղ *ու*-ն զուգորդվում է *վ*-ի և *ւ*-ի հետ Օրինակ, կրավորականի հիմքի -vi վերջավորությունը գրվում է մերթ *-վի*, մերթ *-ւի*, մերթ *-ուի*

Ծան Միայն ներկայի *ու*-հիմքերի անկատարի մեջ մենք իրավունք ունենք ձայնավորներից առաջ կարդալ *ու* հենվելով հին հայերենի վրա, որտեղ այդ դեպքում նույնպես *ու*-ն հնչում է որպես *ու=u* հմմտ Arm. Gramm. էջ 2 և Այտ Բ, էջ 372

§4 Ը/=ə, հին հայերենի նման, կանոնավոր ձևով հանդիպում է միայն բառասկզբում՝ նայերից և ռնգայիններից առաջ[3] ընկեր, ընդունել և այլն Ձիշտ է, բառամիջում նույնպես մեկ-մեկ գրվում է *-ը*, օրինակ, *դարձընել*, *յուրընել*, *կեսգրընել դատըստրընել*, *դատըստրնվոր*, *գրաւիրնեմ*, *սպրրնաց*, *դարպրոտն*, *հարրստանամ*, *փոխընքոյն* և այլն Բայց ավելի հաճախ աղված ə ձայնավորը, հին հայերենի նման, գրավոր արտահայտություն չի ստանում Պետք է կարծել, որ այն իսկապես առկա է հետևյալ դեպքերում

---

[2] Հնչյունական արժեք- Բնագրում Lautwert, այսինքն՝ տվյալ տառին համապատասխանող հնչյուն կամ հնչյունների խումբ (Ծան թարգմանչի)

[3] Առանձին դեպքերում ə այդ դիրքում չի գրվում որովհետև այն երկրորդական օժանդակ մի հնչյուն է Այսպես մենք կարդում ենք *ըզգակ* əźzak, *ըզէ* əźę, *ըզաւրէն* əźǫpęn նույն արտասանությունն ունեցող ձևերի կողքին *ոզակ*, *ոէ*, *Ոզբէն* Սակայն այնպիսի զուգահեռ գրություններ դեպքում ինչպես *ըզորդ* և *որդ*, *ըզորդել* և *որդել*, *յըզարկեմ* և *զրկեմ*, առկա է իսկական հնչյունական տարբերությունը՝ բերված երկրորդ ձևերը պետք է կարդալ yort (xort), yortel (xortel), yrkem (xərkem) նկատի ունենալով Լեհ xortelu ուղղել, xortvelu «ուղղվել», xərgelu «ուղարկել» Նի xərgem /նույն նշանակությամբ/

1) Որպես երկրորդական ձայնավոր բաղաձայնների միջև, որտեղ դասական լեզվի մեջ ոչ մի ձայնավոր չի նշմարվում: Այդ մասին վկայում է հատկապես միջինհայերենյան բանաստեղծությունը, որտեղ չափի համար այդ հնչյունը նշվում է նաև գրավոր ձևով: Այսպես՝ Ներսես Շնորհալու մոտ, Ողբ Եդ., *ծընար* 199, *թերշնամուոյն* 74, *խընդրեմ* 212, *խընճոր* 516, *պըտողով* 296, *հրնչեն* 224, *տըղայք* 381, *ծընունդ* 400, *բըժիշկ* 610, *լըսողաց* 532, *դըպիրք* 1443, *գըրեաց* 37, *վըկայիցն* 703, *նըմանն* 124, *Մըխիթար* 49, 131 և այլն: «Ողբ Երուսաղեմի»-ի մեջ. *նըմին* 711, *գըլուխ* 265, *լըսէ* 1053, *դրստերօք* 1224, *նըստէին* 622, *վըկայ* 598, *գըրեալ* 598, *մընաց եալ* 774 և այլն: Հետո բառավերջում Շնորհալու մոտ /Ողբ Եդ./ *մեծըն* 167, *ծընունդըն* 168, *ունկըն* 88, Ողբ Եդ. *վասըն* 1855, *անդըր* 403, /Vahr Ed./ *յինքըն* 90, *այժըմ* 598 և այլն: Այստեղից ելնելով և նկատի ունենալով նոր հայերենը[4], կիլիկյան հայերենի համար ստանում ենք հետևյալ մոտավոր դեպքերը:

ə հնչյունը հանդիպում է.

ա) Բառասկզբում՝ երկու կամ մի քանի բաղաձայններով սկսվող բառի առաջին բաղաձայնից հետո: Բացառություն են կազմում s, š, z սուլականների և p, k, t, b, g, d, $p^{ʿ}$, $k^{ʿ}$, $t^{ʿ}$ պայթականների կապակցությունները: Այդ հնչյունական խմբերի ներսում ə ձայնավորը չի հանդիպում[5]:

բ) Բառավերջում՝ երկու բաղաձայնների արանքում, որոնցից վերջինը դերանվանական *ս, դ, ն* հողմ է կամ *դ, ն, ր, ո* նայերից մեկը: Մնացած դեպքերում ə չի հանդիպում:

Ծան. Նույն արտասանությունը պետք է գոյություն ունեցած լիներ արդեն հին հայերենում, ինչպես երևում է հին հայերենից կատարած հունարեն և վրացերեն տառադարձություններից:

Այսպես, օրինակ, արդեն հին հայերենում *պատուղ* բառն, ըստ երևույթին, արտասանվել է որպես pətuł (նախնական *puˈtuł ձևից/. պուվս=gəlux (նախնական *guˈlux ձևից): Այստեղ ə-ն փոխարինում է i և u ձայնավորներին անշեշտ վանկում:

2) Որպես i, u (ինչպես արդեն հին հայերենում) և a, ավելի հազվադեպ՝ e և o ձայնավորների ներկայացուցիչ անշեշտ վանկում: Պետք է սկզբունքո-

---

[4] Հմմտ. Լեհ. cəmer (ճմեռն), xəmor (խմոր), xənjor (խնճոր), xərad (խրատ), gərag (կրակ), gəriv (կռիւ), vəga (վկայ), astəγ (աստղ), oskər (ոսկր): Սակայն spanelu (սպանանել), skesur (սկեսուր) և այլն, ըստ Han. Orm. Pols.

[5] Նոր հայկական ավանդույթի համաձայն (Այտ. Բ, էջ 36), այդ բաղաձայնական կապակցություններից առաջ գրվում է ə ձայնավորը. միջինհայերենյան բանաստեղծության նման, որտեղ այդ դեպքում նույնպես գրվում է ը (ə): Կիլիկյան հայերենի համար, սակայն, այդ ձայնավորն այստեղ առնվազն կասկածելի է:

բեն ընդունել, որ յուրաքանչյուր սղվող i, u, a, e, o ձայնավորը փոխարինվում է ə -ով Սակայն այդ սղված ձայնավորը նույնպես մեծ մասամբ անհետանում է այն դեպքում[6], երբ վանկերի սահմանը լինում է բաղաձայնների միջև ə-ի բացակայության օրինակներ *աղ-չեմ (աղաչեմ), առ-ջեւ (առաջեաւ), ավ-տամ (աւատամ), ար-ծող (արածող), բաժ-նել (բաժանել), բաղ-նիք (բաղանիք), բաժ-տուն (բաժատուն), գող-նամ (գողանամ), գրաւ-կան (գրաւական), ժող-վեմ (ժողովեմ), իջ-նում (իջանեմ), լոգ-նամ(լոգանամ), հագ-նիմ (հագանիմ), հալ-ծիմ (հալածիմ), ի քաղ-քէն (ի քաղաքէն)* և այլն Նման դեպքերում ə հնչյունը երբեք չի նշվում գրության մեջ և բացակայում է կապակցված խոսքի մեջ, և քանի որ նոր հայերենում նույնպես այն բացակայում է այդ դիրքում, հետևաբար կիլիկյան հայերենում այն նույնպես չկա Այնպես որ բերված բառերը հնչում են ay-čem, aɾ-č'ev, av-dam, ar-joy, paž-nel, pay-nik^{c}, paž-dun, koy-nam, krav-gan, žoy-vem, iǰ-num և այլն Դրա դիմաց ə -ով սրտի (ուղղ *սիրտ*) sər-di, *նստեմ (նիստ-գոյականից)* nəs-tem, *դառեր* (ուղղ դուստր) təs-ter և այլն

§5 է ձայնավորը, թեև ծագումով երկբարբառ, արդեն ե դարի դասական հայերենում բառիս բուն իմաստով երկար ձայնավոր չի եղել[7] Նոր հայերենում նրան կանոնավոր ձևով համապատասխանում է կարճ կամ միջին բաց e(=ä)[8]: Այդ հնչյունական արժեքը է նշանագիրը, պահպանում է կիլիկյան հայերենը, ինչպես ցույց են տալիս տառադարձումները *թէատիր* t^{c}e̲dbir=արաբ պարսկ tädbīr, *սէրէֆիկ* serefig=արաբ (ռամկ) säräf, *քէրվան* k^{c}ervan=նպ kärvān, *գումբեթ* kumbe̲t^{c}=նպ gumbäd, *չարեէկ* čareeg (čar'eg)=նպ cāryāk, *հառնէզ* haɾne̲z= հֆր harnais (harneis, harnes), *չաստել* častel=հֆր chastel, *ֆրէր* fre̲r=հֆր frère, *Պէնէթ* Be̲ne̲t^{c}=իտ Benetto, հֆր Beneit, *Մանսէլ* Mansel=հֆր Mancel, Զապէլ Zabe̲l=հֆր Isabelle, *Ռոուճէր* Əřuǰe̲r=հֆր Roger և այլն Կիլիկյան է-ն արտահայտում է այստեղ բաց e հնչյունը[9] Մենք տառադարձում ենք այն e̲ նշանագրով

---

[6] Կիլիկյան հայերենի վերաբերյալ դա հետևում է, ի միջի այլոց, ժամանակակից բարբառների դիտարկումից, որոնք այս տեսակետից ցույց են տալիս միևնույն պատկերը Օր՝ Լեհ arjelu (արածիլ), mernelu (մեռանիլ) mornalu (մոռանալ), vernalu (վերանալ), irgun (երեկուն), k'arsun (քառասուն) ə ձայնավորով kəšer (գիշեր), məser (*միս գոյականից*), ləzelu (լիզել), gənig (*կին գոյականից*), šənig (*շուն գոյականից*), tatəstan (դաստաստան) և այլն բստ Han Orm Pols

[7] Հմմտ Hübschm Chron. էջ 157

[8] Հմմտ Мсер Мушский диалект էջ 42

[9] Կրկ Ռոբէն անվան Ropinus (Rupinus) լատիներեն տառադարձումը հիմնված է *Ռոբինայ* սեռականի ձևի վրա

§6. Որոշ դեպքերում է /ē/ և ե կարող են փոխարինել իրար: Օրինակ, *զեղ(ս)* ձևի կողքին կա *զէգ*; Նաև *ամէն, մէն, մէկ, աղէկ, քաւէլ, զարթէլ (զարդէլ), վզէն սամսրչէք, սէրէֆիկ, ֆրէր, պողէր* ձևերի կողքին կա *ամեն, մեն, մեկ, աղեկ, քաւել, զարդել, վզեն, սամսրչեք, սերեֆիկ, ֆրեր, պողեր:*

Քանի որ է-ով գրությունը կանոնավոր է, և է-ն այստեղ անկասկած ունի բայ e-ի հնչյունական արժեքը, *ե*-ն պետք է որ արտահայտի նույն հնչյունը: Այն փաստը, որ *ե* նշանը հանդես է գալիս նաև փակ e-ի նախնական նշանակությամբ[10], կարծես թե բխում է առանձին դեպքերում հանդիպող տառադարձություններից, ինչպես *լեճ*, Ներսես Լամբրոնացու մոտ սովորական *լիճ* (հֆր. lige) ձևի կողքին. *կեռ*, սովորական *կիռ, կիւռ*, χῦρ ձևի փոխարեն: Հնարավոր է, սակայն, որ պետք է կարդալ ե=ⁱe /տե՛ս ստորև/, այնպես որ կիլիկյան հայերենն առհասարակ փակ e չի ունեցել[11]: Այդ վիճակին կարող է համապատասխանել օտար փակ e-ի տառադարձությունը որպես *ի* i, *լիկալե* ligat^e=հֆր. légat, *լիզատաւն* liyadon=բյուզ. λέγατον, legatum. *սինիջալ* siničeal= հֆր. sénéchal:

Պարզ e հնչյունից բացի, կիլ. *ե*-ն որոշ դեպքերում արտահայտում է ⁱe կամ ye հնչյունը: Դա բխում է այնպիսի տառադարձություններից, ինչպես Μαντζιχίερτ konst. Porph.de admin. imp.c. 44.45=*Մանծկերտ* Վարդ. և Մատթ. Ուռհ. Ἀσπιέτης Anna komn.[12]=*ասպետ*: Հետո, Լատն Դ-ի թղթերից մեկում կարդում ենք L. 173 cum barone Ossino Basiliense: Դրան համապատասխանում է կիլիկյան *պարոն Օշին Վասիլենց*. նաև կիլ. *Եհաննենց* L.178 =Ehannienç *Միխայլենց* L.178- Mīxaīlienç, այսինքն՝ *ենց* (հհ. *եանց*) արտասանվել է ⁱenç: Համապատասխանաբար čaryäk ունեցել է կիլ. *չարեկ* ձևը (արտասանվում է որպես čarⁱeg, ինչպես վկայում է *չարեէկ* զուգահեռ ձևը), հֆր. banier=կիլ. *պաներ* banⁱer, հֆր. chancelier (բյուզ.χαντζηλιέρης)= կիլ. *ջանչլեր*- čançlⁱer, հֆր. solier=կիլ. *սոլեր* solier և այլն:

Մնում է որոշել կիլ. *ե*-ի երկու հնչյունական արժեքների մոտավոր սահմանները: Այդ հնարավորությունը ստեղծում են ժամանակակից բարբառները, որոնց արևմտյան խմբի համար գործում է հետևյալ օրենքը. հհ.

---

[10] Hübschm. Chron, էջ 157:

[11] Այդ դեպքում կիլիկյան հայերենը կարտացոլեր արդեն ժամանակակից լեզվի վիճակը, որտեղ *ե* և է (բառամիջում) ընդհանրապես համընկել են և հնչում են որպես բայ e: Հմմտ. Мсер. Мушский диалект, էջ 24 հաջ., Han. WZKM 1, էջ 281 և այլն:

[12] Որպես վկայություն բերենք հետևյալ ձևերը. Ἀσπιειης [ο δε Ἀομέυιος Ἀσπιειης] I, 147, 148. Ἀσπιετην II, 146; Ἀσπιειη II, 146; Ἀσπιετον II, 148 [Anna Komn. ed. Reifferscheid 1884].

ե/և եա) վերջին վանկում=նոր ʲe[13], *մյուս վանկերում=նոր բայ e*[14]: Քանի որ այդ երևույթն ընդհանուր է նոր արևմտահայերենի տարածքի համար, վատահորեն կարելի է եզրակացնել, որ այն բնում է միջին հայերենից և հատկապես նրա արևմտյան մի բարբառից - կիլիկյան հայերենից: Սակայն խիստ կասկածելի է, թե գործում է արդյոք այդ օրենքն ամեն տեղ առանց բացառության, ժամանակակից լեզվի նման: Ավելի շուտ պետք է ընդունել, որ ʲe արտասանությունը վերջին վանկում որոշ դեպքերում գոնվել է կազմավորման ընթացքի մեջ: Այդպես Սարվ. արտ. էջ 258 ունենք գրություններ. *իրէնց* (սովորական *իրենց* ձևի փոխարեն), *էն /են), մէնք/մենք)*: Եթե ընդունենք, որ այդ գրությունները պատահական չեն, դրանք կարող են ցույց տալ, որ *ե*-ն վերջին վանկում դեռևս չի արտասանվել որպես ʲe: Հատկապես դա պետք է վերաբերի *ե*-ով ներկայի հիմքի բայական վերջավորություններին: Հետագայում կիլ. *ե*-ն նախավերջին վանկում մենք տառադարձելու ենք որպես e, միավանկ բառերի սկզբում որպես ye, իսկ միավանկ բառերի մեջ, ինչպես նաև երկու և ավելի վանկ ունեցող բառերի վերջում որպես ʲe, *ե*-ով հիմքերի ներկայի վերջավորություններում որպես պարզ e (ոչ որպես ʲe)[15]:

§7. Բոլոր ժամանակակից բարբառներում հին հայերեն *ո*-ին, *ե*-ի նման, համապատասխանում է բաղաղրյալ մի հնչյուն, որի առաջին բաղադրիչն է u(v): Արևելահայերենում այդ դեպքում հին ո-ին կանոնավոր ձևով համապատասխանում է ᵘe(ve) և ᵘue(vue)[16], արևմտահայերենում ᵘo(vo)[17]: Հետահայաց ձևով մենք կիլիկյան հայերենի, որպես արևմտյան բարբառներից մեկի համար միավանկ բառերի սկզբում պետք է ընդունենք ᵘo(vo) հնչյունական արժեքը:

Մնացած դեպքերում կիլ. *ո*-ն մեր սովորական *օ*-ի արժեքը չունի, այլ իրենից ներկայացնում է, ինչպես արդեն հին հայերենում, մի անցման հնչյուն *օ*-ի և *ս*-ի միջև, այսինքն՝ մի փակ *օ*: Դա երևում է հետևյալ տառադարձություններից. Rupinūs=*Ռոբէն*, Curchus, Culchus, Curco, Courc

---

[13] Հմմտ. Han. WZKM 1, էջ 281, Мсср. Мушский диалект, էջ 24, Томсон, Диалектика города Тифлиса, էջ 32:

[14] Որոշ ժամանակակից բարբառներ գնում են ավելի հեռու: Օրինակ, տաճկահայ բարբառը, որտեղ բառասկզբի *ե-ն* արտասանվում է որպես ʲe: Հմմտ. Riggs Gramm., էջ 7:

[15] Վերջին վանկում գրության մեջ նախնական *ե*-ին փոխարինող է տառը, բնականաբար, տառադարձվում է որպես e, օրինակ, ամեն/=ամէն/, մեկ/=մէկ/:

[16] Հմմտ. Томсон, Ахалцихский диалект, էջ 33:

[17] Հմմտ. Мсср. Мушский диал., էջ 58: Լեհահայոց բարբառը բառասկզբում vo-ի կողքին ունի նաև թուլացած və. vorp դաս. որբ, vov դաս. ո վ, vəd դաս. ոտն, vər դաս. որ, vər դաս. ոռ. Han. WZKM 1:

(դրանց կողքին Coricus, Colco, Corc)≈ Կոռիկոս[18], պողեր-հֆր bouteıller, boutillier: Համապատասխանաբար, հֆր - on *ռնգայինի* համար (u-ի տիրապետող երանգավորումով) օգտագործվում է *ներթ-ոն, ներթ-ուն* Օրինակ, ջաբրոն և դրա կողքին *ջաբրուն*-հֆր chaperon, *ջալունջ*=հֆր chalonge, *պարոն*=հֆր baron, բայց միաժամանակ *գունթ*=հֆր comte և այլն Ասվածի համաձայն, օտար բայ *օ*-ն կիլիկյան հայերենում կանոնավոր ճևով տառադարձվում է ոչ թե որպես *ո*, այլ *աւ* և *օ* գրանշանների օգնությամբ օրինակ, *լիգատուն*=հուն λεγατόν , *սին օռ*=հուն συνορος, *ճաւֆրէ*=հֆր eseoffrey, *աւդրել*=հֆր otriet, *ընփրիօր*=հֆր empereur, *Մոնֆօրտ*=հֆր Montfort, *ճօսլին*= հֆր Josselin և այլն Կիլ *օ*-ն միավանկ բառերի սկզբում մենք *տառադարձում ենք որպես* vo, *այլ դեպքերում որպես օ*

Ծան - Նոր հայերենի օրենքը, որի համաձայն հին հայերենի շեշտակիր վերջին վանկի *ո - օ* ճայնավորն արևմտյան բարբառներում դառնում է ᵘo[19], իսկ արևելյան բարբառներում՝ ᵘɐ[20], կիլիկյան հայերենում կարծես թե դեռ չի գործում[21] Հետագա ուսումնասիրությունը պիտի պարզի, թե արդյոք *հրէ է, եմ արդեն նախադրյալներ այդ հնչյունափոխության համար*

---

[18] Տե՛ս Սիսուան, էջ 333

[19] **Այսպես, օրինակ, *Մշո բարբառում*** (Мсеь, էջ 58) huoϒ (հող), եղ սեռ hoϒı, cᵘov (ծով), եղ սեռ covu, gᵘort (գորտ), եղ սեռ gortan, հոգն ուղղ gortᵉr

[20] **Այսպես Ախալցխայի բարբառում** (Том , էջ 32), kᵘerȷ (գործ), սեռ korȷı, vᵘesd (*ոստ*) սեռ vosdı vᵘedkᶜ (ոտք), սեռ odkᶜı և այլն

[21] Լեհահայոց բարբառում նույնպես կարելի է ցույց տալ հհ *ո*, օ-ի այդ ճյուղավորումը մի բան, որի վրա պատշաճ ուշադրություն չի դարձրել Համուշը /WZKM 1, էջ 288/ Հին *ո օ* հնչյունին միավանկ բառերի սկզբում ինչպես նաև շեշտակիր վանկում համապատասխանում է və որ իրենից ներկայացնում է vo կապակցության ծուլացումը, ոչ վերջին վանկում, սակայն, պարզ o հնչյունը Օրինակ, vəd ոտք, բայց սեռ odıç, հոգն ուղղ odvəner, vər «հեռուից», բայց սեռ orun, գործ orov, հետո vər (որ), vəγəĕ ողջ, çvər (չոր), kvəγ (գող), հոգն koγer, gvək (կոկ) Բերենք նաև fəd (=հոտ), fərt (=որթ), tfər (=թոռն) ձևերը, որ ծագում են համապատասխանաբար հետևյալ ձևերից *hvəd (ավելի հին *hᵘod) *hvərt (ավելի հին *hᵘort), որ առաջացել է բառավերջի բաղաձայնի շնչեղացման անցումով բառասկզբի բաղաձայնի վրա, *thər (=ավելի հին *thᵘor), որ առաջացել է բառասկզբի շնչեղ բաղաձայնի տարրալուծումով Վերջին ձևերում hv դարձել է f նույն հնչյունական օրենքի համաձայն, ըստ որի, օրինակ, Ախալցխայի բարբառում (Том , էջ 56) mayh «մահ» գոյականի համար առաջացել է mayfan<*mayhvan սեռականը/=դաս *մահուան* mahvan, ուղղ *մահ, մարհ/* Դրա կողքին պահպանվել է vo ավելի լիակատար ճևը միայն vorp /=որբ/ vov /ո վ/ բառերում və կապակցության փոխարեն ավելի հաճախ գտնում ենք պարզ ə. čər, čərs /=չորս/ cıavər /=ճիաւոր/, pᶜəs /=փոս/ čər /=չոր/, nər /=նոր/,

§ 8 ա) Կիլ *այ* բառավերջում = a Այդ հնչունական արժեքն այս դեպքում պահպանվել է նաև ժամանակակից արտասանութ֊յան մեջ Կիլիկյան հայերենում առկա են դուգահեռ դրութ֊յուններ ապա և *ապայ*=aba, *նա* և *նայ*=*na*, *ինա* և *ինայ*=ina և այլն Բառավերջի օտար a-ին համապատասխանում է կիլ այ - a, օր *ճառայ* jaŕa արաբ jarra, *խալապայ* xalaba *արաբ* γalaba *մինայ* mina *արաբ* mīnā և այլն Քանի որ բառավերջի յ-ն այստեղ մեռած, չհնչվող մի նշան է, միջին հայերենում այն մեծ մասամբ բաց է թողնվում Այդպես 1286 թ մի արձանագրութ֊յան մեջ /Շիր, էջ 72/ կարդում ենք *ծառա*, *Յոհնա*, *ապաւինեցա*, *ընծա*, *ջանա* /դաս *ծառայ*, *ջանայ* և այլն/ Այնուհետև 1036 թ մի արձանագրութ֊յան մեջ /Շիր, էջ 82/ *Սմբատա*, *Գագիկա*, *Վահրամա*, *Վասակա* /դաս *Սմպատայ* և այլն/ Բառավերջի *այ* նշանը մենք *տառադարձում* ենք *որպես* a:

Ծան - *հայ*, *քայ* միավանկ բառերում, ինչպես նաև *այ*, *վայ*, և այլ նման ձայնարկութ֊յուններում, *այ*-ն ունի, ժամանակակից բարբառների նման, ay հնչունական արժեքը hay, pay և այլն

բ) Բառամիջում ձայնավորներից առաջ, ժամանակակից արտասանութ֊յան համաձայն, *այ*-ը հնչում է ay Քանի որ նույնիսկ ժամանակակից բարբառներում ձայնավորներից առաջ *այ* երկբարբառը պահպանում է հին հնչումը /հմմտ Han WZKM 2, էջ 301/, միջին հայերենի համար դա առավել ևս ճիշտ պիտի լինի Այսպիսով, հնչունական արժեքի համաձայն, մենք *տառադարձում* ենք կիլ *վկայեմ* որպես vgayem, *տղայոց* որպես dγayoç և այլն

գ) Կիլ *այ*-ը բաղաձայններից առաջ համապատասխանում է օտար ai կապակցութ֊յանը հետևյալ բառերում *պայլ* bail հֆր bail, պայլութ֊իւն bailut^{c}ün հֆր baillage, *բլայթ* plait^{c} հֆր plaid, բլայթել հֆր plaidier մլ plaitare, *վիգայր* vikair ռոման vikair, *սայզեմ* saizem հֆր saisir, *սայզի* saizi հֆր saisie, *մայստռ*, *մայստր* maistr, maistr բյուզ ματστρος (μαισεωρ), *ֆայլել* failel հֆր faillir

Հակառակ դրան, *այ*- դրվում է նաև օտար ā ձայնավորի փոխարեն օրինակ, *կումայշ* և դրա կողքին *կումաշ*=արաբ qumāš, *բայժ* և դրա կողքին *բաժ* - նպ bāž (bāj), *բայժռուն* և դրա կողքին *բաժռուն*, *սիւանպայշի*=թուրք, պարս divānbāšy, *ախալխիր*=արաբ ^{c} āqāqīr Այստեղ հանդիպող *ա*-ով տարբերակները ցույց են տալիս, որ *այ*- կապակցութ֊յունը պարզ

---

mәm /=մոմ/, arәyč /=առոդջ/ okәrd/=գորտ/ և այլն Մասամբ *o* հնչունը պահպանվել է անփոփոխ ձևով օրինակ čor čors aroxč t'akevor hargevor և այլն այնպես որ այս բարբառում այդ օրենքը ենթարկվում է ուժեղ սահմանափակումների

ձայնավորի արժեք է ունեցել[22] Այնուհետև պարզ ձայնավորի հնչյունական արժեքն *այ* կապակցությունն ունի, օրինակ, հետևյալ դեպքերում *աստուածայպահ/աստուածապահ* ձևի փոխարեն/ L. 158, *ըղտայքեռն/=ըղտաքեռն/* L 157-6, 8, *ձեռնայդրեց/=ձեռնադրեց-/* L. 158: Արոյնսի /հոգի/, *արոյն* և *արուն* /Մխ Հեր / ձևերի կողքին, մենք կարդում ենք *այրոյն* /Անս Անտ /, որ անշուշտ պետք է արտասանել aruin, *համանք* hamank^{c} ձևի կողքին /Անս Անտ / նաև *համայնք* /Միսուան, ԷՋ 475/, որ նույնպես պետք է արտասանվի որպես hamank^{c}· *Աժեմ* ձևի կողքին նաև *այժեմ* ažem, *աժենամ* ձևի կողքին նաև *այժենամ* aženam: Այդ բոլոր դեպքերում *այ-* ն ունի a հնչյունական արժեքը Պետք է ենթադրել, ուրեմն, որ կիլիկյան կենդանի լեզվի մեջ հին *այ*-ն ai իսկապես արտասանվել է որպես a: Այս ենթադրությունը հաստատվում է հետևյալ փաստերով *այն*, սեռ *այնոր* ձևի կողքին գտնում ենք արդեն *անոր* 37-17 *այրնել* ձևի կողքին նաև *արնել* /Մխ Հեր / *այնել* ձևի կողքին /Անս Անտ / նաև *անել* /*Լևոնի արտոնագիր*/ Վերջին աղբյուրի մեջ առկա են հետևյալ ձևերը *անէ/=այնէ/* 188-10 18, *արած/=այրած/* 188-22, 33, 36 *արել* /=*այրել*/ 189-5 նույն աղբյուրի մեջ *պածառ* bajaŕ 187-13-դաս *պայծառ* Դասական *այն* դերանունն իր կողմնից դարձել է *ան*, ինչպես ապացուցում է *հանչաք* ձևը, նաև *անչաք/=այնչաք/*, ԷՋ 55-6 «Լևոնի երգի» մեջ /Dul , ԷՋ 539, 540/ արդեն գտնում ենք *կու լար* հին *լայր* ձևի փոխարեն, նաև *ալ* փոխանակ հին *այլ* Առհասարակ ԺԴ և ԺԴ դարերի *տեքստերը մեծամասնությանը ուղղագրության* մեջ *կույլ են տալիս այ* երկբարբառի պարզեցման ուժեղ հետքեր, ըստ որում սովորաբար ավելի հին *այնել* ձևի փոխարեն հանդիպում ենք *անել* ձևին, ավելի հին *հայնց* ձևի տեղ նոր *հանց* գրությանը և այլն Այն դեպքերում, սակայն, երբ այդ ժամանակվա միջինհայերենյան բանաստեղծության մեջ մենք ունենք *այ*-ով հին գրելաձևը, կասկածից դուրս է, որ պետք է կարդալ a, ինչպես երևում է հանգերից[23]

---

[22] *Նման ձևով վարվում է արդեն հին հայերենն ծառ երկար ō (հուն ω ձայնավորն ո+վ կապակցությամբ տառադարձելիս /օր Յովսէփ/ Iōsēp^{c}), Յովհաննէս Jōhannēs, Ենովք Enōk^{c}, Մովսէս Mōsēs, հուն Ιωσηψ, Ιωαννης, Ενως, Μωσης Ըստ այդմ, մեր դեպքում ծառ ā-ն փոխառությունների տառադարձվում է որպես ա+յ, այսինքն a+համապատասխան կիսաձայնը Ինչպես որ այնտեղ ով /հուն ω/, ունեցել է ō հնչյունական արժեքը, այդպես էլ այստեղ *այ* /արաբ պարսկ ā/ ունի ā հնչյունական արժեքը Երկու դեպքում էլ *վ* և *յ* միայն ձայնավորի երկարության նշանները են*

[23] *Օրինակ Կոստանյանցի ժողովածուի /Թիֆլիս, 1892/ մեջ հայերեն տողերում գտնում ենք հետևյալ հանգերը *վախենար-վայր* 1, 11 *ունայն-անարժան* 1, 36 *ունայն-վատարժան* 1, 36 *խաղայր-դիւահար* 1, 42, *գայր-տըրտար* 1, 43 *կենայր-խաւսար* 1,*

Շարադրածից կարելի է եզրակացնել, որ հհ *այ*-ը ԺԴ և ԺԴ դարի կիլիկյան ժողովրդական լեզվի մեջ, եթե ոչ այնքան համընդհանուր ձևով, որքան ժամանակակից արևմտահայերենում[24], ապա գոնե ըստ մեծի մասին դարձել է պարզ a և որպես երկբարբառ անհետացման ընթացքում է գտնվում Գրուելյան մեջ, սակայն, դեռևս պահպանվում է մասամբ հին երկբարբառային գրելաձևը Տառադարձությունները, ինչպես *պայլ*, *Քայլեմ* և այլն, ցույց են տալիս, որ գրական լեզվի մեջ նաև հին երկբարբառային արտասանությունն ընդունված է եղել որպես «ուայալ» և գրքային Վաղ կիլիկյան շրջանում երկբարբառային արտասանությունն, ըստ երևույթին, դեռևս պահպանվում է Այդ պատճառով մենք կիլ *այ*-ը բաղաձայններից առաջ տառադարձում ենք որպես ai.

§ 9 *ոյ* կապակցությունը նույն ճակատագիրն ունի, ինչ *այ*-ը.

ա) Բառավերջում *ոյ*-ը զուգորդվում է *ու*-ի հետ հոգնակիի սեռականի և առհասարակ սեռականի վերջավորության մեջ օրինակ, *Ճորտերոյ*, 13-12, *Ճորտերու* 3-4 *յ* տառն այստեղ, ինչպես նաև բառավերջի *այ*-ի դեպքում, չհնչվող զուտ պատմական մի նշան է, և այդ պատճառով բայ է յիողնվում արձանագրություններում[25] Բառավերջի *ոյ* կապակցությունը մենք տառադարձում ենք որպես *o*

բ) Բառամիջում ձայնավորներից առաջ, ժամանակակից ավանդական արտասանության համաձայն, հհ *ոյ*-ն ունի *uy* հնչունական արժեքը Կիլիկյան հայերենի համար այդ հնչյունական արժեքը հաստատ է հմմտ *պտոյեանք*, *պտոյիք*, bduyeank^{c}, bduik^{c} «բեղվիններ»=արաբ badū /հոգնակի/

գ) Բաղաձայններից առաջ *ոյ*-ն ունի հին հայերենի ժամանակակից արտասանությանը համապատասխանող ui հնչյունական արժեքը հետևյալ բառերում Պաղտոյն bayduin հ֊ֆր Baldouin, *Լոյս* luis հ֊ֆր Louis, *զոյներ* kuiner հ֊ֆր cuilner /տե՛ս Բառարանը/ և այլն Այնուամենայնիվ, այստեղ էլ, ինչպես *այ* կապակցության դեպքում, եթե ոչ ամենուր, ապա գոնե դեպքերի մեծ մասում, գրելաձևը զուտ պատմական է, ինչպես ցույց են տալիս տատանումներն ուղղագրության մեջ Այսպես, *քուրվոի* հոգնակիի կողքին գտնում ենք *քոյրվոի*, որ, բնականաբար, նույնպես k^{c}urvdi է արտասանվել

43, *կու գայր կու տայր-Ճարտար* 1, 43 *շատանայր-դըժար* 1, 44 *երթայր-էթամեար* 1, 44 *ամենայն-տան* 1, 55 *միայն -յման* 2, 6 և այլն

[24] Այսպես՝ լեհահայերենում, տաճկահայերենում և այլն Դրան հակառակ արևելահայերենում կանոնավոր կերպով հին ai-ը դարձել է պարզ e ձայնավոր /հմմտ Պալաս, էջ 9/

[25] Հմմտ արձանագրություններ Շիր էջ 84, 85 և այլն

Այրոյն, արոյն ձևերի կողքին նաև *արուն* /Մխ. Հեր./, *արոյրի* ձևի կողքին նաև *այուր* /նույն տեղը/ և այլն:

Laudamus լատիներեն բառը ֆոնադրման կիլիկյան կանոնադրությունի մեջ /Սիսուան, էջ 474/ տառադարձված է *լաւտամոյդ*, ուրեմն ոյ=ա: Միշտ *ու*-ով /հին *ոյ*-ի փոխարեն/ գրվում է *ուժ* բառը /դաս. *ոյժ*/: Արդեն ուշ դասական լեզվի մեջ հանդիպում են *անուժ* /դաս. անոյժ/, *անուշ*/դաս. անոյշ/: Լևոնի երդի կրկնակում /Dul. 539, 540/ կա *լուա* ձևը /փոխանակ դաս. *լոյս*/ և այլն:

Ու-ով գրությունից կարծես ֆեն հետևում է, որ այս բառերում *ոյ>ու* հնչունափոխությունը կատարվել է ավելի շուտ, քան այլ դեպքերում, որոնցում պահպանվում է *ոյ* հին գրությունը, չնայած որ այստեղ նույնպես *ոյ*-ի երկբարբառային բնույթը Սմբատի լեզվի և ուշ շրջանի կիլիկյան հայերենի համար խիստ կասկածելի է: Վաղ Կիլիկյան շրջանի համար, սակայն, մենք պետք է ամենուր ընդունենք ui հնչունական արժեքը, և այդ պատճառով կիլ. *ոյ*-ը հետագայում տառադարձելու ենք որպես ui.

§ 10. ա) Կիլ. *իւ*-ը ձայնավորներից առաջ հնչում է iv. օրինակ, *միւան divan* նպ. dīvān, *հիւանդ* hivand և այլն: Նույն ձևով *իւ* հնչում է նաև բառավերջում: Դա բխում է ժամանակակից բարբառների տվյալներից, որոնք այս դեպքում միշտ պահպանում են հին արտասանությունը: Ուրեմն, կիլ. *կռիւ*=gṙiv և այլն:

բ) Բաղաձայններից առաջ կիլ. *իւ*-ն ունի պարզ ձայնավորի հնչունական արժեքը: Այն իրենից ներկայացնում է հհ. *իւ* iu երկբարբառի և ժամանակակից բարբառներում նրա կանոնավոր համապատասխանությունը հանդիսացող i ձայնավորի միջև դնվող մի հնչյուն, որ առաջինից գոյանալով, համապատասխանում է մոտավորապես մեր ü-ին[26]: Հմմտ. *կիւտ* «տեր»= միջին հունարեն χῦρ: Ինչպես երևում է, արդեն հին ժամանակներում հուն. υ տառադարձվել է *իւ*: Կիլ. *իւ*-ի պարզ ձայնավոր լինելը բաղաձայններից առաջ երևում է նաև հետևյալ գրություններից. *կշիւռ* 79-13 /փոխանակ *կշիռ*/, *իւրենք* Սարվ. արտ. /փոխանակ *իրենք*/[27]: Մենք տառադարձում ենք այն որպես ü:

---

[26] Նույն երևույթը ունենք նաև գերմանական տարածքում, որտեղ հին վերին գերմաներեն iu երկբարբառն արտաքնապես, այսինքն գրության մեջ, պահպանվում է միջին վերին գերմաներենում, սակայն հնչունական արժեքի տեսակետից դարձել է երկար ü, այնպես որ հվգ. iu իսկապես=iu, բայց նվգ. iu=ü, հմմտ. Braune, Ahd. Gramm, էջ 38:

[27] Նույն երևույթը հանդիպում է արդեն նախակիլիկյան շրջանում հետևյալ զուգահեռ գրությունների մեջ. *ճիռ, ճիւռ. ակճիռ, յակճիւռս, յաճիւռ. ճանճիռն, ճանճիւռն. սիրռ,*

§ 11 Ինչպես հետևում է նոր հայերենի և ժամանակակից բարբառների արտասանությունից, կիլիկյան հայերենում *եւ* նշանագիրը պետք է արտասանվի ev /կամ ʿev շեշտակիր վանկում/, բայց երբեք eu Հմմտ կիլ. *Լեւոն*=բյուզ Λεβουνης, արաբ Leyfon Langl. Cart., էջ 217

§ 12 *ա*) Ձայնավորներից առաջ և բառավերջում, հին լեզվի նման, *աւ*-ն ունի av հնչյունական արժեքը. Այդպես, օրինակ, ուշ հուն σαβανον տառադարձվում է *սաւան* savan, թուրք čavuš որպես *չաուշ/չավուշ* ձևի կողքին/, և ընդհանրապես *աւ*-ը և *ավ*-ը փոխարինում են իրար ուղած ձևով

բ) Դեռևս 1000 թվականից առաջ *աւ*-ը բաղաձայններից առաջ ձեռք է բերել կարճ բայց *օ*-ի նշանակությունը Հմմտ այդ մասին Arm. Gramm., էջ 328 *Աւ*-ը բաղաձայններից առաջ կիլիկյան միջին հայերենում նույնպես ունի *օ* հնչյունական արժեքը և օտար բառերում համապատասխանում է *օ* հնչյունին օրինակ, ատրել otrel=հֆր otrier, *աւդրէ* otre=հֆր ottrei, ottreid, *գանչ* konç = հֆր conse, *լիդաւան* liyadon= հուն Λεγατον:

§ 13 Հին *աւ*-ից առաջացած *օ* հնչյունն ավելի ճշգրիտ ձևով նշանակելու համար, ԺԲ դարից սկսած, կիրառվում է հունարենից փոխառված հատուկ մի նշանագիր *օ* /=հուն ὀմիկրոն/, որը, չնայած հաճախակի գործածված է եղել միջին հայերենի համար, բայց, ինչպես հայտնի է, մնել է նաև դասական գրականության ճեռագրերը, որտեղ մենք դնում ենք այն կանոնավոր ձևով հին *աւ* au նշանի փոխարեն և, բնականաբար, պետք է արտասանենք նույնպես որպես au[28]. Մեր միջին հայերենում հին *աւ* նշանի տեղ կանոնավոր ձևով դնում ենք *օ*, բացառությամբ արձանագրությունների, որտեղ[29] նոր *օ* նշանը համարյա մուտք չի գործել, և պահպանվել է հին *աւ* գրությունը մհ. *օ*-ի համար Այսպես, արձանագրություններում կարդում ենք *հաւր* hor

---

սփիւռ գամբիռ, գամբիւռ շիռ, շիւռ փիռ, փիւռ փիռօ, փիւռօ ուղիռ, ուղիւռ շաւիռ, շաւիւռ ճիռ, ճիւռ Ի-ով գրությունն այս դեպքում նախնական է միայն ուշ դասական և հետդասական շրջանում դրա փոխարեն երևում է նաև *իւ* Այդ *իւ*-ն, անկասկած, ունի պարզ ձայնավորի հնչյունական արժեքը և իրենից ներկայացնում է *ւ* հնչյունը որ սարերվում է, սակայն, սովորական *ի, ւ* ձայնավորից Բանն այն է, որ ուշ դասական շրջանից սկսած երևան է գալիս այդ բառերի երրորդ *ե*-ով գրությունը օրինակ, *կշիռ* և կշիւռ *ձևերի* կողքին նաև *կշեռ շիռ* և *շիւռ*, նաև շեղ *փիռ* և *փիւռ*, նաև *փեղ փիռօ* և *փիւռօ*, նաև *փեղօ ուղիռ, ուղիւռ*, նաև *ուղեղ շաւիռ, շաւիւռ*, նաև *շաւեղ* և այլն, այնինչ նախնական *ի*-ն նայերից առաջ միջին հայերենում դառնում է *ե*

[28] Հմմտ Arm Gramm., էջ 2, Anm 3 ինչպես նաև ZDMG 30, էջ 67

[29] Ինչպես կույց են տալիս Ալիշանի մոտ /Այրարատ Սիսական, Շիրակ/ բերված արձանագրությունները·

/Շիր. 72, 1213 թ./, *աւրհնին* o̲rhnin /Շիր. 73, 1286 թ./, *հզաւր* /Շիր. 75, 1215 թ./, *նշանաւք* /նույն տեղը/, *աւր* /նույն տեղը, էջ 75/ և այլն, իսկ Անտիոքի անսիզներում կանոնավոր ձևով ունենք *օր* or, նշանօք nšano̲kᶜ, ուղղ. նշան. հօր, ուղղ. հայր և այլն: Քանի որ երկու նշաններն էլ - *աւ* և *օ* արտահայտում են միևնույն հնչյունը, *տաւր* և *փոխառյալ բառերում օ*-ի փոխարեն հանդես է գալիս կամ մեկը, կամ մյուսը: Օրինակ, *սօլ* sol, հֆր. sol, *սօլեր* sōlⁱer հֆր. solier, *սինօր* sino̲r հուն. συνορος, συνορον, *նօտար* no̲dar հուն. νοταριος, Մունֆորդ Munfort հֆր. Montfort, *Կիօտին* Gio̲tin հֆր. Guillotin, Օքսենց Oksⁱenç հուն.Αοξεντιος (Oxentios), *լաւդաոիաս* lo̲gorias /հմմտ. Բառարանը/, *տիպաւմ* և դուգահեռ *տիպօմ* dibon, *Պապէդաւմ* և դուգահեռ *Պապաոմ*, լատիներեն տառադարձությամբ Baberom: Հմմտ վերևում *աւ*-ի տակ. *աւդրել* otrel, *աւդրէ* o̲tre և այլն: Անփուլթ գրությունն ունի *աւ*-ը և *օ*-ն կարող են փոխարինել նաև *ո* նշանով. օրինակ, *Ճօսլին, Ճոսլին* հֆր. Josselin: *Ըռաւբէն* Ըռոբենի-ի կողքին, հաւքսող, հօքսող հոգսողի կողքին, *հաւն, հօն* հոն-ի կողքին և այլն: *Աւ* և *օ* նշանները, որ արտահայտում են բայ *օ* հնչյունը, տառադարձվում են որպես *օ*:

Ծաւն. Հետաքրքրական է, որ պակաս խնամքով գրված որոշ ձեռագրերում ձայնավորներից առաջ, փոխանակ *աւ*-ի, գրվում է *օ*, անշուշտ սխալմամբ, քանի որ այստեղ *օ* նշանին տրվում է av հնչյունական արժեքը: Այդպես Ասորա-հռոմեական դատաստանագրքում /հրատ. Bruns et Sachen/. *քերօ* perav էջ 117, *մերճաւոր* mercavor էջ 116, *տւրն* avurn էջ 117, *հաւասարեցի* havasareçi էջ 98, *առաձել* arav^el էջ 107, *իրաւցի* iravaçi էջ 107, *իրաւնցն* iravançn էջ 110, *սպասաւորէն* spasavore̲n էջ 111, *միաորուլթիւն* miavorutᶜün էջ 112 և այլն: Բաղաճայններից առաջ, սակայն, նույն բնագրի մեջ գրվում է *օ*=o. *օրէնքն* o̲renkᶜn էջ 97, *փաղչօլ* pᶜayčol էջ 105 և այլն: Ուրեմն, ունենք մի կողմից *աւ=օ=av*, մյուս կողմից *օ=օ*=av, այսինքն՝ ֆունկցիայի չարդարացված մի ընդլայնում, որ պայմանավորված է համաբանությամբ:

§ 14. Հավելված: Բաղաճայններից առաջ նույնպես *աւ, իւ, ոյ, այ* - հնչում են av, iv, uy, ay /և ոչ o, ü, ui, ai/, երբ հին հայերենում այդ կապակցություններին համապատասխանում են նույն հնչյունները, այսինքն. ա) եթե այդ կապակցությունների և հաջորդող բաղաճայնի միջև դուրս է ընկել մի հնչյուն, այնպես որ սկզբնապես և բուն իմաստով դրանք գոնվում են ձայնավորից առաջ: Օր. կիլ. *հաւնիմ* havnim դաս. հաւանիմ, կիլ. *հաւսար* havsar դաս. *հաւասար*, կիլ. *աւտամ* avdam դաս. *հաւատամ*, կիլ. *հիւանդութիւն* hivənduᵗᶜün դաս. *հիւանդութիւն*: Այս արտասանությունը հաստատվում է դուգահեռ գրություններով, օրինակ, *ավտամ, հիվընդութիւն*, ինչպես նաև համեմատությամբ ժամանակակից լեզվի հետ, որտեղ այս դեպքում առկա են

նույն հնչյունները Հմմտ դասական հայերենում *աղաւնի*< նախահայերեն **աղաւիւնի* ałavini, որ հավանական է դառնում Լեհ aγvenik^{c} ձևի շնորհիվ (Han. 22), *գաւիթ* եզ սեռ *գաւթի*, *շաւիղ* šavił հոգ սեռ *շաւղայ* šavłaç և այլն Հմմտ Arm. Gramm, էջ 2: բ) Երբ բառավերջի *աւ*, *իւ* և այլ կապակցություններ վերջավորությունների միացման շնորհիվ տեղափոխվում են բառամիջի դիրք Քանի որ այս դեպքում ինչպես հին, այնպես էլ նոր հայերենը պահպանում են av, iv նախնական արտասանությունը, մենք պետք է ընդունենք վերջինս նաև կիլիկյան միջին հայերենի համար և պետք է կարդանք *կռիւն* gṙivn (=gṙiv+n), *հալաւն* halavn(=halav+n), *կտաւնի* (=gdav+ni) և այլն

Ծան Այստեղ նույնպես *իւ*-ը սկզբում դրվել է ճայնավորիյ առաջ, քանի որ *կռիւն*=gṙivən, հհ kṙıvən=նախահայերեն *kṙiv-an. *կտաւնի*= gdavənī=*ktav-ani և այլն

Բացառություն է կազմում միայն *-աւք* և *-իւք* վերջավորություններով հոգնակիի դրծիականը դասական հայերենի համար ժամանակակիից ավանդույթ ընդունում է ok^{c} /=հհ auk^{c}/ և iuk^{c} հնչյունական արժեքները /Այտ Բ էջ 372/, և ոչ avk^{c} և ivk^{c}, ինչպես հարկ կլիներ ընդունել՝ եզակիի համապատասխան հոլովներիյ ելնելով Այս արտասանությունը ես համարում եմ, առնվազն ուշ դասական շրջանի համար, լիովին ճիշտ, որովհետև կիլիկյան միջին հայերենում համապատասխան վերջավորությունները հնչում են անշուշտ =ok^{c} և /քանի դեռ առկա է այդ վերջավորությունը/ ük^{c}, ինչպես հետևում է սովորական - *օք* դրությունիյ Սակայն մհ. ok^{c} ենթադրում է հհ auk^{c}, մհ - ük^{c} - հհ - iuk^{c}: Հմմտ Հնչյունաբ §71 և §73 ա

Բ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ

Պայթականներն ու կիսաշփականները

§ 15 Հհ շնչեղներն իրենց հնչյունական արժեքը պահպանում են, նոր հայերենի նման, նաև կիլիկյան հայերենում Այնպիսի տառադարձություններ, ինչպես *քիչ* նպ kīč, *քիմ* հֆր quite, *տիմոթիկ* հուն διαθηχη, *քամին* արաբ qamin, *փաղամպար*, *փաղամքար* նպ paiyambär, վկայում են այդ մասին Այստեղ հայերենի շնչեղները համապատասխանում են օտար նրբերին (խուլերին) կամ շնչեղներին[30]

---

[30] Կիլիկյան շնչեղները հաճախ համապատասխանում են օտար նրբերին (խուլերին), դա կապված է մասամբ այն բանի հետ, որ շատ անգամ օտար այսպես կոչված, նուրբն (խուլ) իրականում շնչեղ է, մասամբ էլ այն բանի հետ, որ հայերենի նրբերը, որպես իսկական կատկային փակվածքով արտադրվող բուն կովկասահայ նրբեր,

§ 16 Հին նրբերի (խուլերի) և միջակների (ճայնեղների) հնչյունական արժեքը պարզելու համար գոյություն ունի մի շատ լավ միջոց միջին, հատկապես կիլիկյան հայերենի փոխառությունները[31] Այսպես՝ նպ bāzār=կիլ պազար bazar, հֆր bail=կիլ *պայլ* bail, հֆր baron=կիլ *պարոն* baron, հֆր banier=կիլ *պաներ* banier, արաբ burǰ=կիլ *պուրճ* burg, որոնցից հետևում է, որ բառասկզբի կիլ *պ*=b Այլ օրինակներ խապար= արաբ xabar, *սապոն*= արաբ sabun, *մինապան*= մլ տառադարձությամբ miraban, այսպես՝ Պապառոն babaṙon= մլ *տառադարձ* Baberom, *մուխթասիպ*=*արաբ muhtasıb, ռուպպ*=*արաբ rubb*:

Այսինքն՝ բառամիջում և բառավերջում նույնպես կիլ *պ*=b:

Նույնը վերաբերում է հին հայերենի մնացած նրբերին (խուլերին) օրինակ, *միւան* divan=նպ dīvān, *մըֆընդել* dəfəndel = հֆր dəfendre, *մուպլ* dubl= հֆր double, *մֆթար* dft^{c}ar=արաբ պարսկ daftar, , *մուկ* dug կամ duk հուն δουξ հֆր duc, *լուկամ* lugam, լկամ lgam = նպ ligām, *լիկամթ* ligat^{c} հֆր légat, *մզկիթ* mzgit^{c}=նպ mazgit, *իկուիշ* igdiš = թուրք iγdiš, *Պաղդույն* baγduin=հֆր Balduin, *թէզպիր* t^{c}ędbir, *թադպիր* t^{c}dbir=արաբ tadbīr, tädbīr, կիօդին giotīn=հֆր Guillotin, *կուկլակ* Guglag *տառադարձ* Gogulag և այլն Այստեղից հետևում է նրբերի (խուլերի) հին նշանագրերը կիլիկյան հայերենում ունեն համապատասխան միջակների (ճայնեղների հնչյունական արժեքը

§17 Ընդհակառակն, դասական միջակները (ճայնեղները) կիլիկյան հայերենում ունեն համապատասխան նրբերի (խուլերի) հնչյունական արժեքը, ինչպես երևում է տառադարձություններից *աւդրել* ǫtrel=հֆր atrier, *բլայթ* plait=հֆր plaid, *բլայթել* plaidier, *աւուգաթ* avukat^{c}=հֆր avocat, *գան* kan=հֆր canne, cane, *գումին* kumin=հֆր commun, comun, *գունդ* kunt /գունթ/=հֆր comte, *գունչ*, *գանչ* kunç, konç=հֆր conse, *գոյներ* kuīner=հֆր Couilner, *դամփլ* tamp^{c}l=հֆր temple, *դարիթ* tarit^{c}= մլ tareta, *դրայիդուր* trayitur=հֆր traytor, traïtor, *ընբրուր* əmprur, *ընբրուր* onprur= հֆր emperour, *Մունֆօրդ* Munfort= հֆր Montfort, *մարգիզ* markiz=հֆր marchis, Ռոբէն, *Ըռոբէն* ərope̱n=մլ տառադարձ Ropınus, Rupinus: *Չմմտ թագւոր* t^{c}akvor, *արաբ տառադարձ* tagfuṙ, Վիլլեբրանդի[32] *մոտ* Tacfol·

այնքան լավ հատկացված չեն սովորական նրբերը վերարտադրելու համար, որքան շնչեղները

[31] Չմմտ ZDMG 46, էջ 268, Arm Gramm էջ 15, 260, 261, 391 և այլն

[32] Վիլլեբրանդ Օդենբուրգցին գերմանացի կանոնիկոս է, որ 1211 թ Սիս քաղաքում ականատես է եղել հայկական ջրօրհնեքի հանդեսին և այն նկարագրել իր ուղեգրությ-

§ 18 Հնչյունական արժեքի նույն տեղաշարժը տարածվում է նաև *նուրբ (խուլ)* և *միջակ (ձայնեղ) կիսաշփականների* վրա Դրա օրինակն են հետևյալ տառադարձումները բրինձ=հֆր prince, բասաճ=հֆր passage[33], ճառայ jaŕa= արաբ jara, *ճուշան* jušan=արաբ *պարսկ* jūšan, *ճօսլին* joslin=հֆր Josselin, *լիճ* liǰ=հֆր lige, *Ռուճէր* əruǰer= հֆր Roger, *զընճպիլ* zənǰbil= արաբ zanǰabīl, *ջաբրոն* čapron=հֆր chaperon, *ջալունջ* čalunǰ=հֆր chalonge, *ջալընջեմ* čalənǰem= հֆր chalonger, *ջամպլան* čamblan= հֆր chambellan, *ջանուն* čanun=հֆր chanone, *Ջառլ* čarl=հֆր Charls, *ջանսյլեր* čancl'er = հֆր chancelier և այլն

§19 Այստեղ առկա է, ուրեմն, բաղաճայնների մի ավարտված տեղաշարժ, հայկական երկրորդ տեղաշարժը, որը, սակայն, գրավոր արտահայտություն է ստանում միայն նոր, այսինքն տեղաշարժից հետո կատարված փոխառություններում, իսկ ավելի հին, ինչպես ընդհ, այնպես էլ փոխառյալ բառերը, արտասանությունը փոխելով հանդերձ, պահպանում են պատմական ուղագրությունը[34], որը, ինչպես հայտնի է, գործում է նաև ժամանակակից գրական լեզվի մեջ

Այդ պատմական գրելաձևի համաձայն պետք է կարդալ, օրինակ, կիլ *վկայ*=vga, կիլ *տղայ*=dya, կիլ *վճար*=vjar, կիլ *ապրիմ*=abrim, կիլ *կարենամ*=garenam, կիլ *պարտենամ*=bardenam և այլն Միաժամանակ ակնհայտ է, որ բաղաճայնների տեղաշարժը կարող է չափանիշ ծառայել փոխառության ժամանակը որոշելու համար[35]

յան մեջ Տե՛ս Կ Կոստանյանց, «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում», Թիֆլիս, 1910 թ էջ Զ /Ծան խմբագրի/

[33] Տե՛ս նաև ստորև «Տառադարձությունների» մեջ

[34] Հմմտ Arm Gramm էջ 261

[35] Այսպես *դիմոս*=հուն δημοσιον, *դարպաս=նպ* darvāza, *գումբէթ=նպ* gunbad, gumbad, *սուլտան=արաբ* sultan, *լիղատուն=հուն* λεγατον լատ legatum, *պարէկոս=հուն* παροιχος և այլ փոխառյալ բառերը հենց գրության մեջ են կրում վաղ փոխառության կնիքը Նրբերի և միջակների հնչյունական արժեքները հին են, չեն եղաշարժված և վերաբերում են այն ժամանակին երբ *դիմոս* հնչել է dimos *սուլտան* հնչել է sultan Եթե այդ բառերը փոխառված լինեին միջին հայերենի շրջանում, այսինքն տեղաշարժից հետո նրանք գրված կլինեին հետևյալ ձևով **տիմոս*, **տարբաս /*տարաբաս/*, **գումպէթ*, **սուլթան *լիղադուն *բառիգոս* Միջին հայերենում այդ նույն փոխառությունները պահպանել են գրությունը, բայց փոխել են արտասանությունը կիլ *դիմոս*=timos, *դարպաս*–darbas *գումբէթ*=kumpēt', *սուլտան*=suldan, *լիղատուն*=liyadon և այլն Հմմտ Hubschmann, ZDMG 46 էջ 268 Arm Gramm էջ 261 և այլն

§20. Հին պատմական գրությունն կողքին որոշ դեպքերում երևան է գալիս նորը, հնչյունականը.

ա) Ն *ռնգայինից հետո* հին հայերենի միջակը /ձայնեղը/ փոխարինվում է համապատասխան նրբով /խուլով/, միայն առանձին դեպքերում պահպանվում է միջակով /ձայնեղով/ գրությունը: Օրինակ, կիլ. *հինկ* հհ. *հինգ*. կիլ. *ժառանկ* փոխանակ *ժառանգ*. կիլ. *հանկիստ, հանկստեմ* փոխանակ *հանգիստ, հանգստեմ*. կիլ. *հնկակ* փոխանակ *հնգակ*. կիլ. *զանկատ, զանկատանք, զանկավոր* փոխանակ *զանգատ, զանգատանք, զանգավոր* և այլն:

Այս նոր գրելաձևի բացատրությունն համար մի բանալի է տալիս նոր հայերենը: Նոր հայերենում /Տաճկ., Լեհ. հմմտ. Han. WZKM I, էջ 312, II էջ 65/ *ռ ռնգայինից հետո* d,b, g, j, ǰ հին միջակները /ձայնեղները/ չեն տեղաշարժվում: Նույնը պետք է տեղի ունենար միջին հայերենում, և այդպիսով բացատրելի է դառնում նոր գրելաձևը: Օրինակ, հհ. *հինգ* կիլիկյան, ինչպես նաև նոր հայերենում շարունակում է արտասանվել hing: Բայց հենց այդ պատճառով պատմական *հինգ* գրությունը չի կարողացել պահպանվել *այն բանից հետո, երբ գ տառը ստացել էր* k *հնչյունական արժեքը*:

Հետևաբար, *ռ*-ից հետո գտնվող միջակների (ձայնեղների) համար օգտագործվել է *միջակների (ձայնեղների) ընդհանուր գործածություն ունեցող* նշանը, այսինքն այս դեպքում, *կ* տառը: Բաղաձայնների տեղաշարժի այդ անկանոնությամբ պայմանավորված է նաև ուղագրության անկանոնությունը, որը հին պատմական ուղղագրության մի խախտում է[36]:

բ) Պատմական գրելաձևը փոխարինվում է նոր հնչյունական գրությամբ նաև կիլ. *այո* (դաս. *այդ*), այտի (*դաս. *այդի*) յուսյական դերանվան մեջ, 2-րդ դեմքի *տ* դերանվանական հոդի մեջ /դաս. *դ*/: Կիլ. *տ*=d արտասանությունը *հաստատվում է նոր հայերենի տվյալներով, որտեղ մենք ունենք* ad, adi, d լեհահայ, տաճկահայ և այլ բարբառներում: Նախորդ դեպքի նման, այստեղ էլ հնչյունական գրությունը կիրառվել է բաղաձայնների տեղաշարժը չկատարվելու պատճառով:

§ 21. Պատմական գրությունը պահպանվում է հետևյալ բաղաձայնական խմբերում. *ստ, շտ, սպ, շպ, սկ, շկ*, սակայն հնչյունական արժեքն այստեղ միջին հայկական չէ, այլ հին հայկական: Այսպես, կիլիկյան

[36]Նույն հնչյունական ուղղագրությունն այդ դեպքում պահպանվում է ժամանակակից գրական լեզվի մեջ: Սակայն երբ հնչյունական գրությունն կողքին օգտագործվում է հին ուղղագրությունը, հնչյունական *արժեքը մնում* է նույնը. Այսպես՝ կիլ. *հինգ=հինկ*=hing, կիլ. *զրնդան=զրնատան*=zəndan:

հայերենում ունենք այսպիսի տառադարձություններ. ջաստեմ častem=հֆր.chastier, *ջաստել* častel=հֆր. chastier, *տրըստիմ* drəstim= նպ. durust, *մայստռ* maistr, մաստռ, mastr= հուն. μαΐστρος, հֆր. maistre, *գունդուստապլ* kundustabl=contestabile. նաև *ուսպիթալ, օսպիթալ* և *ոսքիթալ*=հֆր. hospital և այլն: Այստեղ *տ*-ն չունի կիլիկյան հայերենի համար ընդհանուր d հնչյունական արժեքը, այլ պահպանել է նրբի (խուլի) հին արտասանությունը՝ պաշտպանված լինելով այն ուղեկցող շփականով: Այդ հիման վրա, ելնելով նաև ժամանակակից հայ բարբառների տվյալներից, որտեղ st, št, sk, šk, sp, šp խմբերում հին հայերենի նրբերը (խուլերը) տեղաշարժի չեն ենթարկվում[37], մենք պետք է կարդանք կիլիկյան հայերենում. *-ստան* /հոգնակերտ վերջավորություն/= -stan, *հարուստ*=harust, *սպաննեմ*=spannem, *սպկիկ, սպրկիկ*=spgig, sprgig, *ստաժեմ*=stajem, *քշտեմ*=kštem, *կշտանամ*=gštanam, *հասկնամ*=haskŋam և այլն:

Հին հայերենի *կ* տառը նույնպես, որոշ դեպքերում, պահպանել է նախնական k արտասանությունը, չնայած որ մեծ մասամբ, հատկապես բառասկզբում, համապատասխան k հնչյունը դարձել է g: Այդ հետևությունը բխում է կիլիկյան հայերենի տառադարձություններից, ինչպես՝ *մարկ*=հֆր. marc, *տիաքիկ*=հուն. διαθήκη, *տուկ*=հուն. δούξ սեռ. δουχ-ος, հֆր. duc, իտ. duca, բայց հատկապես ժամանակակից բարբառների տվյալներից: Այսպես, օրինակ, լեհահայոց բարբառում հատկապես հաճախ բառավերջի -ak, -ik վանկերում, ավելի հազվադեպ բառասկզբում, k հնչյունը համապատասխանում է հին հայերենի *կ*-ին[38]:

Նույն դեպքերում, այսինքն՝ բառասկզբում հ-ից առաջ կամ *րգ, րդ* կապակցություններում, որոնք ժամանակակից բարբառներում արտասանվում են մեծ մասամբ շնչեղացած՝ որպես rk^{c}, rt^{c}, ինչպես նաև բառավերջի *ակ-իկ*-վանկերում, մենք իրավունք ունենք կիլիկյան հայերենի համար նույնպես դնել դաս. *կ*=կիլ. k հավասարությունը: Այս դեպքը, սակայն, արժանի է ավելի մանրամասն ուսումնասիրության - հմմտ. ստորև՝ §31 արաբ. բառասկզբի *g* բաղաձայնի տառադարձությունը հայերեն *կ*-ի միջոցով:

---

[37] Հմմտ. Han. WZKM I, էջ 305 և 307:

[38] Այսպես՝ ըստ Han. WZKM I, 305. 307, 308, 312. II 65 bardak «թաքուն»=դաս. պարտակ, hasərak=դաս. հասարակ, hedevak «ոտքով»=դաս. հետևակ, istak=դաս. յատակ, zadik=դաս. զատիկ, erek=դաս. երեկ, kahelu=դաս. զահել, karkelu=դաս. կարգել, kartalu = դաս. կարդալ և այլն:

§ 22 Ռնգայինները հնչում են այնպես, ինչպես դասական լեզվի մեջ պետք է ընդգծել միայն, որ *ն* նշանագիրը կոկորդային պայթականից առաջ ներկայացնում է *n* կոկորդային *ռնգայինը*

Շփականներից ու նայերից այստեղ պետք է ուշադրություն դարձնել միայն *յ* և *ղ* նշանագրերին Դեռևս Հ Հյուբշմանը յույց է տվել /ZDMG 46, էջ 257 հաջ/, որ հհ *ղ*-ն արդեն արաբական տիրապետության սկզբում կորցրել է իր նախնական ɣ /=հուն առոր l/ հնչյունական արժեքը և դանվում էր ավելի ուշ γ արտասանության ճանապարհին Կիլիկյան հայերենի համար ղ=γ հնչյունական արժեքը հատկապես պարզորոշ կերպով երևում է հետևյալ տառադարձություններից *փաղամպար* pʿaγambar, *պըղամպար* pəγambar= նպ paiγambar *լիղատուն* liγadōn=հուն λεγατον. *լուղոռիա*, *լողոռիա*=հուն λογαριασεης: *Ղազար* γazar տառադարձվում է որպես Gazar (L. Cart. էջ 172) Հմմտ § 31 Օտար ld հնչյունախումբը կիլ *ղտ* կապակցության միջոցով վերարտադրելու մասին տե՛ս ստորև §28 Կիլ *ղ*-ն մենք տառադարձում ենք որպես γ:

§ 23 *Յ* նշանի հնչյունական արժեքը բառամիջում և բառավերջում արդեն քննվել է վերևում՝ §§8,9 Բառասկզբում հին հայերենի ժամանակակից արտասանության մեջ *յ*-ն ունի հ հնչյունական արժեքը օրինակ, ժամանակակից արտասանությամբ, *յարմար*, *յապաղել*, *յոյս*, *Յակոբ*, *անյապաղ*, *Յերայոյս*=harmar, anhapaγ, tʿerahuis և այլն /ըստ Այտ Բ 371/ Ոչ բուն հին հայերենի, այլ ավելի շուտ ուշ դասական, հետդասական և միջին հայերենի շրջանների համար այս արտասանությունը պետք է իսկապես գոյություն ունենար Ինչ վերաբերում է կիլիկյան հայերենին, այստեղ *յ* նշանագրի հ հնչյունական արժեքը կասկածից դուրս է և հաստատվում է հետևյալ զուգահեռ գրություններով *հետ* և *յետ* /հմմտ Բառարանը/, *հետի* և *յետի* /հմմտ Բառարանը/, *հայրենէթիւթիւն* և *յայրենէթիւեան* առաջինն ըստ բառարանի «աքսոր», երկրորդը «աքսորել» երկուսն էլ առաջին բաղադրամասի մեջ ակնհայտ ձևով նույնական են և պետք է կարդացվեն հետեյալ կերպ hairenetʿpʿutʿün, hairenetʿpʿem հմմտ Բառարանը

Այս եզրակացությունը հաստատվում է ժամանակակից բարբառների տվյալներով, որոնցում հին *յ*-ին բառասկզբում համապատասխանում է նոր հ Այդպես է վիճակը Տաճկ, Լեհ[39],

[39] Հմմտ Han WZKM 2, 295, որտեղից բերենք հետևյալ օրինակները havidʿan= յաւիտեան Hagop=Յակոբ, Hovannes=Յովհաննէս, huys=յոյս և այլն

Մշո[40] և այլ բարբառներում[41] Բառասկզբի կիլիկյան *յ*-ն մենք առառաղարձում ենք որպես *հ* Պետք է հիշատակել նաև, որ *լ* և *ր* բաղաձայնները բառավերջում փոխարինում են իրար այսպես, մի կողմից *Ռոճել* əřojel և *Ռուճէլ* əřujel, մյուս կողմից *Լոուճէր* əřujer Նույն ձևով *Սանձաւել*=հֆր Sansaveir. մի ապացույց, որ երկու նշաններն էլ ներկայացնում են մոտիկ հնչյուններ

Մնացած բաղաձայնների արտասանությունը նույնն է հին հայերենի հետ Օտար բառերում f կոշտ շփականը նշանակելու համար օգտագործվում է *ֆ* տառը - նոր, մեսրոպյան հին այբուբենին անհայտ մի նշանագիր Օրինակներ տե՛ս Բառարանում Այդ տառը կարելի է գտնել նաև առանձին քանի հայերեն բառերում օր *ինչֆի*, inčfi փոխանակ inčvi

§ 24 Ասվածի համաձայն, կիլիկյան հնչյունական համակարգը հետևյալն է

Ձայնավորներ *ա* a, *ե* ye, 'e, e, *է* ē, *ը* ə, *ի* ı, *ո* vo, o, *աւ օ* o, *ու* u, *իւ* ü

Երկբարբառներ[42] *այ* - aı(a), *ոյ* uı(u)

Բաղաձայներ

	Պայթականներ և պայթաշփականներ			Շփականներ		Նայներ	Հնչական ներ
	ձիջակ-ներ /ձայնեղ ներ/	նրբեր /խուլեր լերկեր/	շնչեղ նրբեր /շնչեղ խուլեր/	անձայններ	ձայնեղներ		
կոկորդայիններ	կ g	գ k	ք k	խ x հ h յ h	ղ ɣ[1]		
քնայիններ	ճ ǰ	ջ c	չ č	շ š	ժ ž յ y		
առաջնա-լեզվայիններ	ծ ʒ	ձ c	ց c				
առաջնայիններ	տ d	դ t	թ t	ս s	զ z	լ r n r լ l	ն n h
շրթնայիններ	պ b	բ p	փ p	ֆ f	վ w ւ v	մ m	

[1] *Որոշ դեպքերում, սակայն գույն կարելի է յ շփականը որպես փափուկ դնել ղ ɣ-ի կողքին ձայնեղների մեջ*

---

[40] Հմմտ Мсер, Мушск диал էջ 121 hert=դաս յարդ, hačoyut'en=յ/աջողուլթիւն, harut'en=դաս յարուլթիւն, hisun=յիսուն և այլն

[41] Որոշ դեպքերում բառասկզբի հազագային հնչյունը անհետանում է ամբողջապես այսպես Մշո բարբառում / Мсер, 122/ ənkn'er =դաս յօնք, oyork'el =դաս յուղարկել և այլն Կուտիի բարբառում Owanes և զուգահեռ Howannes և այլն WZKM 2, 295

[42] Յ նշանի կիսաձայնավորային արտասանության մասին *այ*=ay, *ոյ*=uy կապակցությունների հմմտ վերևում՝ §8բ և §9բ

Հավելված - Օտար բառերն ու նրանց տառադարձումները

§ 25 Վերևում ասվածը լրացնելու նպատակով օտար և փոխառյալ բառերի և նրանց տառադարձության մասին այստեղ պետք է նկատել հետևյալը

Հին միջակների (ձայնեղների) և խրբերի (խուլերի) տառադարձության *տեսակետից փոխառությունները, վերևում ասվածի համաձայն /§ 19/*, բաժանվում են երկու խմբի՝ նոր և հին Առաջինի մեջ բաղաձայնների երկրորդ տեղաշարժը չնայած որ երևան է գալիս, բայց իրեն զգացնել չի տալիս, այսպես, օրինակ, *պայլ* bail, հֆր. bail, *պարոն* baron հֆր baron, *տընֆընդել* dəfəndel հֆր defendre և այլն Երկրորդ խմբի բաղաձայնների տեղաշարժը, չնայած որ իրեն զգացնել տալիս է, բայց երևան չի գալիս և գրավոր արտահայտություն չի ստանում Օրինակ, *դիմոս* հուն δημοσιον, *պարիկոս* παροιχός, *դարպաս* նպ darvāza, *գումբէթ* նպ gunbad, gunbäd և այլն Այսպիսի փոխառությունները բաղաձայնական տեղաշարժի են ենթարկվում ընդհ հայերեն բառերի նման, և, վերջիններիս նման, պահպանում են հին պատմական դրելաձևը, այնպես որ *դիմոս*=հհ dimos, մհ timos, *պարիկոս*=հհ. parikos, մհ barigos, *դարպաս*=հհ darpas, darapas մհ tarbas և այլն Առաջին խմբին պատկանում են տեղաշարժից հետո փոխառված որոշ բառեր, հատկապես հին ֆրանսերենից, բայց նաև արաբերենից ու պարսկերենից կատարված փոխառությունները Երկրորդ խմբին պատկանում են տեղաշարժից առաջ կամ դրա ժամանակ փոխառված բառերը, հատկապես հունարենից, նաև արաբերեն ու պարսկերեն փոխառությունները

§26 Քանի որ հայերենը կրկնակ բաղաձայններ չունի, *տառադարձություններում* նրանց տեղը դրավում են պարզ բաղաձայնները - Մի հատուկ դեպք է *անսիզ*- «1/ օրենք 2/ֆրլֆադրամ»=հֆր assise· Այստեղ օտար կրկնակ բաղաձայնը վերարտադրվում է n+s կապակցության միջոցով Այդ n բաղաձայնն այս դեպքում չի կարող համարվել ներմուծված և ոչ օրգանական Սակայն արաբերենը և այլ սեմական լեզուները հակում են ցույց տալիս դեպի կրկնակ բաղաձայնների այդպիսի տարրալուծման dd>nd, bb>nb, ss>ns /հմմտ Fränkel, Aram. Fremdw. S. 136 Anm/: Ապա, քանի որ n բաղաձայնն *անսիզ* բառում չի կարող ոչ օրգանական լինել, n-ի այդպիսի ենթադրությունը հակառակ է հայերենի հնչյունական օրենքներին, *ռնգայինը պետք է առկա լիներ արդեն բառիս նախատիպի մեջ*, որ պիտի հնչեր ansiz կամ ansis: Բայց քանի որ ռնգայինի առաջացումն այստեղ թույլ չեն տալիս ֆրանսերենի հնչյունական օրենքները, կարելի է վստահորեն ասել, որ հֆր assise որևէ սեմական լեզվի մեջ, դա կարող էր լինել այն ժամանակվա սիրիական արաբերենը, դարձել է ansiz և կիլիկյան հայերենում

տառադարձվել է որպես *անսիզ* Հար և նման մի երևույթ, ինչպես հայոնի է, առկա է հին հայերենի վաղ շրջանի ատորական փոխառությունների Հմմտ Arm. Gramm. էջ 286, ինչպես նաև ZDMG 46, էջ 230

§27 Քանի որ բառասկզբի r կամ γ (gh) հնչյունները հակադրվում են հայերենի լեզվական օրենքներին, փոխառության ժամանակ այդ հնչյուններից առաջ դրվում է մի *ը* ə Այսպես, Բառարանի համաձայն, *ըռասուլ* ərasul= արաբ rasūl, *ըռատակն* əradagn՝ *ըռատ* ərad առաջին բաղադրամասով=նպ rād և այլն տե՛ս ատորև §153 *բ*: Պատահում են նաև գրություններ առանց ը-ի, որտեղ, սակայն, նույնպես պետք է արտասանել ə, օր, *ռէ* ərə:

Հավելյալ *ը* տառն ավելի հազվադեպ է փափուկ կոկորդային γ շփականի տառադարձության ժամանակ Ավելի հաճախ կիլիկյան հայերենում այն փոխարինվում է համապատասխան կոշտ *խ* x շփականով Այսպես, օրինակ, ըստ Բառարանի, խազի xazi= արաբ γāzī, *խալաբայ* xalaba= արաբ γalaba, *խալատ* xalad= արաբ γalaṭ, *խալէ* xalē= հֆր gale իտ galea, որ, երևի, փոխառված է արաբերենի միջոցով

§28 Ատար ld-ն կիլիկյան հայերենում տառադարձվում է որպես *դտ* γd, օրինակ, *Պաղտին* baydin, *Պաղտույն* bayduin=Balduin, Baldouin, *Ըռնաղտ*, *Ռընաղտ*=Renald: Այս խմբին պատկանում է, ըստ երևույթին, նաև *մարաջախտ* maṙačaxd բառը, որի նախատիպը կարող էր լինել marachald, հմմտ իտ marescaldo, բյուզ μαρισχαλδος /տե՛ս Բառարանը/[43]:

§ 29 Հֆր ch-ն կիլիկյան հայերենում տառադարձվում է որպես ջ č հֆր č, g որպես dj: Կարող է թվալ, թե տառադարձությունը կանոնավոր չէ, բայց իրականում այն ճշտությամբ հետևում է արտասանությանը հին ֆրանսերենի համապատասխան հնչյունները եղել են ոչ թե շփական, ժամանակակից ֆրանսերենի նման, այլ ավելի շուտ կիսաշփական Այսպես, ըստ Բառարանի, Ճաւֆրէ joſrē հֆր Geoffrey, *Ճօսլին*, *Ճոսլին* joslin հֆր Josselin, *լիճ* lij հֆր lige, *բասաճ* pasaǰ հֆր passage, *բուրճէս* purǰes հֆր bourgeois, *ջալունջ* čalunǰ հֆր chalonge, *ջալընջեմ* čalənǰem հֆր chalonger, *ջամբռ* čambr հֆր chambre, *ջամբռյին*, *ջամպլայն* čambrlan, čamblan հֆր

[43] Հր. Ա.Ճառյանի համաձայն, *մարաջախտ*, *Ռընաղտ* և այլ նման տառադարձությունները պետք է կապել այն բանի հետ, որ հֆր al կապակցությունը նախքան *o* դառնալը՝ անցել է ay աստիճանով: Այստեղից հետևում է, որ այդ տառադարձություններն արտացոլում են հին ֆրանսերենի հնչունական վիճակը և *դ* տառն այդտեղ հնչում է որպես γ/ տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, էջ 135/ (Ծան թարգմանչի)

chambellan, *ջանուն* čanun հ֊ֆր. chanone, *ջանչլեր* čançl'er հ֊ֆր. chancelier, *ջաբրոն* čapron հ֊ֆր. chaperon, *ջաստեմ* častem հ֊ֆր. chastier, *Ջառլ* čarl հ֊ֆր. Charles:

§30. Արաբ. ɛyn տառը բայց է թողնվում տառադարձության ժամանակ, քանի որ հայերենում համապատասխան հնչյունը գոյություն չունի: Այսպես, օրինակ, կիլ. *ալանի=արաբ.*, ᶜalānī, կիլ. *ալկեմ* արաբ. ᶜalīq բառից, կիլ. *ախայխիր=արաբ.* ᶜaqāqīr, կիլ. *կլայ.=արաբ.* qalᶜa, կիլ. կլայեկ/=**կլայիակ/=արաբ.* qalaᶜī և այլն:

§ 31. Արաբ. q տառադարձվում է հ֊յ. *կ* տառով հետևյալ բառերում. *կապալ=արաբ.* qabāla, *կումայշ, կումաշ=արաբ.* qumāš, *կահրայ=արաբ.* qahra. *ապա կուռայ, կլայ, կլայեկ* և այլն: Նրանց կողքին, սակայն, կա *նաղդ* naγd=արաբ. naqd, *պաղդան* baγγam=արաբ. baqqam /նպ. bakam, bagam/, *ղուրան=արաբ.* qurān /զուգահեռ ձևն է *կուրան/, ղուրս* /հաճախական է Մխիթար Հերացու մոտ/ և զուգահեռ *կուրս*, և այլն: Արաբ. q խոր էնֆատիկ կոկորդայինի համար հայերենը համապատասխան հնչյուն չի ունեցել: Բնականաբար g-ի և γ-ի միջև գտնվող արաբական հնչյունի տառադարձությունը տատանվում է *կ*-ի և *ղ*-ի միջև: Հմմտ. Hübschm. Arm. Gramm. I. էջ 391:

§ 32. Եթե բաղաձայնները տառադարձվում են հիմնականում ճիշտ ձևով, ապա ձայնավորների դեպքում ավելի ցայտուն կերպով է երևում տարբերությունը նախատիպի և կիլիկյան տառադարձության միջև: Մեր ասածը գրեթե առանց բացառության վերաբերում է արաբերենից և պարսկերենից կատարած փոխառություններին: Բերենք հետևյալ օրինակները. *խիսմ* xism=արաբ. xasīm, xasim, *մանբար* manbar=արաբ. minbar, *հեջուբ, հեճուպ* heǰub=արաբ. hāǰib *իմամայով*[44] hēǰib, *սեհալ* sehal=արաբ. sāhil, *փաղամպար* pᶜayambar=նպ. paiγambar, *լուկամ* lugam= նպ. ligām, *դիրտ* dird /միայն Ջախջախյանի մոտ/=նպ. durd[45], *փօշաման* pᶜošaman և *փօշամնիմ* pᶜošamnim=նպ. pašīmān, *մալում* malum=արաբ. maᶜlūm, muᶜallim, ապա *կլայ* gla=արաբ. qalᶜa. *կլայեկ* glayⁱeg [46], արաբ. qalaᶜī, *թմպիր* tᶜdbir =արաբ. tedbīr, *ըռզակ* ərzag=արաբ. arzāq, (zizq բառի հոգնակին), *բլխամ* blxam, *բլղամ* blγam.[47]- արաբ. balγam, *մզկիթ* mzgitᶜ=նպ. mazgit, *մրնճան* mənǰan=արաբ. marǰān,

---

[44] *Իմամա /իմամե/* - արաբական և պարսկական քերականության տերմին, որ նշանակում է եռանալեզվային ձայնավորների տեղաշարժը դեպի առաջնալեզվայիններ: (Ծան. Թարգմանչի):

[45] Arm. Gramm. էջ 264:

[46] Հմմտ. վերևում §30:

[47] Ոսկիփ., Մխիթար Ապարանցի և այլն:

մլհամ mlham=նպ. malham, *մլքեմ* mlk^{c}em = արաբ. malak^{c}, *տֆթար* dft^{c}ar=արաբ. daftar, *ֆխիր* fxir= արաբ. faqīr, *տլիսմ* dlism=արաբ. tilism, *տրստիմ* drstim հմմտ. նպ. durust, *մսլիմ* mslim=արաբ. muslim, *բուստ* bust *պիստ* bist=նպ. bussad[48] և այլն: Հայերենի հնչյունական օրենքների ներգործումը այստեղ բացառված է: *Տարբերակությունները* բացատրվում են մասամբ ճայնավորների աղումով, մասամբ ոչ ճշգրիտ, անփույթ վերարտադրությամբ[49], մասամբ էլ այն բանով, որ արդեն փոխառվող բառը, որ պատկանել է ոչ թե գրական, այլ ժողովրդական արաբերենին /կամ պարսկերենին/, ուրիշ ճայնավորական կազմ է ունեցել, այնպես որ այս դեպքում վերարտադրության անճշտությունը միայն թվացող է, բայց դա սոսկ ենթադրություն է:

§33. Արաբական փոխառությունների համար արժեր հետազոտել, թե նրանցից որոնք են վերցրած անմիջապես արաբերենից, իսկ որոնք մտել են նոր պարսկերենի միջնորդությամբ: Դեպքերի մեծամասնության մեջ դժվար է վստահորեն որևէ բան ասել: Որոշ դեպքերում չափանիշ է հանդիսանում նոր պարսկական իմալան: Այսպես՝ կիլ. *սլեհ* sleh «զենք» բառը ծագում է անմիջապես նպ. sílēḥ ձևից՝ *իմալայով* /=արաբ. sílāḥ/, կիլ. heǰūb անմիջապես նպ. hēǰib ձևից՝ իմալայով /-արաբ. ḥāǰib/:

[48] Հմմտ. Arm. Gramm. էջ 263

[49] Հմմտ. Arm. Gramm. էջ 330 և Hübschm. Chron. էջ 144 և 153:

ԲՈՒՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Դաս. ա և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 34. Դաս. *ա* a = կիլ. *ա* a բոլոր միավանկ և երկվանկ բառերում: Երեք և ավելի մեծ թվով վանկեր ունեցող բառերում a-ն պահպանվում է միայն առաջին և վերջին վանկում, իսկ միջին վանկերում դուրս է ընկնում կամ սղվելով դառնում է ə:

1. ա) Միավանկ բառերում.

անձ դաս. *անձն, անց* դաս. *անց, բան* դաս. *բան, գանձ* դաս. *գանձ, գրաստ,* դաս. *գրաստ, գարի* դաս. *գարի, ժամ* դաս. *ժամ, խաչ* դաս. *խաչ, ծանր* դաս. *ծանր, կամք* դաս. *կամք, մահ* դաս. *մահ. մարդ* դաս. *մարդ. նման* դաս. *նման. նշան* դաս. *նշան, շահ* դաս. *շահ, շատ* դաս. *շատ. չար* դաս. *չար, պահ* դաս. *պահ, վարձ* դաս. *վարձ, քաջ* դաս. *քաջ. քան* դաս. *քան* նաև բայաձևերում. ինչպես *գամ* դաս. *գամ, կամ* դաս. *կամ,* ապա հրամայականի ձևերի վերջում. *գնա՛* դաս. *գնա՛. մնա՛* դաս. *մնա՛* և այլն: Նաև դերանուններ-րի բառավերջում. *սա, դա, նա* դաս. *սա, դա, նա* սեռ.-տր. *նարա* և այլն, = դաս. *նորա*:

բ) Երկվանկ բառերում.

ամիս դաս. *ամիս, անուն* դաս. *անուն, անուշ* դաս. *անոյշ. ապրիմ* դաս. *ապրիմ,* նաև *ազատ. առանց, արդար, արծաթ. բաժին. կամիմ, կարգեմ, հազար, հիւանդ* և այլն:

2. Եռավանկ ու բազմավանկ բառերում.

ա) *ա*-ն պահպանվում է հետևյալ դեպքերում. *կամենամ. կարենամ. զիտենամ, ունենամ, յերեւան* herevan, դաս. yerevan և այլն:

Օրինակները բերված են նաև ստորև 2 բ կետում:

բ) *ա*-ն դուրս է ընկնում հետևյալ դեպքերում.

հոգյող «կառավարիչ» դաս. *հոգայող, կորանեմ* դաս. *կորուսանեմ, յուսկեմ* դաս. *յուսայանեմ, զոնում* դաս. *զոռանեմ* (gətanem եռավանկ!), *անվել* դաս. *անուանել* anvanel, *անսկեմ* դաս. *անսայանեմ, առջի* դաս. *առաջի, ասսկին* դաս. *ասայկին, արծող* դաս. *արածող, բաժնեմ* դաս. *բաժանեմ, հասնիմ* դաս. *հասանիմ, հասնիմ* դաս. *հասանիմ, մատնեմ* դաս. *մատանեմ, շալկեմ* դաս. *շալակեմ, սպասնեմ* դաս. *սպասանեմ, ամրնամ* դաս. *ամրանամ, ապրնաց* դաս. *ապրանաց, աւտամ* դաս. *հաւատամ, գրաւկան* դաս. *գրաւական, դարպաս* դաս.

դարապաս, հասկնամ դաս *հասկանամ, հաւսար* դաս *հաւասար, վաճռական* դաս *վաճառական, վաճռկներ* /հոգնակի ուղղ/ դաս **վաճառականներ* և այլն Դաս a-ն կորչում է հատկապես ա) *-աւոր* = կիլ *-վոր* վերջածանցի մեջ *զանկտվոր* դաս *զանգատաւոր, ջեռգվոր* դաս *ջեռգաւոր, պատեհվոր* դաս **պատեհաւոր, վարճվոր* դաս *վարճաւոր* բ)*-անի* = կիլ *-նի* հոգնակերտ վերջավորության մեջ *այրիկաննի* «այրի կանայք» դաս *այրի+կանանի, պատճռնի* դաս *պատճառանի* և այլն գ) Պատճառականի *-ուցանեմ* կամ *-յուցանեմ* վերջավորության մեջ, որ *ու*-ի կորստի պատճառով դառնում է *-ցնեմ* -cnem (-cənem) կրկնակ *ց*-ի պարզեցումով *ամրցնեմ* դաս *ամրացուցանեմ, անհոգցնեմ* դաս *անհոգացուցանեմ, արիացնեմ* դաս *արիացուցանեմ, պակսեցնեմ* դաս *պակասեցուցանեմ, վերցնեմ* դաս *վերացուցանեմ* և այլն Օտար բառերում նույնպես ձայնավորը կորչում է օրինակ. *կումշի* 19-8 ուղղ *կումաշ /կումայշ/* = արաբ qumaš

Ծան - Ժամանակակից ավանդույթի համաձայն, *աստուած* գոյականից կազմվում է *աստուծոյ* սեռականը a-ի կորստով, իսկ «կուռք, հեթանոսական աստված» նշանակությամբ, ընդհակառակն, կանոնավոր ձև է *աստուածոյ* Այսպիսով, մեր առաջ է, ըստ երևույթին, a-ի կորստի մի դեպք արդեն հին հայերենում Հին ձեռագրերում, սակայն, մենք գտնում ենք միայն *ած, ածոյ, ածով* համառոտագրությունները, այնպես որ թեք հոլովների համար հին արտասանությունը ստույգ չէ

§35 *Բացառություն 1* Միջին վանկերի a ձայնավորն առանձին դեպքերում պահպանվում է Այսպես *ա* հիմքերով անորոշ դերբայի հոլովման մեջ *հասկնալ* սեռ *հասկնալոյ* և այլն Նաև որպես հոդակապ բարդությունների մեջ *ազգակից* 65-15, *նորածին* 49-8, *դիմախօսեմ* 59-8 և այլն Վերջին դեպքերում, սակայն, հավանական է դասական լեզվի ազդեցությունը Հենց այդ ազդեցությամբ պետք է բացատրել հետևյալ ձևերը *ազատեմ* 67-3, *հաստատեմ* 65-7, *ուրանալ* 71-13, *իշխանութիւն* 53-4, *կենդանութիւն* 37-22, *ժառանգեմ* 47-19, *աւետարան* 61-9 և այլն

Ծան - Հմմտ Լեհ astvaja-mar «աստվածամայր», Han. 39, ašxadełu «զբաղվել» Han. 30, azadełu «ազատել» Han. 31, Garab'ed Han. 56, giragi «կիրակի» Han. 57 giragur «մխս» Han. 57, habardut'in «հպարտություն, գոռոզություն» Han. 61, havadału «հավատալ» Han. 64, Hayastan Han. 61, imanału «իմանալ» Han. 73, vartab'ed «արքեպիսկոպոս» Han 123, žamanag «ժամանակ» Han. 127, an-žamanagen «այն ժամանակից» Han. 26 /հմմտ նաև Մսեր էջ 16/ Այս դեպքերը մասամբ դուռ կլասիցիզմներ են, մասամբ

էլ՝ հնչյունական հին վիճակը պահպանվել է դասական լեզվի ազդեցությամբ:

§36. *Բացառություն 2.* Առանձին դեպքերում դաս. *ա*-ն անհետանում է նաև բառասկզբի վանկում:

ա) Դաս. a-ն թուլանալով դառնում է ə բառասկզբում՝ n ունդայինից առաջ հետևյալ բառերում. *ընգողին* 47-32 = դաս. *անկողին, ընկնիլ, ընկնի* H 208-30, *ընկնին* 53-3. *ընկաւ* 33-71 = դաս. *անկանել, անկանի, անկանին, անկաւ*: Հմմտ. Տաճկ. əngnil և iynal, Թֆ. əngnel, Ղրբ. əγnel և այլն: Այստեղ ժողովրդական ստուգաբանությամբ բացատրվող նմանություն կա *-ընգ-*/<*-ընդ*/ նախածանցով սկսվող բառերի հետ:

Ծան. - Արդեն հին հայերենում *ա*-ով հին ձևերի կողքին առանձին դեպքերում գտնում ենք նաև *ընկողին* և *ընկանիմ*. վերջինը միայն Պլատ. և Հովհ. Ոսկ., առաջինն Աստվածաշնչի թարգմանության մեջ. Հոբ 41, 21, Թագ. Դ 11, 2 և Գր. Նարեկացու մոտ: Նաև *անդամճեմ* «հետազոտում եմ» ձևի կողքին սղված *ընդամճեմ* Ողբ /Մոսկովյան հրատ., 20/: Որպես միջին հայերեն, սակայն, պետք է որակել Հայկազյան բառարանում հիշատակվող ձևերը. *ակընջայ* /ուղղ. *ականջ*/, փոխանակ *ականջայ, ակընջատ*, փոխանակ *ականջատ, զոբընչի* /ուղղ. *զոբանչ*/, փոխանակ *զոբանչի*:

բ) Դաս. a-ն *առաջին վանկի մեջ* սղվելով դառնում է ə հետևյալ բառերում. *չքաւորութիւն* (čək^{c}avorutün) = դաս. *չափաւորութիւն* = Հ 217-17, *չքօք* (čək^{c}ok^{c}) /*չաք* գոյականի հոգն. գործ./ 55-8, *չաքօք* Գիրք վաստ. 138-5, 154-20. դաս. *չափաւք* čap^{c}auk^{c}, *ժամու* (žəmu) /ուղղ. *ժամ*/ 37-9 = դաս. *ժամու. ծախի* (jəxi) (ուղղ. *ծախ* Հ 221-23):

Ծան. - Ի տարբերություն միջին հայերենի, որտեղ a-ն առաջին վանկում հազվադեպ է դուրս ընկնում, նոր հայերենում այս երևույթը շատ ավելի մեծ տարածում ունի: Օրինակ, Տաճկ. ən^{i}el /ավելի հին ձևն է an^{i}el/, əs^{i}el /կիլ. *ասել*/. gərnal /կիլ. *կարենալ*/: Ապա Մշո բարբառում /Mcep. էջ 20/ əm^{i}en /կիլ. *ամէն*/, kəncner /կիլ. *կու անկանէր*/, -ənca /կիլ. *անկայ*/, təsverku, təsnevut /կիլ. *տասն ու երկու, տասնվուէ*/, rəmik /= *ռամիկ*/, t^{c}əmm^{i}el (t^{c}amam բառից), k^{c}ənj /կիլ. *քանչ*/, k^{c}ən /դաս. *քան*/. Կարպո /Կարապետ անվան կրճատ ձևը/ և այլն: Նաև əs^{i}el, əngn^{i}el, əngoγin: Հմմտ. նաև Ղարաբաղի բարբառում (Патк. Диал. էջ 65 և հաջ. hərevan, kəpotal, čnapa, ləvot^{c}ün, əsɛ̣cɛ̣k^{c}, ավելի հին *հարեւան, կապոտեալ, ճանապարհ, լաւութիւն* ձևերի փոխարեն: Ադուլիսի բարբառում / Патк. Диал. էջ 39 և հաջ./ əhel, əγkanal, hərsənik^{c}, hərçanal, čənəpar, sənəmar, zərmənal, k^{c}na և այլն, նախնական *ասել, աղեկանալ, հարսանիք, հարսնանել, ճանապարհ, սանամայր, զարմանալ, քանի* ձևերի փոխարեն:

Ընդհանրապես այս հնչյունափոխությունն ամենաուժեղ ճևով երևան է գալիս կենտրոնական և արևելյան բարբառներում: Առհասարակ պետք է ասել, որ նոր հայերենում, կիլիկյան հայերենի պես, հին a հնչյունը միջին վանկերում անհետանում է: Այդպես է լեհահայ /WZKM 1, 196/, տաճկահայ բարբառներում և արևմտյան գրական լեզվի մեջ /Այտ. Բ 274/, Նախիջևանի (Патк. Мат.), Ախալցխայի (Том. էջ 23 հաջ.), Մշո բարբառում (Мсер, էջ 14):

§37.2. Դաս. *ա* a ճայնավորը *յ* y շփականիկ հետո բառասկզբում = կիլ. *ե* e: Ըստ երևույթին, այդ հնչյունափոխությունը կատարվել է հարևան *յ* y-ի ազդեցությամբ: *Ե* e-ի փոխարեն կարող է հանդես գալ նաև *ի* i ճայնավորը:

Այսպես՝ կիլ. *յեմ*, h'em «ժամանակամիջոց» 33-9 = դաս. *յամ*, yam (Ն. Շնորհ.), *յեմեմ* «ուշանում եմ, հապաղում եմ» 15-2, 23-19 և այլն = դաս. *յամեմ*. yamem, *յերակ հերագ.* «անընդհատ. առանց ընդմիջումների»: Գիրք վաստ. Msr. 00= դաս. *յարակ*. *յիմեցյեմ* «ուշացնում եմ» 81-24. ավելի հին **յեմեցյեմ* ճևից = դաս. *յամեցուցանեմ*:

Ծան. - Նույն փոփոխությունն ունենք նոր հայերենում. Տաճկ. hert, ert = դաս. *յարդ*, նաև evel, yevel = դաս. **յ-աւել /յաւելու* բառի կազմում/, evelnal, evelcənel կազմություններ և այլն: Մշո բարբառում[1] նույնպես hert= դաս. *յարդ*. Ախալցխայի բարբառում[2] ert^{c} = դաս. *յարդ*. exdel = դաս. *յաղթել* և այլն: Դրանից տարբերվում է բառամիջի դաս. a-ի *ընդհանուր* փոխարինումը e ճայնավորով Ղարաբաղի բարբառում. որտեղ. օրինակ (Патк. Диал. էջ 64). pen = դաս. *բան*,. penal = դաս. *բանալ*. peç = դաս. *բաց*. petmel = դաս. *պատմել*. gezan = դաս. *գազան*. pešar = դաս. *պաշար*. teŕal = դաս. *գառնալ*. նույն ճևով Զուղայի բարբառում (Патк. Диал. էջ 82) lev = դաս. *լաւ*. minek = դաս. *մինակ* և այլն: Այդ հնչյունափոխությունը կարելի է բացատրել *պարսկերենի ազդեցությամբ*:

§38.3. Դաս. a = կիլ. *այ* ai բառասկզբում *ր* և *ո* բաղաճայններից առաջ, որոնք մեծամասնությամբ դուրս են ընկնում:

Օրինակներ. *այնեմ*. ավելի հին *այրնեմ* ճևից /Մշ. Հեր./= դաս. *առնեմ*, *այժեմ* = դաս. *արժեմ*, *այժենամ* դաս. *արժեմ* ճևից, *այրոյն*= դաս. *արիւն*:

Սակայն որոշ դեպքերում այստեղ առկա է պարզ *ա*- ով զուգահեռ գրությունը, և ուշ կիլիկյան հայերենում արդեն հին ai երկբարբառը դառնում է պարզ a:

---

[1] Мсер. էջ 21:

[2] Том. էջ 29:

Ծան. Հմմտ. նոր հայերենում Ախ. may (maih) «մահ» (Том. Ах. диал.), որ նույն հնչյունափոխությամբ շնորհիվ առաջացել է հհ. *մարհ* ձևից՝ *մահ* բառի նախատիպից: Ակնա բարբառում նույնպես /Ճան., էջ 284/ maih = հհ. *մարհ*, paih. = հհ. *պարհ*, *պահ*, ապա նույն բարբառում aih = դաս. *ահ*, gaih = դաս. *գահ*, šaih = դաս. *շահ*, այսինքն՝ *հին a ճայնավորն անմիջապես հաջորդող հ-ից առաջ առհասարակ դառնում է ai երկբարբառ*: Այս երևույթը, որ սկզբում սահմանափակվում էր maih, paih և նման այլ դեպքերով, հետագայում տարածվել է նաև այն դեպքերի վրա, երբ r բաղաճայնի անկումը հագագային հնչյունից առաջ տեղի չի ունեցել: - Սովորաբար ժամանակակից բարբառներում հին երկբարբառն ainem և նման բառերում դառնում է կամ a, կամ e. օրինակ. Լեհ. anełu «անել», aže «արժեք», arun «արյուն» /Han. էջ 28 և այլն/: Մշո բարբառում, սակայն, ունենք (Мсер. էջ 21 հաջ.) en'el, ežan (ežan նաև Ջուղայի բարբառում, Мсер. էջ 22) և այլն: - Ընդհանրապես դաս. a+r կապակցությունը նոր հայերենում հաճախ համապատասխանում է e+r կապակցությունը, և առհասարակ հին a ճայնավորը r բաղաճայնի հարևանությամբ հեշտությամբ դառնում է e. Լեհ. abəsperełu = դաս. *ապապրել*, Ղար. dertak = դաս. *դատարկ*, *դարտակ*, Թֆ. erçat^{c} սեռ. - ət^{c}i = դաս. *արծաթ*. ežan = դաս. aržan, çiçeŕnak = դաս. *ծիծառն*, tarekusvil = դաս. *տարակուսիլ*, sirekan = դաս. *սիրական* (Том. 27 հաջ.), Մշո բարբառում (Мсер. 21) aŕeč = Ջղ. harej = դաս. *առաջ*, Ախ. mers'el = դաս. *մարսել* և այլն:

§39. Դաս. *ա* = կիլ. *ու* u հետևյալ դեպքում. կիլ. *պայխուն* bac□xun = դաս. *պատասխան-ի* (<*pati-saxvan, նպ. suxun):

Ծան. Կիլիկյան հայերենում եզակի դեպք ներկայացնող այս երևույթին մենք կրկին հանդիպում ենք Ագուլիսի նոր բարբառում, որտեղ վերջին, այսինքն՝ շեշտակիր վանկում դասական *ան* an կապակցությունը կանոնավոր ձևով համապատասխանում է *ուն* un /կամ ün - Սարգ. Ագուլ. բարբ. էջ 31 հաջ./: Այսպես, օրինակ, nšun *նշուն* հոգն. *նշուններ* = դաս. *նշան*, nmun *նմուն* հոգն. *նմուններ* դաս. *նման*, bün դաս. *բան*, t^{c}ung^{j} դաս *թանգ*, xun դաս. *խան*. vunk^{c} դաս. *վանք*, jun դաս. *ջան* և այլն:

§40. Դաս. *ա* a *ո* հիմքերի գործիականի - *ամբ* վերջավորության մեջ = կիլ. o /*ու*, *օ*/ համապատասխան -o̲m /-*ում*, -*օմ*/ վերջածանցի մեջ:

Օր. *անճամ* anjo̲m /ուղղ. *անճ*/ 33-6, 57-22 = դաս. *անճամբ*, *ճեռամ* ceŕo̲m /ուղղ. *ճեռ*/ 27-18 = դաս. *ճեռամբ*, *բուխում* p^{c}ut^{c}o̲m Msr. B 153 = դաս. *բուխամբ*, *կաշում* Գիրք վաստ. 221 = դաս. *կաշամբ*, *ոսպում* ospo̲m

Msr. B 148 = դաս. *ոսպամբ* և այլն: Ավելի մանրամասն տե՛ս «Զևաբանութիւն» բաժինը[3]:

[3] Հհ. a ճայնավորն *o*-ով փոխարինելու տեսակետից աչքի են ընկնում Ադուլիսի, Ակնա և Զեյթունի նոր բարբառները: Ադուլիսի բարբառում գործում է հետևյալ օրենքը. *միավանկ* բառերում բառամիջի դասական a-ին համապատասխանում է նհ. o /կամ ö/, սակայն, եթե վերջածանցների և վերջավորությունների միացումով բառը դառնում է բազմավանկ, երևան է գալիս նախնական a /հմմտ. Սարգ. 29, 30/: Օրինակներ. դաս. *մարդ* Ադ. mord, բայց հոգմ. mardik^{c}, դաս. *հարան* Ադ. hors, բայց սեռ. harsi, հոգմ. harsnar. դաս. *մահ* Ադ. moh, բայսառ. mahiç. դաս. *հակ*, Ադ. hok. դաս. *մկրատ* Ադ. mkrot. դաս. *հաց*. Ադ. hoç. դաս. *ծառ* Ադ. coř, դաս. *վարդ* Ադ. vörd. դաս. *բարձ*, Ադ. börji. սեռ. börji. դաս. *վար* Ադ. vör սեռ. väri հոգմ. värär. դաս. *ժամ* Ադ. žöm սեռ. žämi և այլն /Սարգ. էջ 29 հաջ./: - Ակնա բարբառում /Ճանիկ., էջ 282/ *o* -ն, որպես դաս. a-ի համապատասխանություն, տարածվում է նաև *ոչ վերջին* վանկերի վրա: Օր. Ակ. *ճոնճ* /= *ճանճ*/, *մոնճ* /= *մանճ*/, *ակոնճ* /= *ականջ*/, *հիւոնդ* /= *հիւանդ*/. ապա *թոռոմիլ* /= *թառամիլ*/, *ոդգի* /= *անդի*/, *օլլի* /= *անլի*/, *որգել* /= *անձրև*/, *հոգչիլ* /= *հանգչիլ*/, *ոսնիլ* /= *անկնիլ*/ և այլն:

Ինչպես կարելի է տեսնել օրինակներից, այստեղ կանոնը սահմանափակվում է այն դեպքով, երբ նախնական a ճայնավորին *հետևում է երկու բաղաձայն*: - Զեյթունի բարբառի համար գործում է հետևյալ օրենքը. դաս. a -ն վերջին վանկում = Զթ. o. այդ *o*-ին առնմանվում է անմիջապես նախորդող վանկի հին ə-ն և մասամբ հին a-ն: Օրինակ՝ /ըստ Ալահվ./ Զթ. po և pon /= դաս. *բան*/. poncr /= դաս. *բարձր*/, porc /= դաս. *բարձ*/, dog /= դաս. *տակ*/, kop /= դաս. *կապ*/, hok /= դաս. *հակ*/, hoç /= դաս. *հաց*/, coř /= դաս. *ծառ*/, vord /= դաս. *վարդ*/, ôsk /= դաս. *ազգ*/, ôγ /= դաս. *աղ*/, ôř /= դաս. *առ*/: Ապա paŕnank /= դաս. *բառնամբ*/, parikom /= դաս. *բարեկամ*/, piron /= դաս. *բերան*/, pirok /= դաս. *բերաք*/, kakot /= դաս. *զազաթ*/, kakov /= դաս. *կաքաւ*/, kazvon /= դաս. *զաւազան*/, kidanol /= կիլ. *գիտենալ*/, hazor /= դաս. *հազար*/: Վերջապես. նախավերջին վանկի *առնմանություն*. kono (<*kəno = դաս. *գնա*), kodnol (<*kədnol = կիլ. *գիտենալ*), kodog (<*kədog = դաս. *գոյակ*), tokol (<*təkol) = կիլ. təkal), tomog (*təmog = դաս. *դմակ*), modov (<*mədov = կիլ. *մտաւ*), donog (<*dənog = դաս. *մնակ*), osoh (<*əsoh = դաս. *ասա*), puvortog (<*puvartog = դաս. *բովանդակ*) և այլն: Pəsgon ճևի մեջ /ուղղ. pəsəg դաս. *պսակ*/ առնմանություն, որպես բացառություն, տեղի չի ունենում:

Այս երևույթից տարբերվում է հետևյալ ճայնափոխությունը հին հայերենում, որտեղ կողք կողքի են կանգնած. *թեմ* t'aun «խոնավություն, անձրև» և *թեանալ. յօտ* yaut «խաղողի կտրած որթը» և *յատանեմ, յատեմ* «խաղողի որթը կտրել». *մօտ* maut և *մատուցանել, մատչիմ* = նհ. nodenam, mǫdeçənel, ապա *արտօտ* և *արտատուք, արտատուեմ*:

§41.1. Դաս. *ե* e, որ չի կարող գտնվել բառավերջում[4] = կիլ. *ե*, որ ունի ye, ʲe հնչյունական արժեքը շեշտակիր վերջին վանկում:

Ծան. Չմոռ. վերևում §6. որի համաճայն կասկածելի է մնում, թե գուցե որոշ դեպքերում, հատկապես բազմավանկ բառերում, պետք է ընդունել պարզ e հնչյունը:

Օրինակներ. կիլ. *եփ* yepᶜ = դաս. *երբ, ես* yes /դերանուն/ = դաս. *ես, եմ* yem = դաս. *եմ. ես* yes /*եմ* բայի ձև/ = դաս. *ես. մեծ* mʲej = դաս. *մեծ, մենք* mʲenkᶜ = դաս. *մեք, խելք* xʲelkᶜ = դաս. *խելք, տեղ* dʲeɣ = դաս. *տեղի* և այլն: *Ընկեր* əngʲer = դաս. *ընկեր, աներ* anʲer = դաս. *աներ* և այլն:

§42.2. *Վերջին վանկին նախորդող վանկերում դաս. ե e-ն պահպանում է կիլիկյան հայերենում նախկին e հնչյունական արժեքն ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում*:

Օրինակներ. *երկիր* ergir դաս. *երկիր. երկու, երկուք* ergu, ergukᶜ դաս. *երկու. երևեմ* elnem դաս. *ելանեմ, երեւման* erevnam դաս. *երևանամ, երկեղ, երկիւղ* ergʲeɣ, ergiɣ դաս. *երկիւղ, երմակ* ermag դաս. *երամակ, բերան* peran դաս. *բերան, բերեմ* perem դաս. *բերեմ, մեռնիմ* meṙnim դաս. *մեռանիմ, տեսնուլ* desnul դաս. *տեսանել, մեղկան* meɣgan դաս. *մեղական* և այլն:

Ասվածից հետևում է, որ վերջին վանկի ʲe *ե*-ն պետք է դառնա պարզ e, երբ այդ վանկը դադարում է վերջին լինելուց: Այսպես, օրինակ, բերդ pʲert, բայց *բերդեր* pertʲer, *տեղ* deɣ, բայց *տեղեստան* deɣestan և այլն:

Ծան. Այս համապատասխանության մեջ կիլիկյան հայերենն արդեն ցույց է տալիս նոր արևմտահայերենի հնչունական վիճակը, որտեղ, ինչպես նկատվել է վերևում (§6), *ե* e-ն շեշտակիր վերջնավանկում կանոնավոր ձևով դառնում է ʲe, իսկ մնացած դեպքերում պահպանվում է պարզ e հնչյունը: Սակայն որոշ բարբառներում, օրինակ, տաճկահայերենում, հին *ե*-իչ ծագող ձայնակապային e հնչյունի տարածման ընագավառը շատ ավելի լայն է[5]:

---

[4] Այսինքն տպագիր դրականության մեջ, հին ձեռագրերում բառավերջում հաճախ գրվում է *ե*. օր. *եթե, թե*:

[5] Ձայնակապի սկզբնապես միայն e հնչյունով սահմանափակվող հավելումը նոր հայերենի որոշ կենտրոնական և արևելյան բարբառներում տարածվում է նաև մնացած ձայնավորների վրա /i ձայնավորից բացի/ անկախ նրանից, թե դրանք նախնական են. թե ծագում են համապատասխան երկբարբառներից: Այսպես՝ հհ. *ու*-ն /*oj*/ դառնում է ju Ակնա բարբառում (Ճանիկ., էջ 280), հհ. *ո*-ն դառնում է jo Ակնա բարբառում (Ճանիկ., էջ 280), ju Ագուլիսի բարբառում (Патк. Диал.), Ղարաբաղի

§433 Դաս *ե* e = կիլ *ի* i նայերիկ առաջ, ավելի հազվադեպ՝ շփականներիկ կամ ռնգայիններիկ առաջ

ա) Բառասկզբում *իրեք* դաս *երեք*, *իրէց* /սեռ *իրիցու*, հոգնակի բայաո *յ-իրիցնոյ* y-ıriçno/ դաս *երէց*, *իրիցուհին* ırıcʰutün դաս *երիցուհին*, *իրիցկին* ırıçgin դաս *երիցակին*, *իրիցուկ* ırıçug դաս *երիցուկ*, *իրիկուն* irigun դաս *երեկուն*, *երիկուն իրկունք* դաս *երկունք*

բ) Բառամիջում *արքիլեմ* arkilem ավելի հին *արքելեմ* arkelem ճևիկ = դաս *արքելում աւիրեմ* Մի Հեր 25 = դաս *աւերեմ աւիլեմ*, ըստ Բառարանի, դաս *աւելում* ճևի բարբառային տարբերակը

գ) Ավելի հին *ե* e ձայնավորի հետ զուգորդվում է վերջինիկ ծագող միջին հայերեն i-ն հետևյալ ճևերում *մինակ* mınag և զուգահեռ *մենակ* menag, *դիհ* tıh[6] և զուգահեռ *դեհ* tʿeh «կողմ» *նիհ* nih, Վարդանի մոտ և զուգահեռ *նեհ* nʲeh «սակապին» Ապա, ըստ Բառարանի[7], *սիղելիս*, *սիղիղ* «հոմանի, ամառակ» = դաս *սեղելիս*, *նսիհ* nsih «ճակատագիր» = դաս *նսեհ*, մհ *գրիհ* «փողոց» = դաս *գրեհ*, *ժիո* žiĭ = դաս *ժեո*[8] Այստեղ կարելի է հիշել վերջապես արդեն վերևում /§37/ շոշափված *յիմեկնեմ* ճևը

Ծան 1 Այս տեղաշարժի տեսակետիկ կիլիկյան հայերենի հետ նույնական է նոր հայերենի վիճակը, որտեղ նույն դեպքում հհ *ե* e ձայնավորին նույնպես համապատասխանում է i

---

բարբառում /Пайк Диал/ Զեյթունի բարբառում /Ալահվ/ Ապա հհ *ա* /*այ*/ դառնում է ja Զեյթունի բարբառում որտեղ ըստ Ալահվ առկա են հետևյալ ճևերը **Զէթ** *խէաչ* /= *խաչ*/, *խէաղ* /= *խաղող*/, *էաղիւխ* /= *ազոխ*/, *էաղդիւր* /= *աղտոր ախտոր*/ *կէալ* /= *գայլ*/ *էան* /= *այն*/, *ինդէաս ինդէադ*, *ինդէան* /= *ընդ այս ընդ այդ ընդ այն*/ *քէրէայր* /=*քարայր*/ *սէնէմէար* /=*սանամայր*/, *տէրվէար* /= Լհհ tar ı var *դառն ի վայր*/ և այլն Բայց նաև *էօխիւր* /= *այնոր*/, *էօսինց* /= *այսոնց*/, *էօսէօր* /= *այսօր*/ ապա նաև *խէօճիւր* /= *խնճոր*/, *վէօղնիւց* /= *վզնոց*/, *դէօղջիւր* /= Տաճկ *սիճոր* դաս *տիկ*/ Այսինքն՝ վերջին դեպքում մեզ հետաքրքրող ձայնավորն առնմանվում է հաջորդ վանկի u-ի հետ որի հետևանքով հին ə -ն դառնում է ʲo, իսկ հին a(aı) -ն բնական ճևով ʲa դառնալու փոխարեն, նույնպես դառնում է ʲo -Այստեղ խոսքը ոչ թե երկբարբառների մասին է, մի բան որ կարելի է ենթադրել նոր հայերեն պակասավոր գրությունից ելնելով /Պատկանյանի Ալահվերդյանի, Ճանիկյանի և այլ հեղինակների մոտ/, այլ իսկական ձայնակապային ձայնավորների մասին, որոնք հատուկ են օրինակ, սլավոնական լեզուներին

[6] *Դիհ* tıh /հհ tı, tıh) իսկապես ծագում է դասական *դեհ* փոխառությունից, և չէր կարող երկրորդ անգամ փոխառված լինել պարսկերենից միջին հայերենի շրջանում Այդ դեպքում այն պիտի գրվեր *տիհ* և ոչ թե *դիհ*

[7] Նշանակությունը վստահելի չէ

[8] Հնագույն և ամենից լավ վկայված ճևն է *ժայո*

Այդպես է արևմտյան գրական լեզվի մեջ, տաճկահայ, լեհահայ (WZKM1, էջ 291), Նախիջևանի (Патк.), Մշո (Мсер. էջ 37), Ախալչխայի (Том., էջ 31, §72), Թիֆլիսի (Том., էջ 34, §3) և հատկապես Զեյթունի բարբառում: Վերջինիս մեջ գտնում ենք, ըստ Ալլահվ., ireg սեռ. irgon = դաս. *երեկ*. iriç = դաս. *երէց*. iranə = դաս. *երանի*. pirę = դաս. *բերէ*. piron = դաս. *բերան*: Այս, նույն բարբառում առկա են հիշատակված օրենքը խախտող հետևյալ ձևերը. idiv կիլ. et'ev «եռաւ», irink^{c} կիլ. ir'enk^{c} «իրենք», iris կիլ. er'es «երես», igir, դաս. *եկիր*, ikuγən /ուղղ. ikuγ «եկող»/ դաս. *եկողին*, idvənən դաս. *յետ*. Տաճկ. edevnin, ip^{c}mon < *եփ-ման* դաս. *եփել* և այլն: Վերջին օրինակները բնութագրում են Զեյթունի արևմտահայ բարբառը որպես սահմանակից մի բարբառ, որ թեև պատկանում է արևմտյան խմբին, այս կետում, ինչպես նաև շատ ուրիշ կետերում, արդեն բաժանում է արևելյան հայերենի հնչյունական առանձնահատկություններից: Համմտ. Ծան. 2:

Ծան. 2: Իտալիզմով բնորոշվող արևելահայերենում i-ն նաև արևմտահայերենի երկբարբառային *և* (= 'e) ձայնավորի կանոնավոր ներկայացուցիչն է: Եթե արևմտահայերենում հին *է*-ն դառնում է e *անշեշտ, ոչ վերջին* վանկում, իսկ *շեշտակիր* վանկում դառնում է 'e, արևելահայերենում այն նույնպես դառնում է e անշեշտ վանկում, բայց i *շեշտակիր վանկում*: Այս i ձայնավորը պահպանվում է նաև բառամիջի վանկում բառի երկարացման ժամանակ: Այսպես. Թֆ. / Том., 32, §60/ bix հոգն. bixir դաս. *բեխ*, diγ, diγir դաս. *դեղ*. xixč <*խեղճ*. cir դաս. *ծեր*. minj դաս. *մեծ*. sirt դաս. *սերտ*. miγr դաս. *մեղր*. mixk դաս. *մեղք*. gišir դաս. *զիշեր*. avil դաս. *աւելի*. xilk^{c} դաս. *խելք*. vic^{c} դաս. *վեց*: Բայի խոնարհման ժամանակ. beril, berim, berink^{c} = դաս. *բերել, բերեմ, բերեմք*: - yis դաս. *ես* /դերանուն/, yip^{c} դաս. *երբ*. yizə դաս. *եղն* և այլն: Ադուլիսի բարբառում նույնպես /Սարգ. էջ 35/. mic դաս. *մեծ*, is դաս. *ես* /դերանուն/, iznə դաս. *եղն*, git դաս. *գետ*, vir դաս. *վեր*. bir դաս. *բեր*. kir դաս. *կեր*. giril դաս. *գրել* և այլն: Դրա դիմաց արևմտ. m'ej, m'eγr, m'eγk^{c}, հոգն. meγk^{ci}er, yes, yep^{c} և այլն: Համմտ. Han. էջ 75 և 92:

Հյուսիս-արևմտյան բարբառախումբը նույնպես որոշակի հակում է ցույց տալիս դեպի իտալիզմը: Այսպես, Լեհաստանի, Տրանսիլվանիայի, Ղրիմի, Նոր Նախիջևանի, Մշո բարբառներում խոնարհման ժամանակ հին *է* e թեմատիկ ձայնավորին ամենուրեք համապատասխանում է i: Օրինակ, Լեհ. im, is, ink^{c} = դաս. *եմ, ես, ենք*, kidim, kidis = դաս. *գիտեմ, գիտես* և այլն: - Han. (WZKM 1, 291) - Мсер. Мушск. диал., էջ 37:

§44. Դաս. *և* e = կիլ. *ա* a բառասկզբում՝ *ղ* γ փափուկ շփականից առաջ. կիլ. *աղբայր* aγpair դաս. *եłbair*:

Ծան. 1. Հնմտ. Լեհ. aypar, axpar Han. էջ 22, Տաճկ. aypar Նոր արևմտահայ բառարան, էջ 9, Մշ. axper, Mcep., էջ 38, Թֆ. axper, Том., §63, Ղար. aper. Патк., Ախ. axbar. Том., §60. Նխ. axbar, Патк., Ագ. aypar Սարգ. 34 և այլն:

Նույնը կարելի է ասել նաև բառարանում որպես ռամկական նշանակված բառերի մասին. *աղիճ* ayij, *աղինճ* ayinj = դաս. *եղիճ*: Այդ բառը հանդիպում է նաև *աղիջ, աղիջ-իկ, աղիճ-իկ* ձևերով: *Աղտիւր* aydür (altiur) = դաս. *եղտիւր* «ճահիճ»: Սակայն դրանց կողքին կա կիլ. *եղայ, եղբայր* և այլն:

Ծան. 2. Հնմտ. Ագ. /Սարգ. 32/ araz դաս. *երագ*. arkat^{c} դաս. *երկաթ*. arku դաս. *երկու*. baran դաս. *բերան*, jark^{c} դաս. *ճեռք*. mařal դաս. *մեռեալ*, karac դաս. *կերած*. k^{c}ari դաս. *քեռի*: - Սակայն այդ երևույթը կա նաև պայթականներից առաջ. akal դաս. *եկեալ*. gatin դաս. *գետին*: Դաս. e ճայնավորը փոխարինվում է a-ով նաև Զուղայի բարբառում /Патк. Диал., էջ 83/: Արժե համեմատել նաև հհ. *հանում* /Յոբ Ժ. 11/ = *հենում* /Լեհ. hinełu/, որոնցից վերջինն ավելի հաճախ է հանդիպում: Հնմտ. Arm. Gramm. էջ 466:

§45. Դաս. *ե* e ճայնավորի թուլացումը և ə դառնալը կամ նրա կատարյալ անկումը, որոնք հատուկ են նոր հայերենին, առկա են արդեն միջին հայերենում, թեև ավելի քիչ են տարածված:

ա) Դաս. *ե* e-ն թուլանալով դառնում է *յ* ə բառասկզբում *ղ*-ից առաջ. կիլ. *ըղձգունք* Mcep. Բ, էջ 154, Հարանց վարք և այլն = դաս. *եղկգունք*, եզ. *եղունգն*. հնմտ. Տաճկ. yung, Մշ. əyung (Mcep. էջ 40):

բ) Դաս. *ե* e-ն առանձին դեպքերում դուրս է ընկնում նաև բառամիջում բաղաճայնների միջև, հատկապես նայերից առաջ.

Կիլ. *վայլէ* vaile 19-28 = դաս. *վայելէ*. կիլ. *վայլեմ* vailem 39-21 և այլն = դաս. *վայելեմ*: Ապա *վայլը* vailk Գանձ. = դաս. *վայելք*: Հնմտ. Ախ. vaylel (Том. 31), hayli = դաս. *հայելի* /նույն տեղը/, նաև Տաճկ. Լեհ. և այլն: Սրան վերաբերում է նաև կիլ. *լինալ* linal, *լիննալ*. linnal < **լինենալ*. *ունալ* unnal < **ունենալ*. *ճանչնալ* jančnal < **ճանաչենալ* և մի քանի ուրիշ նման դեպքեր:

Ծան. Այս երևույթը, որ միջին հայերենում ակնհայտորեն սկզբնավորման շրջանում է գտնվում, ընդհանրացել է նոր հայերենում: Այսպես, Մշո բարբառն ունի /ըստ Mcep. էջ 40/ hrəštak դաս. *հրեշտակ*. vər դաս. *վեր*. dər դաս. *դեռ*. arcəl^{i}el դաս. *ածելել*. arcəli դաս. *ածելի*. ապա k^{c}əzi տրականը. դաս. *քեզ*. məzi դաս. *մեզ*. jəzi դաս. *ճեզ* և այլն:

Նույն բարբառում, առանց երկրորդային ə-ի. ersun դաս. *երեսուն*. alv^{u}or դաս. *ալևոր*. avr^{i}el դաս. *աւերել*. vres = **վերայէ-ս*. vret = *վերայէ-ս*

/բայաոռ. + *ո* / և այլն: Նույն պատկերը գտնում ենք հետևյալ բարբառներում. տաճկահայոց /Այտ. Բ, էջ 274/, լեհահայոց /Han. WZKM 1, 285/, Ախալցխայի (Том. էջ 30): Սակայն անշեշտ վանկում, հհ. *ե* ձայնավորի աղման տեսակետից, ամենից հեռու է գնում արևելահայերենը: Այսպես, Թիֆլիսի բարբառում հին *ե* e-ից առաջանում են ոչ միայն e և i, այլև ə և i: Հմմտ. նաև բառասկզբի e-ի կանոնավոր անկումը r-ից առաջ Ադուլիսի և Ղարաբաղի բարբառներում. Ադ. *րիայ* = դաս. *երեխայ*. Ադ. *րես* = դաս. *երես*. Ադ. *րեայց* = դաս. *արարելոց* = /եղ. ուղղ. *արարեալ*/. Ղար. *րիւգիմ* = դաս. *երեկոյն*. Ղար. *րիայ*, /*րախայ*/ = դաս. *երեխայ*. Ղար. *բէս* = դաս. *երես*. Ղար. *ռաւուտ* = դաս. *առաւօտ*, Ղար. *ռաջվայ* = դաս. *առաջոյ*. Նխ. ařajva և այլն (Патк. Диал., էջ 39 և 65):

Դաս. է ը և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§46. Դաս. *է ը* կիլ. = *է ը*

ա) Բառասկզբում. *է ը* դաս. = *է. էի* դաս. *էի. էիր* դաս. *էիր* /էական բայի անկատարի ճևերը/ և այլն:

բ) Բառամիջում. *աէր* de̲r = դաս. *աէր. կէս* ge̲s = դաս. *կէս. մէկ* me̲g = դաս. *մէկ. մէջ* me̲č դաս. *մէջ. ամէն* ame̲n դաս. *ամէն. բերէր* pere̲r անկատարի 3-րդ դ. = դաս. *բերէր* և այլն:

գ) Բառավերջում. *թէ* t'e̲ = դաս. *թէ. լսէ* lse̲ ներկայի 3-րդ դ. = դաս. *լսէ. բերէ* pere̲ = դաս. *բերէ*: Ապա *է* վերջավորությունը բայարտահայտներ, ինչպես *յիրմէ* 63-21 դաս. *յիւրմէ. ի գրաւկնէ* 73-19 դաս. *ի գրաւականէ. ի բաժնէ* 53-26 դաս. *ի բաժնէ*:

Ծան. Ընդհանրապես *է* ձայնավորը, որքանով որ մենք կարող ենք նրան հետևել հայոց լեզվի պատմության մեջ, ներառյալ այսօրվա նոր հայերենը, երկարությունից անկախ մնացել է անփոփոխ և ունեցել է e արտասանություն: Մենք գտնում ենք այն յուր նախկին տեղում լեհահայոց (WZKM 1, 283), Ախալցխայի (Том. էջ. 28), Մշո (Мсер. 47, 48), Թիֆլիսի (Том. էջ 44), Ադուլիսի բարբառներում Պարգ. էջ 36), գրական լեզվի մեջ, տաճկահայերենում և այլն[9]:

---

[9] Միայն առանձին դեպքերում դաս. *է ը* -ն նոր հայերենում հանդես է գալիս տարբերակված ճևով: Այսպես. Մշո բարբառում (Мсер. 49) t'e-ի կողքին նաև tə́, meč-ի կողքին նաև məč: Առանձին դեպքերում նաև Լեհ. s'er /դաս. *սէր*/, որպես բարդությունների երկրորդ անդամ: ayv'es հոգն. ayvesn'er դաս. *աղուէս* /Լեհ. *աղուէս*/, որովհետև հին հայերենում այստեղ *է*-ն հանդես է գալիս նախնական *ե*-ի փոխարեն, և դաս. *աղուէս-աղուես* տե՛ս Arm. Gramm., էջ 415: Դասական լեզվից էական շեղումներ է

§47. Հավելված. է հնչյունը կարող է երևան գալ միայն վերջին վանկում: Մնացած վանկերում նրա տեղը գրավում է i-ն: Ինչպես տեսնում ենք, հին լեզվի համապատասխան օրենքի ուժով ստեղծված վիճակը պահպանվում է նույնիսկ այն բանից հետո, երբ նշված օրենքը վաղուց դադարել էր գործելուց: Հմմտ. Hübschm. Chron. էջ 154:

Այսպես, օրինակ, *տէրն* dęrn 71-11, բայց *տիրոջն* diročn 71-13, *մէջ* męč 19-6, բայց *միջոյն* mičocn 71-13, 71-13, *կէս* ges 45-17.20, բայց *կիսովն* gisovn /գործ./ 45-22:

Դաս. ի i և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§48 Դաս. *ի* i = կիլ. *ի* i

ա) Բառասկզբում. *ինք* ink^{c} դաս. *ինքն, իջնում* ičnum դաս. *իջանեմ. իջուանք* ičvank^{c} դաս. *իջաւանք, իսկի* iski դաս. *իսկ, իրար* irar դաս. *իրեար. իրք* irk^{c} դաս. ir-k^{c} և այլն:

բ) Բառամիջում. *գին* kin դաս. *գին, հինգ* hing դաս. *հինգ. կին* gin դաս. *կին, աղջկին* aγčgin դաս. *աղջիկ. որդիք* ortik^{c} դաս. *որդիք. հիւանդ* hivand դաս. *հիւանդ. գիտենամ* kidenam դաս. *գիտել,. շինեմ* šinem դաս. *շինեմ* և այլն:

գ) Բառավերջում. *ճի* ci դաս. *ճի, մի* mi դաս. *մի, մի՛* mi /արգելական մասնիկ/ դաս. *մի. տարի* dari դաս. *տարի. ոսկի* oski դաս. *ոսկի*: Նույն խմբին է պատկանում *ի* հիմքերի *ի* վերջավորությամբ ներկայի եզ. 3-րդ դեմքը, ինչպես նաև *ի* վերջավորությամբ եզակիի սեռականը:

§49. Հավելված: Թեև դադարել է գործելուց հին հայերենի հնչյունական օրենքը, որի համաձայն *ի* i ձայնավորը կանոնավոր ձևով պահպանվում է միայն վերջին վանկում, իսկ այլ դեպքերում դուրս է ընկնում կամ դառնում է, նրա ազդեցությամբ ստեղծված վիճակը մնում է անփոփոխ:

Օրինակ. *այրիկ* airig սեռ. *այրկան* airgan 37-23, *աղջկին* aγčgin հոգն. *աղջկներ* aγčgn'er 37-23, *կնիկ* gnig սեռ. *կնկան* gngan 19-13, *տիկին* digin սեռ. *տիկնոջ* dignoč 37-14, 19 և այլն:

Ծան. Երկրորդային ə-ի առաջացման մասին հմմտ. §4: Հիշատակենք նաև n-ից առաջ բառասկզբի i-ի թուլացումը և ə-ի վերածվելը. *ընչիկ* ənčig «ինչ-որ, որևէ» = *ինչ-իկ* անորոշ դերանվան մեջ 9-14: Այս հնչյունափոխությունը հազիվ թե կարող է պատկանել բուն դասական հայերենին, չնա-

---

դրսևորում Ղարաբաղի բարբառը, որտեղ դաս. է-ն ներկայացված է որպես a. Ղրբ. maĉə /դաս. *մէջ*/. Ղրբ. թա /դաս. թէ/ և այլն: Հմմտ. Патк. Диал. 65:

յած որ. համաձայն Մսերյանցի /Мушск. диал. 52/, արդեն հին գրականութեան մեջ գտնում ենք հետևյալ զուգահեռ ձևերը. *ընթան և ինթան, ընթանք և ինթանք, ընթամբ և ինթամբ, ընթանս և ինթանս. յըսուն, յսուն և յինսուն, յըսնիկ և յինսիկ*: Հմմտ. նաև Բագրատ. §224: Ընդհակառակն, այս հնչյունափոխութիւնը որոշակիորեն պատկանում է նոր հայերենին: Այսպես Մշո բարբառը /Мсер. 55/ ունի ənji դաս. *ինճ*, ənču դաս. *ինչու*, əski = *իսկի*. *mə (արգելական մասնիկ) դաս. մի*, pəti դաս. *պիտի և այլն*:

Հին հայերենի *վերջին վանկի i ձայնավորը կանոնավոր ճևով դառնում է ə* Զեյթունի բարբառում: Օրինակ. /ըստ Ալպահվ./ Զթ. paγnək = *բաղանիք*. panəs = *բանիս*, parə = *բարի*. pardə = *բարտի*. kacən (= Տաճկ. *գալին*). k^{c}aγərt^{c} (= *քաղիրդ, քաղիրթի*) «փորի պարկ». kudə = *գռտի*. truəl = Տաճկ. *դրուիլ*. məs (= *միս*) և այլն: Նույնը վերաբերում է այնպիսի փոխառութիւններին, ինչպես yanə «այսինքն, իբր թե» (արաբ. ya^{c}ni):

§50.2 *Դաս. ի i = կիլ. ե ʲe նայերիկ առաջ*:

Կիլ. *պեղծ* bʲeγj 29-22 = դաս. *պիղծ, անկիշեռ* angišeŕ «չկշռված» 155-5 = դաս. *անկշիռ*: Անտիոքի անսիզներում 79-13 վկայված *կշիռ* ձևը պետք է դիտվի որպես դաս. *կշիռ* ձևի զուտ գրչական մի տարբերակ:

Ծան. - Դաս. *ի* i ձայնավորի զարգացման տեսակետից, եթե հաշվի չառնենք i>ə մասնակի թուլացումը /հմմտ. §49 Ծան./, նոր հայերենն էապես չի տարբերվում կիլիկյան հայերենից: Հմմտ. Han. WZKM 1, 289. Լեհահայոց բարբառի համար, Мсер. էջ 52, Մշո բարբառի համար, Том. 23. Ախալցխայի բարբառի համար, Том. 38. Թիֆլիսի բարբառի համար և այլն: Հատուկ դիրք է գրավում Ագուլիսի *բարբառը*: Վերջինիս մեջ (Патк. Диал. էջ 39) դաս. *ի* ձայնավորին համապատասխանում են.

ա) anj /դաս. *ինճ*/. am /դաս. *իմ*/. ma /արգելական մասնիկ/ դաս. *մի՛*. sart դաս. *սիրտ*. sarun դաս. *սիրուն* և այլն: a-ի համար այս դեպքերում ունենք նաև e. enj, em փոխանակ anj, am:

բ) ai. Ագ. k^{c}aint^{c} /դաս. *քիճ*/. mairuk^{c} /հհ. *միրուք*/. maitk^{c} /դաս. *միտք*/. pait /դաս. *պիտի*/. mtaik /դաս. *մտիկ*/. knaik /դաս. *կնիկ*/. hraik^{c} /դաս. *հերիք*/. haing /դաս. *հինգ*/ և այլն /հմմտ. Սարգ. և Патк. Диал./:

գ) Առանձին դեպքերում նաև ui և u. muin = դաս. *մին/հ*/ unč = դաս. *ինչ* /հմմտ. Патк. Диал. էջ 40 և Սարգ./: Հայտնի է, որ *մոյն* և *ոմն* ձևերը, որոնք հիշյալ ձևերի նախատիպ են հանդիսանում, առկա են դեռևս Դիոնիսիոս Թրակացու մոտ: Կանոնավոր նոր հայերենից շեղվում է նաև Խոյի բարբառը, որտեղ հհ. *ի*-ն ներկայացված է որպես e, օրինակ՝ (Патк. Диал. էջ 74 հաջ.). mẹt /= դաս. *միտ*/. amẹs /= դաս. *ամիս*/, tarẹ /= դաս. *տարի*/. yeγẹ /= դաս. *ուղի*/. k^{c}amẹ /= դաս. *քամի*/:

Դաս ը ə և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 51.1 Դաս *ը* ə = կիլ *ը* ə բառասկզբում՝ ռնգայինների և նայերի հարևանությամբ Ընկեր əng'er սեռ *ընկերոջ* əngeroč /դաս *ընկեր*/, էջ 31-4 Հ 224-44, *ընդունիլ* əndunil /դաս *ընդունել*/, հարակատար դերբայ *ընդունած* əndunaj *ընծայել* ənjayel /դաս *ընծայել*/ և այլն

Հավելված 1 ə հնչյունն առաջանում է բաղաձայնների կուտակման դեպքում հատկապես բառասկզբում, որտեղ դասական լեզվի մեջ ձայնավոր չկա

Ավելի մանրամասն տե՛ս §41

§52 Եթե դասական լեզվի մեջ ə հնչյունը լծորդվում է միայն i և u ձայնավորների հետ, երբ վերջիններս սկզբնապես գոնվում են ոչ վերջին վանկում, կիլիկյան հայերենում այն նույնքան հաճախակի ձևով հանդես է գալիս միջին վանկի նախնական *ա* a ձայնավորի փոխարեն, առանձին դեպքերում նաև *ե* e և *ո* o ձայնավորների փոխարեն Ավելի մանրամասն տե՛ս 42, ինչպես նաև §34

Ծան Այսպիսով, ə ձայնավորի տարածվածության տեսակետից կիլիկյան հայերենը գոնվում է արդեն նոր հայերենի աստիճանում Օրինակ, նույն պատկերն ունենք լեհահայոց բարբառում /WZKM 1, 297 ff/, Մշո բարբառում /Мсер. 73 հաջ / և այլն

§53 Հավելված Երկրորդային ə հնչյունն առաջին վանկում լծորդվում է i-ի հետ, այսինքն՝ ավելի հին մի ə-ն դառնում է i հետևյալ դեպքերում *ինկնիմ* /տե՛ս Բառարանը/՝ ավելի հին կիլ *ընկնիմ* ճևի կողքին *յիստակ* histag /տե՛ս Բառարանը/՝ ավելի հին *յստակ* həstag դաս ystak ճևից, նույն արմատից *յիստակեմ* histgem ապա *անկիշեռ* angišeŕ ավելի հին *անկշեռ* angəšeŕ ճևի փոխարեն

Սակայն՝ եթե այդ երևույթը բուն կիլիկյան աղբյուրներում հանդիպում է միայն առանձին դեպքերում և բացառության կարգով, Մխիթար Հերացու բժշկական գրվածքում այն շատ սովորական է և գրեթե կանոնավոր Այդտեղ գոնում ենք, օրինակ, *յիստակ* /= *յստակ*/, էջ 57, 81, 92, 99 *յիստակած* = *յստակած*, էջ 55 *դիժար* /= *դժար*/, էջ 49, 53, 55, 57 *դիժարնայ* /= *դժարնայ*/ էջ 65 *իսպիտակ* /= *սպիտակ*/, էջ 33, 42 և այլն

Կիլիկյան ժխտական չ č նախամասնիկը հատկապես Մխ Հերացու մոտ գրեթե կանոնավոր ձևով դառնում է *չի* či՝ բաղաձայնից առաջ, կամ, ավելի ճիշտ, չ č-ի և հաջորդ բաղաձայնի միջև զարգացող ընդհանուր կիլիկյան ə-ն Մխիթարի մոտ դառնում է i Այսպես, օրինակ, *չիբռնես* էջ 10

/= *չբռնես* čə-pṙnes/, *չհովկնես* էջ 23 /*չհովկնես* čə-hovcnes/, *չհյուլանաս* /= *չյուլանաս* čə-hulanas/, *չհատաս*, էջ 69 /*չատաս* čə-das/ և այլն:

Ծան. Այս ծավալով, սակայն, երևույթը չպետք է դիտվի որպես կիլիկյան: Անկախ նրանից, թե Մխիթարի գրվածքում այն արտացոլում է որևէ այլ, ոչ կիլիկյան, սակայն միջին հայերեն մի բարբառ, կամ թե մուտք է գործել ավելի ուշ, նոր հայերեն մի խմբագրումիչյան միջոցով - այն հաստատ գոյություն ունի, և մենք նորից գտնում ենք այն ժամանակակից արևմտահայ բարբառներում: Այսպես, լեհահայ բարբառում, ըստ Հանուշի[10], կան հետևյալ ձևերը. tižar դաս. *դժար*. nišan դաս. *նշան*. nišanełu դաս. *նշանել*. istak դաս. *յստակ*. jigvełu դաս. *ճգնիլ*. jinǰmełu դաս. *ճմլել*. jirax դաս. *ճրագ*. jiraxkal դաս. *ճրագակալ*. jigełu դաս. *ճգնել*. bizdig Տաճկ. *պստիկ* bəzdig, նույն արմատից bizdignału «փոքրանալ», ապա tikal «գդալ» դաս. *դրգալ* կիլ. təkal, vǐjarełu դաս. *վճարել* կիլ. vəǰarel, viǰark^{c} դաս. *վճար* կիլ. vəǰar: Բերենք նաև mirug = *mərug = դաս. *մորուք*, *մուրուք* և *չի* ժխտական նախամասնիկը բաղաձայններից առաջ, որ նույն ձևն ունի, ինչ Մխիթար Հերացու մոտ: Այստեղ, հին մհ. ə-ն բառասկզբի վանկում երկու կամ ավելի մեծ թվով բաղաձայններից առաջ, որոնք նայ չեն, նրանց միջև դառնում է i: Դա համապատասխանում է լեհահայոց բարբառի i ձայնավորի հանդեպ ունեցած նախասիրությանը: Այդպես է բացատրվում նաև Լեհ. *սահմանականի* gi նախածանցը բաղաձայնով սկսվող բայերից առաջ: Բանն այն է, որ նախածանցի նախնական ձևը /կիլ. *կու* gu/ արդեն վաղ նոր հայերենի շրջանում թուլացումով դարձել է gə *կը*. gə ձևով այն հիմա էլ գոյություն ունի տաճկահայերենում հնչյունական օրենքի համաձայն. gə ձևը բաղաձայնների հարևանությամբ դարպասել է դեպի gi, չնայած որ ձայնավորներից առաջ այն հնչում է g-:

Ավելի հազվադեպ է հհ. ə ձայնավորի համար Լեհ. u համապատասխանությունը. այն էլ միայն այն դեպքերում, երբ հաջորդ վանկի ձայնավորն u է: Օրինակ, Լեհ. guju «օղի» հհ. *կծու* /kəcu<*kicu/, Լեհ. t^{c}ut^{c}u= հհ. *թմբու* Լեհ. ǰunǰuhux= հհ. *ճնճղուկ* /Hübschm. Chron էջ 157/, մի առնմանում, որ կիլիկյան հայերենին անծանոթ է:

Դաս. n, o և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 54.1. Դաս. *n*, o = կիլ. *n*, vo միավանկ բառերի սկզբում: Սակայն եթե բառն ածանցման շնորհիվ բազմավանկ է դառնում, ապա կիլ. *n*-ն առանում է *o* հնչյունական արժեքը /տե՛ս §7/: Օրինակներ. *ով* vov 39-3,

[10] O Języku Ormian Polskich (Kraków, 1886).

83-14.15 = դաս. *ով* ov. *որ* vor = դաս. *որ* or. *որբ* vorp, սակայն հոգն. ուղղ. *որբեր* vorp'er 51-11 = դաս. *որբ* orb, սեռ. *որբոյ* orbōç և այլն:

§55.2. Դաս. *ո, օ* = կիլ. *ո օ* բազմավանկ բառերի սկզբում, բառամիջում և առանձին դեպքերում նաև բառավերջում: ո հնչյունի երրորդ հնարավոր հնչյունական արժեքի մասին հմմտ. սակայն §7 Ծան.:

ա) Բառասկզբում. *որդի* orti հոգն. *որդիք* ortik հոգն. սեռ. *որդեայ* ort'eç = դաս. *որդի, որդիք, որդեայ* ordi, ordik, ordeaç. *ոսկի* 81-84 դաս. *ոսկի* oski և այլն:

բ) Բառամիջում. *չորս* čors դաս. *չորք, ըղորդ* əyort դաս. *ուղղորդ, գողնամ* koγnam դաս. *գողանամ, կորանեմ* gorsnem դաս. *կորուսանեմ, մոռնամ* moṙnam դաս. *մոռանամ*. գործիականի *-ով* -ov վերջավորությունը = դաս. *-ով*:

գ) Բառավերջում առանձին դեպքերում. *քո* /2-րդ դեմքի դերանվան սեռականը/ II 15-15, 23-9 դաս. *քո*, ինչպես նաև պատճառական բայերի հրամ. եզ. 2-րդ դեմքի ձևը, որ ունի *ո-օ*= դաս. *ո* վերջավորությունը: Դրա կողքին, սակայն, արդեն կա ավելի նոր, վերջինիցս առաջացած *-ու* -u- վերջավորությունը:

Ծան. 1. Նոր և կիլիկյան հայերենի հարաբերակցության մասին այս դեպքում հմմտ. §7[11]:

Ծան. 2. Նոր հայերեն քիչ թվով բարբառներում օ հնչյունից առաջ զարգանում է y: Այդպես է վիճակն Ակնա բարբառում[12] (Ճանիկ. էջ 282,2), եթե *օ-ն* գոնվում է բառամիջում, նաև Զեյթունի բարբառում /Ալպահ./: Հմմտ. վերևում §42 տողատակի ծանոթագրությունը:

---

[11] Լեհ. fəd, fərt, tfər ձևերի կողքին, որոնց մասին խոսվել է վերևում /էջ 22, տողատակի ծան./, կարելի է դնել Ակնա բարբառի հետևյալ ձևերը, որ ենթարկվում են նույն օրենքին /Ճանիկ. էջ 283/. *ֆեա* «այստեղ», *ֆետ* «այդտեղ», *ֆեն* «այնտեղ», *ֆեղ* «հող» < *h^{u}es (=արևմտ. hos *հոս*), *h^{u}et (= արևմտ. hot *հոտ*), *h^{u}en (= արևմտ. hon *հոն*), *h^{u}eg (= արևմտ. hoγ *հօղ*): - Ընդհանրապես այս բարբառն արևմտ. ^{u}o(vo)-ի համար հաճախ ունի ^{u}e(ve) համապատասխանությունը. հմմտ. Ակ. *վեվէ* vev ē = դաս. *ո՛վ է* արևմտ. vov ē: - Համապատասխանաբար Տաճկ. /Այտ. Ա. 180/ fəγ կամ feγ, fəd, fədal, fort^{c} ծագում են հհ. *հող, հոտ, հոտիլ, հորթ* ձևերից: Տաճկ. fors առաջացել է դաս. *որս* ձևից՝ ենթադրյալ *h^{u}ors ձևի միջնորդությամբ /նախադիր h-ով!/: Ախալցխայի բարբառում, ինչպես նաև Ակնա բարբառում, f- սկսվածքով ձևերի կողքին պահպանվել են h-ով ավելի հին ձևերը. Ախ. f^{u}ed և h^{u}ed սեռ. hodi. Ախ. f^{u}ert^{c} և h^{u}ert^{c} սեռ. hort^{c}i. Ախ. t^{cu}er հոգն. t^{c}orn'er /հմմտ. Том. Ах. диал./:

[12] Բացառությամբ հետևյալ ձևերի. Ակ. t^{c}anir /դաս. *թոռնիր* ձևի կողքին/, Ակ. xanairh /դաս. *խոնարհ*/, Ակ. maxir /դաս. *մոխիր*/ -ոե՛ս Ճանիկ., էջ 282:

§56.3. Առանձին դեպքերում դաս. *ո*, o = կիլ. *և*, e բառասկզբում *յ*, r նայիկ առաջ. կիլ. *երբոյն* erk^{i}iun, Գիրք վասա. էջ 209 և 223 = դաս. *որքիւն*:

Ծան.1. Հնմտ. նհ. herk^{c}un = դաս. *որքիւն*, orkiun. նհ. /Լեհ./ xəmer = դաս. *խմոր* WZKM 1, 285: Ընդհակառակն, նհ. çor^{j}ek = դաս. *կերեկ*. նհ. /Տաճկ./ oskor = դաս. *ոսկեր* osker /*ոսկր* գոյականի եզ. սեռ./, հոգն. *ոսկեր-ք*:

Ծան. 2. Այս դեպքի հետ կապ չունեն հին հայերենի հետևյալ զույգ ձևերը. *ողող* = *հեղեղ*, *ողողեմ* = *հեղեղեմ*, *լող* = *լեղ* = *slig^{2}rós =*լերկ*= *ղերկ* /λετος Ծն. 20,10/. *զառհ= զառեհ* /նույն տեղը/, *ոխորիմ* oxorim = *ոխերիմ* oxerim /նույն տեղը/: Այստեղ գործում է կամ հնդեվրոպական ձայնդարձը, կամ էլ ձայնավորների հայկական առնմանումը:

§57.4. Դաս. *ո* o = կիլ. *ու*, *լուկ* lug 49-22 = դաս. *լոկ*, նաև *սղալուրդի* syalurti 81-14, *գնուրդի* knurti 21-11: Երկուսն էլ ծագում են **որդի* - ordi վերջավորությամբ ավելի հին ձևերից /հհ. *-որդ* վերջածանցը/:

Ծան. Բառգրքի համաձայն, արդեն դասական գրականության մեջ առկա են տարբերակներ. *աղբոտ* և *աղբուտ*, *որդ* և *որուդ*, *որդակ* և *որուդակ*, *օտ* և *ուտ*:

§58.5. *Դաս. ո o կիլիկյան հայերենում անհետանում է յ, ո, ղ բաղաձայններից առաջ կամ հետո:*

Օրինակներ. *ժողվեմ* žoγvem = դաս. *ժողովեմ*, *կոտրեմ* godrem = դաս. *կոտորեմ*, *հոռմերէն* horməreրn Գիրք վասա. էջ 147, 169 = *հռոմարէն*, *հռոմէրէն*, հոգն. սեռ. *հռոմաց*, *հռոմոց* Սմբ. Ժամ. Dul. էջ 636 = դաս. *հռոմաց*, *հռոմոց*, եզ. բաց. *ի հռոմէրն)* Սմբ. Ժամ. էջ 610, 620 = *ի հռոմէրն)*. *ըղղրկեն* əγərgen «հարթում են» Dipl. Lev. V. L. 188-32 = դաս. *ողորկեն*. *անլսղրդութիւն* anlsərtut^{c}ün H. 214-22 = դաս. *անլսողրդութիւն*: Դրանիկ բացի, միջին հայերենում գտնում ենք արդեն *խորվեմ* xorvem = դաս. *խորովեմ*. *սորվիմ* sorvim = դաս. *սովորիմ*:

Ծան. Հնմտ. Տաճկ. /Այտ. Բ, 274/ žoγvel, sorvil (sovril), xorvel, t^{c}oṙmil, (< t^{c}oṙomil =դաս. *թառամել*). Լեհ. (Han. WZKM 1, 289) xorvełú, sorvełú և այլն: Ալա. /Том. 34/ sorvil, god´ŕel, žoγvel. Մշ. /Мсер. 61/ kət^{u}or = դաս. *կոտոր*, kotr^{j}el = դաս. *կոտորել*, sovr^{j}el = դաս. *սովորել*. Թֆ. (Том. 37) xorvil = դաս. *խորովել*, sovril = դաս. *սովորել*, kotril = դաս. *կոտորել*, kətur = դաս. *կոտոր* և այլն:

§59.1. Դաս. *ու* u = կիլ. *ու* u:

ա) Բառասկզբում. *ուխ* ut^{c} դաս. *ուխ. ուտեմ* udem դաս. *ուտեմ. ունիմ* unim դաս. *ունիմ. ունենամ /ունիմ* բայի տարածված հիմք/, *ուսնիմ* usnim դաս. *ուսանիմ* և այլն:

բ) Բառամիջում. *դուք* tuk^{c} դաս. *դուք. դուստր* tustr դաս. *դուստր, թռուխթ* t^{c}uxt^{c} դաս. *թռուղթ. անուն* anun դաս. *անուն. հարուստ* harust դաս. *հարուստ. տուն* dun դաս. *տուն. շուն* šun դաս. *շուն* և այլն:

գ) Բառավերջում. *դու* tu դաս. *դու. երկու* ergu դաս. *երկու. առնու* arnu դաս. *առնու, թռղու* t^{c}oγu դաս. *թռղու. ու* վերջավորությամբ սեռականը /*տե՛ս* Զևաք./ և այլն:

§60. Հավելված. կիլ. *ու*, u /= դաս. *ու*/ ձայնավորը վերջին վանկիկ դուրս կանոնավոր ձևով դառնում է ə կամ ընդհանրապես կորչում է: Հմմտ. վերևում §47 և 49:

Օրինակ. *դաստերաչ* (təsteraç), 37-26. հոգն. սեռ. *դուստր* tustr բառի. հոգն. ուղղ. tsterk^{c} (dəsterk^{c}), էջ 39-4. *տնվի* dnvi (dənvi) սեռ. *տնվոյ* dnvo (dənvo) Սարխ. արտ. /*տուն* գոյականիկ/. *ստեմ* sdem (sədem) /*սուտ* բառիկ/, *մտեմ* mədem /*մուտ* բառիկ/ և այլն: Նույնը վերաբերում է փոխառությունների. օրինակ. *ջալունջ* čalunǰ և դուգահեռ *ջալընջեմ* ǰalənǰem:

Ծան. Ինչպես կիլիկյան, այնպես էլ նոր հայերենում հին *ու*, u-ն կանոնավոր ձևով պահպանվել է: Հավելվածը վերաբերում է նաև նոր հայերենին: Հմմտ. օր. Han. WZKM 1, 293, Мсер. Мушск. диал. էջ 63 հաջ. և այլն: Հմմտ. սակայն ստորև §62 Ծան.:

§61.2. Եթե դասական հայերենում *ու*, u հնչյունը բառասկզբում մեծ մասամբ պահպանվում է, կիլիկյան հայերենում դաս. *ու*-ն (u) բառասկզբում *ղ* γ(ɣ) բաղաձայնից առաջ դառնում է *ը* (ə):

Այսպես՝ կիլ. *ըղորդ* = դաս. *ուղղորդ, ուղորդ. ըղորդեմ* = դաս. *ուղղորդեմ. ըղորդութիւն* = դաս. *ուղղորդութիւն. ըղուղ* = դաս. *ուղեղ, ուղիւղ. ղրկեմ* əγrgem (əγərgem) = դաս. *յուղարկեմ*: Նույն շարքին են պատկանում նաև միջին հայերեն հետևյալ բառերը. *ըղերձել* Ագր. Նար./ = դաս. *ուղերձել. ըղեւորիլ* Հ. վարք = դաս. *ուղեւորել*, նաև *ըղեւորութիւն* Ագանճ./ = դաս. *ուղեւորութիւն. ըղեղ* Վանական վարդապետի մուտ /ԺԳ դար/ = դաս. *ուղիղ*:

Ծան. Զուգահեռ ձևով նոր հայերենում ունենք Մշ. (Мсер. էջ 68) əγ^{u}ort Տաճկ. əγort = դաս. *ուղղորդ* բառասկզբի ə ձայնավորի անկումով.

Լեհ. xortełu «ուղղել» (Han. 69) = Նխ. xort^{j}el. Տաճկ. xərgel = Լեհ. xərgełu = Թֆ. yərgil = Նխ. xərkel. Թֆ. γuγ սեռ. γəγi = դաս. *ուղիւղ* «ուղեղ», γurt^{c} = դաս. *ուղղորդ* /Том. էջ 40/:

§62.3. Դաս. *ու*, u = կիլ. *աւ*, o, առանձին դեպքերում բառասկզբում *ղ* γ բաղաձայնից առաջ, հետևյալ բառերում. *աւղղեմ* oγγem /հմմտ. Բառ./ = դաս. *ուղղեմ*: Այդ հնչյունափոխությյան համար կարելի է դուգահեռ օրինակներ գտնել արդեն ուշ դասական լեզվի մեջ. *ողորդ* olord (oγort) /= դաս. *ուղղորդ/*, *աւղորդ* /= *ողորդ* - sic/ 1036 թ. մի արձանագրության մեջ /Շիր. 135/ *որդ* ord (ort) «ջրանցք» /= դաս. *ուրդ/*, *օղերձ* /= դաս. *ուղերձ/*. *օղերձեմ* և *ողերձեմ* /= դաս. *ուղերձեմ*/[13]: Հմմտ. նաև դաս. *օժիտ* = *ուժիտ*. *օժանդակել* = *ուժդակել*:

Ծան. Նոր հայերենում ունենք համապատասխանաբար Տաճկ. oγort /արևմտ. բառդ./ = Ախ. oγ^{u}ert^{c}, γuert^{c} (Том. 34). Մշ. oγork^{j}el (Mcep. 68)= Վն. oroxkel = դաս. [յ]*ուղարկել*. Լեհ. oγuγ Han. 97 = դաս. *ուղիւղ*[14]: Հմմտ. նաև Ագ. /Սարգ. էջ 46, 47/ orax = դաս. *ուրախ*. orag^{j} = դաս. *ուրագ*, otil = դաս. *ուտել*, onil = դաս. *ունել*: Առհասարակ միավանկ բառերի ընդհանուր հայերեն u ձայնավորին Ագուլիսի բարբառում կանոնավոր ձևով համապատասխանում է *o*. Ագ. sot = դաս. *սուտ*. çort = դաս. *յուրտ*. kot = դաս. *կուտ* և այլն: Հմմտ. նաև onil, otil դաս. *ունել*, *ուտել* ձևերի փոխարեն, չնայած որ *բազմավանկ* բառերի համար այդ օրենքն ընդհանուր կիրառություն չունի: - Ագուլիսի բարբառին այս տեսակետից նման է Ղար. /Патк. Диал. էջ 64/: -u-ից առաջ y հնչյունի առաջացման մասին Ակնա բարբառում հմմտ. Ճանիկ. էջ 281 հաջ.. Ղար. հմմտ. Патк. Диал. էջ 65: Հմմտ վերևում §42, տողատակի ծանոթագրությունը:

Դաս այ ai և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§63.1. Բառավերջի դաս. *այ*, ai = կիլ *այ*, a:

Նույն երևույթն ընդհանուր է նաև նոր հայերենի համար: Կիլ. *տղայ* dya 53-15, 55-16, դաս. *տղայ*, *ծառայ* jara L 155-7.10, դաս. *ծառայ*. *վկայ* vga 29-15 դաս. *վկայ*. *վերայ* vera 35-17, 51-12 դաս. *վերայ*: *-այ* -a վերջավորությյամբ եզ. ներկայի 3-րդ դ. ձևի մասին հմմտ. Զևաբանություն:;

---

[13] Հմմտ. Мсер. Муш. диал. 65:

[14] Ջուղայի բարբառում սակայն /Патк. Диал. 83/ դաս. u-ին γ-ից առաջ համապատասխանում է a հնչյունը, օր. Ջղ. ayord /= դաս. *ուղղորդ/*. ayarkel /= դաս. *յուղարկել*/:

Ծան. Նոր հայերենի համար հմմտ. WZKM1, 193, Мсер. Мушск. диал. էջ 82, Том. Тифл. диал. էջ 47 և այլն:

§64.2. Դաս. *այ*, ai բաղաձայնիկ առաջ = կիլ. *այ*, ai, ուշ կիլ. a: Վերջին պարզ հնչյունը նոր արևմտահայերենում նույնպես հանդիսանում է դաս. ai երկբարբառի կանոնավոր համապատասխանությունը: Հմմտ. վերևում §8:

ա) Բառասկզբում. *այլ* ail (al) 11-21, 26, 13-29, դաս. *այլ. այս, այտ, այն* ais(as), aid(ad), ain(an) յուց. դեր. սեռ. *այսոր* aisor (asor), *այնոր* ainor(anor) և այլն. *այրիկ* airig(arig), 19-12,13, 21-19, 45-12, դաս. *այր* և այլն:

բ) Բառամիջում. *հայր* hair(har) 47-14.10, դաս. *հայր. մայր* mair (mar) 49-29.35, դաս. *մայր. աղբայր* aypair (aypar), դաս. *եղբայր. ճայն* cain (can), 47-2, 33. դաս. *ճայն.* ապա *-այք* aik^{c} (ak^{c}) վերջավորությամբ հոգնակիի 2-րդ դ. ճեի մեջ հմմտ. Զեյթ.:

Ծան. Ինչպես նշվել է վերևում, նոր արևմտահայերենում այս դեպքում կանոնավոր ճևով ունենք a: Այդպիսի վիճակ են ցույց տալիս Տաճկ. և արևմտյան գրական լեզուն /Այտ. Բ, էջ 272/, Լեհ. /Han. WZKM 1, 193/, Նխ. /Патк./, Ախ. /Том. էջ 30/ և այլն:

§65. Հավելված: Դաս. ai-ի երկբարբառային բնույթը պահպանվել է հետևյալ դեպքերում. ա) որոշ միավանկ բառերի վերջում /§8, ա. *Ծան.*/, ինչպես *հայ* hay, դաս. *հայ. վայ* vay, դաս. *վայ* (gespr. vai) և նման այլ ճայնարկությունններում:

բ) Բազմաթիվ բառերի բառամիջում, որտեղ *այ*-ը սկզբնապես գոնվել է ճայնավորից առաջ. *վայլէ* vayle (հմմտ. Բառ.), դաս. *վայելէ. վայլեմ* vailem /հմմտ. Բառ./ դաս. *վայելեմ. հայլի* haili /հմմտ. Բառ./ դաս. *հայելի*: Հմմտ. վերևում §45 բ.:

Ծան. Կիլ. *այ* երկբարբառի վերջին հնչյունական արժեքը երևում է ֆեկուզ նոր հայերենի ավյալներից, որտեղ պահպանվել է ai երկբարբառը. հմմտ. Լեհ. hay հոգմ. hayer. hainak «հայերեն» = Մշ. Թֆ. hay «հայ». Մշ. vay = Թֆ. vay. Լեհ. haili (հոգմ. hailəstan) = Մշ. Ախ. haili. Ախ. vail'el = Նխ. vail'el: Այլ դիրքերում երկբարբառը նոր հայերենում պարզվում է:

§66.3. Դաս. *այ*, ai = կիլ. *ե*, e բառասկզբում:

Կիլ. *եզուց*, ekuç, 13-15, 15-18 = դաս. *այգուց*. կիլ. *երոյց*, eruiç, Գիրք վաստ. էջ 209 = դաս. **այրոյց /այրեմ* բայից/, *յ-եզեն* y-ek'en, Ագրպ. Հ. Բ, էջ 416, 422 = դաս. **յ-այգեան /այգ* գոյականից/:

Ծան. 1. Արձանագրումների մեջ նույնպես այդ հնչյունական համապատասխանումը վկայված է արդեն վաղ ժամանակներում: Այսպես. հհ. *այգի* ձևի համար գոնում ենք մհ. *եգի* և *էգի*, 1033 թ. /Ծիր. էջ 127/, 1215 թ. /Ծիր. էջ 75/, 1266 թ. /Ծիր. 116/, 1345 թ. /Սիս. էջ 116/, 1348 թ. /Սիս. էջ 121/ արձանագրումներում: Հհ. *հայրենեայ* ձևի համար /*հայրենիք* գոյականի հոգս. սեռ./ կա մհ. *հէրէնեց* մի ձև 1206 թ. մի արձանագրության մեջ (Ծիր. էջ 116), հհ. *հայրենէտիրայ* (*հայրենէ-տիրայ*) հոգս. սեռականի համար - մհ. *հէրէնէ-տիրայ* ձևը (1215 թ. Ծիր. էջ 75). հհ. *եղբայր* գոյականի համար - մհ. *եղբէր* ձևը 1310 թ. մի արձանագրության մեջ. հհ. *յ-այս* բառի համար - մհ. *յ-ես* ձևը 1033 թ. արձանագրության մեջ /Ծիր. էջ 127/ և այլն:

Ծան. 2. Նոր արևմտահայերենում, ինչպես արդեն նշվել է, e-ն հանդիսանում է հհ. ai երկբարբառի կանոնավոր համապատասխանությունը: Հմմտ. օր. Том. Тифл. диал. էջ 46, Мсер. Муш. диал. էջ 80, 81[15]: Սակայն արևմտահայերենը նույնպես, որտեղ a-ն հհ. ai երկբարբառի կանոնավոր ներկայացուցիչն է, ծանոթ է այդ հնչյունական երևույթին: Ճիշտ է, այստեղ այդ երևույթն ավելի հազվադեպ է և անսովոր: Նույնը վերաբերում է կիլիկյան հայերենին, որն իրենից ներկայացնում է նոր արևմտահայերենի նախորդը և ավելի հին աստիճանը: Օրինակ. Լեհ. e = դաս. ai միայն *վերջին վանկից դուրս* /Han. WZKM 1, 285/. հմմտ. cenełu և can. erełu դաս. *այրել*. erig դաս. *այր*. eki դաս. *այգի*: Տաճկ. e = դաս. *այ*. er դաս. *այր*. erig դաս. *այր*. eki դաս. *այգի*. erel դաս. *այրել*, ըստ Այտ. Բ. 273:

*Ծան.*3. Միջին և նոր հայերեն վերևում հիշատակված հնչյունափոխությունից *տարբերվում* է հհ. ai և e հնչյունների ավելի հին ճայնափոխությունը հետևյալ դեպքերում. *ժեռ* Մովս. Խոր. Գիրք պիտ. = *ժայռ. ժէռաւոր* Մովս. Խոր. Աշխարհագր. = ժայռաւոր /նույն տեղը/. *սէր* = *սայր* /հմմտ. Բագր. Քեր. §1421/: Հարցական է, թե որ ձևն է նախնական:

---

[15] Այս դեպքում արևելահայերենում e-ն դուրս է գալիս i ճայնավորի հետ, երբ վերջինս վերջին վանկում չէ, այնպես. ինչպես դաս. *է* և *ի*: Հմմտ. Мсер. էջ 81, Том. Тифл. диал. էջ 46, §92: - Յուր հատուկ դիրքով աչքի ընկնող Ագուլիսի արևելահայ բարբառում հին ai երկբարբառին համապատասխանում է նույնիսկ ü. gül /*գիւլ*/= դաս. *գայլ* /Ա. Սարդ. 31, 48/ և ոչ թե gül, ինչպես անճշդրիտ ձևով դնում է Պատկանյանը /735-2/, իսկ նրան հետևելով՝ Հանուշը: Այտընյանի կողմից բերված gil «գայլ», igi «այգեստան», ic «այծ» ձևերն առաջացել են հհ. *գայլ*, *այգի*, *այծ* ձևերից՝ gel, egi, ec կանոնավոր արևելահայերեն ձևերի միջնորդությամբ:

§67 Դաս *այ*, aı = կիլ *ո*, o հետևյալ դեպքերում *պոման* = դաս *պայման*, *պոմանել* = դաս *պայմանել*, *պոմնմըխմը* = դաս **պայմանամըխմը* Չմմտ Բառարանը Այստեղ կարելի է դասել, երևի, նաև հհ *վայլել* «արտահոսել» բայի մհ *վոլմել* համապատասխանությունը /*վաղել* ճևի կողքին/ Ըստ Բառգ = Լհ vot^{c}il /Այտ Ա, էջ 182/

Ծան Այս դեպքի հետ չի կարելի համադրել *այ* և *օ, աւ* հնչյունների լծորդությունը հետևյալ բառերում *ժռաստ* /*ժաւռաստ*/ žaurot և *ժայռաւոր* žairavor *ժայռ* գոյականից Չմմտ սեռ *հօր* /*հաւր*/ ուղղ *հայր*, *մօր* /*մաւր*/ ուղղ *մայր* և այլն Դրանից տարբերվում է նաև հետևյալ համապատասխանությունը դաս *թխրշամիմ* = մհ *թխշմիմ* /Թիրք վաստ/, դաս *թխռամիմ* = նհ *թխռմիմ* /նույն տեղը sic/

Դաս ոյ և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§68 1 Դաս *ոյ*, oy բառավերջում = կիլ *ոյ*, որ ունի *օ* հնչյունական արժեքն ըստ §9ա Այսպես՝ *Ո* հոլովման *-ոյ* -օ /դաս *-ոյ*/ վերջավորությամբ եզ սեռ-տր *անկնելոյ* 71-8, *գալոյ* 9-18 *հեծնելոյ* 77-21, *անանոյ* H. 223-25, *աստուծոյ* 3-3 6 *գլխոյ* 73-9, 83-15, *կիսոյ* 19-10, *մարդոյ* 9-8, 37-2 և այլն Ուրիշ օրինակներ տե՛ս «Քաբանություն» բաժնում

Ծան Համապատասխանաբար այս դեպքում նոր հայերենում հին -oy-ն ամենուրեք դարձել է -u Այդպես է վիճակը Տաճկ /Այտ Բ, 7, 273/, Լհհ /Han. WZKM 1, 295/, Ախ /Том §84/, Մշ /Мсер էջ 91/, Եր /Meillet, Notes arm էջ 5/, Թփ / Том §89/, Ագ /Սարգ էջ 47/ և այլ բարբառներում

§69 Դաս *ոյ*, oi բաղաձայնից առաջ = կիլ *ու*, u, որի կողքին պատահում է նաև *ոյ* հին գրությունը

Ծան Այս հնչյունափոխությունը պայմանավորված է նույն ընդհանուր օրենքով, որի համաձայն դաս *այ*-ը դարձել է կիլ a, և ընդհանրապես դաս երկբարբառները դարձել են կիլիկյան պարզ ձայնավոր Անալոգիան կարող էր այստեղ ամենաշատը երկրորդական նշանակություն ունենալ Օրինակներ *ուժ* 27-4 12 18 = դաս *ոյժ*, որից *վաստոյժ* կազմությունը 35-9 10, *անուշ* Չ 226-20 = դաս *անոյշ լուս* Լևոնի երգ = դաս *լոյս*[16] և այլն Ապա *յոյզ* huiz (huz) 13-30, 59-26 = դաս *յոյզ*, *քոյր* k^{c}uir (k^{c}ur) = դաս *քոյր* և այլն

[16] Չմմտ տարբերակներ ավելի հին գրականությունից *դոյզն դուն* «քիչ», *արծոյլ*, *արծուլ արծոլ* «կանչ», *անագորոյն*, *անագորում անագորոն* «դաժան», *դոյլճ*, *դուլճ դոլճ դոյլճ տալ* «գրոհ տալ» արտահայտության մեջ

§70. *Հավելված.* հին *ոյ երկբարբառից* ծագող կիլ. u-ն պահպանվում է ոչ վերջին վանկում: Հմմտ. վերևում §60:

Օրինակ. սեռ. *ուժոյ*, užo, ուղղ. *ուժ* 57-23, բայց մյուս կողմից հոգն. սեռ. *դստերաց*, ուղղ. *դուստր*. հոգն. ուղղ. *տնվի*. եզ. ուղղ. *տուն*. հմմտ. §60:

Ծան. Նոր հայերենում հհ. *ոյ*, oi երկբարբառը [ե] բառասկզբում ու բառամիջում, [ե] բառավերջում ներկայացված է որպես u: Այսպես է վիճակը Լեհ. /Han. WZKM 1, 294 հաջ./, Տաճկ. /Այտ. Բ, 273/, Ախ. /Том. ԷՋ 39 հաջ./, Մշ. /Мсер. ԷՋ 90/, Թ-Ֆ. /Том. ԷՋ 45/ և այլ բարբառներում: Հին երկբարբառից ծագող այս u հնչյունը, ինչպես նաև նախնական u հնչյունը վերջին վանկում դառնում է ə նույն այն օրենքի համաձայն, որը նույն բարբառում հին i ձայնավորը վերջին վանկում դարձնում է ə /հմմտ. վերևում §49 Ծան./: Օր. Զթ. badrək /դաս. *պատրոյկ*/. zərəçᵏ /դաս. *զրոյցք*/. zək /դաս. *զոյգ*/. tᶜən /դաս. *[թ]ոյն*/. ləs /դաս. *լոյս*/: Այս ə ձայնավորը r բաղաձայնից առաջ դառնում է i հետևյալ դեպքերում. gir դաս. *կոյր*. kᶜir դաս. *քոյր*. murkᶜir, դաս. *մօրաքոյր* և այլն:

Դրանից բացի, հհ. oi երկբարբառին համապատասխանում է i հնչյունը Ղարաբաղի, Աշտարակի, Երևանի բարբառներում, օր. Եր. *լիս* /դաս. *լոյս*/, Եր. kᶜir /դաս. *քոյր*/: Հմմտ. Патк. Диал. ԷՋ 25. Meillet, Notes arm. ԷՋ 5: oi երկբարբառը ներկայացված է որպես ü Ագուլիսի բարբառում /Սարգ. ԷՋ 47/: Հմմտ. նաև Ագ. izil «փնտրել» = կիլ. *ուզել* = դաս. *յուզել*. *յոյզ* /Սարգ. ԷՋ 47/, Լեհ. huis ճևի մեջ /Han. WZKM 1, 301/ [թվում է, [ե] պահպանվել է հին երկբարբառը: Անկհայտ է սակայն, որ Լեհ. huis ժողովրդական լեզվի իսկական արտահայտությունը չէ, այլ բարձր ոճի մեջ [թափանցած մի դասականություն - դա հետևում է [ե]կուզ այն բանից, որ առհասարակ դաս. oi = Լեհ. u:

Դաս. աւ /o/ au և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§71. Դաս. *աւ* /o/, au = կիլ. *աւ*, o=*o* /§12բ և §13/:

ա) Բառասկզբում. կիլ. *օր, աւր* or 11-28, 13-16.25.32 = դաս. *աւր. օտար* 63-3.4. = դաս. *աւտար, օժտել* 65-2 = դաս. *աւժտել. օքնականություն* 3-2 = դաս. *աւքնականութիւն, օրէնք* Հ. 210-21 = դաս. *աւրէնք*: Ապա մինչև հայերեն գրվածքներից. *օրհնել* = դաս. *աւրհնել. օխտել*, = դաս. *աւգտել, օծնել* = դաս. *աւծանել* և այլն:

բ) Բառամիջում. *խօսք* 57-14, դաս. *խաւսք, խօսիլ* դաս. *խաւսել* 51-13. եզ. սեռ. *հօր* 37-22 և այլն, դաս. *հաւր*, ուղղ. *հայր*. եզ. սեռ. *մօր* 37-24 դաս. *մաւր* ուղղ. *մայր*. եզ. սեռ. *եղբօր* Հ. 220-42, *աղբօր* Սարվ. արտ. դաս. *եղբաւր*,

ուղղ. *եղբայր*, հետո *-օք, -աւք*, -ok^{c} դաս. *-աւք* վերջավորությամբ գործիական ձևերում: *Ապրնօք* 21-7 դաս. *ապրանաւք*, *հասոյթօք* 21-7 դաս. *հասոյթիւք*, *չբօք* 55-8 դաս. *չափաւք* և այլն:

Ծան. Նոր հայերենում նույնպես, ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան բարբառներում, հհ. au-ն դառնում է o: Այսպես Լեհ. /Han. WZKM 1, 287/, Տաճկ. /Այտ. Քնն. քերակ./, Մշ. /Mcep. 87/, Ախ. /Том. 32 §73/, Թ-Ֆ. /Том. 43 §83/ և այլն: - Ուշադրավ է, որ *-ողղ, աւղ* վերջավորությամբ դասական դերբայի կանոնավոր համապատասխանությունն ունի -oγ վերջավորությունը: Դա վերաբերում է նաև այն բարբառներին, որտեղ հհ. *ո*, o-ն տարբերակվելով դառնում է *օ* ^{u}o, (^{u}e): Եթե *-ողղ*-ն իսկապես այդ դերբայի նախնական ձևն է եղել, ապա հիշատակված բարբառներում հին *-ողղ*-ը պիտի դառնար – ^{u}oγ(-^{u}eγ, uγ): Սակայն, քանի որ նոր հայերենում վերջավորությունը լինում է ոչ թե ^{u}oγ և այլն, այլ ամենուրեք -oγ[17], իսկ վերջին վանկում կարող էր ծագել միայն հին au և ոչ թե *ո*, o ձայնավորից, ապա դրանից հետևում է, որ այդ դերբայի նախնական վերջավորությունը պիտի լիներ *oղ*[18] auł, հմմտ. Mcep. Мушск. диал. էջ 86, 87, 88: Դրան համապատասխան, մինչև հայերեն տեքստերում կանոնավոր ձևով գրվում է *oղ*:

Դաս. իւ iu /= եւ eu/ և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§72.1. *Դաս իւ, iu /եւ, eu/ = կիլ. oյ, ui /ավելի նոր ու, u/ վերջին վանկում բաղաձայնից առաջ.* կիլ. *այրոյն* airuin 61-18.19 = դաս. *արիւն /արեան/*. Մխ. Հեր. *արոյն* էջ 73, 75, 76, 79, 116 - ավելի նոր *արուն* arun ձևի կողքին /էջ 59 և այլն/. Հոգև. ուղղ. *արոյնն* aruinni, Անս. Անտ. 93-5. կիլ. *փողնքոյն* p^{c}ŕənk^{c}duin «փոշտոպ» 47-33.36 = դաս. *փողնքիւն* /հմմտ. Բառարանը/. կիլ. *հարոյր* haruir L. 178-14.15 = դաս. *հարիւր*. կիլ. *ալոյր* aluir, Մխ. Հեր. էջ 75 = դաս. *ալիւր /աւեւր/*: Նույն տեղում. ավելի նոր *ալուր* alur ձևը /էջ 14, 51, 69, 71/: Կիլ. *առոյժ* aŕuij Սմբ. Ժամ. ՋգԱ. = դաս. *առիւծ*. կիլ. *երբոյն* erk^{c}uin[19] "impetigo, scabies saniosa" Գիրք վասա. 209, 223 = դաս. *որբիւն*: Ապա մինչև հայերեն հետևյալ ձևերը. *դոյր* tuir Մաութ. Ուռհ. Հ. *վարբ* = դաս. *դիւր. ներդոյն* nerkuin /մինչև հայերեն բժշկական գրվածք-

---

[17] Այդպես է վիճակը Մշո /Mcep. 87, 88/, Ախալցխայի /Том. 66 §128/. Տաճկ. /Այտ. 54 հաջ./. Թ-Ֆ. /Том. 36 §65/ և այլ բարբառներում:

[18] Սակայն, ինչպես նկատում է Հ. Հյուբշմանը, հնագույն ձեռագրերում հաճախ վկայված է նաև *-ողղ* վերջավորությունը /գրաբառություն, էջ 57/:

[19] Հմմտ. վերևում՝ §56:

ներում /= դաս. *ներգին. կորդոյն* gortuin «ծոլծոր»/ բույսի անուն Վարդանի մոտ /= դաս. *կորդին. արտոյտ* = դաս. *արտիւտ*/ Գր. Մագ.[20]:

Ընդհանրապես կարելի է այս հնչյունափոխությունն հետքերով գնալ մինչև վաղ դասական շրջանը: Այսպես, եթե հաշվի չառնենք կրկնակները, ինչպես՝ դաս. *ծոյն* և *ծին*, դաս. *անծոյն* և *անծին*, դաս. *նուս* «մեջք» և *նիւս* /ուս բառին կեղակից/: Արդեն Փավստոս Բուզանդի մոտ ունենք *-ույր* = դաս. *իւր* հնչյունական համապատասխանությունը հետևյալ դեպքերում.

ա) *տեսանույր* կրավ. անկատ. եզ. 3-րդ դ. էջ 69-23 = դաս. *տեսանիւր* /սովորական *տեսանէր* ձևի փոխարեն/.

բ) *երկերույր* /էջ 105/ = դաս. *երկերիւր*: Հմմտ. Pet. Gramm. էջ 88, 213. Բագրատ. §431:

Ծան. Նոր հայերենում, որ իրենից ներկայացնում է մինչին հայերենի բնական շարունակությունը, գտնում ենք նույն հնչյունափոխությունը: Միայն թե կիլ. *ոյ*, ui -ն կանոնավոր ձևով ներկայացված է որպես նհ. u: Այսպես՝ Լեհ. (WZKM1, 295). hut «խոնավ» /դաս. *հիւթ*/. huselu /դաս. *հիւսել*/. arun /դաս. *արիւն*/. harur /դաս. *հարիւր*/. alur /դաս. *ալիւր*/: Տաճկ. ունի դրանից բացի[21] axpur /դաս. *աղբիւր*/. excur /դաս. *եղջիւր*/. sun /դաս. *սիւն*/. tur /դաս. *դիւր*/. mərčun /դաս. *մրջիւն*/. ayus /դաս. *աղիւս*/ և այլն: Նույն ձևով Նախիջևանի /Патк./, Ախալցխայի /Том. §85/, Թիֆլիսի /Том. 50, §106/[22] բարբառներում: - Ավելի հեռու է գնում Մշո բարբառը, որտեղ այդ երևույթը տարածվել է նաև հետևյալ դեպքերի վրա. ur /դաս. *իւր*/, սեռ. urin /դաս. *իւրեան*/, բացառ. urnę /դաս. *իւրենէ*/ /հմմտ. Мсер. Муш. 94/, երբ որ կիլիկյան հայերենն այդ դեպքում ունի i, որպես հին *իւ*-ի համապատասխանություն[23]: Հիշատակված նոր ձևերի մինչին հայերեն, բայց ոչ կիլիկյան նախատիպ են հանդիսանում արդեն Ախորյանի մոտ /քաղվածքներ տե՛ս Հ. Բ 422 հաջ./ հանդիպող ձևերը. *ույր*, uir = դաս. *իւր*. Հ. 230-35. *ույրեն* uir'en = դաս. *իւրեան* iurean Հ. 430-4. *յ-ույրմէ*. y-uirmę = դաս. *յ-իւրմէ* Հ. 426-19, 430-18:

---

[20] Այստեղ կարելի է դասել նաև կիլ. *ըզուղ* «ուղեղ» ԶգԲ 154 դաս. *ուիսի /ուղիւղ/. ապա կիլ. շուղ* «ավանդ» դաս. *շիւղ*. կիլ. *հարուն* /ճիու ոտքի զարկ/, ավելի հին **հարիւն* ձևից /հմմտ. *բախիւն*/, նաև նհ. *ճուղ* դաս. *ճիւղ*:

[21] Հմմտ. Նոր արևմտահայերենի բառարանը*, ինչպես նաև Այտ. Բ, 273:

[22] Թիֆլիսի բարբառում առկա են, օրինակ, հետևյալ ձևերը /Том. 50/. arun /դաս. *արիւն*/. alur /դաս. *ալիւր*/. harur /դաս. *հարիւր*/. husil /դաս. *հիւսել*/. jun /դաս. *ճիւն*/. sun /դաս. *սիւն*/. čuxk /դաս. *ճիւղ*/. hur /դաս. *հիւր*/. այսինքն՝ այս տեսակետից նրա վիճակը նույնական է արևմտահայ բարբառների հետ:

[23] Տե՛ս ստորև §74:

§73 2 Վերևի 1 համապատասխանությունյան կողքին առկա է մեկ ուրիշը, որի համաձայն դաս *իւ* /*եւ*/ iu (eu) ներկայացված է կիլ i կամ e հնչյունով.

ա) Դաս *իւ*. iu = կիլ *իւ*. ü բառավերջի վանկում՝ *-ֆիւն*, *-ֆիւն* -t^{c}ün, -ün վերջավորություններում Վերջիններս բուն կիլիկյան վերջավորություններ չեն, այլ փոխ են առնված հին հայերեն դրական լեզվից *ծառուֆիւն* jaŕut^{c}ün 9-14, 13-29 դաս *ծառայուֆիւն ծառուֆիւն* jŕut^{c}ün 67-7 դաս cŕut^{c}iun *ծառուֆիւն արծաթասիրուֆիւն*, Հ 225-39 դաս arcat^{c}asirut^{c}iun *արծաթասիրուֆիւն հիվընդուֆիւն* hivəndut^{c}ün Ջգբ 146 դաս hivandut^{c}iun *հիւանդուֆիւն ճիաւորուֆիւն* ciavorut^{c}ün 17-22, դաս -t^{c}iun /*-ֆիւն*/ և այլն

Ծան Համապատասխանաբար այս դեպքում նոր հայերենում հին /դաս/ *իւ*-ը ներկայացված է որպես i լեհահայ բարբառում, որտեղ կա jerut^{c}in, դաս *ծերուֆիւն* dirut^{c}in «դատարան», դաս *տիրուֆիւն* jarut^{c}in, դաս *ծառայուֆիւն* erganut^{c}in, դաս *երկայնուֆիւն*. imastut^{c}in, դաս *իմաստուֆիւն* և այլն, ըստ WZKM 1, 291 Նույն ճևով Նախիջևանի բարբառում čarut^{c}in Патк Мат. էջ 6, դաս *չարուֆիւն*. ayekut^{c}in էջ 30, դաս **աղէկուֆիւն* tramap^{c}anut^{c}in էջ 16, դաս *տրամաբանուֆիւն* paŕapanut^{c}in-ner /հոգն/ էջ 17, դաս *փառաբանուֆիւն*. meknut^{c}in էջ 18, դաս *մեկնուֆիւն* payut^{c}in, էջ 33, դաս *պաղուֆիւն*, oyormut^{c}in էջ 38, դաս *ողորմուֆիւն* գործ oyormut^{c}in-ov էջ 61 amp^{c}axut^{c}in էջ 34, դաս *անբախտուֆիւն* koyut^{c}in էջ 35, դաս *գողուֆիւն* և այլն - Ապա -ut^{c}in Թիֆլիսի /Том էջ 52/, Ագուլիսի Երևանի և այլ բարբառներում /Ս Սարգ 40/ - Ոչ i, այլ ^{l}e առկա է Մշո /Мсер. 94/, ինչպես նաև Ախալչխայի բարբառում /Том §69/, որտեղ, օրինակ, ունենք Ախ derut^{l}en սեռ derut^{c}an, Մշ uraxut$^{c\prime}$en, սեռ -t^{c}eni, Մշ candrut$^{c\prime}$en = դաս *ծանրուֆիւն* և այլն -t$^{c\prime}$en /*-ֆիւեն*/ վերջավորությամբ ուղղականի ճևը գույն կարող էր առաջանալ *-ֆիւն* վերջածանցով գոյականների *-ֆիւեն* -t$^{c\prime}$en վերջավորությամբ սեռականի ազդեցությամբ

§74 բ) Դաս *իւ*. iu = կիլ *ի*. i բառասկզբում *յ* բաղաճայնից առաջ՝ 3-րդ դ անճնական դերանվան ճևերում

Կիլ *իր*. ir = դաս. *իւր*. կիլ *յ-իրմէ*. y-irme = դաս *յ-իւրմէ* կիլ *իրենք* ir^{l}enk^{c} = դաս *իւրեանք* կիլ *իրենց* ir^{l}enc = դաս *իւրեանց* Վկայություններ տե՛ս Զևաբանության մեջ *Իրար*. irar փոխադարձ դերանունը նույնպես. գույն նաև դաս *իրեար*, մեծ հավանականությամբ ծագում են նախնական **իւր-եար* *iur-ear ճևից

Ծան Նույն հնչյունական երևույթը նույն դիրքում առկա է նոր հայերենում՝ Լեհ /Han. WZKM I, 291/, Տաճկ /Այտ Բ, 40/, Նիս /Патк Нах

диал./. Ախ., Թֆ. /Том. §110. §358/ և այլն: Դրանից շեղվում է, սակայն, Մշո բարբառը /§72 Ծան./:

§75. գ) Դաս. *իւ*, iu /*ևւ*/ = կիլ. *ի* i կամ *ե*, e, կամ էլ *ե* e-ի հետ զուգորդվող i՝ *ղ* /դաս. *l*/ բաղաձայնից առաջ: Օր. *երկիղ* ergiy՝ *երկեղ* ճևի կողքին /Հ. 220-33, 225-44, Մխ. Հեր. 5, 35/ = դաս. *երկիւղ*. *զեղ* k'eγ, Սմբ. Ժամ. 670 = դաս. *զիւղ* /*զեւղ*/ և այլն:

Ծան. Ինչպես հայտնի է, արդեն դասական գրականության մեջ առկա են որոշ դեպքեր այդ հնչյունական երևույթի, որ հանում է մինչև նոր հայերենը. այսպես Լեհ. yeγ «ճրագու» դաս. *իւղ*. leγ «լողՙ դաս. *լիւղ*. keγ դաս. *զիւղ*[24]: Մշ. yeγ դաս. *իւղ*. g'eγ դաս. *զիւղ*[25]: Համապատասխանաբար Թիֆլիսի բարբառում yiγ «յուղ», giγ «գյուղ»[26]. Ախ[27]. yeγ «յուղ» և այլն:

Ժամանակակից լեզվի մեջ նույնպես դաս. *իւ*, iu-ի երկու համապատասխանություններն էլ ներկայացված են զուգահեռ ձևով: Միայն պետք է նկատի ունենալ հետևյալը. եթե արևմտյան բարբառները դաս. *իւ* հնչյունի համապատասխանությունների տեսակետից մոտ են կիլիկյան հայերենին, և դաս. *իւ*, iu = նհ. (մհ.) u և դաս. *իւ* iu = նհ. (մհ.) i գրեթե նույն չափով են տարածված իրար կողք, ապա արևելյան բարբառներում երկու հնչյունների սահմանազատումն ավելի անորոշ է, երբ գրեթե բացառիկ գերակշռություն է հանում դաս. *իւ*-ի հնչյունական արժեքներից մերթ մեկը, մերթ մյուսը: Այդպես է վիճակը Մշո բարբառում, որտեղ հին *իւ*-ին գրեթե միշտ համապատասխանում է u և միայն շատ հազվադեպ i: Ղարաբաղի բարբառում, սակայն, ü-ն հին iu-ի կանոնավոր ու գրեթե միակ համապատասխանությունն է: (Мсер. 94). Երևանի բարբառում դրա փոխարեն ունենք i. օր. Եր. jin = դաս. *ճիւն*. alir = դաս. *այիւր*. harir = դաս. *հարիւր*. arin = դաս. *արիւն* և այլն. /փխ. արևմտ. cun, alur, harur, arun/. հմմտ. Պալաս. էջ 11, Ս. Սարգ. էջ 40, 41 և այլն:

Դաս. եւ, ev ու նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§76.1. Դաս. *եւ*, ev = կիլ. *ու*, u հետևյալ դեպքերում.

Կիլ. *ու*, u /որ, Բառարանի համաձայն, նաև ընդհանուր է նոր հայերենի համար/ = դաս. *եւ*- կիլ. *ինչու* inçu «մինչև» 41-12 = դաս. *մինչեւ*.

---

[24] WZKM I, 285:

[25] Мсер. էջ 94:

[26] Том. էջ 52:

[27] Том. Ах. диал.:

կիլ. *ինչվի /ինչուի* ձևի կողքին - Բառ. = դաս. *մինչեւ ի*[28]/, կիլ. *յեղմ.* դաս. *մեղմ.* /հմմտ. ստորև §143/:

Ծան. Արդեն հնագույն դասական գրականուլթյան մեջ նույն գուգորդուլթյունը կարելի է գտնել հետևյալ դեպքերում. հհ. *իբրու* = հհ. *իբրեւ*, հհ. *ուլծուտասն* = հհ. *ուլծեւտասն*, հհ. *այրուձի* = հհ. *այրեւձի*:

§77.2. Դասական *եւ*, ev (eu) երկբարբառին կիլիկյան հայերենում առանձին դեպքերում համապատասխանում է io, *իու*:

Կիլ. *իուլմն* iot^{c}n 93-7, 15-2 = հետդաս. *եօլմն*, *եուլմն* eot^{c}n = դաս. *եւլմն*, մեկ ուրիշ ընթերցվածքի համաձայն = eut^{c}n: Համենայն դեպս, eut^{c}n = septm ձևը բոլորից հին է:

Դաս. եա ea, եայ eay, եաւ eav ու նրանց համապատասխանուլթյունները կիլիկյան հայերենում

§78. Ի. դաս. *եա* ea, *եայ* eay, *եաւ* eav իրար հետ սերտ ազգակցական կապի մեջ գտնվելով ընդհանուր *եա* ea տարրի պատճառով, այն ընդհանրուլթյունն էլ ունեն, որ կարող են դրված լինել միայն վերջին վանկում կամ միավանկ բառերում: Եթե բառի երկարացման պատճառով նրանք տեղափոխվում են ոչ վերջին վանկ, *եա*-ն դառնում է *ե*, e /համապատասխանաբար, *եայ* eay > *ե*, e + *յ* y = *ե*, e, *եաւ* > *ե*, e + *ւ* v = *եւ*, ev/: Օրինակ, դաս. *լեարդ* սեռ. *լերդի*. *լեառն* սեռ. *լերին*. *քրիստոնեայ* սեռ. *քրիստոնէի*. հոգն. սեռ. *-նէից*. *սեաւ* սեռ. *սեւի* և այլն:

§79. Կիլիկյան հայերենում *եա*. ea > *ե* ^{i}e վերջին վանկում նույնպես, այսինքն այն տեղում, որտեղ այն պահպանվել է դասական լեզվի մեջ: Այդպիսով առաջ եկած ^{i}e հնչյունը /հմմտ. վերևում §6/ սակայն վերջին վանկից դուրս դառնում է պարզ e:

1. Դաս. *եա*. ea = կիլ. *ե* ^{i}e միավանկ բառերում և բառի վերջին վանկի մեջտեղում:

ա) *-եայ*, -^{i}eç = դաս. *-եայ* վերջածանցով անցյալ կատարյալի 3-րդ դ. ձևերում. *այրեայ* air^{i}eç 93-28, դաս. *այրեայ*. *ծախեայ* jax^{i}eç 65-1. դաս. *ծախեայ*. *յուղարկեայ* huyarg^{i}eç 75-13. դաս. *յուղարկեայ*. *բռնեայ*. pṙn^{i}eç Սմբ. Ժամ. 619. դաս. *բռնեայ*. *գնեայ* kn^{i}eç Սմբ. Ժամ. 655. դաս. *գնեայ*. *լուծեայ*

---

[28] Ըստ երևույթին, նաև կիլ. /հհ./ *այլուի/այլու+ի/* = դաս. *այլեւ ի*. դաս. *այլեւ* իսկապես գոյուլթյուն ունի:

luj'eç, նույն տեղում 646, դաս. *լուծեայ. խլեց* xl'eç նույն տեղում 612, դաս. *խլեայ*: Այլ վկայություններ տե՛ս Զևաբանութեյան մեջ:

բ) *-ի* հոգն. *-իք* վերջավորություններով գոյականների սեռական-տրական /հմմտ. Զևաբ./: Այսպես, սեռականներ. *հայրենեց* haire n'eç 18-21, 23-11.26.30 և այլն, դաս. *հայրենեայ. քաղեց* payn'eç 45-11, դաս. *քաղաեայ. հարկեց* harg'eç 9-12, դաս. *հարկեայ. որդեց* ort'eç 31-21, 49-34, դաս. *որդեայ. ուսելեց* udel'eç ԶգՔ 159, դաս. *ուսելեայ. աղեց* ay'eç Մխ. Հեր. 96, դաս. *աղեայ. կարեց* gar'eç Մխ. Հեր. 71, դաս. *կարեայ. արծուեց* arjv'eç - Գիրք վաստ. 110, դաս. *արծուեայ* և այլն:

գ) *-ել* -'el = դաս. *-եալ* -eal վերջավորությամբ անցյալ դերբայի ձևերում. օրինակ. *գնել* kn'el 47-20, դաս. *գնեալ. գրաւկնել* kravgn'el 71-20 դաս. *գրաւկանեալ. գրել* kr'el 47-31, դաս. *գրեալ. զատել* zad'el 63-20, դաս. *զատեալ. ընծայել* ənjay'el 55-5. դաս. *ընծայեալ. ժողվել* žoγv'el 15-15, դաս. *ժողվեալ. ասկել* asç'el 15-15, դաս. *ասացեալ. գնացել* knaç'el 77-11, դաս. *գնացեալ. մնացել* mnaç'el 83-19, դաս. *մնացեալ. բերել* per'el 45-13, դաս. *բերեալ. հանել* han'el Հ. 221-11, դաս. *հանեալ. այրել* air'el, 57-17, դաս. *արարեալ. ելել*, el'el 13-21, դաս. *ելեալ* և այլն: Այլ վկայություններ տե՛ս Զևաբանութեյան մեջ:

դ) *-եր* -'er = դաս. *-եար* վերջավորությամբ հոգնակի ուղղականում /հմմտ. Զևաբ./ *ազգեր* azk'er Հ. 210-24 դաս. *-եար. բաժեր* paž'er L. 154-23, դաս. *-եար. ապա բաներ* pan'er Հ. 225-34. *ծայրեր* jair'er 59-14. *որբեր* orp'er 51-11, *յաւեր* çav'er Հ. 214-15. *օրեր* or'er 23-26, 25-7, 27-10 և այլն:

Ընդհակառակն, պարզ հնչյունով. *գեղերոյ* keyero 34-8 հոգն. ուղղ. *գեղեր* key'er Հ. 224-17. *օրերոյ* orero հոգն. սեռ. 25-7. հոգն. ուղղ. *օրեր* or'er. *Ճորտերոյ* jordero հոգն. սեռ. 9-24. հոգն. ուղղ. *Ճորտեր* jord'er 9-21 և այլն:

ե) *-իմն. -ւիմն* վերջավորություններով վերացական գոյականների /տե՛ս Զևաբ./ *-են* -'en= դաս. *-եան* վերջավորությամբ սեռական-տրական-նուն: Կիլ. յ-*ամսենն* y-ams'enn Սարվ. արտ. Հ. 258 = դաս. յ-*ամսեանն. արեն* ar'en /ուղղ. *արոյն*/ Մխ. Հեր. = դաս. *արեան*, ուղղ. *արիւն*:

զ) դերանվանական ձևերում *իրենք* ir'enk^{c} 41-8, 49-27, 51-16. *զիրենք* zir'enk^{c} 17-16, 39-1 L 178-12 = դաս. *իւրեանք. զ-. իրենց* ir'enç 3-19, 17-9.15.16 = դաս. *իւրեանց*:

է) առանձին գոյականներում, ածականներում և այլն. օր. *վզեն* vz'en «տուգանք» 73-18, 81-23 = դաս. *վզեան. յաւիտեն* havid'en, Սարվ. արտ. = դաս. *յաւիտեան. կորեն* çor'en L. 155-18 = դաս. *կորեան. կլայեկ* glay'eg L. 157-25 = դաս. *կլայեակ. լերդ* l'ert, Գիրք վաստ. 176, Մխ. Հեր. 3, 7, 94, 145 = դաս. *լեարդ. լեռն* l'eṙn, Հ. 208-12.14 = դաս. *լեառն. հեծել* hej'el Սմբ. Ժամ.

Dul. 649, 656, 668 = դաս. *հեծեալ. բարձուենեկ* /բուսաբանական/ Մխ. Հեր. 133, 156 = դաս. *բարձուենեակ*: Ապա նաև միջին հայերեն հետևյալ ձևերը /բառարանի համաձայն/. *զեն* zen «վնաս» = դաս. *զեան. բորեն* por'en «բորենի» = դաս. *բորեան. դղեկ* ty'eg = դաս. *դղեակ. դայեկ* tay'eg «դայակ» = դաս. *դայեակ. շեմ* š'em «շեմք» = դաս. *սեամ/ք/. ասորեկ* asor'eg sor'eg բուսաբ. «մազմզուկ» = դաս. ասորեակ. *սարեկ* sar'eg (sarig) = դաս. *սարեակ. կորեկ*, gor'eg = դաս. *կորեակ. վառեկ* var'eg = դաս. *վառեակ* և այլն[29]:

ՀՀ. *եա* ea > մհ. *է* 'e հնչյունափոխությունը հատկապես պարզորոշ կերպով երևում է բազմաթիվ. մասամբ մինչև ԺԱ. դարը հասնող, հատկապես Շիրակ գավառի և Անի քաղաքի. արձանագրություններից: Այսպես՝ ԺԱ. դարի մի արձանագրության մեջ /Շիր. 40/ ունենք *ծագեց* /= դաս. *ծագեաց*/. *գհեծել* /= դաս. *գհեծեալ*/: -1348 թ. մի արձանագրության մեջ /Շիր. 63/. *շորթել ին* /= դաս. *շորթեալ են*/. *գնել էի* /= դաս. *գնեալ էի*/: 1057-1063 թթ. արձանագրության մեջ /Շիր. 72/. *իւրեն* /= դաս. *իւրեան*/: 1215 թ. արձանագրության մեջ /Շիր. 75/. *տիրեց* /= դաս. *տիրեաց*/. *Սմբատաւրենց* /= դաս. *-եանց*/. *Յոհենց* /= դաս. *-եանց*/: Շիր. 76. *արեն* /= դաս. *արեան*/. *գնել էի* /= դաս. *գնեալ էի*/. *շինել էի* /= դաս. *-եալ էի*/. *Գաւառտունեց*, հոգն. սեռ. /= դաս. *-եաց*/. *Մշակունեց*, հոգն. սեռ. /= դաս.*-եաց*/. *քաղնեց*, հոգն. սեռ. /= դաս. *քաղանեաց*/. *գնել էի, շինել էի*, ապա Շիր. 77. *Պապենց* /= դաս. *-եանց*/. *տներ* /= դաս. *-եար*/. *հողեր* /= դաս. *-եար*/. *էի տվել* /= դաս. *էի տուեալ*/. *եմ գրել* /= դաս. *-եալ*/: Նույն արձանագրության մեջ. էջ 78. *յ-արդենցս* «իմ եկամուտներից» /= դաս. *յ-արդեանցս*/. *հաստատել է, նզովել է*: 1310 թ. արձանագրությունը. *էր քերել, խաղտել էր. իրենց* /= դաս. *իւրեանց*/: - 1291 թ. արձանագրությունը /Շիր. 86/. *Միաբանութենց* /= դաս. *-եանց*/. *ի հալալ արդենց* «օրինական եկամուտներից» /= դաս. *արդեանց*/: - 1342 թ. արձանագրությունը /Շիր. 86/. *նախնենց* /= դաս. *նախնեաց*/. Նույն տեղում. *եկել* /= դաս. *-եալ*/: - 1262 թ. արձանագրությունը /Շիր. 116/. *հէրէնենցն* /= դաս. *հայրենեաց*/. Նույն տեղում. *գնել էր. տվել էր*: - 1289 թ. արձանագրությունը /Շիր. 123/. *Պառաւենց* /= դաս. *-եանց*/. *շինել եմ. ի տանի Աւետեց* /= դաս. *Աւետեաց*/: -1284 թ. արձանագրությունը /Շիր. 140/. *Աւետեց* /= դաս. *-եաց*/. *արեն* /= դաս. *արեան*/. *էգեց* /= դաս. *այգեաց*/ և այլն:

---

[29] Դրա փոխարեն, *ե*-ով ձևն, ըստ երևույթին, նախնական է, իսկ *եա*-ով ձևը հետագա զարգացման արդյունք է ավելի հին ժամանակներից եկող հետևյալ օրինակներում. *վսեմ* և *վսեամ. երեկ* և *երեակ. պատճէն* և *պատճեան. տենդ* և *տեանդ* և այլն:

§80.2. *Դաս. եայ /= եա* ea + յ, y/= կիլ. է. e/=ե. e +յ y/ վերջին վանկում:

Օրինակներ. *քրիստոնէ*. հոգն. *քրիստոնէք* -ը̈k, 25-4, Հելխ. Կոռ. Dul. էջ 478, 485, 486, 488 = դաս. *քրիստոնեայ*, ուղղ. հոգն. *-եայք*, սեռ. *-էից*: Նույն ձևով *աժէք*, սեռ. *-էից*, Հ. 220-43 = **արժեայ-ք. սամսրչէք /սամսրչեք/*, samsrčekᶜ L. 155-2.6.21.22.23, L. 156-6 = դաս. *-չեայք*, ինչպես նաև ուշ դասական *առհասաւոչէ* = դաս. *առհասաւոչեայ*[30]:

Հիշատակենք նաև միջին հայերեն հետևյալ բառերը. /հմմտ. Բառ./ *միջօրէ* = դաս. *միջաւրեայ*. *աշտէ* «նիզակ» = դաս. *աշտեայ*. *մաշկէ* = դաս. *մաշկեայ*. *զարէ* «զարուց պատրաստված» /Բառարանի համաձայն/= դաս. *զարեայ*. *այծէք* «այծի մորթուց զգեստներ» = դաս. *այծեայ-ք* եզ. *այծեայ*, *շիկերէ* «վայրի արու ոչխար» = դաս. *շիկերեայ*: Սակայն արդեն վաղ դասական շրջանում երևում է. *քուէ* kʿvը̈ /Փավստ. Բուզ. էջ 252/ = դաս. *քուեայ*, սեռ., *քուէի*, դաս. *զոնէ* /Աստվածաշնչի թարգմանությունից/ ավելի հին *զոնեայ*, *զոնեա* ձևերի փոխարեն:

§81.3. Բառավերջի դասական *եա* ea-ն, որ *և* հիմքերի բուն հրամայականի* 2-րդ դեմքի ձևերում փոխարինում է *եայ* eay հնչյունախմբին, փոփոխությունն է ենթարկվում վերջինիս նման. բառավերջի դաս. *եա* ea = կիլ. է, ը̈:

Օրինակ, բուն հրամայական /եզ. 2-րդ դ./ *վճարէ՛* 41-5, դաս. *վճարեա՛*, *թափէ՛* 75-10. դաս. *թափեա՛*. *լուծէ՛* ԶգԲ 157, դաս. *լուծեա՛*. *խառնէ՛* ԶգԲ 147 դաս. *խառնեա՛*. *մաղէ՛* ԶգԲ դաս. *մաղեա՛*. *շինէ՛* ԶգԲ 157. դաս. *շինեա՛*. *պահէ՛* ԶգԲ 148. դաս. *պահեա՛*. *բանէ՛* Գիրք վաստ. 34. դաս. *բանեա՛*. *լսէ՛* Գիրք վաստ. 195. դաս. *լսեա՛*. *նայէ՛* Գիրք վաստ. 99. դաս. *նայեա՛* և այլն: Ջևաբ.:

§82.4. Դաս. *եաւ* eav /*եա* ea + ւ v/ = կիլ. *եւ* ʲev /*ե*, ʲe + ւ v/ վերջին վանկում: Կիլ. *սեւ* sʲev ԶգԲ էջ 149, 152 և այլն = դաս. *սեաւ*. *առջեւ*[31] 41-5.23, 43-1 և այլն = դաս. *առաջեաւ* /*առաջի*-ի գործիական հոլով/. *յետեւ* 41-22, 69-22 և այլն = դաս. **յետեաւ* /բուն իմաստով; *յետի*-ի գործ. հոլով/. *ներքեւ* 77-7 = դաս. **ներքեաւ* /բուն իմաստով, *ներքի*-ի գործիական հոլով/: Մլ. Հերացին ունի նաև *ներքսեւ*: Միջին հայերեն գրվածքներում գոնում

[30] Նույն ձևով Նախիջևանի բարբառում /Պատկ. Мат. էջ 135/. *վարպետչէք* «վարպետի, ուսուցչի վարձ», *կրելչէք*, *տանելչէք* և այլն՝ *-չեք* -ը̈čkʿ = դաս. *չեայ+ք* վերջածանցով:

[31] Արդեն հին հայերենում առկա են *զառաջեւ*, *յետեւ* ձևերը:

ենք նաև հետևյալ ձևերը. *վերեւ* = դաս. **վերեաւ*. *դրուցեւ* «դուրս, բացի» = դաս. *դրուցեաւ* /հնմտ., Այտ. Բ, էջ 127 հաջ./. *վերջեւ* «ետ, ետևում» = դաս. **վերջեաւ*. *ստորեւ* = դաս. **ստորեաւ*: Արձանագրումբյուններում վկայված է, օրինակ. *առջեւ* 1215 թ. մի արձանագրումբյան մեջ /Շիր. 76/. *վերեւ* 1271 թ. մի արձանագրումբյան մեջ /Շիր. 170/, *ներքեւ* նույն արձանագրումբյան մեջ:

Ծան. Այս բոլոր դեպքերում կարծես թե կարելի է ենթադրել անալոգիայով կազմումբյունը, բայց, ինչպես հետևում է 3-րդ դեպքից, դա բացառվում է: Ավելի շուտ մենք այստեղ գործ ունենք *իսկական, մեխանիկական* հնչյունափոխումբյան հետ, որ առաջ է եկել հին հայերենի երկբարբառների հարմեցման ու պարզեցման օրենքի ներգործումբյամբ: Ամենաշատը կարելի է 2-րդ և 4-րդ դեպքերի համար ենթադրել անալոգիայի օժանդակ ազդեցումբյունը:

§83. *Հավելված.* հհ. *եա* ea, *եայ* eay երկբարբառների նման, նրանց ազգակից[32] *իա* ia, *իայ* iay նույնպես պարզեցումով դառնում է e, մասնավորապես կանոնավոր ձևով է ē:

Օրինակներ. կիլ. *զէտ, զէդ* zēt (zet) «ինչպես» 33-1.16, 35-5 ուշ դաս. *զերդ*, zerd, *զերծ* zert^{c} /Գր. Մագ., Ն. Շնորհ./= դաս. *զիարդ*. կիլ. *մէկ* mēg (meg) 21-4, 23-7, 31-16, 35-17, 39-9= դաս. *միակ*. կիլ. *մենակ* menag, ավելի նոր ձև *մինակ* minag «իսկույն» 13-1, 17-20, 31-19, 11-5, 13-28, 23-16, 35-3, 61-12<* *մէնակ* *mēnag (mēn+ag)= դաս. *միայնակ*: Ապա արդեն հին հայերենում առկա *մէն* /նախորդի պարզ ձևը/= դաս. *միայն*, ինչպես նաև հին հայերենիչ ծագող *մէր* dēr /հհ. *մէր*/ նախնական **մէ+այր* ձևից, որ դարձել է **միայր*, իսկ վերջինիցս առաջացել է *մէր*[33]:

Ծան. Նոր հայերենում ¹e-ն հիմնականում շարունակում է ներկայացնել հհ. *եա* երկբարբառը: Այդպես է վիճակը Տաճկ. /Այտ Բ, 273/, Ախ. /Том. §68/, Մշ. /Мсер. 97/, Լհհ. /Han. WZK M 1, 284/ և այլ բարբառներում, ընդ որում, կիլիկյան հայերենի նմանումբյամբ, ¹e-ն վերջին վանկիչ դուրս դառնում է e: Այսպես Լհհ. zen. «վնաս», հոդն. zenér. hejél «զորք», բայց

---

[32] *Իա*-ն զուգորդվում է *եա*-ի հետ հետևյալ բառերում. *նիարդ* և *նեարդ* /ըստ բառարանի/. *խոռեամ, խոռեան* / Խորով Բ-ի գլխավոր հրամանատարը/ և *խոռիան* /ըստ Arm. Gramm. I, էջ 42-43/:

[33] Դրա փոխարեն, Ադրլիսի բարբառում /Ա. Սարգ. էջ 101/ նախահայերեն *tēair ձևից ճայնավորի անկումով, առաջացել է tair /հոդն. tair-ar, սեռ. tair-er-i/:

hejeluťᵒın «պատերազմ» և այլն[34] Խոսպիզմով բնութագրվող հյուսիս-արևմտյան բարբառներում /Լեհահատան, Հունգարիա-Տրանսիլվանիա, Ղրիմ, Նոր Նախիջևան/, սակայն, ընդհանուր նոր հայերեն ˈe-ն դառնում է i՝ -il վերջավորությամբ անցյալ դերբայի ձևի մեջ /դաս *-եալ*, կիլ *-ել*, -ˈel/, մի հնչյունափոխություն, որ կատարվել է այս դերբային միշտ հաջորդող im, is, inkᵒ և այլն էական բայի ազդեցությամբ[35]

Դրանից էլ ուժեղ խոսպիզմով բնութագրվող հյուսիս-արևելյան հայերենում, Թիֆլիսի լեզվի մեջ, ea երկբարբառից ծագող ընդհանուր նոր հայերեն e-ն *կանոնավոր ձևով ամենուրեք դարձել է* i: Օրինակ, ԹՖ /Том էջ 49/ lirtᵒ, սեռ lirtᵒı դաս *լեարդ* kinkᵒ, սեռ kinkᵒi դաս *կեանք* korik, սեռ korkı դաս *կորեակ* և այլն - § 83 հավելվածը հհ ia երկբարբառի մասին վերաբերում է նաև նոր հայերենին

§ 84 II Դաս *եա* ea=կիլ *ա*, a բառավերջի վանկում հետևյալ դեպքերում *իրար* ırar (z-ırar) փոխադարձ դերանունը /3-5, 17-4, 19-4, 27-20, 33-21 և այլն/=դաս *իրեար*/հմմտ Զեաբ/ Ապա, դաս *եայ*, *եա*-ն համապատասխանում է կիլ *ա* a ձայնավորին անցյալ կատարյալի ձևերում *կորան* /դաս *կորեան*՝ Սմբ Ժամ էջ 671, *հանգաւ* Սմբ Ժամ էջ 645 /դաս *հանգեաւ*/, փախաւ Սմբ Ժամ էջ 624, փախան Սմբ Ժամ էջ 667 և այլն Վերջինս, սակայն, ես համարում եմ ոչ թե իսկական հնչյունափոխություն, այլ զուտ քերականական կազմության տարբերություն[36]

Ծան Նոր հայերենում, դրանից բացի, ունենք, օրինակ Լեհ xristona «կաթոլիկ»=դաս *քրիստոնեայ* Ապա *-իան*, *-ութիւն* վերջավորություններով գոյականների մեջ հին *եա երկբարբառին* համապատասխանում է a հնչյունը հետևյալ բարբառներում Տաճկ /Այտ Բ, 769/, Ախ /Том § 69/, Մշ /Мсер § 118/ Վերջին բարբառում sun/ դաս *սիւն*/ կազմում է սեռ - տր san. jun /դաս *ձիւն*/-սեռ - տր jan Նույն ձևով *Ախ* սեռ - տր derutᵒan /ուղղ derutᵒlen/ և այլն - Լեհահայ բարբառում, սակայն, դաս *եա* երկբարբառին համապատասխանում է ʲa /այսինքն, նախորդ բաղաձայնին հաստող a/ Օրինակ, gˈankᵒ=դաս *կեանք*, havıdʲan=դաս *յաւիտեան* Հնարավոր է, որ այստեղ a ձայնավորը պահպանվել է հին գրական հայերենի ազդեցությամբ

---

[34] Ընդհանուր նոր հայերեն, ինչպես նաև արդեն միջին հայերեն այդ հնչյունափոխության մասին շատ ճիշտ է նկատել Հանուշը /WZKM 1, 284/ «Ինչպես երևում է, այստեղ je (ˈe) զուգորդումը համապատասխանում է դասական լեզվի ea e զուգորդմանը»

[35] Օր perıl-ım «բերել եմ», kıdaçıl-ım «իմացել եմ», լստ Han WZKM 1, 291

[36] Օր Мсер Муш մաս հմմտ Том Тифл մաս 50

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Ա. ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՅԹԱԾՓԱԿԱՆՆԵՐ

I. Նրբեր (խուլեր) ու միջակներ (ձայնեղներ) Բաղաձայնների երկրորդ հայկական տեղաշարժը կիլիկյան հայերենում

§ 85 *Հնչյունական օրենք դասական լեզվի p, t, k, c,č նրբերը (խուլերը) կիլիկյան հայերենում դառնում են համապատասխան b, d g, j, ǰ միջակներ (ձայնեղներ) - Ընդհակառակն, հին հայերեն b, d, g, j, ǰ միջակները (ձայնեղները) հանդես են գալիս տեղաշարժված ձևով՝ որպես p, t, k, c, č համապատասխան նրբեր (խուլեր) Չմոռ վերևում՝ §* 16 *հաջ*

1 *Դասական նրբերին (խուլերը) ու նրանց կիլիկյան համապատասխանությունները*

§ 86 Դաս *պ p*=կիլ b *պ*

ա) Բառասկզբում կիլ *պահ* bah 11-20 դաս *պահ* pah. *պահեմ* bahem 17-8, դաս *պահեմ* pahem. *պարտ* bard 9-5 16 դաս *պարտ* part, պարտի bardi 9-17, 15-21 դաս *պարտի* parti. *պիտի* bidi 17-15, 15-13 դաս *պիտի* pıtı. սեռ - տր *պարտուչ* barduç, ուղղ *պարտք* 9-24, 77-2 դաս *պարտուչ* partuç. *պակաս* bagas 29-23 դաս *պակաս* pakas *պակսեմ* baksem Հ. 226-16 դաս *պակասեմ* pakasem. *պատեհ* badeh 15-9 դաս *պատեհ*. pateh. *պատեհվոր* badehvor 19-27, 53-5 դաս.*patehavor *պատ* bad Հ 223-17 19 դաս *պատ* pat. *պեղծ* b'eγj դաս *պիղծ* piłc *պահընջեմ* bahənǰem L.158-10 դաս *պահանջեմ* pahanǰem. *պատճառք* badǰařk^{c} «ներողություն» 9-18, 67-6 դաս *պատճառք* patčařk^{c}. *պատճռվորէ* badǰřvorę «ներում է» 65-16 դաս ¹patčařavorę. *պարտական* bardgan 77-2 դաս *պարտական* partakan. *պոման* boman «պայման, ժամկետ» դաս *պայման* paiman և այլն

բ) Բառամիջում *ապա* aba 11-23 դաս *ապա* apa. *ապրանք* abrank^{c} 11-4, 19-18 դաս *ապրանք* aprank^{c}. *ապրիմ* abrim 45-16, 47-7, 59-27 դաս *ապրիմ* aprim. *կապվել* gab'el «կապված» /*կապեմ* բայից/ դաս *կապեմ* kapem. *կոպիտ* gobıd 15-10 դաս *կոպիտ* kopit *հանդիպած* handibaj 35-2,/ *հանդիպիմ* բայից/ դաս *հանդիպիմ* handipim *անպատեհ* anbad'eh 15-11 դաս *անպատեհ* anpateh *անպակաս* anbagas 83-3 դաս *անպակաս* anpakas և այլն

գ) Բառավերջում *պապ* bab Լևոնի երդ, դաս *պապ* և այլն

Ծան Հին հայերենի *պ* p բաղաձայնին *Ճանապարհ* բառում կիլիկյան հայերենում համապատասխանում է նույնպես *պ՝ Ճանպահ* ձևի մեջ /25-6,

Հ. 217-4, 221-34/, սակայն դրա կողքին նաև *բ՝ ի ճանբէ* i janpe ճևի մեջ/Սարվ. արտ./, և որպես երրորդ ներկայացուցիչ *-փ*, p^{c}՝ *ճանփով* janpov ճևի մեջ /Հ. 222-19, հմմտ. Բառարանը/: *Ճանպահ* առաջին ճևը պատմական գրավիյուն է և հնչում է janpah: Մնացած ճևերը հնչյունաբանական են և, նոր հայերենի ավյալներից ելնելով, *փ*-ով ճևը բոլորից ճշգրիտն է և միակ ճիշտը: Մենք նույնպես շնչեղներ ունենք Լեհ. jamp^{c}a (Han. 48), Նխ. čamp^{c}a, čamp^{c}u, pašar և նման այլ ճևերում: -Ուրեմն այս առանձնացված դեպքերում նույնպես դաս. p-ն դարձել է կիլ.p^{c}:

§ 87. Դաս. *տ t*=կիլ. d *տ*:

ա) Բառասկզբում. *տամ* dam 11-18, *տայ* da 13-7.9, *տալ* dal 21-11. դաս. *տալ* tal, *տայ* tay, *տամ* tam, *տակ* dag «արմատ» ՁգՔ. 154. դաս. *տակ* tak, *տաք* dak^{c} ՁգՔ 155. դաս. *տաք* tak^{c}, *տասն* dasn 17-22, 51-1. դաս. *տասն* tasn, *տեղ* d^{i}eγ 15-14, 39-13. դաս. *տեղի/տեղ/* teli(teł). *տես* d^{i}es «կարծիք» 35-21, 13-27. դաս. *տես* tes. *տէր* der 17-5, 71-11. դաս. *տէր* ter, *տուն* dun 25-26, 79-1. դաս. *տուն* tun, *տղայ* dγa 17-7, 8. 9. դաս. *տղայ* tłay. *ի տանէ* i dane /ուղղ. *տուն*/ 25-27. դաս. *ի տանէ* i tane, *տանեցիք* daneçik^{c} 13-11. դաս. *taneçik^{c}. *տանի* dani «տանում է» 79-1. դաս. *տանի*, tani. *տանին* danin «տանում են» 15-18. դաս. *տանին* tanin, *տարել* dar^{i}el /*տանիմ* բայից/. դաս. *տարեալ* tareal. *տարի* 11-4, 11-28. դաս. *տարի* tari, *տառապելնամ* darbelnam «աղքատանում եմ» 53-12. դաս. *տառապեալ* tarapeal. *տեսնում* desnum 11-27, 28, 20-1. դաս. *տեսանեմ* tesanem, *տիկին* digin 37-13, 10-11. դաս. *տիկին* tikin, *տուգանք* dukank^{c} 57-12. դաս. *տուգան/ք/* tugan/k^{c}/. *տուգնեմ* duknem «տուգանում եմ» 71-21. դաս. *տուգանեմ* tuganem, *տուրտվուճիւն* durdvut^{c}ün «հարկատվություն, կաշառք», դաս. *տուրտուճիւն* turtvut^{c}iun:

բ) Բառամիջում. *աւետարան* avedaran 25-19.20. դաս. *աւետարան* avetaran. *բաժտուն* paždun 83-26. դաս. *բաժտուն* bažtun. *դատեմ* tadem 13-24, 25-9. դաս. *դատեմ* datem. *գիտեմ* kidem 39-3 դաս. *գիտեմ* gitem. *գետին* 39-20 դաս. *գետին* getin. *զատած* zadaj 49-28 դաս. *զատեմ* zatem. *կտաւ* gdav L. 157-17 դաս. *կտաւ*. *կտրեմ* gdrem 51-18 դաս. *կտրեմ* ktrem. *մատղաշ* madγaš ՁգՔ 159 դաս. *մատաղ* matał. *մտեմ* mdem «մտնում եմ» 17-6 դաս. *մտանեմ* mtanem. *ուտեմ* udem, դաս. *ուտեմ* utem. *վատուժ* vaduž «թուլլ» 35-9 դաս. *վատուժ* vatuž. *օժտել* oždel 19-24 դաս. *աւժտել* aužtel. *օտար* odar 21-9, 33-23, 63-4, 69-24 դաս. *աւտար* autar:

գ) Բառավերջում. *դատ* tad 13-19 դաս. *դատ* dat. *շատ* šad 73-5 դաս. *շատ* šat. *ազատ* azad 21-13 դաս. *ազատ* azat. *ճշմարիտ* jšmarid 29-1 դաս. *ճշմարիտ* čšmarit. *շողսիրտ* šoγsird «կրքոտ» 35-8 դաս. *šołasirt. *սուտ* sud

29-8 դաս. *սուտ* sut /այստեղից sdem (sədem) բայը, դաս. *ստեմ* stem/. *փայտ* p^{c}aid L. 165-13 դաս. *փայտ* p^{c}ait, նաև *ոտ/ն/* od(n) 57-14, 15 դաս. *ոտն* otn:

§ 88. Դաս. *կ*, k=կիլ. g, *կ*.

ա) Բառասկզբում. *կամք* gamk^{c} 29-5, 53-26 դաս. *կամք* kamk^{c}. *կայ* ga 33-5 դաս. *կայ* kay. *կենամ* genam, նախորդի ածանցված հիմքը. *կախեմ* gaxem 35-25, 26 դաս. *կախեմ* kaxem. *կամենամ* gamenam 11-16, 23-5 դաս. *կամիմ* kamim. *կարեմ* garem, ածանցված հիմք garenam 11-16, 11-20, 21-19, 73-9 դաս. *կարեմ* karem. *կէս* ges 21-2, դաս. *կէս* kes. *կոպիտ* gobid 15-10, 11 դաս. *կոպիտ* kwpit. *կոտրեմ* godrem Հ. 223-34 դաս. *կոտրեմ* kotorem. *կորսնեմ* gorsnem 11-14, 63-10, 65-7 դաս. *կորուսանեմ* korusanem. *կռիւ* gřiv «դատական վեճ» 29-5,10, 26 դաս. *կռիւ* křiv. *կռվիմ* gřvim «մենամարտել», դաս. *կռվիմ* և այլն: - Նաև սահմանական եղանակի *կու* gu նախամասնիկը, արևելահայերեն ki, ku, kə:

բ) Բառամիջում. *գրաւկան* kravgan 73-6, դաս. *գրաւական* gravakan. *եկել* eg'el 11-17, դաս. *եկեալ*. *երկիր* ergir սեռ. - տր. ergri 39-8 բացառ. y-ergre 13-9, դաս. *երկիր* erkir. *զրկանք* zrgank^{c} «ապօրինի ունեցվածք» 29-11 դաս. *զրկանք* zrkank^{c}. *մեղկան* meɣgan «մեղավոր» 35-22, դաս. *մեղկան* meɫakan. *շալկեմ* šalgem 33-15 դաս. *շալակեմ* šalakem. *վզենկիմ* vzengim «վնաս եմ կրում» 51-17, դաս. *վզենկիմ* vzengim. *վաճռկան* vaǰřgan 85-1, 83-25, դաս. *վաճառական* vačařakan. *վկայ* vga 11-10 դաս. *վկայ* vkay. *վկայեմ* vgayem 11-27, 13-12, դաս. *վկայեմ* vkayem. *տիկին* digin սեռ. dignoč, դաս. *տիկին* tikin:

գ) *Բառավերջում. տակ* dag Զգբ, 154, դաս. *տակ* tak., *մէկ* meg 21-4, 23-7, դաս. *միակ* miak. *այրիկ* airig «ամուսին, տղամարդ» 19-12, 13, 21-19 և այլն, դաս.*airik. *բարակ* parag L. 157-19, դաս. barak. *հասակ* hasag, 17-10, դաս. hasak. *կնիկ* gnig, 49-1, դաս. kin. *սնդուկ* sndug. L. 156-17, դաս. snduk և այլն:

Ծան. Օրինակների մեջ դիտմամբ բերված չեն այնպիսի դեպքեր, ինչպես *կարգել* 19-27, 21-21, 49-11= Լեհ. karkelu, *կարտալ* 75-12= Լեհ. kartalu և այլն: Համմտ. վերևում § 21-ի վերջում բերված դիտողությունը: Դրա համաձայն, *ակ* -ak, *իկ* -ik վերջածանցները նույնպես կիլիկյան հայերենում մնացել են անտեղաշարժ:

§ 89. Հավելված. *պ* p, *տ* t, *կ* k դասական նրբերը (խուլերը) անտեղաշարժ են մնում *սպ* sp, *ստ* st, *սկ* sk, *շպ* šp, *շտ* št, *շկ* šk կապակցություններ-

րում, պաշտպանված լինելով s և š կոշտ շփականներով, որոնց դրանք հաջորդում են: Հմմտ. վերևում §21:

Կիլ. *սպաննեմ* spannem Հ. 208-12, դաս. *սպանանեմ*. *սպաննուխիմ* spannutᶜün 35-9, դաս. *սպանուխիմ*. *սպեղնլիք* speynlikᶜ Br 154, դաս. *սպեղանելիք*. *սպիտակ* spidag Գիրք վաստ., Մխ. Հեր., ՁգՔ 150, 154, դաս. *սպիտակ*. *սպիտակուց* spidguç ՁգՔ 152, դաս. *սպիտակուց*. *մարդասպնուխիմ* martaspnutᶜün 33-22, դաս. *մարդասպանուխիմ*. *գրաստ* krast 6-9, 12, 20, դաս. *գրաստ*. *հաստ* hast L. 157-12, դաս. *հաստ*. *անհանգըստէ* anhangəstę 43-2, դաս. *անհանգստէ*. *դաստըտնի* tᶜadəstni եղ. 3-րդ դ. 21-24, դաս. *դաստատանի*. *իմաստուն* imastun L. 154-15, դաս. *իմաստուն*. *խոստայաւ* xostaçav 35-14, դաս. նույնը. *խոստայել* xostaçel 27-17, դաս. *խոստայեալ*. *ուստր* ustr «որդի» 49-30, դաս. *ուստր*. *դուստր* tustr 49-30, դաս. *դուստր*. *ուստի* usti 65-1, դաս. *ուստի*. *հայրենեստան* hairenestan 19-9, 21-10, դաս. *հայրենեստան*. *հաստատի* hastadi 65, դաս. *հաստատի*. *հաստատել* hastadᶦel 29-21, դաս. *հաստատեալ*. *հաստատուն* hastadun 49-24, դաս. *հաստատուն*. *հարըստնայ* harəstna եղ. 3-րդ դ. ներկա, 35-10, դաս. *հարստանայ*. *նստի* եղ. 3-րդ դ. ներկա, 11-7, դաս. *նստի*. *վստահ* 27-20, 39-16, դաս. *վստահ*. *ստանայ* stana L. 158-25, դաս. *ստանայ*. *իսկի* iski 19-14, 37-5, դաս. *իսկ*. *ոսկի* 65-8, 81-14, դաս. *ոսկի*. *հասկնամ* 9-13, 13-8, դաս. *հասկանամ*. *հաշտին* haštin 49-21, 22, դաս. *հաշտին*. *կշտայընէ* gštaçənę եղ. 3-րդ, դ., դաս. *կուշտ*. *քշտել* 59-38, 61-9, 31-2, դաս. *քշտել*. *մշտնջենաւոր* məštnǰenavor 57-11, դաս. *նույնը*. *քժիշկ* pžišk (pəžišk) 65-21, դաս. *բժիշկ*. սեռ. *դրօշկի* troški ուղղ. *դրօշակ*, դաս. *դրաւշակ-ի*. աշկերտ aškerd Հ. 214-12, դաս. *աշակերտ* և այլն:

Ծան. 1. Հմմտ. Լհհ. spanełu դաս. *սպանանել*. abəsperełu դաս. *սպասպարել*. skesur դաս. *սկեսուր*. oski դաս. *ոսկի*. oskər դաս. *ոսկր* և այլն. 1, 303, 305, 307:

Ծան. 2. Որպես անտեղաշարժ պետք է դիտել նաև նուրբ (նուլ) պայթականները որոշ կապակցություններում, օրինակ, *բ* բաղաձայնի հետ. այսպես, կիլ. *պէտք* ես կարդում եմ bętkᶜ, *պարտք* որպես bartkᶜ՝ նոր հայերենի նմանությամբ, որտեղ ունենք, օրինակ. Լհհ. bartkᶜ հոգն. - ər/Han. 34/, betkə/ Han. 35/: Կիլ. *պակսել* Հ. 222-16 նույնպես պետք է կարդալ baksel, նկատի ունենալով Լհհ. bakselu (Հ. 33):

Ծան. 3. Անտեղաշարժ է մնում վերջապես նաև հհ. *տ*-ն հաջորդող *ս* - բաղաձայնից առաջ: Այս դեպքում կիլիկյան հայերենում այն միանում է *ս* հնչյունին՝ դառնալով ց. այսպես, օր., կիլ. *պայխուն* baçxun 13-10, 14, 19, 31, 15-19, 17-19, 21-19 և այլն= դաս. *պատասխանի*. կիլ. *արցունք* arçunkᶜ /օրինակներ տե՛ս Բառարանում/=դաս. *արտասուք*:

§ 90. Դաս. ծ c= կիլ. j ծ:

ա) Բառասկզբում. *ծալած* jalaj 85-6, դաս. *ծալեմ. ծախ* jax 83-26, դաս. ծախ. *ծախեմ* jaxem 45-21, 53-22, դաս. *ծախեմ. ծանդր* jandr Հ. 226-15, դաս. *ծանր. ծանօթիք* janōtᶜikᶜ Հ. 218-24, դաս. *ծանաւիթք. ծառ* Գիրք վաստ. և այլն, դաս. *ծառ. ծառայ* jaŕa 155-7, դաս. *ծառայ. ծնօղք* jnōγkᶜ 19-20, դաս. *ծնողք. ծովեզր* jovezr 71-9, դաս. *ծովեզր. ծուռ* jur 79-14, դաս. *ծուռ. ծնել* jnʲel 45-9, դաս. *ծնեալ*:

բ) Բառամիջում. *հեծնիմ* 77-21, դաս. *հեծանիմ. հեծել* hejʲel Սմբ. Ժամ. 648, դաս. *հեծեալ. գործէ* korjē եզ. 3-րդ դ. ներկա 15-7, դաս. *գործէ. ածեմ* ajem դաս. *ածեմ. արծաթ* arjatᶜ 29-6, 81-14, դաս. *արծաթ. արծող* arjoγ Հ. 223-21, 23, դաս. *արածող, արծկել* arjgel 77-4, դաս. *արճակել*:

գ) Բառավերջում. *պիղծ* bʲeγj 29-22, դաս. *պիղծ. մեծ* mʲej 9-6, 7, դաս. *մեծ. աստուած* astvaj 33-25, 31-20, դաս. *աստուած*. - aj արևելահայերեն -ac վերջավորությամբ դերբայը /տե՛ս Քևաբանություն/.

Ծան. Սպասելի կանոնավոր կիլ. ծ j բաղաճայնի տեղ ունենք *գ* z՝ *ճեռնագրագ* ceŕnkraz արտահայտության մեջ L. 179-2, 186-4, փոխառնակ *ճեռնագրած*: Հմմտ. Լեհ. eraj Han. 51. Նխ. eraj /հուլն տեղը/= դաս. երազ. Նաև Լեհ. Zadurowicz՝ Jadur(<Astvajadur) ճևի կողքին, հմմտ. jerig *ծերիկ* (Han. WZKM 2, 299):

§ 91. Դաս. ճ č=կիլ. ǰ ճ:

ա) Բառասկզբում. *ճանչեմ* jančem 67-9, 41-19, դաս. *ճանաչեմ. ճանապահ* janpah 25-6, դաս. *ճանապարհ*:

բ) Բառամիջում. *վճար* vjar 41-11, 18, դաս. *վճար. վճարէ* vjarē 41-5, դաս. *վճարէ, վաճառ* vaǰaŕ 83-8, դաս. *վաճառ. վաճառական* vajŕgan 83-25 դաս. *վաճառական. աստիճան* astiǰan 55-16, դաս. *աստիճան*:

գ) Բառավերջում. *կարճ* garǰ 33-8, դաս. *կարճ* և այլն:

2. Դասական միջակներն (ձայնեղները) ու նրանց կիլիկյան համապատասխանությունները

§ 92. Դաս. բ b և կիլ. p բ:

ա) Բառասկզբում. *բան* pan 3-20, 35-26, դաս. *բան. բուն* pun 41-12, դաս. *բուն, բերդ* pʲert 21-6.7, դաս. *բերդ. բարձր* parcr L. 178-5, դաս. *բարձր. բաժին* pažin 21-4, դաս. *բաժին. բաժանեմ* pažnem 37-24, դաս. *բաժանեմ. բանալ* panal 23-15, L. 156-16, դաս. *բանալ. բերել* perel 21-19, 49-12, դաս. *բերել. բաղնիք* paγnikᶜ 45-11, 47-32, դաս. *բաղանիք* և այլն:

բ) Բառամիջում. *աղբայր* aypair Սարվ. արտ., դաս. *եղբայր*. *համբերել* hamperel 15-26, 33-17, դաս. *համբերել*. *հարբենալ* harpenal Հ. 213-7, 222-3, դաս. *արբենալ*. *որբեր* orp'er հոգև. ուղղ. 51-11, դաս. *որբք*. *շաբաթ* šapat^{c} 65-18, դաս. *շաբաթ* և այլն:

գ) Բառավերջում. *որբ* vorp 51-9, դաս. *որբ*. *սուրբ*, *սուբ* sup 93-15, դաս. *սուրբ* և այլն:

§ 93. Դաս. *դ* d=կիլ. t *դ*:

ա) Բառասկզբում. *դու* tu 23-9, 25-24, *դուն* tun 13-12, 13, դաս. *դու*. *դուռ* tuř 23-15, դաս. *դուռն*. *դնեմ* tnem 13-26, 19-15, դաս. *դնեմ*. *դառնամ* taṙnam 13-17. 22, դաս. *դառնամ*. *դիմեմ* timem 31-19, դաս. *դիմեմ*. *դաւրաստնիմ* tadəstnim 27-6, 39-9, դաս.* *դաւտաստանիմ*. *դարպաս* tarbas 3-15, 15-19, դաս. *դարպասպաս*. *դժար* tžar Մխ. Հեր. 51, 53, դաս. *դժուար*. *դրացին* traçin 39-23, հ. 219-9, դաս. *դրացի* և այլն:

բ) Բառամիջում. *արդար* artar 67-17, դաս. *արդար*. *երդնուլ* ertnuł 11-3, 8.9, դաս. *երդնուլ*. *որդիք* ort^{c}ik^{c} 19-19, դաս. *որդիք* և այլն:

գ) Բառավերջում. *մայդ*. mart 33-1, դաս. *մարդ*, *երդորդ* ertort 25-17, դաս. *երդորդ*. *բերդ* p'ert 21-6.7, դաս. *բերդ*. *պահնորդ* bahnort /հմմտ. Բառարանը/, դաս. *պահնորդ* և այլն:

§ 94. Դաս. *գ* g =կիլ. *կ* k:

ա) Բառասկզբում. *գամ* kam 13-13, 11-26, դաս. *գամ*. *գնամ* knam 13-31, դաս. գնամ. knem 69-29, դաս. *գնեմ*. *գեղ* k^{c}eγ 39-8, դաս. *գիւղ*. *գին* kin 63-24, 71-2, դաս. *գին*. *գինի* kini L. 155-2, դաս. *գինի*. *գիրնամ* kirnam Հ. 223-30, դաս. *գիրանամ*. *գորնամ* koγnam 65-8, դաս. *գորանամ*. *գոնում* kdnum 63-11, 23, դաս. *գտանեմ*. *գրաւկնեմ* kravgnem 71-17, 75-23, դաս. *գրաւականեմ*. *գրեմ* krem 25-2, դաս. *գրեմ*:

բ) Բառամիջում. *հագնիլ* haknil 73-17, դաս. *հագանել*, *ագանել*. *հագոյգք* hakuiçk^{c} «զենք» 31-9, դաս. *ագոյգք*. *հոգի* hoki Սմբ. Ժամ., դաս. *հոգի*. *թագաւոր* t^{c}akvor 179-2, 186-3.4, դաս. *թագաւոր*:

գ) Բառավերջում. *կարգ* kark, Անս. Անտ., դաս. *կարգ*:

§ 95. Դաս. *ճ* j=կիլ. c, ճ:

ա) Բառասկզբում. *ճայն* cain 19-15, դաս. *ճայն*. *ճեռն*. c'eṙ 35-20, դաս. *ճեռն*. *ճեր* c'er 41-8, 10, դաս. *ճեր*. *ճէթ* cet L. 155-4, դաս. *ճէթ*. *ճի* ci 63-10, դաս. *ճի*. *ճգեմ* ckem 17-5, 17, դաս. *ճգեմ*. *ճիաւոր* ciavor 17-25, դաս. *ճիաւոր*:

բ) Բառամիջում. *վարվոր* varcvor 71-6, դաս. *վարձաւոր. վարձեմ* varcem 71-6, դաս. *վարձեմ. փորձաժ* porcaj 81-5, դաս. *փորձեմ*:

գ) Բառավերջում. *վարձ* varc 71-6, դաս. *վարձ. անդարձ* andarc 19-9, դաս. *անդարձ* և այլն:

§ 96. Դաս. ջ ǰ=կիլ. č ջ:

ա) Բառասկզբում. *ջանալ* čanal 29-3, դաս. *ջանալ. ջորի* čori 63-10, դաս. *ջորի. ջուր* čur 79-2,3,4, դաս. *ջուր*:

բ) Բառամիջում. *աղջիկն* aγčgin 19-5, 45-9, 55-15, դաս. *աղջիկ. առջեւ* arč'ev 11-17. 22, 21-26, դաս. *առաջեաւ. առջի* arči 25-11.27, 37-20, դաս. *առաջի. աջողնամ* ačoγnam «առողջանում եմ» 65-23, դաս. *յաջողանամ. իջնուլ* ičnul 25-25, դաս. *իջանել*:

գ) Բառավերջում. *յառաջ* haŕač 29-7, դաս. *առաջ. մէջ* meč 19-6, 37-14, դաս. *մէջ. քաջ* Սմբ. Ժամ., դաս. *քաջ* և այլն:

§ 97. Հավելված 1. բ b, դ d, գ g, ճ j, ջ ǰ հին միջակները (ճայնեղները) կանոնավոր ձևով անտեղաշարժ են մնում, երբ նրանք անմիջապես հաջորդում են *ո* ռնգայինին. հնչեղ ռնգայինն այս դեպքում խանգարում է նրա կողքին գտնվող հին հայերեն միջակների կոշտացմանը: Տե՛ս վերևում § 20 ա:

Օրինակներ. *հինգ* hing 17-22.23.24, 51-1 /նաև *հինգ* գրությունը 155-26, 177-25/, դաս. *հինգ. հնգակ, հնգակ* hngag /həngag/ Հ. 223-26. 34, հմմտ. Բառարանը. *գանկատ, գանգատ* kangad 15-19.22, 29-7, 61-23, դաս. *գանգատ. գանկտանք* kangdank^{c} 15-10, 13-20, դաս. նույնը. *գանկտվոր* kangdvor 23-24, դաս. *գանգատաւոր. հանկիստ* hangist Մխ. Հեր., դաս. *հանգիստ. ժառանկէ* žaŕange ներկայի 3-րդ դ. 19-27, դաս. *ժառանգէ*: Հետո *ինճ* 1-ին դ. տրականի դերանուն 27-12, դաս. *ինճ. հիւանդ* hivand 25-11, դաս. *հիւանդ. ընդունիմ* əndunim, դաս. *ընդունիմ* և այլն: - *Լոկնալ* lognal Հ. 211-6/=դաս. *լոգանալ* loganal/ փրկում է յուր հին g-ն, չնայած ռնգայինը ոչ մեկ նախորդում է նրան, այլ հաջորդում:

Ծան. Նույն երևույթն է ներկայացնում Լեհ. łognełu «լվացք անել» Ham. 86 և WZKM 2, 65: Հետո Լեհ. ունի hing «հինդ», ohung «եղունգ», jung «ծունկ», gangun «կանգուն» /WZKM 2, 65/, bγənj «պղինձ», t^{c}anir «թանձր» WZKM 2, 127, bind «պինդ», hivand «հիվանդ», handəbełu «հանդիպել» և այլն /WZKM 1, 312/:

§ 98 *Հավելված* 2 Անտեղաշարժ է մնում հին հայերեն միջակ *դ* d բաղաձայնն երկրորդ դեմքի յուցական դերանվան մեջ Հմմտ § 20 բ Կիլ *այտ* aid =դաս *այդ* Վկայված են, օրինակ՝ *այտ* aid 11-2, 23-22, 33-7, 39-17, 45-11, 77-26, Հ 224-4, L. 145, ԶգՔ 147, 148, 152, 155 և այլն *այտոր* aidor, *սեռ - տր* 11-2, 39-17, 81-25, *այտով*, aidov, դործ ԶգՔ 154, 156 Ապա *այտի* aidi «այդ» Հ 219-6, դաս *այդի* հմմտ նաև 2-րդ դեմքի *տ*, d, որ հանապատասխանում է հհ *դ*, d վերջածանցին

Ծան Համաձայն սրան, ժամանակակից լեհահայ բարբառն ունի ad ձևը /Han. WZKM 1, 312/: Ընդհակառակն, համապատասխան դերանվանական վերջածանցն այստեղ տեղաշարժի է ենթարկվել և հնչում է t /Han. ԷՋ 115/

§ 99 Հավելված 3 *Հին հայերենի միջակներն (ձայնեղները) r ր հնչյունիկ հետո և, ըստ երևույթին, առանձին դեպքերում նաև բառավերջում, դառնում են ոչ լեզ նրբեր, այլ շնչեղներ*

Այսպես՝ Կիլիկյան հայերենում կանոնավոր ձևով ունենք *եի* yep^{c} /շաղկապով/ 19-20, 59-6, L. 156-14, II 218-8=դաս. *երբ* սպասելիք կանոնավոր *եբ* yep ձևի փոխարեն նույնատիպ երևույթ է ներկայացնում արդեն ուշ դաս *զերդ* z'ert=դաս *զիարդ* Այսպես՝ կիլիկյան հայերենում գրեթե միշտ ունենք *եի* 19-20, 59-6, L. 156-14, H. 218-8=դաս *երբ* սպասելիք կանոնավոր *եբ* yep[37] ձևի փոխարեն

Նույնատիպ երևույթ է իրենից ներկայացնում արդեն ուշ դաս *զերթ* z'ert /Գր Մագ /= դաս *զիարդ* կանոնավոր *զերդ* z'ert ձևի փոխարեն Այստեղ է պատկանում, ըստ երևույթին, նաև *զարթ ի* «բայի, բայառուվյամբ» 47-37, 65-8, 9՝ *զարդ ի* zart i (L. 157-9, 158-29, 155-15) ձևի կողքին *Զարթել*, zartel 45-11, *զարդել* ձևի կողքին zartel, L. 154-24, Գիրք վասո 139· Միջին հայերեն այս ձևերը ենթադրում են հին հայերեն *զարդ* zard մի նախաձև Ապա *կարք* gark^{c} «կարգ, կարգադրված ուղանք (պատիժ)» Հ 222-26 /հատկապես հաճախական է Սմբ Դատաստանագրքում/=դաս *կարգ. աւազ*[38] avak^{c} 37-22=դաս *աւազ Պռոյգ* bruik ձևի կողքին ունենք նաև *պռոյք* bruik^{c} 19-15, 45-10, 55-9/՝ շնչեղ *ք*-ով[39]

---

[37] *Եբ* yep կարելի է գտնել միայն առանձին դեպքերում՝ բայառուվյան կարգով, առերևույթ ձևով՝ որպես անճշգրիտ կամ էլ պատմական մի զրելաձև /օր ԶգՔ, 144, 156/

[38] Դրա կողքին նաև *աւազ* հին զրելաձևը

[39] Նրբի /խուլի/ փոխարեն շնչեղին ենք հանդիպում նաև *հաւքյօղ/հօքյօղ*/ գրուվյան մեջ /39-23 Հ 223-30 33/՝ *հոգյօղ* hokçoγ /=դաս *հոգայող*/ ավելի հին զրելաձևի

Այսպիսի գրությյան հաճախականությունից ու կանոնավորությունից հետևում է, որ մենք այստեղ գործ չունենք կամայական կամ սխալ գրելաձևի հետ: Բերված կիլիկյան օրինակների ստուգությունը ճշտվում է նաև նոր հայերենի տվյալներով:

Ծան. Ինչպես հայտնի է, բաղաձայնների երկրորդ տեղաշարժը նոր հայերենում սահմանափակված է արևմտյան բարբառախմբով, իսկ արևելյան խումբը նրանից ազատ է մնացել: Սակայն, նաև իր սահմանափակ բնագավառի, նոր հայերենի ներսում բաղաձայնների տեղաշարժը համաչափ ձևով չի ընթացել: Նոր հայերենի բաղաձայնական տեղաշարժի բերված օրինակները /Ներածություն, էջ 1, տողատակի ծանոթագրությունը/ վերաբերում են միայն որոշ *կենտրոնական* բարբառներին: Տաճկահայ բարբառում սակայն, ինչպես պարզել է արդեն Հ. Հյուբշմանը /ZDMG 30, էջ 58/, «հին հայերենի *գ, դ, բ, ճ, ջ*» նախնական միջակները, առաջին տեղաշարժի հետևանքով դեպի նրբեր փոխվելուց հետո, ժամանակակից, հատկապես կրճատված մարդկանց արտասանության մեջ, դարձել են *շնչեղ*, այսինքն՝ որոշ չափով երկակի տեղաշարժ են ապրել: Որպես հետևանք, բուն նրբերն այժմ երևան են գալիս սոսկ բացառության կարգով[40]: Բայց նաև միջին Հայաստանի՝ նախնական վիճակն ավելի հավատարիմ ձևով պահպանող լեզվի մեջ առանձին դեպքերում գտնում ենք. yerp^{c} դաս. *երբ*, anark^{c} դաս. *անարգ*, tarc^{c} դաս. *դարձ*, žařank^{c} դաս. *ժառանգ* և այլն (տե՛ս Hübschmann ZDMG 30, էջ 59):

Շնչեղացումն այստեղ սահմանափակվում է «r+ հհ. միջակներ» կապակցություններով, իսկ առանձին դեպքերում պատահում է նաև բառավերջում, ինչպես ցույց են տալիս օրինակները: Բաղաձայնների տեղաշարժից դուրս գտնվող արևելահայ բարբառներում, մասնավորապես Թիֆլիսի լեզվի մեջ, գտնում ենք նույն երևույթը. r բաղաձայնից հետո, ինչպես նաև բառավերջում /ավելի հազվադեպ n բաղաձայնից հետո/ միջակները կանոնավոր ձևով արտասանվում են շնչեղների նման. հմմտ. Hübschmann ZDMG 30, էջ 58 և Томсон, Тифл. диал. էջ 65, § 141, էջ 66, §145, էջ 67, § 148, էջ 67, § 151, էջ 68, § 153:

-Որքան էլ այս հնչյունափոխությունը, որ կարելի է որակել որպես նոր հայերենի համար ընդհանուր, ըստ տարածման ու ծավալի տարբեր բարբառ-

---

փոխարեն /41-16. 17/: Այս դեպքում սպասելիք k նուրբն առնմանվել է հաջորդող *ի* ը շնչեղին:

[40] Դրան համապատասխան, Rigg's Grammar of the Armenian language as spoken in Constantinople and Asia Minor, էջ 6, չի տարբերում նրբերն (նուլեր) ու շնչեղները. հմմտ. Hübschmann ZDMG 30, էջ 58:

ներում տարբեր չափեր ընդունի, այնուամենայնիվ բոլոր արևմտյան[41] և արևելյան բարբառները համընկնում են այն բանում, որ r *բաղաձայնից հետո և առանձին դեպքերում նաև բառավերջում* հին միջակները տեղաշարժվում են դեպի շնչեղներ: Նշված երևույթի արմատներն անպայման պետք է որոնել միջին հայերենում, մի բան, որ հավասար կերպով հաստատվում է վերևում (§ 99) բերված օրինակներով, որոնց թիվը գույթ կարող է բազմանալ կիլիկյան ուրիշ աղբյուրների հետազոտման շնորհիվ: Կիլիկյան օրինակների հետ համմտ. նաև Թիֆլիսի բարբառի ձևերը. yip^{c} դաս. *երբ*. sup^{c} դաս. *սուրբ*. avak^{c} կիլ. *աւաք*, դաս. *աւագ*., kark^{c} դաս. *կարգ*, կիլ. *կարք* և այլն. Том. § 141 և 148:

Այստեղից երևում է, որ արևելահայերենը նույնպես ենթարկվել է բաղաձայնների, թեկուզ մասնավոր, տեղաշարժին, հատկապես հին միջակների տեղաշարժին որոշ կապակցություններում: Բնորոշ է, որ բուն Հայաստանում հին ձայնեղները պահպանվել են ամենահավատարիմ ձևով:

Ընդհակառակն, որքան հեռու են ժամանակակից բարբառներն իրենց նախնական բնաշխարհից՝ Արարատյան նահանգից, այնքան վատ են այդտեղ ներկայացված հին հայերենի համար բնորոշ կովկասահայ նրբերը (խուլերը), իսկ հեռավոր տաճկահայերենում դրանք համարյա անհետանում են:

Բաղաձայնների երկրորդ տեղաշարժի ծագման տեղն ու ժամանակը

§ 100. Ելնելով այն հանգամանքից, որ բաղաձայնների տեղաշարժն ամենաուժեղ ձևով զարգացած է ծայրագույն արևմտյան բարբառներում, կարելի է եզրակացնել, որ Մեծ Հայքի ծայրագույն արևմտյան նահանգները հանդիսանում են նրա ծագման տեղը:

Ժամանակի առումով կարելի է տեղաշարժն որակել որպես *միջին հայերեն* այնքանով, որքանով որ առաջին անգամ հատուկ ձևով և իր ամբողջ ծավալով այն ի հայտ է գալիս հենց կիլիկյան հայերենում: Կասկածից դուրս է սակայն, որ նրա ծագման ժամանակն ավելի վաղ է: Համմտ. այդ մասին Baumgartner ZDMG 40, էջ 459, ինչպես նաև Carrière, Un ancien glossaire latin-arménien, Paris, 1886, էջ 18: Այդ տեղաշարժի սկզբի ժամա-

---

[41] Հատկապես գեղեցիկ ձևով է դրսևորում շնչեղացումը r-ից հետո Ախալցխայի բարբառը: Վերջինիս մեջ ունենք /Том., էջ 15/. art^{c}ar դաս. *արդար*. parç դաս. *բարձ*. parçr դաս. *բարձր*. harp^{c}im դաս. *արբիմ*/ Տաճկ. harp^{c}il, Թֆ. Նխ. harp^{c}el/, mart^{c} դաս. *մարդ*. paŕçi դաս. *բարձի/բառնամ* բայի անկ. կատ./. l'ert^{c} դաս. *լեարդ*. v^{u}erç դաս. *որձ*. ort^{c}i դաս. *որդի*. yep^{c} դաս. *երբ* և այլն:

նակն ավելի լավ որոշելու համար կարելի է որպես ելակետ ընդունել արաբական անունները 8-10-րդ դարերի հեղինակների մոտ

Ծան Արդեն վաղ դասական գրականության մեջ n, ավելի հազվադեպ *m* ռնգայինից հետո տատանում է նկատվում հին նրբերի արտահայտության մեջ, և դա ի հայտ է գալիս զույգ գրություններում *անկանիմ, անգանիմ անկիւն, անգիւն ընկեր, ընգեր ընկոյզ, ընգոյզ ընտրեմ, ընդրեմ ընկենում, ընգենում ընկրկեմ, ընգրկեմ ընկճեմ, ընգճեմ ընտանի, ընդանի ընպեմ, ընբեմ ընծայ, ընճայ* և այլն Գրության մեջ այդ տատանումն անհրաժեշտ ճևով հիմնվում է նախնական հնչյունական վիճակի՝ արդեն տեղի ունեցած փոփոխության վրա, այսինքն արդեն հին հայերենում նրբերը ռնգայինից հետո սկսում են տեղաշարժվել դեպի միջակներ[42] որոնք պահպանվում են մինչև նոր հայերենի շրջանը Հին հայերենի այս հնչյունափոխությունը, սակայն, տեղի է ունեցել բուն տեղաշարժից առաջ՝ որպես ինքնուրույն, անկախ մի փոփոխություն, և կապված չէ երկրորդ հայկական /միջին հայերեն/ տեղաշարժի հետ

II Շնչեղներ

Դաս փ p^{c} *և նրա կիլիկյան համապատասխանությունները*

§ 101 1 Դաս *փ* p^{c} =կիլ p^{c} *փ*

Օրինակներ *փայտ* p^{c}aid L 155-13, դաս *փայտ փախչի*, ներկայի 3-րդ դ 29-22 =դաս *փախչի փող* p^{c}oγ 43-10, դաս *փող փոխառ* p^{c}oxaŕ Անս Անտ =դաս *փոխառու փոխ* p^{c}ox 75-3, դաս *փոխ թափեմ* t^{c}ap^{c}em 31-23, 77-10, դաս *թափեմ*

§ 102 2 Դաս *փ* p^{c}=կիլ k^{c} բ առանձին դեպքերում *չաք* čak^{c} 25-7, 53-5, 75-3, Գիրք վասո 26 184 198, 199, 152, Մխ Հեր 44, 81, 118, 149, Զքբ 147, 154 156 և այլն /մանրամասն տե՛ս Բառարանը/= դաս *չափ չքաւորութիւն* čk^{c}avorut^{c}un «հարաբերություն, չափակցություն» Հ 217-17= դաս

---

[42] Քանի որ այս հնչյունափոխության հետևանքով վերևում բերված օրինակներում թե՛ *նտ*-ն հնչում է որպես *նդ*=nd թե՛ *նկ*-ն որպես *նգ*=ng, ապա ընդհակառակն, նախնական միջակների (ձայնեղների) համար ռնգայինից հետո կարող էին գրություն մեջ հանդես գալ նրբերը (խուլերը), և ընդհանրապես գրության մեջ միջակներն ու նրբերը կարող էին փոխարինել իրար կանկապած ճևով, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները *բանդ* և *բանտ, եղունգն* ու *եղունկն ունդ* և *ունտ* «բանջարեղեն», *անդիկ* և *անտիկ* և այլն Նույնատիպ երևույթի մասին միջին հայերենում հմմտ վերևում § 20 ա

չափաւորութիւն. այսչաք Զք. 152, 155= դաս. *այսչափ. այդչաք* aitĕakᶜ Գ|որք վասպ. 64=դաս. *այդչափ. այնչաք, հանչաք* ainčakᶜ, hančakᶜ 53-4, 77-10, 33-17, 67-16, Զք. 150, 154= դաս. *այնչափ. միաչաք.* miačakᶜ Զք 148, 153, 154, Մխ. Հեր. 57=դաս. *միաչափ, որչաք* orçakᶜ Մխ. Հեր. 44, 46= դաս. *որչափ*:

Ծան. Կիլ. *չաք* /= դաս. *չափ*/ նոր արևելահայերենում մեծ մասամբ դարձել է *չանք* ներմուծված ռնգայինով: Այդպես, ըստ Патк. Диал. 84, Զուղայի բարբառում ənčankᶜ համապատասխանում է կիլ. *այնչաք* ձևին:

Ագուլիսի բարբառում, ըստ § 39 Ծան., ընդհանուր արևելահայերեն čankᶜ ձևին պետք է համապատասխանի čunkᶜ: Հմմտ. Патк. Диал. 40, Ախնա բարբառում /Ճանիկ. 437, 485/ կիլիկյան *այնչաք* ձևին համապատասխանում է inčexᵌ[43]:

Ըստ երևույթին, այստեղ պետք է դասել նաև դաս. *տապ*[44]=մհ. - նհ. *տաք*:

Դաս. թ ᶜ կիլիկյան հայերենում

§ 103. *Դաս. թ ᶜ=կիլ. ᶜ թ*:

Թէ tᶜe 23-5.8.11.15.21, դաս. *թէ. թուխթ* tᶜuxtᶜ 39-15, 47-28, դաս. *թուղթ. թագաւոր* L. 179-2, 186-3, դաս. *թագաւոր. թաթիեր* tᶜatᶜier «կշեռք» L. 179-3, 186-6, դաս. *թաթ. թողու* 17-5, դաս. *թողու* ներկայի եզ. 3-րդ դ. *վաթսուն* vatᶜsun 11-6, դաս. *վաթսուն. երթայ* ertᶜa 9-17, 13-32, դաս. *երթայ* և այլն:

Դաս. ք. kᶜ կիլիկյան հայերենում

§ 104. *Դաս. ք* kᶜ=կիլ. kᶜ ք:

Քոյր kᶜuir 21-8, դաս. *քոյր. քո* kᶜo 15-15, 23-9, դաս. *քո. տր. քեզ*. դաս. *քեզ. քաղաք* kᶜayakᶜ 25-6, դաս. *քաղաք. քանի* 11-22, դաս. *քանի. քաշեմ* kᶜašem Հ. 214-42, դաս. *քարշեմ. քաշանք* kᶜašankᶜ 61-6.11, դաս. *քարշանք. քրիստոնէ* kᶜristonē 25-24, դաս. *քրիստոնեայ. ինք* inkᶜ, դաս. *ինքն. խոտք* xǫskᶜ 29-2, դաս. *խաւսք. հասոյթք* hasuitkᶜ, դաս. *հասոյթք. տուգանք* 79-14, դաս. *տուգանք. երեք* erekᶜ 47, դաս. *երեք. աղաչենք* ayačenkᶜ «աղաչում ենք» 53-22, դաս. *աղաչեմք*, և առհասարակ հին հայերենի *ք* հոգնակերտ մասնիկը= դաս. *ք*:

---

[43] Հմմտ. inčex=ainčakᶜ, Ագ. ēxman=ikᶜmin /*իքմին*/, Ագ. uxman=okᶜmin /*ոքմին*/:

[44] =նպ. tāb «փայլ, տաքություն, շոգ», բալ. tap, tᶜapᶜ, tᶜaf «շոգ, տապ», պհլ. tap «տենդ», սկր. tápas «տաքություն, շոգ, տապ», ըստ Arm. Gramm. 252:

§ 105. Դաս. *ց ջ* = կիլ. *ց ջ*:

Յաւ çav 25-21. 22.24, դաս. *ցաւ. ցորեն* çor'en L. 155-48, դաս. *ցորեան. ցուցնել* çuçnel 9-16. 17, 13-8, 63-25, դաս. *ցուցանել. դրացին* traçin 39-23, դաս. *դրացի*: Այս խմբին են պատկանում նաև անցյալ կատարյալի *ց*-ով կազմվ[ած]ությունները. օր. *գրեցի* kreçi 93-16 դաս. *գրեցի. ծախեցի* jaxeçi 75-18 դաս. *ծախեցի. գրեցաք* kreçak^{c} 25-2 դաս. *գրեցաք. վկայեցին* vgayeçin 29-5 դաս. *վկայեցին* և այլն: Նույնը կարելի է ասել հոգն. սեռ. - տր. *-ց* վերջավորվ[ած]յան մասին:

Ծան. Ադուլիսի բարբառին հատուկ է բառամիջի հին ջ բաղաձայնի փոխարինումը *հ* հնչյունով: Օր. Ադ. mrahal=դաս. *մոռացեալ*, Ադ. məγähäl=դաս. *նեղացեալ*, Ադ. kərdähäl=դաս. *կարդացեալ*, mŕahi անց. կատ. եզ. 1-ին դ.=դաս. *մոռացայ*, Ադ. hivandahi=դաս. *հիւանդացայ*, Ադ. hrähaj=դաս. **հեռացայ* և այլն/հմմտ. Ս. Սարգ. էջ 67, 118, 119/:

Այն փաստը, որ այստեղ մենք գործ ունենք իսկական հնչունական *համապատասխանությ[ան] հետ, և ոչ, ասենք, անցյալ կատարյալի հ-ով կազմվ[ած]յան հետ ց*-ի փոխարեն, ապացուցվում է նրանով, որ հհ. բառամիջի s բաղաձայնին նույնպես Ադուլիսի բարբառում համապատասխանում է հ. օր. Ադ. ahil= դաս. *ասել*, tihnil=դաս. *տեսանել*, նաև բառասկզբում՝ hok «այս» դերանվան մեջ, որ կապված է դաս. *սա* ցուցական դերանվան հետ (հմմտ. Ս. Սարգ, էջ 67):

Դաս. չ ճ կիլիկյան հայերենում

§ 106. *Դաս. չ ճ* = կիլ. *ճ չ*:

Կիլ. *չ ճ* = դաս. *չ, ոչ*, օճ. *չէ* 31-5.23.99, 33-10, դաս. *չէ. չորս* čors 17-23, L. 154-25, դաս. *չորք. աղչեմ* ayčem 41-9, դաս. *աղաչեմ. ճանչել* 25-16, դաս. *ճանաչեմ. ինչ* inč դաս. *ինչ. խաչ* xač 25-19.20, դաս. *խաչ* և այլն[45]:

[45] Նոր հայերենում դասական շնչեղ նրբերին (խուլերին) կամոնավոր ձևով համապատասխանում են նույն շնչեղները, ավելի հազվադեպ և միայն որոշ դեպքերում՝ նրբերը. հմմտ. Han. WZKM 1. 304, Мсер. Муш. диал. էջ 105, 108, 111, 115, 119: Հմմտ. սակայն § 105 Ծան.:

Բ. ՇՓԱԿԱՆՆԵՐ

I. Անճայններ

Դաս. խ x կիլիկյան հայերենում

§ 107. 1. Դաս. *խ* x=կիլ. x *խ*:

Օրինակներ. *խաչ* xač /տե՛ս վերևում/, դաս. *խաչ. խլել* 39-10, 57-20, դաս. *խլել. խաշեմ* xašem **Սմբ**. Ժամ. 611, դաս. *խարշեմ. խմեմ* xmem 33-18. 19, դաս. *խմեմ. խնամուխիւն* xnamutʿün 12-20, 45-56, դաս. *խնամուխիւն. խոզ* Հ. 224-9, դաս. *խոզ. խոստանամ* xostanam, դաս. *խոստանամ. խոստացել* xoxtacʿel անցյալ դերբայ 27-17, դաս. *խոստացեալ. գլուխ* klux սեռ. klxo(kəlxo) «գլուխ. դրամագլուխ» 73-9, դաս. *գլուխ. կանուխ* ganux 71-6.7, դաս. *կանուխ. ուրախ* urax 53-24, դաս. *ուրախ. ծախ* jax, *ծախել* jaxel, դաս. *ծախ, ծախել. վաշխ* vašx 73-6.8, *վաշխառ* vašxaṙ 73-9, դաս. նույնը. *փոխ* pʿox /տե՛ս վերևում/, դաս. *փոխ*:

§ 108. Դաս. *խ x=կիլ. ν վ հետևյալ դեպքերում.*

յիշվէ «ուժի մեջ է» 23-22, 29-25, 39-17=դաս. *իշխէ/իշխեմ* բայի ներկայի 3-րդ դեմք/. *շաղվել* «հունցել» Մխ. Հեր., ԶքՌ և այլն=դաս. *շաղախել*:

§ 109.3. *Դաս խ x=կիլ. ղ γառանձին դեպքերում: Կիլ.* աղալ syal (səγal) 81-14=դաս. *սխալ*, որից կազմված է *սղալանք*, սեռ. - *անաց* **Սմբ**. Ժամանակագրության մեջ /Dul. էջ 606/. *սղալեմ* sγalem(səγalem) 65-27, 67-2, 81-15= դաս. *սխալեմ*: Հմմտ. Բառարանում *զաղալ* zaγal «սխալ»:

Ծան. Նոր հայերենում հհ. x-ն կանոնավոր ձևով ներկայացված է որպես x: Հմմտ. Han. WZKM 2, 292, Мсер. Мушск. диал. էջ 119:

Դաս. հ h կիլիկյան հայերենում:

§ 110.1. Դաս. հ h=կիլ. h հ:

հայր hair 49-11. 29. 35, դաս. *հայր. հինգ* hing, դաս. *հինգ. հին* hin 41-8, 43-10, դաս. *հին. ապա համրեմ* hamrem, դաս. *համարեմ. համբերեմ* hamperem, դաս. *համբերեմ. հասկնալ* hasknal, դաս. *հասկանալ. հանիլ* havnil, դաս. *հաւանել*. վկայուխիւններ տե՛ս Բառարանում. նաև *հիւանդ* hivand 25-14, *հեծնիմ* hejnim, 77-21, դաս. *հեծանիմ. հարույր* haruir L. 178-14.15, դաս. *հարիւր. պահ* bah 11-17, դաս. *պահ. պահել* bahel, 49-3, դաս. *պա-*

հել. *շահ* šah 83-17, սեռ. šahu 83-14, 17, *մահ* mah, սեռ. *մահու* mahu 55-9, դաս. *մահ*, սեռ. *մահու* և այլն:

§ *111.2. Դաս. հ h -ն կարող է անհետանալ կիլիկյան հայերենում հետևյալ դեպքերում.*

ա) Բառասկզբում. կիլ. *աւտալ/ավտալ*/avdal 25-11.15, 63-15, 73-8, 81-7=դաս. *հաւատալ*:

§ 112. բ) *Բառամիջում ր-ից հետո, հոգն. ուղղ. աշխարք* ašxarkᶜ L. 178-9.12, 185-14 *փխ.* դաս. *աշխարհք*: Կիլիկյան աղբյուրներում դրա կողքին դեռևս հանդիպող *աշխարհք* ašxarhk *հ* -ով գրումֆյունը պետք է դիտել որպես զուտ պատմական:

Ծան. հ բաղաձայնի կորուստը կիլիկյան կենդանի ժողովրդական հայերենում /վերջին դեպքում, երևի, նաև *աշխարհ* եզակիի ճևի համար/ հաստատվում է նոր հայերենի տվյալներով: Օրինակ, Մշո բարբառում avtənal, դաս. *հաւատալ*. ašxar (սեռ. ašxəri), դաս. *աշխարհ*. xunar, դաս. *խոնարհ*. šənavᵘor, դաս, *շնորհաւոր* և այլն[46]: - Թիֆլիսի բարբառում[47] նույնպես r բաղաձայնից հետո *հ* -ն կորչում է. ašxar. xonar և xonarutᶜin. xorurtᶜ, դաս. *խորհուրդ*. šnurkᶜ, šnukᶜ, դաս. *շնորհք* և այլն: Ապա բառասկզբում. avtal «հաւատալ». ama, դաս. *համար*, Տաճկ. *համար*: Համապատասխանաբար, Լեհ. ունի *հ*-ի կորստով. ašxarkᶜ Han. 30, xonar /դաս. *խոնարհ*/ և xonarutᶜin Han. 69, նաև Նխ. ašxarkᶜə (Патк. Мат. 125) և այլն: - Վերջապես, նոր բարբառներում x-ն կարող է զուգորդվել *հ*-ի հետ: Օր., Թ-Ֆ[48]. xuγ և huγ=դաս. *հոգ*. xaγurtᶜ և haγurtᶜ, xaγortᶜil և haγortᶜil=դաս. *հաղորդել*. այսինքն՝ բառասկզբի կոկորդային *հ* հաջորդող փափուկ կոկորդային չփականին: Ջուղայի բարբառում x հնչյունը բառասկզբի հին *հ*-ի կանոնավոր համապատասխանումֆյունն է: Օրինակ. Ջղ. xay, դաս. *հայ*. xaç, դաս. *հայ*. xēr, դաս. *հայր*. xet, դաս. *հետ*. xin, դաս. *հին*. xaštel, դաս. *հաշտել*: Համմտ. Патк. Диал. էջ 82:

---

[46] Мсер. Муш. диал. էջ 138:

[47] Том. Тифл. диал. էջ 71, 72, § 169:

[48] Том. Тифл. диал. էջ 72, § 170:

Դաս. շ š և ս s կիլիկյան հայերենում

§ 113. *Դաս. շ* š=կիլ. š *շ*:

ա) Բառասկզբում. *շահ* šah 83-17, դաս. *շահ. շէն* šęn 49-3, դաս. *շէն. շուտ* šud. **Մխ. Հեր.** 37, 141, դաս. *շոյտ. շինել* šinel 33-17, դաս. *շինել* և այլն:

բ) Բառամիջում և բառավերջում. *նշան* nšan 9-16, 33-4, դաս. *նշան. քաշեմ* Հ. 214-42, 222-26, դաս. *քարշեմ. քշտեմ* k^{c}štem 31-2.4.12., 61-9, դաս. *քշտեմ* և այլն:

§ 114. *Դաս. ս* s=կիլ s *ս*:

ա) Բառասկզբում. *սուր* sur «արագ, իսկույն» 13-13, դաս. *սուր. սեւ* s^{j}ev /հմմտ. Բառարանը/, դաս. *սեաւ. սնդուկ* sndug /հմմտ. Բառարանը/, դաս. *սնդուկ. սպաննեմ* spannem /հմմտ. Բառարանը/, դաս. *սպանանեմ* և այլն:

բ) Բառամիջում. *ասել* asel 13-12.17, դաս. *ասել. լսել* lsel, 13-20, դաս. *լսել. հասկնալ* hasknal 9-13, դաս. *հասկանալ. հասնիլ* hasnil 19-8, 55-5, դաս. *հասանել. հասոյթք* hasuit^{c}k^{c} 21-3, 47-24, դաս. *հասոյթք* և այլն:

գ) Բառավերջում. *այս* ais, դերանվանական ածանց *-ս, -s=* դաս. *այս, -ս. ես* yes/ անճնական դերանուն/ 41-7, 8.21.23, դաս. *ես.* եզ. հայց. *զիս* 41-8, դաս. *զիս.* ներկայի *-ս* վերջավորությամբ 2-րդ դ. ճևը՝ *գաս* gas, 13-13, դաս. *գաս. առնուս* aŕnus, 13-14, դաս. *առնուս* և այլն:

Ծան. Նոր հայերենում նույնպես s, š հին հայերեն s, š բաղաձայնների կանոնավոր համապատասխանություն են հանդիսանում: Հմմտ. WZKM 2, 130f, 290f, Мсер. Мушек. диал. ԷՀ 122. *հաջ*: - Տաճկ. zaz=դաս. *շարժ* բառում բառասկզբի կոշտ շփականն առնմանվել է բառավերջի փափուկ շփականին: Հմմտ. նաև Том. Тифл. диал., § 164. Ադ. հ=դաս. *յ* համապատասխանության մասին հմմտ. վերևում՝ § 105 Ծան.:

II. *Զայնեղներ*

Դաս. ժ ž և զ z կիլիկյան հայերենում

§ 115. *Դաս. ժ ž* =կիլ. *ž ժ*:

ժամ žam 11-19, 25-21, 31-22, դաս. *ժամ. բաժնիմ* pažnim «հեռանում եմ» 13-6, 15-11, դաս. *բաժանիմ. բաժին* pažin 41-7, դաս. *բաժին. ժողվեմ* žoγvem 13-7, 15-15, 35-15, դաս. *ժողովեմ. ուժ* už «ուժ, բռնություն» 27-4.12.18, 29-10, 37-7, դաս. *ոյժ* և այլն:

§ 116. *Դաս. զ z=կիլ. z զ:*

Կիլ. զ z /հայկականի նախնամանիկ/= դաս. *զ. զատ* zad. *զատեմ* zadem «ազատ, ազատում եմ» 49-28, դաս. *զատ, զատեմ. զեն* z'en. *վզեն* vz'en «վնաս» 73-18, 81-23, դաս. *վզեան. ազատ* azad 21-13, դաս. *ազատ. հազար* hazar 71-3, դաս. *հազար. լեզու* lezu 15-7, դաս. *լեզու. մեզ* m'ez, *ձեզ* c'ez, *քեզ* k'ez, դաս. *մեզ, ձեզ, քեզ* և այլն:

Ծան. Նոր հայերենում նույնպես հին z-ն և ž-ն մեծ մասամբ պահպանվել են: Սակայն կան նաև բացառություններ. օր., Մշո բարբառում (Мсер., էջ 124) ask փխ. դաս. *ազգ.* anskam, փխ. դաս. *անզգամ.* patič փխ. դաս. *պատիժ.* varčatun, փխ. դաս. *վարժատուն* (Мсер., էջ 124), ճայնեղ շփականի խլացումը պայմանավորված է հարևան նուրբ (խուլ) բաղաճայնով:

Դաս. յ y և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 117. *Բառասկզբի դաս. յ* y =կիլ. *յ՝ հ* հնչյունական արժեքով - նույնը նաև նոր հայերենում - տե՛ս § 23:

Օրինակներ. կիլ. *յեմ* h'em «հապաղում, ուշացում» 33-9, դաս. *յամ. յեմեմ* hemem «հապաղում եմ, ուշանում եմ» 15-2, 23-19, դաս. *յամեմ. յայտնի* haidni 59-8, դաս. *յայտնի. յառաջ* haŕač, 29-7, դաս. *յառաջ. յաւելնամ* havelnam «ավելանալ» 45-19, դաս. *յաւելում. յաւիտեն* havid'en Սարվ. արտ., դաս. *յաւիտեան. յետ* h'ed՝ *ի յետ* «հետև, հետևում» կապակցությունյան մեջ, 47-3.4, դաս. *յետ. յետի* hedi «վերջին» 39-1, 47-11.17, դաս. *յետին. յոյզ* huiz «վեճ, վեճի առարկա» 13-30, 59-26, դաս. *յոյզ*: Նաև *յիսուն* hisun, դաս. *յիսուն. յիստակ* histag Զքբ 160, Գիրք վաստ., Մխ. Հեր., դաս. *յստակ*: *Յղղարկեմ* həyargem «ուղարկում եմ» ճևի կողքին երևան է գալիս արդեն ղրկեմ əγərgem (xərgem) ճևը՝ անհայտացած հագագայինով /25-17/:

Ծան. Ավելի հաճախված է *յ*-ից առաջացած հագագայինի կորուստը նոր հայերենում: Օրինակ. Մշ. ənkn'er, Տաճկ. ənk'vəner= դաս. *յանք.* Մշ. oyork'el=դաս. *յուղարկել.* Լեհ. istak=դաս. *յստակ*, Լեհ. isun=դաս. *յիսուն* և այլն:

§ 118.2. Բառավերջի դաս. *յ* y-ն դուրս էր ընկել արդեն նախակիլիկյան շրջանում: Ավելի մանրամասն տե՛ս § 63.1 և § 68, 1:

3. Դաս. *յ* y բառամիջում ճայնավորներից առաջ=կիլ. y *յ*, ըստ § 8բ և § 9 բ:

Օրինակներ. *ծառայեն* jařayen, դաս. *ծառայեն. ծառայենք* jařayenkᶜ 53-23, դաս. *ծառայենք. հայոյ* hayoç 13-6, դաս. *հայոյ. տղայոյ* dγayoç 53-1, դաս. *տղայոյ. վկայել* vgayel 47-1, դաս. *վկայել. վկայուլիւն* vgayutᶜün 29-25, դաս. *վկայուլիւն* և այլն:

§ 119.4. Դաս. *յ* y-ն բառամիջում ձայնավորներից առաջ և *ա*-ի հետ երկբարբառային կապակցություններում անհետացել է a հնչյունի հետ միասին հետևյալ բառերում. *ծառուլիւն* jařutᶜün 9-14, 13-29, 15-1, 19-11. 20, 37-4, Հ. 206-17. 18. Հ. 212 - 5=դաս. *ծառայուլիւն* cařayutᶜiun. կիլ. *համեմ* hamem «հրամայում եմ» 33-8, 39-11=դաս. *հրամայեմ* hramayem:

Ծան. հմմտ. Տաճկ. dəγu (dəγa գոյականի եզ. սեռ.)=դաս. *տղայոյ.* հոգն. սեռ. dəγoç=դաս. *տղայոյ.* pᶜesi /pᶜesa գոյականի եզ. սեռ./=դաս. *փեսայի.* ǰampu (ǰampa գոյականի եզ. սեռ.)=դաս. *ճանապարհի.* Այտ. Բ, էջ 19 և 273:

Դաս. վ v, ւ v, ու v և նրանց համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 120.1. Դաս. *վ* v =կիլ. v *վ* ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում ու բառավերջում:

ա) Բառասկզբում. կիլ. *վաղ* vaγ «առավոտ» 79-2, դաս. *վաղ. վեր* vʲer 39-12, դաս. *վեր. վերայ* vera «վրա, դեմ» 27-2.3, 35-12, դաս. *վերայ. վճար* vǰar 41-11.18, դաս. *վճար. վճարեմ* vǰarem 41-5, դաս. *վճարեմ. վեց* vʲeç L. 157-14, դաս. *վեց. վերջի* verči 39-4, դաս. *վերջին. վերչնեմ* verçnem «բարձրացնում եմ» 39-11, դաս. *վերացուցանեմ* և այլն:

բ) Բառամիջում ու բառավերջում *ո* o ձայնավորից հետո, որը մասամբ դուրս է ընկնում. *ժողվեմ* žoγvem 13-7, 15-15, դաս. *ժողովեմ. ծովու* jovu եզ. սեռ. 71-8, դաս. *ծովու. ծով* jov Անս. Անտ., դաս. *ծով. - ով* -ov վերջավորությունը եզ. գործիականի ձևը=դաս. -ov *-ով.* օր. կիլ. *կռվով* gʲrvov /ուղղ. *կռիւ/* 33-14. *հաւատով* havadov /ուղղ. *հաւատ/* 9-10. *ուժով* užov /ուղղ. *ուժ/* 57-20, 67-20. *շղով* šγov /ուղղ. *շուղ/* 35-5. *ծովով* jovov /ուղղ. *ծով/* L. 155-19 և այլն;

§ 121.2. Դաս. ւ v=կիլ. v/ւ և *վ/*:

ա) Բառամիջում ձայնավորներից հետո, որոնք կարող են դուրս ընկնել. *աւետարան* avedaran 39-24, դաս. *աւետարան. աւտամ, ավտամ* avdam 25-15, 63-15, դաս. *հաւատամ. թաքւոր* takvor L. 179-2 դաս. *թաքաւոր. ճիաւոր*

ciavor[49] «սպասեմ» 17-25, դաս. *ճիաւոր. հիւանդ* 25-13.15, դաս. *հիւանդ. նաւերոյ* navero L. 156-8 /դաս. *նաւ*, սեռ. *նաւու* գոյականի հոգն. սեռ./:

բ) Բառավերջում ճայնավորներից հետո. *յաւ* çav 25-21. 22, դաս. *յաւ. հալաւ* halav Հ 221-18, դաս. *հալաւ. կտաւ* gdav 85-1, դաս. *կտաւ. սեւ* s^{i}ev **ԶգՔ ԷՀ** 149, 152, դաս. *սեաւ*, առջեւ arč^{i}ev 41-5.23, դաս. *առաջեաւ*. անկ. կատարյալի եզ. 3-րդ դ. *-աւ* վերջավորությունը=դաս. *-աւ. հագաւ* hakav 29-18, 31-7, 35-1, *տարաւ* darav 13-12, *փրթաւ* p^{c}rt^{c}av 63-13 «ազատվեց» և այլն:

§ 122.3. Դաս. *ու* v=կիլ. v/*ու, վ, ւ*/ բառամիջում բաղաճայնից հետո և ճայնավորից առաջ: Օրինակներ. *թվենալ* t^{c}venal «թվալ» 79-3, դաս. *թուի* «թվում է». *կռվիլ* gṙvil 33-8, 35-23, դաս. *կռուել. աստուած* astvaj 31-23, դաս. *աստուած* և այլն:

§ 123. Հավելված 1. Նախնական v-ն կիլիկյան հայերենում կորչում է հետևյալ դեպքերում.

դժար tžar /təžar/ Հարանց վարք, ԶգՔ 155, 156, Մխ. Հեր. ԷՀ 51, 53, 54, 99 և այլն=դաս. *դժուար* džvar:

Հմմտ. Լեհ. tižar «դժվար», Han. ԷՀ 117:

§ 124. Հավելված 2. Հին v-ն առանձին դեպքերում նախորդող շնչեղների ազդեցությամբ դառնում է f: Այս դեպքում շնչեղների հագագը միանում է v-ին, կազմելով *hv կապակցությունը, իսկ վերջինս դառնում է f, ինչպես նոր հայերենում:

Այսպես հին *ինչուի, ինչվի* inčvi ձևերի կողքին ունենք նաև *ինչֆի* /Սարվ. արտ. Հ. 258-26/: Կիլ. *թագւոր, թագվոր* բառը նախնական միջակ v շփականի կոշտացումով արտասանվում էր որպես t^{c}akfor/<*t^{c}akhvor/, ինչպես ցույց են տալիս կիլիկյան հայերենից կատարված փոխառությունները. օրինակ. takfol կամ Tacfol Վիլլեբրանդի ուղևորության մեջ /հմմտ. Բառաբանը/ արաբ. takfūr, takafūr, takfūrya:

---

[49] Ջուղայի նհ. բարբառին հատուկ է -ayor բառակազմական վերջածանցը, որ համապատասխանում է հհ. *-աւոր* վերջածանցին. mecayor /=դաս. *մեծաւոր*/, gəlxayor/=դաս. *գլխաւոր*/, mardayorut^{c}iun /=դաս. *մարդաւորութիւն*/ և այլն: Հմմտ. Патк. Диал. 82:

Դաս. r և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 125. Ինչպես հայտնի է, հնդեվրոպական r բաղաձայնը կորել է դաս. *տեսանեմ* ձևի մեջ /փոխանակ* *տերսանեմ*/. հմմտ. հուն. δερομαι, έδραχον, δέδορχα, սկր. dadárça, զդ. dādarəsa /Arm. Gramm. II, 497/: Դրանից բացի, հին հայերենում r հնչյունը դուրս է ընկնում հետևյալ դեպքերում, ո-րոնցում r հնչյունը կորցրած նոր ձևերի կողքին առկա են r-ով հին ձևերը.

մահ և *մարհ* /Եփրեմ Գ, էջ 20/, սկր. mrtyú-, զդ. mərəθyu- «մահ». *պահ* և *պարհ* /Եփրեմ Գ, էջ 17/, զդ. pāθra «պաշտպանություն», պհլ. pāhr. *պահել* և *պարհել*. *խոհ* *իրաւախոհ* բառում և կողքին *իրաւախորհ*. *խոհուրդ*/ Ավետարանի մի ձեռագրի մեջ, Մեր., էջ 137/ և *խորհուրդ*[50] *բազ* և *բարշ* /ԺԳ և ԺԴ դարեր/, զդ. barəša «մեջք» (Arm. Gramm., էջ 118). *աշալուշ* «արշալույս» *արշալուս*, *արշալուրշ* և այլ ձևերի կողքին[51]: Հին ձեռագրերը դեռևս ունեն *r*: Ե դարի *րհ*-ը և *րշ*-ը հետագայում դառնում են *հ* և *շ* /*r*-ի կորստով/:

Ուշ դասական շրջանում երևան են գալիս նաև. *ջալաց* čalac «ջաղաց»=դաս. *ջրալաց* /**ջուր-ալաց*/. *ջորդան* čortan «փողրակ» Գիրք վաստ. ավելի հին *ջրորդան*/= *ջուր-որդան*/ ձևի կողքին. *քաշել* «քաշել, չարչարել» Եփրեմի մոտ ավելի հին *քարշել* ձևի կողքին և այլն:

Նույն երևույթի հետ կապված և որպես նրա շարունակություն, ավելի մեծ մասշտաբով կիլիկյան հայերենը կորցնում է նախնական r բաղաձայնը հետևյալ կապակցություններում.

§ 126. ա) Դաս. *հր* hr=կիլ. հ h:

Կիլ. *համեմ* «հրամայում եմ» 33-8, 39-11, 41-9, 13-7.10, L. 178-7, L. 179-4, L. 185-17. 18=դաս. *հրամայեմ*. կիլ. *համանք* «հրաման, արտոնություն» 19-10, 33-3-3.4, 35-2, 53-25, 77-17, 79-11, L. 178-16, L. 179-2, L. 185-9, 19, 20, L. 186-4, սեռ. *համնայ*, L.185-19=դաս. *հրամանք*, եզ. *հրա-*

---

[50] Նույն ձևով կարելի է *խոհ* xoh, xah «ուսելիք» բխեցնել ավելի հին *xorh, *xarh ձևից=զդ. x'arəθa - «ուսելիք» (Arm. Gramm. I, էջ 160):

[51] Դրան հակառակ, երկրորդական ներմուծված r կարելի է նկատել հետևյալ բառերում. դաս. *բարժին*, *բարժանեմ*, Եփրեմ Բ, 2.8-9 *բաժին*, *բաժանեմ* ձևերի կողքին. *յաւերժ* *յաւէժ* ձևի կողքին, *վիրժել* *վիժել* ձևի կողքին. *տուրժ* *տոյժ* ձևի կողքին. *դարշոյն* *դաշոյն* ձևի կողքին. *հարշել* *հաշել* ձևի կողքին. *մարշել* *մաշել* ձևի կողքին. *պարշար* *պաշար* ձևի կողքին. *պարշարել* *պաշարել* ձևի կողքին. *որջիլ* *ոջիլ* ձևի կողքին:

նման, անհամանք «առանց հրամանի» 13-21=դաս. **անհրամանք*. *հաւէրք* haverk^{c} «վաստակի հրավիրում ծառայությունն անելու համար» 9-14=դաս. *հրաւէր*, հոգն. *հրաւէրք*. *անհաւէրք* anhav̲erk^{c} «անկոչ, չհրավիրված» 15-1=դաս. *անհրաւէր* «թշնամական, չհրավիրող. չհրավիրված»:

§127. բ) Դաս. *րհ* rh=կիլ. *հ* h:

Կիլ. *ճանապահ, ճանբահ, ճանփահ* janpah 25-6, Հ. 217-4, Հ. 221-34, 222-19, Սարվ. արտ.=դաս. *ճանապարհ*. կիլ. *դահ* tah «ծեր» 21-19, Գիրք վաստ. 243= դաս.**դարհ*:

§128. գ) Դաս. *րշ* rš=կիլ. *շ* š:

Կիլ. *խաշեմ* xašem Սմբ. Ժամ. Dul. Էջ 611,622= դաս. *խարշեմ*. կիլ. *քաշեմ* k^{c}ašem, Հ. 214-42, 222-26=դաս. *քարշեմ*. կիլ. *քաշանք* kašank «դաժան վարմունք. չարչարանք» 61-6.11=դաս. *քարշանք*. *թօշնիմ* «թառամում եմ», Գիրք վաստ.=դաս. *թարշամիմ*:

§ 129. դ) Դաս. *րժ* rž=կիլ. *ժ* ž:

Կիլ. *աժեմ* կամ *այժեմ* 11-22.27, 73-16, Գիրք վաստ. 68-7= դաս. *արժեմ* /նույն տեղը/:

Այստեղից հետևյալ կազմությունները. *աժենամ* aženam, *այժենամ* aiženam 29-6, 59-34.35, 73-20, Հ. 213-17, Հ. 225-8. *աժէք* až̲ek^{c}, գործ. *աժեօք* až̲eo̲k^{c}, Հ. 220-43= դաս. *արժէք*:

§ 130. ե) Դաս. *րբ* rb=կիլ. *փ* p^{c} /շնչեղայնման մասին հմմտ. §99 վերևում/: Կիլ. *եփ* yep^{c} 19-20, 59-6, L. 156-14, Հ. 218-8=դաս. *երբ*. կիլ. *սուփ /սուբ/* sup^{c}, հմմտ. Բառարանը=դաս *սուրբ*:

§ 131. զ) Դաս. *րդ* rd= կիլ. t(t^{c}) *դ. տ. թ*:

Կիլ. *զէդ, զէտ* zet (ըստ երևույթին, արտասանվել է=ze̲t^{c}) 33-1.16, 35-5, 41-23, 47-22, 51-5, 57-16, 59-13,.30, 67-11.13, 69-2, 73-12, 35-18, 45-23, 59-21,= դաս. *զիարդ*, /ինչնորդ ձևն է հետադաս. *զերթ* /զերդ/ zert^{c}:

§ 132. է) Դաս. *րգ* rg =կիլ. *գ. կ, ք* k(k^{c}):

Կիլ. *դգալ, դքալ* tk^{c}al/tək^{c}al «դդալ» հմմտ. Բառ.=դաս. *դրգալ, տարգալ*, ապա *ր*-ն կորչում է *ք*-ից առաջ հետևյալ բառերում. *նեկսէ ընդ նեկսէ* «ընթացքում» կապակցության մեջ, Սարվ. արտ. Հ. 258=դաս. *ընդ ներքսէ* «ընթացքում». *խամճեկ* «ծնոտ» Ջգբ 154=ուշ դաս. *խամճերք*: *Հմմտ. նաև*

սպկիկ spəgig /կամ spəgik/ «մաքուր» 11-9, 67-1, փխ ավելի հին *սպրկիկ* 59-23 *Այնեմ<առնեմ* ձևի մասին տե՛ս ստորև § 135

*Ծան*1 Առանձին դեպքերում դեռևս հանդիպող *բ*-ով ձևերը, ինչպես՝ *հրաւիրեմ / հաւէրք* ձևի կողքին/, *հրամանք / համանք* ձևի կողքին/, բնականաբար, ենթակայական են միայն *գրավոր լեզվի մեջ* և վաղուց խորթ են դարձել *կենդանի ժողովրդական լեզվին*

Ծան 2 Նոր հայերենում հնչյունական այդ տեղաշարժն առաջ է գնում մինչև այն աստիճանը, որ առհասարակ r բաղաձայնը կորչում է շնչեղ պայթականներից կամ h, š, ž շփականներից, ավելի հազվադեպ -s շփականից առաջ

Հմմտ տաճկահայերենի համար Այտ Բ, էջ 278, լեհահայերենի համար -Han, WZKM 2, էջ 307, Մշ Мсер էջ 130, Ախ Том էջ 21, Թֆ Том էջ 75 և այլն

§ 133 Մնացած բոլոր դեպքերում, այսինքն՝ դեպքերի մեծ մասի մեջ դաս *բ* r=կիլ r *բ* բառամիջում ու բառավերջում, հատկապես ձայնավորներից հետո, հետևյալ կապակցություններում

Կիլ *ար* ar՝ կիլ *արծաթ* arjat^{c} 81-14, դաս *արծաթ արդար* artar 67-17. դաս *արդար օտար* odar 21-9, 33-23, 63-4, դաս *աւտար արգելեմ, արգիլեմ*, arkelem, arkilem 25-25, 41-9, 11-20, դաս *արգելուլ արիանալ*, arianal «զգուշ լինել» Հ 223-27, դաս *արիանալ արծկեմ* arjgem 77-4, դաս արճակեմ արծող arjoγ «հովիվ» Հ 223-21, դաս *արաճող պարտ* bard 9-5, դաս *պարտ պարտք* bartk^{c} 71-19, դաս *պարտք տարի* dari 11-4, դաս *տարի. կարգեմ* garkem 19-27, դաս *կարգեմ կարեմ* garem 73-11, դաս *կարեմ*, որից ածանցավոր ձև *կարենամ* garenam 73-9.

Կիլ *եր* er՝ *երկիր* ergir 39-8, դաս *երկիր երկու* ergu 25-13, 35-15, դաս *երկու երդնում* ertnum 11-3 8 9, դաս *երդնում երեւնամ* erevnam 65-20, դաս *երեւանամ բերեմ* perem 21-19, դաս *բերեմ ծեր* j'er 39-23, դաս *ծեր ընկեր* əng'er 31-4, դաս *ընկեր*

Կիլ *որ* or՝ *որ* vor, դաս *որ* or. *որբ* vorp 51-9, դաս *որբ* orb. որդի orti 93-30, դաս *որդի* ordı. *չորս* čors 17-23, դաս *չորք կորսնեմ* gorsnem 63-10, դաս *կորուսանեմ կորեն* cor'en L. 155-18, դաս *կորեան*

Կիլ *իր* ir՝ *իրիկուն* ırıgun 27-14, դաս *երեկուն. իրեք* ir'ek^{c} /տե՛ս Բառարանը/, դաս *երեք իրկունք* ırgunk^{c} «չարչարանք» Հ 216-22, դաս *երկունք իրար* ırar 3-5, 27-20, դաս *իրեար իր* ır դաս *իւր* Հմմտ Ջևաք

Կիլ *ուր* ur՝ որ *ուրախ* urax 53-24, դաս *ուրախ սուր* sur «շտապող», դաս *սուր սուրբ* surp 93-15, դաս *սուրբ*

Կիլ ər՝ օր *ղրկել* əγərgel 25-17, դաս *յուղարկել փրկիչ* pᶜərtᶜav 63-13, դաս *փրկանիմ* և այլն

Մենք ավելի հաղվադեպ ենք հանդիպում *ր* բաղաձայնին բառամիջում և բառավերջում բաղաձայններից հետո, հատկապես ձայնեղներից հետո, օր *ապրիմ* abrim 9-8.9, դաս *ապրիմ կոտրեմ* godrem Հ 223-34, դաս *կոտրեմ մանդր, մանտր* mandr ՁգԲ 148, դաս *մանր* Նաև խուլ բաղաձայնից հետո, օրինակ *ղրակին* traçın «հարևան» 39-23, դաս *ղրակին*

Դաս n ĭ և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 134 1 Դաս *n* ĭ=կիլ *n* ĭ միայն բառամիջում ու բառավերջում ա) Բառամիջում *առջի* arči 25-11, դաս *առաջին/ս/ առանց* aranç 13-6.26, դաս *առանց առնուլ* arnul 13-14, դաս *առնուլ, ծառուլիին* jarutᶜün 9-14, դաս *ծառայուլիին մեռնիմ* meṙnim 9-8, դաս *մեռանիմ, մոռնամ* moṙnam Հ 224-13, դաս *մոռանամ կռիւ* gṙiv 29-5, 31-6, դաս *կռիւ*

բ) Բառավերջում *ծառ* jar /Գիրք վասո /, դաս *ծառ առ/առնուլ-* բայի հրամայականը, տե՛ս Ձևաբ / և այլն

§ 135 2 Դաս *n* ĭ-ն կորչում է *ն*-ից առաջ հետևյալ դեպքերում *առնեմ* arnem=կիլ *այնեմ* Վկայուլիյուններ *այնել* ainel անորոշ դերբայ 21-1 11 13, L. 186-7, *այնեմ* ainem եզ ներկայի I դ 21-26 *այնես* aines եզ ներկայի II դ 15-19, 43-7 *այնէ* ainը եզ ներկայի III դ 13-10 19 31, 15-9, 31-8, 33-25, 35-3 14/հմմտ Բառարանը/ նաև *այնելիք* ainelikᶜ 15-7 «անելու ձև» 15-7, դաս *առնելիք*

Միջին հայերեն հնագույն ձևը պահպանված է Մխիթար Հերացու մոտ *այրնել* airnel /*այրնես* էջ 84, 99, 102, *այրնէ* էջ 88, 94, 101, 106, *այրնեն* էջ 12, 101 և այլն/, որ առաջացել է *առնել* ձևից նախ *n* բաղաձայնի տարրալուծումով այն դարձել է **արրնել*, հետո առաջին *ր*-ն դուրս է ընկել, իսկ *ա* a ձայնավորը երկարացել է դառնալով *այ* ai/§38/ Այդ վաղ միջին հայերեն *այրնել* ձևից *ր* բաղաձայնի կորստից հետո առաջացել է կիլիկյան *այնել*

Ընդհանրապես հին *ռն* կապակցությունը կիլիկյան հայերենում, ինչպես նաև նոր հայերենում, լավ պահպանվել է, օր կիլ *առնուլ* arnul=դաս *առնուլ* Բանն այն է, որ այստեղ *n* բաղաձայնը ստուգաբանական առումով արդարացված է սակայն ինչ վերաբերում է *առնել* բային, այդտեղ *n*-ն նախնական *ր* r-ի ներկայացուցիչն է, քանի որ *առնել=*ար-նել/* անց կատ *ար-ար-ի*, իսկ *առնուլ* բայի համապատասխան ձևն է *առ-ի/*

Ծան այնել ձևը /ավելի նոր ձևը՝ *անել*/ այդ բայի նոր հայերենում գործածվող ձևերի հիմնական աղբյուրն է /հմմտ Բառարանը/

Դաս ղ ւ և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 136 1 *Դաս ղ ւ=կիլ. ղ՝ γ հնչյունական արժեքով, ըստ § 22, բառամիջում և բառավերջում*

ա) Բառամիջում՝ ձայնավորներից ու ձայնեղ բաղաձայններից առաջ *տղա dγa* «երեխա» 37-14 16 17, դաս tłay *թողում* tᶜoγum «թողնում եմ» 81-17, դաս tᶜołum *գողամ* koγnam «գողանում եմ» 65-8, դաս gołanam. *աջողնամ* «առողջանում եմ» 65-23, դաս yaǰołanam *յղղարկեմ* həγargem «ուղարկում եմ» L. 156-22, դաս yułarkem. *ի վաղէ* i vaγe 39-18, դաս i vałę /*վաղ* գոյականի բացառականը/ *քաղաք* kᶜaγakᶜ 83-25; դաս kᶜałakᶜ *մատղաշ* madγaš, *մատղաշչեմ* madγašçnem 17-25, դաս matał:

Սակայն խուլ բաղաձայններից առաջ նույնպես, օրինակ *աղբայր* aγpair /հմմտ Բառարանը/, դաս ełbair *աղքատ* aγkᶜad, դաս ałkᶜat. *մեղք* mˈeγkᶜ, դաս mełkᶜ. *աղջկին* aγčgin 19-5, դաս ałǰik և այլն:

բ) Բառավերջում *թող* tᶜoγ 41-9.10, դաս tᶜoł. *գող* koγ 65-4.6, դաս goł *գող* kˈeγ «գյուղ» Հ 218-25, դաս giuł. *վաղ* vaγ «առավոտ» 79-2, դաս vał. *տեղ* dˈeγ 19-25, 39-13, 47-27, դաս teł *ըղուղ* əγuγ «ուղեղ» Զգբ 154, դաս ułeł, ułiuł և այլն

§ 137 2 Բառամիջում խուլ բաղաձայններից առաջ նոր հայերենում γ /ղ/ միջակը (ձայնեղը) սովորաբար խլանում է՝ դառնալով x /խ/ Արդեն կիլիկյան հայերենում կարելի է դտնել այս երևույթի սկզբնավորման հետևյալ դեպքերը *թուխթ* tᶜuxtᶜ[52] 39-15, 47-28, 59-2, Սարվ. արտ, L. 156-28=դաս *թուղթ* tᶜułtᶜ, ուշ դասական tᶜuγtᶜ. *թախթ* tᶜaxtᶜ «թաղ» /բուսաբ/ Զգբ 159=դաս *թաղթ* tᶜałtᶜ, ուշ դաս tᶜaγtᶜ:

Ծան Կիլիկյան հայերենում դեռևս թուլլ և անկանոն ձևով արտահայտված երևույթը նոր հայերենում դարձել է օրինաչափ այսպես, Թիֆլիսի բարբառում հին γk, γč, γt, γc, γp, γç, γkᶜ, γtᶜ, γç կապակցություններին կանոնավոր ձևով համապատասխանում են xk, xč, xt, xc, xp, xç, xkᶜ, xt, xç և xc Նույն վիճակն է Ադուլիսի /Ա Սարգ էջ 66/, Մշո /Mcep. էջ 133/, լեհահայ /Han. WZKM 2, 293/ և այլ բարբառներում Դրանից բացի, բառավերջում, ինչպես նաև այն դեպքերում, երբ բառամիջի γ-ն տեղափոխվում է

[52] Մի դեպքում Անս Անտ 39-19/կարելի է դտնել նաև *թուղթ* tᶜuγtᶜ ձևը/

բառավերջի ճայնավորի անկման պատճառով, γ միջակ (ճայնեղ) բաղաճայնը խլանում է՝ դառնալով x Այդպես է Լեհ /WZKM 2, 293/

Դաս լ l և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 138 Դաս *լ* l= կիլ l *լ* բառասկզբում, բառամիջում և բառավերջում

Օրինակներ *լսել* lsel 15-20, դաս *լսել լեզու* lezu 15-7, դաս *լեզու լինիլ, լիննալ* linil, linnal 15-10, 21-15, 25-6, դաս *լինել եկնել* elnel 13-6, դաս *եկանել այլ* ail 15-2, 23-19, 25-1, 27-8, դաս *այլ* և այլն

Սրան է վերաբերում նաև անորոշ դերբայի, ինչպես նաև *-ել* 'el=դաս *-եալ* վերջավորությամբ բառավերջի l-ն

Ծան Նոր հայերենում նույնպես հին l բաղաճայնը հիմնականում պահպանվել է Միայն արևմտահայ շատ բարբառներ - 'el վերջավորությամբ վաղակատար դերբայի փոխարեն ունեն - 'er վերջավորությամբ համապատասխան դերբայ Սակայն այստեղ նույնպես հհ *լ>ր* անցումը միայն *թվայող* է, ինչպես դա ավելի մանրամասնորեն շարադրված է ձևաբանության բաժնում Հմմտ նաև Мсер Муш диал էջ 128, Han WZKM 3, էջ 38 f, Том, Тифл диал էջ 75 և այլն

Դ ՌՆԴԱՅԻՆՆԵՐ

Դաս ն n և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 139 1 Դաս *ն* n=կիլ n *ն*

ա) Բառասկզբում *նա* na «ապա, ահա» 13-9, 75-12, դաս *նա նաւ* nav 156-8, դաս *նաւ նման* nman 65-12 14, դաս *նման նշան* nšan 9-16, դաս *նշան նոր* nor 47-11 30, դաս *նոր* և այլն

բ) Բառամիջում *անուն* anun[53] 11-25, 13-8, դաս *անուն կանուխ* ganux 71-6, դաս *կանուխ քանի* k'ani 11-22, դաս *քանի զինի* kini L. 155-2, դաս *զինի շինել* šinel 47-11, դաս *շինել* և այլն

---

[53] Ընդհանուր նոր հայերեն այս ձևի փոխարեն Ղարաբաղի բարբառում (Нагк Диал 66) բայաոուվթյան կարգով երևան են գալիս m-ով ձևերը anam, anum, anəm որոնք չեն ծագում հհ *անուն* ձևից ավելի շուտ դրանք առաջ են եկել ավելի հին *anamn, *anumn *anəmn ձևերից, որոնց մեջ նոր հայերենում բառավերջի n բաղաճայնը պետք է դուրս ընկներ, և իրենց կողմից ենթադրելին նախահայերեն մի *anmǫ կամ anomǫ, որից մեկ ուրիշ հնչյունափոխության շնորհիվ պետք է առաջանար ընդհանուր հայերեն *անուն*

գ) Բառավերջում, հատկապես ձայնավորից հետո. *տուն* dun 11-7, դաս. *տուն. իրիկուն* irigun 27-14.16, դաս. *երեկոյն. հին* hin 41-8, դաս. *հին. կին* gin 17-10, դաս. *կին. ձին* kin 83-26, դաս. kin. *բան* pan 13-32, դաս. *բան. տան* dan /ուղղ. *տուն*/71-13, դաս. *տան. քսան* k^{c}san L. 157-16, 19.20, դաս. *քսան. այն* ain 9-17, 23, 13-8, դաս. *այն. երկայն* ergain 85-3, դաս. *երկայն* և այլն[54]:

§ 140. Դաս. *-ն -n*-ն բառամիջում բաղաձայնից հետո կիլիկյան հայերենում դուրս է ընկնում հետևյալ դեպքերում. *ինք* ink «ինքը» 3-րդ դ. անձնական դերանուն 17-25, 29-24, 47-3.21,49-15, 55-18, 59-30, 61-21, 69-3.24, 71-13, 75-9=դաս. *ինքն. անձ* anj՝ *զիս անձս* 31-23, 33-12= դաս. *անձն. ձեռ* c^{i}er՝ *զ-ձեռ-դ* ԶզՔ 145= դաս. *ձեռն. ելունդ* elund «զրուսնուկ»=դաս. *ելունդն*: Ն բաղաձայնի կորստի ուրիշ ակնհայտ դեպքեր ինձ հայտնի չեն: *Սակայն չափազանց մեծ համարձակություն չի լինի ընդունել, որ բառավերջի n հնչյունը բաղաձայնից հետո կորել էր արդեն կիլիկյան հայերենում: Ի* նկատի ունենալով այդ հնչյունի կորուստը՝ հիշյալ դասին պատկանող որոշ գոյականներ «Ձևաբանություն» բաժնում բերվում են առանց բառավերջի *n* բաղաձայնի:

Ծան. Ինչպես հայտնի է, նոր հայերենում *n* հնչյունի կորուստը բառավերջում բաղաձայնից հետո կանոն է ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան խմբի համար: Նոր հայերենին հատուկ երևույթ է այն, որ կորած *n* բաղաձայնի տեղ զարգանում է ə կես ձայնավորը. օր. Լեհ. dasə, ink^{c}ə, oxtə (WZKM 3, 47) և այլն: Բնականաբար այս ə հնչյունն անմիջապես *n* բաղաձայնից չի ծագում, այլ ոչ այլ ինչ է, եթե ոչ երկրորդական *n* բաղաձայնից առաջ զարգացող մի կես ձայնավոր, որ առաջանում է նրա կորստից հետո: Այն, որ ə հնչյունը երևան է գալիս միայն որոշ դեպքերում, իսկ այլ դեպքերում բացակայում է, կապված է միայն բարեհնչունության հետ: Ձուտ բարեհնչական *ընույթ* է կրում նոր հայերենի այն ə հնչյունը, որ հանդիպում է դույզ բաղաձայնով /ավելի հազվադեպ-պարզ բաղաձայնով/ վերջացող բառերից հետո, եթե հաջորդ բառը նույնպես պարզ բաղաձայնով է սկսվում. օրինակ, Տաճկ. /Այտ., Բ, 276/ garǰə xosk^{c} mə «կարճ խոսք», hastə p^{c}aiter, «հաստ փայտեր» mut^{c}ə deγə «մուխի տեղ», փոխանակ պարզ garǰ *կարճ*, hast *հաստ*, *մուխ*: Նույն ձուտ բարեհնչական հնչյունը երևան է գալիս երկու բաղաձայնով վերջացող բառերում, որոնց վերջին բաղաձայնն է *r*.

---

[54] Դասական n հնչյունին առանձին դեպքերում համապատասխանում է l. *մհ. լապաստ* labast «նապաստակ» ձևի մեջ /արդյոք իսկապե՞ս կիլիկյան/=դաս. *նապաստ նապաստակ* ձևի մեջ /*նապաստ+ակ*/, հնմտ. lapəstrak Մշո բարբառում /Мсер.135/, Լեհ. labestak, Թ-Ֆ. lapustrak, Զթ. lapstok, Ղր. əlapastrak և այլն/տե՛ս Բառարանը/:

օր. jandrə k^{c}ar «ծանր քար», mandrə dəyak^{c} «փոքր երեխաներ», parcrə leř «բարձր լեռ» /Այտ., Բ, էջ 276/:

Նմանապես Լեհ. xərugnə «խոր»/*խորունկ*/. jandrne /փխ. jandrnə/ «ծանր». ink^{c}ne /փխ. ink^{c}nə/ «ինքը», որտեղ ə կամ e հնչյունը /եթե այստեղ իսկապես լսվում է e և ոչ թե ə/, Հանուշը սխալմամբ համարում է էական բայի եզակի երրորդ դեմքի ճև /WZKM 3, 47/: Նույն տեղում Հանուշն անճիշտ կարծիք է հայտնում, իբր թե dasə, oxtə բառերում ə հնչյունը ծագում է n բաղաճայնից, մի հնչյունափոխություն, որ հայերենում այս դեպքում ուղղակի անհնարին է:

Դաս. մ m և նրա համապատասխանությունները կիլիկյան հայերենում

§ 141. 1. Դաս. *մ* m= կիլ. m *մ*:

ա) Բառասկզբում. *մայր* mair 47-6, 49-8, դաս. *մայր. մարդ* mart 65-2.4, դաս. *մարդ. մէջ* meč 37-14, դաս. *մէջ. մարմին* marmin 31-11, դաս. *մարմին. մեռնիմ* meřnim 9-8, դաս. *մեռանիմ. մոռնամ* mořnam Հ. 224-43, դաս. *մոռանամ. մնամ* mnam, 35-30, դաս. *մնամ*:

բ) Բառամիջում. *ամէն* amen 41-10, դաս. *ամէն. ամիս* amis Սարվ. արտ., դաս. *ամիս. խմել* xmel 33-18, դաս. *խմել. համբերել* hamperel «հետաձգել» 15-26, դաս. *համբերել. համբերութիւն* hamperut^{c}ün, «հետաձգում, ժամկետ» 21-27, դաս. *համբերութիւն. դիմեմ* timem, «շտապում եմ» 31-19, դաս. *դիմեմ*:

գ) Բառավերջում. *կամ* gam 5.7.8.11, դաս. *կամ. ժամ* žam 11-19, դաս. *ժամ. տամ* dam 11-18.23, դաս. *տամ*. ընդհանրապես *-մ* -m վերջավորությամբ ներկայի I դ.=դաս. *-մ*-m:

§ 142. *Հավելված 1. Ներկայի հոգնակին* 1-ին դ. դաս. *-մք-mk^{c} վերջավորությունը համապատասխանում է կիլիկյան -նք-nk^{c}:*

Գուցե այստեղ առկա է բաղաճայնների առնմանության մի դեպք, երբ կոկորդային *ք* k^{c} բաղաճայնի ազդեցությամբ *մ* m շրթնային ռնգայինը դարձել է կոկորդային *ն* n /հմմտ. § 22 վերևում/[55]: Օրինակներ. *կու հրաւիրենք* qu hravirenk^{c} 13-13, *կու աղաչենք* qu ayačenk^{c}, 53-22, *կու առնունք* qu arnunk^{c} 53-23, *տանք* ḍank^{c} 53-23 և այլն:

[55] Ինչպես հայտնի է, նոր հայերենում այդ վերջավորությունը տարածվել է նաև անկատարի և անցյալի կատարյալի համապատասխան դեմքերի վրա:

§ 143 Հավելված 2 Բառասկզբի *-մ* m-ն առերևույթ ճևով կորչում է հետևյալ դեպքերում կիլ *ինչու* inču 41-12=դաս *մինչև* կիլ *ինչուի* inčvi /*ինչվի, ինչ֊ի*/ 13-15, 17-9=դաս *մինչև ի Բրականում* կիլիկյան հայերենը պահպանել է *ինչ* արմատով նախնական ճևը[56] Կարելի է ավելացնել կիլ *յեղմ* heγm «մեղմ» ավելի հաճախ *յեղմն* heγmn /*նույնը*/ ՋգՔ 150, 151, 152, 155, Ալբրապատին Հ 402, 403= դաս *մեղմ*

Ծան հմմտ դաս *հաշել=մաշել*, ապա Ակնա բարբառում məžvi և mižvi «մինչև» Ակ hižvi «մինչև» ճևի կողքին /Ճանիկ, 283, 409/ Հատկապես լավ է երևում նախածանցը Զուղայի ևհ բարբառի /ըստ Парх Диал 81/ հետևյալ ճևերում moč, monč /=դաս *ոչ*/, močinč և mončinč /=դաս *ոչինչ*/, močum «ոչ ոքի», ուղղ močok^{c} /դաս *ոչ ումեք*/[57]

Հավելված Հնչյունական կապակցությունների փոփոխություն

1 *Ներածություն*

§ 1441 Դաս *-նր*-nr=կիլ -ndr *-նդր, -նտր* Կիլ *ծանդր* jandr Հ 226-15=դաս *ծանր* կիլ *մանտր* mandr ՋգՔ 148, Մխ Հեր ԷՋ 19, 67, 150= դաս *մանր մանտրէ* mandrę ներկայի 3-րդ ղ Մխ Հեր ԷՋ 71, տող 4 ներքևից=դաս *մանրէ ծումտր* jundr Հ 333, ԷՋ 12 ներքևից=դաս *ծումր* Նաև *պանդրուտի* (-ուտու), bandrudi (-udu) «պաս»/ բուն իմաստով «պանիր ուտելը»/ Մատթ Ուռհ =դաս *պանդրուտի* t հնչյունը ներմուծվում է նաև n ռնգայինի և սուլականի միջև բառավերջում կիլ *հայնց* hainç «այնպես», *քանց* k^{c}anç «քան», *վանց* vanç «պատճառով» տե՛ս ատորև § 148

Հնչյունի ներմուծումը հեշտությամբ բացատրվում է հնչյունաբանական տեսակետից և զուգահեռներ ունի շատ լեզուներում

---

[56] Ի միջի այլոց, միջին հայերենը որոշ տեքստերում, ինչպես, օրինակ, Ալբրապատինում նաև ժամանակակից բարբառներում, կարելի է գտնել *ինչ* արմատական ճևը «մինչև» նշանակությամբ որ համապատասխանում է դասական *մինչ* ճևին

[57] m, n ռնգայինների ազդեցությամբ նոր հայերեն տարբեր բարբառներում a+m+ և a+n+ շրթնային կապակցությունները ռնգայնանալով դառնում են a+ շրթնային Այսպես, Թիֆլիսի բարբառում /Том § 57-2/ ãpativ, դաս *անպատիւ* ãpoxan, դաս *անփոխան* ãpatčaï դաս *անպատճառ* ãban, դաս *անքան* ãbaxt, դաս *անքախտ* ãmərt^{c}ı, դաս *անմարդի* čãp^{c}a, դաս *ճանապարհ* և այլն - Մշո բարբառում /Мсер, § 11/ hãber'el, դաս *համբերել* čãpa/h/, դաս *ճանապարհ* և այլն ab, դաս *ամբ, ամպ* ab'eç, «երկինքն ամպել է», դաս *ամպեայ* hąbr'el, դաս *համարհալ* և այլն - Նույն վիճակն է Վանի բարբառում /Мсер էջ 24/ Ուրիշ ժամանակակից բարբառներին, սակայն, օր լեհահայ բարբառին, ռնգայնացումը խորթ է, և այն չի կարելի վերականգնել նաև կիլիկյան միջին հայերենի համար

§ 145 2 Դաս *մր*-mr=կիլ -mbr *մբր* Կիլ *ամբրաւ* ambrav Զգբ 154 «արմավ»= ուշ դաս *ամրաւ*. Մխ Հեր 149=դաս *արմաւ* հմմտ ատորև §147

§ 146 3 Ներմուծված n կիլիկյան հայերենում ունենք հետևյալ դեպքերում կիլ *մենք* m'enk^{c} /հմմտ Զևաք /= դաս *մեք*, երևի այստեղ և ռնգայինն առաջացել է անվանական հոլովման *-նք* վերջավորության նմանության և ազդեցության Ասպա կիլ *արցունք* arçunk^{c} /տե՛ս Բառարանը/= դաս *արտասուք* Հմմտ հետդաս *եղինճ*= դաս *եղիճ*

Հիշենք նաև *մենքենայ* հունարեն փոխառության *մեքենայ* ղուգահեռ ձևով, հուն μηχανη' /Arm. Gramm. II, 365/:

Ծան Երևույթը շարունակվում է նոր հայերենում, միայն ավելի մեծ տարածումով և ընդհանրացումով օր Թ-ֆ k^{c}int^{c} սեռ k^{c}ənt^{c}i, դաս *քիմ* minj, դաս *մեծ* mink^{c}, դաս *մեք*, amančil, դաս *ամաչել*, aγančak^{c}anil, դաս *աղաչել* kananč, դաս *կանաչ* čanančil, դաս *ճանաչել* Том Тифл диал §187 Հմմտ նաև Мсер §216, Том Ах диал էջ 20 և այլն Ախալցխայի բարբառում, ինչպես նաև տաճկահայերենում ունենք, ի միջի այլոց, m'enc ձևը, դաս *մեծ* -Ներմուծված d ունի, օրինակ, Թ-ֆ /Том § 182/ çandr, դաս *ծանր* mandr, դաս *մանր* t^{c}ondir սեռ - dri., դաս *թոնիր*, *-րի* և այլն[58] Ներմուծված b հնչյունն առկա է hambril բառում /դաս *համարել*, կիլ *համրել*/ - Հմմտ նաև Мсер Муш диал էջ 139, Том Ах диал էջ 20, Ս Սարգ Ագ բարբ էջ 71

2 Դրափոխություն

§ 147 Բաղաձայնների դրափոխությունն առկա է հետևյալ դեպքերում ա) *ր*-ով բաղաձայնական կապակցություններում կիլ *դարտակ* tardag 55-10 Մխ Հեր 80-7=*դատարկ մախր* maxr, Գիրք վասո = դաս marx, նպ marx, märx. մհ. *դրսով* trsov, *դրսովեմ* Հարանց վարք, Յայսմ =դաս *դրով*, *դրովեմ*, վերջինս=Զթ *dušsravah /վկայված է dəušsravâ կազմությունը/, pāz. dus rav (dus rab), հմմտ Arm. Gramm. I, 145 Նույն ձևով է առաջանում *ամրաւ* amrav, Մխ Հեր 149< դաս *արմաւ* Հմմտ մհ *ակռայ* agîa և *յառկայ* haîga ղուգահեռ ձևերը

բ) *սխ* sx և *խս* xs կապակցություններում

սխտոր sxtor (səxtor) Գալեն «Գիրք վասո »=դաս *խստոր սխար* sxar «պաշարում» Մաութ Ուտհ Dul. էջ 58 գործ *սխարով*, կամ *խսար*=արաբ

---

[58] *Թոնրի* սեռականը պետք է նախ դառնար *թոնդրի*, իսկ դրանից հետո *թոնիր* ուղղականը պետք է դառնար *թոնդիր* Հմմտ գոթ swistar, սեռ swistr=հնդեվր *svesros

ḥisār «պաշարում». *խասր* /Աբեղան 114/=*հիսար* hisar «պաշարում» Arm. Gramm. I, 269:

Ծան. հմմտ. Լեհ. səxter, Տաճկ. səxtor /Han., ԷՋ 113/, Մշ. səxtoruk /Мсер., ԷՋ 141/, Թ-Ֆ. səxtur /Том., ԷՋ 71/ և այլն: Հմմտ. նաև դրափոխումների հետևյալ դեպքերը Ախալցխայի բարբառում /Том., ԷՋ 20, 21/. tardag, դաս. *դատարկ*. jorjag, դաս. *ծոծրակ, ծոծրակ*. garbʲed, դաս. *կապերտ*. gersar, դաս. *սկեսրայր*. garmunǰ, դաս. *կամուրջ*. armung, դաս. *արմունկ*. angaǰ, դաս. *ականջ*. ončinč, դաս. *ոչինչ* և այլն: Նույն վիճակն է Թիֆլիսի /Том., § 188/, Մշո /Мсер., § 220/, Ագուլիսի /Ս. Սարգ., § 17, 1/, Ղարաբաղի[59] /Патк. Диал., ԷՋ 65/ և այլ բարբառներում:

Միջին հայերենում սկիզբ առնող երևույթը, ինչպես պարզ է ասվածից, նոր հայերենում շատ ավելի լայն տարածում է առացել:

3. *Ձուլում*

§ 148. Երկու հարևան բաղաձայններն ի մի են ձուլվում հետևյալ դեպքերում.

կիլ. *պայխուն*. baçxun 13-10, 15-19, 17-19, 21-26, 23-11, 24* *պատսխուն* *batsxun (*patsxun)=դաս. *պատասխան-ի. արկունք* arçunkᶜ /հմմտ. Բառարանը/, <* *արտսունք* *artsunkᶜ=դաս. *արտասուք*. ապա *քանց* kᶜanç L. 155-1, L. 155-6, L. 155-8, որ ծագում է *քան* kᶜan+գz կապակցությունից, որտեղ *գ*-ն իրենից ներկայացնում է *քան* բառից հետո կանոնավոր ձևով դրվող հայցականի նախդիրը: Ռնգայինի և սուլականի միջև, ըստ § 144, զարգացել է երկրորդական t հնչյունը, որ սուլականի հետ միասին տվել է *ց* ç կապակցությունը: Նման ձևով բացատրվում է նաև կիլ. *հայնց* hainç «այսպես» 11-27, 13-21, 25-5, 33-6, 39-14, 41-10, 47-27: Ախրապատումի մեջ այն ներկայացված է առանց *հ*-ի՝ որպես *այնց*, Հ. 417, 423 **այն-տ-ս=*այն-ս* /տե՛ս Ջևաք./:

Ըստ երևույթին, նույն ձևով է առաջացել կիլ. *վանց* vanç «պատճառով» <* *վան-տ-ս*, վերջինս էլ **վան-ս* ձևից, որ ծագած պետք է լիներ հհ. *վասն* բառից՝ բաղաձայնների դրափոխումների միջոցով. - Վկայություններ *վանց* բառի համար, օր., 19-12, 21-21, 23-22, 29-9, 25, 37-17-39-18, 59-27, 67-29, L. 156-13 և այլն:

---

[59] Ղարաբաղի բարբառում կարելի է գտնել /Патк. Диал. 65/. oxčar /դաս. *ոչխար*/, anguǰ /դաս. *ականջ*/, mnan /դաս. *նման*/, məhar /դաս. *հանար*/, məhik /Թ-Ֆ. himik/ և այլն:

Ծան. k^{c}anç ձևն ունի Ագուլիսի ժամանակակից բարբառը /Ս. Սարգ., էջ 127/, Մշո բարբառն ունի k^{c}ənj, Վանի բարբառը թեթեւ փոփոխությամբ k^{c}änj, երկուսն էլ կանոնավոր ձևով ծագում են *k^{c}an+d+z, *k^{c}andz ձևից /Мсер. Муш. диал. §218/: Ակնա բարբառում համապատասխան ձևը հնչում է k^{c}əz (Патк. Диал. 415)[60]:

---

[60] n բաղաձայնի կորստի այլ օրինակներ Ակնա բարբառում /ըստ Ճանիկ./, Ակ. *հոգչիլ* էջ 282=դաս. *հանգչիլ*. Ակ. *հիւըտցաւ*, էջ 298<*հիւընդցաւ*=դաս. *հիւանդացաւ*. *որձեւ* էջ 282<* *ողձեւ*=դաս. *անձրեւ*. *Մզրայ* էջ 443 ուղղ. *Մզուր* Məzur=Մնձուր Mənjur /Թուրք. Munzur day/. *ոանիլ* էջ 282=դաս. *անկնիլ*. *ճոշնամ* էջ 290, 294<*ճանչնամ*=դաս. *ճանաչնամ*. *իշ* էջ 290=դաս. *ինչ*. *ըշտեղ* /Ագուլիսի բարբառում նույնպես, հմմտ. Патк. 41/=դաս. *ինչ տեղ*. *իժվան* էջ 500< *ինչուան* «մինչև». *մըժվի* էջ 302, *միժվի* էջ 409 և *հիժվի* էջ 283<* *մինչուի* կամ *ինչուի*=դաս. *մինչեւ ի*: Ինչպես երևում է, այստեղ n ռնգայինի կորստի հետ մեկտեղ *դրան հաջորդող կիսաշփականը դառնում է համապատասխան շփական*, ընդ որում ձայնեղ հնչյունից առաջ վերջինս նույնպես ձայնեղանում է: -Ընդհանրապես այս բարբառը սիրում է որոշ բաղաձայնների փափկացումը կամ ճուլումը n և r նայերի հետ: Կարելի է տարբերել հետևյալ դեպքերը.

ա) Դաս. ng, nk ձայնավորից հետո Ակնա բարբառում դառնում է y: Օր. Ակ. *կոյնել* էջ 236, 302=Տաճկ. *կայնել*=դաս. *կանգնել*. Ակ. *կոյնեցաւ* անց. կատ. եզ. 3-րդ դ. էջ 231, 266, 780=դաս. *կանգնեցաւ*. Ակ. *զոյտել* էջ 453=կիլ. *զանկտել*=դաս. *զանգատել*. Ակ. *իյնիմ* էջ 206, 270=Տաճկ. *իյնամ*=կիլ. *ընկնիմ, ինկնիմ*=դաս. *անկանիմ*: - Բուն հնչյունափոխությունն այստեղ կայանում է նրանում, որ սկզբում դուրս է ընկնում n բաղաձայնը, որից հետո նախորդող ձայնավորին նոտեցած կոկորդայինը դառնում է նախ γ կոկորդային շփական, իսկ հետո y քմային շփական: Քիչ թվով բարբառներում այդ զարգացումը կանգ է առել *կոկորդային* շփականի աստիճանում: Այսպես ՋՂ /Патк. Диал. 84/ kayni «երևում է»=Ակ. kayni/, Ղր. kaγnel /Ակ. kaynel/, Ղր.əγnel /=Ակ. iynel/: -Հմմտ. նաև նախնական k/g/-ի փափկացումը դեպի y Ակ. *մեյ տեղ, մեյ մի* էջ 291 արտահայտություններում /<*մէկ* mek, meg/. Ակ. *մէյն* էջ 302< *մէկն* megn, megn: Վերջին ձևը, *չիյտել*<*či-gdel/=չ-գիտել/* ձևի հետ միասին, ըմորոշ է նաև տաճկահայերենի համար:

բ) Դաս. nr-ն ձայնավորից հետո դառնում է Ակ. yr կամ y, օր. Ակ. *մոյր* էջ 282 և *մոյ* էջ 422 = դաս. *մանր*. Ակ. *ծոյր* էջ 208, 282 և *ծոյ* էջ 301= դաս. *ծանր*: Այս դեպքում, սկզբում թվում է, թե n-ն դուրս է ընկել նախորդող ձայնավորի երկարացման հետ միաժամանակ, որից հետո կորած կլիներ նաև բառավերջի r բաղաձայնը: Հավանական է, սակայն, որ *ծոյր, ծոյ, մոյր, մոյ* ծագում են ոչ թե հին հայերեն համապատասխան ձևերից, այլ ավելի շուտ մհ. *ծանտր, մանտր* ձևերից, որոնց մեջ, ռնգայինի կորստից հետո, ձայնավորից անմիջապես հետո գտնվող *տր* բաղաձայնախումբը փափկացումով կամ ճուլումով դարձել է *յր* կամ *յ*:

գ) Հնչյունական օրենքի համաձայն:

գ) Դաս. tr խումբը ձայնավորից հետո ճուլումով դառնում է Ակ. y: Օրինակներն են. Ակ. *Պեյոս* էջ 470= դաս. *Պետրոս*. Ակ. *պայոս* էջ 440=ընդհանուր նոր հայերեն *պատրուս*=դաս. *պատուաստ*. Ակ. *կըյիճը* էջ 416, 429=կիլ. *կտրիճ*. Ակ. *կըյին*, էջ 231,

§ 149. Կրկնակ բաղաձայնները պարզվում են.

ա) *-ցց* -çç դառնում է պարզ *-ց*, -ç՝ - *ցնեմ* -çənem=*-*ցցնեմ*=դաս. *-ցուցանեմ* -çuçanem պատճառական ածանցի մեջ:

Որ. կիլ. *ամրցնեմ* amrçnem 27-20=դաս. *ամրացուցանեմ*. *իրաւցնեմ* iravçnem 59-8= դաս. *իրաւացուցանեմ*. *չմեցնեմ* himeçnem 81-24= դաս. *չամեցուցանեմ*. *հեռցնեմ* hereçnem 17-17= դաս. *հեռացուցանեմ* և այլն: Բայառուլիյան կարդով կրկնակ բաղաձայնը պահպանվում է *կեցցնեմ* geççnem պատճառականի մեջ /27-13.17, 29-17, 33-18, 35-9.16, 59-2.11, 63-13.14, 67-11, 69-2, 71-20/: Սակայն առանձին դեպքերում հանդիպում է 3-րդ դեմքի եզակի ներկայի *կեցնէ* deçnę ձևը՝ պարզ *ց* բաղաձայնով /Հ. 217-19/:

բ) Կրկնակ *-ննա* -parzվում է հետևյալ ձևերում.

լինալ linal 59-33, *լինայ* lina 21-15, 25-6, 27-14, *լինան* linan 19-17, 18, 27-45. *լինայր* 35-31. *լինալ* linal<լիննալ linnal/ առանձին դեպքերում վկայված է L. 157-5, ինչպես նաև Գիրք վասն. և Մխիթար Հերացու մոտ/= *լինենալ *linenal: - Նույնատիպ ձևն է *ունալ* unal, որ առանձին դեպքերում վկայված է սովորական ուննալ unnal=*ունենալ ձևի փոխարեն:

§ 150.2. Ձց cç հնչյունական կապակցությունը մի հնչյուն է դառնում հետևյալ դեպքերում.

կիլ. *դարճնեմ*, *դարճընեմ* tarcənem «վերադարձնում եմ» 47-22, 57-26, 59-26, 63-25, 71-21, 79-3, 4. Հ. 225=դաս. *դարձուցանեմ*: *Դարձցնէ* tarcçəne ավելի հին ձևի կիրառությունը եզակի դեպք է /19-13/, հմմտ. Լեհ. tarçənełu «շուռ տալ» Han. էջ 116[61]:

295=դաս. *կտրին* «կտրվում են», Ակ. *կըտեցի* ներգ. էջ 302=դաս. *կտրեցի*. Ակ. *կըտեցաւ*, կրավ. էջ 217=դաս. *կտրեցաւ*. Ակ. *կըտեր* էջ 206, 207, 261, 274=դաս. *կտրէր*. Ակ. *կըտած* հարակատար դերբ. էջ 208=կիլ. կտրած. Ակ. կոյի էջ 205=կիլ. *կոտրի*, դաս. *կոտրի*. Ակ. *կոյեցին* էջ 296=կիլ. *կոտրէին*. Ակ. *կոյած* հարակատար դերբայ էջ 208, 483= կիլ. *կոտրած*:

դ) Դաս. *դր*-ն ձայնավորիչ հետո ճոլումով դառնում է Ակ. հ: Օրինակ. Ակ. *դահել*=կիլ. *դաղրել*, դաս. *դաղարել*. Ակ. *չի դահիր* էջ 413=Թ-Ֆ. či dadrir «չի դաղարում»:

ե) հնչյունի *կլանումը* հարևան բաղաձայնի կողմից կարելի է դնել հետևյալ դեպքերում. Ակ. *ասված* էջ 218=դաս. *աստուած*. Ակ. *ասղը* էջ 218=դաս. *աստղ*. նույն ճևով Զեյթունի բարբառում /ըստ Ալպահվ./ osy և osx «աստղ»:

[61] Հիշատակենք նաև *դաւադիկ* tavadik կիլիկյան ձևը /հմմտ. Բառարանը/, վկայված L. 156-10, որ առաջացել է *դա աւադիկ* կապակցությունից, այսինքն՝ ձայնավորների

Ծան Նոր հայերենում առնմանում կամ պարզեցում են ապրում հարևան իրարից *տարբեր* բաղաձայնները Այսպես Ախ /Том էջ 20/ ellem «դուրս եմ գալիս»= դաս *ելանեմ* əllil, դաս *լինել* ləlem «լցնում եմ» դաս *լնում* gallel /գուգահեռ ձևն է ganlel/ «բռնել» դաս *կախում* alli/anli ձևի կողքին/ դաս *անալի* xəlik^{c}/ xənlik^{c} ձևի կողքին/ դաս *խլինք* և այլն

Ապա, Մշո բարբառում /Мсер 142/ kanav «վեր կացավ» <*kannav=դաս *կանգնել*, Լեհ ganneћu, Զղ kannil/ Патк Диал 84/ ginal «դիտենալ» <ginnal=Տաճկ gidnal=կիլ kidenal: - Ակնա բարբառում gənnel /Ճանիկ, 296/< gətnel=դաս *զտանել* manneru /հոգն սեռ Ճանիկ, 438/<matneru ուղղ matn «մատ» hivənnal /Ճանիկ, 298/<hivəndnal= դաս *հիւանդանալ* Ղարաբաղի բարբառում /Патк Диал 65/ onn, հոգն onner=դաս *ոտն* mənnan «մտքից» <* mətnan, mətnən, ուղղ mit· Հնչյունափոխությունն այս աստիճանին կիլիկյան միջին հայերենը դեռ չի հասել

Կիլիկյան հայերենի ինչպես ճայնավոր, այնպես էլ բաղաճայն հնչյունների կորստի մասին արդեն խոսվել է վերևում, հմմտ համապատասխան տեղերը

5 *Նոր հնչյունի առաջացում բառասկզբում*

§ 151 Հազազային հնչյունն առաջանում է հետևյալ դեպքերում *հաճիկ* haknil 73-17 անգ կատ *հագաւ* hakav եզ 3-րդ դ 29-18, 31-7, 20, 35-1, 63-6=դաս *ագանիմ հագոյցք* hakuiçk «դենք» 31-9=դաս *ագոյցք* vectis, *հապա* haba Հ 221-13՝ *ապա* aba ավելի հին ձևի կողքին, դաս *ապա հարբենալ* harpenal Հ 213-7, 222-3=դաս *արբենալ հայնցեղ* hainç'eγ «այսպես» 57-24, Հ 224-4=*այն ցեղ* 45-11, Հ 213-10 *հայնց* hainç «այսպես» /օրինակներ վերևում/= *այնց*<*այն-ս*, *այնց* իսկապես վկայված է Ախրապատինում *հայնչաք*, hainčak^{c} «այնչափ, այնքան» 33-17, 53-4, 67-16, 28, 77-10, Հ 208-29, Հ 213-13, Հ 213-43=*այնչաք* ainčak^{c}, 53-6.7, Հ 211-41, հմմտ նաև Բառարանում *այնչաք*, *այդչաք*, *այսչաք* բառահոդվածները

Ըստ երևույթին, սրան են վերաբերում նաև *հօն* hon, *հօս* hos, *հօտ* hod, *հիմայ* hima /հմմտ Բառարանը/

Նոր առաջացած *յ* h-ն առկա է հետևյալ դեպքերում *յիմայ* himaç «տեղեկությունն» 75-7 L 189=դաս *իմայ յիմնալ* himnal Հ 213-18=դաս *իմանալ*, *յերեւան* herevan «բայսհայտ» 27-12, 39-22, 59-36, 65-20,

---

պարզեցման առանձնացված մի դեպք Առանձնացված մի դեպք է նաև *դեկան* tegan, կիլիկյան մի ոսկեդրամի անուն /տե՛ս Բառարանը/, որ առաջացել է *դահեկան* dahekan ձևից՝ հ-ի կորստով և a+e>e պարզեցումով

69-8=դաս. *երեւան. յերկայն* hergain «երկար» Զգբ 143, 153=դաս. *երկայն. յոմ* hum /եզ. տրական, ուղղ.-ը *ո՞վ* vov/ 19-29, 21-18, 49-19.36, 59-77=դաս. *ում*. հմմտ. նաև *յումպէտք* humbętk^{c} /=*յոմ*+*պէտք*/ 67-20=դաս. *ումպէտ*/ հմմտ. Բառարանը/:

Ծան. Այդ երևույթը շարունակվում է նոր հայերենում: Այսպես, օրինակ, Կուտինի բարբառն /Han. WZKM 2, 295/ ունի հետևյալ ձևերը. hakneveŧu «հագնվել», դաս. *ագանիմ*. harpeŧu «հարբել», դաս. *արբել*. hargevər «ագնիվ, ճշմարտախոս», դաս. *արգասւոր*: Թիֆլիսի բարբառում /Том. § 185/. harp^{c}il «հարբել», դաս. *արբել*. hak^{c}nil անց. կատ. hak^{c}a, դաս. *ագանիմ* անց. կատ. *ագայ* և այլն: Ախալցխայի բարբառում /Том. § 41/ harp^{c}il «հարբել», դաս. *արբել*. Մշո բարբառում haka, դաս. *ագայ*. hangan «ուշ», դաս. *անագան* և այլն: Տաճկահայերենի և արևմտյան գրական լեզվի համար հմմտ. Այտ. Բ, էջ 218[62]:

6. *Ձայնավորի զարգացում*

§ 152.1. Երկրորդային *i*-ն ուշ առկա է հետևյալ բառերում.

յիստակ histag Զգբ 160, Գիրք վաստ. 101=դաս. *յստակ. յիստակեմ* histgem Գիրք վաստ., դաս. *յստակեմ*: Հմմտ. վերևում § 53:

§ 153.2. Երկրորդային ə-ն կանոնավոր ճևով զարգանում է.

ա) Բառամիջում, այն բաղաճայնների միջև, որոնք առանց ճայնավորի կոշտ են արտասանվում: Հմմտ. վերևում § 4 և 51:

բ) Բառասկզբում *ŕ n* /ավելի հազվադեպ *ŕ*/ բաղաճայնիկ առաջ օտար բառերում:

Օրինակ. *ըռասուլ* ərasul /հմմտ. Բառարանը/=արաբ. rasūl. *ըռաստակն* əradagn «շռայլ, մեծահոգի» Հ. 220-34, որտեղ *ըռաստ*=նպ. rād «շռայլ, ազնվաբարո». *ըռէ* ərę «թշագավոր» L. 187, Սմբ. Ժամ. 666, 671=հֆր. rei, իտ. ^{c}rē «թշագավոր». *ըռիմոն* ərimon «ավանդ» 83-4.8= հետդաս. *ռեմոն* remon, *ռիմոն* rimon=նպ. ramūn. *Ըռնաղտ* ərnayd /հատուկ անուն/ Սարվ. արտ.=հֆր. Renald. Ըռուպերտ əruberd Սմբ. Ժամ. 666=հֆր. Robert. Ըռուճեր ərujer Սմբ. Ժամ. Dul. 639=հֆր. Roger. *ըռզիան* ərzian «սանիթի» Գիրք վաստ = նպ. rāziyāna «սանիթի». *ըռուպ* ərub «օշարակ» Գիրք վաստ.= նպ. արաբ. rubb «եփած մրգահյութի» /Arm. Gramm. 275/ և այլն:

---

[62] Դարաբաղի բարբառում /Патк., 64, 66/ այդ երևույթը տարածվում է նաև հետևյալ, մեծ մասամբ միավանկ բառերի վրա. hu /դաս. *եւ*, կիլ. *ու*/, hib /դաս. *երբ*, Ք.Ֆ. ip^{c}/, hor /դաս. *ուր*/, huč / դաս. *ոչ*/, hov/ դաս. *ով*/, hinč/ դաս. *ինչ*/, hinču «ինչպես»/ կիլ. *ինչու*/, hunç «ինչպես» /Տաճկ. ^{u}onc/ hanç «այնպես» /կիլ. *հայնց*/:

§ 154.1. *Հորանջիկ խուսափելու նպատակով կատարվում են հետևյալ հնչյունափոխությունները. ա) ձայնավորով սկսվող բառերից առաջ ու u-ն երկարանում է դառնալով ու-վ. u- v·u ձայնավորից հետո զարգանում է համապատասխան կես ձայնավորը:*

Օրինակներ. *ու վ'ննայ* u v'unna «տիրում է» 13-24 փխ. պարզ *ու ննայ* u unna. «տֆնդէ ու վ'ուրանայ» dfəndə̲ u v'urana «պաշպանվում է և ուրանում» 27-7, փխ. պարզ *ու ուրանայ. դատաստիկ ու վ'ուզել* tadstnil u v'uzel «դանգատվել ու պահանջել» 23-5, փխ. *ու ուզել. ի բուն ու վ'ի յեհինն* i pun u v'i hedinn «մինչև վերջ» 41-12. 13, փխ. *ու ի* ui. *համբերութիին ու վ'որ* hamperutʿün u v'o̲r «հետաձգում և ժամկետ» 75-27, 77-1, փխ. *ու օր* u o̲r և այլն: Նույն տիպի ձև է *աւղղուվեցյաւ* «խրատվել է» o̲ɣɣuveçav, փխ. կանոնավոր **աւղղուեցյաւ* /էջ 81-26/:

Ինչպես հայտնի է, արդեն հին լեզվի մեջ n̲ᶜ o հարցական դերանունն երկարացումով դարձել է *nᶜվ* -ov, մի ձև, որ հանդիպում է միայն ձայնավորով *սկսվող* բառերից առաջ: Ավելի ուշ շրջանում, սակայն, երկու ձևերն էլ անկանոն ձևով փոխարինում են իրար:

Ծան. Նոր հայերենում նույնպես նախկին u «ու, և» ձևի կողքին, ձայնավորով սկսվող բառերից առաջ, հանդիպում է u-v երկարացված ձևը: Այդպես է վիճակն, օր. Մշո բարբառում /Մեєր. էջ 142/:

§ 155. *բ)* Ինչպես որ *ու* u ձայնավորը տարածվելով դառնում է *ու-վ* u-v, այնպես էլ հայցական, ներգոյական և բացառական հոլովների *ի* i նախդիրը հանապատասխան կես ձայնավորի զարգացման շնորհիվ դառնում է *ի-յ* i-y:

Օրինակներ. *ի յ-որդեկն* 49-24, *ի յ-ընգօղնէն* 47-32, *ի յ-ամէն ժամ* 11-19, *ի յ-աւուրքն* 47-20, *ի յ-ինք* 81-26, *ի յ-օրն* 13-18, *ի յ-այն կնկանն աւուրքն* 49-3 և այլն[63]:

---

[63] Նոր հայերենում, որտեղ հորանջից խուսափելու սկզբունքը գործում է նաև բառամիջում նույն ձևով, *ի* հիմքերի անկատար ձևերում ձայնավորով սկսվող վերջավորությունից առաջ հին ը-ն դառնում է ը̲y, ey: Այդպես է վիճակը Նախիջևանի, Ախալցխայի, Թիֆլիսի, Ակնա և այլ բարբառներում: Վերջին բարբառում գտնում ենք հետևյալ օրինակները /Ճանիկ. /*անեյին*, էջ 294/ դաս. *առնէին*/, *իմեյին* էջ 295/ դաս. *ունէին*/, *կ'իտեյին* էջ 303 /դաս. *ուտէին*/, *խըրկեյին* էջ 295 /դաս. *յուղարկէին*/, *հեծնեյին* էջ 295 /դաս. *հեծանէին*/, *պատմեյին* էջ 298/ դաս. *պատմէին*/, *չէյին*

§ 156.2. *Հորանջիկ խուսափում են նաև այն բանի շնորհիվ, որ ի i նախդիրը. ինչպես նաև ու u շաղկապը, ճայնավորով սկսվող բառերից առաջ դառնում են համապատասխանաբար y կամ v կիսաձայն:*

Ի i ճայնավորից առաջ = *յ* y հնչյունափոխության համար կարելի է օրինակներ դնել ամենուրեք: *-Ու* u շաղկապը դառնում է *վ* v, օր. էջ 85-2. *ի բախտ վ'ի յըղտակ*. Սարվ. արտ. *ի մեր մէջն վ'ի յիրէնցն* Սմբ. հիշատակարան, էջ 93. *վ'եղ, վ'այդ, վ'եսպան*, և ընդհանրապես միջին-հայերենյան բանաստեղծուլթյան մեջ:

Սակայն, եթե ճայնավորից առաջ *ի-ն* միշտ տարբերակվում է դառնալով մերթ *ի-յ*, մերթ պարզ կիսաճայն *յ*, ապա *ու* u-ի դեպքում, առնվազն Անտիոքի ասսիզներում, հորանջը միշտ չի վերացվում, ինչպես յուլյ են տալիս հետևյալ դեպքերը. *ու ուժն* u užn 29-10. *ու ուրանայ* u urana 61-1. *տարի մի ու օր մի* dari mi u or mi 13-25, 11-4. 28. *ու իր* u ir 21-16. *ու ի հետ* 41-12. *ու ի մօտեւոր* 45-17. *ու ի պահ* 11-18. *ու այնել* 21-11, *ու այրել ես* 15-16, *ու եմէ* 13-6, *ու երկուքն* 15-14 և այլն:

էջ 294 /դաս. *չ-էին*/ և այլն: Նոր հայերենում շատ տարածված այդ երևույթը դեռ չի կարելի վստահությամբ գտնել կիլիկյան հայերենում:

ՋԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանությունն արդեն ապագրված էր, երբ Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանների մատենադարաններում աշխատելիս ես քաղել էի նոր կարևոր նյութ: Հատկապես, ավելի մոտիկից ուսումնասիրվել և գնահատվել էին միջին հայերեն հետևյալ աղբյուրները.

1) Սմբատի Դատաստանագիրքը /հետագայում նշանակվելու է ԴԳ/, որ գտնվում է Վենետիկի մատենադարանի № 107 ձեռագրում, ինչպես նաև Վիեննայի № 435 ձեռագրում, որն իրենից ներկայացնում է առաջինի պատճենը.

2) Վիեննայի մատենադարանի № 310 ձեռագիրը /ՋգԲ/, գրության թվականը - 1438, բովանդակությունը - բժշկական:

3) Վենետիկի մատենադարանի № 1281 ձեռագիրը, 1294 թվականին գրված /ՋգԱ/, որ պարունակում է զանազան բժշկական գրվածքներ, նաև դեղամիջոցների բառարան[1]:

Դրանից բացի, օգտագործվել են ուրիշ ձեռագրեր, մասամբ բժշկական /Ամիրդովլաթ, Ասար/, մասամբ առակագրական /հայկական «Աղվեսագիրքը»/, մասամբ էլ տաղարաններ:

Այդքան ընդլայնված նյութի[2] թելադրանքով անհրաժեշտ են դարձել բաժնաթիվ, մասամբ շատ կարևոր լրացումներ և ուղղումներ հնչյունաբա-

---

[1] *ՋգԱ ձեռագիրը մեջբերելիս այսուհետև բերվում է էջի համարն արաբական թվանշաններով: Սակայն Բ ձեռագրի, ինչպես նաև Դատաստանագրքի դեպքում նշվելու է հոդվածի համարը հայկական տառերով: Ի տարբերություն նախորդ բաժնի, տողի համարը այսուհետև նշվելու է էջի համարից հետո դրվող փոքր թվանշաններով:*

[2] Նորագույն գրականությունից, որ չէր կարող օգտագործվել «Հնչյունաբանություն» բաժնի համար, հիշատակենք հետևյալ հրատարակությունները. «К фонетике говора польских /галицких/ армян» А. Томсона. Одесса, 1899. - "Les explosives de l'ancien arménien, étudiées dans les dialectes modernes" par. H. Adjarian, l'Abbé Rousselot et A. Meillet. Extrait de la Revue internationale de Rhinologie, Otologie, Laryngologie et Phonétique expérimentale 1899. - M. A. Meillet, Recherches sur la syntaxe comparée de l'arménien (Mémoires de la société de linguistique de Paris, Tome X). -M. A. Meillet, Notes sur quelques faits de morphologie (Mémoires de la société de linguistique de Paris, Tome XI) - *Քննություն Սուչավայի բարբառին* Հ. Աճառյանի - Բազմավէպ, 1899 հաջ:

նուլթյան բաժնում, որոնք, քանի որ մեծ դեր են խաղում նաև ճևաբանութ-յունը լուսաբանելիս, պետք է բերվեն այստեղ:

I. «Արտասանութիւն» ենթաբաժնի համար

§ 8. բ-ի համար. Այնպիսի տառադարձութիւններից դատելով, ինչպես կիլ. *պայուրախ, պատայուարտ, Ֆայուանիա, լայուրէալա* /բժշկական բառարանից/, որտեղ *այու*-ն համապատասխանում է բնագրի au երկբարբառին, *յ* տառը հազիվ թե պահպանում է հին հայերեն y հնչյունական արժեքը: Միջին հայերեն ձեռագրերը հաճախ ընդհանրապես չեն նշում միջձայնավորային այդ *յ* հնչյունը[3]: Դրանից գուցե հետևում է, որ հին *յ* շփականը նաև բառամիջում, ձայնավորների միջև ընկալվել է ավելի շատ որպես թեթև հազագ: Նույնը վերաբերում է *ոյ* երկբարբառին /*§* 9բ/:

§ 8. *գ-ի վերաբերյալ.* Առար a ձայնավորը կիլ. *այ* կապակցութիւն միջոցով տառադարձելու ուրիշ օրինակներ. *պայզար* /= նպ. bazar/ «շուկա», հոմն. սեռ. *պայզրմոյ*, ԴԳ ճմբ: *-զայճ*/= արաբ. zāj/ «պղնձագործասպ», *խուպայզ*/= արաբ. xubbāz/ «մոլոշ», երկուսն էլ Զգր ձեռագրի բժշկական բառարանից: Հետո *մայճուն* /= արաբ. ma^{c}jun ''conditum subigendo confectum'' Զգր, ճ,ճբ, ճդ, ճդ, ճե, ճդ, մխա. *կրայնա սաւլիս* Զգր մկլե=լատ. grana solis. *մայսիս* բժշկ. բառ=լատ. macis. *սանկիս տրայգանիս*, բժշկ. բառ.=լատ. sanguis draconis: Կիլիկյան *այ* կապակցութիւնը, չնայած որ ներկայացնում է երկար a ձայնավորը, ոչ այնքան ամանակական, որքան որակական առումով է տարբերվում սովորական a հնչյունից:

Դա հետևում է թեկուզ այն բանից, որ հայերենն ընդհանրապես երկար ձայնավորներ չի ճանաչում[4]:

Եթե դրանից բացի հաշվի առնենք, որ աղբյուր-լեզվի տառադարձված հնչյունը միշտ հատակ է ու փակ, ապա որ *այ* կապակցութիւնը կիլիկյան հայերենում մեծ մասամբ հանդիպում է նայերի կողքին, որտեղ հնչյունն անպայման հատակ դունավորում ունի, ուստի մենք պետք է առանց վարա-

---

[3] Օրինակ. Զգև ձեռագրում. *ընծաէ*/= դաս. *ընծայէ*/ 109, 194. *ընծաիքն*/= /դաս.*ընծայեքն*/ 194, *ընճաի* 194, 203. *ընճաեցնէ*/ դաս. *ընճայիցուցանէ*/ 109. *ծառաէ* /=դաս. *ծառայէ*/ 159. *կրիաի*/= դաս. *կրիայի* 253. *ի նուպաէն* /ուղղ. *նուպայ*/ 167. *ի քթիրաէն* / ուղղ. *քթիրայ*/ 274 և այլն:

[4] Աղբյուր լեզվի բառը կարող է ունենալ նաև կարճ ձայնավորը, օր. *լիլայնճ* «ինդիգո» Զգր մհ=արաբ. պարսկ. lilānǰ, lilang. *բլիլայճ* "myrobalana bellerica" Զգր իբ, խգ, խե»= արաբ. պարսկ.-balilaǰ:

նումի կիլ. *այ* երկբարբառին վերագրենք փակ, դեպի ä ճգտող a-ի հնչյունական արժեքը: Ստորև ասվածի համաձայն, *ոյ* երկբարբառը նույնպես իրենից ներկայացնում է հատակ u հնչյունը: Նոր հայերենում միջին հայերեն այդ *այ* երկբարբառը հաճախ դառնում է ուղղակի է ը. օր. Տաճկ. *էրիկ*=կիլ. *այրիկ* «տղամարդ». Զթ. *էրին*=կիլ. *այրոյն*. Լեհ. eki «այգեստան», erel փոխանակ հին *այգի, այրել*: Հմմտ. վերևում § 66 Ծան. 2:

§9. գ-ի վերաբերյալ: Լաւտամոյզ =լատ. laudamus տառադարձումից համար կարելի է բերել հետևյալ զուգահեռ օրինակները Բ ճեռագրի բժշկական բառարանից. *զոյս*= լատ. thus. *զալամուս արոմմատիզոյս*= լատ. calamus aromaticus. *զաւրալլոյս*= լատ. corallus. *զամարիսգոյս* /կարդա՛ *զամարիսգոյս*/= լատ. tamariscus. *իզօբոյս* և *իզաւբոյս* =լատ. hyssopus. *մավավիսգոյս* =լատ. malva hibiscus. *սալ արմանիազոյս*= լատ. sal armoniacus. *գոյպիպէ* =լատ. cubebe. *նոքս մոյսկատա* = լատ. nux muscada. *ոյրղիքա* =լատ. urtica. *սբոյմա մարիս*=լատ. spuma maris. *ցոյզարայ*=իտ. zucchero. *էպոյլ*= լատ. ebulum, ebulus. *էրոյգայ*=լատ. eruca. *լագդոյսէ* = լատ. lactuca, *սեռ.* - cae. *լինկոյա ավիս* = լատ. lingua avis. *ֆէռռի սգոյամա*= լատ. ferri squama. *զասիա ֆիսդոյլա*= լատ. cassia fistula. *գոյրգոյմա*= լատ. curcuma. *լոյսֆոյր* /կարդա՛ *սոյլֆոյր*/= լատ. sulphur. *ճոյճոյպէ*= լատ. jujube և այլն: - Դրա փոխարեն, լատ. -um վերջնավանկը կանոնավոր ձևով տառադարձվում է որպես *-ում*: Օրինակներ. *անէդում*= լատ. anethum. *անիսում*= լատ. anisum. *ասարում*= լատ. asarum. *արճէնդում վիվում*=լատ. argentum vivum *աֆսինդիում*=լատ. absinthium. *արմոնիակում*= լատ. armoniacum. *ակարիգում*=լատ. agaricus, հայց. -um. *աւրում*=լատ. aurum. *բանիդում*= լատ. panicum. *բալբոտիում*=լատ. polypodium. *գաբիլլում վէնէրիս*= լատ. capillum Veneris. *գալգանդում*=լատ. calcanthum. *գաստարէում*= լատ. castoreum. *էլէպաւրում*= լատ. helleborus, հայց. -um. *էուբատաւրիում*= լատ. eupatorium. *ինդիկում*= լատ. indigum. *լիթարճիրում*= լատ. lithargyrum. *կալբանում*= լատ. galbanum. *ճիպսում*= լատ. gypsum. *նիդրում*= լատ. nitrum. *ռէպարբարում* և *ռէոպարբարում*= լատ. rheobarbarum. *սաւլադրում* /կարդա՛ *սաւլանում*/= լատ. solanum. *սինամոմում*= cinnamomum. *սպաւտիում*= լատ. spodium. *փսիլլիում*= լատ. psyllium. *ֆէնում կրէգում*= լատ. foenum graecum. *ֆէրմէնդում*= լատ. fermentum. *էոյֆաւրպիում*= լատ. euphorbium. *մարոյպիում*= լատ. marrubium. *ֆինիգոյլում*= լատ. foeniculum և այլն:

Ձեռագրերում այս երկու նշանագրերի /*ու* և *ոյ*/ հաճուկ տարբերակումից անկասկած հետևում է նրանց հնչյունական արժեքը կիլիկյան հայերենի համար: Երկու նշանագրերն էլ ծառայում են u հնչյունի տառադարձ-

մանը Սակայն եթե *ու* նշանը բաց, դեպի *օ* ձգտող ս հնչյունի արժեքն ունի, ինչպես որ այն հնչում է ռոմանական-միջնադարյան լատիներենի -um վերջավորության մեջ, ապա *ոյ*-ը հնչում է որպես հատակ, փակ, ավելի շուտ ü հիշեցնող մի ս *Լիգոյրիսիա* = լատ glycyrrhiza տառադարձության մեջ *ոյ* նշանը դրված է հենց լատ y-ի համար

§ 10 բ-ի վերաբերյալ Այն հանգամանքը, որ *իւ*-ը իսկապես ներկայացնում է ս հնչյունը, երևում է նաև նրանից, որ այն հաճախակի զուգորդվում է *ոյ* կապակցության հետ Այսպես, Ածո Ածո 33, 23, գտնում ենք *գայլին* գրությունը, փոխանակ սովորական *գ-այլոյն*, իսկ *ոյ*-ը, վերևում ասվածի համաձայն, նման է հատակ, դեպի ü ձգտող ս հնչյունի

§ 13 Ծանոթագրության վերաբերյալ Հայկական բոլոր ձեռագրերում, նույնիսկ լավ և խնամքով գրված, av հնչյունախմբի պատկերման համար *աւ* կապակցության կողքին և դրա փոխարեն ավելի կամ պակաս հաճախակա-նությամբ գտնում ենք ավելի կարճ, հարմար, թեկուզ ոչ այնքան ճիշտ գրություն *օ* տառի օգնությամբ Օր Զգբ *գյօն* /փխ *գյաւն*/ մկզ.*յօտս* /փխ *յաւտս*/ մկզ, *մօթե* *օտրն* /փխ *աւտրն*/ մծզ *առօել*/ փխ *առաւել*/ մինչ *գօրօտր*/ փխ *գօրաւտր*/ ճծբ *քնօ* /փխ *քնաւ*/ մկզ *սակօ* /փխ *սակաւ*/ ճղը[5]

II «Բուն հնչյունաբանության» ենթաբաժնի վերաբերյալ

§ 36 բ-ի վերաբերյալ ուրիշ վկայված ձևերն են ծխի jxi (jəxi սեռականը, ուղղ, ծախ, Հ 221-23) ա)*չաք* բառի հոլովաձևերը *չքու* /եզ սեռ/ Զգբ , ղզ, ճի, ճկէ, ճկը *չքով* /եզ գործ/ Զգբ *մժբ. չքույ* /հոգն սեռ/ ԴԳ լե, ճծբ, ճկէ, ճկը, ճհէ *չքօք* կամ *չքաւք* /հոգն գործ/ ԶգԱ 267, 290, Զգբ ճղզ, ճղէ, ճղը, մժզ բ) *ժամ* գոյականի հոլովաձևերը *ժմուն* /եզ սեռ/ «ամեն ժամ» ԶգԱ 39, 117, 134, 139, Զգբ խա, իղ, իէ, լզ, մծը, մկ, մկզ *ի ժմէ* /եզ բացառ/ վկայված *ի ժմէ ժամ* կապակցության մեջ Զգբ մծա *ժմով* /եզ գործ/ ԴԳ *լղ* և այլն Ապա նաև կիլ *ժմնել* /=դաս *ժամանել*/, *ժմնէ* ներկայի եզ 3-րդ դ ԴԳ ճժզ Ի միջի այլոց, արդեն դասական հայերենն ունի *ժմ* սղված ձևը բարդությունների *այժմ*, *այժմեան*, ապա *այժմէն*, *այժմիկ*, *այժմու*, *այժմուս*, *յայժմուս*, *զայժմուս*/= *այս ժամ*, *այս ժամեան* և այլն/

---

[5] 1492 թ Լվովի մի գրության մեջ /Մին Լհհ 117/ *աւ*-ի փոխարեն ամենուրեք գրվում է *օ*

§ 372-ի վերաբերյալ Հնչյունական օրենքի այլ օրինակներն են *յեմէ*/=դաս *յամէ*/ «մնում է, հապաղում է» Զքբ ճիղ, մլզ, մծզ, մծե, Զքմ. 16, 34, 110, 148, 184, 187, 190, 195, 271, 280, 289 *յեմեցին* /անց կատ հոգն 3-րդ դ/ Զքմ. 199, *յեմել լինի* /անց եզ 3-րդ դ/ Զքբ *ժէ ի յեմելն* Զքմ. 176 *ի շատ յեմելն* Զքմ. 16, *յեմեցնէ* /= դաս *յամեցուցանէ*/ «ուշացնում է» Զքմ. 187, 198, *մի յեմեցներ* / ժխտ հրամ / Զքմ. 154 *յերդ*/= դաս *յարդ*/ Զքբ միզ, սեռ *յերդի* Զքմ. 19 *յեվելնա* կամ *յեւելնա*/=դաս **յաւելանայ*/ «աճում է» Զքբ մլը, Զքմ. 151, 225 *յեվելցել է* «ավելացել է» Զքբ մծէ Անորոշ դերբայ *յեւելնալ* Զքմ. 223, 225 Բայանվան սեռ *յեւելնալո* Զքմ. 226 P.P. *յեւելցած* Զքմ. 101 Այստեղ պատճառական *յեւելցնես* ներկայի եզ 3-րդ դ «ավելացնում ես» Զքբ մլզ, Զքմ. 198. *յեւելցնէ* /ներկայի եզ 3-րդ դ/ Զքմ. 107 *յեւելցո* /հրամ/ Զքմ. 188, 213, 279 Բայական անուն *յեւելված*/=դաս *յաւելուած*/ Զքմ. 258 *յեւելվծոյ*/ սեռ Զքբ/ մլէ. *ի յեվելվծէ* կամ *յեվելվածէ* /բացառ/ Զքբ մկղ *յեւելվածք* /հոգն ուղղ /Զքմ. 180 *յեւելվածոց* /հոգն սեռ/ Զքբ մլը *յեւելվծերոյ*/հոգն սեռ/ Զքբ մծզ *յերցնես*/ =դաս *յարուցանես*/ Զքբ մծզ, *յերցնէ*/ ներկայի եզ 3-րդ դ/ Զքմ. 194, *յերոյ* կամ *յերո* հրամ Զքբ, մծք, մկլճ Զքմ. 137, 239, 247, 248, 250, 258 և այլն[6]

§ 393-ի վերաբերյալ *այնեմ* ձևի վկայություններ և ուրիշ օրինակներ տե՛ս Բառարանում - Այլ օրինակներ են *ժայժէ* žaižĕ (=դաս *շարժէ*) Զքմ. 266, *ժայժի* žaiži /=դաս *շարժի*/ Զքմ. 29, 257. *քայշէ* kašĕ /=դաս *քարշէ*/ ԴԳ ձևի *քայժին* paižin /ավելի հին *քարժին* ձևից/ «քաժին» ԴԳ գ Նաև *այլոյր* ailuir /= դաս *այլիւր*/ Զքբ ճիղ, ԴԳ ճհգ *դքայլ* t*kail «գդալ» /=դաս *դրգալ*/ Զքբ մկա *համայնք* hamaink[c] «հրաման» Սիսվ 475 *համանք*/=դաս *հրամանք*/ ձևի կողքին *հայհրնդյնէ* haihəndçənĕ «հանդարտեցնում է» և դուգահեռ *հահրնդյնէ*, որ ծագում է ըստ երևույթին, **հարհրնդյնէ* ձևից Ասվածից ելնելով, պետք է §38-ի հնչյունական օրենքը ձևակերպել ավելի ընդհանուր ձևով[7]

---

[6] Միայն առանձին դեպքերում երևում է *յարո* yaro /հրամայական/ դասական ձևը /Զքմ. 249, 250/ Սմբատը, սակայն Անտիոքի ասսիզներում և Դատաստանագրքում դեռևս օգտագործում է *յաւելնալ*, *յաւելցնել* ձևերը որոնք ավելի հին լինելով, արհեստականորեն գոյություն են պահպանում գրականության մեջ օր 45$_{11}$, 47$_{20}$, 55$_{7}$, ԴԳ ժա, ղգ և այլն

[7] § 8 գ-ի վերաբերյալ ասվածից հետո ինքնըստինքյան հասկանալի պիտի լինի, որ այստեղ օգտագործվող ai տառադարձությունը ոչ թե հնչյունաբանական է և

§ 41-ի *ծանոթագրության վերաբերյալ* Զգբ ձեռագրում բառավերջի հին *-ո* կապակցության փոխարեն, լինի այն նախնական թե երկրորդային, կանոնավոր ձևով գրվում է *էո* Օրինակ, *էո*/=դաս *ո.*/Զգբ ճիե, ճիլե, ճզղ, ճղէ, մծը. *ղէո* /=դաս *ղեո* /Զգբ մի, միզ, միղ. *ճմէոն*/ =դաս *ճմեոն*/ Զգբ ճղ, մծ, մծա *սիսէո*/=դաս *սիսեոն*/ Զգբ մկզ, մկ *կշէո* /փխ *կշեո* = դաս *կշիո*/ Զգբ լէ, լ, լսէ, ճզ, ճը, ղ, ղը, ճշ, ճժա, ճլզ, մխա, մկզ և այլն Սակայն նախավերջին վանկում միշտ *ե*-ով է գրվում *ի կշեռէ, կշեռով* -Նոր հայերենի տարբեր բարբառներում, օրինակ, լեհահայ բարբառում /Han. WZKM 1, 284/ մենք գտնում ենք, որ այս դեպքում /այսինքն ի բաղաձայնից առաջ/ հին e հնչյունը մնում է պարզ, իսկ եթե այդ հնչյունական վիճակն ընդունենք արդեն միջին հայերենի համար, բացատրելի կդառնա վերևում բերված գրելաձևը Այն որևէ կանայականության արդյունք չէ Զգբ ձեռագիրը գրված է այնպիսի մեծ խնամքով ու բարձր որակով, որ անհամատեղելի է կանայականության հետ Ավելի շուտ այդ նորաբարությունը պայմանավորված է պարզության և հնարավորին չափ մեծ ճշգրտության ձգտումով Երկբարբառայնացած e հնչյունի նշանն այստեղ, քանի որ երկբարբառայնացումը տեղի չի ունենում, փոխարինվում է *է*-ով՝ պարզ e հնչյունի նշանով Բնականաբար, հիշված գրելաձևը հնարավոր է միայն բառավերջի վանկում, քանի որ բառամիջի վանկում /*կշեռէ, կշեռով* ձևերում/ *ե*-ն միշտ պահպանում է պարզ հնչյունը Ուրիշ, պակաս խնամքով գրված ձեռագրերը պահպանում են ամենուրեք պատմական, կիլիկյան հայերենի համար ոչ այնքան ճշգրիտ *ե*-ով գրությունը § 41-ի հնչյունական օրենքին պետք է ավելացնել հետևյալ սահմանափակումը կոշտ r հնչյունից առաջ հնարավոր է միայն կոշտ e և երբեք փափուկ երկբարբառայնացած e հնչյունը

§ *43-ի վերաբերյալ* ա) *Իրիմ* /=դաս *երիմ*/ Գիրք վաստ մլա, մխդ. *իրիկամն* /=դաս *երիկամն*/ ԶգԱ. 93, 110 *իրիկմնցվի* ԶգԱ. 88, 101 *իրիկմանց* Զգբ ճը Զգբ ձեռագրում *երակ*-ի փոխարեն մի անգամ գործածվող *իրակ* /մխե/ նույնպես հազիվ թե պետք է համարել զուտ գրչական մի սխալ

բ) *Ածիլէ* /= դաս *ածելէ*/ «սափրում է» Զգբ մլը, մխ, մխը *գինէ* /= դաս *գենու*/ «մորթում է» Զգբ մկ

համապատասխանում է իսկական արտասանությանը, այլ արտահայտում է սոսկ a հնչյունի մի հատուկ երանգ նայերից առաջ

Ավելի հին վաղ կիլիկյան շրջանում, այստեղ, ինչպես նաև ամենուրեք, *այ*-ը պետք է հնչեր որպես երկբարբառ

§ 43. գ-ի վերաբերյալ Յիմեկնեմ ճևիկ բայի Դատաստանագրքում վկայված են նաև *յիմէ* «սպասում է, հապաղում է» /փխ *յեմէ/ հբ*, ճէ, ճհէ. *յիմելոյ* /բայանվան սեռ / ճէ, ճխ. *յիմեկնէ* /փխ *յեմեկնէ*/ «ուշացնում է» ճա *յիմեկնեն* լգ *յիմեկուսել լինայ* և *լինայ յիմեկուսել* ճա. *յիմեկնաւղին* ճա.

§ 44-ի վերաբերյալ Նույն հնչյունական օրենքին ենթարկվում են նաև հետևյալ կիլիկյան ճևերը *աղջոյր*/aγčuir/ =դաս *եղջիւր*/ Զգև. 48, Զգբ ճը. *աղջոյրի* /սեռ / Զգև. 47, 258 *եղնաղջոյրի* «եղնիկի եղջյուրի» Զգբ մկզ *աղջոյրու* aγčuiru /=դաս *եղջերու*/ սեռ. *աղջոյրվի* կամ *աղջուրվի* Զգև. 135, 267, 258, *աղջոյրվի աղջոյր* «եղջերվի եղջյուր» Զգև. 257, 300, 302, 303, Զգբ մնդ, մկզ *աղջոյրվի աղջոյրի* Զգև. 258, 259 /երկու անգամ/ *աղջոյրենի* aγčuireni/= դաս *եղջերենի*/ սեռ *աղջոյրենոյն* Զգև. 48 Այն, որ *աղբայր* aγpair-ը մաքուր կիլիկյան ճև է, իսկ *եղբայր*-ը դասական է, ապացուցում են հետևյալ ճևերը *աղբայր* ԴԳ ղե, ղզ, *աղբաւր* /սեռ / ԴԳ ղե, ճհէ, Լևոնի երգ Dul. 539: Ապա *աղբայր* a-ով ճևը բազմիցս վկայված է 1358 թ կիլիկյան մի փաստաթղթի մեջ /Սիս 413/, Սարվ արտոնագրի մեջ և այլն Ապա *աղբրայ* կամ *աղբրանց արոյն* կապակցությունների մեջ, որ օտար լեզուներով կոչվում է *վիշապի արյուն* Հմմտ Զգև. բժշկական բառարանում *Աղբրայ արուն. արպ՝ տղմմըլլըխուայ* Լադին՝ *սանկիս տրայգռնիս*

§ 45. ա-ի վերաբերյալ Այլ վկայությունների *գ-ղղունկն* /= դաս *գեղունգն*/ Զգբ մհ հոգն հայց *զղղնգնին* Զգբ մհ·

§ 45. բ-ի վերաբերյալ e-ի կորստի այլ օրինակներ են *ի վրայ*/ վիրայ ավելի հին ճևի կողքին և փոխարեն/ Զգբ մլը, մկզ, մկէ, մկթ. *ճմռան*/=դաս *ճմեռան*/ Զգև. 210, 218, 227, 288 *սիտռան*/ =դաս *սիսեռան*/ Զգև. 40, 255, 262, Զգբ իէ, իթ, լ, լզ, մլթ, մծը, մկ, մկզ. *շաքրռայ*/= ավելի հին *շաքրեռայ*/ Զգբ ճի, *շաքրայ* Զգբ ծզ, ճի *պղպղի*/=դաս *պղպեղի*/ Զգբ ժթ, իզ Զգև. 236, 240, 257, 305 և այլն *պղպղհատ*/=դաս. *պղպեղհատ*/ Զգև. 212 և այլն Ըստ այդմ, համապատասխան հնչյունական օրենքը պետք է ճևակերպել հետևյալ կերպ. դաս *և* e -ը կորչում է բառամիջում հարևան նայի ազդեցությամբ, նույն ճևով, ինչպես դաս *ո* o

§ 46-ի վերաբերյալ Բառավերջի է-ն, ինչպես նախնական, այնպես էլ երկրորդային, կորչում է ձայնավոր թեքույթից առաջ Օր *պախրէ* «արջառ» սեռ *պախրի* Զգև. 220, 310, *հնդակէ* «աղյան» սեռ *հնդակի* Զգև. 85, 104, 203 *մազռաքէ* «մաստաք» դործ *մազռաքով* Զգև. 187, 219· Այդպես է

առաջանում նաև *չի* či /ժխտական ներկայի եզ. 3-րդ դ./՝ նախնական *չէ ի* če i կապակցությունից:

§ 57.4 -ի վերաբերյալ: Այն ենթադրությունը, որ *գնուրդի, սալուրդի* բառերում *-ուրդի*-ն ծագում է հհ-*որդ* վերջածանցից, խոսում են կիլիկյան əγort, γort /=դաս. *ուղղորդ/, պահնորդ/*=դաս. *պահանորդ/* և այլ ձևերը, որտեղ նույն վերջածանցը պահպանվում է անփոփոխ ձևով: Այժմ ես այդ բարդությունների *-ուրդի* տարրը նույնական եմ հայտարարում կիլ. *ուրդի* «պատահում է» բառի հետ, որի համադրությունը հհ. *յորդեմ, յորդիմ* բառի հետ[8] նշանակության տարբերության և հնչյունական օրինաչափ համապատասխանությունների պակասի պայմաններում խիստ կասկածելի է թվում: Նույն հնչյունափոխության այլ օրինակներն են. *մուճիր* mujir Զքբ մկզ «ածխափոշի» /=դաս. *մոճիր/, փուշի*[9] pᶜuši Զքբ մծէ, մկզ, մհ, հծը /=դաս. *փոշի*/:

§ 58.5-ի վերաբերյալ: Այլ վկայություններ. *ժողվէ* /=դաս. *ժողովէ*/ ԴԳ իդ, ճժե, Զքբ իա, իդ, Զգև. 253. *ժողովի* Զգև. 190. *ժողվեն* ԴԳ ճկզ. *ժողովին* Զգև. 169. *ժողվել* /անորոշ դերբայ/ 13_7, Զգև. 225. *ժողովել* /անկյալի դերբայ/ 15_{15}, 35_{13}. *խորվես*/=դաս. *խորովես*/ Զգև. 110, 136, *խորվէ* Զքբ, կէ, մկէ. *խորոված* Զգև. 111, 165, Զքբ իե, ճլթ, ճկզ. *խորվնայ* /=դաս.**խորովանայ*/ Զքբ միա. *խոշրնայ* /= դաս. *խոշորանայ*/ «գիրանում է» Զգև. 210. *խոշրուվիին*/=դաս. *խոշորութիւն*/ «գիրություն, կոշտություն» Զքբ միզ, մլը, մլը. *ծոծրակ* /= դաս. *ծոծորակ*/ Զքբ միս, միզ. *կտրել* /= դաս. *կտորել*/ «խփել, կտրել» ԴԳ ճհ. *մոլրած/մոլրիլ* բայի դերբայը = դաս. *մոլորիլ*/ ԴԳ ճհէ. *յորդրէ*/=դաս. *յորդորէ*/ Զգև. 49, 190. *սովրի*/=դաս. *սովորի*/ «սովոր է» Զգև. 128. *սովրեայո*/=դաս. *սովորեայո*/ Զգև. 296, Զքբ մկզ: Այսպիսով, հնչյունական օրենքն արդեն կիլիկյան հայերենի համար համընդհանուր բնույթ է ստացել:

Կիլ. *կոյզ*/=դաս. *ողկույզ*/ բառում, *ղ*-ից առաջ բառասկզբի *ո*-ի կանոնավոր կորստից հետո, պարզեցման է ենթարկվել նաև հաջորդող բաղաձայնախումբը. ավելի հին oγguis ձևը դարձել է guis, ինչպես ավելի հին uγγort դարձել է կիլ. γort /հմմտ. վերևում՝ *§* 61, ինչպես նաև էջ 16 տողատակի ծան.[10]:

---

[8] Ինչպես որ դա արված է Զքբ 560:

[9] *Փուշի*-ի փոխարեն Զգև-ի մեջ գրվում է *փոյշի*. օր., Զգև. 259:

[10] Ուշագրավ է, որ նույն աղբյուրն ունի միշտ *ղորդ, ղորդել* ձևերը՝ ավելի հին *ըղորդ, -ել* ձևի փոխարեն: Վերջիններս, *ղուղ* կամ *ղեզ* «ուղեղ», *ղրկել* կամ *զարկել*

§ 66-ի վերաքերյալ Բառամիջում հին ai երկարբառին առանձին դեպքերում համապատասխանում է կիլ e-ն *ձենել* cenel /=դաս *ճայնել*/ ԴԳ ա *ճենել լինին* ԴԳ ճհէ[11] Ծան 1-ի կապակցությամբ կարելի է հիշատակել թեկուզ և ոչ կիլիկյան *յենում* կամ *յենումն* «ապա, այն ժամանակ» մասնիկը, որ ծագում է հհ * *յայնում* ձևից Այն հաճախակի վկայված է Փարիզի Ազգային գրադարանի երեք մասից բաղկացած №106 բժշկական ձեռագրում Հմմտ Հ 437

§ 70 Հավելվածի վերաքերյալ Երբ բառի վերջին վանկում *ոյ* կապակցությունը բառի երկարացման պատճառով տեղափոխվում է բառամիջի դիրք, պահպանվում է նույնությամբ, մինչդեռ դասական հայերենի քերականական կանոնների համաձայն այդտեղ սպասվում է *ու* Օր՝ *բոյնին* Զգբ **մկզ** *բոյնով* Զգբ **մկզ** *գոյնով* Զգբ **մկզ** *բոյթանա* «բմամատիղ» Զգբ **մխզ** *գոյներոյս* Զգբ **մխզ** *պատրոյգին* Զգբ ճէ *բոյովտի /բուրվտի* ճևի կողքին/ 21_{20}, 49_{28} և այլն Դասական գրությունից այդ շեղումը դժվար թե որպես հիմք ունենա միայն ազատ գրելաձևը, որ թույլ է տալիս հին *ոյ* երկբարբառի պարզեցումից հետո խառնել իրար *ա*-ի երկու նշանագրերը Հաշվի առնելով այդ գրության հաճախականությունն ու կայունությունը, ինչպես նաև նոր հայերենի փաստերը, ավելի շուտ պետք է ընդունել այստեղ իսկական արտասանական շեղումը հին լեզվից

§ 721 վերաքերյալ Այդ դրույթի հաստատման համար բերենք նաև հետևյալ վկայությունները *արոյն* Զգբ գ, խ, ծ, ճգ, իա, Զգա 19, 22, 47, 48, 107, 109, 166 167, 168, 179, 180 235, 282 *արոյնի* /սեռ/ Զգա 259 *յարյոնէ* /բայաո/ Զգբ հէ, ճկ, մխզ, Զգա 179 239 *արոյնով* /դործ/ Զգբ մգզ, Զգա 163, *հարոյր* 937, ԴԳ հզ *արոյր*, Զգբ ճժ, ճծ, ճծզ, ճծե, մկե, ճկէ, ճկը, մծզ, մխզ, մծէ, մծթե, մկզ Զգա 138, 162, 175, 176, 179, 182, 234, 253 306 *արոյրի* /սեռ/ Զգա 259 *առոյծ* Զգա 88 *առուծու* /սեռ/ Զգբ մկզ *հերբոյն* «պալար» Զգբ ճճգ *դոյր* Զգբ մլթե, ԴԳ կզ, Զգա 239, *դոյրումթիւն* Զգա 223, 225, 226 *դոյրել* /=դաս *դիւրել*/ «հեռացնել, անջատել» Զգբ մծզ Այլ վկայություններ նույն հնչյունական օրենքի համար *աղբոյր* aγpuir /=դաս *աղբիւր*/ սեռ *աղբիւրի* Զգա 245, 246, 247/ *թոյր* tuir /=դաս *թիւր*/ «ծուռ» Զգա 224 *ծարոյր* jaruir /=դաս *ծարիր, ծարիւր*/ 181, 182, 245, Զգբ

«ուղարկել» ձևերի հետ մեկտեղ, հաճախական են նաև կիլիկյան բժշկական գրականության մեջ

[11] Հմմտ Լհհ cenelu «կանչել» can «ձայն» ձևի կողքին /WZKM 1, 285/. *Ջենենք* լհհահայ ձևն առկա է արդեն Լվովի 1467 թ փաստաթղթի մեջ /Մին Լհհ 110/

ձծթ. *հոյթ* huit^{c} /=դաս. *հիւթ*/ Զքբ ճհդ/ երկու անգամ/. *հոյս*/= դաս. *հիւսն*/Դ-Գ ա. *հոյրակլեն* huiraglen/=դաս. *հիւրընկալեն*/ Դ-Գ լ. *ճոյն*/= դաս. *ճիւն*/ ՝ *ի ճոյնաջրէ* կապակկուվիյան մեջ Զգա. 281. *ճոյնին* /սեռ./ Զքբ մկզ. *ճոյնով* /գործ./ Զգա. 46, 128. *հերոյն* Գ-իրք վաստ. *հերուն* heruin, herun /=դաս. *հերիւն*/, գործ. *հերիւնով*. Ճառընտ. Երզնկացի. *ճոյթ* cuit^{c}/=դաս. *ճիւթ*/ Զգա. 257, 299, Զքբ, ճծ, ճճա, ճճդ, ճղ, ճղա, ճղդ, ճղե, մբ, մդ, մկզ. Դ-Գ գ. *մարմջոյն* marmčuin /=դաս. *մարմաջիւն*/ «մաշկի մռմռալը» Զգա. 260: -Ապա նաև *աղջոյր, աղջոյրու, աղջոյրենի* /=դաս. *եղջիւր, *եղջիւրու, *եղջիւրենի*[12]/: Հմմտ. վերևում § 44-ի վերաբերյալ:

§ *80.2-ի վերաբերյալ*: Հին *-եայ-*ին փոխարինող *-է-*ի այլ օրինակներն են. *աւրհնէք* «օրհնուիյուն» Դ-Գ իգ. *խոտչէք* «արոտավայրի վարձ» Դ-Գ ա. *փաւշամնչէք* «տուժանք» Դ-Գ, ճբ. *չէքուչէք* և *չէքչէք* /=չէք-ու-չէք կամ չէք-չէք / «տուրք, հարկ *հատկապես ապօրինի* կամ *հարկադրանքով վերցրած*»/, Դ-Գ ա, Մխ. Գոշ Բ 316. գործ. *չէքուչէօք* Գեորգ Բանիբունի մոտ/ Մեկն. Եսայու- մոտավորապես 1292 թ.[13]: -Շատ տարածված է *-է-*ով ածականը՝ որպես հին *-եայ-*ի համապատասխանություն: Այսպես գտնում ենք. *ապիկէ* «ապակյա» Զգա. 46,64, 69, 115, 116, 255. Զքբ կգ, կղ, ճժթ. *ապրիշում, «մետաքսյա»* Զգա. 236, 246, 248, Զքբ, մծղ, մծն. *բամբկէ, «բամբակե»* Զքբ մժն. *երկթէ* Դ-Գ կ. *կաւէ* Զգա. 253. *պղնձէ* կամ *պղնծէ* Զգա. 250, 274, Զքբ մա, մկե, ճղ, ճղե. *պրիսմէ* «մետաքսյա» Դ-Գ ա, Զքբ ճը, մխե. *պրտուէ* կամ *պրտվէ* «պապիրուսից պատրաստված» Զգա. 47, Զքբ, ճլթ, ճխղ, մծթ. *փայտէ* Զքբ ծղ, *քարէ* Զքբ ծղ, ճժէ, ճհդ, ճհե, ճղէ, մծղ և այլն:

§ *83-ի հավելվածի վերաբերյալ*: Կիլիկյան *խմելեստան* «խմիչքներ», *հայրենեստան* «կալվածքներ» և այլն ծագում են **խմելի-ա-ստան, *հայրենի-ա-ստան* ձևերից՝ **խմելե-ա-ստան, *հայրենե-ա-ստան* ձևերի նիչնորդումով: Հմմտ. հհ. *բարեկամ*<**բարի-ա-կամ, որդեգիր*<**որդի-ա-գիր, *<բարեգոյն, *<բարի-ա-գոյն* և այլն:

§ 84-ի *վերաբերյալ*: Ինչպես որ *իրար*-ը ծագում է *իրեար* ձևից, այնպես էլ *կորան, հանգաւ* անց. կատարյալի ձևերը ծագում են *կորեան/*=կորիան, հանգեաւ/-*հանգիաւ/*, ձևերից՝ ձայնավորի կորստով: Այնպես որ

---

[12] *Արձանագրություններում* ունենք. *զտան խաչգոյտին* /=դաս. *զիւտին*/ 1253 թ. մի արձանագրության մեջ /Շիր. 26/. *զիմ զանճագին զեղմ զնորաղբոյրիկ* /=դաս. - *աղբիւրիկ*/ 1262 թ. մի արձանագրության մեջ /Շիր. 119/ և այլն:

[13] Ավելի մանրամասն տե՛ս Բառարանում:

այստեղ գործ ունենք ոչ թե հնչյունական, այլ ճևաբանական փոփոխությյան հետ:

§ 99-ի հավելվածի 3-ի վերաբերյալ:

Հնչյունական օրենքի հաստատման համար բերենք նաև հետևյալ վկայությունները. *կարք/*=դաս. *կարգ*/ ԴԳ *ժդ, ժը, խը, ծե, կդ, հա, հը, ղը, ղէ, ճլա, ճլը, ճկէ, ճկվե. ավաք* /=դաս. *աւագ*/ Զգբ *ծգ, միդ, մծա, մկդ,* ԴԳ *կվե* և այլն. *պռոյք* /=դաս. *պռոյգ*/ ԴԳ *հե, հը*/ երկու անգամ/:

Շնչեղայման նոր օրինակներ են. *պատրոյք* /=դաս. *պատրոյգ* կամ *պատրոյկ* Զգբ *մժդ, մժե, զարք* /=դաս. *զարկ*/ Զգբ *ճղզ, ճղէ, մկդ, մկվե. որվճն*/=դաս. *որկն*/ Զգբ *մի, մկե,* /երկու անգամ/. *որց*/=դաս. *որճ*/ Զգբ *ճիղ. վարց*/=դաս. *վարճ*/ ԴԳ *ճկա, ճկը. քարց*/=դաս. *քարճ*/ «կարճ, կարճամորուս» Գիրք վասա.: *Ազգք* գրուվյունը հետևյալ արտահայտությունների. *այտ ազգք* Զգբ *մկե, այլ մօտաւոր ազգք լինի* Անս. Անտ. $71_{3,4}$ պետք է կապել այդ հնչյունական երևույթի հետ[14]:

Ավելի ուշագրավ է, որ հհ. *շոգի* բառի համար կանոնավոր ճևով գտնում ենք *շոքի* շնչեղացած ճևը: Վկայությունները. *շոքի* šokʿi Զգբ *մժէ, մկէ, մկզ,* ԶգԱ. 200. *շոքոյ* /սեռ./ Զգբ *մկը, մկզ*:

§ 108-ի վերաբերյալ: *Յիշվել* բառն «ուժի մեջ լինել, օրինական ուժ ունենալ» նշանակությունից բացի, «հարճակում, ասպատակություն կատարել» նշանակությունն էլ ունի: Վկայությունները. Դատաստանագրքից. *յիշվէ ա, լգ, ղդ* /երկու անգամ/, *ճխ, ճխզ, ճծզ. յիշուի ճժդ. յիշուելոյն ա*:

§ 109-ի վերաբերյալ: Այլ վկայություններն են. *սղալ* ԴԳ *ճհե*, Գիրք վասա. 259. *անսղալ* ԴԳ *կա, կզ, հը, ճհե, ճհզ,* Զգբ *մկվե. սղալանք* ԴԳ *իա. սղալանայ* ԴԳ, *լգ, հա. սղալ է* ԴԳ *ճժ*:

§ 111 ա-ի վերաբերյալ: *Աւտալ* /=դաս. *հաւատալ*/ ճևի հետ հմմտ. կիլ. *ատակ* adag /=դաս. *յատակ*/ Գիրք վասա. *մժդ,* Զգբ *միզ.* բաղմաթիվ վկայություններ: Նաև *անդերճ* and'erc /=դաս. *հանդերձ*/ ԶգԱ. 214, ինչպես նաև *ուզել* uzel /=դաս. *յուզել*/: Հմմտ. ատորև՝ § 117-ի վերաբերյալ:

---

[14] Համապատասխան շնչեղացման դեպքերը Նոր հայկազյանում. *խորճ* փխ. *խորդ* «կոտոշ», *մորչ* փխ. *մորճ*; Հմմտ. նաև Նոր հայկազյան բառարանում բերված զուգահեռ ճևերը. *կետ* և *ճետ* «պոչ», *քղակ* և զղակ, զտակ. *քուց* և *զուց=զուղճ* «տափակաճուկ»:

§117-ի վերաբերյալ: Բառասկզբի *յ* y հնչյունի կորուստը՝ նշանակումբյան ուժեղ փոփոխումբյամբ հանդերձ, հանդես է բերում կիլ. *ուզել* «ցանկանալ, փափագել» 11_{19}, $13_{23,\ 38}$, *ուզենալ* 13_{7}, 17_{24} /=դաս. *յուզել* «որոնել, հետազոտել»:

§ 119-ի վերաբերյալ: Այն բանը, որ *-այ* վերջավորումբյամբ գոյականների թեք հոլովներում վերջավորումբյունն եթե ամբողջումբյամբ կորած չէր, ապա գոնե կորչելու վրա էր, ցույց են տալիս այնպիսի ձևեր, ինչպես *տղին* dyin /=դաս. *տղայի*/ Զքբ մի. *բակլի* pagli /=դաս. *բակլայի*/ ԶզԱ. 162. *մուխաւորի* muxadri /ուղղ. *մուխաւորայ* «վտանգ, ռիսկ» /Զքբ միզ, միղ:

§ 132-ի վերաբերյալ: Այլ վկայումբյուններն են. *ընդ նեքսէ* ԶզԱ. 183, 190, 194, 203, 208. *ցնեքսէ* ԶզԱ., 228. *խամճեկ* ԶզԱ. 259. *սպիկիկ* ԶզԱ. 156, 275. ԴԳ հբ, ճխե, ճկէ: - *§* 132-ից հետո պետք է որպես *§*132* ավելացնել հետևյալը. [ծ] դաս. *ջր* jr=կիլ. ջ j. *ջաղայք* /=դաս. *ջրաղայք* /ԴԳ ճէ, ճժ. *ջաղյայ* /եզ. սեռ./ ԴԳ ճհդ. *ջաղյնոյ* կամ *ջաղայնոյ* /հոգն. սեռ./ ԴԳ պ, ճժ. *գ-ջաղյպներն* ԴԳ ճհդ:

§ 137-ի վերաբերյալ: Այդ հնչյունական առնմանումի այլ օրինակներն են. *ջախյայ* /*ջաղյայ* ավելի հին ճևից, ուղղ. *ջաղայք* Զքբ մկզ/ *ախչքմաւր/աղջկնմաւր* ավելի հին ճևից, ուղղ. *աղջկնմայր* /Զքբ մկզ. *ընդ ախիրթուլթենէ/ յաղիրթուլթենէ* ճևի կողքին / ԴԳ ճկը. *գխթոր*/=դաս. *գղթոր*/ Զքբ մկզ. *թուխթ* /= ավելի հին *թուղթ*/ «կշռի չափ» Զքբ մկզ: Վկայված են նաև *թախթ* /=դաս. *թաղթ*/ Զքբ մխե, միզ, մլը, մխը. *թուխթ* /=դաս. *թուղթ*/ «նամակ, փաստաթուղթ» ԴԳ ճ, ճա, ճթ, ճժ, ճլզ: Ի տարբերումբյուն դրան՝ ուշ միջին հայերեն /նաև նոր հայերեն/ *քախնել*/= դաս. *քաղհանել*/ առաջացել է ավելի հին *քաղհնել* ճևից/ Գիրք վաստ. Բ/ հնչյուններ ի ճուլման ճանապարհով: Նույնատիպ երևույթի մասին հմմտ. *§* 124: Ղ հնչյունը կլանվում է անմիջապես հաջորդող *խ*-ի կողմից արդեն նախակիլիկյան շրջանում. *բղխել>բխել, աղխ>ախ, աղխել>ախել, ջաղխել>ջախել, ջաղխումն>ջախումն* և այլն[15]: Հնչյունափոխումբյունը կարող էր տեղի ունենալ միայն այն բանից հետո, երբ *ղ*-ն կորցրել էր յուր նախնական հնչունական արժեքը և դարձել *γ*, այսինքն հին հայերենի շրջանի վերջում: Այդ-

[15] Մի քանի օրինակ Աղեքսանդրի պատմումբյունից. ախեցին «փակեցին» էջ 64_{11} *բխեն* էջ 69_{2}, *ջախեաց* էջ 91_{10}: Հմմտ. նաև *գուց* և *քուց* փխ. ավելի հին *գուղճ*:

պիսով, որպես ուշ երևույթ, այն վերաբերում է միջին և հատկապես կիլիկյան հայերենի շրջանին:

§ 143-ի վերաբերյալ: *Ինչուի* ձևի այլ վկայությունները տե՛ս Բառարանում: Վկայությունն տեղեր *յեղմ* և *յեղմն* բառերի համար. ԶգԱ. 29, 30_{55}, 63, 64, 68, 69, 139, 156, 235, 257, 277, ԶգԲ խա, խզ, ծզ, ճէ, ղը, ճժը, ճժզ, ժիե, ճլե, ճխզ, ճճա, ճղզ, մա, մխա, մծզ, մծիճ, մկա, մկե, մկզ և այլն[16]: Երկու ձևերից արմատական է միայն եղմ. *յեղմն=ի+եղմ+ն*, որտեղ վերջին ն բաղաձայնը դերանվանական մասնիկ է: Այստեղ, ինչպես նաև *ինչու*-ի դեպքում, կիլիկյան հայերենը պահպանել է նախնական ձևը:

§ 144 և հաջ.: § 147 և § 148-ի միջև պետք է ավելացնել հետևյալը: *Առնմանում*: Ձայնավորների առնմանումը գույց առկա է կիլ. *ոսկոր* oskor /=դաս. *ոսկր* կամ *ոսկըր*/ ձևի մեջ. ԶգԲ ճլիճ, մկզ. Գիրք վաստ. 221_{19}: Ընդհանրապես այստեղ պետք է մտածել արդեն հին հայերենում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների մասին: Կիլ. *կորեկ* cor'eg ԴԳ ճիզ, ԶգԲ միզ, ԶգԱ. 112, 213, 219 ծագում է հհ. *կերեակ* çereak ձևից. e հնչյունը դարձել է o հարևան c-ի *մուխ գումավորման* ազդեցությամբ:

Բաղաձայնական առնմանման դեպքերն արդեն նկարագրվել են վերևում. հմմտ. հատկապես §124, 137, 142: Բերենք նաև հետևյալ օրինակները. ա) *ժաժուն* ԴԳ խա, որ ծագում է ավելի հին *շարժուն* ձևից, *ժաժելն* žaželn «սրտի բաբախում» ԶգԲ ծա /=դաս. *շարժել*/, *ժաժի* կրավոր. žaži, ներկայի եզ. 3-րդ դ. ԶգԲ մժե /=դաս. *շարժի*/. *ժաժէ* žažę հրամ. ԶգԲ մխէ /=դաս. *շարժեա*/. *կու ժաժեն* սահմ. ներկայի եզ. 3-րդ դ. ԶգԲ մժզ: Ավելացնենք նաև արդեն վերևում բերված *այ*-ով ձևերը. *ժայժէ* ԶգԱ. 266, *ժայժի* ԶգԱ. 29, 257:

բ) Ասոմնային ռնգայինի առնմանումը հաջորդող քմայինին առկա է հետևյալ օրինակներում. *ամպակ* ambag/=դաս. *անապակ*/, որ վկայված է *ամպակ գինի* կապակցության մեջ ԳԻրք վաստ. 240, ԶգԲ ճզ, ճի, մխա, մծը, մկզ, մկլճ և այլն. *կամփի* gampi կամ *կանփի* ուղղ. *կանափ* «կանեփ» ԶգԲ մկլճ: Հմմտ. նհ, *ճամբայ*< մհ. *ճանբահ* «ճանապարհ»:

գ) *Ախչքմայր* axčknmair սեռ. *ախչքմաւր* ԶգԲ մկզ: Պակաս ճշգրիտ է այդ դեպքում *աղչքմաւր* գրությունը /ԶգԲ ճկէ, ճղզ, մկզ, մկէ/:

---

[16] Վիենայի № 337 ձեռագրի հհ. բառարանը ցույց է տալիս *եղմիկ* նվազական ձևը /էջ 180^{m}/. որ այն համադրվում է *մեղմիկ* ձևի հետ:

§ 144.1-ի վերաբերյալ: Այլ վկայուվթյուններն են. *ծանտր* ԴԳ ճիվթ. *ծանդրմա* ԶգԱ. 233. *մանտր* ԴԳ ճլե, ճկս, ճհգ, Զգբ ժդ, ժէ, իվթ, խ, կզ, ղա, ճժա, ճկա, ճհե, միե. *մանդր* Զգ Ա. 156. *մանդրեն* ԶգԱ. 215. *մանտրես* Զգբ կը. *մանտրէ* Զգբ ծա, կդ, կը, ծդ, ծէ, խէ, ծդ, խզ. *ի պանդրէ / պանիր* գոյականի բացատ. / ԶգԱ. 233. *պանդրջուր* ԶգԱ. 158:

§ 145. 2-ի վերաբերյալ: Այլ վկայուվթյուններ. *ամբրավ* կամ *ամբրաւ* ԶգԱ. 85, 103, Զգբ մժդ, մժը. *ամբրվի* /սեռ./ ԶգԱ. 261, Զգբ մծվթ. *ամբրաւենի* Զգբ ճճ. *ամբրաւենոյ* կամ *ամբրավենոյ* Զգբ ճճ:

§ 146-ի վերաբերյալ: *Եղինճ* բառի կողքին պետք է հիշատակել նաև հետդասական *պանդանդ* bandand =դաս. *պատանդ*[17]:

§ 147-ի վերաբերյալ: ա) *Խոզրարծ* xozrarj /=դաս. *խոզարած*/ ԴԳ ճհ. *բոզրարծ*/**բոզարած* ավելի հին ճևից[18]/ «հեշտասեր մարդ» ԴԳ հբ /երկու անգամ/. *բոզրծուվթիւն* pozrjutᶜün (<**բոզարածուվթիւն*) «անբարոյական վարք». սեռ. *բոզրծուվթեան* ԴԳ հբ /երկու անգամ/. բացատ. *ի բոզրծուվթենէ* ԴԳ հբ: Միջին հայերեն է արդեն *կարմունջ* garmunǰ փխ. դաս. *կամուրջ*. *կարմունջ* Շիրակի 1215 և 1266 թվթ. արձանագրուվթյուններում /Շիր. էջ 26 կամ 77/. ապա Ստեփանոս Օրբելյանի մոտ էջ 277, Լիպարիտի երգի մեջ /Կոստ. Յովհ. Թլկ. էջ 55/ և այլն:

§ 151-ի վերաբերյալ: *Հ* հնչյունի առաջացումը ցույց են տալիս նաև հետևյալ օրինակները. *հաղնելիք* ԴԳ կ, հբ. *հավրել լինի* «ավերել է» ԴԳ կդ. *հարաւր* «արոր» ԴԳ ճը, Գիրք վաստ., Յովհ. կաթ. *հերքոյն /երքոյն* ճևի կողքին/ «որքին» Զգբ ճճգ, ԶգԱ. 109. *հունդ* /=դաս. *ունդ*/ Զգբ ճխդ, մժե, մծը, մծվթ, մկգ, մկե, մկվթ. *հնդրել* կամ *հնտրել* /= դաս. *ընտրել*/ Զգբ հգ, հէ. Գիրք վաստ. լը:

§ 154-ի վերաբերյալ: Օրինակներ Դատաստանագրքից. *զինչ կեղ ու վ'է* «ինչ տեսակ էլ լինի» *իբ. ու վ'որդիք* «և որդիներ» ճժե:

§ 156-ի վերաբերյալ: *Դիր վի բան տար* «հաստատիր և կիրառիր» Զգբ ճճէ. *ի հետ վի հետ* «կամաց, աստիճանաբար» ԴԳ ճժբ, Զգբ մկե: Սահմանականի մասնիկի դեպքում նույնպես հորանջ տեղի չի ունենում, բա-

[17] Նույն հնչյունափոխուվթյան արդյունքն է նհ. /Տաճկ./ilink<ᶜմհ. *իլիք, իլիքն* Զգբ ճգ: *Իլիք* ճևի համար հմմտ. նույնիմաստ *ի լի, ի լման*:

[18] Դասական լեզվում բացակայում է: Բաղադրամասերի մասին ավելի մանրամասն տե՛ս Բառարանում:

նի որ u ձայնավորը վեր է ածվում համապատասխան կիսաձայնի, ինչպես յուլյ են տալիս հետևյալ օրինակները *կվընգնի* կամ *կընգնի* gvəngni /= *կու ընկնի*/ ԶգՍ. 240, 242 *կվարգիլէ* gvarkilę /=*կու արգիլէ*/ ԶգՍ. 242 Ընդհանրապես բառամիջում, ձայնավոր վերջավորությունից առաջ, նախնական u ձայնավորը դառնում է v Օրինակ, ինչվի inčvi «մինչև»<*ինչու+ի. առմնի* aṙvəni «առուներ»<*առու+անի* Ածմնի ajvəni «արծիվներ»<*ածու+անի* հմմտ ստորև ni-ով հոգնակի

Վերջապես պետք է բերել հետևյալ կարևոր համապատասխանությունները

ա) Դաս *no*=կիլ a *ա՝ մախիր* maxir բառում /= դաս. *մոխիր*/ Վկայություններ *մախիր* ԶգՔ ճհզ, մծվճ, մկ, մկզ, մկը /երկու անգամ/ *մախրի* /սեռ/ ԶգՔ մկզ *ի մախրէն* /բայատ/ ԶգՔ մկզ *մախրով* ԶգՔ մկզ, ԶգՍ. 156 *մախրըջուր* /=դաս *մոխրաջուր*/ Մխ Հեր 148$_9$ Հմմտ Ակնա բարբառում maxir /=*մոխիր*/, t'anir/=*թոնիր*/, xanairh /=*խոնարհ*/, ըստ ԷՋ 57, Ծան 2

բ) Դաս *ե* e=կիլ o *ո՝* կիլ *լոսել* «մանրել, փշրել»=դաս *լեսուլ* Վկայություններ *լոսէ* ԶգՔ ճհ, ճհա, ճհը, ճհզ, ճհե, ճհզ, ճհվճ, ճղզ, մզ, մե, մծզ, մծվճ, մկզ, մկը, մկվճ, մհ. *լոսեն* ԶգՔ ճիա, ճկա, ճհե, մկզ *լոսվի* ԶգՔ մկզ *լոսելոյն* ԶգՔ ճիե *լոսած* ԶգՔ ճլզ, ճճ, ճճե, ճճզ և այլն

գ) Դաս *ն* n= կիլ *լ* l հետևյալ դեպքերում *լափստակ* lap^{c}stak /=դաս *նապաստակ*/ ԶգՍ. 109, 136 Այստեղից ճևեր *լափստակի* սեռ/ ԶգՍ. 135 *լապտակի* ԶգՍ. 251 *լապտակու* /սեռ/ ԶգՔ ճլվճ, մկզ, մկը/ երկու անգամ/ մկվճ/երկու անգամ/[19] - Դրան համապատասխան պետք է ուղղել ԷՋ 101, տողատակի Ծան 1 - Ապա *ավզալ* avzal /=դաս *աւազան*/, գործ *ավզլով* ԶգՍ. 246

դ) Կիլ *զարվճ* կամ *զարզ* zart^c, zart «դատ, բացի»=դաս *զատ* zat: Վկայություններ *զարվճ ի* 47$_{37}$, 65$_{8\ 9}$, ԴԳ ճվճ *զարզ ի* L. 157$_9$, 158$_{29}$, 155$_{15}$ Համապատասխանաբար *զարվճել* zart^{c}el կամ *զարզել* zartel= դաս *զատեալ* zateal Վկայություններ 45$_{11}$, L. 154$_{24}$ Գիրք վաստ 139 և այլն

ե) Կիլ *պատրոյս* badruis =դաս *պատուաստ* patvast. կիլ *պատրուսել* badrusel =դաս *պատուաստել* Վկայություններ *պատրոյս* Գիրք վաստ խզ, մվճ, միզ սեռ *պատրուսի* Գիրք վաստ խզ, միզ. *պատրուսել* Գիրք վաստ խե, խզ, միզ *պատրուսելոյ* Գիրք վաստ մվճ *պատրուսեն* Գիրք վաստ մվճ *պատրուսայու* Գիրք վաստ միզ

---

[19] Անվի ԺՆ. դարի մի արձանագրության մեջ կարդում ենք *Գրեգոր լապաստակի որդին*, Շիր էջ 70

գ) Կիլ *սպրգիկ, սպգիկ*[20], sprgig, spgig «մաքուր» =դաս *սրբիկ /սուրբ+իկ/*[21]

Վկայումիյուններ 59_{23}, Գիրք վասո 9, 57, 183, ԴԳ ճհե, ՋԳՔ իէ, խե, խճ, ղը, ճի, ճիբ, ճիգ, ճիղ, ճճա, ճղ, ճղե, մ, մժդ, մկը, մծա, մկ, մհ Հմմտ § 132

է) Կիլ *հահանդ* hahand «հանդարտ, խաղաղ, թույլ»=դաս *հանդարտ* handart. Վկայումիյուններ *հահանդ* ԶգՍ. 205, ԶգՔ, խէ, խը, խճ, ծ, ծա, ծդ, ծզ, ղը, ճժբ, ճիե, ճճ, ճճբ, ճճդ, ճճզ, ճճէ, ճղզ, ճղէ, մա, մլբ, մկե *հահդուտութիւն* «խաղաղություն», գործ *հահդուտութեամբ* ԴԳ լդ *հահդէ* «խաղաղեցնում է» ԶգՍ. 101, 107, 159, ԶգՔ մկդ, *հահդեն* ներկայի հոգն 3-րդ դ ԶգՍ. 180, 196 *հահդի*, ներկայի եզ 3-րդ դ բժշկ ԶգՍ. 180 *հահդելո* անորոշ դերբ սեռ ԶգՍ. 66 *հահանդկնէ* պատճառ ԶգՔ ճկէ, ճճբ, *հահդնդկնէ* ԶգՔ խը, ծզ, ճժե, մլը, մծէ, մկճ, մհ *հահդնդկնաւդ* ԶգՔ ծէ ԶգՔ մհ վկայված *հայհդնդկնէ* ճևը /հմմտ վերևում § 383-ի վերաբերյալ/ կարծես թե ակնարկում է ավելի հին *հարհանդ* harhand /=դաս *հանդարտ*/

թ) Կիլ *յերջեւ* herč'ev «հետո, հետևում, այնուհետև» =դաս **վերջեաւ*, որի *վերջ* արմատը գտնում ենք *վերջին*, *վերջ* բառերում Վկայումիյուններ ԴԳ ա *ու թէ յերջեւ զսվի առ ոք է պատիկ տուգնվի* «իսկ եթե հետո /մի բան/ գտնվի մեկի մոտ յոթնապատիկ պիտի տուգանվի»[22] ԶգՍ. 222 *զմէկին առջեւ հիմդին դիր և զմէկին յերջեւն* «մեկը հիվանդի առջև դիր ու մեկը հետև» Կիլ *յերջեւ* և դաս *վերջ*, *վերջին* բառերի ընդհանուր արմատը ես դնում եմ *երջ*, որ մաքուր տեսքով, շատ հավանական ճևով առկա է դաս *երջանիկ/=երջ-ան-իկ/* բառում Հմմտ նման հնչյունական համապատասխանությունիներ կիլ *յեղմ*=դաս *մեղմ* կիլ *ինչուի*=դաս *միհչեւի*

Վերևում բերված համապատասխանությունիներն իրենց երկու անդամների մեջ էլ այնքան էական տարբերություններ են հանդես բերում, որ վերջիններս չեն կարող հարաբերության մեջ գտնվել իրար հետ որպես մայր և դուստր ճևեր Կիլիկյան ճևեր, ինչպես *լապատակ, հահանդ, ինչուի, յեղմն, յերջեւ* չեն կարող ծագել *նապաստակ, հանդարտ, միհչեւի, մեղմ, վերջեւ* համապատասխան դասական ճևերից, և այդպիսի զարգացումը չի կարող բացատրվել հնչյունական բնախոսության միջոցով Նույնը վերաբերում է նաև այնպիսի ճևերին, ինչպիսիք են *մախիր* և *մոխիր*, *պապխան* և *պատասխանի*,

---

[20] Վերջին ճևի համար հմմտ § 132, ինչպես նաև § 132-ի հավելվածը

[21] Ավելի մանրամասն տե՛ս Բառարանում

[22] Կիլ *յերջեւ* այստեղ ճշգրտորեն համապատասխանում է հհ *յեսոյ-ին* Մխ Գոշի մոտ նույն տեղում կարդում ենք *դի թէ յեսոյ առ ոք գտցի ընդ միոյ հօմն տուգանեսցի*, Մ Գոշ 312

պոման և *պայման*, *յիշվել* և *իշխել*, *պատրոյս* և *պատրուաստ*, *զարթ* և *զատ*, *ստածել* և *տածել*, *չաք* և *չափ*, *տաք* և *տապ*, *վանց* և *վասն* /քերվում են միայն ամենից ակնառու դեպքերը/ Ոչ էլ *ու* շաղկապն է դասական *եւ*-ի դուստր ձևը Այդ հարաբերությունը բացակա է նաև *մէկ* և *միակ*, *զէտ* և *զիարդ*, *մենակ* և *միայնակ* զույգերում դրանք ավելի շուտ քույր ձևեր են, որոնք պետք է ծագեն նախահայերեն միասնական հիմքի - ձևից «Հնչյունաբանություն» բաժինը կազմելու ժամանակ այդ կիլիկյան ձևերը մասամբ անծանոթ են եղել ինձ, մասամբ էլ, բավարար չափով վկայված չլինելով, մեծ ուշադրության չեն արժանացել Միայն վերևում թվարկված ձեռագրերի մանրամասն ուսումնասիրությունը ստիպել է ինձ ըստ արժանվույն գնահատել դրանք ու բերել նոր, առաջվա դրույթներից տարբերվող եզրակացությունների

Ասպա, պետք է հաշվի առնել նաև հետևյալ փաստերը

1) Կիլիկյան հայերենի բառապաշարը պարունակում է զուտ հայկական տերմինների մի բազմություն, որոնցից դասական լեզվի մեջ ոչ մի հետք չկա

Այդպիսիք են *ակռայ*, *աղէկ*, *դահ* «չոր», *ըռռվկիլ* «սահմանափակվել, բավարարվել մի բանով», *խէչ* «մոտ», *կարիճ* «տղա», *հայնց* «այնպես», *հանաւվրել* կամ *հանռվրել* «ստիպել, բռնաբարել», *ճիճն* «հաճախ», *ճորտ*, *ըղղեղ* և *ըղղեղութիւն* «անուշադիր անուշադրություն», *փնտռել* և այլն

2) Կիլիկյան հայերենն ունի դասական լեզվին անծանոթ մի դերանուն՝ *ինա*, *իսա*, *իտա*, ինչպես նաև *հոն*, *հոս*, *հոտ* նոր դերանվանական մակբայները

Դասական լեզվում բացակա է նաև կիլիկյան հայերենի համար այնքան բնորոշ *նա* մասնիկը, որ կապում է վերջադաս երկրորդական նախադասությունը պայմանի պարբերություններում

3) Հիմքի կազմության էական տարբերություններ առկա են հետևյալ դեպքերում կիլ *մտեմ*=դաս *մտանեմ*, կիլ *գտնում*=դաս *գտանեմ*, կիլ *իջնում*=դաս *իջանեմ*, կիլ *տեսնում*=դաս *տեսանեմ*

Այս դեպքերում կիլիկյան ձևը չի առաջացել հնչյունական օրինաչափությամբ համապատասխան դասականից, և ոչ էլ ձևավորվել է դասական ձևից՝ անալոգիայի և ձևանմանության ճանապարհով Այստեղ առկա է հիմքի կազմության արդեն հին հայերենում եղած մի այլ տարբերակ

4) Ամենից շատ շեղումներ դասական լեզվից կիլիկյան հայերենը հանդես է բերում ձևաբանության բնագավառում Այստեղ աչքի ընկնող երևույթ է *-ամ/ում*/-om վերջավորությամբ եզակի գործիականը/փխ դաս -

ամբ/: Հայերենի հնչյունական օրենքների օգնությամբ այն չի կարելի բխեցնել դասական ճևից. մյուս կողմից, անալոգիայով կազմությունն այստեղ բացառված է: Երկու ճևն էլ, դասական և կիլիկյան, իրարից անկախ *քույր ճևերն են և ծագում են մեկ միասնական նախաճևից*: *Հմմտ.* Զևաբ. § 216: Դասականից էապես տարբեր է հոգնակիի կազմությունը կիլիկյան հայերենում: Կանոնավոր հոգնակերտ մասնիկներն են *-եր* միավանկ /ավելի հազվադեպ բազմավանկ/ և *-ի* բազմավանկ բառերի համար: Երկու մասնիկների հին հայերեն նախորդները *-եար* և *-անի*, առկա են արդեն դասական գրական լեզվի մեջ: Սակայն դրանք վկայված են խիստ հազվադեպ և միայն ոչ մաքուր գրական լեզվով գրված ստեղծագործություններում: Այդ պատճառով դրանք պետք է դիտվեն որպես դասական լեզվին խորթ տարրեր, որովհետև, եթե նրանք հատուկ լինեին դասական ռամկական լեզվին, գրականության մեջ ներկայացված կլինեին բոլորովին այլ քանակով և ոչ *թե միայն մի քանի դեպքերով*[23]: *Եթե ոչ որպես հոգնակերտ մասնիկներ, ապա գոնե որպես հավաքական մասնիկներ* (այդ դեպքում նրանք հանդես են գալիս հին հայերենում): Դա սպասելի էր գոնե ավելի ուշ շրջանի և ոչ մաքուր դասական լեզվով գրված ստեղծագործությունների համար, որտեղ, ինչպես հայտնի է[24], դասական շրջանի ռամկական լեզվի որոշ առանձնահատկություններ դիտվում են որպես գրական և մեծ չափով մասնում են դասական լեզվի մեջ: Ըստ այդմ, կիլիկյան այդ հոգնակերտ մասնիկներն ակնարկում են դասական լեզվից անկախ հին հայերեն մի բարբառի գոյությունը: Նույնը վերաբերում է *-վի, -տի, -վտի* պակաս տարածված կիլիկյան հոգնակերտ մասնիկներին: Կիլիկյան հայերենի խոնարհումը դասականից տարբերվում է սահմանական եղանակի *կու* gu մասնիկի առկայությամբ: *Կու* նախամասնիկը Զրպետյանի քերականության մեջ /էջ XV/ բերվում է որպես հին գորդյան բարբառի մի առանձնահատկություն:

Չնայած որ ես չեմ կարող ստուգել այդ դրույթը, համաձայն եմ այնքանով, որ այս նախամասնիկը, քանի որ չի կարող բացատրվել որպես փոխառություն կամ որևէ հնարավոր դասական նախաճևի շարունակող, անհրաժեշտաբար պետք է գոյություն ունենար հին հայերենի ոչ դասական որևէ բարբառում որպես մակբայ, նույնիսկ եթե սահմանականը ներառող մասնիկի դերը ճեռք է բերել արդեն միջին հայերենում:

Այսպիսով, ներածության մեջ արտահայտված տեսակետն անընդունելի է դառնում, և մենք ստիպված հանդում ենք հետևյալ եզրակացությանը: Կի-

---

[23] Վկայությունները տե՛ս «Զևաբանություն» բաժնում:

[24] Այտընյանի «Քննական քերականության» համաճայն:

լիկյան հայերենը, համենայն դեպս յուր հիմնական մասում, չի կարող համարվել մեզ ավանդված այսպես կոչված դասական հայերենի շարունակությունն կամ դուստր լեզու: Հին հայերենի բարբառային տրոհումն այսպիսով ապացուցված է վերջնական ձևով. այլևս չի կարելի կասկածի ենթարկել այդ դրույթը, որ հաստատվում է, ի միջի այլոց, նաև հին քերականների տվյալներով[25]:

---

[25] Ես մտադիր եմ վերադառնալ այդ թեմային ավելի ուշ՝ հայկական լեզվաճյուղի տրոհմանը նվիրված առանձին հոդվածով: Այստեղ սահմանափակվենք միայն հետևյալ փաստով:

Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը պարունակում է, ի միջի այլոց, ոչ դասական հետևյալ ձևերը. *մունք* «մենք» էջ 52$_{8}$, *դունք* «դուք» 52$_{8}$, *նունք* «նրանք» 52$_{8}$: Թրակացու համաձայն, դրանք իբր թե երկակիի ձևերն են, բայց իրականում պետք է դիտվեն որպես հոգնակի: Նույն ձևերը մենք կրկին գտնում ենք նոր հայերենում *մունք*, *դունք*, *նունք*, ըստ Զրպ. 753, 1, 12, 755, *մունք* Ղարաբաղի բարբառում, ըստ Պատկ. Դիալ. էջ 69: Ապա Դիոն. Թրակացին ծանոթ է *նա* կամ *նայ* ցուցական դերանվան *նոյր* սեռականի ձևին. էջ 52, 20, վերջինս, *դոյր*, *սոյր* ձևերի կողքին խիստ հաճախական է Դավիթ Անհաղթի գրվածքներում, իսկ «ռանկական և քերթողական բառերի» հին բառարանը /Վենետիկի մատենադարանի № 337 ձեռագիրը/ *սոյր* սեռականը բացատրում է որպես *սորա*, *դոյր* որպես *դորա*: Նույն ձևերը կարելի է գտնել նոր հայերենում՝ որպես *նոյր*, *նուր*, *նաւր*, *նըւոր*, *դոյր*, *դուր*, *դաւր*. *դըւոր*, *սոյր*, *սուր*, *սաւր*, *սըւոր*, ըստ Զրպ. 755 և Այտ. Բ 43: *Նով*, եզ. ուղղ. *նա*, գործիականին /Դիոն. Թրակ. 52/ նոր հայերենում նույնպես համապատասխանում է *նով*, *նուով*, *սով*, *սուով*, *դով*, *դուով*, ըստ Զրպ. 755 և Այտ. Բ 43: - Վերջապես Դիոնիսիոս Թրակացու նշած ձևերին. *ունչ*/=դաս. *ինչ*/ 55, *մու*, *մոյն* 40$_{29}$, ըստ § 50, նոր հայերենում նույնպես համապատասխանում են *ունչ*, *մոյն* և *մուն*: Այստեղից հետևում է, որ Դիոնիսիոս Թրակացու մոտ վկայված ձևերն արհեստական չեն, այլ համապատասխան նոր հայերեն ձևերի հին հայերեն նախատիպերն են: Սակայն, դասական լեզվին խորթ լինելով, դրանք անհրաժեշտաբար պետք է ծագեն դասական լեզվից դուրս գտնվող մի բարբառից, և այդ հին քերականն անպայման պետք է օգտագործեր ուրիշ բարբառային նյութ ևս՝ հունարեն բնագրի ձևական հարատուլիյունը վերարտադրելու համար: -Ի միջի այլոց, արդեն դասական լեզվի տվյալներից երևում է հին հայերենի բարբառային տարբերակվածությունը: Դասական հայերենում առկա են, ի միջի այլոց, հետևյալ զուգահեռ ձևերը.

իբրեւ և *իբրու*, *եւշմեւտասան* և *եւշմուտասան*.

ողող և *հղեղ*, *ողողել* և *հղեղել*,

լող և *լեղ*:

ողորկ և *լերկ* կամ *ղերկ*:

Հաշվի առնելով տարբերակների իմաստի բացարձակ նույնությունը, այստեղ բացառում է հնդեվրոպական ճյուղադարձը: Ուստի անհավանական է ճյուղավորների հայկական առանձնացման վարկածը: Եթե, իրոք, այստեղ մենք գործ ունենայինք

Չնայած որ հին հայերեն առանձին բարբառների մասին մեր գիտելիքները խիստ սահմանափակ են, այնուամենայնիվ միջին կիլիկյան հայերենի ծագման հարցին կարելի է որոշակի վստահությամբ պատասխանել:

Զրպետյանի թվարկած և քննարկված հին հայերեն վեց բարբառից[26] ուշադրության է արժանի միայն արևմտյան կամ Փոքր Հայքի բարբառը: Վերջինիս մեջ, որ ըստ երևույթին ներառել է գորդյան բարբառի տարրերը/"dialecte gordien" Զրպ., էջ XVI/[27], մենք պետք է որոնենք կիլիկյան միջին հայերենի արմատները: Հին հայերենի բարբառներից Փոքր Հայքի բարբառը գորդյանից հետո ամենից քիչ է տարբերվում դասական լեզվի հնչյունական վիճակից[28]: Դրանով է բացատրվում, որ նրա միջին հայերեն շարունակությունը կիլիկյան հայերենը, շատ դեպքերում, նույնիսկ դեպքերի մեծամասնության մեջ, միայն չափավոր տարբերություններ է ցույց տալիս դասական հայերենի հնչյունաբանության նկատմամբ, այնպես որ հաճախ կարող է թվալ, թե կիլիկյան ձևերը զարգացել են դասականներից: Իրոք, այդպես կարող էր պատահել առանձին դեպքերում, որպես կանոն, սակայն, դա միայն թվացող երևույթ է: Քանի որ հին շրջանում երկու բարբառներն էլ հնչյունական առումով համեմատաբար քիչ են տարբերվել իրարից, նույնիսկ կիլիկյան հայերենի բազմադարյան պատմական զարգացումից հետո տարբերությունն այնքան ակնառու չպիտի լիներ, որ կանկուսցուն չառաջնար բացատրել այն որպես միևնույն հին լեզվի զուտ պատմական կերպարանափոխության արդյունք:

Ոչ ճշգրիտ լինելով և իրական պատմական իրավիճակին չհամապատասխանելով հանդերձ վերջին մեթոդը կիրառվել է, այնուամենայնիվ, սույն աշխատության մեջ, որովհետև հին կիլիկյան հայերենի մասին գիտե-

---

*առնմանման դասական օրենքի հետ, այն պիտի ընդգրկեր բոլոր նման դեպքերը, այսինքն՝ բոլոր դեպքերում բառավերջի *եւ*-ը պիտի դառնար *ա*, իսկ *ո*-ն *ղ*-ից առաջ պետք է դառնար *ե*: Քանի որ իրականում երևույթը սահմանափակված է մի քանի դեպքերով, հնչյունափոխությունը դասական լեզվի ներսում այստեղ բացառված է: Ավելի շուտ այդ զուգահեռ ձևերը պետք է բացատրվեն որպես զուգահեռ, իրարից անկախ, մեկ միասնական նախատիպից ծագող ձևեր, որոնցից միայն մեկն է սկզբնաղբյուր դասական է, իսկ մյուսը դասական լեզվի մեջ է մտել հին հայերեն ոչ դասական մի բարբառից: Բերենք հետևյալ համապատասխանությունները. դաս. *իբրեւ*: *իբրու*=դաս. *եւ*: կիլ. *ու*. դաս. *որդեղ*: *հեղեղել*=դաս. *որքիւն*: կիլ. *հերթոյն*: Ըստ այդմ *իբրու*, *հեղեղել* և այլ նման հին բարբառային ձևերը պետք է համարել *կիլիկյան* հին հայերեն:

[26] Հմմտ. Զրպ. Préface XI հաջ.:

[27] Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս Զրպ. XVI:

[28] Հմմտ. Զրպ. XIV հաջ.:

լիքների բացակայության պայմաններում միայն դասական հայերենը, որպես հին հայերենի մեզ հայտնի միակ բարբառը, կարող էր ընդունվել որպես համեմատության եղր պատմական շարադրանքի համար, և կիլիկյան հայերենը կարող էր բացատրվել միայն դասական հայերենի միջոցով:

Տարբեր բարբառների բաժանված միջին հայերենի ներսում[29] կիլիկյան հայերենի դիրքի մասին /հմմտ. ներածություն/, ինչպես նաև նոր հայերենի նկատմամբ նրա հարաբերակցության մասին պետք է նկատել հետևյալը. կիլիկյան միջին հայերենը կազմում է արևմտյան կամ Փոքր Հայքի բարբառախմբի հարավային ճյուղը, և կարելի է անվանել այն հարավ-արևմտյան միջին հայերեն: Նույն խմբի հյուսիսային ճյուղի հետ նա միավորված է արևմտահայերենի ընդհանուր հատկանիշներով, բայց տարբերվում է նրանից զանազան առանձնահատկություններով, որոնցից ամենակարևորները են.

ա) Հատուկ կիլիկյան է *-ատ/-օտ* վերջավորությամբ գործիականը: Հյուսիսային խումբը դրա փոխարեն կանոնավոր ձևով ունի *-ով*[30]:

բ) Կիլիկյան հայերենին հատուկ *ինա, իսա, իտա* դերանունները, ինչպես նաև *նարա*/=դաս. *նորա*/, *նաքա*/=դաս. *նոքա*/ դերանվանական ձևերը չեն հրևում հյուսիսային խմբի բարբառներում:

գ) Բարբառախմբերը տարբեր ձևով են կազմում բայահիմքը հետևյալ դեպքերում.

հարավային ճյուղ (կիլիկյան)	հյուսիսային ճյուղ
մտել /դաս. *մտանել*/	*մտնուլ, մտնել*
գտնուլ /դաս. *գտանել*/	*գտնել*
իջնուլ /դաս. *իջանիմ*/	*իջնել, իջնիլ*
տեսնուլ /դաս. *տեսանել*/	*տեսնել* և այլն:

դ) Դերանվանական լծեքնան մեջ հարավային խումբը գիտե միայն *-ոք* վերջավորությամբ հոգնակիի ուղղականը, սեռ. *-ոց* և այլն: Հյուսիսային խումբը, սակայն, ունի հոգն. ուղղ. *-ունք* վերջավորությամբ, սեռ. *-ունց*. օր. *ասոնք, ասոնց /աս* դերանունից/, *որոնք, որոնց/որ* դերանունից/, նաև *ունց*

---

[29] «ԺԴ դարի վերջում հաշվում էին մոտավորապես երեսուն բարբառ, որոնցից ամեն մեկն այն գավառի անունն էր կրում, որտեղ նրանով խոսում էին, բայց բոլորը միասին կոչվում էին *գաւառականք* կամ *ռամկականք*»: - Տրպ. Préface XI:

[30] Օրինակ՝ *կաթի* բառից *կաթով* գործիականն Ախրադատենում /Վիեննայի ձեռագիրը, էջ 273/:

մակբայը/բուն իմաստով ո՞, ո՞վ դերանվան հոգն սեռ/՝ «երբ, այն ժամանակ» իմաստով - օգտագործվում է կիլ *եի* yep՞ դերանվան տեղ

Քանի դեռ կիլիկյան հայերենը պահպանում էր գրական լեզվի իր պաշտոնը, հյուսիսային բարբառը հազիվ թե գտած լիներ գրական արտահայտություն Սակայն ԺԴ դարից[31] այն սկսում է ի հայտ գալ առանձին գրական գործերում Այդ բարբառով են գրում Ամիրդովլաթ Ամասիացին /որի լեզուն, սակայն, գտնվում է կիլիկյան հայերենի բավականին ուժեղ ազդեցության տակ/, Ասար Սեբաստացին, ապա Բունիաթ Սեբաստացին և Աբուսայիդը, բոլորն էլ հյուսիս-արևմտյան Փոքր Հայքի ներկայացուցիչներ Այդ մասին հմմտ Հովհ Բ, 505 հաջ Երզնկացու մոտ և առակներում, ինչպես նաև որոշ ժողովրդական երգերում նույնպես երևում են հյուսիսային բարբառի հետքերը, որ սակայն չի կարողացել դառնալ գրական լեզու

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո կիլիկյան գրական լեզուն նույնպես երկար չի ապրում Կիլիկիացիների գրականության աստիճանաբար լռում է, և նրա հետ միասին մեր տեսադաշտից հեռանում է կիլիկյան հայերենը որ այնքան ուժեղ է եղել չորս դարի ընթացքում

Գրական գործերով աղքատ ԺԶ և ԺԷ դարերից հետո, երբ հյուսիսային խմբի մերթ այս, մերթ այն ենթաբարբառը փորձել է գրականության թափանցել, վերջապես ԺԸ դարի վերջում գերակշռության է հասնում Պոլսի տաճկահայ բարբառը Նրա կրողները արևմտահայերը կամ տաճկահայերը, շփվել են թե՛ օսմանյան-արաբական, թե՛ արևմտյան մշակույթի հետ, և կրթության տեսակետից բարձր են գտնվել իրենց արևելյան ցեղակիցներից Օսմանյան-արաբական լեզվի ազդեցությամբ նրանց լեզուն մեծ ճկունության էր հասել և ճեռք էր բերել բառերի ու ձևերի մի վիթխարի հարստություն Քանի որ հայերեն առաջին թերթերը լույս են տեսել հենց այս բարբառով, դրանով իսկ այն բարձրացել է մինչև գրական լեզվի աստիճանը, և այժմ ունի արդեն հարուստ ու բազմակողմանի գրականություն Այսպիսով, նոր շրջանում որպես գրական լեզու, տիրող դիրք է գրավում արևմտահայ *բարբառախմբի հյուսիսային ճյուղը*[32], ինչպես որ *միջին* շրջանում այն

---

[31] *Անշուշտ արդեն Մխ Հերացու բժշկական գործի մեջ առկա են այդ բարբառի առանձնահատկությունները Սակայն թվում է թե այդ գրվածքի լեզվի անկանոնությունները վկայում են սկզբնական տեքստի ավելի ուշ վերամշակման մասին - Այնուամենայնիվ լեզվի ոչ կիլիկյան տարրերը կարելի է նաև համարել սկզբնական և հիմնավորել հեղինակի ծագումով Մեծ Հայքից, մանավանդ որ Մխ Հերացու մոտ հանդիպող -ա հոգնակերտ վերջավորությունն անհայտորեն կապված է Մեծ Հայքի բարբառներից մեկի հետ*

[32] Բնականաբար միայն արևմտահայերի համար

գրավել է հարավային ճյուղը Տաճկահայերենն իրենից ներկայացնում է կիլիկյան հայերենին ազգակից այդ հյուսիսային ճյուղի շարունակությունն ու զարգացումը

Կիլիկյան հայերենը, սակայն, ինչպես երևում է, կորել է խապառ կամ էլ խառնվել է ուրիշ բարբառների հետ և այսպիսով անհետացել Զնայած դրան, Ուլնիայի կամ Զեյթունի ժամանակակից բարբառը յուր բառապաշարի մեջ նմանություններ է հանդես բերում կիլիկյան հին լեզվի հետ[33], իսկ Դոնի Նախիջևանի արևմտահայ բարբառում հիմա էլ գտնում ենք հին կիլիկյան դերանվանական թեքումը - *նարա, նաքա, նայա*, ինչպես նաև *ինա, իաս, իտա* դերանունը Սակայն այդ բարբառներն ընդհանրապես այնքան ինքնատիպ են և միջին հայերենից այնքան տարբեր, որ բերված ճևերը հանդես են գալիս ավելի շուտ որպես կիլիկյան հայերենի փշրանքներ սփռված խորթ լեզվանյութի մեջ, և դժվար թե թույլ տան ենթադրել այդ բարբառների անմիջական ծագումը կիլիկյան հայերենից

---

[33] Օրինակ համաձայն Ալահվերդյանի այդ բարբառին հատուկ են հետևյալ ճևերը *ածուք* 177=կիլ *ածուք* «այգի» *աղջկին, աղջկէն*=կիլ *աղջկին* «աղջիկ» *արկոյ, առկոյ* 179/= կիլ *արի եկ/ աւչել* 179/= կիլ *ավչել/* «երգել» *աւտոց/*=կիլ *ավտաց/* «հավատաց» *բանըլ* 180/= կիլ *բանիլ/* «աշխատել» *բաղնըք* 179/=կիլ *բաղնիք/ զանգկտըլ* 181/=կիլ *զանգկտիլ/* «զանգատվել» *գեղ գեղջ* 181/=կիլ *գեղ/ դըհ, դըհը* 183/=կիլ *դիհ/* «կողմ» *դոգոլ* 183/= կիլ *դգալ/* «գդալ» *ալըկ* 177/=կիլ *ալիկ/* «անասունների կեր» *էչուէ* 184/= կիլ *աչուի/* «աչքեր» *էրդ* 184/=կիլ *յերդ/* «հարդ» *էրին* 185/=կիլ *այրոյն/* «արյուն» *ըսվրնըն* 185 և *խաուէ* 188/= կիլ *ոսվի/ իրից* 188/= կիլ *իրէց/* «երեց» *խեչ, խեչը* 190/=կիլ *խէչ/* «ձոտ» *խըմց* 190/= կիլ *հայնց/ կընըկ, կոնըկ* 193/=կիլ *կնիկ/ հընտռել* 195/= կիլ *հնտրել/* «ընտրել» *նիքաէ* 198/=կիլ *նեքաէ/* «ներսում» *ջաղըպոն* 202/=կիլ *ջաղցպան/ չոք մը* 201/= կիլ *չաք մի/* «մի քիչ որևէ բան» *պախրէ*/= կիլ *պախրէ/ պատրըսիլ* 201/= կիլ *պատրուսել/* «պատվաստել» *տղիկ, տղիկոն* 204 /հմմտ կիլ *տղայկութիւն* ինչպես նաև *կնիկ այրիկ/* «երեխա» *տոկ* 204/= կիլ *տակ/* «աթմատ» *ֆորն* 207/=կիլ *ֆուլան/* «այսինչ»

ՀՈԼՈՎՈՒՄ

ԳԼՈՒԽ Ա

ԱՆՈՒՆ

§ 157 Անունների հոլովում ասելով՝ մենք հասկանում ենք գոյականների հոլովում, այն էլ ինչպես բուն գոյականների, այնպես էլ գոյականացված ածականների

Կիլիկյան հայերենի հոլովումը /դա վերաբերում է նաև թվականներին և դերանուններին/, հոլովի և թվի տեսակետից պահպանել է հին լեզվից եկող, դասական հայերենում ավանդված բնույթը դասական լեզվի նման, այն ունի եզակի և հոգնակի, բայց չունի երկակի թիվ Հոլովներն էլ նույնական են հին լեզվի հետ[34]

Կիլիկյան հայերենը չի հեռացել հին վիճակից նաև այն առումով, որ պահպանել է հոլովական նախամասնիկները *գ*-ն որոշյալ հայցականի համար, *ի*-ն բացառականի համար Ժամանակակից բարբառները կորցրել են դրանք Տարբերությունը դասական լեզվից զգացվում է բուն թեքման, այսինքն՝ *հոլովների կազմության* մեջ, այն էլ առաջին հերթին եզակիի թեքման մեջ

Ա ԵԶԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 158 Կիլիկյան հայերենի հետ առաջին հերթին առնչվող նոր արևմտահայերենում շատ ուժեղ է արտահայտված ձևերի միօրինակացումը, որի շնորհիվ հոլովումների տարբերությունները հնարավորին չափ հարթվում են Հիշված երևույթը դյուրություն ունի արդեն կիլիկյան հայերենում, թեկուզ և այդքան մեծ տարածում չի ստացել Ճիշտ է, *Ո* հոլովումն, ի տարբերություն նոր հայերենի, դեռ չի համընկել *ՈՒ* հոլովման հետ, սակայն եզակի գործիականի միօրինակացման մեջ լեզուն արդեն շատ առաջ է գնացել *-ով* վերջավորությամբ գործիականը, որ սկզբում սահմանափակված է եղել *ո* հիմքերով, տարածվում է մնացած ճայնավորական հոլովումների վրա Սակայն հին բաղաճայնական թեքման սահմանները նույն-

[34] Հետագա շարադրանքի մեջ մենք առանձնապես ուշադրություն չենք դարձնում արևմտյանին, որ համընկնում է սեռականի հետ Նույնը վերաբերում է մասամբ հայցականին

պես ջնջվում են և տեղ բացում ձայնավորական հոլովման համար - Ընդհանրապես միօրինականացման սկզբունքով են բացատրվում մեծամասնությամբ այն նորաբանություններն ու վերափոխումները, որ կիլիկյան հայերենը հանդես է բերում եզակիի թեքման մեջ Վերջինիս տարբեր տարատեսակները քննարկվում են ստորև

I. ՁԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Ի ՀՈԼՈՎՈՒՄ

§ 159 Ինչպես հայտնի է, հին հայերենում այս հոլովումը լինում է երկու տեսակի անխառն, միայն *ի* ձայնավորով բոլոր հոլովներում, ու խառն՝ *ի* ձայնավորով եզ սեռ- տր, բացառ հոլովներում, և *ա* ձայնավորով մնացած հոլովներում Քանի որ եզակի հոլովների մեծամասնության համար հոլովման երկու ձևերը համընկնում էին, եզակիի միակ հոլովը, որտեղ թեքման ենթատեսակները տարբերություն էին հանդես բերում, ժամանակի ընթացքում նույնպես հոլովման տեսակետից պետք է միօրինակացման ենթարկվեր Եվ իրոք, կիլիկյան հայերենում մենք գտնում ենք միայն մեկ ձևի եզ գործ, և համապատասխանաբար մեկ միասնական *ի* հոլովում, այն էլ ոչ մաքուր, այլ խառն, *-ով* վերջավորությունն ունեցող գործիականով

§ 160 Մյուս կողմից, հին *ի* հոլովման բառերի ընդգրկման տեսակետից կատարվել է մի կարևոր փոփոխություն Քանի որ հին հայերենի *ի* հոլովումը, գոնե սեռական-տրականում և եզակի բացառականում, ընդգրկել է գոյականների մեծամասնությունը /երեք քառորդի չափ/, բնական է, որ լեզվի պատմության մեջ տիրող անալոգիայի օրենքի ներգործությամբ այս հոլովումն աստիճանաբար տարածվել է Նվազ տարածում ունեցող հոլովումներին պատկանող հիմքերն անցել են թեքման այդ ձևին, որը որոշ չափով նորմայի արժեք է ունեցել Այսպիսով կիլիկյան *ի* հոլովումն ընդգրկել է ոչ միայն գոյականների մի խումբ, որոնք դասական լեզվի մեջ դեռևս հետևել են *ի* կամ *ու* հոլովմանը, այլ թափանցել է նաև բաղաձայնական հիմքերի շրջանը և դուրս մղել ու փոխարինել *ր* հիմքերին, ինչպես նաև բազմաթիվ *ն* հիմքերի նախնական թեքմանը

Մենք տարբերում ենք, այսպիսով, նախնական և երկրորդական *ի* հոլովում

§ 161. *Սեռական.* - *ի* վերջավորութիւնը սեռական կազմում են.

ա) Որոշ գոյականներ, որ հոլովվել են այդ ձևով արդեն հին հայերենում: Վկայութիւններ. *ակնջ-ի* /դաս. *ականջ-ի*/ Բ *ժա, աղջոյրվ-ի* /դաս. *եղջերու-ի*/ Բ *մկազ, մկէ.* *ամէն-ի* 418_9, *բան-ի* 3_{20}, *բերդ-ի* 21_7, *բերն-ի* /դաս. *քերան-ի* /Բ *մկէ, զրաւկն-ի* /դաս. *զրաւական-ի* 75_2. 4/, *երկ-ի* /դաս. *երակ-ի*/ Բ *մկը, երկր-ի* 39_8, *խոզ-ի* ԴԳ ճհ, *հայն-ի* Բ *մէկէ, հաց-ի* Բ *ճժը, հիմնդ-ի* /դաս. *հիւանդ-ի*/ Բ է, *մանուշկ-ի* /դաս. *մանուշակ-ի*/ Բ *ժգ, պտմնի*/ դաս. *պայման-ի*/ 15_{21}, 77_{25}, 85_2, *վկայ-ի* 59_{26}, *տախտըկ-ի* /դաս. *տախտակ-ի*/ 79_7, *փայտ-ի* L. 155_{13}, *քաղք-ի* /դաս. *քաղաք-ի*/ 83_{25}: Այսպես են հոլովվում նաև *-որ* և *-ող* վերջածանցներով անունները": Օրինակ, *զանկտվոր-ի* 23_{21}, *թիագվոր-ի* L. 179_2, 185_{25}, 186_3, *կապվոր-ի* 41_{15}, *ճիաւոր-ի* 31_9, *գիօղ-ի* 73_{13}, *զրօղ-ի* ԴԳ հբ, *ծախօղ-ի* 83_9, *հեծնաւղ-ի* ԴԳ ճկը, *տանաւղ-ի* ԴԳ ճգ և այլն:

բ) Յուրահատուկ կիլիկեան անուններ, ինչպես *ակռայ-ի* /ուղղ. *ակռայ*/ Ա. 59, *աղջկն-ի* /ուղղ. *աղջկին*/ ԴԳ հգ. *մէկայլ-ի* /ուղղ. *մէկայլ*/ Բ *մի, մէկ-մէկ-ի* /ուղղ. *մէկմէկ*/ 31_2, *պայկնի* /ուղղ. *պայկոնն*/ 13_{20}: *Ած* վերջավորութիւնը հարակատար դերբայները նոյնպես կազմում են այդ սեռականը, ինչպես կարելի է տալիս հետևեալ օրինակները. *կարգծ-ի* /ուղղ. *կարգած*/ ԴԳ հգ, *կշռած-ի* /ուղղ. *կշռած*/ ԴԳ ճլէ, *կոտրծ-ի*/ուղղ. *կոտրած*/ Բ *մժգ, սպանծ-ի* /ուղղ. *սպանած*/ ԴԳ ճիբ, ճիզ:

գ) Կանոնավոր ձևով կիլիկեան փոխառութիւններ: Վկայութիւններ. *աֆֆիմոն-ի* /ուղղ. *աֆֆիմոն*/ Բ *ի, իզ. զաֆրն-ի* /ուղղ. *զաֆրան*/ Բ *մժը. ըոզիան-ի* /ուղղ. *ըոզիան*/ Բ *ը, ժէ, իը. թռպր-ի* /ուղղ. *թռպիր*/ 27_{10}, *խալապայ-ի* /ուղղ. *խալապայ*/ 61_{11}, *խիար-ի*/ ուղղ. *խիար*/ Բ *ա, գ, ժգ. խուպայզ-ի* /ուղղ. *խուպայզ*/ Բ *ղը, մկզ. խուռս-ի* / ուղղ. *խուռս*/ Բ *ժ. խամ-ի* /ուղղ. *խիամ*/ 23_2, 25_{12}, 29_{19}, 65_{23}, 81_9, 59_7. *կաղայ-ի* /ուղղ. *կաղայ*/ Բ *ժգ. կումշ-ի* /ուղղ. *կումաշ, կումայշ*/ 19_8, 81_2, 83_1. *հաւաս-ի* /ուղղ. *հաւաս*/ 3_{13}. *հլէլիճ-ի* /ուղղ. *հլէլիճ* / Բ *ճբ. զաֆնճ-ի* /ուղղ. *զաֆնճ*/ Բ *ժբ, ժգ, ժե. ճուլապ-ի* /ուղղ. *ճուլապ*/ Բ *խզ, ծը. ճուլինար-ի* /ուղղ. *ճուլինար*/ Բ *ժ. մարուճ-ի*/ ուղղ. *մարուճ*/ Բ *ճիբ. մորհմ-ի* /ուղղ. *մորհամ*/ Բ *ճճ. մուխթասպ-ի* /ուղղ. *մուխթասիպ*/ ԴԳ *ճժբ. մունետկ-ի* /ուղղ. *մունետիկ*/ 79_{12}. *մուֆառեխ-ի* /ուղղ. *մուֆառեխ*/ Բ *ծիճ. մար-ի* /ուղղ. *միար*/ Բ *ճժա. յարախայ-ի* /ուղղ. *յարախայ*/ Բ *ժե. չաուշ-ի* /ուղղ. *չաուշ*/ $9_{15, 18}$. *պզրղատուն-ի* /ուղղ. *պզրղատուն*/ Բ *գ. պլղամ-ի* /ուղղ. *պլղամ*/ Բ *ը, ծը. պրճ-ի* /ուղղ. *պուրճ*/. Dipl. Sarv. *ռէվանդ-ի* /ուղղ. *ռէվանդ*/ Բ *ժգ. սապռ-ի* /ուղղ.

սապո/ Բ իբ, իէ. *սավտայ-ի* /ուղղ. *սավտայ*/ Բ ֆծ. *տաճկ-ի* /ուղղ. *տաճիկ*/ L. $155_{11.\ 12}$. *տատաշըր-ի* /ուղղ. *տատաշիր*/ Բ է. /*տարպայ-ի*/ ուղղ. *տարպայ*/ ԴԳ ճժբ. *տինար-ի* /ուղղ. *տինար*/ Բ կբբ. *քաֆուր-ի*/ ուղղ. *քաֆուր*/ Բ դ, լզ. *քրէֆս-ի*/ ուղղ. *քրէֆս*/ Բ ը, ժգ. *ֆալէճ-ի* /ուղղ. *ֆալէճ*/ Բ մկզ և այլն:

Այս *անլճ-ի* /ուղղ. *անլիճ*/ 27_5. *անսիզ-ի* /ուղղ. *անսիզ*/ $41_{3.\ 15,\ 23}$. *աւդրէ-ի* /ուղղ. *աւդրէ*/ ԴԳ ճժբ. *գումն-ի* /ուղղ. *գումին*/ 154_{14}, 158_7. *լճ-ի* /ուղղ. *լիճ*/ 11_1, 21_{24}, 23_4. *հառնէզ-ի* /ուղղ. *հառնէզ* /19_8 *ճրնվիզ-ի*, *ճրնուվիզ-ի* /ուղղ. *ճրնվէզ* կամ *ճրնուվէզ*/ L. $156_{19.\ 20.\ 22}$. *պարոն-ի* /ուղղ. *պարոն*/ $9_{4.9.23,}$ 21_{27}. *ջանկլեր-ի* /ուղղ. *ջանկլեր*/ L. 158_{21}. *տուայր-ի* /ուղղ. *տուայր*/ $21_{12.\ 20}$. *տուկ-ի* /ուղղ. *տուկ*/ $39_{11,12}$, 65_{25}, 73_{11}. *մայստռ-ի* /ուղղ. *մայստռ*/ Dipl. Sarv. *զանց-ի*/ ուղղ. *զանց*/ L. 156_{25}. *տիսէմկ-ի* /ուղղ. *տիսէմիկ*/ 47_{36}. *Պըմընդ-ի* /ուղղ. *Պըմունդ*/ 3_9. *Սիմոն-ի* /ուղղ. *Սիմուն*/ 3_{13} և այլն:

Միայն բացառիկ դեպքերում և շատ հազվադեպ փոխառութիւնը հետևում է մեկ ուրիշ հոլովման[35], որպես ապացույց այն բանի, որ միայն *ի* հոլովումն է կիլիկյան հայերենում համարվել բնական և կանոնավոր:

դ) Անունների մի մեծ խումբ, որոնք դասական լեզվի մեջ հետևել են *Ո* կամ *ՈՒ* հոլովմանը, կամ էլ հոլովվել են երկակի ձևով: Նրանց թվին պատկանում են.

ա) Սեռականները, որոնց հին հայերենում համապատասխանում են *-ոյ* վերջավորութիւնը ձևեր. *մեռել-ի* /ուղղ. *մեռել*/ ԴԳ խզ. *ապի-ի* /ուղղ. *ապի*/ Զգ Ա և Բ. *բոյն-ի* /ուղղ. *բոյն*/ Բ մկզ. *գնճ-ի* /ուղղ. *գինճ*/ Բ ճկ. *դեղ-ի* /ուղղ. *դեղ*/ Բ մծէ. *եղ-ի* /ուղղ. *եղ*/ ԴԳ լգ. *խոտ-ի* /ուղղ. *խոտ*/ Բ մկզ, մկլճ. *ծառ-ի* /ուղղ. *ծառ*/ Բ ճլա. *կերակր-ի* /ուղղ. *կերակուր*/ Ա. 184. *հազր-ի* /ուղղ. *հազար*/ Ա. 104. *ձիլճ-ի* /ուղղ. *ձէլճ*/ Բ ճժզ, ճժէ, ճժդ, ճժը, ճժլճ. *ճու-ի*, *ճվ-ի* /ուղղ. *ճու*/ Բ ճկլճ, մլբ, մկե, Ա. 70, 157, 251. *մախր-ի* /ուղղ. *մախիր*/ Բ մկզ. *պղնծ-ի* /ուղղ. *պղինծ*/ Բ մծէ. *ջր-ի*/ ուղղ. *ջուր*/ Բ խլճ, ծը, ղէ, ղը, ճլէ, ճխդ, ճհգ, մժբ, մխե, մխլճ, մկզ Ա. 19, 299. *գարէջր-ի* /ուղղ. *-ջուր*/ Բ մխը. *վարդջր-ի* /ուղղ. *-ջուր*/ Բ խզ. *տղտ-ի* /ուղղ. *տուղտ* /Բ մկե, մկզ. *յավ-ի* /ուղղ. *յաւ*/. *ակնջյվ-ի* /ուղղ. *յաւ*/ Բ մժէ. *ակռայվ-ի* /ուղղ. *-յաւ*/ Ա. 259. *իրիկնյվ-ի* /ուղղ. *-յաւ*/ Ա. 101. *փայծաղնայվ-ի* /ուղղ. *-յաւ*/ Բ ճլբ. *յորեն-ի* /ուղղ. *յորեն*/ Բ ճծ:

բ) Այն գոյականների սեռականները, որոնք դասական լեզվի մեջ տատանվում են *ո* և *ու* սեռականների միջև. *ամբրվ-ի* /ուղղ. *ամբրաւ=դաս. արմաւ* /Բ մծլճ, Ա. 261. *կաքվ-ի* /ուղղ. *կաքաւ*/ Ա. 255, 287. *կտաւ-ի* /ուղղ.

[35] Տե՛ս ատրև § 176:

կտաւ/ Բ, ճլդ, ճլե, ճլը, ճծդ, ճճդ, մլթ, մծդ, մծե, մկզ, *ուլ-ի* /ուղղ. *ուլ*/, Բ մլաա, մլը, մկե, Ա, 165, 241:

դ) Այն գոյականների սեռականները, որոնք դասական լեզվի մեջ տատանվում են մի կողմից *ի*-ով սեռականի, մյուս կողմից *ու*-ով և *ո*-ով սեռականի միջև. *ճակտ-ի* /ուղղ. *ճակատ*/ Բ մլը, մկզ. *քերմ-ի* /ուղղ. *քերան*/ Բ մկզ. *ընգուզ-ի* /ուղղ. *ընգոյզ*/ Ա. 117. *թխթ-ի*/ ուղղ. *թուխթ*/ Լ. 156_{28}. *թու-ի* /ուղղ. *թիւ*/ ԴԳ, ՋզԱ., Բ. *խնծոր-ի* /ուղղ. *խնծոր*/ Բ գ. *նշ-ի* /ուղղ. *նուշ*/ Բ մծդ, մկե, Ա 95. *ուժ-ի*/ ուղղ. *ուժ*/ մլգ, մլը, մծդ, մծգ. *տղայ-ի* և *տղ-ի* /ուղղ. *տղայ*/ Բ *մի*: Դասական լեզվի մեջ սկզբնական է եղել անշուշտ *ո* /համապատասխանաբար *ու*/ սեռականը. *-ի* վերջավորությամբ ձևերն սկսում են երևալ միայն ուշ դասական գրականության մեջ և ցույց են տալիս, որ *ի* սեռականի տարածումն սկսվել է դեռևս նախակիլիկյան շրջանում:

§ 162. Բացառական. *-ի* վերջավորությամբ սեռական ունեցող գոյականները կազմում են *-է* վերջավորությամբ բացառական: Վկայություններ.

ա) *ի բան-է* ԴԳ ճլ. *ի դիտղ-է* 69_{17}. *ի գրաւկղմ - է* 73_{19}. *յ-երկ-է* Բ մկը. *յ-երկր-է* 13_6, 15_{11}, 75_4. *յ-իշխան-է* 3_8. *ի հարկ-է* 25_{21}. *ի սպաննաւղ-է* ԴԳ ժա. *ի քաղք-է* 25_5, 39_{20}.

բ) *ի մեկ-է* Բ ժը, ճծդ, մծը. *յ-աղջկն-է/ն/* ԴԳ ղե:

գ) *յ-ալթ-է* /ուղղ. *ալաթ* 47_{32}/. *ի զընջպլ-է*, ուղղ. *զընջպիլ* Լ. 157_{15}. *յ-ըռահ-է*, ուղղ. *ըռահ* 45_{11}. *ի խամ-է*, ուղղ. *խիամ* $23_{6,\ 14}$, *ի մահր-է*, ուղղ. *մահր* 45_{20}. *ի պաղղամ-է*, ուղղ. *պաղղամ* Լ. 157_{10} *ի պլղամ-է*, ուղղ. *պլղամ* Բ ճխե. *ի սապտ-է*, ուղղ. *սապտ* Բ իէ. *ի սֆուֆ-է*, ուղղ. *սֆուֆ* Բ ճխե. *ի տրիֆիլ-է*, ուղղ. *տրիֆիլ* Բ ճխե. *ի թէմմ-է*, ուղղ. *թէմմ* ԴԳ իէ. *ի գունդուստապլ-է*, ուղղ. *գունդուստապլ* 3_9. *ի պարոն-է*, ուղղ. *պարոն* 13_4:

դ) α) *յ-արծիթ-է* /դաս. *-ոյ*/ 59_{34}. *ի խոտ-է* /դաս. *-ոյ*/ Բ մկլթ. *ի ծար-է* /դաս. *-ոյ*/ ԴԳ կէ. *ի ճիլթ-է* /դաս. *-ոյ*/ ՋզԲ . *ի մախր-է* /դաս. *-ոյ*/ Բ մկզ. *ի մատղ-է*/ դաս. *-ոյ*/ ԴԳ լդ, կզ. *ի ջր-է*/ դաս. *-ոյ*/ Բ իէ, խբ, խէ, ծբ, հզ, ճժլթ, ճլը, ճխ, մ, մծդ, մլդ, մկ, մկզ. *ի ցորեն-է*/ դաս. *-ոյ*/ ԴԳ կզ:

β) և γ) *ի քաժն-է*/ դաս. *-ոյ* և *-է*/ $47_{8.12.13}$. *ի քանջր-է*/ դաս. *-ոյ* և *-է*/ Մխ. Հեր. 147. *ի քերմ-է*/ դաս. *-ոյ* և *-է*/ Բ մխդ, մկզ. *յ-ընգուզն-է* /դաս. *-ոյ* և *-է*/ 47_{32}. *ի գոյն-է* /դաս. *-ոյ* և *-է*/ Մխ. Հեր. 16. *ի տղայ-է*/ դաս. *-ոյ* և *-է*/ 47_2:

§ 163. Գործիական. *-ի* վերջավորությամբ սեռականին, վերևում ասվածի համաձայն, համապատասխանում է *-ով* վերջավորությամբ գործիականը: Վկայություններ. *աղ-ով* /դաս. *-իւ*/ Ա. 156, Բ մծէ. *երկիղ-ով* /դաս. *-իւ*/

ԴԳ ա. *խաչ-ով* /դաս.-*իւ* / 39_{24}. *ծայր-ով* /դաս. -*իւ*/ 59_{11}. *կերպ-ով*/ դաս. -*իւ*/ 9_{12}, 17_4, Լ. 178_{13}, *հայս-ով* /դաս. -*իւ*/ Բ *մխէ, մծ, ճհղ, ճհե. սրտ-ով*/ դաս. -*իւ*/ Մխ. Հեր. 16_{90}. *փայտ-ով* /դաս. -*իւ*/ Ա. 111, Բ *ճիղ, մժղ*, ԴԳ *ժա*:

Աւետարան-ով /դաս. -*աւ*/ 39_{24}. *բանբկ-ով* /դաս. -*աւ*/ ՋզԲ. *դանկ-ով* /դաս. -*աւ*/ Բ *ճիղ. լեզու-ով* /դաս. -*աւ*/. *կարգ-ով* /դաս. -*աւ*/. ԴԳ. *լդ ճանի-ով, ճամբ-ով* /դաս. -*աւ*/ ԴԳ *ճլը*, ԴԳ, *ճլը. նշան-ով* /դաս. -*աւ*/ 9_{16}, 27_{20}, 29_3, Բ *միղ. պոմն-ով* /դաս. -*աւ*/ 71_6, 77_{16}, ԴԳ *ճժը. պսակ-ով* /դաս. -*աւ*/ 37_{13}, 47_{10}, ԴԳ *ճղ. կրակ-ով* /դաս. -*աւ*/ Բ *ճխղ*:

Գոյն-ով /դաս. -*ով* և -*իւ*/ Բ *միգ. թխթ-ով* /դաս. -*ով* և -*իւ*/ ԴԳ *ծղ. խնծոր-ով* /դաս. -*ով* և -*իւ*/Բ *մկղ. ուժ-ով*/ դաս. -*ով* և -*իւ*/ Բ *մլա. բերթ-ով* /դաս. -*ով* և -*աւ*/ Բ *մկղ. պատրոյգ-ով* /դաս. -*ով* և -*աւ*/ Բ *ճա. կատաւ-ով* /դաս. -*ով* և -*ու*/ Բ *մծղ. բոյն-ով* /դաս. -*ով*/ Բ *մկղ. եղ-ով*/ դաս. -*ով*/ Ա. 61. *ճիթ-ով* /դաս. -*ով*/ Բ *ճկղ. մախր-ով* /դաս. -*ով*/ Ա. 156, Բ *մկղ. ջր-ով* /դաս. -*ով*/ Բ ա, գ, հը, ճղ և այլն:

Փոխառութիւններից հիշատակենք նաև հետևյալ ճևերը. *անսիզ-ով*, ուղղ. *անսիզ* 3_{14}, 11_{28}, 15_{23}, 23_{10}, 29_{20}. *բրվիճ-ով*, ուղղ. *բրվիճ* 67_{21}. *թուպր-ով*, ուղղ. *թուպիր* 27_{11}. *լղպա-ով*, ուղղ. *լղպա* Բ ղ, *մծ, խուպայզ-ով*, ուղղ. *խուպայզ* Բ *միգ. կապլ-ով*, ուղղ. *կապալ* ԴԳ *ճկա. ճառա-ով*, ուղղ. *ճառայ* Լ. 155_4. *ճուլապ-ով*, ուղղ. *ճուլապ* Բ *ղիճ. մորհամ-ով*, ուղղ. *մորհամ* Բ *ճղէ. մոպխ-ով* ուղղ. *մոպուխ* Բ *խա, հը, հգ. նոմոս-ով*, ուղղ. *նոմոս* ԴԳ *կզ. շարպ-ով*, ուղղ. *շարպապ* Բ ղ. *չաւուշ-ով*, ուղղ. *չաւուշ*, 25_4. *պարչ-ով*, ուղղ. *պարչ* Լ. 155_3. *պլտղէ-ով*, ուղղ. *պլտղէ* Լ. 155_3. *սամսր-ով*, ուղղ. *սամսար* Լ. 154_{26}. *սիգեղ-ով*, ուղղ. *սիգեղ* 21_{15}, 41_{23}. *տիամիկ-ով*, ուղղ. *տիամիկ* 21_1, 51_3, ԴԳ *ժ*, *կը*[36]:

§ 164. Արդեն վերևում՝ § 159-ում, նկատվել է, որ միօրինակացման սկզբունքի ներգործության տակ *ի* հոլովման երկու ճև ունեցող գործիականը միակերպ է դարձել: Ես ընդունում եմ հետևյալ պատմական ընթացքը. սկզբում փոփոխություն է կրել *ու* հիմքերի գործիականը: Այդ հիմքերի սեռ. -տր. հոլովն արդեն կիլիկյան հայերենում շատ նման է *ո* հիմքերի համապատասխան հոլովաճևերին: Դրա հետևանքով երկու հոլովների գործիականի

---

[36] Այդ երևույթը վկայված է նաև արձանագրություններում: 1262 թ. մի արձանագրության մեջ /Ծիր. 116/ վկայված է *սիկելով* «փաստաթղթով» գործիականը: 1215 թ. մի արձանագրության մեջ /Ծիր. 75 հաջ./ *-ամէնով*/ դաս. -*իւ*/, *զանճով* /դաս. -*ու* կամ -*իւ*/, 1348 թ. մի արձանագրության մեջ /Ծիր. 63/ *-խաչով*/ դաս. -*իւ*/: Դրանից բացի, արդեն Ը դարից արձանագրություններում վկայված են հետևյալ գործիականները. *դաշտով* /դաս. -*իւ*/, *սալքարով* /դաս. -*իւ*/, *մարգով* /դաս. -*ով*/, *ճորակով* /դաս. -*աւ*/, *Ճանապարհով* /դաս. -*աւ*/ և այլն /Այո. Ա. 143 հաջ./:

ձևերն էլ իրար նման են դարձել: Անհարմար, սեռական-տրականի հետ համընկնող և, ըստ երևույթին, որպես գործիական արդեն չգիտակցվող *-ու* վերջավորությամբ գործիականի տեղը գրավել է *ո* հիմքերի *-ով* վերջավորությամբ համապատասխան հոլովը: Այն բանից հետո, երբ *-ով* վերջավորությամբ հոլովը *Ո* հոլովումից, որին պատկանում էին նաև հոգնակիները ու յուցական դերանունները, տարածվել էր *ու* հիմքերի վրա, քանակն էր, որ անալոգիայի սկզբունքով այդ հոլովաձևն անցներ *Ի* հոլովմանը, որ գործիականի մի միասնական ձև չի ունեցել: Մանավանդ որ վերջին հոլովումն, *-ի* վերջավորությամբ սեռականի տարածումով նախնական *ո*-ով հիմքերի վրա, միաժամանակ արդեն կուտակել էր իր մեջ *-ով* վերջավորությամբ գործիականների մի մեծ թիվ:

Ծան. -է վերջավորությամբ անումներում *է*-ն կորչում է թեքման վերջավորության առջև, իսկ *-այ* վերջավորությամբ անումներում վերջինս դուրս է ընկնում ձայնավորական վերջավորություններից առաջ: Պետք է հիշատակել, սակայն, *տղայ-ի* ձևը /*տղ-ի* ձևի կողքին/, *հնդպէ-ի* /*հնդպի* ձևի կողքին/ հմմտ. վերևում: Բայառության կարգով *քրիստոնէ* գոյականից ունենք *քրիստոն-ոյ* սեռականը /Դ-Գ, ղբ, ճծբ/ փոխանակ սպասվող *քրիստոն-ի*, նույն ձևով, ինչպես որ *Կիլիկիայ*-ն կազմում է սեռ. *Կիլիկ-ոյ* /<**Կիլիկիայի-ոյ*/, իսկ *պախրէ*-սեռ. *պախրե-ոյ*=նհ. *պախր-ու*[37]:

2. *Երկրորդային Ի հոլովումը*

§ 165. Հին հայերենի բաղաձայնական թեքումը դուրս է մղվել ու փոխարինվել *Ի* հոլովմամբ.

ա) *-ոյն* /դաս. *-ին*/ կապակցությամբ վերջացող կոնկրետ անուններում. բ) ր հիմքերի դեպքում և մասնավորապես. α) երկու բաղաձայնով վերջացող հիմքերում. β) *-ոյր* /դաս. *-իւր*/ կապակցությամբ վերջացող հիմքերում:

ա) -ոյն ուն հիմքերը

§ 166. *-ոյնի-ով* սեռականը /փխ. դաս. *-եան*/: Վկայություններ. *արոյն*, սեռ. *արոյն-ի*, Ա. 258, Բ միէ, միթ, մլը, մկը /երկու անգամ/. *հերթոյն* «որքին», սեռ. *հերթոյն-ի* Ա. 109. *ճոյն*, սեռ. *ճոյն-ի*, Բ մկզ /երկու անգամ/:

§ 167. *-ոյնէ* բացառական, փխ. դաս. *-ենէ*: Վկայություններ. *յ-արոյն-է* Բ հե, ճկ, մկզ, մկը, մկթ, մլը, մկզ, մկթ, Ա. 167, 179, 183, 239:

---

[37] Հմմտ. Ջոպ. և Այտ. Բ 281:

§ 168. *-ոյն*-ով վերջացող գործիականը, փխ. դաս. *-ամբ*: Վկայութիւններ. *արոյն-ով* Բ մժդ, մկզ, Ա. 163. *ճոյն-ով* Ա. 46, 128:

Ծան. Առանձին դեպքերում երևան է գալիս սեռականի *-են* -^{i}en ձևը. օրինակ, *արեն* ar^{i}en /ուղղ. *արոյն*/ Ա. 38, 66, 69, Բ իգ[38]: Վերջինս, որ համապիսանում է *-ան*[39] հին սեռականի զուտ հնչյունական տարբերակը, թվում է թե սահմանափակված պետք է լինի բարձր ու գրական լեզվով, իսկ ժողովրդական լեզուն օգտագործում է ճայնավորական թեքումը: Համմ. ատորկ § 200:

բ) r հիմքերը

α) *Երկու բաղաճայնով վերջացող հիմքերը*

§ 169. *Սեռական. ոսկոր*, սեռ. *ոսկր-ի* Բ ճիը, Ա. 110. *մեղր*, սեռ. *մեղր-ի* Բ ը, ձէ, ղը, ճիդ, մժ, մկզ և այլն: Դասական հայերենը, սակայն, հոլովում է սեռ. *ոսկեր, մեղեր*. վերջինի փոխարեն նաև *մեղու:*

§ 170. *Բայսառական. յ-ոսկր-է*, y-oskr-ę Բ ճճը, որ միայն հնչունական առումով է տարբերվում դաս. *յ-ոսկեր-է* ճևից:

§ 171. *Գործիական. մեղր-ով* Ա. 29, 52, 53, 54, 55, 89, 93, 115, 135, 248, 249, 251, 260, Բ կղ, ճը, ճև, ղը, ղղ, ճծիթ, մժդ, մծը, մծը, մծիթ, մկ, մկզ, մծը, ԴԳ ճժ[40]: - Դասական հայերենով, սակայն, եզ. գործ. *մեղերը* կամ *մեղու*:

§ 172. Նույն ճայնավորական թեքումը պետք է ենթադրել երկու բաղաճայնով վերջացող այն հիմքերի համար, որտեղ վերջին բաղաճայնն է *-ղ* /օր. *աստղ*/: Այդ ակսի հիմքերը պատահական պատճառներով վկայված չեն:

β)-ոյր-ով վերջացող հիմքերը

§ 173. *Սեռական. աղբոյր*, սեռ. *աղբոյր-ի*[41] /դաս. *աղբեր*/ Ա. 245, 246 երեք անգամ, 247. *ալոյր*, սեռ. *ալոյր-ի* /դաս. ալեր/ Ա. 259. *աղջոյր*, սեռ.

---

[38] *Արեն* սեռականը վկայված է նաև 1215 թ. /Շիր. 75 հաջ./ և 1284 թ./ Շիր. 140/ արձանագրություններում:

[39] Հնչյունաբանություն, § 79:

[40] Համմ. նաև *ծովեզեր-ով* գործիականը /փխ. դաս. - *եզերք*/, ուղղ. *ծովեզր* «Պղնձե քաղաքի պատմություն» մեջ/ Վիեննայի № 88 ձեռագիրը, էջ 265/:

[41] Դասական հնչյունական ճևով սեռ. *աղբիւրի* Գիրք վասն. 126$_{16}$ *ջուր ած աղբիւրի* կապակցության մեջ:

աղջոյր-ի /դաս *եղջեր*/ Ա. 47 258 երկու անգամ, 259 երկու անգամ սեռ *եղնաղջոյր-ի* Բ մկզ

§ 174 *Բայաոական* Պատահաբար վկայված չէ Բնականաբար հոլովը պետք է վերջանար -**ոյր-է* կապակցությամբ

§ 175 *Գործիական Աչուր-ով*[42] /դաս *աչերը* /Մխ Հեր 26, *զարէայոյր-ով* Ա. 107 երկու վկայությունն

Ծան Արդեն /ուշ/ դասական գրական լեզվի մեջ ճայնավորական թեքման սկզբնավորման մասին վկայում են գործիականի ձևերը *աղջեր-աւ* և զուգահեռ *աղջերբ* /ուղղ *աղջիւր*/, *կոճեղ-աւ* և զուգահեռ *կոճեղբ* /ուղղ *կոճղ*/ Այստեղից ես եզրակացնում եմ, որ այդ հիմքերի հին բաղաձայնական թեքումը սկզբում կորել է եզ գործիականում վերջինիս ճայնավորական թեքումը *տարածվել* է սեռական-տրականի և *ամբողջ* եզակիի վրա

Ծան Որպես անկանոն երկրորդային *ի* հոլովման մի դեպք կարելի է հիշատակել *զեղ* բառի *զեղջ-ի* սեռականը, որտեղ լեզվական ոգու[43] կողմից որպես այդպիսին այլևս չճանաչվող *զեղջ* սեռականի ձևին ավելանում է *-ի* վերջավորությունը

Ո ՀՈԼՈՎՈՒՄ

1 *Պարզ Ո հոլովումը*

§ 176 Ճայնավորական Ո հոլովումը բոլոր հոլովներում պահպանել է յուր նախնական բնույթը Դասական հայերենի նման, գործիականի վերջավորությունը մնում է *-ով*, մնացած թեք հոլովներինը՝ *-ոյ* Ընդհանուր այստեղ էլ՝ եթե ոչ ճևաբանական, ապա գոնե հնչունաբանական առումով կատարվել է մի փոփոխություն *կիլիկյան -ոյ* վերջավորությունն այստեղ արտաբուստ և ըստ գրության համընկնում է համապատասխան դասական վերջավորության հետ *-ոյ-*ը դարձել է *կիլ ո*, այսինքն փակ, *u*-ին ճգտող *o* հնչյուն Կիլիկյան *-ոյ* վերջավորության հնչյունական արժեքին պետք է վերագրել այն, որ այդ հոլովման սեռական-տրականի *-ոյ* վերջավորությունն

---

[42] Հիմքի մեկ ուրիշ ձևով 1201 թ մի արձանագրության մեջ /Շեր 161/ գործ *արենաղջերով՝ Արենաղջոյր* հատուկ անունից

[43] «Լեզվական ոգի» /Sprachgeist/ տերմինի օգտագործման մեջ, անշուշտ, զգացվում է Հումբոլդտի լեզվաբանական կոնցեպցիայի ազդեցությունը Բայց, ի տարբերություն Հումբոլդտի, Կարտոն այդ տերմինի տակ հասկանում է միայն խոսողների կենդանի լեզվազգացողությունը (Ծան թարգմանչի)

ունի *-ու* տարբերակը Այսպես, *պայլ-ոյ* $41_{6,21}$ սեռականի կողքին գտնում ենք նաև *պայլ-ու* 73_{11} *Այաս-ոյ* /L 178_{20}, $185_{15\ 16}$, 186_{2}/ սեռականի հետ մեկտեղ նաև *Այաս-ու* L. 154_{23}, *Ճորտեր-ոյ* կանոնավոր ձևի հետ՝ *Ճորտեր-ու* 3_{4}, *ուռեր-ոյ* ձևի հետ՝ նաև *ուռեր-ու* Գիրք վասո 59, *յաւեր-ոյ* ձևի կողքին նաև *յաւեր-ու* Գիրք վասո 208

§ 177 Այսպիսով, արդեն միջին հայերենում նախադրյալներ կան հին Ո և Ու հոլովումների նույնացման համար, որ կատարվել է արդեն նոր հայերենում Արդեն վաղ նոր հայերենում հին *-ոյ* վերջավորությունը ամենուրեք դարձել է *-ու*, ինչպես երևում է այդ շրջանի ռամկական գրականությունից Այդ պատճառով հին Ո հոլովման սեռական-տրականն ու գործիականը ձևով համընկել են Ու հոլովման համապատասխան հոլովների հետ Երկու հոլովումների ամբողջական ճուլումը պայմանավորված է եղել նրանով, որ ո հիմքերի՝ բուն Ու հոլովմանը դեռևս չենթարկվող միակ հոլովը՝ *-ս* /կից *ոյ*/ վերջավորությամբ բացառականը, անալոգիայի օրենքի համաձայն փոխարինվել է *ու* հիմքերի *-ի* վերջավորությամբ բացառականով[44]

Մենք արդեն խոսել ենք այն սահմանափակման մասին, որին ենթարկվել է Ո հոլովումն այն պատճառով, որ հիմքերի մի մասն անցել է *ի* թեքմանը Սակայն *-եր*, *-ի* և այլ մասնիկներով հոդակապների *-ո* հոլովումը որոշ չափով լրացնում է այդ կորուստը Տե՛ս ստորև § 270

§ 178 *Սեռական* Այդ հոլովմանը հետևում են

ա) Անորոշ դերբայները օր, *անկնել-ոյ* 71 /*անկնիլ* բայից/, *արծելոյ* ԴԳ հբ /*արծել* բայից/, *զալոյ* 9_{19}/ *զալ* բայից/, *եվնել-ոյ* /*եվնել* բայից/ Ա 127, 128 *ֆետպրել-ոյ* 23_{29} /*ֆետպրիլ* բայից/, *հեծնել-ոյ* 77_{21} /*հեծնիլ* բայից/, *հիլայել-ոյ* 33_{21}/ *հիլայել* բայից/ *մտել-ոյ* ԴԳ գ. *մտել* բայից, *յիշուել-ոյ* ԴԳ ա *յիշուել* բայից, *ուտել-ոյ* ԴԳ ճհ *ուտել* բայից, *ջալընջել-ոյ* 23_{15} *ջա-*

---

[44] Ինչպես հավատացնում է Այտընյանը /Քնն քերակ, 143 և 144/, միջին հայերենի շրջանում հատկապես արձանագրություններում, երևում են բացառականների ձևեր, ինչպես՝ *յառաջին մարդէն* /դաս *-ոյն*/, *յայդ ջրէդ* /դաս *-ոյդ*/, *յիւր հաւատէն*/ դաս *-ոյն*/, *յաստուծոյ քերանէն*/ դաս *-ոյն*/, *ի գետերէն*/ կից *-ոյն*/, *ի նաւերէն*/ կից *-ոյն*/ Եթե ենթադրենք, որ վկայությունները ճիշտ են, դա կարող է լինել միայն *ոչ կիլիկյան* բարբառային մի առանձնահատկություն Ամենաշատը կարելի է ենթադրել, *ի մարդուէ* /ուղղ *մարդ*/ կիլիկյան հայերենում հանդիպող բացառականից եզնելով, որ կիլիկյան միջին հայերենում արդեն գոյություն ունի *-ոյ* բացառականի ձևափոխման մի թույլ միտում

լինջել բայից, *սիրել-ոյ* L. 154_{19}. *սիրել* բայից, *վարճել-ոյ* 71_5. *վարճել* բայից, *վճարել-ոյ* 41_2. *վճարել* բայից:

բ) Հետևյալ դոյականները. *անան-ոյ* ԴԳ ճհ /ուղղ. *անաման/*, *աստուծ-ոյ* $3_{3,6}$ /ուղղ. *աստուած/*, *գլխ-ոյ* 73_9, 83_{15}/ ուղղ. *գլուխ/*. *կին-ոյ* 19_{10}/ ուղղ. *կէս/*, *մարդ-ոյ* 9_8, 37_2, 51_{16}/ ուղղ. *մարդ/*, *սիր-ոյ* 3_{13}, 41_{19} /ուղղ. *սէր/ տես-ոյ*, 13_{27} /ուղղ. *տես/*, *առուտր-ոյ* 79_{17}, ուղղ. *առուտուր*. *գիշեր-ոյ* Mr.B. Գիրք վասն., ուղղ. *գիշեր*. *յորեկ-ոյ* Մխ. Հեր., 117, 118, 128, ուղղ. *յորեկ*, *քն-ոյ* նկա, ուղղ. *քոյն* և այլն:

գ) Քիչ թվով փոխառությունններ և հատուկ անուններ, ինչպես *անսիզ-ոյ* 41_2 /ուղղ. *անսիզ* «օրենք, անսիզ». «թղթադրամ» նշանակությամբ այդ բառն ունի *-ի* վերջավորությամբ սեռական. *պայլ-ոյ* և *պայլ-ու* $41_{6,\ 21}$. 73_{11} ուղղ. *պայլ*. *Այաս-ոյ* 185_{15} ուղղ. *Այաս*. *Անտաք-ոյ* $3_{9,\ 11,\ 19}$.49_6 ուղղ. *Անտաք*. *Հեթմ-ոյ* 3_7 ուղղ. *Հեթում*:

դ) Բոլոր հոգնակիները *-ք* վերջածանցով հոգնակիի բացառությամբ: Վկայություններ տե՛ս «Հոգնակիի կազմություն» բաժնում:

ե) *-ի*-ով հիմքերը /նմանատիպ նմանություններ տե՛ս ստորև § 181/:

Ծան. Դասական հայերենում այդ եղեքնանը հետևող *-եալ* վերջավորությամբ դերբայները, § 161, դ-ի համաձայն, անցնել են *ի* հոլովմանը:

§ 179. Բացառական. *ի գրաստ-ոյ* 65_9, *ի յ-որջ-ոյ* ԴԳ լգ. *ի քն-ոյ* Գիրք վասն. *ի յ-արգիլել-ոյ* Մխ. Հեր. 13. *ի բացուել-ոյ* ԴԳ ճճա. *ի հոգնալ-ոյ* Բ մժԹ. *ի ժողվել-ոյ* Բ ճկէ. *ի յ-ուսել-ոյ* ԴԳ ճճա. *ի պառկել-ոյ* Մխ. Հեր. 108 և այլն:

§ 180. Գործիական. *գլխ-ով* ԴԳ ղը. *տես-ով* ԴԳ ա. *սիր-ով* ԴԳ ճհղ. *աղալ-ով* Բ ճղԹ. *քշտել-ով* Բ ճկէ և այլն:

Ի-ով հիմքեր

§ 181. Միավանկ *ի* -ով հիմքերը, հին հայերենի նման, կանոնավոր ճևով հետևում են Ո հոլովմանը: Այսպես *ճի* սեռ. *ճի-ոյ* Բ մկզ. *զի* «զիհի»/ծառ/ սեռ. *զի-ոյ* Բ ճժբ, ճծ, մծը. բացառ. *ի ճի-ոյ* Բ մկզ. գործ. *ճի-ով* ԴԳ ճկզ:

§ 182. *Բազմավանկ* հիմքերը, սակայն, դասական լեզվի մեջ եղած վիճակից շեղվում են երկու առումով.

ա) Հնչյունական առումով հին լեզուն բառավերջի -i ձայնավորն o հոլովակերտ մասնիկից առաջ դարճնում է v. օրինակ, հոգի hogi գոյականից կազմում է hogv-oy<*hogy-oy սեռականը: Միայն բայառուլթյան կարգով և մեծ մասամբ հետդասական գրականուլթյան մեջ երևան է գալիս *հոգոյ* ձևը */i* ձայնավորի կորստով/: Դասական լեզվի համար անկանոն վերջին ձևը, որ ըստ երևուլթին հին բարբառային ծագում ունի*, կիլիկյան հայերենում կանոնավոր է և միակ հնարավորը:

բ) *Քևաբանական* տեսակետից այդ հիմքերի դասական հոլովումը երկակի է եղել՝ այն բնորոշվել է -o վերջավորուլթյամբ եզակի թեք հոլովներում /գործիականից բացի/ և -a վերջավորուլթյամբ եզակի գործիականում ու հոգնակի թեք հոլովներում: Միայն մի երկու հիմքի դեպքում, օրինակ, *որդի*, -o ձայնավորի միջոցով կազմվում են բոլոր թեք հոլովները: Բերված բացառուլթյուններից ելնելով (-ov վերջավորուլթյամբ գործիական՝ հետդասական շրջանում, երբ այդ վերջավորուլթյամբ գործիականը տիրապետող էր դարձել մնացած հոլովումների համար, անալոգիայի սկզբունքով եզակի որոշ այլ թեք հոլովներում տիրապետող *ո* ձայնավորը տարածվել է նաև գործիականի վրա:

Բազմավանկ *ի*-ով հիմքերի հոլովման վկայուլթյուններ.

§ 183. *Սեռական. աղմն-ոյ* /ուղղ. *աղմնի*/ Բ ճծթճ, մկզ. *ամբրաւեն-ոյ* /ուղղ. *ամբրաւենի*/ Բ ճճ. *այգ-ոյ* /ուղղ. *այգի*/ Բ մկզ. *բևկեն-ոյ* /ուղղ. *բևկենի*/ Բ ճճա, ճճը. *գին-ոյ* /ուղղ. *գինի* /ԴԳ ճժբ. *գար-ոյ* /ուղղ. *գարի*/ Բ ճլթճ, մծէ. *եկեղեց-ոյ* /ուղղ. *եկեղեցի*/ ԴԳ ժա, ճժե. *թլթեն-ոյ* /ուղղ. *թլթենի*/ Բ մժզ. *մաք-ոյ* /ուղղ. *մաքի*/ Բ ճիզ. *մրտեն-ոյ* /ուղղ. *մրտենի* /Բ ճժբ. *շոք-ոյ* /ուղղ. *շոքի*/ Բ մկբ. *ոսկ-ոյ*/ ուղղ. *ոսկի*/ Բ մե. *սնթեր-ոյ*/ ուղղ. *սնթերի*/ Բ լբ. *տար-ոյ*/ ուղղ. *տարի*/ $11_{4,6}$, $13_{1,\ 27}$, $23_{12,\ 16}$, 51_{2}, 67_{14}, 69_{14}՝ ԴԳ ճժբ. *փիճ-ոյ*/ուղղ. *փիճի*/ Բ ճծդ, ճճը. *քամ-ոյ*/ ուղղ. *քամի*/ Բ ճիե:

§ 184. *Բայառական. ի գին-ոյ* ԴԳ կզ, ճժ, Բ ճի, մծա. *ի տար-ոյ* ԴԳ ճժ:

§ 185. *Գործիական. գար-ով* Բ միզ. Մխ. Հեր. 46, 130. *գին-ով* Ա. 115, Բ լդ, ղբ, ճի, ճլա, ճկա, մծզ. *եկեղեց-ով* ԴԳ ճ. *ոսկ-ով* ԴԳ ա. *տար-ով* ԴԳ լզ:

Յուրահատուկ ժամանակակից նորագտնուլթյուն են ներկայացնում նոր հայերենի հետևյալ դեպքերը. ա) i-ը վերջավորուլթյամբ բայառականը և -i-ov վերջավորուլթյամբ գործիականը, օրինակ, Տաճկ. hoki-ը ուղղ. hoki, Տաճկ. orti-ը ուղղ. orti. Տաճկ. kini-ը ուղղ. kini /Այտ. Բ, 11/, Ախ. kini-ը ուղղ. kini

/Том. Ах. лиал. 52/. Նիս. tari-ę և tari-y-ę ուղղ. tari /Патк. Мат. 3, 88/. բ) -i վերջավորությամբ սեռականը, օր. Տաճկ. haili-i ուղղ. haili, t^{c}ivoli-i ուղղ. t^{c}ivoli, rimini-i ուղղ. rimini, նաև էվֆոնիկ y հնչյունով tivoli - y -i, rimini-y-i /Այտ. Բ, 11/: Համմտ. նաև Զրպ. 746:

2. Ընդարձակ Ո հոլովումը

§ 186. Արդեն դասական լեզվի մեջ թեքման պարզ *-ոյ* վերջավորության կողքին առկա է *-ոջ* ընդարձակված վերջավորությունը: Խոսքը վերաբերում է *կին* և *մի* բառերին. սեռ. -տր. *կնոջ*, *մի-ոջ* /զուգահեռ ձևն է *մի-ոյ*/, բացառ. *ի կնոջէ*, *ի մի-ոջէ*/ զուգահեռ ձևն է *ի մի-ոյ*/: Դրանից բացի, դասական հայերենը *-ոջ* վերջավորությամբ հոլովին առանձին դեպքերում օգտագործում է որպես *ի* -ով հիմքերի ներգոյական, օրինակ, *յ-եկեղեց-ոջ* /ուղղ. *եկեղեցի*/, *ի տեղ-ոջ*/ ուղղ. *տեղի*/, *ի տարւ-ոջ*/ ուղղ. *տարի*/:

Վերջին երկու ներգոյականների հաճախականությանը պետք է վերագրել այն փաստը, որ *-ոջ* վերջավորությունը անցել է նաև համապատասխան բացառականներին. *ի տեղ-ոջէ*, *ի տարւ-ոջէ*: Այստեղ *ո* հոլովիչին միացած է ջ ընդարձակող տարրը, որը պետք է դիտել որպես ներգոյականի նախնական վերջավորությունը: Այն առկա է հին հայերենում նաև հետևյալ դեպքերում. սեռ. *զեղ-ջ*, բացառ. *ի զեղ-ջէ* /ուղղ. *զիւղ*/. սեռ. *ամ-ըն-ջ-եան*, բացառ. *ի ամ-ըն-ջ-ենէ*, գործ. *ամ-ըն-ջ-եամբ* /ուղղ. *տիւ*/ և *միշտ-ըն-ջ-եան* ածականը /*միշտ* բառից/[45]:

Այստեղ պետք է ուշադրությունդարձնել *կին* և *մի* բառերի թեքմանը: Ելնելով ընդարձակ *Ո* հոլովման դասական այդ երկու դեպքերից /հատկապես *կին* գոյականից/, հետագայում ձևավորվել է նույնատիպ թեքում ունեցող անունների մի խումբ: Այսպես, կիլիկյան հայերենում զտնում ենք այս հոլովման հետևյալ վկայությունները:

---

[45] *Միշտ-ըն-ջեան* և *ամ-ըն-ջեան* ձևերում *-ջ-* տարրը միանում է **mšt^{i}ₒn-*, **tv^{i}ₒn-* ընդարձակ հիմքերին, որոնք պետք է դիտել որպես նախնական ածականական կամ մակբայական կազմություններ, կամ էլ որպես սեռականի ձևեր: Համմտ. *զեղ-ջ* ձևը, որտեղ *-ջ* տարրը միանում է *զեղ* ավելի հին սեռականին /ուղղ. *զիւղ*/: Գեղջ նախնական ներգոյականն ընդունել է սեռականի ֆունկցիա միայն այն ժամանակ, երբ հնչյունափոխության հետևանքով *զիւղ* ուղղականը դարձել էր *զեղ*, այսինքն՝ համընկել էր *զեղ* սեռականի հետ: Վերջում ավելացած *-եան* վերջածանցը *միշտ-ըն-ջեան* բառում պահպանում է յուր ածականակերտ դերը:

§ 187. *Սեռական. գն-ոջ /ուղղ. գին/* 85_5, ԴԳ ա. *ընկեր-ոջ /ուղղ. ընկեր/* 31_4, ԴԳ լ, իթ, ծգ, ճխզ, ճկ. *կն-ոջ /ուղղ. կին/* ԴԳ հբ, ճժդ. *այրակն-ոջ /ուղղ. այրակին* «ամուսնացած կին»/ ԴԳ հբ, *իրիկկն-ոջ /ուղղ. իրիկկին/* ԴԳ լդ, խէ. *տիկն-ոջ/ ուղղ. տիկին/* 19_{11}, $37_{17.\ 18.\ 19}$. *տիր-ոջ /ուղղ. տէր/* 71_{13}, 73_{15}, $83_{16.\ 21}$, Մխ. Հեր. 44, 51, ԴԳ պ երեք անգամ, դ, ճէ, ճխա, ճծէ, ճհ, մլը, մխե. *ունէտիր-ոջ /ուղղ. ունէտէր/* ԴԳ ճխա. *քուր-ոջ/ ուղղ. քոյր/* ԴԳ ղդ:

§ 188. Բացառական. *ի գն-ոջ-է/ն/* ԴԳ ճը, ճխ, ճժ, Անս. Անտ. 45_{20} *ի տիր-ոջ-է* ըստ Այտ. Ա. 153:

§ 189. Գործիական. *տիր-ոջ-ով/ն/* ԴԳ լ:

Ծան. Արդեն ուշ դասական գրականութեան մեջ *կին* գոյականը կազմում է *կն-ոջ-ա* ընդարձակ մի գործիական /Ոսկ. Յովհ. Ա. 20. Մաշկ., Յայսմաւուրք մայիսի 22/: *-ոջ-ա* վերջավորութեամբ ձևը կիլ. *-ոջ-ով* ձևի նախորդն է:

Թեքման նույն ձևը պահպանվում է նոր հայերենում: Այսպես. Ախալցխայի բարբառն /Том. Ах. шив./ ունի հետևյալ հոլովումը. k^{c}ur «քույր» սեռ. k^{c}ur-^{u}eč. gesur «սկեսուր» սեռ. gesər-^{u}eč.der «տեր» սեռ. dir-^{u}eč:

Ագուլիսի բարբառում /Ս. Սարգ. 101/ tayr «տեր» սեռ. ter-uč[46]:

Թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրական լեզուները, այդ կանոնի համաձայն, հոլովում են նաև *աներ* և *տալ* ազգակցութեան բառերը: Հմմտ. Այտ. Բ 15, Պալաս. 28:

§ 190. Որպես հոլովման այս դասի կորիզ, որի շուրջ աստիճանաբար համախմբվել են ուրիշ գոյականներ, պետք է դիտել *կին* գոյականը. վերջինս միացել է նախ հնչյունական առումով շատ նման *գին*-ը: Մյուս կողմից, *կին* բառից առաջացած *տիկին* բարդութիւնն այդ դասի մեջ ներքաշել է ճևի և կազմութեան առումով հար և նման *տէր* բառը: Վերջապես, նշանակութեամբ առնչակից լինելով, այդ խմբին կարող էին միանալ *ընկեր* և *քոյր*:

Սակայն *ընկեր* և հատկապես *քոյր* բառի համար այդ վարկածը կասկածներ է առաջացնում: Իսկապես, եթե այստեղ իրոք որոշիչ են եղել ճևի

---

[46] Համեմատաբար նոր և հատուկ նոր հայերեն է այդ գոյականների բացառականի և գործիականի կազմութիւնը նոր հայերենում, որտեղ դերանվանական թեքման ընդհանրացումով առաջացել են հետևյալ ճևերը. Տաճկ. բացառ. k^{c}roč-m-ę և գործ. k^{c}roč-m-ov, ուղղ. k^{c}ur «քույր», բացառ. gnoč-m-ę և գործ. gnoč-m-ov, ուղղ. gin «կին» /ըստ. Այտ. Բ 15/: -Ախ. բացառ. k^{c}uroč-m-ę և գործ. k^{c}uroč-m-ov, ուղղ. k^{c}ur «քույր», Том. 55:

և իմաստի հետ կապված պատճառները, ապա ինչո՞ւ այդ խմբի մեջ չի մտել *դուստր* բառը: Այն նույնպես ազգակցություն ցույց տվող բառ է և վերջանում է *-ր* բաղաձայնով: Այդ պատճառով ես ենթադրում եմ, որ, պատմական զարգացումից բացի, այստեղ կարևոր դեր են խաղացել նաև հին բարբառային առանձնահատկությունները, և որ կիլիկյան հայերենի մայր բարբառն արդեն ավելի ուժեղ հակում է ունեցել դեպի հոլովման այդ ձևը, քան դասական հայերենը:

Ու ՀՈԼՈՎՈՒՄ

§ 191. Հին հայերենի համապատասխան հոլովումից շեղում է ներկայացնում *-ով* վերջավորությամբ դործիականը, որի առաջացման մասին արդեն խոսվել է /§ 164/:

Վկայություններ.

§ 192. Սեռական. *ագով-ու* /ուղղ. *ագաւ*/ Ա. 254. *այծ-ու*/ ուղղ. *այծ*/ Ա. 261. *առուծ-ու*/ ուղղ. *առոյծ*/ Բ մկզ. *արեւ-ու*/ուղղ. *արեւ*/ Ա. 264. *ժմ-ու* /ուղղ. *ժամ*/ 37_9, Ա. 134, 135, 139. *իշ-ու*/ուղղ. *էշ*/ Բ մկզ. *իրիկ-ու*/ուղղ. *երէկ*/ ԴԳ լա, խզ. *խրատ-ու*/ ուղղ. *խրատ*/ ԴԳ ճ և այլն: *Ծով-ու*/ուղղ. *ծով*/ Լ. 154_{17} Բ մի. *հաւ-ու*/ուղղ. *հաւ*/ Լ. 156_1. *ճորտ-ու*/ուղղ. *ճորտ*/ 11_{14}, 19_2, *մահ-ու*/ուղղ. *մահ*/ 19_{26}, 35_{27}, 37_{19}, 45_{24}. *անբնազմահ-ու*/ուղղ. *անբնազմահ*/ ԴԳ ղբ. *մատղ-ու*/ուղղ. *մատաղ*/ ԴԳ լդ. *շաբթ-ու*/ուղղ. *շաբաթ*/ 65_{18}, *շահ-ու*/ուղղ. *շահ*/ 83_{17}. *պահ-ու*/ուղղ. *պահ*/ Ա. 159. *չք-ու*/ուղղ. *չաք*/ Բ ղգ, ճի, ճկէ, ճկը և այլն:

Դասականից տարբերվում է հետևյալ դոյականների հոլովումը. *բայժու*/ուղղ. *բայժ*, *բաժ*/, Սարվ. արտ. փխ. դաս. *բաժ-ի. վաճռկու-ու* /ուղղ. *վաճռական*/ 83_{25}, 85_1. փխ. դաս. *վաճառական-ի. վաշխ-ու*/ուղղ. *վաշխ*/ $73_{6.\ 7.\ 8.\ 20}$. փխ. դաս. վաշխ-ի:

§193. Բացառական. *ի ժմ-է*/ուղղ. *ժամ*/ Բ մծա:

§ 194. Գործիական. *ծով-ու*/ուղղ. *ծով*/ Լ. 155_{19}. *ժմ-ով*/ուղղ. *ժամ*/ ԴԳ լդ. *չք-ով* /ուղղ. *չաք*/ Բ մծք[47]:

---

[47] Արձանագրություններում նույնպես մենք վաղ ժամանակներից հանդիպում ենք գործիականի այնպիսի ձևերի, ինչպես՝ *մահով* ուղղ. *մահ*/ դաս. *-ու*՝ 1228-1246 թթ. արձանագրություններում/Շերյակ, 23/. *գրաւտով* ուղղ. *գրաւտ*. /դաս. *-ու*/ ԺԱ. դարի մի արձանագրության մեջ/Շերյակ, 72/ և այլն:

Ծան. Տատանում Ու հոլովման և Ի հոլովման միջև նկատվում է հետևյալ դեպքերում. *գրաւական* սեռ. *գրաւկն-ու* 83_8 և *գրաւկն-ի* $75_{2.4.14.16}$, *լապաստակ* սեռ. *լապստկ-ու* Բ ճլթ, մկղ, մկը, մկթ և *լապտկ-ի* Ա 135, 251 և այլն:

Նույնը կարելի է ասել *-աւ-*ով անունների մասին, օրինակ. *կաքաւ* սեռ. *կաքվ-ու* Ա 245, Բ մկը. *կտաւ* սեռ. *կտավ-ու* Բ ճլա, ճծէ. *յաւ* սեռ. *յավ-ու* Բ ճիե: Այդ գոյականներից, § 161 դ-ի համաձայն, առնվազն նույն հաճախականությամբ կազմվում են *ի-*ով ձևերը: Վերջիններս պետք է համարել ավելի նոր ու թերևս ավելի գործածական:

Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

§ 195. Զայնավորական Ա հոլովումը լայն առումով, որքանով որ այն տարածվել է նաև հին Ի և Ո խառն հոլովման վրա, վերևում ասվածի համաձայն, ընդգրկման քանակով խիստ կրճատվել է այն պատճառով, որ Ա հոլովիչը դուրս է մղվել թե՛ խառն Ի հոլովումից, թե՛ *ի-*ով հիմքերի խառն Ո հոլովումից:

§ 196. Սակայն *ավելի նեղ* իմաստով նույնպես, որպես մաքուր Ա հոլովում, կիլիկյան հայերենում այն նահանջում է: Ավելի հաճախակի և ընդհանուր ձևով, քան հին լեզվի մեջ, հատուկ անուններն անցնում են այլ հոլովումների: Սակայն այս հոլովումը դեռ չի մահացել, ինչպես ժամանակակից արևմտահայերենում: Նրա ակտիվությունն ապացուցվում է թեկուզ այն հանգամանքով, որ հատուկ անուններին փոխարինող *Ֆուլան* «այսինչ» արաբերեն փոխառությունը հետևում է այդ հոլովմանը: Վկայված է, օր., *Ֆուլան-այ* 41_{22} սեռականը հետևյալ կապակցության մեջ. *ես կու դատըստըմեմ ի Ֆուլանայ վերայ* «ես դանգատվում եմ այսինչի դեմ»:

§ 197. Ժամանակակից կենտրոնական և արևելյան որոշ բարբառներում *անունների մի խումբ պահպանել է Ա հոլովումը*: *Խոսքն* -uhi *վերջածանցով* հատուկ անունների մասին է, որոնց հետևել են նաև նույնահանգ հասարակ անունները: Այդպես, ըստ Զրպ. 748, tiruhi գոյականը կազմում է սեռ. tiruhe, բացառ. tiruhe<*tiruhi-ay: Այն բանը, որ բառերի նույն խումբը կիլիկյան հայերենում ենթարկվել է նույն հոլովմանը, նատնում է ԴԳ դ վկայված

սեռականը՝ *թագուհէ* t^{c}akuhē<t^{c}akuhi-ay,*t^{c}akuhe-ay /հմմտ. Հնչյունաբ. § 80/ -ուղղ. *թագուհի*[48]:

Հմմտ. Ոչ դասական «Աղեքսանդրի պատմութեան» մեջ *-ուհի* և *-անոյշ*-ով հասարակ անուններից *-այ* վերջավորությամբ սեռականը. *աստուածուրհե-այ*, ուղղ. *աստուածուրհի*, էջ $74_{7\text{-}15}$, 84. *չաստուածուրհե-այ*, ուղղ. *չաստուածուրհի* 74_{4}. *քրմուհե-այ*, ուղղ. *քրմուհի* 75_{3}. *քրմանուշ-այ*, ուղղ. *քրմանոյշ* 74_{11}: Սակայն ավելի հին, դուռ դասական գրականության մեջ այդ *գոյականները դեռևս* հետևում են Ո հոլովմանը:

Այստեղ ուրվագծած ճայնավորական հոլովումներից Ո հոլովումը միակն է, որ սեռականի հոլովիչը պահպանում է բոլոր հոլովներում: Մնացած հոլովումները /Ա հոլովման համար նույնպես ևս անալոգիայի սկզբունքով ընդունում եմ *-ով* վերջավորությամբ սեռականը/ խառն հոլովումներն են, որոնք սեռականի բուն հոլովիչից բացի երևան են հանում նաև գործիականի համար բնորոշ *ո* ճայնավորը: Դասական լեզվի չորս մաքուր հոլովումներից պահպանվել է այսպիսով միայն *ո*-ով հիմքերի հոլովումը: Մնացածներն անցել են խառն թեքմանը: Անհետացած Ի-Ա և Ո-Ա հոլովումների տեղը գրավում է երեք նոր խառն հոլովում, որոնցից երեքն էլ *-ով* վերջավորությամբ գործիական ունեն: Խառն թեքումն այսպիսով գերակշռության է հասնում: Նոր արևմտահայերենում, որտեղ համընկել են Ո և Ու հոլովումները, կորել է հին մաքուր թեքման վերջին հետքը:

II. ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Ն ՀԻՄՔԵՐԸ

§ 198. Վերևում ասվածի համաձայն, նախնական բաղաձայնական թեքումը դուրս է մղվել *-ոյն* կապակցության վերջացող կոնկրետ հիմքերի խմբից: Այն պահպանվել է, սակայն, *ն* հիմքերի հետևյալ խմբերում.

1. *-ութիւն* վերջածանցով գոյականները /վերացական/,
2. *-իկ* վերջածանցով գոյականները,
3. *-ուն* կապակցությամբ վերջացող գոյականները,
4. երկու բաղաձայնով վերջացող *ն* հիմքերը:

---

[48] Այդ ձևի կոնտեքստը հետևյալն է. *Եթէ իշխան ի գաւառ կամ յերկիր ո/ր/ ընդ թագաւորի հնազանդութեամբ լինի ոսկէհանք գտնու նա թագաւորին է: Եւ թէ արծաթհանք նա թագուհէ է:* Հմմտ. Լեհ. *երանուհէ* սեռականը /ուղղ.-*ուհի*/ 1472 թ. մի արձանագրության մեջ/ Մին. Լեհ. 353/:

§199. Նոր հայերենում այդ վերացական գոյականների հաճար դեռևս պահպանվում է մասամբ բաղաձայնական թեքումը, ընդհանուր առմամբ հետևյալ սխեմայի համաձայն՝

ուղղ. de̲rut'en	/=*տէրութիւն*/
սեռ. de̲rut'an	/=*տէրութեան*/
բացառ. de̲rut'e̲n - e̲	/=-ի *տէրութենէ*/
գործ. de̲rut'e̲n - ov	/<*տէրութեամբ*/

Այդպես է վիճակը Ախալցխայի բարբառում, ըստ Том. 56: Նույն թեքումն է ցուցաբերում արդեն կիլիկյան հայերենը, որտեղ հին բաղաձայնական գործիականը փոխարինված է ձայնավորականով: Նոր հայերենում, սակայն, բաղաձայնական թեքման կողքին հանդիպում ենք հոլովման ավելի նոր ձևի՝ *-ի* վերջավորություն ունեցող սեռականով[49]:

Ընդհանրապես այն բանը, որ բաղաձայնական սեռականը դեռևս պահպանվում է և տեղը չի զիջել ձայնավորականին, արդեն կիլիկյան հայերենում, ինչպես *-ոյն* հիմքերի դեպքում, կապված է միայն դասական լեզվի ազդեցության հետ, որտեղ այդ վերացական գոյականներն ավելի շատ են օգտագործվում, քան կենդանի ժողովրդական լեզվի մեջ:

§200. *Սեռական*: Ակնհայտորեն դասական գրական լեզվի հարկադրանքով գրականության պահպանում է *-եան* ձևը: Օրինակ, *ծառութեան* ԴԳ ճ, *հայրենէքթիւթեան* 35_{27}, *հիմնդութեան* ԶգՔ, *պարոնութեան* 3_3, 21_9 և այլն: Կիլիկյան հնչյունական օրենքների համաձայն /հնչյունաբ. §79/. այդ *-եան* վերջավորությունը պետք է հնչեր *-էն* -ien: Այնպիսի ձևեր, ինչպես *արեն* փիլ. դաս-արեան (տե՛ս վերևում՝ §168 Ծան.) և *ամսեն* փիլ. դաս. *ամսեան* /ուղղ. *ամիս*/ Սարվ. արտ., ցույց են տալիս, որ վերջինս իրոք եղել է *- ութիւն*-ով գոյականների վերջավորությունը:

§201. *Բացառական. յ-իրիկմնչվութեն -է* Ա 105. *ի ծառութեն -է* 25_7. *ըմդ ծոյլութեն-է* ԴԳ ճիե. *ի հայրենէքթութեն-է* ԴԳ ճիեդ. *ի նաւթութեն-է* Բ իզ. *ի պարոնութեն-է* ԴԳ բ. *ի սարութեն-է* 45_{11}. *ի վաստուժութեն-է* Բ *ժա*. *ի փորցվութեն-է* Բ ճէ:

§202. *Գործիական. ծառութեն-ով* Անս. Անտ. $19_{18.\ 26}$, 21_{24}, 23_4:

Ծան. Հին հայերենում այդ ձևով հոլովվում են նաև առանձին գոյա-

[49] Հմմտ. Патк. Мат., ինչպես նաև Զրպ. 747:

կանայք, ինչպես՝ *ծնունդ, ժողովուրդ, ամիս*[50]: Ինչպես նկատվել է վերևում, կիլիկյան հայերենում վկայված է *յ-ամսենն* ներգոյականը, ուղղ. *ամիս*. ապա *ծննդեան* սեռականը փխ. բուն կիլիկյան*-են, ուղղ. *ծնունդ* 19_{22}:

2. -իկ -ig(-ik) վերջածանցով գոյականները

§203. Հին հայերենում այդ գոյականները հոլովվում են, իրենց նախնական բնույթին համապատասխան, ըստ հետևյալ սխեմայի. ուղղ. *մարդիկ*, սեռ. *մարդկան*, բացառ. *ի մարդկան-է*, գործ. *մարդկամբ*: Կիլիկյան հայերենում *-ամբ* վերջավորությամբ նախնական գործիականի տեղը զրավում է *-ով* վերջավորությամբ ճայնավորական գործիականը: Դրանիչ բացի, գործիականում և մեծ մասամբ նաև բացառականում *-իկ* վերջածանցով անուններն ընկալվում են ոչ որպես բաղաճայնական, այլ որպես ճայնավորական հիմքեր, այնպես որ համապատասխան հոլովական վերջավորությունները միանում են անմիջապես ուղղականի ճևին:

§204. *Սեռական*: Ուղղ. *այրիկ* «տղամարդ, ամուսին», սեռ. *այրկան* 19_8, $37_{20.21.23}$, 39_3, $45_{14.17}$, 47_3, ԴԳ հբ, հդ, հը, ճ, ճթ, ղա, ղդ, ղը, ճժդ: Ուղղ. *կնիկ*, սեռ. *կնկան* 19_{13}, 21_{12}, L. 158_{26}, ԴԳ հբ, հդ, հե, հզ, ճէ, ղա, ղե, ճդ, ճժդ:

§205. *Բացառական*. ա) սեռականիչ կազմված. *-յ-այրկն-է/<* յ-այրկան-է/* ԴԳ հբ. *ի կնկն-է/<* ի կնկան-է/*ԴԳ հբ, հե, հզ. բ/ ուղղականիչ կազմված. *յ-այրկ-է* 19_{16}, $37_{18.25}$, ԴԳ հա, հբ, ղ. *ի կնկ-է* ԴԳ ա, երկու անգամ, հբ երեք անգամ: Թվում է, թե պետք չէ հատուկ հիշատակել, որ անմիջապես ուղղականիչ կազմված ճևերն ավելի նոր են:

§206. *Գործիական. կնկ-ով* /ուղղ. *կին*/ ԴԳ ղդ երկու անգամ, ԴԳ ճժե: Այս դեպքում նույնպես պետք է կարծել, որ *կնկն-ով=*կնկան-ով* ավելի հին կիլիկյան ճևն է:

3. -ուն-ով վերջացող անունները

§ 207. *Սեռական. շուն*, սեռ. *շան* Բ մկզ. *սուն*, սեռ. *սան* 71_{11}, L. 179_{11}, ԴԳ ճ, Սարվ. արտ:

§208. *Բացառական. ի սան-է* 25_{27}, ԴԳ ղդ. *ի բաժան-է* L. 156_{28}:

---

[50] *Յամսեան* հին հայերեն ներգոյականի մասին հմմտ. Ա. Մեյե՝ Բանասէր հանդեսում. Փարիզ, 1899, էջ 144 հաջ.:

§209. *Գործիական*: Պատահաբար չվկայված այդ հոլովն անալոգիայի օգնությամբ կարելի է վերականգնել երկու ճևով. ուժեղ հիմքից կազմված ավելի հին ճևը պիտի լիներ **առն-ով*, իսկ թուլ հիմքից կազմված ավելի նոր ճևը **ան-ով*: Վերջինս պահպանվել է նոր հայերենում, օր. Ախ., Տաճկ. և այլն:

4. *Երկու բաղաձայնով վերջացող հիմքերը*

Ա. *ա հենմատիկ ձայնավորով հիմքերը*

§210. Սեռական. *ամռան* ուղղ. *ամառ* Գիրք վաստ. 10. *դրան* ուղղ. *դուռ* 13_{12}. *ճկան* ուղղ. *ճուկ* Բ ճկա, մժղ. *աւճկան* ուղղ. *աւճուկ* Բ մկէ. *ճմռան* ուղղ. *ճմեռ, ճմէր* Ա. 210, 218. *մկան* ուղղ. *մուկ* Բ մի. *նռան* ուղղ. *նուռ* Բ լղ, ճհ. *ոսպան* ուղղ. *ոսպ* Բ ճժ, մժղ, Ա. 175. *սիտռան* ուղղ. *սիտեռ, սիտէր* Ա. 40, Բ իէ, իթ, լ, մլթ, մկ. *սնկան* ուղղ. *սունկ* Բ մկա, *միայծղան* ուղղ. *միայծաղ* ճծղ, մծե: Նաև *զրտան* ուղղ. *զրտա* Բ մկղ: Վերջին գոյականը դասականն հայերենում ունի ձայնավորական հոլովում:

§211. *Բացառական. ի ճկն-է* ուղղ. *ճուկ* Բ մժղ:

§ 212. *Գործիական:* Վկայություններ. *ճկամ* ուղղ. *ճուկ* Ա. 107 երկու անգամ, Ա. 158. *ոսպամ, ոսպաւմ, ոսբամ* ուղղ. *ոսպ* Բ խ, մխթ, Ա. 181. *սիտռամ* ուղղ. *սիտէր* Ա. 53: Ապա. *արջասպամ* ուղղ. *արջասպ* Ա. 150. *եղեգամ* ուղղ. *եղէգ / սեռ. ան/* Բ մկղ երկու անգամ. *պտղամ* ուղղ. *պտեղ* /սեռ. *պտղան/* «պտղունց» Ա. 253:

Բ. ի հենմատիկ ձայնավորով հիմքերը

§213. *Սեռական. աղուէշբանկին* ուղղ. *աղուէշբանկ* «բանգ, դժի խոտ» Բ մժե. *անճին* ուղղ. *անճ* 9_{18}, 47_{27}. *զառին* ուղղ. *զառ* Ա. 271, Բ մխա. *ֆոռին* ուղղ. *ֆոռ* ԴԳ դե. *մատին* ուղղ. *մատ* Բ մի և այլն:

§214. *Բացառական. յ-անճն-է* ուղղ. *անճ* ԴԳ հգ, ճբ. *ի կաշն-է* ուղղ. *կաշի* Բ միե, մղղ և այլն:

§215. *Գործիական. աղուէշբանկամ* ուղղ. *աղուէշբանկ* Բ մժե. *անճամ* ուղղ. *անճ* 36_6, 57_{22}. *բոյթամ/ բոյթամ, բուրճամ/* ուղղ. *բոյթ* Բ ճղ, ճղղ,

մկղ, Ա. 265. *կաթաւմ* և *կաթամ* ուղղ. *կաթ* Բ ճղ, ճծա, **մկղ**, Ա. 95, 96, 165, 250, 251, 253, 254, 256 /երկու անգամ/, 259, 261, 269, 291, Գիրք վաստ. 221_{21}. *ճեռամ* ուղղ *ճեռ* 27_{18}. *հալմճեռաւմ/ -ճեռամ/* ուղղ. *հալմճեռ* «սանդկոլճ» Բ ճծղ, ճճ, ճճբ, ճճդ, ճճէ, ճղդ, ճղէ, մր, մծե, մհ վեց անգամ. *մաուաւմ, մաուամ* ուղղ. *մաու* Բ ճղյճ, մկղ, մծե, մկը Ա. 258: Բժշկական գրականության մեջ վկայված են նաև *ոտաւմ* ուղղ. *ոտ* և այլ նման ձևերը:

-om վերջավորությամբ գործիականը

§216. *-om* վերջավորությամբ գործիականի շնորհիվ երկու բաղաձայնով վերջացող և հիմքերի կիլիկյան հոլովումը տարբերվում է դասական լեզվի համապատասխան ձեքումից: Վերջինին խորթ լինելով, այդ ձևը երևան է գալիս որպես *-ամբ* վերջավորությունն ունեցող հոլովի ներկայացուցիչ:

-om վերջավորությունը, ինչպես նշվել է վերևում, հնարավոր չէ բխեցնել -amb վերջավորությունից հնչյունական օրենքների օգնությամբ: Այդ դեպքում հարկ կլիներ կամ ընդունել -amb-ի վերջին b-ի կորուստը, կամ էլ -amb>-*amm առնմանումն, ընդ որում վերջին ձևը պիտի դառնար -aum, -om. վարկածներ, որոնք երկուսն էլ հնչյունական անալոգների բացակայության պայմաններում անընդունելի են[51]: Ավելի շուտ երկու ձևերն էլ, դասական -amb և կիլիկյան -om, ծագում են նախահայերեն -*an-v մայր ձևից, որն իր հերթին կազմված պիտի լիներ -v յուսիչի և ուժեղ հիմքի կամ սեռականի ձևի միացումով, ինչպես ձայնավորական ձեքման ժամանակ: Այս -*an-v կապակցությունն առնմանումից հետո դարձել է -*am-v, որ տվել է -amb: Կիլիկյան հայերենում, ընդհակառակն, ուրիշ հնչյունական օրենքների համաձայն նախահայերեն *an-v նախ -*am-v ձևի միջորդությամբ զարգացել է դեպի -*am-m՝ v և m բաղաձայնների առնմանումով. -*amm-ից, իր հերթին, -*avm, -aum միջանկյալ ձևերի միջնորդությամբ, առաջացել է կիլ. -om, ինչպես որ *պաշտամ* առաջացել է ավելի հին *paštamn/paštaman/ ձևից:

Հավանական է երևում նաև մեկ ուրիշ վարկած. կիլ. om ծագում է -*avn/-a-v-n/ կապակցությունից, այսինքն և հիմքերի գործիականը կիլիկյան հայերենում կազմված է եղել այնպես, որ գործիականի v յուսիչը մտել է a թեմատիկ ձայնավորի և բառավերջի արանքը նույն ձևով, ինչպես *նոյն* դե-

---

[51] -mb - հնչյունակապակցությունը պահպանվում է կիլիկյան հայերենում, ինչպես յուրց են տալիս կիլ. *համբերել, համբերութիւն, ամբ*: Հին -mb - չի հնշմարկվում ո՛չ կրճատման, ո՛չ էլ առնմանման:

բանումը կազմում է *նո-վ-ին* գործիականը *-avn> *-avm>*-aum, կիլ -om անցումը պարզ է և բնական

Ր ՀԻՄՔԵՐԸ

§217 Հին բաղաձայնական հոլովումը դուրս է մղվել *ր* հիմքերի երկու խմբի մեջ ա) երկու բաղաձայնով վերջացող *ր* հիմքերի դեպքում բ) *-այր* կապակցությամբ վերջացող անունների դեպքում Հմմտ վերևում՝ §169-175

Այդ հոլովումը պահպանվել է, թեկուզ մասամբ վերափոխված վիճակում, գոյականների այն դասի մեջ, որոնք հին հայերենում կազմում են բաղաձայնական *Ու* հոլովումը

1 *-այր* կապակցությամբ վերջացող ազգակցության բառերի մեջ

2 *օր* գոյականի դեպքում

1 *-այր- կապակցությամբ վերջացող ազգակցության բառեր*

§218 *Սեռական աղբյուր* ԴԳ, ղե, ճհէ *հաւր, հօր* /ուղղ *հայր*/ 37_{22}, $47_{8\,13}$ 49_{24}, ԴԳ բ, ղե *մաւր, մօր* /ուղղ *մայր*/ 37_{24}, ԴԳ լդ, ճկբ, ղե *աղչքմաւր* /ուղղ *աղչքմայր*/ «աղջկա մայր» Բ ճղ, ճկէ, ճղղ, մկզմ մկէ *կարճմաւր* /ուղղ *կարճմայր*/ «որդու մայր» Բ ճիդ, մկէ Դասական հայերենում առկա է նույն ճևը, միայն հնչյունական զարգացման ավելի հին աստիճանով դաս *եղբաւր* elbaur ուղղ *եղբայր*, *հաւր* haur ուղղ *հայր*, *մաւր* maur ուղղ *մայր*

§219 *Բացառական ի հաւրէ/ն* ԴԳ լդ, ճհէ *ի մաւրէ/ն*/ ԴԳ լդ, ճհէ Դասական հայերենում հին հայերենի հնչյունական վիճակով բացառ i haure, i maure

§220 *Գործիական* Այս հոլովի մեջ, սովորականի պես, հին հայերենի բաղաձայնական հոլովումը տեղ է զիջում ձայնավորականին Հնացած arb-հոլովի տեղը գրավում է -or-ov կապակցությունը Օր գործ *եղբաւր-ով* /ուղղ *եղբայր*, փոխանակ բուն կիլիկյան *աղբայր*/, որ վկայված է ԴԳ ղղ Գործիականի ձայնավորական կազմությունը պահպանվում է ժամանակակից հայերենում, սակայն այստեղ *-ով* վերջավորությունը միանում է մասամբ թուլ հիմքին/=ուղղականին/, մասամբ էլ, դերանվանական հոլովման նմանության, կազմվել են -m-ov /բացառ -m-e/ նորագույն ձևերը, ինչպես Տաճկ hor-m-ov ուղղ har mor-m-ov ուղղ mar aχpor-m-ov ուղղ. aχpar

Ծան Արտաքնապես ազգակցության բառերի թեքմանը հետևում է ըն-

դարձակ *ո* հոլովմամբ հոլովվող *քոյր* գոյականը: *Քուրջ*[52] ձևից բացի, այն կազմում է նաև *քաւր* սեռականը /ԴԳ ղե երկու անգամ, ԴԳ ճհէ/, նաև *քաւր-որդի* «քրոջ տղա» բարդումէյունը /ԴԳ ղզ/ փխ. դաս. *քեռ-որդի*: Իրականում, սակայն, *քաւր* ձևը հնչյունական և իմաստային առումով մոտիկ *աղքաւր, հաւր, մաւր* սեռականների ազդեցումէյամբ աղավաղումով առաջացել է նախնական *քոր* ձևից, ինչպես կուչց է տալիս Վարդանի պատմումէյան մեջ հանդիպող *քոր-որդի*[53] ավելի հին ձևը: Այդ *քոր* ձևը, որ *քոյր* հիմքի ուժեղ տարբերակն է հանդիսանում, դասական լեզվի մեջ ներկայացված է միայն հոգնակիի ուժեղ հոլովներով. ուղղ *քոր-ք*, հայց. *քոր-ս*: Կիլիկյան հայերենի հին մայր բարբառում *քոր* հիմքը կատարում է նաև սեռականի ֆունկցիա /դասական հայերենում այդ ֆունկցիայով օժտված է *քեռ* հիմքը/: Յուրահատուկ միջին հայերեն *քուրջ* կազմումէյան դիմաց՝ *քոր* կամ *քաւր*, այդ սեռականի կիլիկյան ավելի հին ձևն է:

2. *Օր* գոյականը[54]

§221. *Օր*/=դաս. *աւր*/ գոյականն արևմտյան գրական լեզվի մեջ որպես թեքման ավելի հին ձև /յուրահատուկ նոր հայերեն ձևի կողքին. մանրամասնումէյունները տե՛ս ստորև/ պահպանել է հետևյալ հոլովումը. սեռ. *աւուր*, բացառ. *օրէ*, դործ. *օրով*: Կիլիկյան հայերենում վկայված են:

Սեռական. աւուր/=աւ-ու-ր/ 11_5, $13_{1,15.16,22,27,15,18,23,10}$ և այլն:

Բացառական. յ-օր-է 17_{17}, Ա 187 և այլն:

Գործիական: Պատահաբար չվկայված հոլովաձևը *ր* հիմքերի անալոգիայով և, հաշվի առնելով նոր հայերենի ավելի հին ձևերը, որոնք գրեթե առանց բացառումէյան ǫrov են հնչում, կարելի է վերականգնել որպես **օր-ով*:

§222. *Օր* գոյականի՝ հին լեզվից եկած հոլովման կողքին արդեն երևում են նոր, միջին հայերենի թեքման ակունքները: Խոսքը բացառականի հետևյալ ձևի մասին է. *յ-օր-վ-է* կամ *յ-աւր-վր-է* Ամս. Ամտ. 13_{15}, 15_{18}: Դա ստիպում է մեզ ավելի մոտիկից դիտել այդ կազմումէյունը:

---

[52] Տե՛ս վերևում՝ §187:

[53] Վարդան Պատմ. էջ 117_{11}:

[54] «Օր» նշանակումէյուն ունեցող *միւ* դասական գոյականը բացակա է կիլիկյան հայերենից: Ապա, հին *այր* պարզ բառը կիլիկյան հայերենում փոխարինված է *այրիկ* բառադրումէյամբ: Նման ձևով, *-ումն* վերջավորումէյամբ վերացական գոյականների խումբը, որ բացակա է կիլիկյան հայերենում, այստեղ հաշվի չի առնվում:

§223. Ինչպես երևում է հոլովումների բերված նկարագրությունից, բաղաձայնական հոլովումը նույնիսկ այն սահմանափակ բնագավառի ներսում, որտեղ այն պահպանվել է, կորցրել է մի հոլով: Խոսքը գործիականի մասին է, որը, եթե հաշվի չառնենք -ǫm ձևը, ամենուրեք անալոգիայի և միօրինակացման սկզբունքով ընդունվել է -ov վերջավորությամբ ձայնավորական ձևը: Դա նոր հայերենում շարունակվող վերափոխման առաջին քայլն է, որը հին բաղաձայնական թեքումը դուրս է մղել մի շարք հոլովներից, այդ թվում նաև սեռական-տրականից, և փոխարինել ձայնավորականով[55]: Քանի որ հին հայերեն բաղաձայնական հոլովման ամբողջ ոլորտը ծածկվել և հեղեղվել է ձայնավորականով, կարելի է խոսել հին բաղաձայնական թեքման կազմալուծման մասին նոր հայերենում:

§224. Մյուս կողմից, նոր հայերենում առաջացել է մի փոխարինում այդ կորած հոլովման համար՝ նոր, դասական լեզվին խորթ բաղաձայնական հոլովման տեսքով, որ տարածվել է *ի* սկզբանե ձայնավորական հիմքերի վրա և ընդգրկում է ժամանակ կույլ տվող գոյականների ամբողջ տարածքը: Այդ ձևով հոլովվում են, օրինակ, *օր*, սեռ. *օր-վան*, բացառ. *օր-վընէ-ն*. *գիշեր* սեռ. *գիշեր-վան*, բացառ. *գիշեր-վընէ-ն*. *ճմեռ* սեռ. *ճմեռ-վան* կամ *ճըմռը-վան*, բացառ. *ճըմեռ-վընէ-ն* կամ *ճմռը-վընէ-ն*. *կորէկ* սեռ. *կորեկ-վան*, բացառ. *կորեկ-վընէ-ն* և այլն: Այդպես է վիճակն Ախ. /ըստ /Том. 56/, Տաճկ. /Այտ. Բ, 8 հաջ./ և ընդհանրապես արևմտահայ բարբառներում[56]: Նոր հայերեն այդ

---

[55] Այդպես է հոլովում Ախալցխայի բարբառը. ուղղ. anun «անուն», սեռ. anən-i. ուղղ. gat^{c} «կաթ», սեռ. gat^{c}-i /Том. 64/. ուղղ. hars «հարս», սեռ. hars-i. ուղղ. kaɾ «գառ», սեռ. kaɾ-i / Том. 57/ և այլն: Նույն վիճակն է տաճկահայերենում և մնացած արևմտյան բարբառներում: Ձայնավորական հոլովումն ընդհանրացել է նաև բոլոր *ր* հիմքերի, ինչպես նաև *-ուհի* վերջավորությամբ գոյականների վրա: Համմ. Ջրպ. Քեռակ. 747 հաջ., Կատ. Մատ.: Եթե որևէ տեղ նույնիսկ պահպանվել է որևէ բաղաձայնական ձև, նրա կողքին միշտ էլ կա ավելի նոր, ձայնավորական հոլովումով կազմված ձևը: Օրինակ, Ախալցխայի բարբառում cug «ճուկ» դեռևս կազմում է cəgan հին բաղաձայնական սեռականը՝ cəg-i ավելի նոր ձայնավորական ձևի կողքին / Том. Ах. диал. 56/: Որպես հնացած, բայց գրական լեզվի մեջ դեռևս օգտագործվող ձևեր պահպանվել են, օրինակ, ազգակցության բառերի hǫr, mǫr, aγpǫr սեռականները, երբ կենդանի ժողովրդական լեզվի մեջ նրանց տեղը վաղուց գրավել են hǫr-i կամ hǫr-u, mǫr - i կամ mǫr-u ձևերը:

[56] Բացառության կարգով Նախիջևանի արևմտյան բարբառը -van-ի փոխարեն ունի -va վերջավորությունը: Օրինակ, Նխ. *աւօր-վա* / Матк. Мат. 37, 56/ ուղղ. *աւօր* «այսօր». *ի-*

վան-հոլովման արմատները[57] հասնում են մինչև միջին հայերենը: Նրանք առկա են կիլիկյան հետևյալ ձևերում:

§225. Բայաո. *յ-որ-վն-է*, *յ-աւր-վըն-է*[58] ուղղ. *օր* /տե՛ս վերևում՝ §222/ 13_{15}, 15_{18}. բայաո. *յ-եզուց-վըն-է* ուղղ. եզուց «էգուց, վաղը» 15_{18}. *վաղ-վն-է* մակբայ /սկզբում բայաոական/ Գիրք վասո. 63, 123, 128՝ *վաղ* բառից:

§226. Կազմության տեսակետից նոր հայերենի van - հոլովման բայաոականի հետ լրիվ նույնական -vən-ը=*-van-ը հոլովաճևը պարտադիր կերպով ենթադրում է կիլիկյան հայերենում - van վերջավորությամբ մի սեռական: Հարց է առաջանում, թե որտեղի՞ց է ծագում այդ կիլիկյան սեռականը և նրանից կազմված -vən-ը բայաոականի ճևը:

§227. Խնդրո առարկա -van, -vən-ը կիլիկյան հոլովաճևերն արտաքուստ համընկնում են դասական լեզվի -un կապակցությամբ վերջացող գոյականների -van սեռականի և -van-ը բայաոականի հետ, օրինակ. *անուն* սեռ. *անուան*, բայաո. *յ-անուանէ*: Սակայն արդեն հին լեզվի մեջ ժամանակ նշանակող գոյականները ոչ միայն պատկանում են մեծ մասամբ *ու* հիմքերին /օրինակ, *ժամ* սեռ. *ժամու*, *դար* սեռ. *դարու*, *առաւաւտ* սեռ. *առաւաւտու*/, այլ,

---

րիկ-վա / Патк. Мат. 60/ ուղղ. *իրիկ* «երեկո». *կէս-վա* / Патк. Мат. 101/ ուղղ. *կէս*. *տարվա* / Патк. Мат. 36/ փոխ. Տաճկ. *տարվան*: Այստեղ մենք գործ ունենք արևելահայերենի ազդեցության հետ, որտեղ այդ երեքումը սովորական է: Այսպես, Թիֆլիսի բարբառն ունի հետևյալ ճևերը. /տե՛ս Abhdl. d. Ac.d.Wiss. z. Berl. 1860, s. 86 ff./. or սեռ. or-va, kišer սեռ. kišer-va, cmeŕ սեռ. cmeŕ-va, amaŕ սեռ. amaŕ-va, Ագուլիսի բարբառում /Սարգ. 87 հաջ./or սեռ. or-va և այլն: Արևելյան գրական լեզվի մեջ *շաբաթ* սեռ. *շաբաթ-ուայ*, *ամիս* սեռ. *ամս-ուայ*, *տարի* սեռ. *տար-ուայ* /որոնց կողքին կանգնած են *-ուան* վերջավորությամբ ճևերը, ըստ երևույթին, արևմտահայերենից ներթափանցած/ հմմտ. Պալաս. էջ 32: Մեզ համար այստեղ նշանակություն չունի, թե արդյոք -va վերջավորությունը ավելի նոր է և ծագում է -van վերջավորությունից /այդ վարկածի օգտին կարծես թե խոսում է Ագ. *աղջկ-այ* սեռականը փոխ. դաս. *աղջկ-ան*, Սարգ. 87, 88/, որովհետև մեզ հետաքրքրում է միայն -van ճևը: Միջին հայերեն տեքստերից հիշատակենք նաև *ինչուայ* և *ինչվայն*, *ինչվան* զուգահեռ ճևերը՝ փոխ. կիլ. *ինչուի*:

[57] Այտընյանի «Քննական քերականության» մեջ այն հիշատակվում է որպես արևմտյան գրական լեզվի երրորդ հոլովումը (Այտ. Բ, էջ 8):

[58] Վկայված է հետևյալ նախադասություններում. *յայս օրինէս ինչվի ժե օր* 13_{15} «այս օրից մինչև 15 օր», ապա էջ 15_{18}. *յայս աւրվընէ ի ժե օր, եւ յեզուկվընէ ի ժե օր* «այս օրից 15 օր, և վաղվա օրից 15 օր»:

պարզ հիմքերի կողքին, գտնում ենք նաև -un վերջավորությամբ կազմություններ, ինչպես *երեկ* և *երեկուն*, *առաւաւտ* և *առաւաւտուն*, *այգ* և *այգուն*, *վաղ* և *վաղուն*/ *վաղվաղուն* բարդություն կազմում/: Այդ մակբայները միջին հայերենում դարձել են գոյական, նույն ձևով, ինչպես հհ. *այգուց* մակբայը կիլիկյան հայերենում ձեռք է բերել գոյականի ֆունկցիա /*եգուց*/: Հետևյալ օրինակները ցույց են տալիս, որ ժամանակ նշանակող այդ գոյականները հոլովվում են -un սեռ.-van վերջավորությամբ հին գոյականների նման. ներգ. *յ-իրիկվան* ԶգՆ 284, բացառ. *յ-իրիկվընէ/ն/* ԶգՆ 275, 276: Երկուսն էլ *իրիկուն* գոյականի հոլովներն են: Սակայն, քանի որ *իրիկուն* բարդություն կողքին դեռևս եղել է *իրեկ* /դաս. *երեկ*/ պարզ գոյականը, կարող էր ծվալ, որ *իրիկվան* սեռականը և *յ-իրիկվընէ* ներգոյականը կազմված են անմիջապես պարզ բառից *-վան* վերջավորությամբ, ինչպես *մահ-վան* սեռականը դաս. *մահ* գոյականից: Այդ *-վան* ծվացյալ վերջավորությունն *իրեկ*, *իրիկուն* և այլ նման դեպքերից, որտեղ այն արդարացված է եղել աստւածաբանորեն, անալոգիայի սկզբունքով տարածվել է ժամանակ ցույց տվող այլ գոյականների վրա, որոնց համար, քանի որ սկզբնապես չեն հոլովվել, պետք է *աստղծվեր* մի նոր հոլովում, ապա առհասարակ ժամանակ ցույց տվող բոլոր գոյականների վրա, օրինակ, *օր*: Հարկ է նշել, որ այդ ձևով հոլովվող գոյականների ծիվը պետք է լիներ խիստ սահմանափակ, որ հետևում է ուրիշ վկայություններ: Ընդհանրապես հոլովման այդ ձևը կիլիկյան հայերենում դեռևս անկայուն է և ձևավորման ընթացքում է գտնվում, ինչպես ցույց են տալիս հոլովների կազմության մեջ առկա տատանումները: *Յ-եգուց-վընէ*, *վաղ-վընէ* վերևում բերված ձևերի կողքին երևում են նաև բացառականի հետևյալ ձևերը. *յ-եգց-ենէ* 13_{15}, *վաղու-ենէ* 27_{15}, ԶգՆ և ԶգՒ ամենուրեք:

Վերջին ձևերը *ծագում են ածականների -եան* վերջածանցով համապատասխան ձևերից[59]:

---

[59] *-եան* վերջածանցով հհ. ժամանակային ածականական կազմություններ կարող են ազդեցություն թողած լինել van - հոլովման առաջացման և ուժեղացման վրա: Հիշատակենք *վաղու-եան*, *հինգամ-եան*, *երիկ-եան*, *առաւօտ-եան*, *այժմ-եան*, *ամս-եան*, *տրլընջ-եան*, *մշտնջ-եան*, որոնցից վերջիններն ածականներից դարձել են սեռական:

Թվում է, թե ժամանակի ածականից են ծագում այնպիսի սեռականներ, ինչպես Ագ. սեռ. kšär-än /ուղղ. kšär «գիշեր»/, asar-an=Տաճկ. asǫr-van «այսօրվա»: Դրան համապատասխան, արևելյան գրական լեզուն իսկապես հանդես է բերում սեռականներ, ինչպես՝ *երեկ-եան* ուղղ. *երեկ*, *այսօր-եան* ուղղ. *այսօր* /Պալաս. 33/: Ժամանակ ցույց տվող գոյականների -va վերջավորությամբ սեռականը նույնպես ամենաբնականոն ձևով բացատրվում է որպես ժամանակի ածական կամ մակբայ. այդ կազմութ-

§ 228. Ի տարբերութիւն թե՛ դասական հայերենի՝ իր միասնական *ք*-հոգնակիով, թե՛ նոր հայերենի, որտեղ գերակշռում է *եր*-հոգնակին, կիլիկեան հայերենում հոգնակիի կազմութիւնը բազմազան է. մի կողմից *ք* հոգնակին շարունակում է յուր գոյութիւնը սահմանափակ տարածքում, մյուս կողմից՝ ստեղծվել է հոգնակիի վերջավորութիւնների մի նոր շարք: Հոգնակիի կազմութեան ձևերը մենք բաժանում ենք երկու խմբի.

Ա. *Հոգնակիի հատուկ կիլիկեան ձևեր.*
1.-*եր* վերջավորութեամբ հոգնակի,
2.-*նի* վերջավորութեամբ հոգնակի,
3.-*վի* վերջավորութեամբ հոգնակի,
4.-*տի* և -*վտի* վերջավորութիւններով հոգնակի,
5.-*ան* վերջավորութեամբ հոգնակի,
6.-*ատան* վերջավորութեամբ հոգնակի:

Բ. -*ք* վերջավորութեամբ ձևեր.
1.-*ք* վերջավորութեամբ պարզ հոգնակի,
2.-*ք* վերջավորութեամբ ընդարձակ հոգնակի,
3.-*ք* վերջավորութեամբ բարդ հոգնակիի ձևեր:

Ա. *Հոգնակիի հատուկ կիլիկեան ձևեր*
1.-եր վերջավորութեամբ հոգնակի
ա) Միավանկ բառերի հոգնակիներ.

§229. *ազգ-եր* եզ. ազգ. Բ մծղ, միգ, մկա, ԴԳ իթ, ղը, ճլղ, ճիւք, Գիրք վասա. 50, 57, Dul. 667. *ազգ-երոյ* սեռ. ԴԳ լղ:

ակն-եր, եզ. *ակ* Գիրք վասա. 55:

յունները դեռ հաճախ պահպանում են ածականի կամ դերբայի ուժ: Համենայն դեպս, անընդունելի է Պետերմանի բացատրութիւնը /Abhdl. d. Ac. d. Wiss. z. Berl. 1860, 69/, իբր թե արևելահայերենի -va վերջավորութեամբ սեռականը հանդիսանում է «սեռականի կրկնակի արտահայտութիւնը» - *ս* վերջավորութեանը միացել է -a հոլովիչը: Արդեն հին լեզվի մեջ -*a* թեքութիւնի կիրառութիւնը սահմանափակված է հատուկ անուններով, իսկ արևելահայերենի *իրա* դերանվանական սեռականն անալոգիայով կազմված է *նրա* սեռականից /դաս. *նորա*/: Ավելի շուտ *հերու*, *վարու*, *առաւօտու* բառերում բառավերջի *ու*-ին միացել է -*եայ* ածականական վերջածանցը, և այսպիսով առաջացել և անալոգիայի սկզբունքով ընդհանրացել է սեռականի -va թվացյալ վերջավորութիւնը:

աղբ-եր, եզ. *աղբ* Գիրք վաստ. 27:

աչ-եր, եզ. *աչք*. Ներս. Ճնորհ.:

գ-արտ-եր, եզ. ուղղ. *արտ* Գիրք վաստ. 83, ԴԳ ճհ:

աւր-եր/օր-եր/, եզ. *աւր* 23_{26}, 25_{7}, 27_{10}, Ա. 210, 218, 235, Dul. 618, 633, 647, 654, Բ **միզ, մծա, մծդ, մծէ, մծը**. *յ-աւր-եր* ներգ. ԴԳ ճիր. *աւր-երոյ* սեռ. 25_{7}, ԴԳ ժա:

բաժ-եր, եզ. *բաժ* L. 154_{23}:

բան-եր, եզ. *բան* ԴԳ. ժ, ժէ, իա, լգ, *բան-երոյ* սեռ. ԴԳ բ:

բերդ-եր, եզ. *բերդ* Dul. 643, 646, 670 *բերդ-երոյ* սեռ. ԴԳ ճհը:

բճ-եր, եզ. *բիճ* ԴԳ ճդ:

բոյն-երոյ, եզ. *բոյն* ԴԳ ճկը:

բր-եր, եզ. *բիր* Գիրք վաստ:

գեղ-եր, եզ. *գեղ* ԴԳ ճհ, Գիրք վաստ. 74, Dul.640. *գեղ-երոյ* սեռ. 39_{8}, ԴԳ լդ, ճհ:

գետ-եր, եզ. *գետ* Լևոնի երդ, Dul. 540, 671:

սեռ. *գոդ-երոյ*, ուղղ. *գոդ*. ԴԳ ճժը, ճխ:

գոյն-եր, եզ. *գոյն* Ա. 20, Բ **միզ**. բացատ. *ի գոյն-երոյ* Բ **միզ**:

գործ-եր, եզ. *գործ* ԴԳ լդ, ճխը:

գորտն-եր, եզ. *գորտ* Բ. **մկը**:

գր-եր, եզ. *գիր* L. 185_{22} գործ. *գրերով* ԴԳ կ:

դաս-եր, եզ. *դաս* ԴԳ հա:

տեղեստան-ոյ L. 154_{24}, ԴԳ. բովանդակութեան ցանկ. կը. *խմելեստան /<*խմելի-ա-ստան/* եզ. *խմելիք /խմելի/* Ա. 288. 235, հոգն. գործ. *խմելեստան-ով* Բ մլը. *ըմբելեստան /<* ըմբելի-ա-ստան/* եզ. *ըմբելիք / ըմբելի/* Ա. 289. հոգն. սեռ. *ըմբելեստան-ոյ* Ա. 83, 270, հոգն. գործ. *ըմբելեստան-ով* Ա. 270^{132}/:

§254. Որպեսզի ավելի մոտիկից բնութագրենք *-ստան* վերջավորութիւնը կիլիկեան հոգնակին և հատակ ձևով սահմանազատենք միջին հայերենում նրան հատկացված տեղը, հետևենք նրա շարունակութեանը նոր հայերենում:

Ախալցխայի բարբառն ունի *-ստան* վերջավորութիւնը հետևյալ հոգնակիները. hokᵉsdan[133] / նաև hokinⁱer/ եզ. hoki «հոգի». pᶜᵉsᵉsdan և ընդարձակ pᶜᵉsᵉsdən-nⁱer /նաև pᶜᵉsanⁱer/ եզ. pᶜᵉsaⁱ Том. Ах. диал. էջ 59: Սակայն ամենից լավ է ներկայացված հոգնակիի այդ ձևը Կուտիի լեհահայ բարբառում: Այդտեղ առկա են stan վերջավորութիւնը հետևյալ հոգնակիները.

	Եզակի		Հոգնակի
այ	*aki*	«պոչ»	*akə-stan Han. 23*
	dari	«տարի»	darə-stan Han. 43
	eki	«խաղողի ողկույզ»	ekə-stan Han. 51
	hajɬi	«հայելի»	hajɬə-stan Han. 61
	kodi	«դուռի»	kodə-stan Han. 79
	kini	«գինի»	kinə-stan Han. 79
	kᶜeɛ̆i	«քեռի»	kᶜeɛ̆ə-stan Han. 84
	kᶜami	«քամի»	kᶜamə-stan Han. 83
	madni	«մատանի»	madnə-stan Han. 88
	mori	«անուռ»	morə-stan Han. 91
	oski	«ոսկի»	oskə-stan Han. 99
	raxi	«օղի»	raxə-stan Han. 108
	siɬi	«ապտակ»	siɬə-stan Han. 109
	uskuɬi	«վուշ»	uskuɬə-stan Han. 121
	xamji	«մտրակ»	xamjə-stan Han. 68
	harsnikᶜ/harsni+kᶜ/	«հարսանիք»	harsnə-stan Han. 63
	palinkᶜ/<*banali-n-kᶜ	«բանալի»	palə-stan Han. 100

---

[132] Վիեննայի Մխիթարյանների գրադարանի № 88 ձեռագիրը *տեղեստան* հաճախակի հոգնակիից բացի ունի նաև *մայրեստան* հոգնակի /եզ. *մայրի* «անուռ»/:

[133] Ավելի ճիշտ hokᵉstan, pᶜᵉsᵉstan:

	pᶜoši	«փոշի»	pᶜoše-stan Han. 107
	gałaǰi	«խոսք»	gałaǰe-stan Han. 55
բ)	lizu	«լեզու»	lizu-stan Han. 86
	udelu	«ուսելիք»	udelə-stan Han. 129
Սակայն	orti	«որդի»	հոգն. orti-kᶜ
	ərzi	«ուկրաինացի»	հոգն. ərzə-nʲer
	tadəstanǰi	«դաստարանի պաշտոնյա»	հոգն. tadəstanǰi-kᶜ

Այս համադրությունից հետևում է. *-ստան* վերջավորությամբ հոգնակին նոր հայերենում կազմվում է միայն ձայնավորահանգ հիմքերից. *ի* և *ա* հիմքերից Ախալցխայի բարբառում, *ի* և *ու* հիմքերից Կուտիի բարբառում: Միջին հայերենում, որից ծագում են այդ բարբառները, հոգնակիի հիշված ձևը նույնպես պետք է սահմանափակված լիներ ձայնավորահանգ հիմքերով: Ուրիշ ձայնավորահանգ հիմքերի, այսինքն՝ *ու* և *ա* հիմքերի դեպքում, այս հոգնակին ոչ նախնական է, ոչ էլ կիլիկյան: Նոր հայերենն էլ դրանից ունի միայն մի քանի դեպք, և վկայված կիլիկյան *-ստան* հոգնակիները կազմվում են միայն *ի* հիմքերից: Այսպիսով, կիլիկյան-միջին հայերեն-*ստան* հոգնակիների համար մնում են միայն *ի* հիմքերը, և մենք, ելնելով այդ կազմության տարածվածությունից լեհահայ բարբառում, պետք է հատկացնենք նրանց *ի* հիմքերի ամբողջ խումբը: Բացառություն են կազմում միավանկ բառեր, ինչպես՝ *ճի*, իսկ բազմավանկ բառերից կենդանի էակներ նշանակող գոյականներ /օրինակ, *որդի*/: Պետք է ասել, որ լեհահայ բարբառում հոգնակիի այդ կազմությունը կարելի է գտնել միայն անշունչ առարկաներ նշանակող գոյականների մեջ /միակ բացառությունն է kᶜeri հոգն. kᶜerəstan/[134]:

---

[134] Եթե կիլիկյան հայերենում *ի* հիմքին *ա* կապող ձայնավորի միջոցով միացող *-ստան* վերջավորությունն օրինաչափ ձևով դառնում է *-եստան*, ապա բերված լեհահայ օրինակներում դա տեղի է ունենում ավելի շատ բացառության կարգով՝ pᶜoše-stan և gałaǰe-stan հոգնակիներում: Ընդհանրապես -stan վերջավորությունը միանում է հիմքի վերջի i-ին՝ առանց a կապող ձայնավորի: Հիմքի վերջի i-ն լծուլանում է դեպի ə, ձևաբանական մի նորակազմություն, պայմանավորված նրանով, որ stan-ը վաղուց կորցրել էր յուր նախնական բնույթը և երևան է գալիս որպես հոգնակիի իսկական վերջավորություն: Ախալցխայի բարբառում i-a միաձուլումով առաջացած e-ն, միանալով stan-ին, նորից տալիս է -estan հոգնակերտ վերջավորությունը, որ երևում է pᶜęs-estan<*pᶜęsa-esdan ձևի մեջ:

§ 255. Եթե *-վի, -տի* կամ *-վտի* վերջավորութիւններով հոգնակի կազմող գոյականները սկզբունքորէն, չնայած ավելի հազվադեպ, ենթակայ են տալիս նաև *-եր* կամ *-ներ* հոգնակին /ընտրութիւնը կախված է վանկերի քանակից/, ապա *ի* հիմքերի դեպքում կիլիկյան կանոնավոր և օրինաչափ *-եր* և *-ներ* վերջավորութիւններով կազմութիւններն ընդհանրապես տեղ չունեն: *-ատան* կամ *-ան/ճի-ան* բառի դեպքում/ վերջավորութիւններով հոգնակին այստեղ միակ հնարավորն է՝ դեռևս պահպանվող *ք* -հոգնակիների կողքին /տե՛ս ստորև § 256ա/:

Բ. -ք վերջավորութիւնը հոգնակին

I. *Պարզ ք-ով հոգնակին*

§ 256. *-ք* վերջավորութիւնը հոգնակին պահպանվել է որպես կազմութեան միակ հնարավոր ճև երկու դեպքում.

1) *-ի-ով* վերջացող բազմավանկ գոյականների մոտ, որոնք նշանակում են կենդանի էակներ, ինչպես նաև *-է-ով* վերջացող գոյականների մոտ: Վկայութիւններ. եզ. *որդի* հոգն. *որդի-ք* 19_{25}, 23_{16}, $47_{14,\ 15}$, 53_{11}, 55_{14}, ԴԳ ա, բ, ժ, լդ, ղդ, ղը, ճժը. եզ. *տանեցի* հոգն. *տանեցի-ք* 13_{11}. եզ. *տիւրկցի* հոգն. սեռ. *տիւրկցեց* 39_{13}. եզ. *քրիստոնէ* հոգն. *քրիստոնէ-ք* Հեթ. Կոռ. 478, 485, 486, 488. եզ. *պախրէ* «եզ» հոգն. *պախրէ-ք* ՋզԱ և Բ. և այլն: Այդ խմբի ճայնավորահանգ գոյականներից հոգնակին երբեք չի կազմվում այլ ճևով:

Նույնիսկ այժմ Լեհ. orti-ն կազմում է միայն orti-k^{c} հոգնակին /Han. 49/, tadəstanǰi-ն միայն tadəstanǰi-k^{c} հոգնակին (Han. 115): Արևմտահայ գրական լեզուն ճայնավորահանգ հիմքերի նույն խմբի մեջ գիտի միայն *-ք* -ով հոգնակին. *թշնամի* հոգն. *թշնամիք, որդի* հոգն. *որդիք* (Այտ. Բ 14): Ուրիշ բարբառներում հին հոգնակին դուրս է մղված այստեղ նույնպես: Համմտ. Զրպ. 746:

Մնացած ճայնավորահանգ հիմքերը, վերևում ասվածի համաճայն, ընդունում են *-եր* կամ *-ներ* վերջավորութիւններով հոգնակին:

2) Դերանունների մոտ/նախորդաս տե՛ս ստորև՝ § 281 հաջ./: *-եր* հոգնակին փորձում է տարածվել միայն *այս, այտ, այն* ցուցական դերանունների վրա /հմմտ. վերևում՝ § 234.2/, մի երևույթ, որ շարունակութիւն է ապրում նոր հայերենում[135]:

---

[135] Հմմտ. /ըստ Զրպ. 754/ դերանվանական հոգնակիներ. *իրանները՝ իրանք* և *իրենք* ճևերի կողքին */իր* դերանունից/ *սըրիկականեր* /նույն տեղը, 755/ *սըրիկակ* «այս» դերանունից:

Բայց վերևում նշանակված տարածքից դուրս էլ դեռևս պահպանվում է *-ք*-ով հոգնակին: Սակայն նրա գործածությունը սահմանափակ է նոր կիլիկյան *-եր* և *-ի* հոգնակիների պատճառով, որոնք վիճելի են դարձնում նրա գերակայությունը:

Դա վերաբերում է.

ա) Ջայնավորահանգ գոյականների ամբողջ խմբին: Այսպես, *վկայ-ի* հոգնակիի կողքին մենք դեռևս հանդիպում ենք *վկայք* հին հոգնակիին /$29_{3,\ 10}$, $31_{5,\ 10,}35_{7}$, 39_{19}, 51_{2}, 57_{25}, 59_{18}, 63_{16}, 81_{10}/, հոգն. *ակռայ-ի* ձևի կողքին դեռևս կա *ակռայ-ք* Բ ճհղ, Ա 24, ապա *ծառայ* հոգն. *ծառայ-ք* L. 155_{7}, *քահանայ* հոգն. *քահանայ-ք* ԴԳ կը. *տղայ* հոգն. *տղայ-ք* $17_{7,\ 9}$, $37_{20,}$ 39_{2}, $47_{16,18}$, $49_{17,29,}52_{1,\ 10,\ 17}$, $53_{9,\ 15}$, ԴԳ կը, հբ, ճժե: Վերջին ձևի նոր հայերեն շարունակությունն է dəγa-k^{c} հոգնակին /Han. 46/: Նույն հին ձևերը պահպանվում են նույն դեպքերում նաև տաճկահայ բարբառում և արևմտյան գրական լեզվի մեջ /Այտ. Բ 11, § 42/: *-ք* հոգնակին ամենից շատ է տարածված *այ*-ով վերջացող հիմքերի մոտ, բայց այն կենսունակ է նաև *ու* և *ի* հիմքերի դեպքում. *ածվ-ի* /եզ. *ածու* «այգի»/ հոգնակիի կողքին գոյություն ունի *-ք* վերջավորությամբ *ածու-ք* ձևը /ԴԳ հճ/: Այն փաստը, որ *ի* -ով հիմքերը, չնայած որ գերադասում են նոր *-ատան* հոգնակին, դեռ չեն հրաժարվել *-ք* վերջավորությամբ ավելի հին կազմությունից, պարզ երևում է հետևյալ օրինակներից. *ապիկի-ք* եզ. *ապիկի* Բ միէ, մլը, Ա. 161, 259. *տարի-ք* եզ. *տարի* Բ մժէ. *աղի-ք* եզ. *աղի* Բ ճիպ, մծէ, Ա. 28, ապա *լսելիք* «ականջ» և «ականջներ» Բ մժէ. մկէ *կշտելիք* «ուտելիք» և «ուտելիքներ» Ա. 284, միե, մլը. *սպեղնիք, կանելիք* և այլն, ինչպես եզակիի, այնպես էլ հոգնակիի իմաստով: Եթե հաշվի չառնենք այնպիսի բարբառներ, ինչպիսիք են Լեհ., որտեղ բացառիկ տեղ է գրավում *-ատան* հոգնակին, կամ Նախ., որտեղ նույն դերը հատկացված է *-ներ* հոգնակիին, այս դեպքում կենդանի է *-ք* վերջավորությունը: Հմմտ. Զրպ. 746, Սարգ. 77 և 96:

Այն հանգամանքը, որ *-ք* հոգնակին կարող էր պահպանվել ձայնավորահանգ հիմքերի մոտ այն ժամանակ, երբ մնացած գոյականների ամբողջ տարածքը գրավել էին *-եր* և *-ի* վերջավորություններով կիլիկյան հոգնակիները, կապված է ոչ այնքան այն բանի հետ, որ *-եր* և *-ի* վերջավորությունները հազվադեպ են ձայնավորներից հետո /հին լեզվից ավանդված *-եար* և *-անի* վերջավորություններով հավաքական կազմությունների հիմքում գրեթե միշտ ընկած են բաղաձայնահանգ գոյականները/, այլ ավելի շուտ այն բանի հետ, որ *-ք* վերջավորությունը *-իք, -ուք, -այք* կապակցությունների նկատմամբ որոշակի հակում ունի, քանի որ այդ հակումից ելնելով՝ կիլիկյան հայերենում ստեղծվել է *-իք, -այք* վերջավորություններով ըն-

դարձակ հոգնակիների մի շարք:

Այդ նորմակազմումներից ելնելով՝ ճայնավորահանգ գոյականների *-ք* հոգնակին ճեռք է բերել մի ամուր հիմք և հենակետ *-եր* և *-ի* հոգնակիների առաջխաղացման դեմ: Արտաքին, ճևական նմանումներն ավելի նոր ընդարձակ հոգնակիների հետ որոշ ժամանակ պահպանել է նաև պարզ *-ք* հոգնակիի գոյությունն այդ սահմանափակ ոլորտի ներսում[136]:

բ) Ազգակցություն ցույց տվող բառերի համար:

Երբ վերջիններս ժամանակակից լեզվի մեջ էլ մասամբ կազմում են *-ք* հոգնակին[137], ապա դա կամայական դասակարգություն չէ, այլ միջին հայերենի համապատասխան հոգնակիի պատմական շարունակությունը, որով հետև կիլիկյան հայերենում շատ սովորական են հետևյալ ճևի հոգնակիները. *եղբարք* ԴԳ ա 19_{28}, 93_{22}. *դստերք* 39_1, 37_{25}, ԴԳ ա, ղդ. *ծնօղք, ծնաւղք* 45_{10}, 49_{26}, 53_{16}, ԴԳ հբ, ճբ, *այրուկիմք* ԴԳ լդ, հբ, ճժդ. *հարք* սեռ. *հարց* 39_{17}. նաև *տէրք/=դաս. տեարք/* 17_{14}, ԴԳ ճիբ, ճլե. հմմտ. *աղջարք* հոգս. ուղղ. Անիի 1264 թ. մի արճանագրության մեջ /Այտ Ա. 173/: Միայն հատ ու կենտ երևում են նոր հոգնակիներ. *քույր* բառից *-վոի* վերջավորությամբ, *մայր* բառից *-եր* վերջավորությամբ /*մայրեր* ճևով/[138] և այլն: Այդ խմբի որոշ գոյականներ վերջանում են նայերով: Հին լեզվի ազդեցության հետ մեկտեղ դա կարող է նպաստել *-ք* վերջավորության պահպանմանը:

Մնացած բոլոր դեպքերում հին հայերենի *-ք* հոգնակին, որպես այդպիսին, անհետացել է: Առանձին դեպքերը, երբ, այնուամենայնիվ, այն պահպանվում է գրականության մեջ, դասակարգություն են: Միայն *ոչ քոմ* հոգնակիի իմաստով այն դեռևս պահպանվել է որպես *ք*-ով հոգնակի եզակիի իմաստով:

§ 257. Որչափով որ պատմության ընթացքում *սահմանափակվում* է *-ք* հոգնակիի տարածման ոլորտը, նույն չափով ընդլայնվում է այն գոյական-

---

[136] Հատկանշական է, որ նոր հայերենի հենց այն բարբառները, որտեղ ամենից շատ են զարգացած *-ikᶜ*. *-uk*, *-akᶜ* վերջավորություններով ընդարձակ հոգնակիները, մեծ չափով պահպանել են պարզ *-ք* հոգնակին ճայնավորական գոյականների մոտ. օրինակ, Ագուլիսի բարբառը, ըստ Ս. Սարգ. 77 և 96:

[137] Օրինակ. Լեհ. jenoxkᶜ «ծնողներ» Han. 47: Ժամանակակից գրական լեզվի մեջ *հայրեր, մայրեր, եղբայրներ* հոգնակիների կողքին հանդիպում են նաև *հարք, մարք, եղբարք*, Այտ. Բ 15. նաև *տեարք* հոգնակին *տէր* գոյականից՝ *տէրէր* կանոնավոր ճևի կողքին:

[138] Որպես ուշ միջին հայերեն՝ վկայված է Հովհ. Բ 285: Որպես ավելի հին կիլիկյան ճև՝ պետք է ընդունել *մօրեր*, ըստ նոր հայերեն համապատասխան ճևի /Զրպ. 749/:

նների խումբը, որոնք հոգնակիի ձևի հետ միավորում են եզակիի իմաստը: *-ք հոգնակիի իսկական հոգնակիների շարքից դուրս մղվելու հետ մեկտեղ է ընթանում նրա իջեցումը դեպի եզակիի ֆունկցիան ու կիրառությունը:*

§ 258. Որպես *ոչ բուն հոգնակի* հին հայերենի *-ք* վերջավորությամբ եզակին ընդհանուր առմամբ պահպանվել է նոր հայերենում: Նույնը վերաբերում է նաև կիլիկյան լեզվին. *ապրանք* «կալվածք» /=դաս. *ապրանք/* $11_{4,5,\ 14,\ 16,\ 17,\ 18,\ 25,\ 28}$, $13_{2,\ 25,\ 28}$,$15_{3,\ 27}$, $17_{2,16}$, 19_{18}, ԴԳ հբ. *զրեհք/=դաս. զրահք, զրեահք/* «զրահ» 31_{9}. *զրկանք* «ապօրինի ճևով ձեռք բերված կալվածք» 29_{11}. ԴԳ ճկ. *իրաւունք* 3_{21}, 9_{23}, $13_{7,\ 14}15_{8,9,16}$, 23_{5}, ԴԳ ճծա. *խելք* ԴԳ ղը, ճժգ, Բ ճխք. *խօսք* 15_{11}, 29_{2}, 57_{14}. *կամք* 29_{5}, 35_{19}. *հագոյք /=դաս. ագոյք և ագոյ/* «զենք» 31_{9}. *հունճք* ԴԳ ճլե. *մեղք* և *մեղանք* 15_{24}, 29_{18}, 31_{7}, $35_{1,\ 3,\ 30}$, ԴԳ լա, խե. *պարտք* 71_{17}. *պէտք* «պետք, կարիք» 13_{8}, 17_{9}, 27_{17}, 35_{6}, 53_{23}, 59_{3}. *վանք* ԴԳ խե. *տուգանք* 13_{14}, 61_{20}, 73_{15}, 79_{14}. *քաշանք* «տառապանք» $6_{16,\ 9,\ 11}$. *օրէնք* ԴԳ ղը, ճխբ, ճլ: *Բաղնիք /=դաս. բաղանիք/* Բ խե, ճի, մի, միե, մնը. *կարծիք* «կարծիք, կասկած» ԴԳ ժա, ժգ. *կարիք* ԴԳ ժա, ճ. *հայրենիք* «ժառանգական կալվածք»: 19_{7}, 39_{4}, 47_{4}, 49_{4}, 55_{23}, ԴԳ ճժբ: *-ի* հիմքերին, ինչպես *հայրենիք*, ըստ § 253, կարող են կազմել նաև *-առան* վերջավորությամբ հոգնակի:

§ 259. Կիլիկյան հայերենում եզակիի նշանակություն են ձեռք բերել դասական լեզվի մեջ դեռևս հոգնակիի արժեք ունեցող հետևյալ ձևերը. *աշխարհք* և *աշխարք* /դաս. *աշխարհ/* L. 178_{11}, ԴԳ ճժբ *առուգայք* /դաս. *առեւտայ/* «առևտրում» ԴԳ ճզ. *քերանք* /դաս. *քերան/* Բ ճիդ. *զանկատք* և *զանկտանք* /դաս. *զանգատ/* 29, 13_{20}, 15_{10}. *զինք* /դաս. *զին/* ԴԳ ճլ. *զհնք* /դաս. *զհ/* «կողմ» $37_{14,\ 24}$, 51_{14}. *զարկք* /դաս. *զարկ/* 31_{11}, 59_{36}, $61_{2,8}$. *իրք* /դաս. *իր/* 9_{24}, 13_{30}, 15_{7}, $19_{13,\ 12,\ 25}$, 23_{30} 35_{2}, 156_{6}. *խլոյք* /դաս. *խլոյ/ «/ապօրինի ճևով/ խլած առարկա»* $27_{6,\ 19}$, 57_{25}. *ծեծք* և *ծեծանք* /դաս. *ծեծ/* $61_{23,\ 5}$. *համանք* /դաս. *հրաման/* «հրամանա, լծուլլովուվիյուն» $19_{10,\ 21}$. 31_{21}, $33_{3,\ 10}$. 35_{2}, 49_{17}, $53_{3,\ 20,\ 25}$. L. 178_{16}, $185_{9,\ 20}$. ԴԳ կ, հբ, ճծա. *համարք* /դաս. *համար/* 93_{6}. *հաւէրք* /դաս. *հրաւէր/* $9_{14,\ 15,\ 19}$. *անհաւէրք*, ածական «չհրավիրված» 15_{1}. *ձեռք* /դաս. *ձեռն/* Բ ձծե[139]/. *ջարդայք* /դաս. *ջրարդայ/* Բ ձծը, ձկդ, ԴԳ ճհգ. *չաքք* /դաս. *չաւի/* սեռական և գործիական հոլովներով ԴԳ լե, Բ, ճղզ: Նրանց կողքին դեռևս ընդունելի են համարվում հին հայերենից եկող եզակիները, ինչպես *չաք, ձեռ, զհ* կամ *զհհ, զարկ, զին* սեռ. *զմոջ*:

---

[139] Ձախ ձեռայն:

Վերջապես, հատուկ կիլիկյան են հետևյալ եզակիները. *հիլայք* /հոգն. *հիլայ-ի*/ «գանգատ» 31_{20}, $33_{5.\ 25}$, 35_{27}. *հիլայանք* սեռ. *հիլայնայ* 57_{14}. *աժէք* «արժեք» ԴԳ ա. *սամսրչէք* «միջնորդի վարձ» L. $155_{2.\ 6.\ 21.\ 22.\ 23}$ *սարեչէք* «վճար նավի համար» L. 156_{2} *արծվիք*, ինչ-որ հիվանդության անուն[140] Բ ժը, մկդ դ. *հարկիք* «պատիվ, հարգանք», $9_{12.\ 22}$ *շնիք* «ծնծրակ» Բ մժդ. *այնելիք* «գործողություն» ԴԳ ճ գործ. հոլովով 15_{7}. *խմելիք* «խմիչք» Բ մլը, մխթ. *ծխանելիք* «խունկ». *հովկնելիք* «հովացնող խմիչք» Բ մկդ. *հագնելիք* «հագուստ» ԴԳ հբ. ուտելիք Բ մլը. *պառիկելիք* «անկողին» 45_{11}, ԴԳ խդ, հբ. *յանելիք* «փոշի» Բ մխդ. *օծնելիք*, *աւծնելիք* Բ ճիա, մկդ և այլն[141]: Առանձին դեպքերում դեռևս պահպանվում է հոգնակիի նախնական նշանակությունը, օր., *լսելիք* «ականջ» և «ականջներ»:

Ավելի հեռու է գնում նոր հայերենը: Եթե կիլիկյան հայերենում դեռևս պահպանվում է *ձեռ, ոտ* բուն եզակին, ապա, օրինակ, Տաճկ. և Ախ. գիտեն եզակիի միայն մի ձև՝ c'erk^{c} «ձեռք», vodk^{c} կամ v^{u}edk^{c} «ոտք»: Ապա եթե միջին հայերենում պահպանվում է այդ կազմությունների նախնական հոգնակիական թեքումը, նոր հայերենում *ք* վերջավորությունը քարանում է և դառնում հիմքի անբաժանելի մաս: Եզակիի այդ ձևով առաջացած նոր հիմքին կարող են միանալ թե՛ եզակիի, թե՛ հոգնակիի վերջավորություններ, ինչպես գոյականի սովորական հիմքին: Այսպես, Ախալցխայի բարբառում /Том. 58/ v$_{o}$edk^{c} «ոտք»[142] սեռ. vodk^{c}i, c'erk^{c} «ձեռք» սեռ. cerk^{c}-i:

Այդ տիպի գոյականները հոլովվում են նման ձևով նաև տաճկահայերենում և առհասարակ արևմտյան բարբառներում հետևյալ սխեմայի համաձայն.

	Եզակի	Հոգնակի
ուղղ. հայց.	*ձեռք*	*ձեռք-եր*
սեռ.	*ձեռք-ի*	*ձեռք-երու*
բացառ.	*ձեռք-է*	*ձեռք-երէ*
գործ.	*ձեռք-ով*	*ձեռք-երով*

Կիլիկյան հայերենում, սակայն, *գիրք* բառի սեռականը միշտ էլ լինում է *գր-ոյ*, հոգն. *գր-եր*. *ձեռք* սեռ. *ձեռ-այ*, հոգն. *ձեռ-եր* և *ձեռ-վի*: Բայց արդեն Հովհաննես Թլկուրանցու մոտ /1489-1525/ թեքման նոր տիպն արդեն ներկայացված է *ունքեր* ձևով /Հովհ. Թլկ. 39/:

---

[140] Հմմտ. Նոր հայկազ. *արծուի* բառի տակ:

[141] *-սան* վերջավորության կողքին երևացող ձևի մասին/օր. *շնեսան*/ տե՛ս վերևում՝ § 253:

[142] Այտ. Բ 14, Том. Ах. лит. 33, 58:

§ 260. -ք վերջավորութ֊յան վերևում նշված հակումը՝ ճայնավորական կապակցութ֊յունների նկատմամբ, առաջ է բերել *-այք* և *-իք* վերջավորութ֊յուններով հոգնակիների կազմութ֊յունը բաղաճայններով վերջացող դոյականներից: Այդ խմբին են պատկանում կիլիկյան հայերենի հետևյալ հոգնակիները. *իշխան-այք*, եզ. *իշխան* 3_{11}. հոգն. հայց. *ց-իշխան-այք* ԴԳ հ. Կիրակոս Գանձակեցու մոտ /ԺԴ-ԺԴ դար/. հոգն. սեռ. *իշխան-այց* 3_8, 35_{10}. *պարոն-այք*, եզ. *պարոն* 59_{12}, 63_{12}, 79_{26}, ԴԳ ա, բ, խգ, հոգն. սեռ. *պարոն-այց* 3_4, 9_2, ԴԳ ճհ. *սուլտան-այք*, եզ. *սուլտան*, ըստ Այտ. Բ 16: Հմմտ. հհ. հոգնակիները. *աղախն-այք*, եզ. *աղախին*. *տիկն-այք*, եզ. *տիկին*. *կան-այք*, եզ. *կին*:

Որպես *-իք* վերջավորութ֊յամբ ընդարձակ հոգնակին նախապատրաստող վկայված է *ծանօթ-իք*, եզ. *ծանօթ* ԴԳ ճժդ: Վերջին դեպքում ակնհայտ է, որ հոգնակիի թեք հոլովներում /սեռ. *ծանօթ-ից*/ երևան եկող *ի* հոլովիչը տարածվել է ուղիղ հոլովների վրա: Մյուս կողմից, *պարոն-այք*-ի, և այլ նման բառերում *-այք* վերջավորութ֊յունը գործածվում է հին հայերենի համապատասխան հոգնակիների անալոգիայով: *-այք* վերջավորութ֊յամբ հոգնակիի պատմական զարգացումը հետևյալն է. սկզբում սահմանափակվելով *կանայք* և *տիկնայք* դոյականներով, *-այք* վերջավորութ֊յունը հետո անցել է ճևական առումով նույնահանգ և իմաստային առումով հակադիր *աղախին* դոյականին[143]: Միայն նոր հայերենում *-ք* վերջավորութ֊յան ճգտումը՝ դեպի ճայնավորական կապակցութ֊յունները, զարկ է տվել այդ խմբի հետագա տարածմանը: *Տիկին* դոյականից *-այք* հոգնակին տարածվել է իմաստային առումով ազգակից *իշխան*, *պարոն*, *սուլտան* դոյականների վրա, որոնք բոլորն էլ վերջանում են *-ն* բաղաճայնով: Հմմտ. Լեհ. odəmvər-ok[144]/ Han. 97/ եզ. odəmvər /=դաս. *ոտանաւոր*/, «հարսանիքի ապաւավոր», հոգն. սեռ. odəmvər-aç. ապա Լեհ. հոգնակիներ /Այտ. Ա 184/. *բարեկըմ-աք* եզ. *բարեկամ*, *մեղաւոր-աք* եզ. *մեղաւոր*, *փոխանորդ-աք* եզ. *փոխանորդ*:

Կիլիկյան հայերենին համապատասխանող վերջավորութ֊յուն ունեն հետևյալ հոգնակիները. *տանուտր-այք*[145], եզ. *տանուտէր*, սեռ. *տանուտր-այց*. *ընկեր-ո-այք*[146], եզ. *ընկեր*, որ վկայված է ԺԴ-ԺԷ դարերի լեհահայ վավե-

---

[143] *Աղախին*-ք նախնական պարզ հոգնակիի գոյութ֊յունը կարծես թե ակնարկվում է հհ. *աղախն-ովք* գործիականով, որ կազմված է ոչ թե *աղախն-այք* ուղղականից, սեռ. *-այց*, *-աց*, այլ **աղախին-ք* ուղղականից, սեռ. *աղախն-ոց* /եզ. սեռ. *աղախն-ոյ*/:

[144] *Ոտընվոր-աք* ավելի հին հնչյունական ճևը տե՛ս Մին. Լեհ. 179. նաև *կարիճվոր-աք* հոգնակին՝ Մին. Լեհ. 178, 182:

[145] Լվովի 1450 թ. մի փաստաթղթում՝ Մին. Լեհ. 116:

[146] 1604 թ. մի փաստաթղթի մեջ /Մին. Լեհ. 157/. հոգն. սեռ. *ընկերաց* Մին. Լեհ. 149:

բազդերում: Ագուլիսի բարբառում /Ս. Սարգ. 78/ անճնական և ընտանեկան անունները կազմում են *-այք* կամ *-ուք* վերջավորութ/յուններով ընդարձակ հոգնակի, կախված նրանից, թե եզ. սեռ. ունենում է *-այ* կամ *-օյ*, իսկ հոգն. սեռ. *-այց* կամ *ուց* վերջավորութ/յունը: Այսպես, Բաղդասար անունը, որ կազմվում է եզ. սեռ. *-այ* և հոգն. սեռ. *-այց* վերջավորութ/յուններով, ունենում է հոգն. ուղղ. Բաղդասար-աք. Վարդան եզ. սեռ. *-այ* և հոգն. սեռ. *-այց*, հոգն. ուղղ. Վարդան-աք. Խաչատուր եզ. սեռ. *-օյ*, հոգն. սեռ. *-ուց*, հոգն. ուղղ. Խաչատր-ուք և այլն:

§ 261. *-անք* և *-ունք վերջավորութ/յուններով հոգնակիները*: Հին լեզվից ավանդված *-անք* և *-ունք* վերջավորութ/յուններով հոգնակին, որ մեծ մասամբ եզակիի նշանակութ/յուն ունի, նույնպես շարունակում է տարածվել: Այնպիսի ձևերից բացի, ինչպիսիք են՝ *աշխատ-ան-ք, ապր-ան-ք, գրկ-ան-ք, հալծ-ան-ք, մեղ-ան-ք, քաշ-ան-ք*, կիլիկյան հայերենում առկա են հին հայերենին դեռևս խորթ ձևերը. *գանկատ-ան-ք* /հմմտ. *գանկատ*/. *ծեծ-ան-ք* /հմմտ. *ծեծ*/, *հիլայ-ան-ք* «մեղադրանք» /հմմտ. *հիլայ*/, *հրաւիր-ան-ք* /հմմտ. *հրաւէր*/ և այլն: Վկայութ/յուններ տե՛ս «եզակիի նշանակութ/յամբ *-ք* հոգնակին» ենթաբաժնում: Ինչպես հետևում է հհ. *տուգան-տուգան-ք, մեղ-ան-ամ, մեղ-ան-չեմ, մեղան-ք* ձևերի համեմատութ/յունից, այդ կազմութ/յունը առեղծվել է *-ք* հոգնակերտի միացումով *-ան* վերջածանցով ընդարձակված հիմքին:

Նույնը կարելի է ասել *-ունք* վերջավորութ/յամբ հոգնակիի մասին:

Իրաւ-ունք գոյականից բացի, վկայված է միջին հայերեն *արդ-ունք* նորակազմութ/յունը /Բ մհ/[147]: Որպես եզակիի նշանակութ/յուն ունեցող անիսկական *-ք* հոգնակիի հատուկ տարատեսակներ, *-անք* և *-ունք* վերջավորութ/յուններով հոգնակիները, բնականաբար, պետք է տարածում գտնեին, հատկապես նրա համար, որ *արդունք*-ի նման դեպքերում տեղի է ունեցել բաղաձայնական և հիմքերի նմանեցում *-ունք* և *-անք* վերջավորութ/յուններով հոգնակիների հետ, ինչպես *հիմուն-ք, սերման-ք*:

III. *-ք վերջավորութ/յամբ բարդ հոգնակիները*

§ 262. *-ք* հոգնակերտ վերջավորութ/յունը բարդ հոգնակիների կազմութ/յան վերջի տարրն է հետևյալ դեպքերում.

1) *դեղ-երայ-ք* եզ. *դեղ* Մխ. Հեր. 131: Դրա տարբերակներն են՝ *դեղ-րան-ք*<**դեղ-եր-անք* Բ լէ, մկզ. *դեղ-րուն-ք*<** դեղ-երուն-ք* Բ ճլը: *Դեղ-երայ-ք* ձևի կողքին կարելի է դնել արդեն Փավստոսի մոտ վկայված *վան-երայ-ք*

[147] Կիլ. *արդունք*=Լհհ. ardusunk^{c}, Թ-Ֆ. artasunk^{c}, Տաճկ. և Նխ. arçunk^{c} (Han. 27).

«վանքեր», ինչպես նաև վերջինի հետ հեռավոր ազգակցություն ունեցող *գեղ-օրէ-ք*<**գեղ-օրեայ-ք* «գյուղեր» /Այտ Բ 16/ Չիշված ձևերը համապատասխան ավելի հին կազմություններն են միջինհայերենյան շարունակությունն են Չմմտ հին հայերեն հար և նման դեպքեր *արտ-որայ, արտ-որեայ/-օրեայ/* և ընդարձակ *արտ-որայ-ք, արտ-որեայ-ք* «կանքեր» *արտ* բառից *վան-որայ, վան-որեայ/ - օրեայ/* և ընդարձակ *վան-որայ-ք, վան-որեայ-ք* *վանք-ք* բառից Չմմտ նաև վերևում § 236

2) Հոգն գործ *վկայ-ս-օք վկայ* բառից 59_9, 75_{11} հոգն գործ *պաճռ-ս-օք պաճառ* բառից Ա 183 սովորական գործիականի կողքին երևան եկող այդ ձևը ենթադրում է **վկայ-ս-ի-ք, պաճռ-ս-ի-ք* հոգնակի Ուրիշ վկայությունների բացակայությունից չի հետևում, թե այդ կազմությունը ձևավորման ընթացքի մեջ է եղել, ավելի շուտ, *-երայք, -րանք, -րունք* վերջավորություններով ձևերի և Այտընյանի կողմից /Բ 16/ որպես հին ռամկական, այսինքն՝ կիլիկյան հիշատակվող *գեղ-եր-ք* «գյուղեր», *ճիտ-եր-ք* «պարանոցներ» ձևերի նման, այն իրենից ներկայացնում է համապատասխան հին կազմությունների՝ մահացման մեջ գտնվող շառավիղը[148] Այդ կազմություններն առաջ են եկել, երբ *-անի* կամ *-երայ, -որայ, -եար* հավաքական անումները դեռևս վերջնականապես չէին ձևավորվել որպես հոգնակի Սակայն արդեն նոր հայերեն բարդ հոգնակիների բնույթին է կրում

3) *Մարդիկ-ք* կամ բաղաձայնների պարզեցումով *մարդ-իք* հոգնակին հոգն ուղղ 39_{23}, ԴԳ ճիպ. հոգն հայց *զ-մարդ-իքն*, նույն տեղում հոգն սեռ *մարդ-ի-անց* 39_{12}, 73_{13}, Բ ճղ հոգն գործ *մարդ-կ-ա-ւք* L. 156_{21}

Ինչպես նոր հայերենի բարդ հոգնակիները /Չմմտ վերևում՝ էջ 190/ ծագում են եզակի դարձած հին պարզ հոգնակիներից, այնպես էլ միջին հայերենում արդեն որպես հոգնակի չընկալվող *մարդիկ ավելի հին ճևից* -ք վերջավորությամբ կազմվել է *մարդ-իկ-ք, մարդ-իք* բարդ հոգնակին, որ մինչև հիմա պահպանվել է նոր հայերենում, ինչպես՝ Լեհ Ախ mart-ik^c /Han 90, Том 58/[149], ընդ որում առաջացել է նաև *-ներ* վերջավորությամբ բարդ հոգնակին Լեհ martig-n'er, նույնիսկ martik^c-n'er և martik^c-n'er-k^c /Զրպ 744/

---

[148] Այսպես Ագաթանգեղոսի մոտ *աւագ-անօք* գործիականը, Ղազար Փարպեցու մոտ *աւագ-անեօք աւագանով* կամ *աւագանեաւ* ձևերի կողքին *Գեղ-եր-ք* փոխ իսկական կիլիկյան *գեղ-եր ճիտ-եր-ք* փոխ իսկական կիլիկյան *ճիտ-եր* ձևերի համար հմմտ *բան-եարք, որ-եարք* հհ ձևերը/ §236/

[149] Այստեղ, անշուշտ փոփոխված հոլովմամբ, կազմվում է mart-ueç սեռականը, ընդ որում martik^c հոգնակին հոլովման մեջ միացել է *-ւ* վերջավորությամբ գոյականների պարզ հոգնակիներին

Գ. ՀՈԳՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ

I-Ք-ով հոգնակի հոլովում

1. *Ուղիղ հոլովմներ*

§ 263. Ք-ով հոգնակի հոլովման համար բնորոշ է այն առանձնահատկությունը, որ ուղղականն ու հայցականը համընկնում են, ընդ որում վերջինս դեն է գցում հին հայերեն *-ս*-ն և ուղղականի նման ընդունում է *-ք* վերջավորությունը: Պետք է ասել, որ *-ք* վերջավորությամբ հոգն. հայցականի առանձին կիրառություններն առկա են արդեն հին գրականության մեջ, որից Այտընյանը բերում է հետևյալ օրինակները. *ի մէջք, զմէջք, զիւր զօրքն, ի ձայնարկունքն, ի վանք մի, ի վանքն, ընդ խորհուրդքն, ի չորք, զաղօթքն, ընդ տիեզերք, զիրքն, զջուրքն, զքահանայքն, զկարգք, հայց. ավետիք, հայց. բազմութիւնք, հայց. զայրագղանք*: Այն բանի շնորհիվ, որ այդ ձևը հանդիպում է միայն առանձին դեպքերում և որոշ դասական գրողների մոտ, այն բնորոշվում է իբրև ոչ դասական, որպես հին ժողովրդական հայերենի արդյունք, որ այս դեպքում նույնպես կիլիկյան ժամանակաշրջանից շատ առաջ շեղվել է դասական լեզվի մեջ ավանդված ձևերից և ստեղծել ավելի նոր ձևաբանական նորակազմություն: Ինչպես հետևում է բերված հհ. ձևերի բնույթից, այդ նորագոյացությունն ելակետը հանդիսացել են անիսկական հոգնակիները, ինչպես *վանք, տիեզերք*, որոնք, անբաժան միասնություն կամ միավոր նշանակելով, սկզբից թեքման մեջ նմանվել են բուն եզակիներին և վերացրել ուղղականի և հայցականի նշանակության տարբերությունը: Միօրինակացման սկզբունքի ներգործությամբ այդ երևույթն ընդհանրացել է, և ուշ դասական շրջանում այն աստիճանի ավարտված փաստ է եղել, որ նաև դասական լեզվով գրող կամ գրել ցանկացող հեղինակների մոտ, ինչպես Մատթեոս Ուռհայեցին, Միխայիլ Ասորին և ուրիշները, սովորական է *-ք* վերջավորությամբ հայցականը[150]: Կիլիկյան բազմաթիվ վկայություններից բերենք հետևյալ օրինակները. *զ-շնիքն* Բ մծղ, *զայս ցանկալիքս* Բ մխթ, *զ-լսելիքն* Բ մկէ, *զ-պատիկելիքն* ԴԳ խղ, *զ-հիւայք* 23_5, *զ-իշխանայքն* ԴԳ հ, *զբերանքն* Բ ճհդ, *զ-զինք* ԴԳ, *զ-իրաւունք* 3_{21}, 23_5, *զ-մեղանք* 29_{18}, *զ-քրտինք*

---

[150] Այսպես, Ստեփանոս Օրբելյանի մոտ /ԺԴ դարում/ հոգնակի հայցականներ. *ի Բաղք* Ա. $116_{2,\ 15}$, 261_{14} *ի գաւառն Քաշունիք* Ա. 122. *զ-վիմարդեանք* Ա. 125_{19} *ի վանքն* Ա. 126_{1n}, 128_{11}, 129_{20}. *զտեղիքս* Ա. 209_3 *առորև*. զԱստուածածնի քահանայքն Ա. 222_9, 225_8. զիւր կնանքն Ա. 261_{12}. զգերքն Ա. 272_{17}. *զվանք* Ա. 281_{14}, 282_4. *գաւրք եկեղեցիքն* Ա. 282_{10-11}. ապա *անորոշ հայցականներ, ինչպես* հայրենիք Ա. 260_{1n}, վանք Ա. 281_5, *կառք* Ա. 112_3, *ամբոխք* Ա. 112_3, և այլն:

Բ ճժ[ճ], *գ-դեղրանքդ* Բ լէ, *յ-արծուիք* Բ ժը, *ի բաղխիք* Բ խե, ճի, մխե, մկը, *ի կարիք* ԴԳ ժա, *ի կարծիք* ԴԳ ժա, ժգ, *ընդ որդիքն* 47_{14} անորոշ հայցականներ՝ որպես ուղիղ խնդիր *առուգնայք* ԴԳ ճգ, *այնելիք*, ԴԳ ճ, *արծվիք* ԴԳ մկղ, *հայրենիք* ԴԳ ճժբ, *համանք* ԴԳ կ, ճծա, *մարդիք* ԴԳ ճիզ

§ 264 Հոգնակի ուղիղ հոլովների՝ այդ *կիլիկյան-միջին հայերեն* միօրինակացման կողքին կազմավորվել է երկրորդ, *ոչ կիլիկյան*, ավելի շուտ որպես *արևելյան միջին հայերեն*[151] համարելի միօրինակացում, որ ավանդված է հատկապես Մխիթար Հերացու մոտ Այն դնում է հակառակ ուղղությամբ որպես նորմա ընդունվում է *-ս* վերջավորությամբ հոլովը հայցականի *ս*-ն անցել է ուղղականին և դուրս է մղել նախնական *-ք* վերջավորությունը Առանձին վկայությունները հին հայերեն գրականության մեջ ցույց են տալիս, որ այդ կազմության համար նույնպես ելակետ են ծառայել հավաքական կամ եզակիի նշանակությամբ հոգնակիներ Այդպիսիք են՝ ոչ մաքուր դասական գրողների մոտ հանդիպող հոգն ուղղ ձևերը *վանս*[152] /դաս *վանք*/, *կասկածս*[153]/ դաս *կասկածք, կասկածանք*/, պէտս[154] /դաս *պէտք*/, *ծախս*[155]/ դաս *ծախք*/, *իրս*[156]/դաս *իրք*/, *արտասուս*[157]/ դաս *արտասուք*/, *երկուս*[158] /դաս *երկուք*/, *հարկս*[159]/ դաս *հարկք, հմմտ հարկիք*/, *ժողովուրդս*[160]/ դաս *ժողովուրդք*/, այսինքն՝ գերակշռում են այնպիսի դեպքեր, որոնց դասական հայերենում համապատասխանում են *-ք* վերջավորությամբ անեզական բառերը

-ս վերջավորությամբ ուղղականն ավելի հաճախ է հանդիպում ուշ և ոչ դասական հեղինակների մոտ, այսինքն՝ միջին հայերենից ազդված գրական լեզվի մեջ, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Սկևռացու մոտ, Ճառընտիրքի մեջ Վերջինիցս Բառգ Բ 682 բերում է, ի միջի այլոց,

---

[151] Որպես նոր արևելահայերեն՝ Այտ Բ 197 բերում է հետևյալ ուղղականները *մէկ քանիսը, երկուսը, զինքս, բաղխիս, հոգս*

[152] *Յառաջագոյն էր վանս մի* Այտ Ա 78

[153] *Վիշտք հասանելոց էին եւ կասկածս* Այտ Ա 78

[154] *Ոչ է ինձ պէտս* Այտ Ա 78

[155] *Չէ սակաւ ծախսն* Փարպ 545

[156] *Իրս նորոգս ցուցաւ* Այտ Ա 78

[157] *Ինձ արտասուս գան* Այտ Ա 78

[158] *Մին եւ մի երկուս են* Այտ Ա 78

[159] *Հարկս ամենայն աշխարհիս առ իս են* Այտ Ա 78

[160] *Ժողովուրդս եւ տղայքն յայմհետն* Փարպ 603

հետևյալ օրինակները. *սքանչելիս*[161] /դաս. *սքանչելիք/*, *հնարս*[162], /դաս. *հնարք/*, *պահս*[163] /դաս. *պահք/*, հմմտ. նպ. pās. պհլ. pās, *պանս*[164] /դաս. *պանք/*, *սպանդս* /դաս. *սպանդ-ք/*, *հայրենիս*[165]/ դաս. *հայրենիք/*, *ծառայս* /դաս. *ծառայք/*, *աղախնայս*[166] /դաս. *աղախնայք/*:

ԺԲ դարում Միսիթար Հերացին ունի *-ս* վերջավորությամբ միջին հայերեն հետևյալ եզ. ուղղականները. *երակս/ էջ* 66, 90, 91, 93, 114, 115, 116 փխ. դաս. *երակք. ճեռս/ էջ* 81 փխ. դաս. *ճեռք. ոտս/ էջ* 80 փխ. դաս. *ոտք. պինչս/* «ռնգներ» էջ 76 փխ. դաս. *պինչք*: Ապա նաև հետևյալ *-ս*-ով ուղղականները եզակիի նշանակությամբ. *ղէմս* /կիլ. *ղէմք/ էջ* 65 երեք անգամ, 90, 92, 93, 116. *զարկս* /կիլ. *զարկ, զարկք/ էջ* 74. *հոգս* /կիլ. *հոգք, հոք/ էջ* 18, 35, 40, 91. *որովայնս* /կիլ. *որովայնք/ էջ* 147. *չաքս/կիլ. չաքք/* «չափ, հարաբերություն» էջ 42, 59, 60, 63, 69, 99, 101, 129, 131, 141. գործ. *չաքօքս* /sic/ էջ 96. մակբայ *այնչաքս* /կիլ. *այնչաքք* կամ *այնչաք/* «այնչափ» էջ 58. *չորս* էջ 42, 63, 71, 91, 97, 105: Միայն վերջին ձևն է նաև կիլիկյան հայերենին, թե՛ ընդհանրապես արևմտահայերենին[167]:

2. *Թեք հոլումներ*

§ 265. *-ք*-ով հոգնակիի թեք հոլումներում նկատվում է, եզակիի անալոգիայով, *բաղաձայնական հոլովման նահանջը ձայնավորականի առաջ*:

Դա հետևանք է այն բանի, որ *-ք*-ով հոգնակին մեծամասնությամբ պահպանվել է ձայնավորահանգ հիմքերի մոտ: Ձայնավորական թեքումը տարածվել է հետևյալ դեպքերի վրա. հոգն. սեռ. *աղբր-աց* «եղբայրների» /փխ. դաս. *եղբարց/ աղբր-աց արոյն* արտահայտության մեջ Ա. 47, 282, Բ ճգ, ճը, ճիա, մկզ, մծթե. հոգն. սեռ. *իրաւն-աց* «իրավունքի»/ փխ. դաս. *ի-*

---

[161] *Նոր է սքանչելիս*:

[162] *Ձիք ինչ հնարս*:

[163] *Պահս՝ համարձակությիւն առ աստուած*:

[164] *Խորանն եւ սեղանն, պանան*:

[165] *Որոյ ոչ տուն ոչ հայրենիս*:

[166] *Եւ ոչ ծառանգութիւն, ոչ ծառայս, ոչ աղախնայս*: Հմմտ. նաև *Մասիս* սեռ. *Մասեաց Փարպ. /Ե դար/ էջ 376. Տփխիս* սեռ. *Տփխեց* Վարդանի մոտ /ԺԳ դար/ էջ 156: *Կարս* սեռ. *Կարուց* Վարդան 102, 119: Այդ դեպքում բառավերջի *-ս* -ն դիտվում է որպես հոգնակի ուղղականի վերջավորություն:

[167] Արևմտահայերեն ergus թվականի բացառությամբ: Այտընյանի կողմից/Ա. 78/ որպես արևմտահայերեն հիշատակվող *պաս, աւետիս, ծախս* ուղղականները կապված են, ըստ երևույթին, արևելահայերենի ազդեցության հետ և խորթ են Պոլսի, Լեհաստանի և Հունգարիայի ծայրամասային բարբառներին:

բաւանդ/ ԴԳ. հոգն. սեռ. *այրուկն-աց*[168] /հնմտ. դաս. հոգն. սեռ. *կանանց/* ԴԳ հբ. հոգն. սեռ. *դառեր-աց* ԴԳ ղղ, և երբեք բաղաձայնական *դառերց*[169]: Գործիականում երեան է գալիս *մարդկ-աւք* ձևը /L. 156_{21}/, փխ. դաս. *մարդկամբ* կամ *մարդկամբք* /ուղղ. *մարդիկք/. իրաւն-աւք/-օք/* ձևը 17_{13}, 21_{13} ԴԳ իզ, իէ, հ֊, ձբ, ղբ, ճհգ, փխ. դաս. *իրաւամբք* /ուղղ. իրաւունք/. փխ. դաս. *բրտամբք* /ուղղ. *բրտունք/ բրտնաւք* ձևը:

§ 266. Ձայնավորական հիմքերի մոտ հոլովնան հին ձևը դեռևս ընդհանուր է սեռական-տրականում և բացառականում. ուղղ. *ծնաւղք*, սեռ. *ծնաւղ-աց* ԴԳ խգ, հբ, ճգ, դեհք, սեռ. *դեհ-աց* $37_{14,\ 24}$. 51_{14}. *ջաղաց*ք, սեռ. *ջաղց-աց* Բ ճծը, ճհգ, մկզ. *ապրանք*, սեռ. *ապրն-աց* $17_{5,\ 9}$, 19_{9}, $21_{2,9}$, 23_{17}, 37_{3}, 65_{14} ԴԳ ճ, *գանկտանք*, սեռ. *գանկտն-աց* 13_{20}, 15_{10} *ծեծմանք*, բացառ. *ի ծեծմ-աց* 61_{5}. *հալծմանք*, բացառ. *ի հալծմ-աց* ԴԳ լգ, ղղ, ճհգ. *համանք*, սեռ. *համն-աց* 13_{6}, 71_{18}, L. 185_{18}, ԴԳ ծը, ճկը. *հիլայանք*, սեռ. *հիլայն-աց* 57_{14}, *տուգանք*, սեռ. *տուգն-աց* 29_{12}. *քաշանք*, սեռ. *քաշն-աց* $61_{6.11}$, ԴԳ հդ. նաև *իշխանայք*, սեռ. *իշխան-աց* 35_{10}, *պարտնայք*, սեռ. *պարտն-աց* 3_{4}, 9_{2}: Սեռ. *վկայ-ից* 29_{2}, $59_{4.\ 10}$, 61_{14}, L. 156_{26} սեռ. *լինչ-ից* 21_{2}, 47_{30}, 51_{21} սեռ. *գր-ոց* «գրքի» ԴԳ ճլե. սեռ. *արյվ-ոց* Բ մհ: *Զարկ-ք* «վիրավորում», բացառ. *ի զարկ-ուց* $61_{5.18}$, ԴԳ ճլ *չաքք* «հարաբերություն», սեռ. *չք-ուց* ԴԳ լե. *պարտք*, սեռ. *պարտ-ուց* 9_{24}, 73_{3}, 81_{26} *պէտք*, սեռ. *պիտ-ուց* 59_{4}.

§ 267. Ա և Ո հիմքերի մոտ պահպանվել է գործիականի հին ձևը. սեռ. *ապրն-աց*, գործ. *ապրն-օք* 21_{7}. սեռ. *խել-աց*, գործ. *խել-աւք* ԴԳ կդ սեռ. *ծեծն-աց*, գործ. *ծեծն-աւք* ԴԳ ճլէ, ճծե, ճժբ, ճհ. սեռ. *կամ-աց*, գործ. *կամ-աւք* 21_{12}, 53_{3}, սեռ. *համն-աց*, գործ. *համն-աւք* ԴԳ ա, կ, ճա. սեռ. *հալծն-աւց*, գործ. *հալծն-օք* 47_{19}. սեռ. *որդ-ոց*, գործ. *որդ-ովք* ԴԳ *խբ, ճժե և այլն*[170]: Սակայն *ի* և *ու* հիմքերի գործիականում, եզակի համապատասխան հոլովների նման, *-իւք*, *-ուք* սկզբնական վերջավորությունը դուրս է մղված և փոխարինված է *-օք* վերջավորությամբ: Օրինակ, սեռ. *խօս-ից*, գործ. *խօս-օք*, 9_{15} /դաս. *խօսիւք* ձևի դիմաց/. սեռ. *հասոյճ-ից*, գործ. *հասոյճ-օք*, 21_{7} /դաս. *հասուճ-իւք* ձևի դիմաց/. սեռ. *պիտ-ուց*, գործ. *պիտ-օք* 33_{14}, 35_{18}, սեռ. *չք-ուց*, գործ. *չք-օք*, *չք-աւք* 55_{8}, Բ ճղղ և այլն:

---

[168] Հնմտ. նաև հոգն. սեռ. *մարդկ-աց* Բ ճդ և դաս. *մարդկան* սեռականը:

[169] Հնմտ. *հէրէնէտիրաց* հոգն. սեռ. /ուղղ. *-տէր*/ Անիի 1215 թ. մի արձանագրության մեջ /Շիր. էջ 76 և 77/:

[170] Այդ երևույթն արտացոլվում է նաև արձանագրություններում. 1215 թ. մի արձանագրություն /Շիր. 75 հաջ./ ունի *լնձայաւք* հոգն. գործ. /դաս. *-իւք/*, *զարդաւք* հոգն. գործ. /դաս. *-ուք* և *-իւք/*:

§ 268. Ավելի մոտիկ ուսումնասիրության կարիք ունի *-ք* վերջավորությամբ հոգնակին: *-ի* վերջավորությամբ գոյականների փոքրիկ խումբը, որոնք հոլովիչ ձայնավորն անսկսկայնում են եզակիի և հոգնակիի բոլոր հոլովներով՝ *հոգի, որդի, -այի* և *-եյի* վերջածանցներով գոյականները չեն կարող պահպանել այդ հոլովումը հոգնակիի մեջ, միօրինակացման օրենքի ճնշման տակ նրանք ստիպված միացել են այդ գոյականների մեծամասնության բնորոշող թեքմանը՝ *-ակ* հոգն. սեռականով: Փոքրամասնության *ո* հոլովիչը դուրս է մղվել մեծամասնության *ա* հոլովիչով: Այսպես, ուշ դասական շրջանում *որդւոց* հոգն. սեռականի տեղը գրավում է *որդեակ* ձևը Կլիմաքոսի, Ստեփաննոս Օրբելյանի և Մխիթար Հերացու մոտ: Հհ. *հոգ-ւոց* հոգն. սեռականի տեղը գրավում է *հոգեակ* ձևը: Կենդանի էակներ նշանակող այդ հիմքերի հոգնակիի ավելի նոր թեքումը շարունակվում է կիլիկյան հայերենում, ինչպես կուշյ են տալիս *-եց/*=հետդաս. *-եակ/* վերջավորությամբ հոլովաձևերը, հոգն. սեռ. *որդեց* /ուղղ. *որդի*/ 31_{21}, 49_{34}, 55_{13}, ԴԳ *խը, ղդ, ղե*. հոգն. բացառ. *ի յ-որդեց* 49_{24}. հոգն. սեռ. *տիւրմեց* /ուղղ. եզ. *տիւրմի* «դատական պաշտոնյա»/ 39_{13}. հոգն. սեռ. *չորքոտնեց* /ուղղ. եզ. *չորքոտնի* «չորքոտանի կենդանի»[171]: Միևյն առանձին արձանագրություններ /օր. հոգն. սեռ. *որդոց* ԴԳ *ա*, հոգն. գործ. *որդովք* ԴԳ *խը*, *ճժե* / տարբերում են այդ հիմքերի թեքումն *-ք* վերջավորությամբ հոգնակիի կանոնավոր թեքումից, որ ներկայացված է հետևյալ հարացույցով.

ուղղ. *հայրենիք/*=դաս. *հայրենի-ք/*
հայց. *զ-հայրենիք/*=դաս. *զ-հայրենի-ս/*
սեռ.-տր. *հայրենեց/*=դաս. *հայրենե-աց/*
բացառ. *ի հայրենեց/*=դաս. *ի հայրենե-աց/*
գործ. *հայրենեօք* / *հայրենօք* /=դաս. *հայրենե-աւք/*

§ 269. Վկայություններ: Սեռ. -տր. *այնելեց* /ուղղ. *այնելիք* / ԴԳ *հ[թ]. ապիկեց* /ուղղ. *ապիկիք/* Ա. 161. *արծվեց* /ուղղ. *արծվիք/* Բ *մկդ*, Գիրք վասա. 119, Մխ. Հեր. 145. *աւծնելեց* /ուղղ. *աւծնելիք* / Բ *ճխ, իա, բարնեց* /ուղղ. *բարնիք* / 45_{11}, 47_{32}, Բ *մխե. լեզելեց* /ուղղ. *լեզելիք/* Բ *ղէ, ծխանելեց* /ուղղ. *ծխանելիք/* Բ *ղգ. կարեց* /ուղղ. *կարիք/* Ա. 54, 55, 61, 62, 63, 91, 116,

[171] Հմմտ. *նախնիք* սեռ. *նախնեց*, Անիի 1342 թ. մի արձանագրության մեջ /Շիր. էջ 86/. *որդեց* հոգն. սեռ., Անիի 1273 թ. մի արձանագրության մեջ /Շիր. էջ 139/:

177, 189, 216, 277, Մխ. Հեր. 71, 149, Բ լե, ծԹ. *կշտելեց* /ուղղ. *կշտելիք*/ Ա. 184. *հայրենեց* /ուղղ. *հայրենիք*/ $19_{21.\ 22}$, $23_{11.\ 26.\ 30}$, 45_{22}, 47_{22}, $51_{3.}$ 65_{26}, $67_{14.\ 25.}$ $69_{14.\ 25}$, 75_{27}, ԴԴ խա, ծզ. *հարկեց* /ուղղ. *հարկիք*/ 9_{12}, L. 187_{16}. *հարանեց* /ուղղ. *հարանիք*/ ԴԴ ղե, ճժդ. *պատիկելեց* /ուղղ. *պատիկելիք*/ 45_{11}. *յանելեց* /ուղղ. *յանելիք*/ Բ ճժա, ճիա, ճկԹ. *ցվեց* /ուղղ. *ցվիք*/ ԴԴ ճծդ: Բացառական. *աղիք*, բացառ. *յ-աղեց*, *ի յ-աղեց* Ա. 28, 38, 104, Մխ. Հեր. 96, 149, Բ իզ, հը, ճ, ճժը, ճիդ, մծԹ. *անօմԹիք*, բացառ. *յ-անօմԹեց*[172] Ա. 189, 234, *բաղնիք*, բացառ. *ի բաղնեց* Բ լԹ, միե. *խմելիք*, բացառ. *ի խմելեց* Բ մխԹ. *կշտելիք*, բացառ. *ի կշտելեց* Ա. 190, 284, Մխ. Հեր. 80. *հայրենիք*, բացառ. *ի հայրենեց* $45_{20.}$ 47_{37}, 49_{18}, 53_{13}, 69_{9} *շնիք*, բացառ. *ի շնեց* Ա. 156. *շլիք*, բացառ. *ի շլեց* Մխ. Հեր. 44. *ուտելիք*, բացառ. *ի յ-ուտելեց* Բ միե. *սպեղնլիք*, բացառ. *ի սպեղնլեց* Բ ճկը: Գործիական. *այնելիք*, գործ. *այնելեաւք* 15_{7}, *հայրենիք*, գործ. *հայրենեաւք* $21_{11.}$ *ապիկիք*, գործ. *ապիկօք* Ա. 259. *ծխանելիք*, գործ. *ծխանելօք* Ա. 219 և այլն: Վերջին, ավելի նոր ձևերում, *-օք* վերջավորությունից առաջ, ինչպես նաև եզակիի հոլովակերտ վերջավորությունից առաջ, հիմքի վերջի *-ի* ձայնավորը պեղչվել է:

Նոր հայերենում /ըստ Ջրպ. 747/ բերված հարացույցն ենթարկվել է հետևյալ փոփոխությանը.

ուղղ.-հայց. *բաղնիք*
սեռ.-տր. *բաղնեց*
բացառ. *բաղնեց-է*,
բաղնեց-մէ
գործ. *բաղնեց-ով*

Հմմտ. նաև արևմտահայերենի հոլովումը. ուղղ. *բաղնիք*, սեռ. տր. *բաղնք-ի*, բացառ. *բաղնք-է*, գործ. *բաղնք-ով*:

2. *Հատուկ կիլիկյան հոգնակիների թեքումը*

§ 270. *-ք*-ով հոգնակիներին բնորոշ տարբերակումը, ըստ հոլովիչ ձայնավորի, կիլիկյան մնացած հոգնակիների համար տեղի չի ունենում:

Ծագելով հավաքական անուններից, հատուկ կիլիկյան հոգնակիները պահպանել են եզակիի նախնական թեքումը և հետևում են պարզ *ՈՒ* հոլովմանը: Օրինակներն արդեն բերված են «հոգնակիի կազմություն» բաժնում: Ահա հարացույցները.

[172] Հմմտ. *անօմԹեց* Մխ. Հեր. և Գիրք վասն. 50, ինչպես նաև *տարեց* Գիրք վասն. 59:

1 - *եր*-ով հոգնակի. *դեղ-եր*
ուղղ. *դեղ-եր*
հայց. *զ-դեղ-եր*
սեռ. -տր. *դեղ-եր-ոյ*
բացառ. *ի դեղ-եր-ոյ*
գործ. *դեղ-եր-ով*

2 - *ներ*-ով հոգնակի. *տերեւ-ներ*
ուղղ. *տերեւ-ներ*
հայց. *զ-տերեւ-ներ*
սեռ.-տր. *տերեւ-նոյ*
բացառ. *ի տերեւ-նոյ*
գործ. *տերեւ-նով*

3 - *վի*-ով հոգնակի. *ձեռ-վի*
ուղղ. *ձեռ-վի*
հայց. *զ-ձեռ-վի*
սեռ. -տր. *ձեռ-վոյ*
բացառ. *ի ձեռ-վոյ*
գործ. *ձեռ-վով*

4- *տի*-ով և *-վտի*-ով հոգնակի. *քուր-վտի*
ուղղ. *քուր-վտի*
հայց. *զ-քուր-վտի*
սեռ.-տր. *քուր-վտոյ*
բացառ. *ի քուր-վտոյ*
գործ. *քուր-վտով*

5 *-ան*-ով հոգնակի. *ճի-ան*
ուղղ. *ճի-ան*
հայց. *զ-ճի-ան*
սեռ.-տր *ճի-ան-ոյ*
բացառ. *ի ճի-ան-ոյ*
գործ. *ճի-ան-ով*

6 *-ստան*-ով հոգնակի. *տեղե-ստան*
ուղղ. *տեղե-ստան*
հայց. *զ-տեղե-ստան*
սեռ. - տր. *տեղե-ստան-ոյ*
բացառ. *ի տեղե-ստան-ոյ*
գործ. *տեղե -ստան-ով*

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Որպես հավելված, այստեղ բերվում է թվական անվան նկարագրությունը՝ կազմության և հոլովման տեսակետից: Թվական անվան կառուցվածքի և կիրառության մասին խոսվում է «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

§ 271.

1.	*մէկ/մեկ/*	/դաս. *մի*/
2.	*երկու* *երկուք*	/դաս. *երկու*/
3.	*իրեք*	/դաս. *երեք*/
4.	*չորս*	/դաս. *չորք*/
5.	*հինգ/հինգ*	/դաս. *հինգ*/

6.	*վեց*	/դաս. *վեց*/
7.	*եւթն*	/դաս. *եւթն*/
8.	*ութ*	/դաս. *ութ*/
9.	*ինն*	/դաս. *ինն*/
10.	*տասն*	/դաս. *տասն*/
11.	*տասն-ու-մէկ*	/դաս. *մնատասան*/
12.	*տասն-ու/կ/-երկու/ երկուք*	/դաս. *երկրատասան*/
13.	**տասն-ու/կ/իրեք*	/դաս. *երեքտասան*/
14.	**տասն-ու-չորս*	/դաս. *չորեքտասան*/
15.	*տասն-ու- հինգ*	/դաս. *հնգետասան*/
16.	*տասն-ու վեց*	/դաս. *վեշտասան*/
17.	*տասն-ու/կ/-եւթն տասն-եւթն*	/դաս. *եւթնեւտասան*/
18.	**տասն-ու/կ/ութ տասն-ութ*	/դաս. *ութեւտասան ութուտասան*/
19.	*տասն-ու/կ/-ինն տասն-ինն*	/դաս. *իննևտասան*/
20.	*քսան*	/դաս. *քսան*/
21.	**քսան-ու-մէկ*	/դաս. *քսան և մի*/
22.	**քսան-ու/կ/երկու, /երկուք*	/դաս. *քսան և երկու*/
23.	**քսան-ու/կ/-իրեք*	/դաս. *քսան և երեք*/
24.	**քսան-ու -չորս*	/դաս. *քսան և չորք*/
25.	*քսան-ու-հինգ*	/դաս. *քսան և հինգ*/
30.	*երեսուն*	/դաս. *երեսուն*/
40.	**քառասուն*	/դաս. *քառասուն*/
50.	*յիսուն*	/դաս. *յիսուն*/
60.	*վաթսուն*	/դաս. *վաթսուն*/
70.	**եւթնասուն (?)*	/դաս. *եւթանասուն*/
80.	**ութսուն*	/դաս. *ութսուն*/
90.	**իննսուն*	/դաս. *իննսուն*/
100.	*հարիւր*	/դաս. *հարիւր*/
200.	*երկու հարիւր*	/դաս. *երկերիւր*/
300.	*իրեք հարիւր*	/դաս. *երեքհարիւր*/
400.	*չորս հարիւր*	/դաս. *չորեքհարիւր*/
1000.	*հազար*	/դաս. *հազար*/

§ 272. Վկայումներ. *մէկ* 29_{2}, 35_{17}, 49_{5}, 59_{35}, 83_{12}, 93_{17}. *մեկ* L. $155_{7, 16, 17, 27}$. *երկու* 25_{13}, 35_{15}, 39_{26}, 47_{14}, 49_{19}, $59_{10,39}$, $65_{18, 19, 27}$, *երկուք* L. 178_{15}, 185_{17}, ԴԳ, ճիզ, ճհե և այլն. *իրեք* Գիրք վաստ. 124_{4}, Մխ. Հեր. 146_{27}, *չորս* 17_{23}, 47_{13}, 77_{8}, L. $155_{25, 27}$, Գիրք վաստ. 64, 116, Սմբ. Ժամ. 630, 647, ԴԳ ղղ, *հինգ* $17_{22, 23, 24}$, 5_{1} *հինգ* L. $157_{22, 27}$, L. 155_{26}, ԴԳ լդ, կ, *վեց* 47_{12}, L. 155_{18}, ԴԳ, կ, հէ, *իւլճն* 15_{2}, $23_{29, 30, 31}$, 93_{7} *ուլճ* L. 158_{1}, ԴԳ հլճ, միզ. *ինն* L. $157_{13, 19}$, *տասն* 17_{22}, 51_{1}, L. $157_{14, 22, 28}$, *տասնումէկ* Բ ճիզ. *տասնուերկու* ԴԳ ճիզ. *տասն ու երկուք* L. $157_{22, 23}$, *տասն ու հինգ/հինգ/* L. 157_{22}, *տասնուհինգ* 17_{22}, 51_{1}, L. 157_{27}, ԴԳ ճը. *տասն ու վեց* L. 157_{14}, *տասնվիւլճն* 15_{2}, 23_{29}, *տասնվիւլճն-ի* սեռ. 23_{3031}, 93_{7}. *տասն եւ ինն/ինի*. իսկական կիլիկյան *տասն ու ինն* / L. $157_{13, 19}$, *քսան* $157_{16, 19, 20, 21}$. *քսան ու հինգ* $157_{7, 12}$ *քսանուհինգ* 157_{8}, բայատ. *ի քսանուհինգէ/ն/* Գիրք վաստ. 23. *քսանուվեց* Զքբ 154. *երեսուն* ԴԳ ճհզ, *յիսուն* ԴԳ ա. *վաթսուն* 11_{6}, ԴԳ ճհէ. *հարիւր* 93_{7}, L. 178_{14}, 185_{16}. *հազար* 31_{7}, 71_{3}: Մնացած ձևերը վերականգնվում են վկայվածների, ինչպես նաև նոր հայերեն համապատասխան ձևերի անալոգիայով: Կասկածելի է մնում, սակայն, կիլիկյան արտահայտությունը 70 թվականի համար:

§ 273. *Կազմություն*: Վերևում բերված աղյուսակից երևում է հետևյալը: *Մի* դասական թվականի տեղը գրավել է կիլիկյան *մէկ/մեկ/*, որ նույնական է *միակ* հին ձևի հետ /Հնչյունաբ. §83/: Դասական *մի*-ն դարձել է անորոշ հոդ և մթագնել է: Այս մասին հմմտ. ստորև «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում: *Երկու* նախնական երկակին «երեք» և «չորս» նշանակող բառերի ազդեցությամբ, երբ մոռացվել է երկակիի նրա բնույթը, զարգացել է դեպի հոգնակի նաև արտաքնապես *երկուք* ձևով: Առաջացած զուգաձևերը տարբերակվում են ըստ ֆունկցիայի, ձևական առումով եզակի և հոգնակի լինելով: *Երկու*-ն, սովորական ածականի նման, կատարում է որոշիչի ղերը, իսկ *երկուք* հոգնակին, ընդհակառակն, զրեթե առանց բացառության հանդես է գալիս ինքնուրույն ձևով: Հմմտ. Շարահյուս.: Օրինակ, *երկու այրիկ* ԴԳ հզ. *երկու տարի* ԴԳ ճհզ. *երկու քոյր* ԴԳ, ղղ. *երկու կոյր* ԴԳ ղզ. *երկու դանկ* ԴԳ ղե. սակայն. *աւր մի կամ երկուք* ԴԳ ճհե. ե *տարի ի դուրք կենայ ի յեկեղեցւոյն եւ ապաշխարէ եւ երկուք ի ներք* ԴԳ ճհզ. «հինգ տարի թող եկեղեցուց դուրս մնա և ապաշխարի, իսկ երկու/տարի/-ներսում». *երկուք լմդ իրար* ԴԳ ճհէ: *Երեք* հին ձևը դարձել է իրեք /Հնչյունաբ. §43ա/, *չորք*-ը հոգնանիշ վերջավորությամբ դուրս է մղվել *չորս* ձևով՝ *ս* հոգնանիշ վերջավորությամբ /հմմտ. վերևում՝ § 264/: *Հինգ*-ը տարբերվում է համապատասխան դասական թվականից միայն գրությամբ, *տասն*-ը միայն հնչյունական առումով: *Իւլճն* թվականի

մասին. հմմտ. Հնչյունաբ. § 77: Տասնյակների մեջ կարևոր փոփոխություններ տեղի չեն ունեցել: Հին *հարիւր, հարեւր* դարձել է *հարոյր* /Հնչյունաբ. §72/: Վերջին շեղումները հին լեզվից զուտ հնչյունական են. զուտ հնչյունական պրոցեսի հետևանքով բարդ թվականների *եւ* ev շաղկապի տեղը կիլիկյան հայերենում զրավել է *ու* u /v/: Սակայն, եթե դասական լեզվի մեջ 10-ի և 20-ի միջև ընկած թվականներում միավորների թիվը նախորդում է տասնավորների թվին, ապա կիլիկյան հայերենում ունենք հակառակ դասավորուվյունը: Տասնավորների թիվն է նախորդում միավորների թվին՝ միանալով նրան *ու/վ/* մասնիկի օգնությամբ: Ըստ երևույթին, այդ ձևափոխության ժամանակ 20-ի և 100-ի միջև ընկած թվականների կազմության ձևը, երբ նախորդում է տասնավորների թիվը */քսան եւ մի, քսան եւ երկու, երեսուն եւ երեք, երեսուն եւ հինգ* և այլն/ տարածվել է 10-20 սահմանում ընկած թվականների վրա և դուրս մղել նախնական, հակառակ սկզբունքով կազմված թվականները: Որպես հետևանք այդ ձևափոխությունների, կիլիկյան հայերենի քանակական թվականներն արդեն հասել են նոր հայերեն բարբառների զարգացման աստիճանին[173]:

---

[173] Լեհահայերենում, որի հետ հիմնականում նույնական են մնացած արևմտյան բարբառները, քանակական թվականները հետևյալ տեսքն ունեն.

1. meg	11. dasnə-meg	21. ksanə-meg	40. kharsun
2. ergu	12. dasvergu	22. ksanvergu	50. isun
3. irjekh	13. dasvirjekh	23. ksanvirjekh	60. vathsun
4. čhors chərs	14. dasnə-čərs	24. ksanə-čərs	70. oxtanasun
5. hing	15. dasnə-hing	25. ksanə-hing	80. uthsun
6. vjec	16. dasnə-vjec	26. ksanə-vjec	90. nusun
7. oxtə	17. dasnə- oxtə	27. ksanə-oxtə	100. harur
8. uthə	18. dasnə-uthə	28. ksanə-uthə	200. ergu harur
9. inə	19. dasnəvinə	29. ksanvin	300. irjekh harur և այլն
10. dasə	20. ksan	30. ersun	1000 hazar

հատուկ նոր հայերեն են միայն oxtə և oxtanasun փոխ. կիլ. *-մհ իօ/ճն*: Ինչպես նաև nusun փոխ. կիլ. *իննսուն*: Լեհ. nusun=nu+sun/-ginta, - χοντα ձևի հետ հմմտ. նպ. noh, nūh=9: Միջանկյալ թվերի կապող *ու* ձայնավորը լեհահայերենում բաղաձայններիից առաջ թուլացել է դեպի ə: Օրինակ, dasnə-meg<մհ. *տասն-ու-մեկ*, dasnəhing< մհ. *տասն-ու-հինգ* և այլն: Մնացած դեպքերում, եթե հաշվի չառնենք բազմաթիվ հնչյունական տարբերակներ, օր. chərs փոխ. կիլ. *չորս*, քանակական թվականը մնացել է հիմնականում նույնը:

§274. *Հոլովում*. Քանակական թվականները բոլորն էլ հոլովվում են *որպես եզակի, հետևելով ճյուղավորական հոլովման*: *Երկուք, երեք* և *չորս* նույնպես դիտվում են որպես եզակի: Օր., սեռ. *մէկի* 23_7, ԴԴ հղ. սեռ. *երկուքի/ն/* 23_{22}, ԴԴ, ճժք. բացառ. *յերկուքէ/ն/* ԴԴ ճիա. բացառ. *յերեքէ/ն/* 13_{12} և այլն: Դասական լեզվի մեջ, սակայն, *երկու, երեք, չորք* թվականները հոլովվում են միշտ հոգնակիի նման և կազմում են *երկուց, երից, չորից* սեռականները, իսկ *հինգից* սկսած՝ բացառությամբ միայն կարող են ունենալ եզակի թեքում. նրանք կանոնավոր և օրինաչափ ձևով հոլովվում են որպես հոգնակի: Այդ *եզակի* հոլովումը, որին հետևում էին միայն հինգից բարձր թվականները, զգալով *տարածվել* է 1-3 թվականների վրա, այնպես որ կիլիկյան հայերենում, ինչպես նաև ժամանակակից բարբառներում /հմմտ. Այտ. Բ 32/ բոլոր քանակական թվականները հոլովվում են եզակիի նման: Քանակական թվականների կառուցվածքի և թեքված ու չթեքված ձևով կիրառությամբ մասին տե՛ս «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ

Ա. Անձնական թվականներ

§ 275. *-եան* կամ *-ին* վերջավորությամբ հին անձնական թվականը անհետացել է ինչպես նոր հայերենում, այնպես էլ կիլիկյան միջին հայերենում և փոխարինվել է դերանվանական վերջածանցով որոշվող քանակական թվականով: Օր. կիլ. *երկուքն*, փոխ. դաս. *երկոքեան, երկոքին. երեքն, իրեքն*, փոխ. դաս. *երեքեան, երեքին. չորսն*, փխ. դաս. *չորեքեան, չորեքին* և այլն:

Օրինակ. *երկուքն* «երկուսն էլ» $15_{14,\ 15}$, 47_8, 49_{22}, 67_7, 77_1, ԴԴ, ղ, կը, հբ, ճիբ, ճհէ, ճլգ, մղ, մկզ, սեռ. *երկուքին* 23_{22}, ԴԴ, հբ, ճժբ, ճժդ, ճհբ, բացառ. *յերկուքէն* ԴԴ, ճկէ, ճիա, սեռ. *երկուքիս*, ԴԴ, հե, հայց. *զերեքն* Բ ճհզ, բացառ. *յերեքէն* 13_{12}: Այս խմբին է պատկանում նաև *մէկն* 23_{12}, 23_{23}, 27_6, 35_{28}, 49_{33} և այլն: Առանձին դեպքերում այդ ձևով կազմված անձնական թվականին ավելանում է *այլ* բառը. *երկուքն այլ* 13_{12}[174]:

---

[174] Այդպիսի ուժեղացումը կանոն է նոր հայերենում /Այտ. Բ 32, 441/: Այսպես, արևմտյան գրական լեզվի մեջ. *երկուքն ալ, երեքն ալ, չորսն ալ, եօթն ալ, տասն ալ, տասներկուքն ալ* և այլն:

Բ. Բաշխական թվականներ

§ 276. *-եան* և *-ին* վերջավորություններով հին հայերեն բաշխական թվականները, որոնք նույնական են նույնահանդ անձնաերական թվականների հետ, բնականաբար դադարել են գոյություն ունենալուց: Նոր հայերենում նրանց տեղը գրավել է կազմություն երկու ձև՝ միավորների համար բաշխական թվականը կազմվում է մեծամասնությամբ քանակական թվականի կրկնությամբ, իսկ ավելի մեծ թվերի համար՝ նոր պարսկերենից փոխառված *-կան* gan/kan/ վերջածանցով /նպ. ylgān, dōgān և այլն/: Կրկնության միջոցով առաջին կազմությունը, որ բնորոշ է նաև հին հայերենին, անշուշտ, նաև կիլիկյան է: *-կան* վերջածանցով կազմությունը նույնպես պետք է գոյություն ունեցած լիներ արդեն կիլիկյան հայերենում, չնայած որ վկայությունները *պատահական պատճառներով* պակասում են: Բանն այն է, որ այդ կազմությունն ընդհանուր է նոր հայերենի համար[175], և առկա է նաև լեհահայ բարբառում: Ուրեմն համապատասխան վերջածանցը պետք է փոխառված լիներ արդեն միջին հայերենի շրջանում, երբ լեհահայերը դեռևս գտնվում էին իրենց հայերենիքում՝ Անիում[176]:

Գ. Կոտորակներ

§ 277. Նոր պարսկերենից են փոխառված հետևյալ ձևերը. *չարեկ* čaryeg /կամ- yek/ «մեկ քառորդ» 79_{15}, 83_{14}, *չարեէկ*, որ առաջինից տարբերվում է միայն գրությամբ, Գիրք վաստ. էջ 104, 108, 109. *չարեկ, չարեէկ=նպ.* čahāryak կամ čāryak "1/4": Պատահում են նաև *-ակ* վերջավորությամբ զուտ հայերեն ձևեր. *երեքակ* L. 156_{12}. *հնկակ* ԴԳ ճհ /հնմտ. Բառարանը/. *տասնակ* ԴԳ ա երեք անգամ, գ, դ, կզ, *կէս* 21_4 և այլն: Ընդհանրապես, կոտորակները մեծ մասամբ արտահայտվում են նկարագրական ձևով, օրինակ. *յերեք բաժնէն մէկն* "1/3" 49_{18}, $53_{14.\ 25.\ 26}$, ԴԳ ա, հբ *յերեք բաժնէն զերկուքն* "2/3" 47_8. *ի չորս բաժնէն մէկն* "1/4" էջ 47_{13}, ԴԳ ճհ, ղե, *ի վեց բաժնէն մէկ բաժին* "1/6" էջ 47_{12}: Ապա, առանց բաժին բառի. *յերեքէն մէկն* "1/3" ԴԳ ճծբ, ապա. *ի հինգն մէկ* "1/5" ԴԳ ա երկու անգամ, դ երկու անգամ. *ի տասն մէկ* "1/10" ԴԳ ա երկու անգամ և այլն:

---

[175] Հմմտ. Այտ. Բ 31 հաջ.:

[176] Օրինակ /ըստ Հանուշի/ erguskan (ergus-kan) irjekh-kan, dasnə-meg-kan, ksanagan, haruragan, hazargan՝ հետևյալ ձևերի կողքին. me-meg, chərs-chərs, hing-hing, vjec-vjec, oxtə-oxtə, uthnə-uthə, inə-inə, dasə-dasə:

§ 278. Բայառուձյամբ *առջի* թվականի, հին թվական անունների վկայուձյունները խիստ սակավաթիվ են[177]: Դասական թվականների համեմատաբար սահմանափակ կիրառուձյունը թողած մի կողմ/հմմտ. «Շարահյուսական առանձնահատկուձյունները»/, դա կարծես թե ցույց է տալիս, որ կազմուձյան այդ ձևն այլևս լրիվ ժողովրդական չէր: Նոր լհհահայ բարբառին հատուկ է -um վերջածանցով նոր դասական թվականը[178], որ ծագում է -um վերջավորուձյամբ նոր պարսկերեն համապատասխան ձևից, և միջին հայերեն շրջանում արդեն ծանոթ պետք է լիներ Անիի բարբառին[179]: Կարելի է մտածել, որ այդ կազմուձյունը խորթ չպիտի լիներ նույն ժամանակվա կիլիկյան բարբառին: *Առջի* (առաջին) դասական թվականի մասին տե՛ս ստորև § 307:

---

[177] Օր.՝ երրորդ, էջ 25$_{17}$:

[178] Այսպես, լհհահայերենում կան հետևյալ դասական թվականները. /ըստ Han. Lang.d. Ar. Pol/. ergusum/=ergus+um/, ir^{j}ek^{c}ūm. čərsūm, hingūm, v^{j}ecūm, oxtnūm, ut^{c}nūm, innūm, dasnūm, dasnəmegūm, dasnəvergūm, ksanūm, harurūm և այլն:

[179] -um վերջավորուձյամբ դասական թվականները հանդիպում են նաև միջին հայերեն աստղաբաշխական մի գրվածքում, որ պարունակում է Վեհենայի Մխիթարյանների № 88 ձեռագիրը: Այնտեղից բերում ենք օրինակներ /էջ 31 հաջ. /. *առաջին տումն*, բ. *ում տումն*, գ. *ում տումն*, դ. *ում տումն*, ե. *ում տումն*, զ. *ում տումն*, է. *ում տումն*, ը. *ում տումն*, թ. *ում տումն*, ժզ. *ում տումն*, ժզ. *ում տումն*, ժդ. *ում տումն*, ժե. *ում տումն*: Անմիջապես հաջորդող ժամանակներում լհհ. փաստաթղթերում երևան են գալիս այնպիսի ձևեր, ինչպես՝ *երկուսում* «երկրորդ» Մին. Լհհ. 178, *իրեքում* «երրորդ» էջ 179, *չորսում* «չորրորդ» էջ 170, 178: Դրանից բացի, վաղ լհհայերենի *-որդում* վերջավորուձյամբ ձևերը, ինչպես՝ երկրորդում 1601 թ./ Մին. Լհհ. 146/, *երրորդում* 1591 և 1601 թթ. /Մին. Լհհ. 146, 150/, որոնք ծագում են *յ-երկրորդում*, *յ-երրորդում* նախնական գործիականից, կարող էին զարկ տալ -um վերջավորուձյամբ դասական թվականի հայ-պարսկական կազմուձյանը: Ուրեմն միանգամայն բնական է, որ մի կողմից պարսկական ազդեցուձյան տակ գտնվող, մյուս կողմից՝ -um վերջավորուձյամբ ներգոյական ունեցող արևելահայերենը կազմում է դասական թվականները um(n) վերջածանցով*:

* Արդեն Շրյոդերը նկատում է արևելահայերենի վերաբերյալ /Thesaurus. էջ 309/. «դասական թվականները կազմվում են *ումն* վանկի հավելումով՝ քանակական թվականներին. *մնումն* «առաջին», *երկոքումն* «երկրորդ», *տասնմնումն* «տասնմեկերորդ» և այլն:

Ե. Մակբայական և բազմապատկական թվականները

§ 279. Հին հայերեն *մակբայական* թվականները, ինչպես *անգամ* բաղադրիչով կազմված *միանգամ, միւսանգամ, երրորդ անգամ* և այլն, այնպես էլ *-իցս/-ից, -իս/* վերջավորությամբ պարզ մակբայական արտահայտություններ, օր. *երիցս/երից, երիս/, երկիցս, հնգիցս, վեցիցս* և այլն, կորել են /նոր հայերենում նույնպես/ առանց հետք թողնելու և փոխարինվել նոր արտահայտություններով:

1) Կրկնական մակբայական թվականը կիլիկյան հայերենում արտահայտվում է քանակական թվականի *հետ* «անգամ» կապակցությամբ. *հետ մի այլ* «մի անգամ էլ» 25_{12}. *երկու ու երեք հետ* ԴԳ, ժղ. *երեք հետ* ԴԳ, ա, լբ, լղ. *մէկ հետ* Գիրք վաստ. 211. *երեք հետ* Գիրք վաստ. 211. *երեք չորս հետ* Գիրք վաստ. 116:

2) Կրկնակ մակբայական թվականը կիլիկյան հայերենում արտահայտվում է քանակական թվական+ *տարպայ* «անգամ» կապակցությամբ: Դասական թվականն ու *մի* անորոշ հոդը նույնպես այդ կապակցության մեջ են դնվում *տարպայ* բառի հետ: Այսպես՝ *տարպայ մի* «մի - անգամ» 79_3, *առջի տարպայն* 25_{11}, *երկու կամ երեք տարպայ* Մխ. Հեր. 150_8, *հետ երեք տարպայիին* ԴԳ, ժճբ: *Տարպայ* darba բառը, որ մինչև օրս օգտագործվում է այդ նշանակությամբ, օրինակ, լեհահայերենում[180], միջինհայերենյան շրջանում փոխ է առնվել արաբերենից՝ darba «հարված»[181]:

§280. *-կին* վերջավորությամբ հին բազմապատկականների տեղը գրավել է *-տակ* վերջածանցով կազմությունը. *միատակ* «մի անգամ» ԴԳ ճի, ճիդ, ճհդ. *չորսատակ* «չորս անգամ» ԴԳ ճխէ, ճհդ, ճհգ:

Սակայն ավելի բարձր թվերի համար կարծես թե պահպանվել է -պատիկ վերջածանցով բազմապատկական ձևը[182], օրինակ. *հինգ պատիկ* ԴԳ կդ. *է պատիկ* «յոթնապատիկ» ԴԳ ա: Հհ. *կրկին* դուրս է մղվում *դուպլ* dubl փոխառությամբ /հֆր. double/ $83_{10, 11}$, L. 155_{15}, ԴԳ ճծե, ճհգ. ապա *հինգ տուպլ* «հինգ անգամ» դնում ենք Դատաստանագրքում /ժգ/: Բայի այդ,

---

[180] Նախիջևանի բարբառում:

[181] Նոր հայերենի բարբառներում «անգամ» նշանակությամբ հանդես եկող h'ed և darba... *հեդ=պաս հաղ/հագվադեպ/* բայակայում է կիլիկյան աղբյուրներում, բայց պետք է գոյություն ունեցած լիներ միջին հայերենի այլ բարբառներում:

[182] Այդ կազմությունը պահպանվում է նոր հայերենում /ըստ Վրթ. Զալըխեան Քերակ. էջ 36/:

բազմապատկական թվականն արտահայտվում է նկարագրական ձևով. *չորք ընդ մեկէ* «չորս անգամ» /այսինքն «չորս՝ մեկի փոխարեն»/ ԴԳ ՃհԷ. *հինգ ընդ մեկէ* «հինգ անգամ» /այսինքն «հինգ՝ մեկի փոխարեն»/ ԴԳ ՃհԷ:

«Այսքան անգամ այնչափ» հասկացությունն արտահայտվում է քանակական թվական + *հանչաք* կապակցությամբ. *ը հանչանք շաքար* «երկու անգամ այնչափ շաքար» ՋգՒ լսէ. կդ. *յերկու յայնչաք յիստակած մեղր խառնէ* «լծող խառնի երկու անգամ այնչափ հատակած մեղր» ՋգԱ 266. *հանչաք մի այլ* «մի անգամ էլ այնչափ» ԴԳ ճլը և այլն. *հանչաք չորս ի դարպասն տուգանք առնուլ չիրմէ* «դատաստանի միջոցով չորս անգամ այնչափ տուգանք առնել նրանից» ԴԳ ճբ:

ԴԵՐԱՆՈՒՆ

ԱՆՋՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1. ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՄՔԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§281.

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	*ես*	*դու* *դուն*	*մենք*	*դուք*
Հայց.	*զ-իս*	*զ-քեզ*	*զ-մեզ*	*զ-ձեզ*
Սեռ.	*իմ*	*քո*	*մեր*	*ձեր*
Տր.	*ինձ*	*քեզ*	*մեզ*	*ձեզ*
Բացառ.	*յ-իմանէ* *յ-իմէ*	*ի քենէ* *ի քեզմէ*	*ի մեզմէ*	**ի ձեզմէ*
Գործ.	**իմով* **իմոյ*	*քենով* **քեզնով*	**մեզնով*	*ձեզնով*

§282. Վկայութիւններ. Ուղղ. *ես*. $3_{6.13.17}$, 21_{25}, $23_{8.10}$. 27_{11}, 39_{16}, 41_{8}. $75_{9.18}$: Հայց. *զ-իս*. 9_{22}, 11_{25}, $41_{5.8}$, 57_{18}, $75_{9.17.18.27}$: Սեռ. *իմ*. 3_{13}, 21_{26}, $33_{1.23}$, 39_{17}, 41_{22}, 57_{19}: Տր. *ինձ*. $3_{13.22.25}$, $27_{12.14}$, 75_{8}, ԴԳ լդ: Բացառ. *յ-իմանէ*. 3_{23}, Կոստ. Ժողովածու Գ, 60. *յ-իմէ*. $57_{19.20}$. Dul. 612, ԴԳ հե: Հոգն. ուղղ. *մենք*. 13_{13}, $53_{22.23}$, $59_{12.13}$, 63_{18}, L. 185_{23}, Մխ. Հեր. 119, 126, ԴԳ լդ, հբ, հղ, Բ կե, միա: Հոգն. հայց. *զ-մեզ*. L. 185_{9}, ԴԳ լդ, խ: Հոգն. սեռ. *մեր*. 3_{15}, 53_{23}, L. 154_{22}: Հոգն. տր. *մեզ*. 3_{15}: Հոգն. բացառ. *ի մեզմէ*. Ստեփաննոս Օրբել. Ա. 158_{9}: Եզ. ուղղ. *դու*. 23_{9}, 25_{24}, $67_{10.28}$, 75_{17}. *դուն*. $13_{12.13}$, Dul. 540, Բ ճղ, մկը: Եզ. հայց. *զ-քեզ*. 13_{13}, 15_{17}, 25_{25}, $53_{22.23}$, 67_{9}: Եզ. սեռ. *քո*. $15_{15.19}$, 23_{9}, $25_{12.24}$, 43_{8}, 53_{23}, $67_{10.17}$: Եզ. տր. *քեզ*. 13_{14}, 15_{17}, 21_{26}, 23_{10}, 25_{24}, 67_{9}, L. 178_{15}, 185_{18}, ԴԳ հբ: Եզ. բացառ. *ի քենէ*. ԴԳ ճիբ. *ի քեզմէ*. Կոստ. Ժողով. Բ 39, 40, 62, Գ 23: Եզ. գործ. *քենով*. Կոստանդինի մուտ /Սիսվ. 413/: Հոգն. ուղղ. *դուք*. 3_{23}, 59_{14}: Հոգն. հայց. *զ-ձեզ*. 11_{18}, 41_{9}: Հոգն. սեռ. *ձեր*. $41_{8.10}$, $59_{13.17}$: Հոգն. տր. *ձեզ*. 15_{20}[1]:

§283. Հարացույցի պակասող ձևերի վերականգնումն ապահովվում է մի կողմից իրականում վկայված ձևերով, մյուս կողմից նոր հայերենի

[1] Հմմտ. Կոստ. ժողովածուից *ի մեզմէ* Ա 11_{23}, *ի մենէ* Ա 15_{1}, *քենով* Ա 11_{25}, *ձեզմէ* Ա 11_{25}, 15_{1} և այլն:

ավյալներով: Բայի այդ, գործիականի և բացառականի համար *-նէ* կամ *-նով* վերջավորությամբ ձևերի կողքին պետք է վերականգնել նաև *-մէ* կամ *-մով* վերջավորությամբ ձևերը, ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի: Վերջին ձևերը նորակազմություն են և առաջ են եկել *-մէ* և *-մով* դերանվանական վերջավորությունների տարածումով 3-րդ դեմքի դերանունից /տե՛ս ատորև §§ 284, 286/ 1-ին և 2-րդ դեմքի դերանունների վրա, որտեղ նրանք դուրս են մղել *-նէ* և *-նով*[2] հին ձևերը: *-նէ* վերջավորությամբ բացառականը ծագում է է դարից /Այտ. Բ 40/ երևացող *-անէ/ն/* ոչ դասական ձևից. *ի մեզ-անէ-ն, ի ձեզ-անէ-ն*[3]: Այդ ձևերը կազմող վերջածանցը դասական հայերենում առկա է միայն յուրայական դերանունների բացառականներում. *ի նմ-անէ, ի նոց-անէ, յ-այնմ-անէ, յ-այնց-անէ*: Միջին հայերենի շրջանում *-ան-* տարրը բացառականից անցնում է գործիականին: Գործիականի ընդհանուր կիլիկյան *-ով* վերջավորությանը միանալով՝ այն դառնում է *-նով/<*-ան-ով/*:

Նոր հայերենում, *մեզմէ, քեզմէ, ձեզմէ* ձևերի ազդեցությամբ *իմէ-ն* սկզբից դառնում է *իմմէ* /այդպիսի վիճակը պահպանվել է գրական արևմտահայերենում. Այտ. Բ 39/, իսկ վերջինը, երևի, ժողովրդական առոգաբանության ազդեցությամբ, որ *մեզմէ, քեզմէ, ձեզմէ* հիմքերում փորձում էր ճանաչել տրականը, նորից դարձել է *իմմէ*: Դրանից էլ նոր են արևմտահայերենի այն ձևերը, որտեղ բացառականի և գործիականի վերջավորությունները միանում են *-ի* վերջավորությամբ տրականին: Այսպես.

	Եզակի	Հոգնակի
Տր.	*ինծի*	*մեզի*
Բացառ.	*ինծի-մէն*	*մեզի-մէն*
Գործ.	*ինծի-մով*	*մեզի-մով*

հմմտ. նաև տր. *քեզի*, բացառ. *քեզի-մէն*, գործ. *քեզի-մով* /հմմտ. Патк. Мат. էջ 22, 24, 34, 52, 53, 69, 99/: *Ինծի, մեզի, քեզի, ձեզի* ժամանակակից տրա-

[2] Նոր արևմտահայերենի հոլովումը երկու դերանունների համար էլ գիտե միայն *-մէ/ն/* վերջավորությամբ բացառականն ու *-մով* վերջավորությամբ գործիականը: Այդպես է վիճակը Տաճկ. /Այտ. Բ 39/, Նխ. /Патк. Мат./, Ախ. /Том. Ах. диал./ և այլ բարբառներում: Արևելահայերենում, սակայն, հաստատվել է *-ան-* տարրը. օրինակ. Ագուլիսի բարբառում /Սարգ. 102/ 1-ին դ. եզ. բացառ. *անձ-ան-իս*, հոգն. բացառ. *մեզ-ան-իս*. 2-րդ դ. եզ. բացառ. *քեզ-ան-իս*, հոգն. բացառ. *ձեզ-ան-իս*:

[3] Ի ձեռանէ Վարդ. պատմ. 157:

կանաներն առաջ են եկել, երբ *գ* հայկականակերտ նախամասնիկի կորստով *մեզ, քեզ, ձեզ* հին տրականները միաժամանակ ձեռք են բերել հայկականի ֆունկցիա. լեզվի հատակուժյան ճգտումը սեռական-տրականի *-ի* կանոնավոր վերջավորուժյան միջոցով ստեղծել է տրականի նոր ձև, որն *-ի* վերջավորուժյան քնույժի համաձայն ձեռք է բերել մասամբ սեռականի ուժ: *-ի* վերջավորուժյամբ սեռական- տրականի ձևն առաջին անգամ հանդիպում է ԺԶ դարում Մինաս Թոխաթցու մոտ, մոտավորապես 1563 թվականին /Կոստ. Ժողովածու, 150 հաջ./. տր. *ինձի* էջ 53, *քեզի* էջ 51, 53:

2. ԵՐՐՈՐԴ ԴԵՄՔԻ ԴԵՐԱՆՈՒՆԸ

Անդրադարձ և ստացական դերանուն

§284. Հարացույց. *ինք*:

	եզակի	հոգնակի
ուղղ.	*ինք*	*իրենք*
հայց.	*գ-ինք*	*գ-իրենք*
սեռ.-տր.	*իր, իրեն*	*իրենց*
բացառ.	*յ-իրմէ*	*յ-իրմանցմէ* *յ-իրենցմէ*
գործ.	**իրմով*	*իրմանցով* **իրենցմով*

§285. Վկայուժյուններ. եզ. ուղղ. *ինք*. 3_{13}, $13_{10.11}$, 19_{27}, 27_{12}, $29_{14.18}$, 33_{18}, $35_{13.25}$, 39_{2}, 41_{21}, 43_{3}, 47_{11}, 49_{15}, 55_{18}, 59_{30}, 61_{21}, $69_{3.24}$, 71_{13}, 75_{9}, 77_{10}, 81_{17}, 83_{2} ԴԳ խէ, Բ կէ, ճկե: Եզ. հայց. *գ-ինք*. $9_{10.20.21.24}$, 13_{10}, $15_{14.24.25}$, 17_{25}, 21_{19}, $25_{4.10.16.17.19.21.22.23}$, 29_{4}, 31_{20}, 41_{20}, 43_{5}, $47_{3.21}$, 51_{6}, $53_{4.24}$, $55_{3.18}$, 57_{1}, $57_{7.8}$, $59_{18.21}$, $63_{11.13.21.23}$, 65_{17}, $67_{10.13}$, 71_{19}, 73_{10}, $77_{10.13.15}$, 85_{6}, L. 156_{24}, ԴԳ իը, լը, խգ, կգ, կէ, հը, Բ ճծգ: Սեռ.-տր. *իր*. $3_{4.12}$, $9_{8.9.11.16.18.23}$, $11_{5.7}$, $13_{7.8.11.25.26.31}$, $15_{6.8.19}$, $17_{2.7.19}$, $19_{8.9.10.29}$, $23_{2.6.28.29}$, $25_{7.11.15}$, $29_{9.14.19}$, 31_{19}, 45_{16}, 47_{19}, 61_{33}, 63_{23}, 73_{14}, $77_{1.7}$, 79_{1}, ԴԳ իը, հը, ՋզԱ, Բ և այլն: Սեռ.-տր. *իրեն*. ՋզԱ 69, 72, 75, 96. Բ մժգ. բացառ. *յ-իրմէ*. $13_{9.30}$, 15_{8}, 37_{12}, 45_{9}, 55_{16}, 61_{14}, $63_{21.22}$, 67_{3}. Մխ. Հեր. 22, Ա 116, 219, 233, Բ լթ, ճը, ճխա, ճխդ, մկ, մկա, մկդ, մկէ, մկը, մհ, ԴԳ ժդ, ղէ, ճը, ճհդ: Հոգն. ուղղ. *իրենք*. 41_{8}, 49_{27}, 51_{18}, 57_{14}, L. 185_{11}, ԴԳ խա, լդ, ծ, կը, հ, ղդ, ճժը: Հոգն. հայց. *գ-իրենք*. $17_{16.17.21}$, 39_{1}, L. 178_{12}, Ա 115, ԴԳ լգ, հ, հը, ճթ, ճժը, ճհ, Բ խգ, լթ, ծը, ճխգ, ճծա, ճծդ, ճծէ, ճկ, մկդ, մկը, մկթ: Հոգն. սեռ.-տր. *իրենց*. 3_{19},

$17_{9.15.16.17.21}$, $19_{6.7.17.22}$, 23_{20}, $25_{15.16.20}$, 29_{1}, 33_{7}, 35_{19}, 39_{24}, 41_{10}, $49_{11.23.25.27.32}$, $51_{8.10.11.14}$, $53_{16.17}$, $57_{13.14}$, $61_{10.15}$, 77_{17}, 83_{26}. L. 154_{21}, $156_{14.15.16.18}$, $185_{11.20}$, Ա. 167, Մխ. Հեր. 129. Բ ծբ, միդ, մլը, ԴԳ ա, բ, իե, լդ, ծ, կ, կը, կը, հ, հա, հբ, հթ, ղգ, ղզ, ճթ, ճհա: Հոգն. բացառ. *յ-իրմնմնէ*. 61_{16}, ԴԳ լզ, Ա. 209, 225: Հոգն. բացառ. *յ-իրենմնէ*. ԴԳ լգ, ղդ, ճժբ, Բ մկէ, Ա. 206[4]: Հոգն. գործ. *իրմնմնով*. ԴԳ հ: Մնացած ձևերը կարելի է վերականգնել:

§286. 3-րդ դեմքի դերանունը միջին հայերենի նորակազմություն է: Հին հայերենը գիտե միայն *իւր* անդրադարձ դերանունը հետևյալ ձևերով.

	Եզակի	Հոգնակի
Սեռ.- տր.	*իւր*	*իւրեանց*
Բացառ.	*յ-իւրմէ*	*յ-իւրեանց*
Գործ.	*զ-իւրեաւ* *զ-իւրեամբ*	*իւրեամբք*
Ներգ.	-	*յ-իւրեանս*

Ուշ դասական շրջանում *իւր* անդրադարձ դերանունը ձեռք է բերել նաև կուսական նշանակություն: Դրա հետևանքն այն է եղել, որ մինչ այդ գոյություն ունեցող հոգնակի հոլովների կողքին առաջացել է նաև *իւրեանք* ուղղականը, որ Ներսես Լամբրոնացու և որոշ ավելի ուշ հեղինակների մոտ հանդես է գալիս որպես եզակի 3-րդ դեմքի դերանուն: Եզակի ուղիղ հոլովի ֆունկցիան ընդունել էր հին *ինքն* որոշյալ դերանունը /= կիլիկյան *ինք*/: Հիմա երևում է նաև *իւրեան* սեռականը՝ *իւր* ավելի հին ձևի կողքին. 3-րդ դեմքի նոր, մինչև մեր ժամանակները պահպանվող անձնական դերանունն ստեղծվել է հիմնականում արդեն հին հայերեն շրջանի վերջում: Միջին հայերեն շրջանին անցնելիս այդ դերանունը ենթարկվել է մասամբ հնչյունական /տե՛ս Հնչյունաբ. § 74/, մասամբ էլ ձևաբանական փոփոխությունների: Վերջիններս հետևյալներն են. ա/ գործիականի *-եաւ/-եւ) -եամբ* վերջավորությունը դուրս է մղվել բացառականի անալոգիայով ստեղծված *-մով* վերջավորությամբ: *-մէ* և *-մով* բնորոշ դերանվանական վերջավորություններն ընդհանրանալով՝ անցել են եզակիից հոգնակիին. բացառ. *յ-իւրեանց* դարձել է *յ-իւրեանց-մէ* = կիլ. *յ-իրենց-մէ*, ընդ որում գործիականն ընդունել

[4] Մխիթար Հերացի, էջ 115 տալիս է *իւրեանցմէ* գրքային ձևը:

է *իրենց-մով* ձևը[3]. բ/ *յ-իրմնցնէ* և *իրմնցնով* կրկնակները, ելնելով այն բանից, որ նոր հայերենում նրանք այլևս չկան, պետք է ավելի հին լինեին, քան *-մէ* և *-մով* վերջավորություններով ձևերը:

Յ-իրմնցնէ բայարտականը, որից կազմվել է գործիականը, պետք է ծագած լիներ **յ-իւր-ում-ան-ց-անէ* ձևից: Ըստ երևույթին, այդ կազմությանը համար ելակետ է ծառայել եզակի *յ-իրմ-է* բայարտականը: *-ան-ց-անէ* վերջավորությունը կարող էր առաջանալ իմաստային առումով մոտիկ հհ. *ի նոցա-նէ*, *յ-այնցանէ* բայարտականների նմանությամբ: L. 189-ի մեջ վկայված *իրմէնցնէ* ձևը *յ-իրմնցէ* ձևի կողքին $155_{20.30}$, $156_{3.5.13}$ պետք է դիտել սոսկ որպես *յ-իրմնցէ* ձևի աղավաղում:

§287. 3-րդ դեմքի անճնական դերանունը միաժամանակ, բայարտության ուղղականի, կատարում է անդրադարձի դեր[6]: Ստացական իմաստն ար-

---

[5] Հմմտ. նաև ատրև՝ § 290 *ի նոց-մէ* հոդմ. բայարտականը՝ *ի նոց-անէ* դասական բայարտականի դիմաց: Հին ստացական, հարաբերական և հարցական դերանունների՝ *-մէ/=*ում-է/* վերջավորությամբ բայարտականից ծագող այդ *դերանվանական հոլովումը բայարտականի -ոջ, գործիականի -մով վերջավորությամբ* նոր հայերենում էլ ավելի մեծ նշանակություն է ստացել: Այսպես՝ տաճկահայերենում կանոնավոր ձևով այն երևում է հատկապես դերանունների *հոգնակի* հոլովման մեջ /Այտ. Բ 34-51/: Անալոգիայի օրենքի ներգործությամբ այդ հոլովումն անցել էր *դերանվանական -ք-ով հոգնակիներից* դեռևս կենդանի *անվանական -ք-ով հոգնակիների* փոքր խմբի վրա, հատկապես այն պատճառով, որ *ի* նախդրի կորստից հետո *-ոջ* վերջավորությամբ դերանվանական բայարտականը հանդիսացել է մի շատ լավ, ճշգրտությանը ճգտումին համապատասխանող փոխարինում բայարտականի կորած ցուցիչի համար: Այսպես, արևմտահայերենում անվանական *-ք-ով* հոգնակիները կանոնավոր ձևով հոլովվում են հետևյալ սխեմայի համաձայն.

ուղղ.-հայց.	*աղայք*
սեռ.-տր.	*աղոց*
բայարտ.	*աղոց-մէ*
գործ.	*աղոց-մով*

Հոգնակիից բայի, *-ոջ*, *-ով* վերջավորություններով հոլովումը տարածվում է եզակի համապատասխան հոլովների վրա: Ախ. /Том. Ах. диал./ հոգնակիի կողքին ուղղ. k'urvədik', սեռ.-տր. k'urvədueç, *բայարտ.* k'urvədoç-mę, գործ. k'urvədoç-mov, *առկա է նաև* եզակին՝ ուղղ. k'ur, սեռ.-տր. k'urueč, բայարտ. k'uroč-mę, գործ. k'uroč-mov: Այնպիսի ձևեր, ինչպես՝ harç-mę, harç-mov, որոշ բարբառներում կրկին զարկ են տալիս այդ դերանվանական վերջավորությունների տարածմանը համապատասխան *-եր-ով* հոգնակիների վրա: Օրինակ, Ախ. հոգն. ուղղ. har'er «հայրեր», սեռ. hǫreru, բայարտ. hǫrer-mę, գործ. hǫrer-mov՝ բայարտ. hǫrer-e, գործ. hǫrer-ov ավելի հին ձևերի փոխարեն:

[6] Նոր հայերենում անդրադարձ հոլովն ուժեղացվում է նաև ուղղականով. *ինք իրեն, ինք դինք, ինք իրմէ, ինք իրմով* և այլն: Այտ. Բ 40, §151:

տահայտելու համար ծառայում են *իր* և *իրենց* /ավելի հազվադեպ *իրեն*/ սեռականները: Վերջինս կիլիկյան հայերենում դեռևս հազվադեպ է և հանդես է գալիս գրեթե միշտ որպես անձնական կամ անդրադարձ դերանուն[7]:

Վկայություններ. ուղղ. *իր-ն* ԴԳ ճիա. հայց. *զ-իր-ն* ԴԳ հբ, ճիա, ճխ. *զ-իրենց-ն* ԴԳ ա. բայաո. *յ-իր-ոյ-ն* ԴԳ ճժդ, ճժը: Նույն կիրառությունն ու հոլովական ճևը բնորոշ է առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականներին[8]: *-ոյին* և *-ային* վերջավորություններով հհ. ստացական դերանուններն անհետացել են[9]:

Դասական և կիլիկյան ստացականի տարբերությունը երևում է հետևյալ համադրությունից.

	Դաս. *իւր/ն/*	Կիլ. *իր/ն/*
Ուղղ.	*իւր*	*իր*
Հայց.	*զ-իւր*	*զ-իր*
Սեռ.	*իւրոյ*	*իրոյ*
Տր.	*իւրում*	*իրոյ*
Բացառ.	*յ-իւրմէ*	*յ-իրոյ*
Գործ.	*իւրով*	*իրով*

Թեքման պարզեցմանը կիլիկյան հայերենում զարկ են տվել սեռականի և բացառականի *իրոյ* և *իրով* ճևերը: Նրանք հետևում են պարզ *ո* հոլովմանն: Մնացած հոլովներն էլ հետագայում ենթարկվել են նույն հոլովմանը, այնպես որ սեռականի, տրականի և բացառականի տարբերությունը հարթվել է: Հմմտ. ատորև §§292, 296[10]:

---

[7] Նոր հայերենում հատուկ կերպով տարբերվում են *իրեն* սեռականը և *իր* ստացական դերանունը: Այտ. Բ 40:

[8] Այսպես, *իմ* կիրառվում է որպես ստացական դերանուն, էջ 21_{20}, $33_{1.12}$, 57_{19}, *քո* որպես ստացական դերանուն էջ 15_{19}, 25_{24}, 43_{8} և այլն:

[9] Հին ածանցյալ ստացական դերանունների մնացորդները գտնում ենք հհ. ստացական դերանունների հոլովման մեջ: Այսպես, Տաճկ. /Այտ. Բ 49/ *իմին*- հիմքում պահպանվել է հհ. *իմային* ստացականը:

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.-հայց.	*իմ-ս*	*իմին-ներ-ս*
Սեռ.-տր.	*իմն-ի-ս*	*իմին-ներ-ու-ս*
Բացառ.	*իմին-է-ս*	*իմին-ներ-է-ս*
Գործ.	*իմին-ով-ս*	*իմին-ներ-ով-ս*

[10] Հմմտ. նհ. հարաբերական դերանունը. որ սեռականի և տրականի համար ունի *որու* ինքնատիպ մի ճև՝ *-որոյ* /սեռ./. *որում* /տր./ հին տարբերության դիմաց:

§288. Որպես փոխադարձ դերանուններ հին լեզվի մեջ հանդես են գալիս. 1) սեռ.-տր. *միմեանց*, հայց. *զմիմեանս*, բացառ. *ի միմեանց*, գործ. *միմեամբք*. 2) սեռ.-տր. *իրերաց*, հայց. *զիրերարս*, բացառ. *յ-իրերաց*, գործ. *իրերաւք*: Առաջինը, որ գրեթե մենաշնորհի դիրք է գրավում հին գրականության մեջ, հետզհետե անհետանում է ավելի ուշ շրջանում: Մյուս կողմից, *իրերաց* դերանունը, որ հազվադեպ էր հանդես գալիս ժողովրդական գրականության մեջ, մղվում է առաջին պլան: Համմտ. այդ մասին Այտընյան, Քնն. քերակ. Ա. 86 և Բ 37: Կիլիկյան հայերենում *միմեանց* դերանունը չքացել է և փոխարինվել *իրերաց* դերանունով:

Արդեն նախակիլիկյան շրջանում *զ-իրեարս* նախնական հոգնակին, որ առաջացել էր *իւր* կրկնված դերանունից, ինչպես որ *զմիմեանս* առաջացել էր *մի* թվականի կրկնությունից, փոխարինում է *զ-իրեար* եզակին: Վերջինս հետդասական շրջանում շատ հեշտ կարող էր տարածվել նաև այն պատճառով, որ իրենից ներկայացնում էր *-եար* վերջավորությամբ մի թվայյալ հոգնակի: Վերջապես, ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ[11] երևան է գալիս *իրեար*-ից ծագող *իրար* ձևը: Այս տեսքով դերանունն անցել է կիլիկյան հայերենին, որտեղ այն երևան է գալիս հետևյալ թեքությամբ.

հայց.	*զ-իրար*
սեռ.-տր.	*իրաց*
բացառ.	*յ-իրացն*
գործ.	*իրով*

Վկայություններ. հայց. *զ-իրար* 33_{21}, ԴԳ ղզ, ճժբ, ճիբ, ճհդ, ճհե. *առ իրար* 3_5, 17_4, 19_{14}, ԴԳ լգ. *ընդ իրար* 49_{21}, 73_6, Մխ. Հեր. 18, 149, ԴԳ լ, ճծզ, ճհէ, Բ ձգ, ձէ, ճծզ, ճկբ, ճկէ, ճհբ, ճճ, ճճէ, ճղզ, ճնզ, ճհ. *յ-իրար*. Բ ծդ, ինդ, հզ, ճթ, ճժա, ճծզ, ճհդ, ճհէ, մժզ, մծբ, մծթ. Անս. Անտ. 27_{20}, ՋգԱ. 82, Մխ. Հեր. 8, 9, 24, 52, 73, 97, 104: Սեռ.-տր. *իրաց* $19_{6.7}$, $23_{6.7}$, 27_4, 29_2, 61_{11}, 65_{18}, 67_{30}, 75_{14}, Ա. 21, 208, 278. ԴԳ հբ, Բ իէ, լէ, ճդ, ճիե, ճկ, մ, մդ, մթ, մժզ, միզ, մխբ, մծա, մծզ, մծե, մծբ: Բացառ. *յ-իրացն* ԴԳ լդ, հբ, ղզ: Գործ. *իրով* Բ և, ժբ: *Իրով* <*իրար*-ով գործիականի ձևն իրենից ներկայացնում է այդ դերանվան նոր հայերենում վերջնականապես ձևավորված եզակիական թեքման նախասկիզբը[12]: Այն, որ հենց գործիականում է սկսվել այդ փոփոխությունը, ակներև է նաև նրանից, որ հոգնակի գործիականում մենք դեռ հանդիպում ենք հին ձևերի, ինչպես *իրերաւք*, *իրեարս* և այլն:

[11] Շիրակ., Ներս. Լամբր., Պլատ. Տիմ., Թեոպ. և այլն:

[12] Տաճկ. հոլովվում է /Այտ. Բ 35/. հայց. *իրար*, սեռ.-տր. *իրար-ու*, բացառ. *իրար-ձէ*, գործ. *իրար-ով*:

յունը. հիմնված է նախ և առաջ այն բանի վրա, որ *-աւք* վերջավորությամբ հին հոլովաճակը հազվադեպ գործածության պատճառով[13] արդեն վաղ շրջանում կիրառությունից դուրս է մղվել: Միջին հայերենում այդ մեռած ճևի փոխարեն *իրար* եզակիի համար ստեղծվել է գործիականի մի նոր ճև, բնականաբար, նույնպես եզակի *-ով* վերջավորության օգնությամբ: Մնացած հոլովներում սակայն պահպանվել է հոգնակի թիքումը, որովհետև հաճախ կիրառվող այդ ճևերը հենց հաճախակի կիրառության պատճառով կենսունակ են եղել: Չնչյունական փոփոխություններ է կրել *իրար* /<հհ. *իրերաց*/ սեռական-տրականը: Ձևաբանական առումով ընդարճակվել է *յ-իրայմէ* բայաոառականը հին հայերեն ճևից *-մէ* դերանվանական վերջավորության օգնությամբ, անճնական դերանունների և *սա, դա, նա* յուցական դերանվան համապատասխան հոլովների նման:

Այդ դերանունից բացի, նոր լեզուն *միմեանց* կորած դերանվան փոխարեն ստեղծել է փոխադարձի իմաստի մի նոր արտահայտություն, ինչպես որ *միմեանց*-ը ստեղծվել է եզակի թվականի կրկնության: Վերջինս տաճկահայերենում հնչում է /Այտ. Բ 35/ հայց. *մէկը զմէկ*, սեռ.-տր. *մէկը մէկու* կամ *մէկմէկու*. բայաո. *մէկը մէկէ* կամ *մէկմէկէ*[14], իսկ գործիականը չի օգտագործվում: Արդեն կիլիկյան հայերենում երևում է այդ փոխադարձ դերանվան սկզբնավորումը հետևյալ դեպքերում. *որ քշտել լինան մէկմէկի* 31₂. *մէկզմէկի ուտեն* ԴԳ ճհ: Այդ նոր դերանվան թիքումը որոշիչ դեր է խաղացել եզակիաձերպ հոլովման տարածման մեջ *իրով* բայաոառականից *իրար* դերանվան մնացած հոլովների վրա:

ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱՄԱՍՆԻԿՆԵՐ
/Վերջահար դերանուններ/

§289. Ինչպես հայտնի է, նոր հայերենը դերանվանական հոդերի տեսակետից տարբերվում է հին լեզվից 3-րդ դեմքի դերանվանական վերջածանցի շնորհիվ: *Վերջինս պահպանվում է միայն ճայնավորահանգ գոյականների մոտ: Ինչ վերաբերում է բաղաճայնով վերջացող գոյականներին,*

---

[13] Ինչպես հայտնի է, գործիականը հին հայերենում արտահայտվում է մեծ մասամբ նկարագրական ճևով. կիլիկյան հայերենում նույնպես գործիականի փոխարեն հաճախ օգտագործվում է *հետ իրայ* ճևը:

[14] Դրա կողքին ավելի նոր, պակաս ճիշտ հոլովումը, հայց. *մէկզմէկ*, սեռ.-տր. *մէկզմէկու*. բայաո. *մէկզմէկէ*:

այստեղ դրա փոխարեն երևան է գալիս դերանվանական նշանակումիչյուն ունեցող -ը վերջամասնիկը: Ըստ Հնչյունաբ. §140 ծան., այդ *-ը*-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ երկրորդական կիսաձայնավոր, որ զարգանում է ռնգայինից առաջ, ի հայտ է գալիս ռնգայինի անկումից հետո և հանդես է դերանվանական ֆունկցիայի որպես դերանվանական *ն* բաղաձայնի ներկայացուցիչ:

Կիլիկյան հայերենը դեռևս զերծ է մնում այդ նորագոյացումից: Այստեղ անփոփոխ ձևով պահպանվում են *ս, դ, ն* հին վերջամասնիկները, որոնցից վերջինն ավելի հաճախակի ու կանոնավոր ձևով է կատարում հոդի պաշտոնը[15]: Այդ մասին հմմտ. ստորև «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում, §432: Օրինակներն առկա են ամենուրեք:

2. *սա, դա, նա* դերանունը

§290. *Նա* դերանվան հարացույցը:

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	*նա*	*նարա*
Հայց.	*զ-նա*	*զ-նարա*
Սեռ.-տր.	*նարա*	*նայա*
Բացառ.	--	*ի նայմէ*
Գործ.	--	--

§291. Վկայություններ. ուղղ. եզ. *նա* և հայց. եզ. *զ-նա* ամենուրեք. եզ. սեռ. *նարա* կամ *նարայ* $15_{10.22}$, 57_{21}, 67_{3}, 83_{11}, ԴԳ ե, կը, հը, ճը, ճգ, ճիգ, ճծգ. եզ. տր. *նարա* կամ *նարայ. որ նարա փող մի չտան* Անս. Անտ. 43_{10}. *տան մի բաժին նարա տան* ԴԳ լա: Հոգն. ուղղ. *նարա* և *նարայ* 39_{18}, ԴԳ լա, լդ, կ, հը, ճհէ: Հոգն. հայց. *զ-նարա* ԴԳ ճլը, ճկդ: Հոգն. սեռ.-տր. *նայա* 51_{15}, ԴԳ իա, ճծգ: Հոգն. բացառ. *ի նայմէ* 3_{12}, 5_{15}, ԴԳ լդ, ծը երկու անգամ: *Դա* հոգն. ուղղ. *դաքայ* ԴԳ ծվե: Եզակիի բացառականի և գործիականի ձևերը պատահաբար վկայված չեն:

Այդ դերանվան բարբառային ձևերից Վարդանի պատմության մեջ /ԺԳ դար/ մուտք են գործել հետևյալները. *նաքա* Վարդ. 158_{11}, *նաքան /=նաքա +ն/* Վարդ. 157. հոգն. սեռ. *նայա* Վարդ. 158_{2}: Այդ դերանունը շարունակում է իր կյանքը հին լեհահայերենում. Լվովի 1450 թ. մի փաստաթուղթ

---

[15] Հետաքրքիր դերանվան սկզբնական բնույթի և կիրառության մասին հմմտ. M. A. Meillet "Recherches sur la syntaxe comparée de l'arménien", էջ 20 հաջ.:

ունի *նարայ* սեռականը[16]. 1464 թ. Լվովի մի փաստաթղթի մեջ առկա է հոգն.-հայց. *զնաքայ*. սեռ.-տր. *նայայ*[17]: Դոնի Նախիջևանի նհ. բարբառում դերանունն ընդունել է հետևյալ տեսքը[18].

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.-հայց.	*նա*	*նաքա*
Սեռ.-տր.	*նարա*	*նայա*
Բացառ.	*նարամէն*	*նայամէն*

[16] Մխ. Լհհ. էջ 116. *եւ այլ մարդ չեմ նարայ հայուէչ չունենայ*:

[17] Մխ. Լհհ. էջ 117. *Ես կուզեմ զան քո ած սպ նայայ տամ*: Նույն տեղը. *նայայ հալաւ շինեմ. ու զնաքայ կերակրեմ*:

[18] Այսպես. Պատկանյանի կողմից բերված Նախիջևանի լեզվանյութը պարունակում է հետևյալ ձևերը. սեռ. *նարա* էջ 3, 7, 8, 10, 13, 20, 23, 32, 41, 50, 58, 59, 65, 66, 77, 79, 81, 86 և այլն. սեռ. *նարան* /ուղղ. *նայն*/ էջ 3, 29, 47, 55, 56, 77 և այլն. տր. *նարա* էջ 22. բացառ. *նարամէն* էջ 16, 49 և այլն. հոգն. ուղղ.-հայց. *նաքա* էջ 16, 25, 37, 50, 58, 64, 70, 72, 89, 90, 112 և այլն. սեռ.-տր. *նայա* էջ 21, 23, 35, 36, 43, 55, 56, 61, 65, 69, 70, 71, 74, 79, 85, 88, 90 և այլն. բացառ. *նայամէն* էջ 89, 99 և այլն: Ապա *տա* դերանունից սեռ.-տր. *տարա* էջ 73, 87 և այլն. հոգն. ուղղ.-հայց. *տաքա* էջ 86, 90. հոգն. սեռ.-տր. *տայա* էջ 29, 41, 42, 62, 70, 71, 77, 86 և այլն: Ղրիմի կեղակից բարբառը նույնպես ունի միայն *նարա*. *տարա*. *նայա* և այլն /Բազմավէպ, 1844, էջ 176/: Մսերյանցի համաճայն, Տրանսիլվանիայի հայերը ծանոթ են միայն a-ով ձևերին. *նարա*. *տարա* և այլն /Мсер. էջ 142/:

Նոր հայերենի բարբառներում *սա, դա, նա* դերանունը մեծամասնությամբ անհետացել է կամ հնացել: Տաճկահայերենում, օրինակ, այն փոխարինվել է հետևյալ ածանցյալ դերանուններով /Այտ. Բ 42/:

1-ին դեմք	*սու-ի.*	*սու-իկ-ա.*	*սու-իկ-ակ*
2-րդ դեմք	*դու-ի.*	*դու-իկ-ա.*	*դու-իկ-ակ*
3-րդ դեմք	*նու-ի.*	*նու-իկ-ա.*	*նու-իկ-ակ*

սեռ. *սու-որ*. բացառ. *սէ-կ-է*. գործ. *սու-ով*: Դրա փոխարեն, Ագուլիսի արևելահայ բարբառը /Մարգ. 103/ պահպանել է այդ դերանունը հետևյալ ձևով. ուղղ. *սօ. դօ. նօ.* որտեղ առկա է մաքուր հիմքը, ինչպես որ այն երևում է *սո-դա. դո-դա. նո-դա* դաս. սեռականի մեջ*:

Կիլիկյան հայերենին լրիվ խորթ լինելով, այդ ձևերը ծագում են հին արևելահայ մի բարբառից: Դրա կողքին, այդ պարզ դերանունն Ագուլիսի բարբառում *կ* դերանվանական տարրի օգնությամբ* ընդարձակվում է դեպի *հօկ. դօկ. նօկ: Դօկ* և *նօկ* դերանունները, անշուշտ, կազմված են *դօ+կ, նօ+կ* տարրերից: *Հօկ* զուգահեռ կազմության համար նույնպես ենթադրվում է, որ այն առաջացել է *հօ+կ* տարրերից, բայց կարող էր առաջ գալ նաև *ա օ+կ* տարրերի համադրությունից /հմմտ. Ս. Սարգ. 103 հաջ./ Սարգսյանցն իրավամբ համադրում է *հօկ* ձևը հուն. *°o*, լատ. *hic, hoc* ձևերի հետ:

* Հմմտ. *կ* տարրն *այնօր-իկ, այնօք-իկ* դերանուններում:

§292. Նոր հայերենում հիմնականում պահպանվել է կիլիկյան հոլովումը: Վերջինս բնորոշվում է որպես միջին հայերենի՝ ամենից առաջ հոլովների տարբերումների վերացման պատճառով.

1) Հոգնակի ուղիղ հոլովների տարբերումն ինչպես առհասարակ *-ք-*ով հոգնակիի դեպքում, այնպես էլ այստեղ, վերանում է. ուղղականի *-ք-*ն անցնում է նաև հայցականին: Այստեղից կիլ. հոգն. ուղղ. *նա-ք-ա* և հոգն. հայց. *զ-նա-ք-ա*. փոխ. դաս. հոգն. ուղղ. *նո-ք-ա* և հոգն. հայց. *զ-նո-ս-ա*:

2) Եզակի սեռականն ու տրականը համընկել են, այսինքն՝ սեռականի ձևը տարածվել է տրականի վրա և դուրս է մղել *-մա* վերջավորությամբ տրականը. նույն ձևով, ինչպես որ դա եղել է ստացական /տե՛ս վերևում՝ §287/ և մնացած յուրյական դերանունների /տե՛ս ստորև §296/ դեպքում: Հին հայերենի տարբերակված ձևերին՝ սեռ. *նո-ր-ա*, տր. *ն-մ-ա* /<*նոմ-ա/ համապատասխանում է երկու հոլովների համար միանական *նա-ր-ա* ձևը[19]: Միջին հայերենի առանձնահատկություն է նաև *-մէ* վերջավորությամբ բացառականը. *ի նայմէ*, որ դուրս է մղել *-նէ* վերջավորությամբ հին ձևը: *-մ-նէ* վերջածանցը դուրս է մղվել -*umę = կիլ. -mę վերջածանցով:

§293. Այդ յուրյական դերանվան բնորոշ գիծն է հիմքի *նա-* ձևը /փոխ. դաս. *նո-*/: Երևույթը ներկայացնել այնպես, իբր հին *նո-* ձևն առնմանվել է հաջորդ վանկի *ա* ձայնավորին, սխալ կլիներ՝ հնչյունական անալոգներ չլինելու պատճառով: Չի կարելի ընդունել նաև, որ եզակի ու հոգնակի բոլոր հոլովները վերակառուցվել են *նա* ուղղականի անալոգիայով: Ես ամենից հավանական եմ համարում հետևյալ վարկածը: Հին հայերենում այդ յուրյական դերանունից առանձին դեպքերում կազմվել է *-այք* վերջավորությամբ հոգնակին[20], ինչպես՝ հոգն. ուղղ. *սայք*, փոխ. *սոքա*, հոգն. սեռ. *սայց*, *նայց*, փոխ. *սոցա*, *նոցա*, որ կազմված է հոգնակի վերջավորության ուղիղ միայնությամբ եզակի ուղղականին, ինչպես որ *նայն* յուրյականից կազմվում է *նայնք* հոգնակին /*նոքայն*-ի կողքին/. սեռ. *նայնց* /*նոցայն*-ի կողքին/: Երկու հոգնակիներն էլ՝ *-այք* և *-ոքա* վերջավորություններով, դժվար թե փոխազդեցությունից զերծ մնային. թվում է, թե *-այք* վերջավորությամբ նոր կազ-

---

[19] Հմմտ. նաև դասական ազդեցությամբ առաջացած խառն ձևերը. *նորա* տրականը՝ *նորա հանչանք մի պակսուն այնէ* 67$_{16}$ կազմությանն մեջ. հայց. *զ-նոքա* ԴԳ ճկբ. ձևեր, որոնք, արհեստական լինելով, բնորոշ են եղել միայն գրքային լեզվին:

[20] Այսպես. «քերթողական և ոտանկական» բառերի մի բառարանում /Վիեննայի № 337 ձեռագիրը/. հոգնակիի ձևերը. *սայք*, որ նույնանիշ է հայտարարվում *սոքա* կամ այսոք ձևերի հետ. հոգն. սեռ. *նայց*, որ նույնանիշ է հայտարարվում *նոցա* ձևի հետ:

մուլթյունն *-որք* ձևից սխալ անալոգիայով վերցրել է *ա* վերջին տարրը, այնպես որ ստեղծվել է **նայքա* մի ձև, որը, քանի որ *-այք* վերջավորության մեջ երկբարբառը պայմանավորված է եղել միայն բառավերջի դիրքով, պիտի դառնար *նորա*: Այսպիսով, ստեղծված *նա-* հիմքը հոգնակիից անցել է եզակիին: Կամ էլ *նայք* հոգնակին այնպիսի ազդեցություն է գործել *նաքա* ձևի վրա, որ վերջինս առաջինի անալոգիայով ընդունել է *ա* տարրը որպես հիմքի ճայնավոր, մի բան, որ պակաս հավանական է: -Համենայն դեպս, այդ կազմուլթյունը պետք է գոյուլթյուն ունենար արդեն վաղ ժամանակներից: Արդեն հին հայերենում սէ, դէ, նէ իգական կարծեցյալ դերանունները լծեք հոլովներ են կազմում հետևյալ կերպ. եզ. սեռ. *սորա*, հոգն. սեռ. *սոցա* և այլն: Այդ ձևերի նույնուլթյունը կիլիկյան ձևերի հետ չի կարող պատահական լինել: Բնավ կազմված չլինելով *Է*-ով արհեստական ձևերից, նրանք արդեն այն ժամանակ պետք է գոյուլթյուն ունեցած լինեին կենդանի ժողովրդական լեզվի մեջ որպես դասական ձևերի բարբառային համապատասխանուլթյուններ և կիլիկյան ձևերի նախատիպեր: Միայն այդ պատճառով են նրանք օգտագործվել որոշ քերականների ու փիլիսոփաների կողմից և համաղրվել սէ, դէ, նէ դերանվան հետ՝ հոլովումը կատարելագործելու և իգական սեռի համար ինքնուրույն, արական-ից անկախ ձևեր ստեղծելու համար:

3. *այս, այտ, այն* դերանունը

§294. *Այն* դերանվան հարացույցը:

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	*այն*	*այն-ոք*
Հայց.	*զ-այն*	*զ-այն-ոք*
Սեռ.-տր.	*այն-որ*	*այն-ոց*
Բացառ.	*յ-այն-որ*	*յ-այն-ոց*
Գործ.	*այն-ով*	**այն-ով-ք*

§295. **Վկայուլթյուններ.** եզ. ուղղ. *այս* 3_{21}, $13_{15.20.21}$, 15_{17}, $17_{3.4.7}$, 35_{2}, 47_{29} և այլն. *այտ* 11_{2}, 23_{22}, 33_{7}, 39_{17}, 45_{11}, 77_{26} և այլն. *այն* 3_{14}, $9_{17.23}$, 11_{20}, $13_{8.11}$, 15_{21}, 17_{14}, 21_{2}, 27_{14}, 29_{5}, 57_{12}, 69_{4} և այլն: Եզ. հայց. *զայս, զայտ, զայն* 29_{9}, ԴԳ ճյա և այլն: Եզ. սեռ. *այսորդ* 29_{13}, 65_{16}, 67_{13}, 77_{22}, Լ. 185_{29}, ԴԳ ա, ժ, լգ, լղ, լզ, խզ, ծբ, ղբ, ճժ, ճի, Բ խե, մի, միզ, մկզ. *այտորդ* 11_{2}, 39_{17}, 81_{25}, Ա. 15, 215, ԴԳ կգ, հբ, Բ խա, մծիճ, մկե. *այնորդ* 11_{4}, $13_{21.25}$, 17_{20}, 19_{22}, $23_{19.23}$, $29_{7.25}$, $35_{12.20.23}$, 39_{18}, 41_{6}, 45_{20}, $47_{12.21.22}$, $57_{3.28}$, $63_{15.23}$, $67_{26.29}$, 71_{2}, 79_{18}, 81_{23}, $83_{11.17}$, Dul. 625, 646, Ա. 16. 150. 215. ԴԳ ե, է, ժա, ժդ, իբ, իը, իճ, լգ, խ, խբ, ծ, կբ, կը, ճէ, հբ, ձզ,

ճժա, ճժդ, ճիճ, ճլզ, ճլվճ, ճխվճ, ճծճ, ճծէ, ճծվճ, Բ ծզ, հը, ճիպ, ճկվճ, մի, միպ, մկպ: Եզ. տր. = եզ. սեռ. օր. *համանք տայ դարպասն այնոր* 77_6 «դատաստանը նրան լիազորություն տա»: Եզ. բացառ. *յ-այսոր* ԴԳ լգ[21], Բ ճժա[22], մկպ. *յ-այնոր* 47_{18}[23], 83_4[24], Ա. 156, 174. Բ միպ, ԴԳ ա, իա[25], հը, ճլ[26]: Եզ. գործ. *այսով* 55_{15}, ԴԳ ճժը, *այսով* ԴԳ ճլզ, Բ մժդ, մխպ. *այնով* $79_{16.17}$, Ա. 183, ԴԳ լդ, լղ, հը, ճ, ճկ, բկ, ճճ, մծվճ, մկպ: Հոգն. ուղղ. *այսոք* $67_{29.30}$, Ա. 148, ԴԳ լե, կ, ղզ, ղե, հլզ, ճկէ, Բ մխա, մլզ, մխվճ. *այսորք*, Ա. 154, 199. *այնոք* ԴԳ կզ, հ, ղը, ղզ: Հոգն. հայց. *զ-այսոք* Բ մկզ, *յ-այսոք* ներդ. Ա. 209, *զ-այսորք* Բ խը, *յ-այսորք* ներդ. Ա. 195. *զ-այնոք* ԴԳ ա, լդ, խզ, կ, ղզ, ճժը. *ի յ-այնոք* ԴԳ կ. հոգն. սեռ.-տր. *այսոց* ԴԳ կ. *այսոց* Բ մկա, *այնոց* Բ ճէ, ԴԳ լ, լդ, ղը, ճվճ, ճժը, ճլե, ճծզ. հոգն. բացառ. *յ-այսոց* ԴԳ ա, կ, մծը. *յ-այնոց* 27_9, ԴԳ ա, հ. հոգն. գործ. **այնով-ք* վկայված չէ, բայց ապահովված է *այնով*[27] եզակիով:

§296. *Այնոր, այնոք, այնոց* ձևերը դասական լեզվի մեջ ներկայացված են միայն *-ին* վերջածանցի հետ կապակցված՝ *այնոր-ին, այնոք-ին, այնոց-ին* */այնր, այնք, այնց* ձևերի կողքին/: Կիլիկյան հայերենն այստեղ պահպանել է նախնական պարզ հոլովումը: *-ին* վերջածանցը չունեցող պարզ ձևերը *հին հայերեն* են և ծագում են կիլիկյան հայերենի հհ. մայր բարբառից որպես *այնր, այնք, այնց* և այլ դասական դերանունների համապատասխանություններ: *Հին արևմտահայերենի* նախնական հոլովումը կարող էր լինել միայն հետևյալը.

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	*այն*	*այն-ոք*
Հայց.	*զ-այն*	*զ-այն-ոս*
Սեռ.	*այն-որ*	*այն-ոց*
Տր.	*այն-ում*	*այն-ոց*
Բացառ.	*յ-այն-մ-անէ*	*յ-այն-ոց*
Գործ.	*այն-ու*	*այն-ոքիւք*

[21] *յայսօր իրք պակսեցնէ.*
[22] *յայսոր առ.*
[23] *որ ոչ այն յայնոր առնու իրք եւ ոչ այն յայնոր.*
[24] *վճարվի ի յայնոր.*
[25] *ի յայնոր կու զայ.*
[26] *թէ հայնց որ յայնոր է պատճառն.*
[27] Դրանից բացի, երևացող *-ին* վերջավորությամբ ձևերը, ինչպես՝ *այսոքին* 23_{27}, 25_1, *այնոցին* 57_{13}, համաչափում են որպես դասականություն՝ արդեն իրենց հաղվադեպության պատճառով:

Այսինքն՝ ըստ էության նույն դերանվանական հոլովումը, ինչպես հհ. *ո՛, ո՛վ* /սեռ. *ո՛յր* և այլն/[28] հարցականի դեպքում: Հմմտ. Ա. Մեյեի

---

[28] Արդեն վերևում՝ տողատակի ծան. մեջ (էջ 226), մենք հիշատակել ենք, որ հին բարբառներում *սա* դերանունը /հիմք *սօ-*/ կարող էր կազմել *սոյր /դոյր, նոյր/* սեռականը: Ընդհանրապես սեռականի *-ր*, արականի *-մ* վերջավորություններով հոլովումը սկզբում շատ ավելի լայն տարածում պետք է ունեցած լիներ: Միայն այդ ճանով կարելի է բացատրել փիլիսոփայական գրվածքներում, հատկապես Դավիթի Անհաղթի մոտ հանդիպող *-ոյր* վերջավորությամբ սեռականները: Օրինակ, Պորփյուրիոսի ներածության մեկնության մեջ առկա են սեռականի հետևյալ ձևերը. *ճիոյր* ուղղ. *ճի* էջ 229. *մարդոյր* ուղղ. *մարդ* էջ 229. *կենդանոյր* ուղղ. *կենդանի* էջ 230. *այլոյր* ուղղ. *այլ* էջ 235. *միոյր* ուղղ. *մի* էջ 229. 234. *եզոյր* ուղղ. *եզ.* էջ 235. *միայնոյր* ուղղ. *միայն* էջ 229, 230. *այսպիսոյր* ուղղ. *այսպէս* էջ 227 *իւրաքանչիւրոյր* ուղղ. *իւրաքանչիւր* /նույն տեղը/. *երկաքանչիւրոյր* ուղղ. *երկաքանչիւր* էջ 230. *սեռոյր* ուղղ. *սեռ* էջ 228, 229, 333. *յատկոյր* ուղղ. *յատուկ* էջ 229. *տեսակոյր* ուղղ. *տեսակ* էջ 229: Ապա, դերբայների սեռականները. *ելոյր* 230, 233. *այրացելոյր* 235. *դադարելոյր* 235. *կոչեցելոյր* 228. *ներգործելոյր* 235 և այլն: Պարզ է, որ այնպիսի լայն տարածում ունեցող ճևը չէր կարող կազմված լինել դասական հարցական դերանվան *ո՛յր* սեռականի անալոգիայով, ոչ էլ նամանավանդ արհեստական լինել: Նույնիսկ եթե ընդունենք, որ այդ ճևերն այլևս կենդանի չէին այդ ժամանակվա խոսակցական լեզվի մեջ, ապա կարող էր ազդեցություն գործել արխայիկ վիճակի հիշողությունը. միայն նրա համար, որ *-ր* վերջավորությամբ հոլովն ընկալվում էր որպես իսկապես նախնական, *ո* հիմքերին հատուկ մի հոլով՝ *-ոյր* վերջավորությամբ սեռականը, դեռ կարող էր երևալ Դավթի նման գրողների մոտ:

Հատկանշական է, որ փիլիսոփայական գրականության մեջ *-ոյր* վերջավորությամբ սեռականին համապատասխանող *-ոմ* վերջավորությամբ տրականը սովորական է նաև *գոյականների* մոտ: Այսպես. Դավթի մոտ *մարդոյր* սեռականին համապատասխանում է *մարդոմ* տրականը. *սեռոյր* սեռականին՝ *-սեռոմ* տրականը /էջ 121/: Հաճախ այդ ճևը երևան է գալիս հատկապես *ի* կամ *և* նախամասնիկների հետ կապակցված. *և-ամանոմ* /ուղղ. *աման*/ 457. *ի ենթակայոմ* և *և-ենթակայոմ* /ուղղ. *ենթակայ*/ 129 կամ 360. *յ-առաջիկայոմ* /ուղղ. *առաջիկայ*/ 136. *ի սահմանոմ* /ուղղ. *սահման*/ 136. *յ-իւրոմ յորդորականոմ* /ուղղ. *յորդորական*/ 132. *ի կաշճոմ* /ուղղ. *կաշճ*/ 129. *ի բոոմ* /ուղղ. *բոո*/ 129. *ի Սոկրատոմ* /ուղղ. *Սոկրատէս*/ 129, 323. *ի Պղատոնոմ* /ուղղ. *Պղատոն*/ 129, 323 և այլն: Այստեղ առկա է արդեն *-ոմ* վերջավորությամբ *արևելահայ ներգոյականը*, ինչպես որ այն երևում է ավելի ուշ /ԺԳ դար/ Վարդանի մոտ. *ի արտոմս* 157. *են առնոմ* 158, և հատուկ է բոլոր արևելահայ բարբառներին*): Այդ գրականության մեջ երևացող ճգտումը դեպի հնամարեն քնագրի հնարավորին չափ հատուկ և ճշգրիտ վերարտադրության այն դեպքերում, երբ դասական լեզուն չէր կարող տրամադրել համապատասխան միջոցները, բերում էր դեպի հին բարբառային տարրերի ներդրավումը գրական լեզվի մեջ:

Recherches sur la syntaxe comparée de l'arménien, էջ 14, ինչպես նաև Notes sur quelques faits de morphologie, էջ 12: Պարզ է, թե ինչ փոփոխություններ է ենթարկվել այդ հին բարբառային հարացույցը միջին հայերենին անցնելիս. ուղղականն ու հայցականը համընկել են: Մյուս կողմից, *-ում* վերջավորությամբ տրականի ձևն այստեղ, ինչպես ամենուրեք, դուրս է մղվել սեռականի համապատասխան ձևով: Վերջապես այդ *ո* հիմքերի մնացած հոլովներն էլ վերակառուցվել են պարզ անվանական *Ո* հոլովման անալոգիայով. բացառականը ձևով նման է սեռ.-տրականին+բացառականի նախածանց, գործիականն ընդունել է *-ով* վերջավորությունը:

§297. Ուրիշ վիճակ է արտացոլված, սակայն, հյուսիսային հայ Մխիթար Հերացու գրվածքում, որտեղ առկա է հետևյալ հոլովումը[29]:

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	*այն*	*այնոնք*
Հայց.	*զ-այն*	*զ-այնոնք*
Սեռ.-տր.	*այնոր*	*այնոց*
Բացառ.	*յ-այնորէ*	*յ-այնոցէ*
Գործ.	*այնով*	--

Եթե հաշվի չառնենք *-է* վերջածանցով ընդարձակված բացառականը, այդ հոլովումը տարբերվում է կիլիկյանից հատկապես *-ոնք* վերջավորությամբ հոգնակիի ուղիղ հոլովներով, որոնք բնորոշ են միջին հայերենի հյու-

---

*) -um /-ɔm, -am, -ām/ վերջավորությամբ ներգոյականը նոր արևելահայերենի գլխավոր առանձնահատկություններից մեկն է. արևել. *քաղաքում* ձևին համապատասխանում է արևմտ. *քաղաքի մեջ* կամ *քաղաքը*. արևել. *քաղաքներում* = արևմտ. *քաղաքներու մէջ*: Համմտ. նաև Այտ. Ա 195, Ս. Սարգ. 96 հաջ.: Բայց բացառության կարգով այդ տիպի ներգոյականը հանդիպում է նաև լեհահայերենի հուշարձաններում: Ռաշկովի մի հին գրության մեջ /Մին. Լեհ. 162 հաջ./ կարդում ենք. *ի Կամենիկ քաղքում, քուխերում, մայրաքաղաքում*, նաև *Կամեց-ում* և *Ժվանէց-ում*: Դրա հետ կապված է այն բանը, որ լեհահայերենը, արևելահայերենի նման, դասական շեվականը կազմում է *-ում* վերջավորությամբ /§278/: Թվում է, թե լեհահայերենը արդեն որպես Անիի բարբառ, այդ ուղղությամբ ազդեցություն է կրել հարևան արևելահայերենից:

[29] Վկայություններ Մխիթար Հերացուց. սեռ.-տր. *այնոր* 24, 56. *այնոր* 42, 47, 104, 115, 132. *այնոր* 4, 11, 12, 26, 40, 75, 113 և այլն: Բացառ. *յ-այնորէ* 67: Գործ. *այնով* 87. *այնով* 28, 52, 67, 117. *այնով* 79: Հոգն. հայց. *զ-այնոնք* 68, 69, 100, 146, 147: Հոգն. սեռ.-տր. *այնոց* 114, 119. *այնոց* 85, 92, 93, 94, 95, 117. *այնոց* 40, 65, 70, 79, 104, 108: Հոգն. բացառ. *յ-այնոցէ* 91: Միայն մեկ անգամ վկայված է *զ-այնոք* ձևը /էջ 44/: Համմտ. նաև Այտ. Բ, §163 ծան.:

սիս-արևմտյան բարբառներին և առաջացել են *-նք* վերջավորությամբ անվանական հոգնակիների, ինչպես նաև *մենք* դերանվանական հոգնակիի անալոգիայով:

Ժամանակակից հյուսիսային արևմտահայերենը պահպանել է այդ հոլովումը: Որ. Տաճկ. /Այտ. Բ 43/ հոգն. ուղղ. *աստնք*, սեռ. *աստնց*, բացառ. *աստնցմէ*, գործ. *աստնցմով*. հմմտ. Լհհ. asonk^{c}, adonk^{c}, anonk^{c}, Ախ. asuenk^{c}, aduenk^{c}, anuenk^{c}, սեռ. asuenç, բացառ. asonçmẹn, գործ. asonçmov. ապա նաև *իրոնք /իրենք* ձևի կողքին/. *որոնք, մերոնք, շատոնք* /Այտ. Բ 40/, *սրտնք, տունք, տոքանք*, եզ. *սա* /Զրպ. 755/: Ընդհանրապես Ախալցխայի բարբառում եզակին հոլովվում է հետևյալ կանոնի համաձայն. ուղղ.-հայց. an, սեռ.-տր. an-uer /կիլ. *այն-որ*/, բացառ. an-or-mẹn, գործ. an-or-mov: Նոր գրական արևմտահայերենում հին գործիականը պահպանվել է *անով* ձևով, իսկ եզակի բացառականը հնչում է կամ *աստրմէ*, կամ *ասկէ*, կամ էլ *ասկից* /Այտ. Բ 43/: Վերջին ձևերը ծագում են *-իկա* վերջավորությամբ ընդարձակված յուցականից[30]:

§298. *-իկ* վերջածանցով ընդարձակված հիմքերից արդեն միջին հայերենում կազմվում են բացառականի հետևյալ ձևերը.

1) *յ-այսկի* 43$_{7}$, L. 178$_{9}$[31], Մխ. Հեր. 38. *յ-այտկի* Բ *ծծի, մկդ.* որ. *տուր յայտկի որ խմէ. յ-այնկի* ԴԳ լդ: Հմմտ. նույն *-ի* վերջավորությամբ կազմված *աստի, անտի* հին հայերեն մակբայական բացառականները /ուղղ. *աստ, անդ*/:

2) *յ-այսկից* Բ *մկդ, յ-այտկից* Բ *իր. ծծդ, մկդ, մկդ.* Ա 46. *յ-այնկից* Բ *մխաս*, Մխ. Հեր. 38. *հայնկից* նույն տեղը, Ա 167. *այնկից* նույն տեղը ԴԳ

---

[30] Նհ. /Այտ. Բ 41. 43/.

ասիկա = *աս+իկ+ա*
ատիկա = *ատ+իկ+ա*
անիկա = *ան+իկ+ա*

Այդ ձևերում *-իկ-* բաղադրիչը նույնական է *-իկ* տարրի հետ դաս. *այնոր-իկ* ձևի մեջ. *-ա* տարրը նույնն է. որ երևում է դաս. *նա*, սեռ. *նոր-ա*, կիլ. սեռ. *նար-ա* ձևերում: Հմմտ. Hübschmann. Arm. Stud., 91f.

Նոր հայերենում *ասի. ատի. անի* դերանունը /Այտ. Բ 42/ չի կարելի վստահորեն գտնել կիլիկյան հայերենում: Հովհաննյանի մոտ /219$_{6}$/ ներկայացված *այտի* ձևը ճեռագրի *այտ ի* բառակապակցության սխալ ընթերցման արդյունքն է: Լանգլուայի մոտ /L. 185$_{22}$/ երևացող *անի/ս/* ձևը. որ Դյուլորիեն /757/ գրում է *այնի/ս/*. նույնպես շատ կասկածելի է թվում ինձ:

[31] Այսպես պետք է ուղղել *յայտի /ի հետ/* ավանդված անհմաստ ձևը:

խբ. *անկիկ* նույն տեղը. Գիրք վաստ. 182_{23}: Նույն ճևով *աստի, անտի* հին հայերեն մակբայական բացառականները զարգանում են ղեպի *-իկ* վերջավորությամբ ճևեր. *աստիկ* Գիրք վաստ. 74, 130. *անտիկ* Գիրք վաստ. 98, 130, **Սմբ.** Ժամ. 633. **ԴԳ խղ**: Բացառականի *ց*-ն, որ այստեղ հանդիպում է առանձին դեպքերում. արևելահայերենում օգտագործվում է որպես եզակի և հոգնակի բացառականի կանոնավոր և միակ հնարավոր վերջավորությունը[32]:

4. *իսա, իտա, ինա* դերանունը

§299. *Մենք գտնում ենք այդ դերանվան կիրառության հետևյալ վկայությունները.* Անս. Անտ. $13_{31.32}$. *Բայց թէ համել լինայ պարոնն թէ գնա յինա բանն. եւ նա յայլ բան երթայ* «բայց եթե պարոնը հրամայի. այն գործի գնա. և նա մեկ այլ գործի գնա». - Անս. Անտ. 33_{22}. *Եթէ ոք լիճ ճորտ հիւանէ գլխճն ի մարդասպանութիւն թէ ինայ մարդն սպանանել է դիմ ոք.* «եթե մեկ վասալ մեկ ուրիշ վասալին մարդասպանության մեջ մեղադրի, [ասելով] թե այն մարդն սպանել է իմ [մարդկանցիս] մեկին». -Անս. Անտ. 43_{7}. *Ջուլան լիճ ճորտ երեկ ի դարպասն ու դատաստանեայս ի քո վերայ գնայ իրքս.* «ոմն (ինչ-որ) վասալ եկավ դատաստան և զանգատ բարձրացրեց քո դեմ այսինչ բաներում». - Անս. Անտ. $63_{12.13}$. *Պարոնայք, իսայ գրաստ իմ է, ու կորուսի ու հինայ գտայ գինքս հետ իսա մարդոյս.* «պարոնայք, այս գրաստն իմն է, որ կորցրել եմ և հիմա գտել եմ այս մարդու մոտ». - Անս. Անտ. $75_{8.9}$. *Ջուլան մարդ պարտի ինճ գնայ իրքս, եւ դրել է առ իս գրաւական գնայ.* «այսինչ մարդը պարտք է ինձ այս ու այս բանները, և դրել է ինձ մոտ այսինչ գրավականը». - Անս. Անտ. 75_{18}. *Ամ վճարէ գիս գնայ չաքս այլ.* «ապա այսքան գումարն էլ վճարիր ինձ». - ԴԳ լա. *Ինա իրէկն յաւ է քան գնայ.* «այն երեկն ավելի լավ է, քան սա է». - ԴԳ իթ. *Եւ թէ իրէկ ի հեծման մարդ յուղարկէ սուր գնա ի յինա բանն.* «և եթե երեկը ճիավորին [դեսպանների միջոցով] հաղորդեց շտապ գնա այն գործի». - ԴԳ ճղ. *Արայ գինա բանն* «այն գործն արա». - ԴԳ հե. *Ես Ջուլանս որ վասըն իսայ պատճառանայս անճարկեցայ.* «Ես այսինչս, որ այս ու այս պատճառներով դժվար վիճակի մեջ եմ ընկել». - ԴԳ ճժբ. *Կալ գնայ հայրենիքս ու տուր ինճ գնայ չաք դեկանս ինչուի հանչանք մի ժամ.* «վերկրու այս կալվածքը և տուր ինճ այսքան գումար փող մինչև այսինչ ժամկետը».

---

[32] Այսպես. Ագուլիսի բարբառում /Ս. Սարգ. 97/ *ուրման* «որմն, պատ» կազմում է եզ. բացառ. *ուրման-իկ*. հոգն. բացառ. *ուրման-ներ-իկ, թօր* «թուր» եզ. բացառ. *թր-իկ*. հոգն. բացառ. *թր-եր-իկ* և այլն:

- Անս Անտ 15_{16} *Ցուլա՛ն, քո պարոն ժողվել է զրարպատ վաս քո՛ որ ասյել ես ու այրել ես զիսայ ու զիսայ.* «այսի՛նչ, պարոնդ հավաքել է դատարանը քո պատճառով, որովհետև ասել ու արել ես այս ու այս բաները»: Այս օրինակներից ելնելով, կարելի է վստահորեն վերականգնել *իսա* չվկայված ձևը

§300. Այս բոլոր դեպքերում *իսա, իսայ* և *ինա, ինայ* ուղիղ խոսքի մեջ կիրառվում են *այս, այս ու այս, սա, այն, այն ու այն, նա* նշանակությամբ, որպես դոյական կամ ածական: Այդ դերանվան սկզբնական պարզ ցուցական նշանակությունը ներկայացված է վերջին օրինակի մեջ, որտեղ *զիսայ ու զիսայ* նշանակում է «այս և այս /այսինչ/»:

Պարզ ցուցական նշանակությունն ունեն նաև մի քիչ հայերեն այդ դերանվան նոր հայերեն համարժեքները: Այսպես, Ախալցխայի բարբառն ունի դերանվանական հետևյալ ձևերը /Том. Ах. диал. էջ 30 և 60/. isi սեռ isuer, iti սեռ ituer, ini սեռ. inuer . մկբ. istɐγiç (*isi-teγiç) «այստեղ»: Վերջին ձևերը Նոր Նախիջևանի բարբառում /Патк. Мат. 127/ ընդարձակվում են դեպի *իսիվիկ, իտիվիկ, ինիվիկ* Պարզ *իտի* առկա է *իտիպէս* «այդպես» մակբայի կազմում Դրանց կողքին Նիւ. բարբառում պահպանվել են *իսա, իտա, ինա*, մհ. անփոփոխ ձևերը[33]

§301 Դասական լեզվին խորթ *իսա, իտա, ինա* դերանունը բաղադրյալ մի դերանուն է, որ կազմված է *ի+սա, ի+տա, ի+նա* բաղադրամասերից·

Երկրորդ անդամի մեջ մենք ճանաչում ենք *սա, դա, նա* պարզ ցուցականը. Առաջին բաղադրամասը ստուգաբանական առումով կարելի է համեմատել նպ. ē «այս» դերանվան հետ /īder «այստեղ», īsā «այժմ» և այլ բարդությունների մեջ/ = թմլհ i «այս» = ou.ay քրդ. ai «այս» = պհլ. ē ečand բարդության մեջ = հպ. aiˇ ai-ta «այս» = ավ. aęˇ aę-sa և aę-tad դե-

---

[33] Պատկանյանի կողմից /Материалы для исследования армянских наречий. - СПб, 1875/ Նախիջևանի բարբառով բերված տեքստերում մասամբ դոյականական, մասամբ ածականական կիրառությամբ հանդիպում են հետևյալ դերանունները.

իսա 5_6 տողում, 6_6 տողում, 19_{11}, 24_3, 34, տողում, 35_{10}, 37_6, 48_{15}, 52_3, 70_{23}, 72_{16}, $78_{16\,29}$, $79_{4\,5}$, 91_1 տողում, 99_{10}, 103_8 և այլն:

իտա 1_6 տողում 6_3, 7_{36}, 11_{19}, 16_{17}, 17_{22}, 19_{18}, $20_{\text{III }28}$, 23_5, 24_{14}, 26_3, 30_2, 33_7, 35_2 տողում, 46_3, 55_7, 56_{10}, 58_{11}, 59_7, 69_5, $70_{8\,24\,28}$, 71_{22}, 72_3, 73_4, 77_1, 79_{19}, 93_{14}, 100_{18}, 101_6, 102_1 և այլն·

ինա. 6_1, 11_2, 13_1, $14_{1,}$, 16_1 տողում, 20_{12}, 40_{17}, 41_{11}, 48_{11}, 52_9, 57_{12}, 61_{17}, 65_1, 69_4, 72_{12}, 78_2 տողում, 92_1 և այլն·

բանուններում = *ē-šá-, ē -tād դերանուններում*[34] Այդ դերանվան բնույթից եզնելով և հաշվի առնելով նոր հայերենի տվյալները, կարելի է վերականգնել չվկայված թեք հոլովները Քանի որ երկրորդ բաղադրիչը *սա, դա, նա* դերանուն է, բարդ և պարզ դերանունների հոլովումները շատ չպիտի տարբերվեն իրարից Ինչպես արդեն ասվել է, Ախալցխայի բարբառում isi, iti, ini դերանունները կազմում են isuer, ituer, inuer սեռականը[35], որ կիլիկյան հնչյունական ձևով /Հնչյունաբ §7 ծան / պիտի տար **իսոր, իտոր, ինոր* Դա նշանակում է, որ suer, tuer, nuer ձևերն *i-suer, i-tuer, i-nuer* բարդությունների նույնական են *սոր-, դոր-, նոր-* ձևերի հետ *սոր-ա, դոր-ա, նոր-ա* կազմություններում isuer, ituer, inuer սեռականները միաժամանակ առաջնային լինելու տպավորություն են թողնում, և *իսոր, իտոր, ինոր* արևմտահայ ձևով կարելի է վառահորեն դրանք կիլիկյան համարել

Ծան Այս ոք, այդ ոք, այն ոք, ինչպես նաև *այս անուն /հիշ/, այդ անուն /հիշ/, այն անուն /հիշ/* հնացած անորոշ դերանունների տեղը զրավում է արաբ -պարսկ *ֆուլան/* = արաբ պարսկ fulān, թուրք filān, եգիպտ fəlan ըստ Spitta էջ 83, *ոմն* «այսինչ» բառը/ *ֆուլան* «այսինչ 15$_{15}$, *ոմն, այսինչ մարդը»* 39$_{10}$, 75$_{8}$, *իմ ֆուլան լիճ ճորտ* «իմ այսինչ վասալը» 11$_{24}$, *ֆուլան լիճ ճորտ* «այսինչ վասալը» 43$_{6}$ *ֆուլան կապլվոր* «այսինչ, ոմն վարձակալ» 41$_{7}$ *ես ֆուլանս* «ես այսինչս» ԴԳ հե *ի ֆուլանայ վերայ* «ձեկի, այսինչի դեմ» 41$_{22}$ *-առջեւ ֆուլան քներոյ* «այսինչ, ինչ-որ վասալների առջև» 11$_{24}$ Ժամանակակից առձկահայ բարբառում նույն բառը դանում ենք *ֆիլան* և *ֆալան* ձևով

---

[34] Հմմտ Horn, Grdr էջ 32

[35] Նման ձևով է հոլովում Նախիջևանի բարբառը

	Եզակի	Հոգնակի
Ուղղ -հայց.	*իտա*	*իտվանք*
	իտիվիկ	*իտիվանք*
Սեռ -տր.	*իտվօր*	*իտվանց*
	իտիվօր	*իտիվանց*
Բացառ	*իտվօրմէն*	*իտվանցմէն*
	իտիվօրմէն	*իտիվանցմէն*
Գործ	*իտվօրմօվ*	*իտվանցմօվ*
	իտիվօրմօվ	*իտիվանցմօվ*

Հմմտ նաև հետևյալ դերանվանական ձևերը Հայերգից /Թիֆլիս, 1882/ եզ սեռ *ի-նոր*, էջ 204 եզ գործ *ինով*, էջ 199 հոգն սեռ-տր *ինանց*, էջ 197, 198, 200, 203, 205 և այլն

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§302. *Հարաբերական* ֆունկցիայով է հանդես գալիս *ո՛վ* հարցական դերանունը, որից վկայված են հետևյալ ձևերը. տրական *յում* 19_{29}, 21_{18}, $49_{19.36}$, 59_{27}, ԴԳ *ժէ, խէ, ճլզ.* բացառական *յումնէ* ԴԳ *ճլ, ճծք*: Առաջադիր *յ-ի* համար հմմտ. Հնչյունաբ. §151, ինչպես նաև *գ-ի* հարցականից հին լեզվում կազմված ձևերը. տր. *հիմ* /զուգահեռ ձևն է *իմ*/. մնք. *հիբար, հիզան, հիկէն* և այլն:

Վերջիններս, ոչ դասական ձևեր լինելով, համաձայնական են հատկապես քերականական և փիլիսոփայական գրականության մեջ: Բացառականում *յումէ* հին ձևի և *յումնէ* սխալ կազմված ձևի տեղն է գրավում անճնական դերանունների անալոգիայով կազմված *-նէ*-ով ձևը:

§303. Կանոնավոր հարաբերական դերանունն է, սակայն, *որ* /= դաս. որ/: Այն կորցրել է իր սկզբնական դերանվանական բնույթը և դարձել չլծեքվող հարաբերական մասնիկ՝ նոր պարսկ. ki[36] մասնիկի նման /koja = «որտեղ»/: Վկայություններ. *որ ու լինի* «ով էլ լինի» 23_{15}, 33_{8}. *զայն համանքն որ է պարգեւել* «այն արտոնությունը, որ նա շնորհել է» $185_{10.11}$. *այն համնայն որ է պարգեւել* $185_{18.19}$. *որ լինին* «որոնք են» 47_{17}. *որ կան* «որ գոնվում են L. 154_{22}», *որ գան* «որոնք գալիս են» 67_{24}. *որ տան* «որոնք տալիս են» 57_{23}. *որ չունանան* «որոնք չունեն» 51_{8}. *որ լսեցին* 47_{2}. *որ տվվին* «որոնք տրվում են» 25_{2}:

Ծան. 1. Հարաբերական կառուցվածքի մասին ավելի մանրամասն տե՛ս «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում:

Ծան. 2. Առանձին դեպքերում կիլիկյան գրական լեզվի մեջ նույնպես երևան են գալիս լծեքվող հարաբերական ձևերը: Ակնհայտ է, որ դրանք ժողովրդական չեն և հատուկ են միայն «բարձր» լեզվին: Օրինակ, Սմբատի Ժամանակագրության մեջ /հրատ. Dul. էջ 667/. *որոյ ամս* «որին». էջ 668, 671. *որոց նոցա* «որոնց»: *Որոյ* տրականը, փոխանակ *որում*, իրենից ներկայացնում է, բնականաբար, տրականի վրա ընդհանրացված սեռականի հին ձևը: Այդ ձևերն այլևս կենդանի չեն լեզվական զգայության մեջ, դա երևում է

---

[36] Հմմտ. նաև նոր հունարեն ποῦ /= «որտեղ»/ հարաբերական մակբայը, գերմանական բարբառային wo «որտեղ» փոխ. գրական welcher, welche, welches, հոլն. welche «որ»:

այն բանիկ, որ հոլովական հարաբերությունը բացահայտելու համար նրանց կողքին դրվում են յուրական դերանունները համապատասխան հոլովներով:

§304. Առաջին հերթին կենդանի արարածներին վերաբերող *որ* դերանվան կողքին գոյություն է ունեցել միայն անշունչ առարկաներ նշանակող *ինչ* հարաբերական դերանունը: Վկայություններ. *ինչ ու լինի* 19_7, 23_{24}, 27_5, 79_1. *ինչ իակի լինի L.* 157_{26}. *ինչ ու լինայ* 65_8. *ինչ հասնի* 21_7 *ինչ իր պիտի* 21_{41}, 49_{19}. *ինչ կտաւ ելնէ L.* $157_{16.17}$ *ցեղ ու է* 11_{22}, *ինչ ցեղ ու լինի* 17_{11}. *ինչ ցեղ դարպասն պատեհ տեսնու* $33_{3.11}$. *ինչ ասցին* 29_8. *ինչ կորսնէ մարդ* 65_7. *ինչ այրել լինայ* 15_{12} և այլն:

Թվում է, թե *ինչ* դերանվան անալոգիայով է կազմված *զոր* հարաբերական դերանունը. *զոր կան* «որոնք են» L. 178_8, 185_{12}. *զոր գան* «որոնք գալիս են» L. 178_9. *զոր անուանած լինի իր* «որ նրանն է ճանաչվում» 57_2. *զոր գրած է* «որ գրած է» Մխ. Հեր. 23:

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§305. Որպես հարցական դերանուն վկայված է *ո՞վ* vov /= դաս. *ո՞վ* ov/՝ *ո՞վ զիտէ* «երևի, ըստ երևույթին» կապակցության մեջ /էջ 39_3, $83_{14.15}$, Գիրք վասն. $84_{4.5}$, 104 և այլն/: *Յոմ* տրականի և *յումմէ* բացառականի մասին տե՛ս վերևում՝ §302: Այն բանիկ, որ *ո՞* նախնական ձևը /Հնչյունաբ. §154/ այլևս վկայված չէ գրականության մեջ, հետևում է, որ արդեն միջին հայերենի շրջանում այդ հին ձևն ամբողջապես դուրս է մղվել *ո՞վ* նոր ընդարձակ տարբերակի կողմից: Պարզ է, որ նոր հայերենը ծանոթ է միայն ընդարձակ ձևին. Տաճկ. Լեհ. Նխ. vov, Թֆ. ov, Ղրբ. hov և այլն:

Առարկաների համար հանդես է գալիս *ի՞նչ*. օրինակ. *ինչ կապակցութիւն* 9_5: *Ի՞նչ* ձևը որպես հարցական դերանուն, ինչպես հայտնի է, դեռևս խորթ է դասական լեզվին[37]: Դասական հայերենը գիտե միայն նախածանցավոր ձևեր. *զի՞նչ* ուղղականի և հայցականի համար և *յինչ* ներգոյականի համար: *Ի՞նչ* ձևն ընդհանուր է կիլիկյան և նոր հայերենի համար:

[37] Միայն Թ դարից կարելի է գտնել *ի՞նչ* ձևը որպես հարցական դերանուն: Հմմտ. Այտ. Բ 37:

§306. Հին հայերենի անորոշ դերանունները, որոնք համարյա անհետացել են ժամանակակից բարբառներից, կիլիկյան միջին հայերենում նույնպես մեծ մասամբ հնացել են և անհետացել: *Ոմն, իմն, իք գաւառական դերանուններն* ընդհանրապես այլևս չեն հանդիպում[38]: Պետք է ասել, որ *ինչ* և *ոք* դեռևս բազմիցս վկայված են և գործածության մեջ չեն մոռվել[39]: Սակայն այդ դերանուններն այլևս կենսունակ չեն եղել, և դա հետևում է նրանից, որ դրանց կողքին ու դրանց տեղում երևան են եկել նոր անորոշ դերանուններ: Անշունչ իրերի համար *ինչ /իմն, իք/* դերանվան տեղը որպես անորոշ դերանուն գրավել է *իրք*: Այդ նորակազմ դերանվան հետքերը հանդուն են մինչև վաղ դասական շրջան[40]: Կիլիկյան հայերենում այն արդեն ամուր արմատավորված է և վկայված, օր. *չլինի խօսել իրք* «որևէ բան ասած չլինի» 23_{23}. *դու ոչ ասցել ես իրք* 23_{9}. *չկորսէք վասն այնոր իրք* ԴԳ ժդ. *այլ չպարտի իրք* 61_{3}, ԴԳ ճդ, ճհե. *իրք պարտենայ* 81_{18}. *ի յայլ իրք* «այլ բանի մասին» 73_{1}. *այլ իրք չհասնի* «որևէ բան չհասնի» 83_{23}. *այլ իրք չառան* L. 155_{2}, 156_{6}. *իրք տայ* «որևէ բան տա» ԴԳ կա. *իրք առնուլ* «որևէ բան վերցնել» ԴԳ իէ. *իրք գայ* «որևէ գավ» $25_{16.22}$. *այլ իրք յոյզ կամ տուռնուառ* «որևէ այլ կռիվ կամ դատական գործ» 13_{30}. *իրք համանք* «որևէ հրահանգ, թույլտվություն» 79_{11}. *իրք բաժին* ԴԳ դ. *իրք պատճառ* ԴԳ բ և այլն:

Կենդանի արարածների համար դեռևս հանդիպող *ոք* դերանվան կողքին որպես համարժեք հանդես է գալիս *մարդ* բառը /հմմտ. գերմ. man/, որի ծագումը նույնպես հասնում է մինչև նախակիլիկյան շրջանը[41]: Օրինակ, *մարդ դատըսանի* «մեկը զանգատվում է» 37_{4}. *զովի մարդ* «որևէ մեկը

---

[38] *Իք* անորոշ դերանունից հանդիպում է միայն գործիականը, այն էլ միշտ *իւաք* ձևով, օր. ԴԳ խբ. հբ և այլն: Թվում է, թե *իւիք* հին գործիականը միացել է *-իւք* վերջավորությամբ գործիականների խմբին և վերջիններիս նման /հմմտ. վերևում §267/ ընդունել է *-աւք* վերջավորությունը: Այստեղ կարող է ազդեցություն գործած լինել նաև *իրաւք* նույնանիշ գործիականը /*իրք* դերանունից/:

[39] Օրինակ. *ոք* վկայված է 25_{10}, 33_{15}, 37_{4}, 41_{4}, 45_{9}, $55_{2.3}$, 73_{10}, 77_{23}, $79_{4.5}$, $81_{3.17}$, 83_{8}: Սեռ. *ուրուք* 83_{8}: Տր. *ումեք* 21_{16}: *Ոք մի*. որ, անշուշտ, ավելի կիլիկյան է, քան պարզ *ոք*-ը 23_{4}, 79_{12}: *Ինչ* վկայված է շատ հազվադեպ, օր. *ի յայլ ինչ բան* 15_{1}: Զուտ կիլիկյան է, սակայն, պահպանվող նհ. *ոչինչ* 9_{12}, 13_{1}, 19_{19}, 23_{14}, 55_{10}, $79_{4.7}$, 81_{23} և այլն: Նաև. *ընչիկ*, որ կազմված է *ինչ* դերանունից. *յընչիկ բանն* 9_{14}:

[40] Արդեն Ղազար Փարպեցու և Զգոնի մոտ գտնում ենք. *իրք մի պատմեաց նա-ամենայն իրք* և այլն: Ավելի մանրամասն տե՛ս Այտ. Ա. 84 հաջ.:

[41] Հմմտ. Այտ. Ա. 84 հաջ. և Բ 188:

գոնվի» 79_{16}. *մարդ ընդ մարդ* «մեկը մյուսի հետ» ԴԳ ճծք. *ի մարդ իրք տայ* «որևէ մեկին մի բան է տալիս» ԴԳ ճիա. *սպաննէ մարդ* «որևէ մեկը սպանում է» ԴԳ իը. *թէ մարդ սպաննէ* «եթե որևէ մեկը սպանի» ԴԳ իը. *եթէ ոք ի մարդ իրք տայ* «եթե որևէ մեկը մեկ ուրիշի մի բան տա» ԴԳ ճիա:

Սակայն *մարդ* և *իրք* բառերն ավելի հաճախ հանդես են գալիս ինքնուրույնաբար և *գոյականի ֆունկցիայով*: *Ածականի* ֆունկցիայով հանդես եկող հին անորոշ դերանունները փոխարինվում են *մի* թվական անունով, որն անթեք ձևով հաջորդում է որոշյալին[42]: Այսպիսով, *մի* թվականը դառնում է անորոշ հոդ: Այդ կիրառումների հետքերը կարելի է գտնել նաև հին ժամանակներում[43]: Ավելի մանրամասն տե՛ս «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում:

Հիշատակենք նաև *մի* բառը պարունակող հետևյալ արտահայտությունները. *բաժին մի* 39_{13}, 41_{7}. *չաք մի* «մի քանի որոշ քանակ, չափ», օր. *չաք մի օրեր* 25_{7}. *չաք մի իրք* 53_{5}, 75_{3}, նաև Գիրք վաստ. 152, ԴԳ ճժդ, ճծք և այլն: *Մէկ մի* որպես որոշակի միավորի արտահայտություն. *մէկ մի յերդմծնոյն* «երդվածներից մեկը» 51_{13}. *մէկ մի յիրմընկնէ* «նրանցից մեկը» 61_{16} և այլն:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§307. Հին լեզվից կիլիկյան հայերենում պահպանվել է *այլ* /լատ. alius/: Վկայություններ. *ի յայլ բան* «ուրիշ գործի» 25_{5}, *յայլ տեղի* 71_{8}, *ի յայլ այրկէ* 37_{18}. *այլ անսիզվորք* $41_{7.10}$. *զայլ քուրվահին* 21_{8}. *այլ քոյրվոյն* 21_{10}. *զայլն* 59_{7}. *յայլն* L. 157_{11}, հոգն. ուղղ. *այլքն* ԴԳ հ, ճկք. *զայլոյն* 39_{21}. *զայլոց իրք* $65_{1.3}$. *յայլոց ձեռք* 77_{16}: Հին բուն հոգնակիի կողքին երևան է գալիս *ն* վերջածանցով ընդարձակված եզակիի ձևը հոգնակիի ֆունկցիայով: Օրինակ. *այլն* «մնայածները» 35_{28}, 41_{12}. *զայլն* L. 155_{18}. *այլն* ուղիղ իմաստով «մնայածը, մնացորդը» = «մնայածները»: *Մէկ* թվական անվան հետ միանալով *այլն* տալիս է մի նոր դերանուն *մէկայլն*[44] =«մյուս» /լատ. alter/, որ ամբողջապես փոխարինել է հհ. *միւս/մեւս/* դերանվանը: Վկայություններ. *մէկայլն* 21_{25}, $27_{6.7}$, 29_{19}, 31_{5}, 41_{20}, 57_{17}. *զմէկայլն* 31_{16}, 69_{3}, 77_{9}. *ի մէկայլն* «մյուսին» ԴԳ լա. *մեկայլին* «մյուսին» 41_{19}. *մեկայլին բանն*

---

[42] Արևելահայերենում, սակայն, *մի*-ն նախորդում է որոշյալ գոյականին:

[43] Հմմտ. Այտ. Ա 84:

[44] =հհ. megal նույն նշանակությամբ:

«մյուսի գործը» 69_6. *զմէկայլին իրաւունքն* 69_1: Ածականի ֆունկցիայով. *մէկայլն դհին* «մյուս կողմը» 39_{16}. *ի մէկայլն դհին* «մյուս կողմի վրա» L. 179_5, $186_{5.7.8}$. *մէկայլ կէսն* «մյուս կեսը» 55_{22}. *զմէկայլ կէսն* /հայց./ $19_{11.12}$, $21_{4.20}$, 49_4. *մէկայլ կնկանն* $47_{15}{}^{45}$: Համապատասխանաբար դաս. *այլ ոմն, այլ ոք* արտահայտությունները կիլիկյան հայերենում փոխարինվում են *մէկ մի այլ* կապակցությամբ 57_8:

Թե՛ կիլիկյան հայերենին, թե՛ ժամանակակից բարբառներին խորթ *ամենայն* /=**ամեան-այն*/[46] դասական դերանվան տեղը կիլիկյան հայերենում[47] գրավել է *ամէն* /=**ամեան*/ պարզ բառը: Դասական լեզվի մեջ *ամէն* չի օգտագործվում որպես ինքնուրույն բառ, այլ միայն որպես բարդության անդամ: Որպես ինքնուրույն բառ այն երևան է գալիս արդեն հին ժամանակներում *ոչ մաքուր դասական գրողների մոտ*, ինչպիսին է Փավստոս Բուզանդը: Վկայություններ կիլիկյան հայերենի համար. *յիր ամէն կենդանութիւնն* 39_2, 45_{23}. *զիր ամէն ժամանակն* 23_{13}. *ամէն ծռութիւնն* «ամբողջ մեղքը» 67_7. *զամէն վզէնն* «ամբողջ վնասը» 73_{16}. *զամէն վարձն* 71_{10}. *ամէն դատերայն* «բոլոր քույրերին» 37_{25}. *ամէն իրաւներոյն* «բոլոր իրավունքների» 59_{29}. սեռ. *ամենի* /*ամէնի*/ հետևյալ արտահայտություններում. *զամէնին կէսն* 45_{15}, 55_{22}. *վանց ամենին* 21_{12}, ապա *ամենին* 41_9, 49_{26}, 53_{19}, 65_9 և այլն: Բացառ. *ի յ-այլ ամենէն* 55_9. *ամէնն* որպես գոյական «ամեն ինչ» 47_{14}, 49_{16} և այլն. *զամէնն* /հայցականը/ 19_{14}, 45_{14}, 47_{22}: *Ամենայնք, ամենեքեան, ամենեքին* դասական հնացած հոգնակին փոխարինվել է *ամէնն* դերանունով, որ կիլիկյան հայերենում[48] ձեռք է բերել հոգնակիի ֆունկցիա. օր., 21_5, L. 193_4, ԴԳ լ, կբ[49]: Ապա դաս. *իւրաքանչիւր. անձնիւր. անկնիւր* /լատ. unusquis-que/ դուրս են մղվել կիլիկյան հայերենից և փոխարինվել *ամէն մէկ*[50] նոր բառակապակցությամբ 39_{21}, 47_{19}, ԴԳ հ. հայց. *զամէնն մէկ* ԴԳ լա. սեռ.-տր. *ամէն մէկի* ԴԳ լա. բացառ. *յամէն մէկէ* Բ ծը: Անհետացել են նաև *-պէս, -պիսի* բաղադրիչներով հին հարաբերական դերանունները: *Այսպէս, այսպիսի, այնպէս* դասական դերանունների տեղը գրավել է *հայկց* նախնական մակբայը.

---

[45] Նաև Գիրք վասն. 211 *զմէկայլն*, Մխ. Հեր. *մէկայլ հոգան* էջ 18. *մէկայլ օրն* էջ 103. *զմէկայլ կեղ ջերմանս* էջ 13. *ի մէկայլ նոպային* էջ 81. *մէկայլ ջերմանն* էջ 89. *մէկայլին* էջ 61:

[46] Hübschmann, Armenische Grammatik, էջ 416:

[47] Ինչպես նաև նոր հայերեն բարբառներում:

[48] Նույն ձևով նաև նոր հայերենում /հմմտ. Այտ. Բ 35/:

[49] Օր. *Կարեն ամենն երթել* ԴԳ կբ:

[50] Նոր հայերենում amen mega:

որ մտել է դերանվանական գործածության մեջ օրինակ, *հայնց կաւ* 25_{24}, *ի հայնց տեղի* 15_{25}, *հայնց մարդոյ* L. $155_{11\,12}$ Դրանից բացի, հին կորած հարաբերական դերանունը փոխարինելու համար կիլիկյան հայերենն ունի կապակցություններ *ցեղ* բառի հետ, ինչպես՝ *այս ցեղ, այտ ցեղ, այն ցեղ* Մանրամասն տե՛ս Բառարանում

Դասական հայերենի *-չափ* բաղադրիչով քանակական հարաբերական դերանվանը կիլիկյան հայերենում համապատասխանում է վերջինի հետ նույնական մի դերանուն՝ *մի, չաք* հնչյունական ձևով

Կիլ

այսչաք/ս/ /= դաս այս-չափ/ս//

այտչաք/տ/ /= դաս այդ-չափ/դ//

այնչաք/ն/ /= դաս այն-չափ/ն//

Վկայություններ *այսչաք է ուժերոյն համբերութիւն* 27_{16} «այնչափ է հետաձգման ժամկետն իրավունքի խախտումների ժամանակ», *զայնչաքն* /հայց/ 53_{6} Դրա կողքին, պարզեցված *այ*-ով, *զ-անչաքն* 55_{6}, և առաջադիր *հ*-ով *հանչանք հանչաք իշխանութիւն* 53_{4}, նաև 77_{10}, ԴԳ ճժե, ճժգ Հետադաս *մի*-ով *հանչաք մի ժամանակ* «այնքան ժամանակ» 67_{28} *հանչաք մի պապխուն այնէ* «այնքան պատասխան տա» 67_{16} *հանչաք մի որ*, ԴԳ ճք *հանչաք մի ժամ* «այսինչ ժամանակ» ԴԳ ճժբ Որպես բարդության առաջին բաղադրամաս *այս*-ի հետ զուգորդվում է *իսայ* ցուցական դերանունը՝ *իսայ չաք/ս/* կապակցության մեջ Վկայություններ *զիսայ չաքս* /հայց/ $75_{18\,19}$ *զիսայ չաք դեկանս* ԴԳ ճժբ

Ծան Մխիթար Հերացու մոտ, սովորականի պես, այս կապակցության մեջ կիլ *չաք*-ին միացել է *-ս* հոգնակերտ վերջածանցը օրինակ, Մխ էջ 58 գտնում ենք *այնչաք-ս/ն/* ձևը

-չաք /= *-չափ*/ վերջավորությամբ հարաբերական դերանունը փոխարինում է *-քան* վերջավորությամբ հին հարաբերական դերանվանը, որ նույնպես կորել է Պահպանվել է միայն *քանի* բառը, որ օգտագործվում է նաև մակբայական ձևով, օր, էջ 17_{24}

Վերջապես հիշատակենք, ի տարբերություն դասական լեզվի, կիլիկյան հայերենին և նոր բարբառներին հատուկ *-ի* վերջավորությամբ դերանվանական ածականները, որոնք աստիճան, կարգ են նշանակում տարածության և ժամանակի մեջ Դասական հայերենում նրանց համապատասխանում են *-հին*-ով դերանվանական ածականները

առջի /= դաս *առաջին*/
վերջի /= դաս *վերջին*/
յետի | /= դաս *յետին*/
հետի |
ներքի /= դաս *ներքին*/
վերի /= դաս *վերին*/[51]

Վկայութիւններ. *յառջի օրն* 25_{27}. *առջի տարապայն* 25_{11}. *առջի կնկանն* $47_{11\,16}$. *առջի այրկանն* $37_{20\,23\,26}$, 39_4. *առջի այրն ԴԳ հե առջի այրիկն ԴԳ հը*. *առջի պառկն ԴԳ ի զառջի գոգն Բ միդ*. *զառջի երեսն Բ ճհդ*. *յառջի օրէն Ա* 187 *յառջի նուագէն Ա* 167 *յառջի այրկէն* 37_{25} *վերջի այրիկն* $39_{4\,5}$, *յետի աւրն ԴԳ ճհէ յետի սահմանն Բ մլը*. *յետի ազգ արծվիքս Բ մկպ*. *յետի փողն ԴԳ ճլե զյետի պառկն ԴԳ ի զյետի աւրհնութիւնն ԴԳ լը*. *յետի այրկանն* 39_3 *յետի կնկանն* $47_{11\,17}$ *յետի դատերայն* 39_1 *հետի այրկանն* $37_{20\,21}$ *ներքի դեհն Բ մծէ*, *Ա* 202 *վերի դեհն Ա* 160, 241:

Ըստ ծագման այդ դերանունները համապատասխանաբար մակբայների սեռականներն են ածականի ֆունկցիայով[52] սեռ *առջի*, ուղղ *առաջ*, սեռ. *վերջի*, ուղղ *վերջ*, սեռ. *յետի*, ուղղ *յետ* և այլն

Ինքնուրույն գործածութեան մեջ, սակայն, պահպանվել են *ն*-ով հին ձևերը. օր., *առջինն* 41_{12}, *յառջնոյն* 47_{17}, *վերջնոյն* 37_{23}, *ի վերջնոյն* 37_{26}, *ի յետինն* 41_{15}, *յետնոյն* 47_{18}

Նույն տիպի ձևերն են նոր արևմտահայերենում հանդիպող հետևյալ դերանվանական ածականները

առջի	*առաջ* մակբայից	տակի	*տակ* մակբայից
վերջի վերջ	*վերջ* մակբայից	վրայի	*վրայ* մակբայից
ետի, հետի	*ետ, հետ* մակբայից	ետքի	*ետք* մակբայից
ներսի	*ներս* մակբայից	առաջքի	*առաջք* մակբայից
դրսի	*դուրս* մակբայից	առջեւի	*առջեւ* մակբայից
քովի	*քով* մակբայից	ետեւի	*ետեւ* մակբայից և այլն

[51] Այս Բ 51 հիշատակում է որպես հին ռամկական ձևեր նաև *ներքի, դիմացի*. Արդեն 839 թ մի արձանագրության մեջ վկայված է *ի վերի կաւարն* արտահայտությունը /Այս Ա 143/

[52] Համմ Այս Բ 50

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԱՍՆԻԿՆԵՐ

ՄԱԿԲԱՅՆԵՐ

§308 Նոր և դասական լեզվին խորթ են հետևյալ, մեծամասնությամբ ղերանվանական մակբայները, որոնց վկայությունները բերված են բառարանում

հայնց «այնպես» /Հնչյունաբ §148/՝ միջին հայերեն տարբերակների կողքին այնց, *հանց* և *հէնց* /արևելահայերեն/[53] Հմմտ նոր հայերենում՝ Թ֊ esenç [=**այս-անց*], ehenç, etenç [=**այտ-անց*], enenç [=**այն-անց*], ըստ Том էջ 216 Ապա նոր հայերեն անալոգիայով կազմությունները sanç, nanç, esanç, enanç, բոլորն էլ «այսպես, այնպես» նշանակությամբ /Այտ Բ 129/ *Համնչաք* «այնչափ» /Հնչյունաբ §151/, ինչպես նաև նույնանիշ *այնչաք* = դաս *այնչափ*, *այդչաք* = դաս *այդչափ*, *այսչաք* = դաս *այսչափ* /Հնչյունաբ §102/ Ապա գոյություն ունեն *-չաք* բաղադրիչով հետևյալ կազմությունները *միաչաք* = դաս *միաչափ*, *որչաք* = դաս *որչափ հայկեղ* «այնպես, այն ձևով» /Հնչյունաբ §151/ *Հիմա* /գրվում է *յիմայ*/ Համապատասխան նհ ձևերի վերաբերյալ տե՛ս Բառարանում *Հիմայ* = h+ima /առաջադիր h-ով/= նպ īme «հիմա»

Հօս, հօտ, հօմ, մեծ մասամբ *ի* նախդիրով՝ *ի հօմ, ի հօս, ի հօտ* Դրանց կողքին նաև ստուգաբանական առումով ավելի ճիշտ գրությունը *հոն, հոս, հոտ* Այդ մակբայը hos, hod, hon ձևով պահպանվել է Տաճկ Լեհ, Նիս և այլ բարբառներում Ինչ վերաբերում է նրա ծագմանը, կարելի է ենթադրել, որ hos, hod, hon = h-o-s, h-o-d, h-o-n Վերջին տարրը, անշուշտ, -s, -d, -n դերանվանական հոդն է բառակզբի հհ միշտ էլ կարելի է բացատրել որպես առաջադիր հոդազ Համենայն դեպս, այստեղ մենք գործ ունենք *դերանվանական* մակբայի հետ, որի միջին -o- տարրը հեշտությամբ կարելի է նույնացնել so-r-a, do-r-a, no-r-a, no-k^{c}-a, no-in դասական կապակցությունների -o- տարրի հետ Մենք այստեղ, իրոք, գործ ունենք նախնական յուրական դերանվան հետ Դրա օգտին խոսում է այն փաստը, որ hos, hod, hon ձևերին կանոնավոր ձևով նախորդում է i նախդիրը Ի միջի այլոց, արդեն նոր գրական հայերենում /Այտ Բ 115/ իրար համարժեք են հանդիսանում hoske և aske «այստեղից» hodge և adge «այդտեղից», honge և ange «այնտեղից»

---

[53] *Հէնց* ձևը գտնում ենք ընդհանրապես որոշ արևելահայերեն առանձնահատկություններ յուրացրող Վարդանի մոտ /Պատմ 157$_{11-24}$ և 160$_{4}$/

նաև /Այտ. Բ 111/ *այստեղս* և կողքին *հոս տեղս*, *այնտեղ* և կողքին *հոն տեղ* և այլն: Այտընյանի ենթադրությունն հակառակ /Քնն. Քերակ. Բ 129/, այս դերանունը չի կարող փոխառված լինել արաբ. hōnā «այստեղ» դերանունից, և դա մի քանի պատճառով. ա) Կիլիկյան հայերենը հստակ կերպով տարբերում է hon «այնտեղ», hos «այստեղ», hod «այդտեղ», իսկ արաբ. hōnā նշանակում է «այստեղ»: բ) Նշանակությունն այդ ենթադրվող փոխառությունից բացի, հարկ կլիներ ընդունել, որ hon փոխառյալ ձևից պետք է լրիվ ազատ և ինքնուրույն կերպով կազմվեին hos և hod ձևերը: գ) Հաշվի առնելով, որ փոխառությունները հայերենին անցնում են մեծ հավատարմությամբ, և ուրիշ դեպքերի անալոգիայով, փոխառության դեպքում արաբ. hōnā հայերենին նույնպես պետք է անցներ որպես hona և երբեք որպես hon- կիլիկյան միակ վկայված ձևը: Սակայն նոր հայերենում հատուկենտ երևացող husa, huna ձևերը /Այտ. Բ 129/ կարող էին առաջանալ բուն հայերեն hos և hon ձևերից՝ արաբական հիշյալ մակբայի նմանությամբ:

Վերջապես, կարելի է մի հարց ևս դնել, ի՞նչ հարաբերություն մեջ են գտնվում մհ. և նհ. hon մակբայը և հհ. *ծս* մասնիկը: Վերջինիս դերանվանական ցուցական բնույթը պարզորոշ կերպով երևում է հետևյալ դեպքերից. *ծս եւ ծս* տάδε τάδε «այնպես և այնպես, այնպես կամ այնպես», *ծս անդր*, *ծս իսկ* «այնտեղ»:

Այլ վայր, ավելի ճիշտ՝ *այլվայր*, *այլուայր* «նորից». հմմտ. Բառարանը. դրան ազգակից է նույնանիշ *այլուի*, Լեհ. àłvə Han. 23:

Առջեւ դաս. *առաջեաւ*. *յետեւ*, *հետեւ* դաս. **յետեաւ*. *վերեւ* դաս. **վերեաւ*. *ներքեւ* դաս. **ներքեաւ*. *դրուցեւ* դաս. **դրուցեաւ*. *վերջեւ* դաս. *վերջեաւ*. *յերջեւ* դաս. **վերջեաւ*. *ստորեւ* դաս. **ստորեաւ*, ըստ Հնչյունաբ. §82: Բերված մակբայներն օգտագործվում են նաև նախդիրների դերում, ինչպես նաև հետևյալները. *հետէ* /*յետէ*/ «հետո, հետև». *ընդ ներքսէ* «մեջ, ընթացքում», ավելի նոր ձև *ընդ նեքսէ*, *ընդ դրացէ* և *ընդ դրուցէ* «դրսում, դուրս». *ի դրացէ* «դուրսը, դրսից». *ի դուրք* «դրսում, դուրս». *ի ներք* «ներսում»: Նույն տիպի միջին հայերեն մակբայական արտահայտությունները հիշատակված են Այտընյանի մոտ /Բ 127/ և հանդիպում են մեծ մասամբ Մխ. Հերացու մոտ. *ցներքս*, *ցներքսեւ*, *ցներքեւ*, *ցներքսէ*, *ցդրուց*, *ցդրուցէ* և այլն:

Անտիւ «այնտեղից», *աստիւ* «այստեղից», *յ-այնկի* «այնտեղից, հինգնիվանից», *յ-այնկիւ* «այնտեղից» մակբայական բացառականների մասին խոսվել է արդեն վերևում՝ §298: -Մասնիկի /նախդրի, մակբայի/ և դերանվանական հոդի՝ հին հայերենին խորթ մակբայական կապակցությունների մասին տե՛ս «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում:

§309. Ոչ այնքան հնչյունական, որքան իմաստային առումով հին լեզվից տարբերվում են *ի հետ, յետ.* ա) «հետ, միասին», բ) «հետո». *ի հետ ու ի հետ.* i h'ed u i h'ed, i h'ed v i h'ed *ի հետ ի հետ* «աստիճանաբար, կամաց-կամաց». *հետ մի այլ* «մեկ, ուրիշ անգամ». *վաղ* «էգուց» /դաս. «վաղ, հին»/. *ի վաղէ* «վաղուց». հնչյունական առումով նույնպես տարբերվում է */յ)-եգուց* «առավոտ» և «վաղը» = դաս. *այգուց* «առավոտ շուտ»:

Այլ բառի՝ որպես համեմատական կառուցվածքի անդամի մասին տե՛ս «Շարահյուսական առանձնահատկություններ» բաժնում. *այլ չ-* [թե՛ ժամանակի, թե՛ քանակի իմաստով, հմմտ. Բառարանը. *մենակ* «իսկույն, անմիջապես» ավելի նոր *մինակ* ձևը = դաս. *միայնակ*. հմմտ. Հնչյունաբ. §83:

§310. *Ոչ ներանվանական* մակբայներից լեզվի մեջ երևան են եկել հետևյալ նոր ձևերը. *իսկի և իսկիկ* «իսկապես» = դաս. *իսկ. վատահ* «անշուշտ» = դաս. *վատահ. առենա՝ ս-*ով մի կազմություն[54]. *լուկ* = դաս. *լոկ. քահրակ* «մանավանդ». *ի լման* «լրիվ». *ճիճն և ի ճիճն* «հաճախ». *քիչ* = նպա. kīč: Դասական *ոչ* ժխտական մասնիկը փոխարինված է *չէ* բառով: Դա վերաբերում է նաև նոր հայերենին: Սակայն, եթե ժխտման է ենթարկվում միայն մի առանձին հասկացություն կամ նախադասության մաս, կիլիկյան և նոր հայերենում օգտագործվում է *ոչ* լրիվ ձևը: Բայց եթե ժխտման է ենթարկվում բայը, այսինքն՝ ամբողջ նախադասությունը, դասական *ոչ* բառը փոխարինվում է *չ-* մասնիկով: *Ոչ-ոչ* կրկնակի ժխտման մասին տե՛ս «Շաղկապներ» բաժնում:

Մակբայական ինքնատիպ կապակցություններից ու դարձվածքներից հանդիպում են *զինչ կեղ* «ինչպես», *ո՛վ զիտէ* «հնարավոր է, գուցե», *ոտին մի* «մի անգամ»:

§311. Վերջապես, կիլիկյան և դասական լեզվի համար *ընդհանուր* են հետևյալ մակբայները. *ուր* 39_{13} Սարվ. արտ.. *էր* «ինչու» 9_{21}, 47_{26}, 81_{15}. *քանի* 37_5. *աւելի* 37_5, ուժեղացումով *այլ աւելի* Լ. 158_9, 11_{23}, 27_{16}, $29_{7.24}$, 67_{26}. *մէն* «միայն» 29_{24}, 53_7, 79_5. *շատ*, որ կանոնավոր ձևով կապված է եզակիի հետ, որի կողքին այն դրվում է որպես որոշիչ. $47_{27.28}$, 24_4: Առհասարակ ինչպես հին, այնպես էլ կիլիկյան հայերենում ամեն մի ածական կարող է օգտագործվել նաև որպես մակբայ:

---

[54] Ինչպես, օրինակ, *հանդարտ* ածականից *հանդարտուս* մակբայը, *արագ* ածականից *արագա* մակբայը, *թեթեւ* ածականից *թեթեւա* մակբայը, *առատ* ածականից *առատա* մակբայը և այլն, և այլն:

§312. Հին լեզվի *զ-, ի, ց* նախամասնիկները, որոնք գրեթե ամբողջովին անհետացել են նոր հայերենից, կիլիկյան հայերենում պահպանվել են որպես անվանական հոլովման օժանդակ գործոն, ինչպես դա ցույց է տրվել վերևում: *Ընդ, ըստ, առ* հին նախդիրները նույնպես պահպանում են իրենց գոյությունը: Այդ մասնիկների նախնական տիրող դիրքը, սակայն, արդեն կիլիկյան հայերենում խիստ սահմանափակված է. իսկական նախդիրները, դասական լեզվի հետ համեմատած, երևում են խիստ հազվադեպ: Նրանց հաշվին ընդլայնվել է անխնական նախդիրների, մեծ մասամբ նախնական մակբայների ոլորտը: Օրինակ, դաս. *ընդ* տրական հոլովով փոխարինում է կիլ. *հետ, ի հետ*. դաս. *ընդ* գործիական հոլովով - կիլ. *ներքեւ*. դաս. *առ* տրականով «մոտ» - կիլ. *ի խէչ*. դաս. *առաջի* սեռականով - կիլ. *առջեւ, յառջեւ*. դաս. *զկնի, զհետ* - կիլ. *հետ, ի հետ*. դաս. *յետոյ* - կիլ. *յետեւ*. դաս. *ներքոյ* - կիլ. *ներքեւ, ընդ ներքաէ*. դաս. *վերոյ, ի վերոյ* - կիլ. *վերեւ*. դաս. *արտաքս* - կիլ. *ի դուրք, ընդ դրացէ, ընդ դրուցէ*. դաս. *բայց ի, բայց ի* - կիլ. *զարհի, զարդ* և *զարհեալ ի* նախամասնիկով ու բայաոռականով. դաս. *ի-հետէ*- կիլ. *ի-վեր* «/այսինչ ժամանակից/ ի վեր»:

Ծան. Հին պատմական /*զ*+բայաո./ և պարաոռական /*զ*+գործ./ հոլովների կորստի մասին հմմտ. «Շարահյուսական առանձնահատկությունները»:

§ 313. Հիշված կիլիկյան նախդիրներից նախամասնիկավորները մեծ մասամբ դրվում են գոյականից հետո, այսինքն՝ հետադաս կապ դառնալու ճանապարհին են գտնվում. նոր հայերենը դիտե մեծ մասամբ միայն հետադաս կապեր. մեծամասնությամբ նոր կազմություններ, որոնք դեռևս խորթ են միջին հայերենին[55]:

§314. Հին լեզվից անցած *իսկական* նախդիրներից կիլիկյան հայերենը պահպանել է հետևյալները. *վանչ* դաս. *վասն* /Հնչյունաբ. §148/. *քանչ* համեմատության ժամանակ. դաս. *քան* /Հնչյունաբ. §148/. *ինչու* դաս. *մինչեւ*. *ինչվի, ինչչի* դաս. *մինչեւ ի* /Հնչյունաբ. §143/: Վերջապես, հին հայերենի

---

[55] Այսպես, օրինակ, Տաճկ. ունի հետևյալ հետադաս կապերը. k°ov, hamar /նաև Լեհ./, meč, bes /*պէս*/, ad'en «ժամանակ», megd'eγ /*մեկտեղ*/ և այլն. Ազ. օր., kešt /*=կուշտ*/, tok /*=տակ*/ և այլն: Բայց արդեն ուշ կիլիկյան հայերենում առանձին դեպքերում գտնում ենք *համար* հետադաս կապը: Օրինակ, Զգր *ծկղ գլխացավի համար*. նաև ԴԳ-ղե մի անգամ ունի. *այս ամէնս անճարկուվթեան համար է գրած*:

հնչյունական ճևով պահպանված *առանց* 13_6, 17_{22} = Թֆ. aranç[56], Լհհ. aranç[57], Ագ. əŕənç[58], Ցղն. əŕunç, uŕunç[59]:

Շ Ա Ղ Կ Ա Պ Ն Ե Ր

Ա. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§315.

Կիլիկյան	Դասական
ու. նաև *ու վ-, վ* ձայնավորներից առաջ. Հնչյունաբ. §§76. 156, նոր հայերեն u, ə,hu	*եւ*
ու-ու	*եւ-եւ*
նա-նայ, որ ներմուծում է հետևանքի նախադասությունները: Նհ. na, nan և այլն:	*եւ*, որ կարող է հանդիպել հետևանքի նախադասություններում:
ամ «բա, հապա, հետևապես»/ = նպ. ham «նաև»/	*ուրեմն, ապա ուրեմն*
հապա, ապա	*ապա*
այլ. նոր հայերեն al, el	*այլ, բայց, նոյնպէս, նաեւ*
կամ $9_{17.18}$	*կամ*
կամ-կամ 27_5, 59_{38}	*կամ-կամ*
ոչ-ու ոչ $23_{9.10}$. *ու ոչ- ու ոչ* 75_{13}, L. $156_{17.18}$	*ոչ-ոչ*

Բ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§316.

Կիլիկյան	Դասական
որ	
ա) պատմողական	*թէ, եթէ*
բ) հետևանքի	*զի, որպէս զի*
գ) նպատակի. հմմտ. Տաճկ., Նխ. vor, Թֆ. vur /Том. 219/	
հմմտ. «Շարահյուսական առանձնահատկություններ»	
եւի հմմտ. Լհհ. yep, Նխ. yep, Ագ. ib, ibor	*յորժամ, մինչ*

[56] Том. Тифл. диал. էջ 213:

[57] Нап. էջ 27:

[58] Ս. Սարգ., էջ 127:

զէդ, զէտ ա) «ինչպես» իմաստով բ) «հենց որ» իմաստով	*իբր, իբրեւ, մինչ, որովհետեւ*
ինչուր «մինչև որ...»: Որպես շաղկապ այդ իմաստով կարող է կիրառվել նաև *ինչվի* նախդիրը: Հմմտ. Լեհ. inčvan, նաև Տաճկ. և Նխ.:	*մինչեւ*
Ժամանակակից հայերենում, որքան հայտնի է ինձ, հհ. *եթէ* շաղկապը չի պահպանվել: Այսպես, Լեհ. Տաճկ., Նխ., Թֆ. որպես պայմանի շաղկապ գիտեն միայն *թէ*: Մեր կիլիկյան աղբյուրներում, ճիշտ է, դեռ առկա է հհ. *եթէ* շաղկապը, բայց նրա կիրառության ոլորտը սահմանափակված է այնքանով, որ այն կարող է դրվել միայն նախադասության սկզբում: Սակայն, եթե պայմանի շաղկապին նախորդում է մեկ այլ շաղկապ, միշտ էլ դրվում է *թէ*: Օրինակներ. *եթէ հիւանդ* 31_{18}. *եթէ կենայ* 37_{4}. *եթէ առնու* 37_{13}. *եթէ լինի* 41_{17}. *եթէ մեռնի* 49_{8} և այլն: Սակայն ավելի կարճ ձևը միշտ էլ դրվում է հետևյալ կապակցություններում. *նա թէ* 11_{18}, 13_{17}, 15_{26}, $43_{2.9}$, 61_{7}, 63_{14}, 77_{13}, 79_{11} և այլն. *ապա թէ* 11_{21}, 19_{23}, 23_{14}, 81_{11} և այլն. *որ թէ* 17_{7}, 23_{15}, 67_{30}. *ամ թէ* 59_{6}. *եւ թէ* $47_{10.33}$, $49_{11.29}$ և այլն. *բայց թէ* 49_{21} և այլն: Բայց մենք երբեք չենք գտնի կիլիկյան հայերենում, օր., *եւ եթէ*, որ սովորական է դասական լեզվի համար: Դրա փոխարեն, իսկական կիլիկյան է, օրինակ, *թէ չի* ԴԳ ճհէ, *թի չի* 13_{22} ԴԳ ճհէ[59] դարձվածքը: Արդեն միջին հայերենում նկատվում է հհ. *եթէ* լրիվ ձևի նահանջը: Հիշատակենք նաև մեծ մասամբ *թէ*-ի հետ միասին հանդիպող *քանեզ* բառը. *քանեզ-թէ* «բայց, այն դեպքից երբ...»:	*թէ, եթէ* *բայց եթէ*

[59] *Թի չի* առաջացել է *թէ չի* ավելի հին դարձվածքից առնմանության միջոցով: *Զի* հնչյունական ճևը *թէ չի, թի չի* կապակցության մեջ. իր կողմից, առաջացել է ավելի հին *չէ*-ից *չիք* բառի, և հատկապես ժխտական ներկայի եզ. 3-րդ դ. *չի* ճևի նմանության:

ՋԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§317. *Հա՛յ* 57_{18}. *ահա, ահայ, ահայ վկայքս* 81_{21}. *ահա որ այլ վայր մէկ կու գայ* 83_{11}:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՆԱՐՀՈՒՄ

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§318. *Թվի* և *դեմքի* տեսակետից կիլիկյան հայերենը պահպանել է հին վիճակը:

Սեռ. Անցողական բայը, դասական լեզվի նման, ունի *ներգործական* և *կրավորական* սեռ. վերջինս նոր, դասական լեզվին անծանոթ մի ձևով: Բայի այդ միջին հայերենում, ի տարբերություն հին լեզվի, առաջացել է *չեզոք* կամ *միջին սեռը*, որ տարբերվում է ներգործականից և կրավորականից:

ներգործական	չեզոք	կրավորական
բաժնեմ	*բաժնիմ*	*բաժնուիմ*
եփեմ	*եփիմ*	*եփուիմ*
այրեմ	*այրիմ*	*այրուիմ*

Սեռերի նույն տարբերությունը գիտե նոր հայերենը*: Այսպես, Տաճկ. /ըստ Այտ. Բ 89/:

ներգործական	չեզոք	կրավորական
կտրեմ	*կտրիմ*	*կտրուիմ*
այրեմ	*այրիմ*	*այրուիմ*
ազատեմ	*ազատիմ*	*ազատուիմ*
մարեմ	*մարիմ*	*մարուիմ*

Դասական լեզվի մեջ չեզոք ու կրավորական սեռերը համընկնում են. չեզոք *ի*-ով հիմքը միաժամանակ կատարում է կրավորականի դերը: Սեռերի տարբերակումը հնարավոր դարձավ միայն միջին հայերենում, երբ կրավորականի հատուկ հիմքի երևան գալուց հետո հին *ի*-ով հիմքը կորցրել էր կրավորականի բնույթը և պահպանել միայն չեզոքի ֆունկցիան, այնպես որ սեռերը տարբերվել են նաև ձևականորեն - ամեն մեկը ճեռք է բերել արտահայտության հատուկ մի ձև:

ԳԼՈՒԽ I

ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԸ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԸ

§319. Հին լեզվի մեջ առկա էին չորս տեսակ խոնարհում՝ ներկայի *ե, ի, ա, ու* խոնարհիչ (լծորդ) ձայնավորներով: Նոր հայերենում այդ տարբերությունը մեծ մասամբ հարթվել է:

Երկու ժամանակակից գրական լեզուներն էլ, ինչպես նաև Ախալցխայի բարբառը /Том. էջ 63/ ունեն միայն *ե, ի* և *ա* խոնարհումը: Հին *ե* և *ի* խոնարհումները, սակայն, անհետացել են Կուտիի և Նախիջևանի ցեղակից բարբառներում: Արևելյան բարբառներից Թիֆլիսի բարբառը գիտե միայն երկու խոնարհում՝ անորոշ դերբայի *-il* և *-al* վերջավորություններով, որոնցից առաջինն ընդգրկում է հին հայերենի առաջին, երրորդ և չորրորդ խոնարհումները, իսկ վերջինը համապատասխանում է հին հայերենի երկրորդ խոնարհմանը[60]: Ցղնայի և Ագուլիսի արևելյան բարբառները նույնպես ունեն միայն *ի* և *ա* խոնարհում. վերջին բարբառում *a*-ն դարձել է *o*: Պետք է ասել նաև, որ այդ խոնարհումն առկա է միայն մի քանի ձևավանակ բառերում: Այլ դեպքերում *ա* հիմքերը դարձել են *ի* հիմքեր: Համմ. Ս. Սարգ. էջ 108 հաջ.:

Միջին հայերենի կիլիկյան բարբառը, սակայն, տարբերում է խոնարհման չորս տեսակ ներկայի *ե, ի, ա* և *ու* լծորդ ձայնավորներով: Առանձին խոնարհումների ներսում, սակայն, հարաբերությունները նկատելիորեն փոխվել են. մի կողմից ընդլայնվել է ներկայի ընդարձակ կամ ածանցավոր հիմքերի ոլորտը, մյուս կողմից որոշ *պարզ* հիմքեր հանդես են բերում դասական լեզվից տարբեր թեմատիկ ձայնավորներ:

I. ՆԵՐԿԱՅԻ Ե-ՈՎ ՀԻՄՔԸ

1. Պարզ հիմքեր

§320. ա) Արդեն դասական լեզվի մեջ առկա են հետևյալ *ե*-ով հիմքերը. *այրեմ*[1], *ասեմ*[2], *բերեմ*[3], *բռնեմ*[4], *գիտեմ*[5], *գնեմ*[6], *գրեմ*[7], *եմ*[8], *եփեմ*[9], *լռեմ*[10], *լսեմ*[11], *խառնեմ*[12], *խլեմ*[13], *խմեմ*[14], *ծախեմ*[15], *ծեծեմ*[16], *կարդեմ*[17], *կարեմ*[18], *կարծեմ*[19], *կոչեմ*[20], *կտրեմ*[21], *համբերեմ*[22], *հանեմ*[23], *ճգեմ*[24], *մեկնեմ*[25], *մսխեմ*[26], *նեղեմ*[27], *շինեմ*[28], *ուտեմ*[29], *պահեմ*[30], *պսակեմ*[31], *սղալեմ*[32], *վախեմ*[33], *վարձեմ*[34],

---

[60] Համմ. Petermann, Abhandl. d. Akad. d. Wiss. z. Berl. 1866, էջ 75:

վկայեմ[35], *վճարեմ*[36], *քակեմ*[37], *քշտեմ*[38], - ապա դասական համապատասխան հիմքերից տարբերվող հետևյալ հիմքերը. *այժեմ, աժեմ*[39] = դաս. *արժեմ. անվ-նեմ*[40] = դաս. *անուանեմ. արծեմ*[41] = դաս. *արածեմ. աւիրեմ*[42] = դաս. *աւերեմ. բաժնեմ*[43] = դաս. *բաժանեմ. գրաւկնեմ*[44] = դաս. *գրաւականեմ. ժաժեմ*[45] = դաս. *շարժեմ. ժողվեմ*[46] = դաս. *ժողովեմ. խորվեմ*[47] = դաս. *խորովեմ. հանեմ*[48] = դաս. *հրամայեմ. ղրկեմ*[49] *յղղարկեմ, յղարկեմ*[50] ավելի հին և գրքային ճևի կողքին = դաս. *յուղարկեմ. մանարեմ*[51] = դաս. *մանրեմ. մատնէհրեմ*[52] = դաս. *մատնահարեմ. մեծրեմ*[53] = դաս. *մեծարեմ. յայրենեթիեմ, հայրենեթիեմ* «աքսորում եմ» = դաս. **հայրենեթափեմ. շալկեմ* = դաս. *շալակեմ. շաղղեմ*[56] = դաս. *շաղեմ. շանչեմ*[57] «վատնել», *շռայլել* = դաս. **շանապանեմ. վայէ*[58] = դաս. *վայել է. տուգնեմ*[59] = դաս. *տուգանեմ. քաշեմ*[60] = դաս. *քարշեմ. ուղղեմ*[61] = դաս. *ուղղեմ. յեմեմ*[62] «դանդաղում եմ» = դաս. *յամեմ. յորդրեմ*[63] = դաս. *յորդորեմ. ուզեմ*[64] = դաս. *յուզեմ*:

Վկայութիյուններ. 1) *այրէ* հրամ. ներկայի եզ. 2-րդ դ. 2) *ասէ* ներկայի եզ. 3-րդ դ. 27_{7}, 33_{12}, 39_{16}, 47_{26}, 63_{14}. 3) *քերէ* եզ. 3-րդ դ. 9_{20}, 61_{13}. *քերեն* հոգն. 3-րդ դ. $11_{9.10}$. 4) *բռնէ* հրամ. եզ. 2-րդ դ. ԴԳ ճիք. 5) *գիտել* անորոշ դերբ. $9_{5.6}$, 19_{5}, 29_{20}. 6) *գնէ* ներկայի 3-րդ դ. 71_{1}, 79_{1}. *գնեն* հոգն. 3-րդ դ. L. 155_{10}. *գնել* անորոշ դերբ. L. 178_{14}, 185_{15}. 7) *գրէ* ներկայի եզ. 3-րդ դ. 35_{7}, 75_{10}. *գրել* անորոշ դերբայ 21_{1}. 8) *եմ* եզ. 1-ին դ. 25_{11}, 63_{13}, 65_{17}. *են* ներկայի հոգն. 3-րդ դ. 3_{5}, 11_{25}, 17_{3}. 9) *եփէ* հրամ. ներկայի եզ. 2-րդ դ. Բ խ. 10) *լռեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 57_{14}, 59_{18}. 11) *լսէ* ներկայի եզ. 3-րդ դ. 12) *խառնէ* հրամ. ներկայի եզ. 2-րդ դ. Բ իը, ժդ. 13) *կու խլէ* սահմ. ներկայի եզ. 3-րդ դ. 39_{10}. *խլելով* անորոշ դերբ. գործ. 71_{20}. *խլէր* անկատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. 6_{24}. 14) *խմէ* ներկայի եզ. 3-րդ դ. 33_{18}. *խմէր* անկատ. եզ. 3-րդ դ. 33_{19}. 15) *ծախէ* ներկայի եզ. 3-րդ դ. $45_{19.21}$, 69_{16}, 85_{6}. *ծախեն* ներկա. հոգն. 3-րդ դ. 49_{23}, L. 154_{20}, L. 155_{13}. *ծախել* անորոշ դերբ. 47_{23}. 16) *ծեծէ* ներկայի եզ. 3-րդ դ. ՁգՔ. *ծեծեց* անց. կատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 6_{42}. 17) *կարգէ* ներկայի եզ. 3-րդ դ. 19_{27}, 21_{8}, 30_{1}. *կարգել* անորոշ դերբ. 21_{21}. 18) *կարէ* ներկայի եզ. 3-րդ դ. 9_{7}, 17_{4}, 17_{23}, $21_{13.16}$, 23_{8}. *կարեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 19_{15}, $23_{17.20}$, 49_{23}. 19) *կու կարծէր* անկատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. p. 647. 20) *կոչէ* ներկայի եզ. 3-րդ դ. 25_{10}. 21) *կտրէ* ներկայի եզ. 3-րդ դ. 51_{18}. *կտրեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 19_{15}, $23_{17.20}$, 49_{23}. 22) *համբերէ* ներկայի եզ. 3-րդ դ. 15_{26}, 33_{16}. *կու համբերեն* սահմ. ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ խդ. 23) *կու հանեն* սահմ. ներկայի հոգն. 3-րդ դ. L. 155_{24}. *հանել* անորոշ դերբ. L. 155_{23}. 24) *ճգէ* ներկայի եզ. 3-րդ դ. 17_{5}, 33_{9}. 25) *մեկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 41_{18}. 26) *մսխել* անորոշ դերբ. 17_{12}. 27) *նեղել* անորոշ դերբ. 25_{21}. 28) *չհնել* անորոշ դերբ. Բ

խզ, խը 29) *ուտեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ ճհ. 30) *պահէ* ներկայի եզ. 3-րդ դ. 17_{8}, 49_{3}. 31) *պասակէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճը. 32) *սղալէ* ներկայի եզ. 3-րդ դ. 65_{27}, 67_{2}. 33) *կու վախէին* ներկայի հոգն. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. 648. 34) *վարձէ* ներկայի եզ. 3-րդ դ. 45_{16}, 71_{6}. 35) *վկայէ* ներկայի եզ. 3-րդ դ. 47_{1}. *վկայեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 11_{27}, 13_{12}, 15_{15}, 19_{15}, 25_{15}, 29_{2}, 35_{17}. 36) *վճարէ* 29_{12}, 45_{21}, 57_{27}, 59_{24}, 63_{25}, $71_{8.20}$, 75_{18}, 79_{12}. *վճարել* անորոշ դերբայ 77_{11}, 81_{18}. 37) *կու քակէ* ներկայի եզ. 3-րդ դ. 38) *քշտէ* ներկայի եզ. 3-րդ դ. 31_{4}. 39) *ածէ* ներկայի եզ. 3-րդ դ. $11_{22.26}$. *այժէ* ներկայի եզ. 3-րդ դ. $11_{22.26}$. *այժէր* անկատ. եզ. 3-րդ դ. 73_{16}. 40) *անվնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 35_{7}. 41) *արծող* ներկա դերբայ ԴԳ ժհ 42) *աւիրէ* ներկայի եզ. 3-րդ դ. Մխ. Հեր. էջ 25. 43) *բաժնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 37_{24}, 49_{34}. *բաժնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 21_{10}. *բաժնել* անորոշ դերբ. 53_{17}. 44) *զրաւկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 53_{20}, $71_{17.19}$, 75_{23}, 77_{16}. *զրաւկնել* անորոշ դերբ. 77_{11}, 77_{18}. 45) *ժաժէ* հրամ. եզ. 2-րդ դ. Զգբ մխէ. *ժաժեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Զգբ մժղ. 46) *ժողվէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճժե, Բ խ, ճկզ. *ժողվել* անորոշ դերբ. 13_{7}. 47) *խորվես* ներկայի եզ. 2-րդ դ. Ա. 136. *խորվէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ մկէ. 48) *համէ* ներկայի եզ. 3-րդ դ. 11_{21}, ԴԳ ա, իդ. 49) *ղրկէ* ներկայի եզ. 3-րդ դ. 25_{17}. 50) *յղղարկէ* ներկայի եզ. 3-րդ դ. L. 156_{23}. *յղարկեց* կատ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 642 և 649. 51) *մանտրես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ կը. *մանտրէ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ խզ. Մխ. Հեր. էջ 71. 52) *մատնէհրեն* ներկայի հոգն. 3-րդ դ. L. 156_{17}. 53) *մեծրէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ խզ. 54) *հայրենէշինել* անորոշ դերբ. ԴԳ հ. 55) *շալկէ* ներկայի եզ. 3-րդ դ. 33_{15}. *շալկեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 31_{6}, 63_{5}. ԴԳ կ. 56) *շաղղէ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ժ, ժա, ժբ. 57) *շանչկնել լինի* եզ. անց. 3-րդ դ. 45_{18}. 58) *վայլէ* ներկայի եզ. 3-րդ դ. 19_{28}, 39_{21}. 59) *տուզնել* անորոշ դերբ. ԴԳ հ. 60) *քաշէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճլբ. *քաշեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Մխ. Հեր. 139. 61) *աւղղէ* ներկայի եզ. 3-րդ դ.27_{8}, $81_{19.23}$. *աւղղելոյ* անորոշ դերբ. սեռ. 83_{1}. 62) *յեմէ* ներկայի եզ. 3-րդ դ. 15_{2}, 23_{11}. Ա. 16, 34. 271, 280. *յեմնել* անորոշ դերբ. 25_{26}. Ա. 176. 63) *յորդրէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 190. 64) *ուզեմ* ներկայի եզ. 1-ին դ. 41_{23}. *ուզես* ներկայի եզ. 2-րդ դ. ԴԳ ճ. Մատթ. Ուռհ. 6. Գիրք վասա. 33, 41, 51, 52, 89, 90, 91, 94, 95, 107, 130, 132, 148, 173, 187. *ուզէ* ներկայի եզ. 3-րդ դ. 11_{19}, $13_{22.28.30}$, $15_{8.16}$, $23_{27.28}$, 27_{8}, 39_{10}, 35_{4}, 59_{3}, 61_{14}, $65_{24.25}$, 63_{7}. Գիրք վասա. 77. 61. *ուզեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 17_{15}, 27_{10}, 49_{23}. Մխ. Հեր. 131. Գիրք վասա. 92. *ուզէր* անկատ. անց. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 622. *ուզէին* անց. անկատ. հոգն. 3-րդ դ. 17_{16}. *ուզել* անորոշ դերբ. 19_{17}, 23_{5}. Աւորա-հռոմեական ԴԳ. §138:

§321. բ) Դասական լեզվում պակասող հիմքեր. *աճռեմ*[1] «փշրում եմ». *առջնտրեմ, առջնտրեմ*[2] «առաջ եմ անցնում». *դատաստանեմ, դատըստանեմ, դատըստըլնեմ*[3] «գանգատվում եմ», *ըղորդեմ*[4] «ուղղում եմ, լավացնում եմ». *ծախվորեմ*[5] «տալիս եմ». *պատճռվորեմ*[6] «ներում եմ». *սարեմ*[7] «վհնում եմ». *յիշվեմ*[8] «կողոպտում եմ». *փնտռեմ*[9] «որոնում եմ»: Այդ խմբին են պատկանում նաև որոշ փոխառյալ բայեր. որոնք մինչև հայերենում սակավ բայաոռվիչյունները խոնարհվում են որպես *ե*-ով հիմքեր. *ալկեմ*[10] «կերակրում եմ». *զընդանեմ*[11] «բանտարկում եմ». *խալսեմ, խալըսեմ*[12] «ազատում եմ». *հիլայեմ*[13] «մեղադրում եմ». *մունետկեմ*[14] «հայտարարում եմ». *տահրկեմ*[15] «հաղթում եմ». *աւդրեմ*[16] «իրավունք եմ տալիս». *բայլթեմ*[17] «դատաստան եմ վարում». *պռուգեմ*[18] «նպաստ, օժիտ եմ տալիս». *ջալընջեմ*[19] «պահանջում եմ». *ջաստեմ*[20] «պատժում եմ». *սայգեմ, սազեմ*[21] «ունեցվածք եմ տալիս». *տրպլեմ*[22] «կրկնապատկում եմ». *տֆընդեմ, տրֆընդեմ*[23] «պաշտպանում եմ». *ֆայլեմ*[24] «պակասում եմ»:

Վկայութիւններ. 1) *աճռէ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ կզ. 2) *կու առջնտրեն* սահմ. ներկայի հոգն. 3-րդ դ. $41_{7.8}$. *առջընդրեց* եզ. 3-րդ դ. անց. կատ. ԴԳ ճլբ. 3) *կու դատըստրլնեմ* ներկայի եզ. 1-ին դ. 41_{21}. *դատըստրլնել* անորոշ դերբ. 15_{13}, 27_{4}, 61_{11}. 4) *ըղորդէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ լզ. *ըղորդեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 39_{25}. 5) *ծախվորեր* անկատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 648, *ծախվորեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ հբ. 6) *պատճռվորէ* ներկայի եզ. 3-րդ դ. 65_{16}. 7) *սարել* անորոշ դերբ. 35_{16}. 8) *յիշվէ* 23_{22}, 29_{25}, 39_{17}. ԴԳ լզ. ղղ. 9) *փնտռեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ ճիա. *փնտռել* անորոշ դերբ. ԴԳ ճծա. *փնդռէ* ներկայի եզ. 3-րդ դ. 13_{7}: Փոխառյալ բայերից դնում ենք հետևյալ ձևերը. 10) *ալկէ* ներկայի եզ. 3-րդ դ. 79_{1}. 11) *զընդանել* անորոշ դերբ. ԴԳ հ. 12) *խալըսեն* L. 156_{24}. *խալսել* անորոշ դերբ. L. 178_{13}. 13) *հիլայէ* ներկայի եզ. 3-րդ դ. $31_{16.18}$, $33_{15.17.22}$, 59_{31}. *հիլայելոյ* անորոշ դերբ. սեռ. 33_{21}. *հիլայող* ներկա դերբ. 33_{16}, $35_{5.25.30}$. *հիլայած* հարակատար դերբ. 29_{9}, 31_{19}, $33_{10.15.24}$, $35_{25.17.18.29}$, 61_{28}, $63_{4.5}$. 14) *մունետկէ* ներկայի եզ. 3-րդ դ. 79_{11}. *մունետկեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 77_{7}. *մունետկել* անորոշ դերբ. 75_{14}. 15) *տահրկէ* ներկայի եզ. 3-րդ դ. 67_{20}. *տահրկած* հարակատար դերբ. 59_{27}. 16) *աւդրելով* անորոշ դերբ. գործ. հոլով. ԴԳ ճժբ. *աւդրել լինի* ներկա եզ. 3-րդ դ. 21_{17}. *լինի աւդրել* 83_{17}. *աւդրած* հարակատար դերբ. 37_{6}. 17) *բայլթէ* ներկայի եզ. 3-րդ դ. 51_{9}. *բայլթել* անորոշ դերբ. 19_{24}. *բայլթելոյ* անորոշ դերբ. սեռ. 19_{21}. 18) *պռուգած* հարակատար դերբ. Աառա-հռոմ. ԴԳ 139. 19) *ջալընջէ* ներկայի եզ. 3-րդ դ. 23_{24}, 51_{4}. *ջալընջեն* ներկայի հոգն. 3-րդ դ. $69_{14.17.22}$. *ջալընջողի* բայանվան սեռականը 69_{4}. *ջալընջել* անորոշ դերբ. 19_{21}, $23_{15.17.18.24}$, 55_{25}, 69_{18}.

20) *ջաստէ* ներկայի եզ. 3-րդ դ. 65_3. 21) *սայզէ. սազէ* ներկայի եզ. 3-րդ դ. $17_{16.21.25}$. *սայզեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 71_3. *սայզած* հարակատար դերբայ 23_4, 57_7. 22) *տրպլեմ* ԴԳ ծ. 23) *տՔուղէ* ներկայի եզ. 3-րդ դ. 27_7, 31_6, 57_{16}. *տՔուղել* անորոշ դերբ. 23_{12}. *տըՔուղելով* անորոշ դերբ. գործ. 53_{21}. *տըՔուղել* վաղակատար դերբ. $23_{9\,10}$. 24) *Քայլէ* ներկայի եզ. 3-րդ դ. 61_{16}, 63_6:

§322. գ) Հիմքեր, որոնց դասական համապատասխանումները պարզ *ե*-ով հիմքեր չեն: *Արգելում, լսում, զենում* դասական *ու*-ով հիմքերի տեղը գրավում են կիլիկյան *ե*-ով հիմքերը. *արգիլեմ*[1] */արգելեմ* ավելի հին ձևից. հմմտ. Այտ. Ա 93/. *լսեմ*[2] */լսեմ* հազվագյուտ տարբերակի կողքին/ և *զինեմ*[3]. *Քողում* դեռևս կենդանի ձևի կողքին երևան է գալիս արդեն *Քողեմ*[4]: Հետդասական շրջանում *յեղում, աւելում* ավելի հին ձևերի փոխարեն երևացող *յեղեմ, աւելեմ* և *աւիլեմ* ձևերը նույնպես պետք է ընդունել որպես կիլիկյան:

Դասական *ի*-ով հիմքերին կիլիկյան հայերենում համապատասխանում են *ե* թեմատիկ ձայնավորով հիմքերը. կիլ. *Քարչեմ*[5] = դաս. *Քարչիմ*. կիլ. *կարմըրեմ*[6] = դաս. *կարմրիմ*. կիլ. *սպիտակեմ*[7] = դաս. *սպիտակիմ*. նաև կիլ. *համբեմ* = դաս. *համբիմ*:

Ծան. Որպես *համբեմ* բայի ավելի հին ձև, արդեն նախակիլիկյան շրջանում հանդիպում է *համարեմ*, որ Հայկազյան բառարանը համարում է ռամկական: Ն բաղաձայնով հին ածանցավոր հիմքերին կիլիկյան հայերենում համապատասխանում են պարզ հիմքեր, առանց *ն* բաղաձայնի. կիլ. *մտեմ*[8] = դաս. *մտանեմ*. կիլ. *լուծեմ*[9] = դաս. *լուծանեմ*. կիլ. *խստեմ*[10] = դաս. *խստանամ*: Երևի կիլ. *համեմ*[11] «հրամայում եմ» նույնպես համապատասխանում է դաս. **հրամանեմ* [?] ձևին:

Վկայութիւններ. 1) *արգիլէ* ներկայի եզ. 3-րդ դ. 25_{25}, Ա 107, ԴԳ ճհ. *արգիլեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 41_9, ԴԳ ծդ. *կու արգիլէին* անկ. 3-րդ դ. L. 156_{26}. *արգիլել* անորոշ դերբ. 11_{20}, Ա 19, ԴԳ ճժե, ճհ, ճհբ: Ձևեր Մխ. Հերայու մոտ. *արգիլէ* ներկայի եզ. 3-րդ դ. 20, 45, 48, 92. *արգիլի* չեզոք սեռ., ներկայի եզ. 3-րդ դ. 12. *արգիլելոյ* անորոշ դերբ. սեռ. 13. *արգիլեցաւ* միջակ սեռ., անց. կատ. եզ. 3-րդ դ. 13. 2) *լսես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ մդ. *լսէ՛* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ժ, ճհ, ճհդ, ճհքե, ճճքե, ճղդ, ճղքե, մդ, մե, մհ. *լսեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ճկա, ճհե, մկզ. *լսեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Գիրք վաստ. 30, Մխ. Հեր. 150. 3) *զինէ՛* հրամ. եզ. 2-րդ դ. Բ մկ. 4) *Քողէին* անկատ. հոգն. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. 650. 5) *Քարչէ* ներկայի եզ. 3-րդ դ. ՁգԲ 154. 6) *կարմրէ* ներկայի եզակի 3-րդ դ. ՁգԲ 155. 7) *սպիտակէ* ներկայի

եզ. 3-րդ դ. ԶգԲ 145. 8) *մտես* ներկայի եզ. 2-րդ դ. ԴԳ ճկզ. Բ միա, միե, մտէ ներկայի եզ. 3-րդ դ. $17_{6.10}$, 31_{10}, 59_{25}, $61_{1.2}$, Ա. 280, ԴԳ ծգ, կ, հե, ճժբ, ճկզ, ճհզ, ճհէ, Բ ժը, խե, միը, մկէ. *մի՛ մտեր* արգել. հրամ. ԴԳ. *մտեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 35_{19}, ԴԳ ճէ, ճհ. *մտել* անորոշ դերբ. 29_4, 17_7, ԴԳ ժը, հզ: Միս. Հեր. *մտէ* էջ 17, 19, 25, 26, 47, 136. միայն էջ 55 դրված է *մտնէ* ընդարձակ ձևը. 9) *լուծէ՛* հրամ. եզ. 2-րդ դ. ԶգԲ. *լուծեց* անց. կատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. 611. 10) *խստեց* անց. կատ. եզ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. Dul. 611. 11) *համէ* եզ. ներկայի 3-րդ դ. 39_{11}, $43_{7.10}$. *համենք* ներկայի հոգն. 1-ին դ. L. 185_{17}, L. 178_7. *համէք* ներկայի հոգն. 2-րդ դ. 41_9, 59_{14}. *համել* անորոշ դերբ. 51_{21}:

Ծան. 1. Մտեմ փոխ. *մտանեմ* երևում է արդեն հետդասական շրջանում՝ Գր. Նար., Ներս. Լամբր., Գրիգ. Մագ., Ոսկիփ. և այլն: Նույնը վերաբերում է *լուծեմ* բային՝ Ներս. Լամբր., Կլիմաքոս և Հարանց վարք: *Դասական* գրականությունը գիտե *մտեմ* պարզ թեմատիկ ձևը միայն *հետամտել* բարդության մեջ /Ագաթ. Փարպ. Հովհ. կաթողիկոս/: Վերջինս, բնականաբար, կազմված է *հետամտուտ* դոյականից:

Ծան. 2. Արդեն դասական շրջանում, մասամբ *ե* դարից սկսած, գտնում ենք կրկնակներ. *զատանեմ* և *զատեմ*. *յատանեմ* և *յատեմ*. *զանգանեմ* և *զանգեմ*. *աղանձանեմ* և *աղանձեմ*, *շականջանեմ*, *սկանջանեմ* և *սկանջեմ*. *ստորիջանեմ* և *ստորիջեմ*. *ներկանեմ* և *ներկեմ*. *խցանեմ* և *խցեմ*. *խփանեմ* և *խփեմ*. *տարածանեմ* և *տարածեմ*. *բեկանեմ* և *բեկեմ*. հմմտ. նաև Այտ. Ա. 92: Նրանցից միայն ընդարձակ ձևերը պետք է համարել զուտ դասական. ավելի կարճ թեմաներով ձևերը, որ Հայկազյան բառարանը մեծ մասամբ նշանակում է որպես ռամկական, մեծ հավանականությամբ անցել են նաև կիլիկյան միջին հայերենին:

2. Ընդարձակ հիմքեր

§323. -*չ*-ով հին ընդարձակ հիմքերը կիլիկյան հայերենը պահպանել է. կիլ. *ճանչեմ*[1] = դաս. *ճանաչեմ*: Դասական ընդարձակ *ե*-ով հիմքերը *ն* բաղաձայնով միայն մասամբ են պահպանվել կիլիկյան հայերենում. կիլ. *այնեմ*[2] = դաս. *առնեմ* /*ար-* հիմքով/. *դնեմ*[3] = դաս. *դնեմ*. *երթեմ*[4] = դաս. *երանեմ*, *զարկնեմ*[5] = դաս: *զարկանեմ*. *հարցնեմ*[6] = դաս. *հարցանեմ*. *սպանեմ*[7] = դաս. *սպանանեմ*. *ցուցնեմ*[8] = դաս. *ցուցանեմ*. *ծծնեմ*[9] = դաս. *ուծծանեմ*. նաև *տեսնեմ*[10] = դաս. *տեսանեմ* ԶգԱ.: Սակայն վերջին ձևն իսկական կիլիկյան չէ. կիլիկյան հուշարձաններում ավելի հաճախ է երևան գալիս *ու*-ով հիմքը

տեսնում: Մի շարք ուրիշ ընդարձակ դասական *ե*-ով հիմքեր կիլիկյան հայերենում դարձել են ընդարձակ *ու*-ով հիմքեր: Հմմտ. ստորև «Ներկայի *ու*-ով հիմքը»:

Ընդհակառակն, առանձին դեպքերում, որպես նոր հայերենի համապատասխան *ե*-ով հիմքի նախաձև /հմմտ. Han. 28 և Այտ. §§216, 217/ կիլիկյան հայերենում գտնում ենք *առնէին*[1] անկատարը փոխ. դաս. *առնուին*: *-նու-* հին ըմին /ըեմնային/ այս դեպքում համապատասխանում է կիլիկյան-միջին հայերեն *նե* բունը:

Վկայութիւններ. 1) *Ճանչեմ* ներկայի եզ. 1-ին դ. 67_{9}. *Ճանչես* ներկայի եզ. 2-րդ դ. Զգբ հ. 157. *Ճանչէ* ներկայի եզ. 3-րդ դ. 41_{19}, 65_{2}. ԴԳ ճծա. *Ճանչեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 63_{17}. *Ճանչել* անորոշ դերբ. 25_{22}, 81_{15}. 2) *այնեմ* ներկայի եզ. 1-ին դ. 21_{16}. *այնես* ներկայի եզ. 2-րդ դ. 15_{19}, $43_{7.9}$. *այնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 9_{15}, $13_{10.19.21.29.31}$, $15_{9.20.27}$, $17_{19.25}$, 23_{24}, $29_{15.16}$, $31_{8.21}$, 33_{25}, $35_{3.14}$, $37_{5.8}$, 43_{9}, 45_{15}, $49_{4.13}$, 51_{21}, 55_{14}, 57_{22}, 59_{5}, $63_{2.21.24}$, 77_{24}, 81_{3}, L. 156_{21}, 157_{3}, Բ ճ, ԴԳ ժ, ի իզ, իթ, լբ, ճբ. *այնենք* ներկայի հոգն. 1-ին դ. 68_{18}. *այնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 33_{4}, 41_{12}, 45_{2}, $49_{21.22}$, 51_{11}, 53_{10}, 81_{2}, ԴԳ իթ, լգ, ծէ, կ, ծգ. *այնէր* անկատ. 3-րդ դ. 35_{12}. *այնել* անորոշ դերբ. 19_{20}, $21_{1.13}$, 23_{11}, 47_{24}, $49_{14.17.23.26}$, 51_{20}, 53_{2}, 3_{12}, 57_{21}, ԴԳ իզ, իբ, լգ, ճհէ:

Ծան. Այնեմ բայի ավելի հին, վաղ միջին հայերեն ճևը պահպանված *բ*-ով վկայված է ԺԲ դարում Մխիթար Հերացու մոտ: Վկայված են *այբնես* ներկայի եզ. 2-րդ դ. 84, 99, 107. *այբնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 88, 94, 101, 102, 106, 108, 111, 112, 113, 115, 116, 120, 128, 136, 140. *այբնեն* հոգն. ներկայի 3-րդ դ. 12, 101. *այբնել* անորոշ դերբ. 13, 56, 86, 87, 100, 125: Նաև *արնես* ներկայի եզ. 2-րդ դ. 95. *արնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 108. հմմտ. *արնելոյ* անորոշ դերբ. սեռ. Գիրք վասն. 106: Նույն հեղինակի մոտ երևում է, սակայն, արդեն բուն կիլիկյան նոր ճևն առանց *բ*-ի հետևյալ դեպքերում. *այնես* ներկայի եզ. 2-րդ դ. 95. *այնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 25, 30, 37, 75, 84, 96, 115, 117, 131. *այնել* անորոշ դերբ. 25, 89, 101: Դրա փոխարեն, *անեմ* ուշ կիլիկյան ճևը կարելի է գտնել, օրինակ, Վաստակոց գրքում, Ամիրդովլաթի մոտ և ընդհանրապես ուշ միջին հայերենի շրջանում, օրինակ, *անես* ներկայի եզ. 2-րդ դ. Գիրք վասն. 21, 192. Լևոն Ե Լմբագավորի 1331 թ. արտոնագրի մեջ. ներկայի եզ. 3-րդ դ. L. $188_{10.18}$, *անող. անաւղ* L. 188_{33}, 189_{3}. *արել* վաղակատար դերբ. ներգործ. L. 189_{5}, 188_{26}. *արած* հարակատար դերբ. կրավոր. L. $188_{22.33.34.36}$. հմմտ. Հնչյունաբ. 3) *ընէ* ներկայի եզ. 3-րդ դ. $13_{12.26}$, 15_{17}, $73_{4.5}$, 75_{3}. *ընեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 39_{26}, ԴԳ իթ. 4) *ելնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 13_{6}, 25_{27}, 51_{13}, 53_{20}, 55_{10}, 59_{6}, 71_{7}, 75_{4}, L. $157_{17.18}$, ԴԳ իթ, խե, Բ լթ,

ճժխ, ճլը, միդ. *եմնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ խե. *կու եմենք* սահմ. ներկայի հոգն. 1-ին դ. Սմբ. Ժամ. Dul. 648. *եմնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 53_{26}, 57_{14}. *եմնէին* անկատ. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 649. *եմնել* անորոշ դերբ. 6, 14. *եմնելոյ* անորոշ դերբ. սեռ. 16. 5) *զարկնես* ներկայի եզ. 2-րդ դ. Մխ. Հեր. 70. *զարկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ՋգԱ և Բ. 6) *հարցնեմ* ներկայի եզ. 1-ին դ. 9_{21}. *հարցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ հբ. *հարցնել* անորոշ դերբ. ԴԳ ի. 7) *սպաննէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ա, իմ, հբ. *սպաննեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ ճծա. *սպաննել* անորոշ դերբ. ԴԳ հբ. 8) *կու յուսքնեմ* սահմ. ներկայի եզ. 1-ին դ. 27_{11}. *յուսնէ, յուսքնէ* $9_{16.17}$, 13_{8}, 63_{25}, $65_{4.5}$, 67_{6}, 77_{2}, 83_{21}. 9) *ծննես* ներկայի եզ. 2-րդ դ. ՋգԲ L. 150. *ծննէ* ներկայի եզ. 3-րդ դ. L. 153. 154. 10) *տեսնես* ներկայի եզ. 2-րդ դ. ՋգԱ 145, 146. 11) *կու առնէին* անկատ. հոգն. 3-րդ դ. L. $156_{2.3}$:

3. Պատճառական հիմքեր

§324. Հին հայերենի պատճառական հիմքը, որ կազմված է կատարյալի հիմքից+*ուցանեմ*, պահպանվել է միջին հայերենում, սակայն փոփոխված հնչյունական ձևով. ըստ Հնչյունաբ. էջ 42. դասական *-ուցանեմ* դարձել է կիլ. *-ցնեմ՝ ու* ձայնավորի անկումով և *ա>ը* թուլացումով:

§325. Օրինակներ. *անցցընեմ*[1] = դաս. *անց-ուցանեմ /անցանիմ* բայից/, անց. կատ. *անցայ. իջցնեմ*[2] = դաս. *իջ-ուցանեմ /իջանեմ* բայից/, անց. կատ. *իջ-ի. հասցնեմ*[3] = դաս. *հաս-ուցանեմ /հասանեմ* բայից/, անց. կատ. *հաս-ի. հատցնեմ*[4] = դաս. *հատ-ուցանեմ /հատանեմ* բայից/, անց. կատ. *հատ-ի. մեռցնեմ*[5] = դաս. *մեռ-ուցանեմ /մեռանիմ* բայից/, անց. կատ. *մեռ-այ. յերկըրնեմ*[6] = դաս. *յարդ-ուցանեմ /յառնեմ* բայից/, անց. կատ. *յարե-այ. ուսցընեմ*[7] = դաս. *ուս-ուցանեմ /ուսանիմ* բայից/, անց. կատ. *ուս-այ. անցնեմ*[8] = դաս. *ան-ուցանեմ /անանիմ* բայից/. անց. կատ. *ան-այ. փախցնեմ*[9] = դաս. *փախու-ցանեմ /փախչիմ* բայից/. անց. կատ. *փախե-այ. փակցնեմ*[10] = դաս. *փակ-ուցանեմ /փակում. փակնում* բայից/, անց. կատ. *փակ-ի* կամ *փակե-այ. փլցնեմ*[11] = դաս. *փլ-ուցանեմ /փլանիմ* բայից/. անց. կատ. *փլայ. փրթցնեմ*[12] = դաս. *փրթ-ուցանեմ՝/փրթանիմ* բայից/. անց. կատ. *փրթ-այ. կորանեմ*[13] = դաս. *կոր-ուսանեմ /<*կոր-ուցանեմ/ կորչիմ* բայից, անց. կատ. *կորե-այ. դարճնեմ*[14] ըստ Հնչյունաբ. §150. = դաս. *դարճուցանեմ /դառնամ* բայից/, անց. կատ. *դարճ-այ*: *Մտեմ* բայից /անց. կատ. *մտ-այ*/ կանոնավոր ձևով

կազմվում է *մտցնեմ*[15] պատճառականը /<* *մտ-ուցանեմ*/, հհ. *մուծանեմ*-ի /*մտանեմ*-ից/ դիմաց:

Վկայութիւններ. 1) *անսկսէք* ներկայի եզ. 3-րդ դ. 79_{12}. *անսկէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ լթ, ծ. 2) *իջցնէք* ներկայի եզ. 3-րդ դ. L. 185_{22}. *իջցնել* անորոշ դերբ. L. 186_{6}. *իջու* հրամ. եզ. 2-րդ դ. L. 179_{3}. 3) *հասցնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ ճճդ. *հասցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ա, Բ ճճթ, ճկբ, ճկզ. 4) *հատցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ՁզԱ. 5) *մեռցնել* անորոշ դերբ. ԴԳ հ, ճժբ. 6) *յերցնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ մժգ. *յերցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 194. 7) *ուսցնել* անորոշ դերբ. ԴԳ ճլե. *ուսցնող* ներկա դերբ. ԴԳ ճլե. 8) *անցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ղէ. 9) *փախցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Բ ճհէ. 10) *փակցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Բ ճզ. 11) *փլցնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ մլզ. 12) *փրթուցած* ԴԳ ճհ. 13) *կորանէ* ներկայի եզ. 3-րդ դ. 11_{4}, 13_{32}, $15_{3.27}$, 23_{24}, 63_{10}, 65_{7}, 73_{19}. 14) *դարձընէ* ներկայի եզ. 3-րդ դ. 59_{26}, 71_{21}. *դարձնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 63_{25}, ԴԳ հբ, ճզ, ճլա, ճլող. *դարձնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. 47_{22}, 57_{26}, ԴԳ ճզ. *դարձընել* անորոշ դերբ. $79_{3.4}$, 81_{16}. *դարձնել* անորոշ դերբ. ԴԳ ճլթ, ճկե, ճկ, Սմբ. Ժամ. 620. 15) *մըտըցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. L. 187. *մտո՛յ* հրամ. 2-րդ դ. Բ ճժլթ:

-Ց- ԱԺԱՆՑՈՒ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՊԱՏՃԱՌԱԿԱՆԻ ՀԻՄՔԵՐԸ

§326. ա) Պարզ *ե*-ով և *ի*-ով հիմքերից կազմված պատճառականներ: Հմմտ. Հնչյունաբ. §149. *-ածեցնեմ*[1] = դաս. *ածեցուցանեմ*. *դադրեցնեմ*[2] = դաս. *դադրեցուցանեմ*. *ժառանգեցնեմ*[3] = դաս. *ժառանգեցուցանեմ*. *լռեցնեմ*[4] = դաս. *լռեցուցանեմ*. *խաղրեցնեմ*[5] = դաս. *խաղրեցուցանեմ*. *խափանեցնեմ*[6] = դաս. *խափանեցուցանեմ*. *կամեցնեմ*[7] = դաս. *կամեցուցանեմ*. *հաճեցնեմ*[8] = դաս. *հաճեցուցանեմ*. *հաշտեցնեմ*[9] = դաս. *հաշտեցուցանեմ*. *հանդեցնեմ*[10] = դաս. *հաւանեցուցանեմ*. *յանեցնեմ*, *յիմեցնեմ*[11] = դաս. *յանեցուցանեմ*. *յորդորեցնեմ*[12] = դաս. *յորդորեցուցանեմ*. *պակասեցնեմ*[13] = դաս. *պակասեցուցանեմ*. *պատրաստեցնեմ*[14] = դաս. *պատրաստեցուցանեմ*. *վշտենկեցնեմ*[15] = դաս. *վշտենկեցուցանեմ*. *սովրեցնեմ*[16] = դաս. *սովորեցուցանեմ*. *չամքեցնեմ*[17] = դաս. *չամաքեցուց. նեմ*. *օգտեցնեմ*[18] = դաս. *աւգտեցուցանեմ* և այլն:

Վկայութիւններ. 1) *ածեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճճդ. 2) *դադրեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 136. 3) *ժառանգեցնել* անորոշ դերբ. ճժե. 4) *լռեցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ լղ. 5) *խաղրեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ծ, ծա, հե, ճժը. 6) *խափանեցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԳ ղգ. *խափանեցնել* ա-

նորոշ ղերբ. ԴԳ լ[ճ]. 7) *կամեցնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ ճի, ճղե, ճղը, մի[ճ]. 8) *հաճեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճի, ճհղ. *հաճեցնեն* ԴԳ կբ. 9) *հաշտեցնել* անորոշ ղերբ. ԴԳ հբ, ճ[ճ]. 10) *հանեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճ[ճ]. 11) *յեմեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. *մի՛ յեմեցներ* արգել. հրամ. 2-րդ դ. Ա 154. *յիմեցնէ* եզ. ներկայի 3-րդ դ. 81_{24}, ԴԳ ճա, լդ. 12) *յորտրեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ մծը. 13) *պակսեցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ լդ, ճդ, *պակսեցնել* ԴԳ ճժ, ծա, ղդ, ճժզ. 14) *պատրաստեցո* հրամ. եզ. 2-րդ դ. Բ մ[ա]ա. 15) *վզենկեցնել* անորոշ ղերբ. Ասոր.-հռոմ. ԴԳ, §122. 16) *սովրեցո՛յ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ մկզ. 17) *ցամքեցնաւղ* ենթակայական ղերբայ Բ ճհ. *ցամքեցո՛յ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ճժը, ճժ[ճ]. 18) *չօգտեցուին* ժխտ. հոգն. 3-րդ դ. անց. կատ. ԴԳ ճլե:

§327. բ) Պարզ Ա-ով հիմքերի պատճառականներ: Հմմտ. Հնչյունաբ. §149. *-ամրցնեմ*[1] = դաս. *ամրապուցանեմ. անհոգցնեմ*[2] = դաս. *անհոգապուցանեմ. անուշցնեմ*[3] = դաս. *անուշապուցանեմ. զհճցնեմ*[4] = դաս. *զիջապուցանեմ. դալարցնեմ*[5] = դաս. *դալարապուցանեմ. եղկցնեմ*[6] = դաս. *եղկապուցանեմ. եռցնեմ*[7] = դաս. *եռապուցանեմ. թմանճրցնեմ*[8] = դաս. *թմանճրապուցանեմ. թմուլցնեմ*[9] = դաս. *թմուլապուցանեմ. իրաւցնեմ*[10] = դաս. *իրաւապուցանեմ. լաւցնեմ*[11] = դաս. *լաւապուցանեմ. կակղցնեմ*[12] = դաս. *կակղապուցանեմ. կարողցնեմ*[13] = դաս. *կարողապուցանեմ. կուրցնեմ*[14] = դաս. *կուրապուցանեմ. հովցնեմ*[15] = դաս. *հովապուցանեմ. յաւելցնեմ, յեւելցնեմ*[16] = դաս. *առաւելապուցանեմ. նաւարցնեմ*[17] = դաս. *անաւարապուցանեմ. նեղցնեմ*[18] = դաս. *նեղապուցանեմ. շողցնեմ*[19] = դաս. *շողապուցանեմ. ողջցնեմ*[20] = դաս. *ողջապուցանեմ. չորցնեմ*[21] = դաս. *չորապուցանեմ. պատեհցնեմ*[22] = դաս. *պատեհապուցանեմ. սեւցնեմ*[23] = դաս. *սեւապուցանեմ. վերցնեմ*[24] = դաս. *վերապուցանեմ*:

Վկայումիչ ուներ. 1) *ամրցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ լէ, ճիբ, ճղ, մժե. *ամրցնել* անորոշ ղերբ. ԴԳ ճհբ. 2) *անհոգցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճիբ. 3) *անուշցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ լդ. *անուշցնել* անորոշ ղերբ. ԴԳ ճլե. 4) *զհճցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճի[ա]. 5) *դալարցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա 234. 6) *եղկցո՛յ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ճի[ղ]. 7) *եռցնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Բ ճիգ. 8) *թմանճրցո՛յ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ խէ, ծա, ճդ. 9) *թմուլցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճդ. *թմուլցնել* անորոշ ղերբ. ԴԳ հբ. 10) *իրաւցընէ* ներկայի եզ. 3-րդ դ. 59_{8}. 11) *լաւցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ժ[ճ]. 12) *կակղցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ խ, խզ, խ[ճ], հէ, ճծա, մժզ. 13) *կարողցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ծ. 14) *կուրցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճհ. 15) *հովցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ խէ, մբ. *հովցնել* անորոշ ղերբ. Բ ճճբ, մ[ճ]. 16) *յաւելցնել* ա-

նորոշ դերբ. ԴԴ լդ, ղդ. *յեւելկնես* Ա. 198, Բ մղդ. 17) *նաւսրկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ծգ. 18) *նեղկնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԴ ճկբը. *նեղկնել* անորոշ դերբ. ԴԴ ճհ. 19) *շողկնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Բ մկզ. 20) *ողջկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճժե, ճճէ, մկա. 21) *չորկնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ կզ. 22) *պատհկնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ մլբ. 23) *սեւկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ մկզ. 24) *վերկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճէ, ճկզ. *վերկնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. ԴԴ ճկէ. *վերկնել* անորոշ դերբ. ԴԴ հ:

Սրանց կողքին նաև a-ով հին լրիվ ճևերը. *աղքատացկնեմ*[1], *առողջացկնեմ*[2], *դողացկնեմ*[3], *զիճացկնեմ*[4], *զայրացկնեմ*[5], *զաւրացկնեմ*[6], *թծուլացկնեմ*[7], *խնդացկնեմ*[8], *կենդանացկնեմ*[9], *կուրացկնեմ*[10], *մերկացկնեմ*[11], *ողջացկնեմ*[12] և այլն:

Վկայութիւններ. 1) *աղքատացկնեմ* ներկայի եզ. 1-ին դ. ԴԴ ճհէ. 2) *առողջացկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ղդ. 3) *զիջացկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 49. *զիջացկնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Ա. 204. *զիճացկնաւղ* ենէթ. դերբ. Բ խբ. 4) *դողացկնեն* ներկայի հոգն. 3-րդ դ. Ա. 204. 5) *զայրացկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 122. 6) *զաւրացկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճճբ. 7) *չթծուլացկնէ* ժխտ. ներկայի եզ. 3-րդ դ. ԴԴ ճհա. 8) *խնդացկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճա. 9) *կենդանացկնել* անորոշ դերբ. ԴԴ ճկզ. 10) *կուրացկնել* անորոշ դերբ. ԴԴ ճկե. 11) *մերկացկնէին* անկատ. հոգն. 3-րդ դ. Սմբ. Ժամ. 619. 12) *ողջացկնէր* անց. անկ. եզ. 3-րդ դ. ԴԴ լդ:

-nam /դաս. -anam/ վերջավորութեամբ բոլոր անանցողական բայերն այս ճևով են կազմում պատճառականի հիմքը, նոյնիսկ երբ դասական լեզվի մեջ այն բացակա է: Օրինակ. *աղեկկնեմ*[1] «բուժում եմ» /աղեկնամ «առողջանում եմ» բայից/. *ուժովկնեմ*[2] «ուժեղացնում եմ», *ուժովնամ* «ուժեղանում եմ» բայից. *լնկնեմ*[3] «լցնում եմ», *լնամ* «լցվում եմ» բայից. նոյնիսկ եթե *-նա* ածանցով կազմված բայական հիմքն իրականում գոյութիւն չունի, այդպիսին ենթադրվում է և դրանից կազմվում է պատճառականը՝ *կշտացկնեմ*[4] **կշտանամ* բայից /հմմտ. *կուշտ*/, *պարոնացկնեմ*[5] **պարոնանամ* բայից /հմմտ. *պարոն*/, *յաւկնեմ*[6] **յաւնամ* բայից /հմմտ. *յաւ*/, *հահանդկնեմ*[7] **հահընդնամ* բայից /հմմտ. *հահանդ* «հանդարտ, հանգիստ»/, *մողշկնեմ*[8] **մողշնամ* բայից /հմմտ. *մաղաշ*/, *ուժվորկնեմ*[9] **ուժվորնամ* բայից /հմմտ. *ուժվոր*/. *սպրկկնեմ*[10] **սպրկնամ* բայից /հմմտ. *սպրկիկ*/. *վատուժկնեմ*[11] **վատուժնամ* բայից /հմմտ. *վատուժ*/, *տաքկնեմ*[12] **տաքնամ* բայից /հմմտ. *տաք*/:

Վկայութիւններ. 1) *աղեկկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ մկզ, մկէ, Ա. 108. 2) *ուժովկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 76, 113. Բ իէ, իը, խա, կգ. *ուժովկնել* անորոշ դերբ. Բ ճլբ. 3) *լնկնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԴ ճհէ. *լնկնեն* ներկա-

յի հոգմ. 3-րդ դ. ԴԳ ճը. 4) *կշտայնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 69_5, 77_5, ԴԳ լգ. 5) *պարտնայնել* Հեմ. Կոռ. Dul. 485. 6) *յաւյնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ կը. 7) *հահանդյնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճկէ, ճճը. *հահընդյնէ* Ա. 95. Բ խը, ճժե. մլը. 3-րդ դ. Բ ծէ, հբ, ճա, ճղ, մհ. 10) *սպրկյո՛յ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ձծա. 11) *վատուժյնես* ներկայի եզ. 2-րդ դ. Ա. 198. *վատուժյնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Ա. 154. *վատուժյնեն* ներկայի հոգմ. 3-րդ դ. Ա. 17. 12) *տաքյնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճժդ. *տաքյնել* անորոշ դերբ. Ա. 198:

§328. Որպես հետևանք այն բանի, որ պատճառականների գերակշռող մեծամասնությունը կազմվում է *ա*-ով հիմքերից, նկատվում է պատճառականների կազմության այդ ճևին ընդհանուր նորմայի արժեք տալու և մնացած հիմքերի վրա տարածելու միտումը: Այսպես, *ե*-ով հիմքերից պատճառականը կազմվում է *-ցնեմ /=*-ացուցանեմ/* և ոչ *-եցնեմ /=*-եցուցանեմ/* վերջածանցով. *խմցնեմ*[1] փոխ. **խմեցնեմ* *խմեմ* բայից. *արծկցնեմ*[2] փոխ. դաս. *արծակեցուցանեմ* *արձակեմ* բայից. *երդմնցնեմ*[3] փոխ. դաս. *երդմնեցուցանեմ* *երդմնեմ* բայից. *երեւցնեմ*[4] փոխ. դաս. *երեւեցուցանեմ* *երեւիմ* բայից. *կանանուխցնեմ*[5] փոխ. դաս. *կանխեցուցանեմ* *կանխեմ* բայից. *վազցնեմ*[6] փոխ. դաս. *վազեցուցանեմ* *վազեմ* բայից. *յամքցնեմ*[7] փոխ. դաս. *յամաքեցուցանեմ* *յամաքեմ* բայից. *պատրաստցնեմ*[8] փոխ. դաս. *պատրաստեցուցանեմ* *պատրաստեմ* բայից և այլն:

Վկայությունները. 1) *խմցնես* ներկայի եզ. 2-րդ դ. Բ մլը, ճղթ, ճճդ. *խմցնեն* ներկայի հոգմ. 3-րդ դ. Բ միէ. *խմցնել*, սեռ. *խմցնելոյ* Բ միդ, միե. *խմցույց* անց. կատ. եզ. 3-րդ դ. ԴԳ ճկ. *խմցոյ* հրամ. եզ. 2-րդ դ. Բ ժէ, ծ, ճէ, ճը, ճղթ, միզ, մլա, մլը. 2) *արծկցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճճը. *արծկցնել* անորոշ դերբ. Բ մճդ. 3) *երդմնցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. 57_{24}. 4) *երեւցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ը. 5) *կանանուխցնել* անորոշ դերբայ 17_{23}. 6) *վազցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. ԴԳ ճկը. 7) *յամքցնէ* ներկայի եզ. 3-րդ դ. Բ ճհդ, ճճե, ճճէ, ճղթ, մկէ. 8)*պատրաստցնել* Ա. 155:

§329. Արդեն Մխիթար Հերացու մոտ, Սմբատից գրելեե մի դար առաջ, ինչպես նաև ավելի նոր Վաստակոց գրքում, կարելի է գտնել *-ցնեմ* վերջավորությամբ պատճառականը: Այստեղ, սակայն, պատճառականը պահպանում է ավելի հին հնչյունական վիճակը. որովհետև *-ցնեմ* վերջածանցից առաջ գրելեե կանոնավոր ձևով պահպանվում է համապատասխան պարզ բայի ներկայի հիմքի ճայնավորը: Վերջիններս կարող են ծագել մասամբ այդ գրվածքների ավելի ուշ, նոր հայերեն խմբագրությունից: Մխ. Հերացու մոտ

գոնում ենք *-ցնեմ* վերջավորությամբ հետևյալ պատճառականները. *անցնեմ*[1] = դաս. *անց-ուցանեմ*. *բլցնեմ*[2] = դաս. *փլ-ուցանեմ (փլ-ուզանեմ)*. *կերցնեմ*[3] = դաս. *կեր-ուցանեմ*. *հասցնեմ*[4] = դաս. *հաս-ուցանեմ*. *հատցնեմ*[5] = դաս. *հատուցանեմ*. *մտցնեմ*[6] = դաս. **մտ-ուցանեմ*. իսկապես միայն *մուցանեմ*. *յարցնեմ*[7] = դաս. *յար-ուցանեմ*: Ներկայի *-ա-* ըմորոշիչով պարզ բայերից կազմված պատճառականներ. *զիջայնեմ*[8] = դաս. *զիճայուցանեմ*, *զիջայուցանեմ* *զիճանամ*, *զիջանամ* բայից. *դիժարկնեմ*[9] = դաս. **դժուարայուցանեմ* *դժուարանամ* բայից. *դողայնեմ*[10] = դաս. *դողայուցանեմ* *դողամ* բայից. *եղկայնեմ*[11] = դաս. *եղկայուցանեմ* (հետին ճև) **եղկանամ* բայից. *եռայնեմ*[12] = դաս. *եռայուցանեմ* *եռամ* բայից. *թուլայնեմ*[13] = դաս. *թուլայուցանեմ* *թուլանամ* բայից. *խոյայնեմ*[14] = դաս. *խոյայուցանեմ* *խոյանամ* բայից. *կակղայցնեմ*[15] = դաս. *կակղայուցանեմ* *կակղանամ* բայից. *հաստայնեմ*[16] = դաս. **հաստայուցանեմ* *հաստանամ* բայից. *հովայնեմ*[17] = դաս. *հովայուցանեմ* *հովանամ* բայից. *հոտայնեմ*[18] = դաս. **հոտայուցանեմ* *հոտանամ* բայից. *յերկարայնեմ*[19] = դաս. *յերկարայուցանեմ* *յերկարանամ* բայից. *չորայնեմ*[20] = դաս. *չորայուցանեմ* *չորանամ* բայից. *տկարայնեմ*[21] = դաս. *տկարայուցանեմ* *տկարանամ* բայից. *ցրտայնեմ*[22] = դաս. *ցրտայուցանեմ* *ցրտանամ* բայից: Առանց *-ցնեմ* վերջավորությանը նախորդող *-ա-* ճայնավորի կազմված են հետևյալ ճևերը. *եռնեմ*[23] = դաս. *եռայնեմ*. *խոյցընեմ*[24] = դաս. *խոյայնեմ*, *կակղնեմ*[25] = դաս. *կակղայնեմ*. *հաստցընեմ*[26] = դաս. *հաստայնեմ*. *հովնեմ*[27] = դաս. *հովայնեմ*. *վատուժնեմ*[28] = դաս. *վատուժայնեմ*: Ապա *յաւելնեմ*[29], *շատնեմ*[30] (= դաս. *շատայուցանեմ*), *ուժովնեմ*[31], *վերնեմ*[32], *տաքնեմ*[33], *քրտընցընեմ*[34] (= դաս. *քրտնայուցանեմ*): Ապա ներկայի *-ե-* կամ *-ի-* ըմորոշիչով բայերից կազմված պատճառականները. *ընծայեցնեմ*[35] = դաս. *ընծայեցուցանեմ* *ընծայեմ* բայից. *խաղաղեցնեմ*[36] = դաս. *խաղաղեցուցանեմ* *խաղաղիմ* բայից (սակայն ավելի հաճախական է. դաս. *խաղաղացուցանեմ* *խաղաղանամ* բայից). *ծորեցնեմ*[37] = դաս. *ծորեցուցանեմ* *ծորիմ* բայից. *կամեցնեմ*[38] = դաս. *կամեցուցանեմ* *կամեմ* բայից. *յանեցնեմ*[39] = դաս. *յանեցուցանեմ* *յանեմ* բայից. *յերկարեցնեմ*[40] = դաս. **յերկարեցուցանեմ* *յերկարեմ*, *-իմ* բայից. *յորդորեցնեմ*[41] = դաս. *յորդորեցուցանեմ* *յորդորեմ* բայից. *նստեցնեմ*[42] = դաս. **նստեցուցանեմ* *նստիմ* բայից (որ իսկապես հանդիպում է. դաս. *նստ-ուցանեմ*). *պակասեցնեմ*, *պակսեցնեմ*[43] = դաս. *պակասեցուցանեմ* *պակասեմ*, *-իմ* բայից. *պատրաստեցնեմ*[44] = դաս. *պատրաստեցուցանեմ* *պատրաստեմ* բայից. *պարկեշտեցնեմ*[45] = դաս. **պարկեշտեցուցանեմ* (իսկապես միայն դաս. *-տուցանեմ* *-տանամ* վերջավորությունից). *ցամաքեցնեմ*[46] = դաս. *ցամաքեցուցանեմ* *ցամաքեմ* բայից: Նրանց կողքին,

առանց *ե* ձայնավորի *-ց*-ից առաջ. կան հետևյալ ձևերը. *պարկեշտյանեմ*[47] փոխ. *պարկեշտեցնեմ, վախցնեմ*[48] փոխ. *վախեցնեմ* = դաս. *վախեցուցանեմ*:

Վկայութիւններ. 1) *անցնէ* 22, 23, 67. 2) *չըլլցնես* 99. 3) *կերցուր* 41, 46. 4) *հասցնել* 78. 5) *հատցնէ* 40, 35. 6) *մտո* 17. 7) *յարցնէ* 94. 8) *գիճացնեն* 42. 9) *դիժարցնէ* 95. 10) *դողացնէ* 80, 107, 131. 11) *եղկացնելով* 11. 12) *եռացնէ* 92. 13) *ֆռուլացնէ* 92. 14) *խոցացնէ* 48. 15) *կակղացընես* 95. *կակղացընէ* 92. 16) *հաստացնէ* 83. 17) *հովացնէ* 9. 18) *հոտացնեն* 29. 19) *յերկարացնէ* 83. 20) *չորացնէ* 18. 35. 10. *չորացնեն* 40. 91. *չորացնել* 53. 21) *տկարացնէ* 18. 22) *կրտացնէ* 80. 23) *եռցո՛* 44. 24) *խոցցընէ* 53. 25) *կակղցնեն* 111. *կակղցնէ* 71. 122. *կակղցնել* 52. 26) *հաստցընէ* 85. *հաստցնէ* 120. *հաստցընես* 95. 27) *հովցնես* 95. *հովցնել* 107. *հովցնէ* 91, 73. 28) *վատուժցնէ* 46. *վատուժցնես* 99. 29) *յաւելցնէ* 29, 93. *չի-յաւելցնես* 99. 30) *շատցնէ* 39. 31) *ուժովցընէ* 39. 32) *վերցնել* 101. 33) *տաքցընեն* 91. *տաքցնեն* 4, 35, 40. *տաքցնէ* 22, 63. 34) *քրտընցընել* 130. 35) *ընծայեցնէ* 35, 80. 36) *խաղաղեցնէ* 22. *խաղաղեցնես* 16. 37) *ծորեցնէ* 92. 38) *կաթեցնես* 41. 39) *յամեցնէ* 23, 83, 99. *յամեցնես* 95. 40) *յերկարեցնես* 95. 41) *յորդորեցնեն* 100. 42) *նստեցնեն* 71. 43) *պակասեցնէ* 65. *պակսեցնէ* 32. 44) *պատրաստեցնես* 127. 45) *պարկեշտեցնէ* 83. 46) *ցամաքեցնէ* 10, 50. 47) *պարկեշտցնէ* 101, 139. 48) *վախցնեն* 136:

Վաստակոց գրքում առկա են *-ցնեմ* վերջավորութիւնը պատճառականի հետևյալ ձևերը. *անուշացնեմ*[1] = դաս. *անուշացուցանեմ. լաւացընեմ*[2] = դաս. *լաւացուցանեմ. կակղացընեմ*[3] = դաս. *կակղացուցանեմ. կշտացնեմ*[4] = դաս. **կշտացուցանեմ. նօսրացընեմ*[5] = դաս. *նօսրացուցանեմ. պարարտացընեմ*[6] = դաս. *պարարտացուցանեմ. վատուժացնեմ*[7] = դաս. **վատուժացուցանեմ. քաղցրացնեմ*[8] = դաս. *քաղցրացուցանեմ. լըմընցընեմ*[9] = դաս. **լմնացուցանեմ. սիրցընեմ*[10] = դաս. **սրացուցանեմ՝ սրանամ բայից. բանեցընեմ*[11] = դաս. **բանեցուցանեմ. բռնեցնեմ*[12] = դաս. **բռնեցուցանեմ. յիստակեցընեմ*[13] = դաս. *յստակեցուցանեմ. վազեցընեմ*[14] = դաս. *վազեցուցանեմ. քաղցեցընեմ*[15] = դաս. *քաղցեցուցանեմ. վազցընեմ*[16] = *վազեցընեմ* /առանց *ե*-ի *ց*-ից առաջ/. *ուժովցընեմ*[17] /հմմտ. վերևում/. անցյալ կատարյալի 2-րդ հիմքից կազմված է *փակցընեմ*[18] = դաս. *փակ-ուցանեմ*:

Վաստակոց գրքից. 1) *անուշացնել* 16. 2) *լաւացընէ* 220. 3) *կակղացընեն* 17. 4) *կշտացնել* 180. 5) *նօսրացնել* 21, *նօսրացընես* 185. 6) *պարարտացընէ* 17. 7) *վատուժացնեմ* 16. 8) *քաղցրացընէ* 17. 9) *լըմընցընեն* 225. *լըմընցընել* 67. 10) *սիրցընես* 204. 11) *բանեցընեն* 92. *բանեցընել* 17. 12) *բռնեցընեն* 178. 13) *յիստակեցընես* 185. 14) *վազեցընես* 210. 15) *քաղցեցընես* 225. 16) *վազցընել* և սեռ. *վազցընելոյ* 204. 17) *ուժովցընէ* 119. 18) *փակցընէ* 221:

Միջին հայերենի *-ցնեմ* վերջավորությամբ պատճառականը պահպանվել է նոր հայերենում: Այսպես, օրինակ, գրական արևմտահայերենում /Այտ. Բ 89 հաջ./, գրական արևելահայերենում /Պալաս. էջ 78 հաջ./, Ախալցխայի բարբառում /Том. Ах. диал. էջ 72/, Թիֆլիսի բարբառում պատճառականի *-ցնեմ* վերջավորությունը հանդես է գալիս *-ցնիմ* ձևով:

Դրա փոխարեն, հյուսիս-արևմտյան հայերենին /Լեհաստանի, Դոնի Նախիջևանի և այլ բարբառներին/ բնորոշ է *-նում* վերջավորությամբ պատճառականը, ընդ որում *ն* ռնգայինին նախորդող *ը* ձայնավորը նույնպես դառնում է *ու*:

Այսպես, Լեհ. g-avelçunum Han. 31, gi-čorçunum Han. 42, gi-gorsunum Han. 58, gi-gəpçunum Han. 60, gi-mejçunum Han. 90, gi-megdəxçunum Han. 90, gi-tarçunum Han. 116, gi-verçunum Han. 123, gi-tarçunum Han. 116[61] և այլն. սակայն ս ձայնավոր չունեն նախավերջին վանկում, օր. g-arjeçnum Han. 27, g-imaçnum Han. 73, gi-keraçnum Han. 78, gi-sorveçnum Han. 111, gi-səreçnum Han. 113, gi-šareçnum Han. 114, որովհետև այստեղ պարզ ç-ի և n-ի միջև չի զարգացել երկրորդական ə ձայնավորը: Նույն կերպով Նախիջևանի բարբառում /Патк. Мат./ առկա են հետևյալ ձևերը. *վերցունում* 34_{18} *քըխեվցունու* 35_{16}. *չ-էրկըցնում* 39_4, 45_3. ապա նաև ոչ պատճառական *ն* հիմքերից. *քը-հարցնում* 111_{24}, *հարցունու* 37_{14}, 47_{12}, *կուտնու* 45_2, 47_{13}, *քուցունում* 110_{17} և այլն:

Միայն եզակիի 3-րդ դեմքն այդ բարբառում պահպանել է *է* վերջավորությունը, ըստ երևույթին, *ե* և *ի* հիմքերի 3-րդ դեմքի ձևի ազդեցությամբ /տե՛ս ստորև/. *կու-լումունչէ* 27_{11}, *կը-վերցունէ* 5_{22}, *կ-անցունէր* 33_{19}, *կ-անցունէ* 34_{12}, *կը-վերցունէ* 48_9, *կու-ցունէ* 110_8, *քը-հարցունէ* 28_8 և այլն: Բնականաբար պահպանվել է նաև անորոշ դերբայի *ե* ցուցիչը, քանի որ դրա թեք հոլովները չէին կարող պահել *ու* ձայնավորը: Այդպես է վիճակը Նախիջևանի բարբառում. սեռ. *ցավկունելու* 6_{17}, բացառ. *հարցունելէն* 29_{20}. Լեհ. avelcənelu, čorcənelu, gorsənelu, tarjənelu և այլն: Ինչպես ճիշտ է նկատել արդեն Աջռնյանը /Քնն. քերակ. Ա. 188/, այստեղ տեղի է ունենում *ու* հիմքերի ոլորտի տարածումը, մինչև հայերեն այնպիսի հիմքերից եվնելով, ինչպես *տեսնում* /Լեհ. desnum Han. 45/, *գտնում* /Լեհ. kədnum Han. 82. Նախ. kudnum/, ičnum/Լեհ. unčnum Han. 125/ *ու* թեմատիկ ձայնավորը հյուսիսային արևմտահայերենում տարածվում է որոշ ածանցյալ *և* հիմքերի վրա,

---

[61] 1751 թվականի լեհ. մի փաստաթղթի մեջ /Մին. Լեհ./. *կու հաշտեցնում* 128_{28}, *փուճացնում* 180_{15} և այլն:

որից հետո այդ բարբառախմբում գործող[62] օրենքի համաձայն *ն* բաղաձայնին նախորդող *ը* ձայնավորը պետք է առնմանվեր *ու* թեմատիկ ձայնավորին: Առնմանումով առաջացած *ու* ձայնավորը մյուս ճևերից անալոգիայով անցել է եզակի 3-րդ դեմքին */վերցնում է, անցնում էր/*, չնայած որ դա արդարացված չէ ստուգաբանորեն:

Մնացած, այսինքն պարզ *ե* հիմքերը հյուսիս-արևմտյան բարբառախմբի մեջ, ինչպես նաև իտալիզմով բնութագրվող Թիֆլիսի բարբառում, հնչյունական օրենքների համաձայն /Հնչյունաբ. §43 ծան./ դարձել են *ի* հիմքեր: Օրինակ. Լեհ. perim /= կիլ. *բերիմ*/ Han. 102, pərnim/= կիլ. *բռնեմ*/ Han. 106, pəndrim /= կիլ. *փնտռեմ*/ Han. 106: Եզակի 3-րդ դեմքը, որ այդ կանոնին չի ենթարկվում, բնականաբար զերծ է մնացել հիշյալ հնչյունափոխությունից: Կիլիկյան հայերենում կարելի է գտնել այդ ճևափոխության ամենաշատը մի թուլլ սկիզբ: Դա կարող են ապացուցել, եթե դրանք ճիշտ են հասել մեզ, հետևյալ ճևերը. *ինք* ներկայի հոգն. 1-ին դ. փոխ. ենք Անս. Անտ. 29_{24}. *ին* ներկայի հոգն. 3-րդ դ. փոխ. *են* L. 189_5: *Ե* հիմքերը կիլիկյան հայերենում բոլորից շատ են, և *Ե* խոնարհումն անցողական բայերի կանոնավոր խոնարհումն է: Դա երևում է այն բանից, որ *Ե* խոնարհմանը հետևում են բոլոր փոխառյալ բայերը:

II. ՆԵՐԿԱՅԻ *Ի*-ՈՎ ՀԻՄՔԸ

§330. Ինչպես հայտնի է, դասական հայերենի *ի*-ով հիմքերը բաժանվում են երեք խմբի. 1) անցողական հիմքեր. ինչպես *ունիմ, տանիմ*, և քիչ թվով ուրիշներ. 2) անանցողական հիմքեր. ինչպես *խօսիմ, սովորիմ*. 3) կրավորական նշանակություն ունեցող հիմքեր /խոսքը բուն կրավորական հիմքերի մասին չէ, որոնք չկան դասական լեզվում/: Առաջին խոնարհման անցողական հիմքերին, ավելի հազվադեպ ուրիշ խոնարհումների նման հիմքերին, համապատասխանում է մեկական ոչ բուն կրավորական *ի*-ով հիմք:

Կիլիկյան միջին հայերենում հին *ի* թեման պահպանվել է 1-ին և 2-րդ ֆունկցիաներով, այսինքն որպես անցողական և անանցողական: Դրա փոխարեն կրավորականի *ի*-ով հիմքի մասին խոսք չի կարող լինել. վերջինս որպես այդպիսին, դուրս է ընկել և տեղի տվել կրավորականի մի նոր, մի-

---

[62] Առնմանման այս օրենքի օրինակներն են Նախիջևանի բարբառում. *կուրէխ* 28_5, *փունուլթինը* $82_{14,17}$, *խունձոր* 50, *խունլթում* 50, <**խընլթում*, *կուտնուս*<**կընտուս* 45 և այլն: Լեհահայերենի համար հմմտ. Հնչյունաբ. էջ 56:

ջին հայերեն թեմայինից[63] /ավելի մանրամասն տե՛ս §350 հաջ./: Միայն, ինչպես ասվել է վերևում, որոշ դեպքերում ներգործական *ե*-ով հիմքի կողքին կարելի է դնել նաև մի *ի*-ով հիմք՝ միջակ կամ չեզոք նշանակությամբ: Կիլիկյան *ի*-ով հիմքերն այսպիսով, եթե հաշվի չառնենք սակավաթիվ անցողական բայերը, բացարձակապես անանցողական կամ չեզոք բնույթի են կրում: Սակայն ոչ բուն կրավորական *ի*-ով հիմքերը, որ եղել են կիլիկյան հայերենում, այլևս չկան: Մանավորապես կարելի է հիշատակել հետևյալ կիլիկյան *ի*-ով հիմքերը:

§331. 1) *Անցողական բայեր. ունիմ*[1], *ընդունիմ*[2], *տանիմ*[3] = դաս. *տանիմ*:

Վկայություններ. 1) *ունիմ* 23_{10}, 67_{8}. *ունիս* 43_{8}. *ունի* 9_{11}, 13_{25}, 25_{16}, 39_{5}, $49_{33.36}$, L. $158_{2.3}$. *ունին* 3_{5}, 19_{24}, 51_{1}, 61_{15}. 2) *ընդունի* 51_{5}, 77_{3}. 3) *տանիս*, Լևոնի երգ. Dul. 540. *տանի* 51_{14}, 79_{1}. *տանին* 25_{18}:

§332. 2) *Անանցողական բայեր.*

ա) Պարզ հիմքեր. *ապրիմ*[1], *խօսիմ*[2], *կամիմ*[3], *կռվիմ*[4], *հաշտիմ*[5], *հանգիմ*[6] = դաս. *հանգիմ*, *նստիմ*[7], *պարտիմ*[8], *պիտի*[9], *պաղիմ*[10], *շահիմ*[11]: Ապա *դատըստանիմ*[12] «զանգատվում եմ», *ուրդիմ*[13] «առաջանում եմ», *վհենկիմ*[14] «տուժում եմ», *անկի* կամ *անգի*[15] «անհրաժեշտ է», *փոշմընկիմ*[16] «զղջում եմ». վերջիններս բոլորն էլ դասական լեզվին խորթ հիմքեր են:

բ) Ածանցված *նի*-ով հիմքեր. *անցնիմ*[17] = դաս. *անցանեմ*, *անցանիմ*. *ընկնիմ*[18] = դաս. *անկանիմ*. *լինիմ*[19] /դաս. նույնը/. *հազնիմ*[20] = դաս. *ազանիմ*. *հասնիմ*[21] = դաս. *հասանիմ*. մեռնիմ[22] = դաս. *մեռանիմ*. *ուսնիմ*[23] = դաս. *ուսանիմ*:

գ) Ածանցյալ *-չի*-ով հիմքերը պահպանվել են ինչպես նոր, այնպես էլ կիլիկյան հայերենում: Վկայված են, օրինակ. *զարմչիմ*[24], *փախչիմ*[25], *փրչիմ*[26]:

Վկայություններ. 1) *ապրի* 45_{16}, 47_{7}, 59_{27}. *ապրին* 55_{14}. ԴԳ ճհ. *ապրիլ* անորոշ դերբայ, ԴԳ ղէ. 2) *խօսի* 35_{4}, 51_{13}. 3) *կամի* 3_{20}, 27_{7}, 31_{20}, 47_{24}, 49_{36}. 4) *կռվի* 35_{29}, 59_{17}, 61_{16}. *կռվին* 33_{8}, 35_{23}. 5) *հաշտի* ԴԳ ճժբ, 226_{13}. *հաշտին* $49_{21.22}$. ԴԳ ճժբ, ճհ. *հաշտիլ* ԴԳ ճհ. 6) *հանգին* 49_{22}. .7) *նստի* 11_{7}. 8) *պարտիմ* 21_{26}. *պարտի* $9_{9.10.17.23}$. 11_{6}, 15_{21}, 75_{8}. *պարտին* 51_{11}. ԴԳ ճժբ. 9)*պիտի* 15_{13}, 19_{29}, $21_{12.14.18}$, 25_{24}, 45_{16}, $47_{27.29}$, 49_{26}, 53_{17}. 10) *պաղիմ* Զքբ հ. 153. 11) *շահի* ԴԳ խե. *շահիք* 3_{22}. *շահին* 51_{17}. 12) *դատըստնի* 21_{24}, 25_{10}, 27_{26}, 29_{14}, 37_{4}, 51_{9}, 57_{9}, 59_{31},

[63] Կիլիկյան-միջին հայերեն գրվածքներում հանդիպող կրավորականի հին ձևերը սոսկ դասական են:

65_{14}, 67_{8}, 69_{1}, 73_{1}. *դատըսանին* 57_{14}, ԴԳ ճլե. *դատըսանիլ* 25_{27}, 23_{5}, 59_{1}. 13) *ուրդի* 13_{6}, 15_{7}, 39_{8}. ապա Վաստակոյ գրքում հետևյալ տեղերը. *զինչ ուրդի* 93, 158. *թէ ուրդի* 206. *շատ ուրդի* 219. *քիչ ուրդի* 152. Մխ. Հերապատ. *ուրդի* 52. 88. 96. 108. 110. *թէ ուրդի* 69. 77. *կայ եւ ուրդի* 59. *ուրդին* Մխ. Հեր. 139. 143. *ուրդեսյաւ* Մխ. Հեր. 132. 14) *վզենկիք* 3_{23}, 51_{17}. *վզենկին* 51_{17}. 15) *սնդի* 93_{20}. *սնկի* 95_{21}, Մխ. Հեր. 148. 16) *փօշանըմի* 83_{6}. *փօշանըմիլ* 83_{26}, ԴԳ ճժ. 17) *անկնի* ԶգԲ. Մխ. Հեր. 28. 100. *կու անկնին* L. 156_{9}. 18) *ընկնի* 39_{19}, ԴԳ ճբ. ճժա. ճկ. լգ. ԶգԲ նխա. Մխ. Հեր. 54. *ընկնին* 35_{3}, ԴԳ ժէ. 19) *լինի* 9_{15}. $11_{8.11}$. $13_{10.16}$. $15_{6.7.8.10.21}$. $17_{8.9}$. $19_{5.7.14.18}$. $21_{11.16.25}$. 23_{15}. 25_{1}. 29_{16}. 45_{18}. $47_{31.38}$. 49_{35}. $55_{12.26}$. 57_{25}. 61_{7}. 63_{4}. 67_{5}. *լինին* $21_{5.11.16.25}$. $23_{6.15.21}$. 37_{20}. 53_{15}. 65_{15}. 20) *հազնիլ* 73_{17}. 21) *հասնի* 19_{8}. 21_{8}. 55_{5}. 71_{13}. 77_{14}. 83_{23}. ԶգԲ ծզ. Մխ. Հեր. 2. 23. 33. 82. 128. *հասնիլ* ԶգԲ ճճը. 22) *մեռնի* 17_{7}. 19_{12}. 21_{3}. $23_{15.18}$. 37_{15}. $45_{9.12}$. 45_{16}. $47_{5.6.13.21.31}$. 49_{8}. 55_{21}. L. 156_{30}. 158_{27}. *մեռնին* 19_{20}. 39_{3}. 49_{9}. 55_{14}. ԴԳ ղը. 23) *ուսնի* ԴԳ լգ. 24) *զարթնչի* ԶգԱ. Հ. 144. 25) *ախախչի* 29_{22}. 26) *փրչի* 81_{25}:

§333. 3) *Զեզոք /սիջակ/ սեռ. բաժնիմ*[1] ներգործ. *բաժանեմ*. կրավոր. *բաժանուիմ*. *հատնիմ*[2] ներգործ. *հատնեմ*. կրավոր. *հատնուիմ*. *լուծիմ*[3] ներգործ. *լուծեմ*, կրավոր. *լուծուիմ*. *ժողվիմ*[4] ներգործ. *ժողվեմ*, կրավոր. *ժողվուիմ*. *շտապիմ*[5] ներգործ. *շտապեմ*, կրավոր. *շտապուիմ*. *յիստակիմ*[6] ներգործ. *յիստակեմ*, կրավոր. *յիստակուիմ*. *աւիրիմ*[7] ներգործ. *աւիրեմ*, կրավոր. *աւիրուիմ*. *այրիմ*[8] ներգործ. *այրեմ*, կրավոր. *այրուիմ*. *եփիմ*[9] ներգործ. *եփեմ*, կրավոր. *եփուիմ*. *հալիմ*[10] ներգործ. *հալեմ*, կրավոր. *հալուիմ*: Նույն ձևով. *թրջիմ*[11], *խորվիմ*[12], *ըղորդիմ*[13], *կարաւղորիմ*[14] և այլն:

Նոր հայերենում մհ. *ի*-ով հիմքը մեծ մասամբ պահպանվել է: Որոշ բարբառներում. օր., Կուտիի, Նախիջևանի, մասամբ և արևելահայերենում, բայի այդ. որոշ *ե*-ով հիմքերը ճայնավորի փոփոխությյան շնորհիվ անցել են *ի* խոնարհման ոլորտը:

Վկայությունները. 1) *բաժնի* $13_{4.6}$. *բաժնին* ԴԳ ճկ. 2) *հատնի* ԶգԲ Հ. 150. 156. 3) *լուծի* Մխ. Հեր. 44. 4) *ժողվի* ԶգԲ Հ. 152. 5) *շտապի* Մխ. Հեր. 33. 6) *յիստկի* ԶգԱ. Հ. 148. Մխ. Հեր. 25. 7) *աւիրի* Մխ. Հեր. 63. *աւիրին* Մխ. Հեր. 36. 8) *այրիլ* Մխ. Հեր. 119. 9) *եփի* Ա. 187. 10) *հալի* Բ ճհը. ճղ. *հալին* Բ ճղե, ճղգ. 11) *թրջին* Բ ծղ. 12) *խորվի* Բ ճկգ. 13) *չըղորդի* ԴԳ հը. 14) *կարաւղորիլ* Բ միգ:

§334. Հին լեզվի *ա*-ով հիմքերը, որոնք, ի տարբերություն *-ե, -ի, -ու* ներկայի հիմքերի, պահպանվել են նաև բոլոր ժամանակակից բարբառներում, գտնում ենք նաև կիլիկյան հայերենում՝ մասամբ միջին հայերենի փոփոխված հնչյունական ձևով:

1. Պարզ *ա* հիմքեր

§335. *գամ*[1], *լամ*[2], *կամ*[3], *տամ*[4], *գնամ*[5], *մնամ*[6], *աղամ*[7], *աւտամ, ավտամ*[8] (= դաս. *հաւատամ*), *երթամ*[9], *խաղամ*[10], *խղճամ*[11], *կարդամ*[12], *հոգամ*[13], *յետամ*[14], *ջանամ*[15]:

Ծան. Կիլիկյան հայերենում ամբողջովին անհետացել է նոր հայերենում ևս անգործածական *կեամ* բայը, որ փոխարինվում է *ապրիմ* կամ *կենամ* բայերով:

Վկայություններ. 1) *գաս* $13_{13.16}$, 15_{18}. *գայ* $11_{5.17}$, $13_{1.10.17.22.27}$, $15_{2.23}$, $25_{7.20}$, 77_{8}. *գան* 11_{26}, 15_{12}, 25_{14}, 27_{10}, 51_{1}, 53_{20}, 67_{24}, L. 156_{14}, L. 178_{11}. *կու գայր* 3_{15}. *գալ* $23_{8.17.20}$. 2) *կու լաս* Սմբ. Ժամ. Dul. 669. *կու լար* Լևոնի երզ. Dul. 540. 3) *կայ* 9_{5}, 11_{2}, 17_{23}, 25_{25}, 67_{26}, 81_{6}, ԴԳ խզ. *կան* L. 154_{22}, 178_{8}, 185_{12}. 4) *կու տամ* $11_{17.23.26}$, 33_{2}. *կու տայ* 15_{17}, 19_{10}, 23_{13}, 69_{18}, L. 157_{21}. *տանք* 53_{23}. *տան* 27_{9}, $39_{24.26}$, $49_{23.27}$, 65_{24}, 77_{24}, L. $155_{2.6}$. *կու տան* $155_{9.24}$. *կու տային* L. $155_{13.16.17.22}$. *տալ* 9_{9}, 11_{17}, 49_{37}. 5) *կու գայր* 3_{15}. *կու գայ* 43_{1}. 6) *մնայ* 49_{31}, 77_{26}. *մնան* 49_{29}. 7) *աղա* ԶգՔ Հ. 147. 8) *ավտայ* 25_{11}. *ավտան* 25_{15}. *աւտան* 81_{7}. 9) *երթայ* 9_{17}, 11_{7}, 13_{32}, $15_{1.14.24}$, 25_{4}, 29_{9}, 43_{3}. *երթան* $25_{14.18}$, 39_{25}, ԴԳ ճհ. 10) *կու խաղայ*. Լևոնի երզ. Dul. 539. 11) *խղճայ* ԴԳ ճլ. 12) *կարդայ* $75_{12.13}$. 13) *հոգայ* 21_{8}. 14) *յետայ* ԶգՔ 152. 15) *ջանայ* 29_{3}, 81_{22}:

2. Ընդարձակ *ա* հիմքեր

§336. *Ընդարձակ հիմքերի ոլորտը մտնում է ամենևին առաջ Անս.* Անտ. 47_{2} վկայված *փռընքտալ* «փղշտալ» բայը, որի համար դասական լեզուն գիտե միայն մի պարզ ձև՝ առանց *ա*-ի. *փռնգալ /փռնկալ, փռնքալ/*: Կիլիկյան *փռընքտալ* ձևը պատկանում է *տ*-ով ընդարձակված հիմքերի խմբին, որոնք բազմաթիվ են հատկապես նոր հայերենում և բուն իմաստով բազմապատկականի հիմքերն են՝ մասամբ պարզ բայի միջոցով արտահայտված գործողության թուլացումով: Համմտ. Այտ. Բ էջ 303:

Այսպես, նոր հայերենում, հատկապես տաճկահայերենում, իրար կողքի են կանգնած *թռչիլ* և բազմապատկական *թռչ-տ-իլ, կտրել* և *կտր-տ-ել, խոցել*

և *խոց-ատ-ել*, *կոտիլ* և *կոտ-ըտ-իլ* և այլն Այդ հիմքերի ավելի հին ձևն է *-ատ*, *-ոտ*, *-ուտ-*, ինչպես նկատել է Այտընյանը /Քնն քերակ Բ էջ 303/, և սկզբից *ուշ դասական* շրջանում է երևան գալիս *կոր-ատ-ել* /*կորել* բայից/, *խոց-ոտ-ել* /*խոցել* բայից/, *կոտոր-ոտ-ել* և *կոտոր-ատ-ել* /*կոտորել* բայից/, *պատառ-ոտ-ել* /*պատառել* բայից/, *հերճ-ոտ-ել* և *հերճ-ատ-ել* /*հերճանել*, *հերճ-ել*, *հերճ-ուլ* բայից/, *յաւ-ատ-ել* /= նհ *ծու-ատ-ել*, հնմտ դաս *ծուէնք*/ ըստ երևույթին, *յաւէ* բայից

§337 Մնացած ընդարձակ *ա* հիմքերը համապատասխանում են հին հայերենի *-նա-* և *-անա-* ածանցներով հիմքերին Այսպես հին լեզվից են ժառանգված հետևյալ հիմքերը *բանամ*[1] = դաս *բանամ դառնամ*[2] = դաս *դառնամ ամրնամ*[3] = դաս *ամրանամ աջողնամ*[4] = դաս *յաջողանամ զիրնամ*[5] = դաս *զիրանամ գողնամ*[6] = դաս *գողանամ թմանամ*[7] = դաս *թմանամ թմանճրնամ*[8] = դաս *թմանճրանամ թրուլնամ*[9] = դաս *թրուլանամ լռկնամ*[10] = դաս *լռկանամ լուանամ*[11] = դաս *լուանամ խոշրնամ*[12] = դաս *խոշրանամ ծանդրնամ*[13] = դաս *ծանդրանամ հասկնամ*[14] = դաս *հասկանամ հարըստնամ*[15] = դաս *հարստանամ հոմնամ*[16] = դաս *հոմանամ մոռնամ*[17] = դաս *մոռանամ յեւեկնամ*[18] = դաս *առաւեկանամ յինանամ*[19] = դաս *ինանամ յօժրնամ*[20] = դաս *յօժարանամ նօսրնամ*[21] = դաս *անօսրանամ շորնամ*[22] = դաս *շորանամ ողջնամ*[23] = դաս *ողջանամ չորնամ*[24] = դաս *չորանամ սեւնամ*[25] = դաս *սեւանամ փոքրնամ*[26] = դաս *փոքրանամ*

Նրանց կողքին կիլիկյան-միջին հայերեն նորակազմությունները *աղեկնամ*[27] *աղեկ* բառից, *լննամ*[28] «լցվել» *լման* բառից, *կշտանամ*[29] *կուշտ* բառից, *ճանչնամ*[30] դաս *ճանաչեմ*, *ուժռնամ*[31] *ուժով* բառից *սուրտանանամ*[32] /դասականացված ձևն է *սուրտանանամ*/ *սուրտան* բառից, *տատապեմամ*[33] «նեղություն մեջ լինել» դաս *տատապեալ*

Վկայություններ 1) *բանայ* 85_6 *կու բանան* L 156_{15} 2) *դառնայ* 13_{22}, 25_7, 29_{11}, 37_9, 39_4, 45_{10}, $47_{5\,35}$, 55_{22}, 57_1, 75_{16}, L 158_{19} *դառնան* 13_{18} 3) *ամրնալ* 23_{20} *ամրցաւ* 59_{24}, 69_6 4) *աջողնայ* 65_{23} 5) *զիրնան* ԴԳ ճհ 6) *գողնան* 65_8 *գողնայր* Սմբ Ժամ 629 7) *թմանան* Բ ճհե 8) *թմանճրնայ* Բ ճճ[թ], ծե, ճդ Ա. 233 9) *թրուլնա* Բ ճիգ 10) *լռկնալ* ԴԳ ճիե 11) *լուանա* Բ ճհդ 12) *խոշրնա* Ա. 210 13) *ծանդրնայ* ԶգԱ. և Բ 14)*հասկնայ* 13_{18}, 51_{15} *հասկնան* 39_{14} 15) *հարըստնայ* 35_{10} 16) *հոմնայ* Բ ճճե 17) *մոռնալ* ԴԳ ճկ 18) *յեւեկնա* Ա. 151, 225 *յեւեկնալ* 223 19) *յինանան* ԴԳ ճլ 20) *յօժրնայ* ԶգԲ չ 146 21) *նօսրնա* Ա. 186 22) *շորնայ* ԶգԲ չ 156 23) *ողջնալ* ԴԳ ճհ 24) *չորնայ* Բ խ. ճիե 25) *սեւնայ* Բ մա 26) *փոքրնայ* ԶգԱ. չ 144 27) *աղեկնա* Ա. 257, Բ մկզ, մե, միզ, մժզ, մծ[թ] 28) *լննայ* և *լննալ* ԴԳ խ. լդ 29) *կշտանայ* 67_{16} 30) *ճանչ-*

նան ԴԳ ժ. 31) *ուժտիմա* Ա 17. 32) *սուլտանապատ* Միխ. Ասորի. 318. 33) *տառապելնայ* ԴԳ ճհէ:

Մինչև այժմ բերված *ա* հիմքերը կամ արդեն առկա են դասական լեզվի մեջ, կամ էլ ստեղծված են դասական օրինակով: Որպես *հատուկ միջին հայերեն* է հանդես գալիս, սակայն, ընդարձակ *ա* հիմքերի մի խումբ, որոնք, դասական լեզվին դեռևս խորթ լինելով, երևան են գալիս սկզբում միջին հայերեն գրականության մեջ և դոյությունն պահպանում մինչև մեր ժամանակները: Մենք նկատի ունենք.

ԿԼԻԿՅԱՆ-ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ *-ԵՆԱ* ԱԾԱՆՑՈՎ ՀԻՄՔԵՐԻ ԽՈՒՄԲԸ

§338. Այս խմբի հիմքերը բոլորն էլ կազմված են *ե* և *ի* հիմքերից[64] *-անա-* ածանցի միացումով պարզ հիմքին. **ե-անա, *ի-անա*, ըստ Հնչյունաբ. §§79, 83, դառնում է *ենա*: Այդպես առաջացած *-ենա-* ածանցով ընդարձակ հիմքը, սակայն, որոշ դեպքերում, երբ *-ենա-* ածանցին անմիջապես նախորդում է *ն* ռնգայինը, կրճատվում է և դառնում *-նա-* ածանցով հիմք. *լինամ, լինանամ<լինենամ. ունանամ<ունենամ*: *-ենա* ածանցով կլիկյան հիմքերի բնորոշ գիծն է այն, որ, ի տարբերություն սովորական ընդարձակ *ն* հիմքերի, նրանք առանց բացառության ունենում են դուգահեռ պարզ ձևեր:

§339. *-ենա-* ածանցով կլիկյան թեմանների և համապատասխան պարզ հիմքերի աղյուսակ.

լինամ	*լինենամ*	*լինիմ*		
լինանամ				
ունամ	*ունենամ*	*ունիմ*	*թվենամ*	*թվիմ*
ունանամ			*այժենամ*	*այժեմ*
կենամ		*կամ*	*աժենամ*	*աժեմ*
գիտենամ		*գիտեմ*	*ծարվենամ*	*ծարվիմ*
կամենամ		*կամիմ*	*ճանչենամ*	*ճանչեմ*
կարենամ		*կարեմ*	*ուռենամ*	*ուռիմ*
ուզենամ		*ուզեմ*	*ամաչենամ*	*ամաչեմ*
պարտենամ		*պարտիմ*	*մօտենամ*	*մօտիմ*
պիտենամ		*պիտիմ*	*վախենամ*	*վախեմ*

[64] Կարծեցյալ բացառություն է կազմում միայն *կենամ* բայը՝ *կամ* պարզ ա հիմքի կողքին: Այդ բացառությունը կարծեցյալ է այն պատճառով, որ *կենամ /-*կե-անամ/* ձևը ծագում է ոչ թե *կամ*, այլ *կեամ* պարզ ձևից և դեռևս մասամբ պահպանում է «ապրել» սկզբնական նշանակությունը:

§340. *Լինանամ* և *ունամ* ձևերն երևան են գալիս միայն առանձին դեպքերում՝ սովորական *լինամ* և *ունանամ* ձևերի փոխարեն: *Ճանչենամ* ձևի փոխարեն ավելի հաճախ վկայված է *ճանչնամ*: Այդ մասին հմմտ. Այտ. Բ 72: Եթե հաշվի չառնենք *արբենամ*, *քաղցենամ*, *ընտանենամ* առանձին մնացող ձևերը, դասական լեզուն ցուցաբերում է միայն քիչ թվով համանմանութիւններ. *յամենամ /յամեմ* բայի համար/, *յագենամ /յագիմ* բայի համար/, *ներծենամ /ներծիմ* բայի համար/, *կատաղենամ /կատաղիմ* բայի համար/: Դրա փոխարեն, *-ենա-* ածանցով հիմքերը դեռևս խորթ են դասական լեզվին:

Դեռևս վաղ միջին հայերենի շրջանում առաջին անգամ են երևում, թեկուզ առանձին-առանձին, ռամկական լեզվի երեք հիմքերը. *գիտենամ, կամենամ* և *ճանաչենամ* /հմմտ. Նոր հայկազ./, մինչև որ կիլիկյան միջին հայերեն գրականութեան մեջ բերված բոլոր *ենա* հիմքերը դառնում են ընդհանուր: Վկայված են.

§341. *լինայ* 21_{15}, 25_{6}, 27_{14}, 29_{7}, 33_{6}, 35_{10}, 37_{8}, 61_{6}, 65_{8}, 73_{6}. *լիննայ* L. 157_{5}. *լինան* $19_{17.18.23.24}$, $27_{4.5}$, 31_{2}, 35_{8}, 37_{23}. *լիներ* 35_{31}. *լինալ* 59_{33}. *ունայ* $13_{23.24.30}$, 17_{14}, $19_{11.26}$, $21_{7.20.27}$, $23_{3.13.19}$, 25_{16}, 29_{19}, $31_{5.10}$, $37_{11.12.13.14.15.16}$, 39_{15}, $41_{2.10.11}$, 45_{23}, 47_{10}, $49_{1.5.30}$, 55_{14}, 59_{21}, 59_{39}, $61_{2.8.13}$. *ուննան* 19_{16}, 25_{19}, 47_{15}, $51_{8.10}$, 51_{12}, $53_{9.11}$. *ունան* 59_{13}. *ուննալ* 17_{24}, 47_{23}, 51_{21}. *կենայ* $15_{1.25}$, $19_{11.13.19}$, $21_{11.12}$, 23_{13}, 27_{19}, 29_{4}, $33_{16.23}$, $37_{4.5.15.18.25}$, $39_{3.22}$, 41_{20}, 43_{2}, $45_{13.14}$, 49_{35}, 55_{23}, $59_{2.36.38}$, $61_{1.18}$, 71_{8}, 79_{17}, $81_{4.8.11}$, 83_{13}. *կենան* 9_{20}, 27_{9}, 33_{5}, 39_{19}, 59_{39}. *կեցաւ* Սմբ. Ժամ. Dul. 678. *կենալ* L. 158_{25}. *գիտենայ* 59_{12}. *կամենայ* 11_{16}, 23_{5}, 29_{4}, 31_{13}, 33_{7}, 53_{2}, 55_{2}, $59_{16.17}$, 61_{10}, 75_{5}, 81_{19}, L. 155_{12}. *կամենան* 35_{21}, 53_{12}, $59_{18.22}$, 69_{17}. *կարենայ* 21_{19}, 73_{9}. *կարենան* $15_{14.25}$, 19_{20}. *ուզենայ* 13_{7}, 17_{24}, 25_{8}, $29_{5.9.13}$, 33_{9}, $35_{5.6.8.16.28}$, 43_{3}, 49_{16}, $71_{7.13.14}$, 75_{5}. *ուզենան* 35_{19}, 53_{9}. *պարտենայ* 13_{29}, $71_{17.19}$, $81_{18.24}$. *պիտենայ* 25_{26}, 61_{15}. *թվենայ* 79_{3}. *այժենայ* 73_{20}, Հ. 213_{17}, 225_{8}. *աժենայ* 29_{6}, $59_{34.35}$:

§342. ԶգԱ.-իկ. *թվենա* 239. 240. 242. *կենալ* 219. *թէ ուննա* և *թէ չունա* 157. *ուտենա* 160. *պիտենա* 51. 117. 118. 137. 155. 186. 199. 218. 251. 292 և այլն:

§343. ԶգԲ-ն ունի. *պիտենաս* ճգ. միզ. *պիտենա* մխա. *թվենա, թվենայ* ճդ. ճղզ, մժզ, մի, մլը, մլթ, մխ, մխէ. *լինա, լինայ* ժը, խ, կզ, ճժը, ճկզ, մլը, մլթ, մհ. *լինան* մի. *լինալ* մխա. *ծարվենա* ճժա, մծզ. *կամենաս* ժէ, ծ, կլթ, հ, հդ, ղը, ճժա, ճհզ, ճճը, ճղը, ճղէ, ճղը, ճղթ, ն, մա, մխը, մծզ, մծը. *կամենա, կամենայ* պ, խզ, խթ, ծէ, ճզ, ճը, ղ, մժթ, մխզ, մկթ. *կարենաս* մխե, մկէ *կա-*

ընենան մկզ. *կու կենա* մլճ, մկզ, մկէ, մկլճ. *կենա, կենայ* զ, հզ, հե, հլճ, ղե, ճ, ճի, ճիա, ճիզ, ճիե, ճհզ, ճհզ, ճճը, ճղ, ճղէ, մժզ, մժզ, մժը, միա, միզ, միե, միզ, մլզ, մլը, մլլճ, միէ, մծա, մծզ, մծզ, մծզ, մծէ, մկա, մկզ, մկէ, մկը, մկլճ, մհ. *կենալ* մլէ. *ճանչենաս* ճկա. *ուզենաս* մկզ. *ուզենա* մժզ, մժզ, մկլճ. *ուզենան* մկզ. *ունենա, ունենայ* ժզ, ժզ, ժէ, իզ, ճզ, ղը, հը, ճլզ, ճլճ, ճկող, ճհէ, ճղը, մժզ, մի, միզ, միզ, մլզ, մլը, միաա, մծ, մծա, մծզ, մծզ, մծէ, մծը, մկզ, մկլճ. *ունենալ* մկը. *ուռենա, ուռենայ* մկզ, ճծե, ճծէ, միաա, մկզ. *պիտենա. պիտենայ* ա, է, ը, ժզ, ժը, ի, իը, իզ, իզ, իե, իզ, լ, ճա, ճը, ճզ, ճզ, ճե, ղը, ճա, ճզ, ճը, ճիլճ, ճհզ, ճճլճ, ճղլճ, միէ, միէ, մծա, մծզ, մծե, մծէ, մծլճ, մկ, մկզ, մկզ, մհ:

§344. ԴԳ-ն ունի. *ածենայ* ծ, հը, ճլ, ճծզ. *չայժենայ* հը. *պիտենայ* իէ, կզ, ճէ. *պիտենայը* իը. *պիտենան* ա, իզ, իլճ, հզ, ճհէ. *լինաս* ճհէ. *լինա, լինայ* զ, ծզ, ծէ, ծը, կա, կզ, հ, հը, հզ, ճը, ղե, ճա, ճզ, ճլճ, ճժզ, ճի, ճիը, ճի, ճիը, ճծ, ճկ, ճկը, ճհ, ճհէ. *լինան* կ, հա, հզ, ճժզ, ճժե, ճիա, ճի. *լինալ* ծէ, հը. *կամենա, կամենայ* ա, լ, իէ, հը, հզ, հե, ղը, ճժզ, ճհէ. *կամենան* իը, կը, հ, ճկզ. *կարենայ* ճժզ. *կարենան* զ. *կենա, կենայ* ա, զ, ժ, իա, իլճ, իզ, իե, իէ, ծ, ծէ, կ, հ, հը, հէ, ղզ, ճլզ, ճհ, ճհը, ճհէ. *կենան* իա, իզ, լզ, իե, կ, հր, ղզ. *կենալ* ճհէ. *ուզենայ* իա, հը, ղը. *ունա, ունայ* ա, իէ, իլճ, ծ, կ, հը, ճ, ղը, ճժ, ճհզ. *ունան* ա, ղզ, կ, կը, հը, ճլզ. *ունայր* ճծէ. *ուննայինն* ժ. *ունալ* իզ, լզ, իէ, հը, ղը. *պարտենայ* ճ. *պիտենայ* զ, ճլճ:

§345. Նույն հիմքերը գրեթե բոլորն էլ առկա են միջին հայերեն «Վաստակոց գրքում»: Աչքի է ընկնում, սակայն, *լինամ* հիմքի բացակայությունը, իսկ *ունեմ* ձևի փոխարեն երևան է գալիս *ունենամ* նախնական ձևը: Պետք է նկատել, սակայն, որ ՋզՍ և ՋզՒ ձեռագրերի նման «Վաստակոց գրքում» այդ հիմքերն այնքան խիստ ձևով հեռացած չեն սահմանական եղանակի իմաստից /հմմտ. ստորև §347 և §424 հաջ./, որքան Սմբատի գրվածքներում: Մասնավորապես, «Վաստակոց գրքում» վկայված են հետևյալ դեպքերը. *ունենաս. որ ունենաս* 95. *թէ չունենաս* 160, *ունենաս* 171, *որ ունենաս* 173, *թէ ունենաս* 202, *ունենաս* 203, *որ ունենաս* 216. *ունենայ. թէ ունենայ* 11, *որ ունենայ* 30, *երբ ունենայ* 33, *թէ ունենայ* 39, *թող ունենայ* 51, 60, *որ ունենայ* 68, *չունենայ* 130_{24}, *չունենայ* 130_{25}, *չունենայ* 131, 147, *որ չունենայ* 148, *երբ ունենայ* 156, *որ ունենայ* 159, *ունենայ* 165, *թէ ունենայ* 170, *նա ունենայ* 177, *որ ունենայ* 191, 194, *չունենայ* 207, *թէ ունենայ* 212, *ունենայ* 213. *ունենան. որ ունենան* 138. *ունենալ* 14, 96, 100, 215. *կենաս. նա որ կենաս* 65. *կենայ. եթէ կենայ* 12, *թէ կենայ* 27, *երբ չկենայ*

27. *որ չկենայ* 34. *թէ սնկուժիւն կենայ* 39. *որ կենայ* 40. *երբ չկենայ* 44. *թէ կենայ* 52. 60. *մինչդեռ կենայ* 60. *որ կենայ* 60. *եթէ կենայ* 61. *թէ կենայ* 62. *որ չկենայ* 68. *կենայ* 78. 79. *թէ կենայ* 78. *որ կենայ եւ եփի* 80. *թէ կենայ* 84. *որ կենայ* 86. *կենայ* 97. *որ չկենայ* 100. *թող կենայ* 114. *որ չկենայ* 129. *որ կենայ* 129. *զերթ կենայ* 129. *թէ չկենայ* 132. *որ կենայ* 132. *զերդ կենայ* 135. *թէ կենայ* 162. *կենայ* 178. *զերդ կենայ* 184. *որ կենայ* 190. *թէ կենայ* 192. *զինչ կենայ* 192. 194. *զերդ կենայ* 194. *որ կենայ* 203. *թէ կենայ* 206. 214. 217. 220. *որ կենայ. թէ կենայ* 223. *կենան. որ կենան* 67. 70. *կենան* 104. *որ կենան* 130. *որք կենան* 158. *կու կենան* 193. *որ կենան* 216. *կենալ* 23. 62. 64. 67. 107. 129. *զիտենաս. որ զիտենաս* 7. *զոր զիտենաս* 117. 130. *երբ զիտենաս* 184. *զիտենաս* 184. *որ զիտենաս* 184. *զիտենայ. երբ զիտենայ* 25. *որ զիտենայ* 141. *որ չզիտենայ* 163. *զիտենան. որ զիտենան* 200. *զիտենալոյ. վասն զիտենալոյ* 48. *կամենաս. թէ կամենաս* 9. *մինչ կամենաս* 21. *թէ կամենաս* 22. 33. *թէ կամենաս* 37. *զոր կամենաս* 40. *ուր կամենաս* 40. 52. *թէ կամենաս* 52. *երբ կամենաս* 53. *մինչ կամենաս* 59. *թէ կամենաս* 61. *կամենաս* 118. *թէ կամենաս* 129. *երբ կամենաս* 137. *թէ կամենաս* 138. *երբ կամենաս* 141. 158. *թէ կամենաս* 161. *երբ կամենաս* 162. *քանի կամենաս* 163. *կամենաս* 165. *երբ կամենաս* 171. 179. *թէ որ կամենաս* 185. *երբ կամենաս* 187. 191. 192. *ուր կամենաս* 195. *երբ կամենաս* 201. *թէ կամենաս* 210. *երբ կամենաս* 222. *կամենայ. զոր կամենայ* 34. *եթէ կամենայ* 44. *քանի կամենայ* 129. *երբ կամենայ* 155. *ուր կամենայ* 179. *որ չկամենայ* 190. *որ կամենայ* 217. *կամենան. երբ կամենան* 18. *յորժամ կամենան* 97. *որ կամենան* 97. 134. *երբ կամենան* 135. 145. *որ կամենան* 154. *երբ կամենան* 204. *կարենաս. որով կարենաս* 33. *կարենաս* 130. *թէ կարենաս* 184. *ուզենաս. թէ ուզենաս* 20. *երբ ուզենաս* 102. *որ թէ ուզենաս* 132. *որ ուզենաս* 132. *երբ ուզենաս* 136. *յորժամ ուզենաս* 137. *երբ ուզենաս* 179. *թէ ուզենաս* 216. *ուզենայ. թէ ուզենայ* 37. *պիտենայ. որ չպիտենայ* 162. *երբ պիտենայ* 224. *թուենայ. որ թուենայ* 51. 196. *ժժենայ*. 182_{13}. ավելի հին ձև *արժենայ*, ԷՋ 39:

§346. Մխիթար Հերացու որոշ չափով ավելի հին բժշկական գրվածքում նույնպես վկայված են հետևյալ ձևերը. *լինայ. թէ լինայ* 87. *կենաս*. 120. *կենայ. որ կենայ* 5. *թէ կենայ* 9. *պատրաստ կենայ* 11. 21. *կենայ* 19. 25. 32. *թէ կենայ* 37. *կենայ* 46. 47. *չկենայ* 48. *թէ կենայ* 69. *կենայ* 78. *թէ կենայ* 104. *կենայ* 117. 122. 128. 131. 137. *կենան*. 38. *կեցել*. 91. *կենալ*. 35. 43. 93. 117. 128. *զիտենաս. եթէ զիտենաս* 5. *թէ զիտենաս* 14. *որ զիտենաս* 49. 80. 81. 82. 85. 94. *թէ զիտենաս* 106. *որ զիտենաս* 106. *երբ զիտենաս* 116. *զի-*

ունենայ. որ գիտենայ 39, 61, *գիտենայ* 134, 135, 137. *գիտենան. որ գիտենան* 37. *գիտենալ*. 15, 18, 57, 62, 135. *ծարավենայ. կամենաս. թէ կամենաս* 100. *կամենայ. որ կամենայ* 147. *յարենայ*. 9. *ունենայ*. 44, 101. *ուռենայ*. 67:

§347. *-ենա-* ածանցով կիլիկյան-միջին հայերեն հիմքերը, համապատասխան պարզ հիմքերի հետ միասին, իրենցից ներկայացնում են միևնույն բայի գույդ ձևեր: Սակայն ֆունկցիայի և կիրառության տեսակետից այդ հիմքերն ամբողջապես իրար փոխարինել չեն կարող: *-ենա-* ածանցով ընդարձակ հիմքի համար գործում է հետևյալ սահմանափակումը. *որպես կանոն, այն երբեք ներկայացված չէ սահմանականի ներկայի և անկատարի ձևով*:

Բայց այդ հիմքը կազմում է անորոշ դերբայն ու անցյալ կատարյալը, և հատկապես *ըղճական եղանակը*, ինչպես օրինակներով ցույց կտրվի ստորև §424: Կիլիկյան հայերենի համար հայտնի այդ երևույթը սահմանափակված չէ միջին հայերենի փուլով, այլ խնդրո առարկա հիմքերի հետ միասին անցել է նոր հայերենին: Այսպես, տաճկահայերենում և արևմտյան գրական լեզվի մեջ պատկանելությունն արտահայտող բայը հետևյալ տեսքն ունի.

ներկա		անկատար	
սահմանական	ըղճական	սահմանական	ըղճական
ունիմ	*ունենամ*	*ունէի*	*ունենայի*
ունիս	*ունենաս* և այլն	*ունէիր*	*ունենայիր* և այլն

ապառնի	անորոշ դերբայ
պիտի ունենամ	*ունենալ*
պիտի ունենաս և այլն	

Նմանապես. սահմ. ներկա *գիտեմ*, սահմ. անկատ. *գիտէի*, ըղճ. ներկա *գիտնամ*, ըղճ. անկատ. *գիտնայի*, անորոշ դերբ. *գիտնալ* ձևերի կողքին /հմմտ. Այտ. Բ 79/: Հմմտ. նաև Լեհ. /ըստ Han. 57, 78, 121/. gam սահմ. ներկա bi-genam /= Տաճկ. *պիտի կենամ*/ ապառնիի և genału /= Տաճկ. *կենալ*/ անորոշ դերբայի կողքին. սահմ. ներկա unim, b-unenam /= Տաճկ. *պիտի ունենամ*/ ապառնիի և unenału /= Տաճկ. *ունենալ*/ անորոշ դերբայի կողքին. kidim սահմ. ներկա bi-kidnam /= Տաճկ. *պիտի գիտնամ*/ ապառնիի, kidnału /= Տաճկ. *գիտնալ*/ անորոշ դերբայի կողքին և այլն:

Համապատասխանաբար, արևելահայերենը, խոնարհման անկանոն և անսովոր ձևի շնորհիվ, փրկում է *եմ, կամ, ունիմ, գիտեմ* սահմանականի ձևերը, երբ *-ենա-* ածանցով հիմքն իր վրա է վերցնում մնացած ժամանակների /ըղձ. և ապառնի/ ֆունկցիաները: Համմտ. Պալաս. Քերականութիւն մայրենի լեզուի. Թիֆլիս. 1894, §60:

Երկու հիմքերի միջին և նոր հայերենի համար ընդհանուր կիրառությունը չի կարող լինել կամայական, զուտ պայմանականությունից վրա հենվող, այլ զուգահեռ հիմքերի տարբեր ֆունկցիաները պետք է բխեն հենց հիմքերի տարբեր բնույթից: Այլ կերպ ասած, բնական է ենթադրել, որ պարզ հիմքից ձևական առումով տարբեր *ենա* հիմքը նշանակությունից առումով նույնպես տարբերվում է պարզ հիմքից և վերջինին հատուկ մաքուր բայիմաստը ներկայանում է մի քիչ այլ երանգավորումով:

Նոր հայերենի բարբառներում հիմքի ընդարձակ ձևն օգտագործվում է նաև սահմանական եղանակի նշանակությամբ. այն ունի, սակայն, ոչ թե ներկայի, այլ ապառնիի իմաստը: Այսպես Ալխ. /ըստ Том. Ах. диал. էջ 61 հաջ./. unẹnam-gə = «կունենամ», kidnam-gə, kidenam-gə = «կիմանամ»: Նույնը տաճկահայերենում, որտեղից Այտընյանը /Բ 80/ բերում է հետևյալ օրինակները. *հինայ չորս ունիս, վաղը քսան կ՚ունենաս. թէեւ քիչ գիտէ, ջանալով շատ կը գիտնայ*: Այստեղ ակնհայտորեն, ըստ Այտ. Բ 80, մաքուր հիմքը բայի գործողությունը նշանակում է որպես «ներգավոր և արդեն եղած գործողություն մը», իսկ ընդարձակ հիմքը որպես «հեռավոր և իբր թե թեությամբ»: Այստեղ, ուրեմն, պետք է որոնել ընդարձակ *ենա* հիմքերի նախնական և հիմնական նշանակությունը:

Այստեղ մենք գործ ունենք նույն բայական գործողությունը երկու տարբեր կերպերի հետ, սլավոնական լեզուների նման /հիշենք հին սլավոներենի կամ ռուսերենի բայի կերպերը/, երբ պարզ հիմքում որպես մաքուր և իսկապես արտահայտված բայական գործողությունն ածանցյալ *ենա* հիմքում դիտվում է մեկ ուրիշ տեսակետից՝ որպես հեռավոր և պայմանական:

Այստեղից, ածանցյալ *ենա* հիմքերի բնույթից, բացատրվում է նաև նրանց ինքնատիպ կիրառությունը. նրանք չեն կարող հանդես գալ սահմանականի ներկայի նշանակությամբ, որովհետև ըստ իրենց էության նրանք ապառնիի կամ ըղձականի բնույթ են կրում: Այդ պատճառով նոր հայերենում նրանք ունենում են ապառնիի նշանակությունը նաև սահմանականի ներկայի ձևով և կիրառվում նաև ըղձական եղանակի համար. այստեղից էլ նրանց հատուկ, ստորև /§432 հաջ./ ավելի մոտիկից դիտվող ֆունկցիան կիլիկյան միջին հայերենի խոնարհման մեջ:

§348. Դասական *գտանեմ, իջանեմ, տեսանեմ* հիմքերին կիլիկյան հայերենում համապատասխանում են *նու* հիմքերը. *գտնում, իջնում, տեսնում*[1]: Ա-պա, դաս. *կլանեմ* հիմքի փոխարեն գտնում ենք *կլնում*[2], *կալում* հիմքի փոխարեն - *կալնում*[3]: Ածանցյալ *նու* հիմքերի մեկ այլ խումբ համապատասխանում է դասական *նի* հիմքերին. *սկսանում*[4] = դաս. *սկսանիմ. հեծնում*[5] = դաս. *հեծանիմ. ուսնում*[6] = դաս. *ուսանիմ. պրծնում*[7] = դաս. *պրծանիմ*: Վերջին դեպքերը բնորոշ են հյուսիս-արևելյան միջին հայերենին, որն ունի նաև *մտնում*[8] փոխ. կիլ. *մտեմ. եմնում*[9] փոխ. կիլ. *եմնեմ, առեղծնում*[10] փոխ. կիլ. *առեղծնեմ* և այլն: Ժամանակակից լեհահայ բարբառում հիմքերի այդ փոփոխությունն անց է կացված մինչև վերջ. *-անեմ* և *-անիմ* վերջավորությունները բոլոր դասական հիմքերն այստեղ ընդունել են *նում* վերջավորությունը: Այսպես, desnum, kədnum, unčnum բայերից բացի, Լեհ. ունի –num վերջավորությամբ պատճառականների մի ամբողջ խումբ՝ որպես հին *անեմ* հիմքի համապատասխանություն: Հմմտ. վերևում՝ §329:

-նու - վերջածանցով հին հայերենի հիմքերը հիմնականում պահպանվել են. այսպես, դեռևս կենդանի են *առնում*[11], *երդնում*[12], *լնկենում*[13], *լնում*[14] և այլն:

Վկայություններ. 1) *գտնուս* Վաստ. 62. ԴԳ ճկթ, Բ խ, ճղզ, մծճ. *չգտնուս* ԴԳ խճ, ճլթ, Բ մկզ, Ա. 135. *գտնու* $63_{11.23}$, 65_{9}, 85_{6}, ԴԳ պ, ղ, հբ, հզ, ճծզ. *չգտնու* ԴԳ ճծէ. *գտնոյք* ԴԳ կբ. *գտնուք* Ա. 151. *գտնուն* 13_{10}, 65_{6}, Վաստ. 195, Ա. 151, Բ ճիա. ԴԳ ը, խը. *գտնուլ* 15_{14}, ԴԳ լզ, Բ ճիզ. *գտնաւղ* ԴԳ ղ. *իջնու* ԴԳ խճ, Բ իզ, ծճ, ճղէ, մհ, Ա. 19, 187. *չիջնու* Բ իզ, ԴԳ խճ. *իջնուն* ԴԳ խճ. *տեսնուս* Բ խզ, ճղճ, միա, միզ, մլը, մկզ. *տեսնու* 11_{27}, $29_{1.17}$, 25_{20}, 27_{13}, $33_{2.3}$, 39_{2}, 51_{17}, $59_{22.23}$, 63_{18}, 65_{21}, Բ ժիճ, ԴԳ լը, հբ, ճժ, ճկա, ճհէ. *տեսնոյք* 59_{15}. *տեսնուն* 15_{26}, $25_{14.15.19}$, 29_{6}, $39_{11.15}$, Վաստ. 225, ԴԳ ժա, ի, իճիճ, լզ, ծզ, ճլթ, ճժ, ճժզ, ճի, ճլէ, ճհէ. *տեսնուլ* 15_{25}, Սմբ. Ժամ. Dul. 648, Բ մկզ, ԴԳ հբ, ճժա, ճկիճ, ճծճ, ճհ, ճհզ. *տեսնաւղ* ԴԳ ղ. 2) *կլնու* Բ մծա, մկզ. 3) *կալնուս* Վաստ. 137, 138, Բ մա. *կալնուն* Բ մկզ. *կալնուլ* Վաստ. 117. 4) *սկսնու* Բ խզ, մծէ. 5) *հեծնուլ* Վաստ. 203. 6) Ըստ Այտընյանի Ա. 93, Բ 73. 7) Ըստ Այտ. Ա. 93, Բ 73. 8) *մտնուն* Ամիրդովլ. Հ. Բ 367. 9) *եմնուն* Կոստ. Ժողովածու էջ 43. 10) Ախրապատինում և Ամիրդովլաթի մոտ. 11) *առնուս* 13_{14}, L. 179_{1}. *առնու* 11_{5}, $19_{20.28}$, $13_{2.24.28}$, 15_{9}, $17_{10.12.24}$, 19_{8}, $21_{4.20}$, 23_{6}, $29_{13.15}$, $37_{13.18}$, $45_{9.13.14}$, $47_{10.18.23}$, 49_{4}, 51_{19}, $55_{3.6.15}$, 57_{8}, $63_{11.22.23}$, 69_{1}, 75_{2}, 77_{10}, 85_{2}, ԴԳ ճը. *չառնու* ԴԳ ծէ. *առնունք* 53_{22}. *առնոյք* L. 186_{3}. *առնուն* 17_{21}, 47_{12}, 51_{11}, L. 155_{30}, 156_{4}, ԴԳ լա. *առնոյր* ԴԳ լզ. *առնուլ* ԴԳ իէ, Անա. Անտ. $11_{14.16.21}$, $23_{17.20}$, 29_{4}, 47_{38}, 55_{2},

69_{17}. 12) *երդնու* 9_{23}, $11_{3.8.9.12}$, $25_{26.28}$, 29_{8}, 31_{12}, 35_{29}, 59_{20}, 61_{8}, 63_{19}, 73_{8}, 81_{10}. *երդնում* 63_{18}, L. 155_{10}. *երդնուլ* 11_{2}, 73_{9}. 13) *ընկենու* Վաստ. 67. *ընկենում* Վաստ. 198. 14) *լնուս* Բ խ. ճղղ. *լնու* ԴԳ կք. *լնում* Բ ճհե:

§349. Եթե հին *նու-* հիմքերի ոլորտը զգալի չափով ընդլայնվել է, ապա, մյուս կողմից, պարզ *ու-* հիմքերի ոլորտը կրճատվել է, որովհետև, ինչպես արդեն ցույց է տրվել վերևում /§322/, պարզ *ու-* հիմքերը, ինչպես *արզնլում, յեղում, աւելում, լեսում, զենում* դարձել են *ե-* հիմքեր: Պահպանված հիմքերը սակավաթիվ են. այսպես երևան են գալիս դեռևս *ֆողու* 17_{5}, 49_{14}, 81_{17}. ԴԳ իզ. *ֆողուն* 65_{22}. ԴԳ լա. *ֆողուին* ԴԳ խգ. *ֆողուլ* 41, 18 Բ ճկե: Այնուամենայնիվ, վկայված *ֆողէին* ձևը /Սմբ. Ժամ. Dul. 650/ ցույց է տալիս, որ այդ պարզ *ու* հիմքը նույնպես անհետանալու ընթացքի մեջ է գտնվում: Ուշ կիլիկյան հայերենում *առնում* ածանցյալ հիմքը նույնպես դուրս է մղված *առնեմ* հիմքով. այսպես, Զգբ-ն ունի *առնել* մինը, *առնելոյն* հժ, մինը: Արդեն Լևոն Գ-ի արտոնագիրը /1288 ֆ./ ցույց է տալիս *կու առնէին* ձևը /L. 156_{23}/: Այստեղ մի ուժեղ նախադրյալ կա *ու* թեման ամբողջապես *է* թեմայով փոխարինելու համար, ինչպես որ դա կատարվել է ժամանակակից շատ բարբառներում /օր. Տաճկ. և Ալա./:

V. -VI-. -ՎԻ, -ՈՒՒ, -ՒՒ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ՀԻՄՔԸ

§350. Դասական հին հայերենի բայը զուրկ է բուն կրավորական խոնարհումից. *ա* և *ու* հիմքերի կրավորական սեռը նեղկայի համակարգի ժամանակներում չի տարբերվում ներգործականից: Ճիշտ է, *ե* հիմքերը կազմում են *-ի* վերջավորությամբ կրավորականի հիմքը, և *ի-*ով խոնարհումը համարվում է բուն կրավորական խոնարհում: Այն կարելի է, սակայն, անվանել միայն *ոչ բուն* կրավորական խոնարհում, որովհետև այն բացարձակապես կապված չէ կրավորական բայի հետ: Ավելի ճիշտ, այն տարածվում է անանցողական բայերի մեծամասնության վրա, և նույնիսկ ներգործական բայերի վրա, ինչպես *ունիմ, տանիմ*: Ա. քնորոշիչով հին անցյալ կատարյալը, որ անվանում են կրավորական, նույնպես չի սահմանափակված միայն կրավորական բայերով:

Դասական լեզվին պակասում է թե՛ բուն կրավորակերպ խոնարհումը, թե՛ կրավորականի հատուկ հիմքը:

Միջին հայերենի մեծ նորարարությունը կայանում է նրանում, որ առաջ է եկել մի հատուկ, դասական լեզվից բոլորովին տարբեր, կրավորակա-

նի հիմք, որ միայն և առանց բացառության կրավորական բային հատուկ լինելով, vi /-վի, -ուի, -վի/ վերջավորության ունի: Նույն հիմքը պահպանվել է նոր հայերենում որպես կրավորականի միակ հիմքը: Կրավորականի այդ նոր vi- հիմքից կազմված են կիլիկյան աղբյուրներում վկայված հետևյալ ձևերը:

§351.1. Ներգործական e- հիմքերից:

ա) Ներգործական պարզ e- հիմքերից. *ասվի* 27_{14}. *ասուին* Բ կե. *այրուին* ԴԳ ճհէ. *արծկվի* 77_4. *բաժնվի* 21_5, 47_{14}, ԴԳ հբ. *բաժնվին* ԴԳ ղղ. *բռնվի* ԴԳ ա, ժզ, հբ, ճգ, ղբ, ճծե, ճհէ. *բռնվին* ԴԳ ղբ. *գրվի* 39_{27}, 47_{28}, 59_5, 83_{25}. *դասվին* ԴԳ հա. *զուգվի* ԴԳ ժա. *թեպրվի* 23_{29}. *լոսվի* Բ մկզ. *խաբվի* ԴԳ հբ. *խրատվի* ԴԳ ա, հգ, ճլէ. *խրատուին* ԴԳ ճծա. *ծախվի* 45_{22}, 79_6, L. 155_5, ԴԳ ճժ, ճկա. *կախվի* $35_{24.25}$, $63_{6.7}$, Բ մկզ. *կտրվի* ԴԳ բ, հգ, ճկ, ճհէ. *ճգտի, ճգվի* ԴԳ ժզ, ժճ, լգ, լզ, ծգ, կը, ճգ. *մաղվի* Բ մկզ. *նեղուի* Բ ղբ. *շինվի* ԴԳ ճկը, ճհգ, Բ մհ. *ուզվի* 17_{20}. *պահուի* ԴԳ ճհ. *պահվէին* ԴԳ ծբ. *պառկվիմ* ԴԳ հբ. *պառկվի* ԴԳ հբ, հգ, ղբ, ճգ, 55_3. *ջալնջըվի* 23_{30}. *սայգվի* 71_2, 29_{13}. *վարվի* ԴԳ ժճ, ճհգ. *վճարվիմ* 41_{23}. *վճարվի* 41_{12}, $43_{1.10}$, $45_{19.22}$, 77_7, 83_4, ԴԳ լգ, հբ. *վճարվին* 41_8. *տահրկվի* $35_{24.25.29}$, $59_{26.29}$, 61_{23}, 63_6. *տուժվի* ԴԳ ժբ, ժզ, ճկտ, ճհէ. *տուգնվի* 61_{17}, 71_{21}, ԴԳ ա, իգ, ճծբ. *փեսվի* Բ մժգ. *քակվի* ԴԳ ծա. *քաշվի* Ա. 152, Բ ճլգ, ճծգ, մժգ, մկե, մկէ. *քարկոծվի* ԴԳ ճհէ. *լոսվիլ* Բ մկզ. *պահվիլ* ԴԳ ճհ. *պառկուիլ* ԴԳ ղբ. *վճարվիլ* 71_{12}, 81_{21}, ԴԳ ճծե. *քաշվիլ* Բ մկէ:

բ) Ներգործական ածանցավոր e- հիմքերից. *աւծնվիլ* Բ մե՝ *աւծնել* բայից. *դնվի* 47_{28}, Բ ճա, ճգ, ճէ, ճծբ, մկզ, մհ, ԴԳ ճբ, ճհ՝ *դնել* բայից. *կորանվի* ԴԳ ճի՝ *կորանել* բայից. *կեցցվի* ԴԳ ճծա՝ *կեցցնել* բայից. *սպանվի* (<**սպաննվի*) ԴԳ հբ, ճիզ, ճիճ, ճկէ՝ *սպաննել* բայից. *ճանչվի* Ա. 118, 183, 282, ԴԳ ղ՝ *ճանչել* բայից:

§352. 2. Ներգործական i- հիմքերից. *լնդունվի* $11_{8.10}$, $59_{27.28.30}$, $61_{22.24}$, 73_9, 83_{20}՝ *լնդունիլ* բայից:

§353.3. Ներգործական a- հիմքերից. *գողնամ* բայից *գողընվի* կրավորական L. 156_{11}, ԴԳ ճժ, ճիա, ճծէ. *յիմնալ* բայից *յիմընվի* կրավորական ԴԳ ճհէ. *բանալ* բայից *բանվի* կրավորական Ա. 157. *լմանալ* բայից *լմանվի* կրավորական Ա. 304: Զգբ ավելի նոր ձեռագրում, սակայն, այդ բայերը կրավորական սեռը կազմում են կատարյալի հիմքից. *թռայվի* Զգբ մկզ՝ *թռանալ* բա-

յինչ. *լվացվի* Զգբ մկդ՝ *լվանալ* բայից. *ի բայուելոյ* ԴԳ ճծա: Սնց. կատ. հիմքից է կազմված նաև *տվվի* 23_3. Զգբ խա. *տվվին* 25_2 կրավորականը՝ *տալ* բայից:

§354.4. Ներգործական *ու-* հիմքերից.

ա) Պարզ ներգործական հիմքերից. *թողվի* ԴԳ իղ՝ *թողուլ* բայից. բ) ընդարձակ ներգործական հիմքերից. *կալվի* Բ մժգ՝ *կալնուլ* բայից. *գտվի* $79_{12.16}$, L. 156_{12}, Բ մժդ, ԴԳ ա, դ, հբ, ճբ, ճխա, ճկդ, ճհէ, Ա 134, 157՝ *գտնուլ* բայից. *գտվին* 39_{12}: Դրա փոխարեն առանճին *գտնուի* ԴԳ ծէ: *Լնուլ* բայից *լցվի* կրավորական սեռը ԴԳ ճկա, ճխը, Բ մա. *լցվին* Ա 236: Դրա կողքին, սակայն, ԶգԱ ունի նաև *լնվի* ճկը /Ա 17/: Կատարյալի հիմքից են կազմված *տարվի* ԴԳ ղ՝ *տանիլ* բայից. *կերվի* Բ ճհէ, մկխ՝ *ուտել* բայից: Դրա կողքին, սակայն, կա ներկայի հիմքից կազմված *ուտվի* ճկը /ԴԳ կէ, Ա 260/:

§355. Արդեն ԺԲ դարում Մխ. Հերացու մոտ երևան է գալիս նոր կրավորականը հետևյալ ճևերով. *խաշուի* էջ 18. ներգործ. *խաշեմ*. *քաշուի* էջ 39. ներգործ. *քաշեմ*. *արկնուի* էջ 48, 63. ներգործ. *արկնեմ*. *լուանվիլ* էջ 12. ներգործ. *լուանամ*. *լուացվի*. *լվացվի*. *լացվի* էջ 26, 27, 28. *բայւի* էջ 12. ներգործ. *բանամ*. *գտուի*. *գտվի*. *գտւի* էջ 22, 38, 44, 45. ներգործ. *գտնում*:

§356. Գիրք վաստակոյն ունի հետևյալ vi- կրավորականները. *ճիխվի* էջ 92. ներգործ. *ճիխեմ*. *շինվի* էջ 92. ներգործ. *շինեմ*, *ուտվի* էջ 19, 24. ներգործ. *ուտեմ*. *ուտվիլ* էջ 120. *պահուի* էջ 136. ներգործ. *պահեմ*. *տնկուի* էջ 142. ներգործ. *տնկեմ*. *ցանուի* էջ 20, 22, 24, 156. ներգործ. *ցանեմ*. *ցանուիլ* էջ 66. *փորուի* էջ 40. ներգործ. *փորեմ*. *խառնուին* էջ 101. ներգործ. *խառնեմ*:

Ներկայի տարածված *դնեմ* հիմքից *չ-դնուին*, էջ 143. սակայն էջ 86. *դրուի* եղակի 3-րդ դեմք՝ անցյալ կատարյալի հիմքից: *Բանամ a* հիմքից *բանուի*, էջ 37_3. *բացուի*. *բացվի* էջ 40, 138: *Թանամ a* հիմքից՝ *թանուի*, էջ 20, 129. սակայն *թացուին* էջ 147՝ անցյալ կատարյալի հիմքից: *Լնում ու-* հիմքից՝ *լնուի* էջ 37, 157, 189. դրա կողքին *լցուի*՝ անցյալ կատարյալի հիմքից էջ 29, 128, 163, 187:

§357. Կրավորականի անցյալ ժամանակի մեջ, որն այստեղ նախնական վերլուծության ենթարկված կլինի ներկայի կապակցությամբ, էլ ավելի հաճախ են երևում հին ճևերը, մի բան, որից չի կարելի հանգել այն եզրակա-

ցուլթյան, թեև անցյալի նոր կրավորականը դեռևս ընդհանուր կիրառուլթյուն չի ունեցել: Այն բանից, որ անցյալի հին ձևերը երբեմն պատահում են կլիլիկյան գրական լեզվի մեջ, ոչ մի դեպքում չի հետևում, թե դրանք իսկապես գոյուլթյուն ունեն կենդանի խոսքի մեջ. հենց անցյալ ժամանակում դասական կրավորական անցյալ կատարյալը բավական էր կրավորական սեռն արտահայտելու համար: Այսպիսով հասկանալի է դառնում, որ հնացած լինելով հանդերձ, այն դեռևս ընդունվում էր գրական լեզվի մեջ անցյալ կատարյալի նոր ձևի կողքին: Վերջինիս համար կիլիկյան հայերենում վկայված են հետևյալ օրինակները. կրավորականի անց. կատ. եզ. 3-րդ դեմք *ծախուեցաւ* 73_{17}. *ծեծուեցաւ* ԴԳ հզ. *կախուեցաւ* Սմբ. Ժամ. Dul. 631. *յուղարկվեցաւ* ԴԳ ճխթ. *պահուեցաւ* Սմբ. Ժամ. Dul. 666, ԴԳ ղբ. *աւղղուվեցաւ* /Հնչյունաբ. 154/ 81_{26}. կրավորականի անց. կատ. հոգն. 3-րդ դ. *պահուեցան* 19_{6}. *թէքսիրվեցան* Սմբ. Ժամ. Dul. 647. կրավոր. ապառնիի 1-ին դ. *թէքսիրվեցուք*[65] Սմբ. Ժամ. Dul. 647. կրավորականի անց. կատ. եզ. 3-րդ դ. *բացուաւ* 23_{15}. *սպանվաւ* ԴԳ ճլ. *թողվաւ* ԴԳ ծէ. *զարկուաւ* ԴԳ ճհէ. *կերվաւ* ԴԳ ճծէ. *առուաւ, դրուան*. վերջիններս ըստ Այտ. Բ 73: Վաղակատար դերբայներ. *կապվել է* 9_{7}. *լինի լուսել* 19_{15}. *փակվել է* ԴԳ ճժե. *քաշվել է* Բ ճծզ. *է բացվել* Բ միզ. *լինի լցվել* Ա 245. *կերվել լինի* Բ մժզ:

§358. Միջին հայերենի այս կրավորականը, որը, ինչպես նկատվել է, կարելի է դասել նաև նոր հայերենի բոլոր բարբառներում՝ թե՛ արևմտյան[66], թե՛ արևելյան, - որպես բնորոշ նշան ունի *ու* u կամ v տարրը, որը, սակայն, ի սկզբանե և ըստ էուլթյան չէր կարող դուտ կրավորական բնույթ կրել, ինչպես երևում է անդրադարձ կամ անանցողական նշանակուլթյուն ունեցող վերևում բերված բայերից, օր. *թէքսիրվեցան, սայզվիմ*: Կրավորականի հիմքի *ու* տարրն սկզբում ավելի շուտ նույնական պիտի լիներ *ու*- հիմքերի ներկայի բնորոշիչի հետ: Մենք ենթադրում ենք, որ ճիշտ է միջին հայերենի կրավորականի առաջացման Պետերմանի կողմից առաջ քաշված տեսուլթյունը /"Abhandlungen d. Ak. d. Wiss. zu Berlin", 1866, էջ 75, 76/: Հին լեզվի մեջ *ա* և *ու* հիմքերի համար առանճնապես զգացվել է կրավորական սեռի հատուկ, որոշակի արտահայտուլթյան պահանուլթյունը: Այդ պահանուլթյունից ազատվելու համար ներկայի *ե* հիմքերի անալոգիայով ներկայի *ու* հիմքերի համար ստեղծվել է կրավորականի մի նոր հիմք, որտեղ *ու* հիմքի *ու* բնորոշիչին միացել է այսպես կոչված կրավորաձև խոնարհման *ի*

[65] Հիբրիդ ձև, փոխ. դաս.*թէքսիրեսցուք*:

[66] Թեկուզ նույնիսկ որոշ չափով կերպարանափոխված:

քնորոշիչը: Այսպես են առաջացել *գնուիլ, լուիլ* և այլ ձևերը, ինչպես որ դեռևս նախակիլիկյան շրջանում *տամ* բայի համար անցյալ կատարյալի *տու-* հիմքից կազմվել են կրավորականի *տուիմ, տուիս, տուի, տուին* ձևերը /հմմտ. Այտ. Քնն. քերակ. Բ 73/: Այդ կրավորականը ժամանակի ընթացքում այնքան է տարածվել, որ *ու* ձայնավորը կամ նրան համապատասխանող *վ* բաղաձայնը սխալ կերպով սկսել են դիտել որպես կրավորականի հատուկ յուցիչ և մտցրել բոլոր խոնարհումների մեջ: Այսպիսով առաջացած ներկայի կրավորականի նոր հիմքը բուն իմաստով *-ու-* տարրով ընդարձակված կրավորականի *ի-* հիմքն է, որ խոնարհվում է սովորական *ի-* հիմքերի նման:

Պետերմանի տեսությանը ես ավելացնում եմ հետևյալը. միջին հայերենին հատուկ, *ու* /u, v/ յուցիչով կազմված կրավորականի անցյալ կատարյալը, չնայած որ առկա է արդեն կիլիկյան հայերենում, առաջացել է ավելի ուշ, քան *կրավորականի ներկան*. պարզ *և* լծեմանները կրավորականի անցյալ կատարյալի հիմքը կազմում են կրավորականի ներկայի հիմքից՝ անցյալ կատարյալի *-ց-* յուցիչը միացնելով ներկայի հիմքի *-վի-*ին /այդ հիմքը խոնարհվում է որպես սովորական պարզ *ի* հիմք/: Դրա փոխարեն, մնացած բայերի անցյալ կատարյալի կրավորականի հիմքը, ինչպես յուրց են տալիս *բացուաւ* /= դաս. *բացաւ*/, *սպանվաւ* /= դաս. *սպանաւ*/, *առուաւ*/= դաս. *առաւ*/ և այլ բերված ձևերը, նմանվում են ոչ լծե կրավորականի ներկայի հիմքին, այլ հին անցյալ կատարյալի համապատասխան ձևերին, ընդ որում դասական անցյալ կատարյալի ձևի *-ա - a-* վերջավորությունն առաջ ներմուծվում է *-ու - u-/v/* տարրը: Կրավորականի անցյալ կատարյալի հիմքը տարածվել է ներկայի վրա, և այսպիսով բացատրվում է կրավորականի կազմությունն մեջ երևացող տատանումը: Տատանման այդ դեպքերում առավելությունն է ձեռք բերում ավելի նոր, անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևը: Նոր հայերենում այն դարձել է բացառիկ - այսպես, նոր գրական հայերենը գիտե միայն *լուաց-ուիլ, իմաց-ուիլ, գողց-ուիլ, դր-ուիլ* կրավորականի ձևերը /ըստ Այտ. Բ 62/: Ներկայի հիմքից կազմված *լուան-ուիլ, յիմըն-ուիլ, գողըն-ուիլ, դն-ուիլ* միջին հայերեն ձևերն անհետացել են:

Թեկուզ ճիշտ էլ լինի Պետերմանի ինքնըստինքյան հավանական թվացող բացատրությունը, միևնույն է, կիլիկյան-միջին հայերենի կրավորականի կազմության մեջ պետք է նմանակներ մեկ ուրիշ գործոն ևս: Ես հիշեցնում եմ *-ուած* վերջավորությամբ դերբայները. *գործուած, դարձուած, յորինուած, մնայուած, սպառուած* և այլն, որոնք *ու-* հիմքերի *ու-*ի հետ կապ չունեն, և որոնց մեջ Այտընյանը /Քնն. քերակ. Բ էջ 73/ տեսնում է միջին հայերենի կրավորականի առաջին հետքերը: Ես հիշեցնում եմ նաև հետևյալ դեպքերը.

դաս. *ցրուխմ* = դաս. *ցրեմ*. դաս. *կծուամ* և զուգահեռ *կծեմ*. դաս. *կտուեմ* և զուգահեռ *կտեմ*: Այստեղ պարզ *ե* հիմքի կողքին երևում է *վ, ու* ածանցով ընդարձակված *ե*-հիմքը, նույն ձևով, ինչպես հին հայերենի կրավորական համարվող պարզ *ի* հիմքի կողքին հանդես է գալիս *ու, վ* տարրով ընդարձակված միջին հայերենի *ի* հիմքը:

ԳԼՈՒԽ II.

ՆԵՐԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳ

I ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ

§359 Ներկայի հիմքից կազմվում են ներկայի համակարգի ժամանակները՝ ներկան, անկատարն ու ապառնին իրենց եղանակներով

Ինչպես որ բոլոր լեզվական զարգացումների ժամանակ բայի ձեռքման ձևերը պարզեցվում և աղքատանում են ավելի հին լեզվական վիճակի հարաբերությամբ համեմատ այդպես է եղել նաև կիլիկյան հայերենում, հատկապես ներկայի համակարգում Հին հայերենի շրջանի վերջին դարերում սահմանականն արդեն փորձել է գրավել ստորադասականի և ապառնիի տեղը, ինչպես որ դա նկատվում է հատկապես ոչ մաքուր դասական գրողների մոտ[67] Միջին հայերենում այդ զարգացումը հասել է ավարտին անհետացել է *ստորադասականի ներկայի և անկատարի հին հայերեն կոչական* ձևն ու *դրա հետ միասին ձևականորեն կատարյալի ստորադասականը ներկայացնող կոչական ապառնին* Հին ստորադասականի և ապառնիի հետքերը պահպանվում են կայուն բանաձևերում և որպես հնաբանություն[68]

§360 Ներկան և անկատարը Հին ստորադասականի ներկայի և անկատարի անհետացումից հետո, լեզվի պատմության մեջ հաճախ կրկնվող ֆունկցիայի ընդարձակումով, սահմանականի ձևն ընդունել է միաժամանակ նաև ստորադասականի ֆունկցիան և նշանակությունը, այնպես որ երկու եղանակների համար էլ, - թե՛ սահմանականի ներկայի, թե՛ ստորադասականի համար, - մնացել է միայն մեկ լեզվական արտահայտության ձև՝ սահմանական եղանակը Ընդհանրապես սկզբում, սահմանական եղանակի կողմից ամենուրեք ֆունկցիայի ձեռքբերումից առաջ, մահացած ստորադասականի տեղ վաղ միջին հայերենի շրջանում փորձել է իրեն հաստատել արտահայտության մի նոր բանաձև՝ *կամ* բայի մհ ստորադասականը *+ու* շաղկապ + հին սահմանական եղանակը *կամ* բայի ստորադասականի ձևը կարծես թե ստեղծված լիներ ստորադասականի ժամանակների արտահայտության համար Ժամանակային այս ձևի օրինակներն են *որ չերկրէն ի դուրք*

---

[67] Հմմտ այդ մասին Այտ Ա 114, ծան 109

[68] Հմմտ, օրինակ նաև հետևյալ ձևերը *զինչ եւ իցէ* Անս. Անտ 77,. *զինչ ու լինի* ձևի կողքին /23,. 85,/. *որ ու լինի* 53,,

կենայ ու երթայ ի վաճառ էջ 83_{13} *որ խալապային կենայ ու լինի* 81_{8} *որ առջեւ կենայ ու վճարվի* 41_{20} *որ այնով առուտուր կենայ ու այնէ* 79_{17} *որ կենայ ու զանկտի* 27_{19} *որ զեռ կենայ եւ (=ու) եւի* Վաստ էջ 80 *եթէ կենայ ու գայ* 33_{23} *եւ (sc՝ թէ) կենայ ու ուրանայ ծեծօղն* 61_{1} *թէ ոք կենայ ու երթայ իր ճանփումն* Դ Ճլը *թէ կենան ու պահեն զճանապահն* Դ Ճլը *ապա զէդ ի վանք կենան ու հանգչին* Դ խե *եթէ կենաս ու հնձես* Դ Ճկզ *երբ զանուն որ զքահանայական գործ կենայ ու այնէ* Դ ը *երբ կենայ ու լինի եպիսկոպոսին լմտրաւղութիւնն* Դ ծբ *թէ կենայ ու կոտրէ* Դ Ճկզ *քաւել թէ կենայ ու մեռնի* Դ լը *որ կենա ու ուտէ* Դ Ճդ *թէ կենան ու կռվին* Դ ճհ *թէ կենան ու պահեն* Դ Ճլը *յորժամ եղբարքն կենան ի յիրայմէ բաժանվին* Դ զզ - Նաև Զգբ-իւ *թէ կենա ու եթէ* Բ Ճղը *թէ կենայ ու երթայ* Բ մժգ, մկէ, մկը երեք անգամ *եթէ կենա ու ի վայր գա* Բ մժգ *որ կենա ու կալվի* Բ մժգ *որ կենա ու աղբայնա* Բ մկզ *եւ թէ մարդոյն լինդքն ու կամ խամծեկն կենայ ու ուտվի՝ ու կամ թէ դաշտիկ լինի ի միսքն ու կենայ ու ուտվի* Բ մժգ և այլն

Ժամանակի այդ բաղադրյալ ձևը, որն ինչպես հետևում է բերված օրինակներից, արտահայտում է միայն ստորադասականի ներկայի մի որոշակի կերպ, ներկայացնելով *եղակի, կոնկրետ* մի գործողություն որպես ներկայի մեջ տևող կամ շարունակվող, չէր կարող պատճառ դառնալ ստորադասականի ֆունկցիայով սահմանականի հին ձևի տարածման համար Սակայն ավելի էր ուժեղանում սահմանականի ձևն իր նոր ֆունկցիայով, մինչև որ դարձել էր ստորադասականի ընդհանուր ու բացառիկ ձև[69], ավելի շուտ այն, որ մի ընդհանուր լեզվական օրենքի համաձայն, իր նախնական ֆունկցիայի մեջ պիտի հնանար և մահացման ենթարկվեր Ապա սահմանականի եղանակի նշանակությունը կորցրած, ստորադասական դարձած հին հայերեն սահմանականի տեղը պիտի գրավեր *ժամանակի նորակազմ մի ձև*, որ իրենից ներկայացնում էր *կու* նախամասնիկով ընդարձակված հին սահմանականի ձևը[70] Առաջին անգամ ԺԲ դարում Միխիթար Հերացու մոտ երևացող սահ-

---

[69] Դրա կողքին գոյություն ունեցող ստորադասական բաղադրյալ ժամանակը, որի մասին խոսվել է վերևում չէր կարող հաստատվել և աստիճանաբար դուրս է մղվել Դա եղել է սոսկ միջին հայերենի համար բնորոշ անցողիկ մի երևույթ

[70] Միայն սակավաթիվ օրինակներով է վկայված վերևում նկարագրված ստորադասականին զուգահեռ մի բաղադրյալ սահմանական որ ավելի հին պետք է լինի, քան *կու*-ով բուն կիլիկյան սահմանականը Օրինակ *կայ եւ դիպի* էջ 39, *կայ եւ շարժի* էջ 49 Միս Հերացու մոտ Սահմանականի այդ ձևը սակայն, ըստ երևույթին, ստեղծվել է ստորադասականի համապատասխան ձևի նմանությամբ և երբեք ընդհանուր կիրառություն չի ունեցել համենայն դեպս կիլիկյան հայերենում

մանականի անկատար ներկան հիմա էլ գոյատևում է արևմտահայ բոլոր բարբառներում. միայն կիլ -միջին հայերեն *կու*[71] նախամասնիկը մեծ մասամբ ֆուլանում է դեպի gə, gi, g, kə, ki, k[72] և այլն

§361 Այն բանը. որ արդեն կիլիկյան հայերենում *կու* նախամասնիկով կազմուվ ձյունը սահմանականի կանոնավոր ձևն է եղել, հետևում է բազմաթիվ օրինակներից ինչպես *կու աղչեմ* 41_9 *կու աղաչենք* 53_{22} *կու այլայլեն* ԴԳ լդ *կու այնես* 43_7 *կու այնէ* 31_8, ԴԳ լդ, ճղ *կու այնեն* ԴԳ լդ *կու այներ* ԴԳ ճլդ *կու անարգէ* ԴԳ թ *կու անհանգըստէ* 43_2 *կու անհանգստեն* ԴԳ ճլե *կու առնէին* L 156_2, *կու առջնտրեն* 41_{78} *կու ասեմ* 63_{14} *կու ասէ* 33_{12}, 67_{11}, Բ մկզ *կու ասենք* 59_{13} *կու ասեն* ԴԳ լդ, Բ մի *կու արգիլէ* 25_{25} *կվարգիլէ* Ա. 242 *կու արգիլէին* L. 156_{26} *կու բաժնեն* ԴԳ լդ *կու բերեն* L. 155_{19} *կու գնեն* L. 155_7 *կու գրեմ* ԴԳ իա *կու գրենք* ԴԳ կզ. *կու դատես* Սմբ Ժամ Dul. 613 *կու դատըստնեմ* 41_{21} *կու դնէ* 15_{17} *կու զրպարտէ* ԴԳ *կու թվէր* Ա. 242 *կու ժաժեն* Բ մժզ *կու իրաւցընէ* 59_8 *կու խլէ* 39_{10} *կու խմէր* Սմբ Ժամ 650 *կու խոյսէ* Բ մկզ *կու խրատէ* Բ մլը *կու ծախէ* ԴԳ ժ *կու ծախեն* ԴԳ խզ, ճթ. *կու ծախվորէր* Սմբ Ժամ Dul. 648 *կու կապէ*

---

[71] Արդեն կիլիկյան-միջին հայերեն գրվածքներում ձայնավորով սկսվող բայաճևից առաջ *կու* նախամասնիկի փոխարեն հաճախ առանձին դեպքերում դրվում է *կ-* զեղչված ձևը Այդ դեպքերն են *կ-երթիս* Լևոնի երգ. Dul, էջ 540, *կ-ուտեն*, Գիրք վաստ 193, *կ-եմեն* Գիրք վաստ 195 *կ-ուզէր*. Զգ. Գ և Սմբ Ժամ Dul 622 *կ-առնոյր* Զգ. Գ Սմբ Ժամ Dul 646

Վերջին երկու դեպքերում, սակայն, այլ ընթերցվածքներում ունենք առանց նախամասնիկի պարզ ձևեր, և քանի որ մնացած կիլիկյան գրվածքները գիտեն միայն *կու* լրիվ ձևը այն պետք է բացառիկ համարել նաև կիլիկյան հայերենի համար *կ-*ով բերված ձևերը պետք է լինեն ոչ թե նախնական այլ գուցե ժողովրդական երգի մեջ ներկայացված *կերթիս* ձևի բացատրությամբ տեքստ են մտել ավելի ուշ արտագրողների ձեռքով

[72] Այսպես. օրինակ. տաճկահայերենում կանոնավոր ձևով ունենք gə բաղաձայնական բառասկզբից առաջ և g- ձայնավորական բառասկզբից առաջ Եհ gi բաղաձայնականից և g- ձայնավորականից առաջ Ախ gə բաղաձայնականից և g-ձայնավորականից առաջ Դրանից բացի վերջին բարբառն այն առանձնահատկությունն էլ ունի. որ gə *նմանիկը որոշ դեպքերում* կարող է դրվել բայից հետո desnım-gə /կիլ *կու տեսնում*/ marem-gə /կիլ *կու մարեմ*/. անկատ mareyı-gə, desneyı-gə, հետո ինչպես g-ayam այնպես էլ ayam-gə /կիլ *կու աղամ*/ Հմմտ Том Ах диал էջ 62 հաջ *Կու* նախնական լրիվ ձևը բարեհնչյունության նկատառումներից ելնելով. պահպանվել է *կամ, տամ լամ* բայերի մոտ այսպես Տաճկ Եհ Նխ gu-kam, gu-dam, gu-lam նույնական են մնացել միջին հայերեն ձևերի հետ Եհ ունի նաև gu-tvı «թվում է» Han էջ 118

ԴԳ կը. *կու կարծէր* Սմբ. Ժամ. Dul. 647. *կու կարծեն* ԴԳ լդ. *կու կեցնէ* ԴԳ ճժբ. *կու կողոպտէ* ԴԳ խդ. *կու կրկնաբանէ* ԴԳ ղէ. *կու ճանչեմ* 67_{9}. *կու համբերեն* ԴԳ խզ. *կու համէ* 43_{7}. ԴԳ լդ, ճկ. *կու համենք* L. 178_{7}, 185_{17}. *կու հանէ* Բ մլէ, Ա. 15. *կու հանեն* L. 155_{24}. *կու հրամայէ* ԴԳ ժ, իդ, իե, իթ, լա, լդ, լսբ, խզ, ծգ, կը, հբ, հդ, հզ, հը, հթ, ղդ, ղէ, ճգ, ճդ, ճը, ճժա, ճժբ, ճկս, ճկսբ, ճկսգ, ճկսե, ճծթ, ճկ. *կու հրաւիրէ* 15_{17}. *կու հրաւիրենք* 13_{13}. *կու հրէ* Բ մի. *կու ճգեն* ԴԳ լդ. *կու յանդիմանէ* ԴԳ ճհա. *կու մանդրեն* Ա. 215. *կու նեբենք* ԴԳ ճհդ. *կու նմանէ* Բ ճկթ. *կու շինէ* ԴԳ ա. *կու ուզէ* 15_{16}, 73_{7}. ԴԳ հը. *կու պնդէ* ԴԳ խե, խը, ղէ. *կու սպաննէ* ԴԳ ճկէ. *կու ստածեն* ԴԳ ա. *կու ստէ* 59_{18}. *կու վախէին* Սմբ. Ժամ. Dul. 648. *կու վատնէր* ԴԳ հը. *կու վաստաժէ* Բ մի. *կու ցայտէ* ԴԳ ճծգ. *կու քանէ* 77_{26}, ԴԳ լդ. *կու քակտեն* ԴԳ լդ. *կու օկտէ* Բ մկթ - *կու բանան* L. 156_{15}. *կու բռնեայր* ԴԳ հը. *կու երթային* L. 156_{27}. *կու գայ* ԴԳ իա, Բ մի, Ա. 240. *կու գան* L. 156_{14}. *կու գայր* 3_{15}, Բ մժգ. *կու գնայ* 43_{1}. *կու գնան* ԴԳ լդ, ղե. *կու գնայր* 3_{15}. *կու եռայ* Բ խզ. *կու լաս* Սմբ. Ժամ. Dul. 669. *կու լար* Լևոնի երգ. Dul. 540. *կու խաղայ* Լևոնի երգ. Dul. 539. *կու տայ* 13_{14}, 15_{17}, 23_{13}, 69_{18}, L. 157_{21}, ԴԳ լա, կ, հը, ճդ, ՋԹԲ ա, մժգ. *կու տայր* ԴԳ ճծթ. *կու տան* L. $155_{9.24}$. *կու տային* L. $155_{13.16.17.22}$. *-կու առնու* Բ մկթ. *կու առնուն* L. 155_{19}, 156_{16}, ԴԳ խբ. *-կու անկնին* L. 156_{9}. *կու ապիրիմ* ԴԳ հե. *կու ապրիմ* ԴԳ ճհ. *կու ապրին* ԴԳ ճհ. *կու աւարտի* 35_{26}. *կու բանի* ԴԳ իա. *կու բուսնի* Բ ճկթ. *կու դատըստնի* 67_{8}. *կու դիպի* Ա. 149. *կու ընկնին* 35_{3}. *կվընգնի* Ա. 240, 242. *կու լինի* 13_{16}, 25_{1}. Ա. 166, 241, Բ մժգ, մի, մհ, ԴԳ ճա, ճծա, ճհ. *կու լինին* ԴԳ ճլզ. *կու հայինի* ԴԳ լդ. *կու հանդիպի* Բ մկզ. *կու հաշտին* ԴԳ ճհ. *կու հասնի* Բ մժգ. *կու մեռնին* ԴԳ ղը. *կու ցասի* Բ մժէ, մկզ. *կու փչէի* Ա. 242. *կու քակտինք* ԴԳ լդ: Դրանից բացի. արդեն Գիրք վաստակոյն ունի *կու* մասնիկով սահմանականի հետևյալ ձևերը. *կու. կու աւերէ* ԷՋ 57. *կու գործէ* 193. *կու խաոնեն* 57. *կու ծրտեն* 195 (Տարբերակ). *կու գայ* 74, 127. *կու գան* 195. *կու կենան* 193. *կու տայ* 50, 91. *կու դիպի* 86. *կու լինի* 28, 41, 86, 165, 198, 218. *կու ծառաւին* 193: Նույնիսկ Մխիթար Հերացու մոտ երևան են գալիս *կու*-ով առանձին ձևեր. *կու գայ* ԷՋ 48. *կու լինի* 60, 91[73]:

§362. Եթե Մխիթար Հերացու մոտ *կու* մասնիկով ձևերը դեռևս առանձնացված են և կազմավորման ընթացքի մեջ են գտնվում, բուն կիլիկյան հայերենում դրանք ընդհանուր են և իրենց վրա են վերցրել հին սահ-

[73] Վենետիկի 1832 թ. հրատարակության մեջ *կու*-ն գրվում է բայաճևի հետ միասին. *կուգայ, կուլինի*, որ, պարզ է, էական նշանակություն չունի:

ժամանակաձևերը Բանն այն է, որ *կու* մասնիկով բաղադրյալ ձևերը *միայն սահմանական եղանակի իմաստ ունեն* և նշանակում են գործողության մաքուր իրականությունը, իսկ առանց *կու*-ի ձևերն իմաստով ստորադասական են Այսպես, օրինակ Աստ Աստ էջ 13_{13} հաջ *դուն ֆուլան լիճ ճորտ, մենք եկել ենք ու կու հրաւիրենք զքեզ որ գաս սուր ի դարպասն պապխուն եւ իրաւունք առնուս ու կու տայ քեզ դարպասն օր եւ պոման յայս օրինէս ինչվր ԺԵ օր. եւ չեզգենէ ի ԺԵ օր. եւ չեզուլն մէկայլն աւուրն ի ԺԵ օր, որ կու լինի ամէնն ԺԷ օր. որ ի դարպասն գաս* Աստ Աստ էջ 15_{15} հաջ *կու ուզէ իրաւունք ի դարպասէն եւ դարպասն կու հրաւիրէ զքեզ եւ կու տայ քեզ օր ու կու դնէ քեզ պոման - օր գաս լսես զքո պարոնին զանգատն եւ իր պապխուն այնես* Աստ Աստ, էջ 31_{7} *եւ տայ ի դարպասն հազար դեկան անտաքսի, որ կու այնէ Եձ կարմիր սուրի* Աստ Աստ էջ 41_{6} հաջ *իմ պարոն, ես աւղղած եմ ի ֆուլան կապլվոր ու քաժին մի այլ անսիզվորք կան եւ կու առջնտրեն զիս, ու իրենք կու վճարվին ու ես ձեր հին լիճ ճորտ եմ, ու չէ պատեհ, կու աղչեմ զձեզ որ համէք որ արգիլեն զամէնին տալն ու թող քերեն այլ անսիզվորքն զիրենց սիգեղնին առջեւ ձեր ու թող ամէն մարդ հայնց ունենայ զիր վճարն հետ ու ի հետ* Լեռնի երգ Dul էջ 540 *քէրվանատ, որ ի Սիս կ'երթաս, Դուն խապար տանիս պապայիս*

§363 **Ապառնի** - Ապառնիի մեռած ձևի տեղ դեռ չի զարգացել ապառնիի արտահայտության մի որոշակի ձև Ապագան նշանակելու ֆունկցիան իր վրա է վերցնում ներկան, մասամբ *կու* նախամասնիկով. օր *կու տամ* $11_{17\,21\,26}$, 33_{2}, *ես կու ասեմ ու կու գուցրնեմ ալանի ու յերեւան* - Աստ Աստ 27_{11} մասամբ էլ ապառնին արտահայտվում է նկարագրական ձևով՝ *կամիմ* բայի օգնությամբ *զնալ կամի* Ա 18 *կամի երթել* Ա 181 *կամի ընծայիլ* Բ մեզ *կամի մեռնիլ* Բ մեռա *յերկարել կամի* Բ մեզ. Ա 22 Արտահայտության վերջին ձևը նախընտրում է հատկապես ոչ կիլիկիացի Մխիթար Հերացին *յիշել կամիմ* էջ 31, 58, 59 *կամիմ յիշել* էջ 36 *յիշել կամիմք* էջ 15 *կամիմք յիշել* էջ 76 *կամի լինել* էջ 39 *բորբոսել կամի* էջ 59 *բորբոսել կամին* էջ 59 *կամի ընծայել* էջ 43 *կամի հանել* էջ 76 *կամի սկսանիլ* էջ 147, 148 *կամի քաշել* էջ 137 Այս բաղադրյալ ժամանակի հետ կարելի է համեմատել նոր հունարեն ապառնիի θέλω բայով կառուցվածքը /Thumb, Neugr. Volksspr. § 178/, ապա գերմանական լեզուներում, օր, մըգ wellen+Inf. որպես ապառնիի արտահայտություն. ինչպես նաև անգլերենի will բայով ապառնին եզակի և հոգնակի երկրորդ և երրորդ դեմքի համար

Կայուն կազմուվ֊ծյամբ ապառնին ձևավորվել է միայն նոր հայերենում Արևելահայերենը[74] ապառնին կազմում է ըղճականին նախորդող *կու* մասնիկի օգնուվ֊ծյամբ Նոր արևմտահայերենում, սակայն, հաստատվում է արդեն միջին հայերենում առկա «պիտի + ստորադասականի ներկա» կապակցուվ֊ծյունը որպես ապառնիի արտահայտուվ֊ծյան ընդհանուր կանոն[75] Հարաբերակցուվ֊ծյունը պահպանելու համար, սակայն, նոր հայերենում բայակայում է *կու* մասնիկով սահմանական եղանակի ձևը, որին փոխարինում է -um/-am, əm և այլն/ վերջավորուվ֊ծյամբ ներգոյականը կամ -is վերջավորուվ֊ծյամբ դերբայն օժանդակ բայով հանդերձ, իսկ որպես ըղճականի ներկա և անկատար, արևմտահայերենի նման, պահպանվել է հին հայերենի սահմանականի ձևը

§364 Հին ստորադասականի ներկայի և կատարյալի (= ապառնի) կորուստը և *կու* մասնիկով բաղադրյալ ժամանակի առաջացումն իրենից ներկայացնում է հայերենի բայի զարգացման մի կարևոր ժամանակաշրջան և միաժամանակ ամենակարևոր բաժանման կետերից մեկն է մի կողմից հին լեզվի, և մյուս կողմից՝ միջին և նոր հայերենի միջև

Ի՞նչ է ներկայացնում իրենից ըստ էության և *ծագման* առաջին անգամ միջին հայերենի սահմանականի ներկայի, անկատարի և ապառնիի մեջ երևացող և դեռևս այսօրվա հայերենում այնքան կարևոր *կու* մասնիկը -Արդեն Պետերմանը *կու* մասնիկի բայատրուվ֊ծյան համար առաջ է քաշել բազմաթիվ վարկածներ /Abh der Ak. der Wiss zu Berlin, 1866, էջ 79/ Անհաջող է *կու* մասնիկի նրա տված բայատրուվ֊ծյունը *կամ* գոյականից, որն իբր թե կորցրել է ձայնավորը, իսկ *ս* բաղաձայնը դարձել է *ու* Պետերմանի կարծիքով այդպես կարելի է ամենապարզ կերպով բայատրել ոչ միայն ձևը,

---

[74] Բայատրուվ֊ծյամբ Ազուլիսի /գոկերի/ բարբառի, որ ի տարբերուվ֊ծյուն սովորական արևելահայերենի ներժուն է *կու /կը/* մասնիկը և արտահայտում է ապառնին բաղադրյալ մի ժամանակի միջոցով, որ կազմված է էական բայից + անորոշ դերբայ Հմմտ ստորև՝ § 417 հաջ

[75] bıdı -ով արևմտահայերեն ապառնիի նախանշանները պետք է որոնել արդեն միջին հայերենում քանի որ արդեն գոյուվ֊ծյուն է ունեցել ժամանակի բաղադրյալ բանաձևը Սակայն միջին հայերենում *պիտի լալ պիտի այնէ* նշանակում են դեռևս «պետք է, որ լալ», «պետք է, որ անի» Ապառնիի ֆունկցիան նոր հայերենում է *Պիտի*-ով նհ ապառնիի համար (որ հնչյունական առումով տարբերակված է դեպի bıd, dı և bı վերջինս նպ bı ապառնին նշանակող մասնիկի ակնհայտ նմանուվ֊ծյամբ) հմմտ հբգ ապառնիի ձևը sculan+Inf (Grimm, Deutsche Gramm 4, 176 ff), մբգ suln + Inf, անգլ I և we shall + Inf

այլև նշանակությունը, որովհետև *կամ* նշանակում է *կամք*, այսինքն՝ *կու ապօթիմ*= «կամենում եմ աղոթել, աղոթելու եմ» Դա անհնարին է, որովհետև 1) հնարավոր չէ *կամ>կու* հնչյունափոխություն 2) *կու* մասնիկն ի սկզբանե ապառնիի նշանակություն չունի, ինչպես սխալմամբ կարծում է Պետերմանը, ելնելով արևելահայերենի տվյալներից Ըստ §§361, 362, *կու* մասնիկը նշանակում է ոչ այնքան ժամանակը, որքան եղանակը, ամենից առաջ, որպես ահռնանականը կերտող մասնիկ, այն արտահայտում է գործողության *մաքուր իրականությունն* ու որոշյալ *եղանակը*, չկապելով դրա հետ ժամանակի որևէ հասկացություն, քանի որ, վերևում ասվածի համաձայն մի-ջին հայերենում *կու* մասնիկը տարածվում է ինչպես ներկայի և անկատարի, այնպես էլ ապառնիի վրա, և միայն նոր հայերենում, նայած բարբառներին, ձեռք է բերել զանազան մասնակի ֆունկցիաներ Ապա, ճանկան նկատառումներից ելնելով բացառվում է կապը *գոմ* էական բայի հետ Նույնքան անհավանական է նույնությունը Թալմուդի P_T prostheticum-ի հետ[76], որը, դերբայից առաջ դրվելով, կազմում է ներկան, ինչպես նաև նույնությունը Մարոկկոյի[77] բարբառում ներկան կազմող ka նախամասնիկի հետ հիմք չի տալիս արաբական ծագումը ենթադրելու համար[78] Մեկ ուրիշ վարկած էլ, որ Պետերմանը հերքում է «բավականաչափ հիմնավորված չլինելու պատճառով» - *կամ* բայի հիմքի հետ կապի մասին, Այտընյանը /Քնն քերակ Բ էջ 76 հաջ / զարգացնում է և ավելի ճշմարտանմանն դարձնում Այտընյանի միտքը հետևյալն է *կամ* բայի ձևերը հնագույն ժամանակներից ի վեր երևան են գալիս ուրիշ բայաձևերի հետ միասին, կարծես թե սեռական նշանակությունը չունենալով և ավելորդ լինելով, բայց իրականում բայաձևերի մեջ արտահայտված գործողությունն ընդգծելու համար, օր, *կայր կուգայէր, կայ մնայ, կալ ակն ունել, լայինն եւ կայինն* Նամանավանդ հին ստորադասականի ներկայի մահացումից հետո սահմանականի իմաստն ար-

---

[76] P_T կամ |c P_T prostheticum - Բաբելոնյան Թալմուդի լեզվի մեջ - gā նախամասնիկը, որ միանում է ներկա դերբային՝ գործողության ուժգ և տևողությունն արտահայտելու համար P_T մասնիկը ծագում է gām «կանգնել» բայից Օրինակ gā āmar < gām āmar, gām wo'āmar «ասում է» = «կանգնած է /և/ ասում է» մի կառուցվածք, որ հար և նման է հին հայերեն *կայ ասէ կայ ու ասէ* կառուցվածքներին որոնց մեջ Այտընյանի և Կարստի համաձայն պետք է որոնել *կու* մասնիկի աղբյուրը (Ծան թարգմանչի)

[77] Հմմտ WZKM 1899 թ

[78] Նույնքան անհիմն է *կու* մասնիկի մի ժամանակ տարածում գտած մերձեցումը լազերենի ko «պիտի» եղանակիչի հետ /տե՛ս օրինակ, Գ Ա Ղափանցյան Հայոց լեզվի պատմություն հին շրջան Երևան 1961 էջ 100-101/ (Ծան թարգմանչի)

տահայտելու համար պետք են եկել հաջորդող verbum finitum-ի հետ շաղկապված *կամ* բայի ձևերը. հատկապես *կայ ու* կառուցվածքը ներկայի 3-րդ դեմքի համար /հմմտ վերևում էջ 289, տողատակի ծան / Այդ *կայ ու* կապակցությունը կրճատումով տվել է *կու* /=կ՝ու/ մասնիկը, որն սկզբում /*կայ ու* կապակցությունից ծագելով/ սահմանափակվել է ներկայի եզակիի 3-րդ դեմքով, իսկ հետագայում տարածվել է մնացած բայաձևերի վրա Այտընյանը ճշմարտացիորեն ավելացնում է, որ *կամ* բայը հատկապես հարմար է եղել սահմանական եղանակն արտահայտելու և այն ստորադասականից տարբերելու համար Քանի որ այդ բայական հիմքը, ինչպես այսօր, այնպես էլ միջին հայերենում կիրառվել է միայն որպես սահմանական և երբեք որպես ստորադասական /հմմտ ստորև Անկանոն խոնարհում §423 հաջ /, ապա *կամ, կաս, կայ* և այլ բայաձևերի միացումը ներկայի ձևին պիտի բնորոշեր վերջինը որպես սահմանական Այսպես, օր , *կայ ու նայի* կապակցության մեջ *նայի* ձևը, *կայ* սահմանականի հետ համաձայնելով և նրա հետ նույն աստիճանի վրա գտնվելով, նույնպես կարող էր լինել միայն սահմանական[79]

Այդ բացատրությունը կարելի էր վստահելի համարել, եթե հաջողվեր ապացուցել հետևյալը 1) *կայ ու*, որպես *կու* մասնիկի նախաձև, սահմանականի ֆունկցիայի մեջ մի ժամանակ հանդես է եկել *ընդհանուր* և *կանոնավոր ձևով* կամ գոնե հաճախակի և ոչ հատուկենտ, ինչպես կարծես թե հետևում է վկայությունների սահմանափակ թվից 2) հնչյունական օրենքների համաձայն, *կայ ու* կապակցությունից առհասարակ կարող էր ծագել *կու* ձևը Ըստ ևիլիկյան հնչյունական օրենքների, վերջինս անհնարին է, որովհետև *ա* և *այ* հնչյունները կարող են դուրս ընկնել միջին, բայց երբեք վերջին վանկում Դրա համար այս բացատրությունը նույնպես համարում եմ անբավարար Չնայած որ ստուգաբանորեն ես համաձայնում եմ *կու* մասնիկը *կայ* բայի հետ, սակայն տեսնում եմ դրանում հին բարբառային մի մասնիկ, որը միջին հայերենում ձեռք է բերել սահմանականը կերտող մասնիկի նշանակությունը

[79] Այդ տեսության օգտին են խոսում նաև ժամանակակից բարբառային կառուցվածքները *տեսնէ կայ հայի կայ խօսայ կայ* /Այտ Բ 76, 77/

II. ԹԵՔՈՒՄ

Ա. Ներկայի և ապառնիի դիմային վերջավորումները

§365 Սահմանականի ներկան, ստորադասականը և ապառնին, քանի որ նրանց բոլորի հիմքում ընկած են սահմանականի ներկայի հին ձևերը, ունեն հետևյալ միասնական դիմային վերջավորումները

	Եզակի		Հոգնակի
I	*մ*	I	*նք*
II	*ս*	II	*ք*
III	-	III	*ն*

-մք վերջավորումը հոգն I դեմքի կիրառումյան դեպքերը սոսկ դասական են Դա վստահորեն հետևում է այն բանից, որ ուղիղ խոսքի մեջ, որտեղ ամենամաքուր ձևով արտացոլվում է կիլիկյան ժողովրդական լեզուն, երևան է գալիս միայն *-նք* վերջավորումը նոր ձևը Վերջինս առկա է արդեն ԺԲ դարում Մխիթար Հերացու մոտ *ենք* էջ 65, *կանք* էջ 120, *կարենք* էջ 66, *կամինք* էջ 76, *յիշենք* էջ 62, 113, *տանք* էջ 50, *տեսանենք* էջ 120 Այլ վկայումյուններն են *աղաչենք* 53_{22}, *ասենք* 59_{13}, *առնումք* 53_{23}, *գրենք* ԴԳ ա, Բ ժԹ, կե, ճա, ղա, ղէ, ճիե, մի, մլը, մծա, Ա 235, *ծառայենք* 53_{23}, *տանք* 53_{23}, *կարենք* Ա 174, *կեսցըմենք* 59_{15}, *հրաւիրենք* 13_{13}, 53_{22}, *յիշենք* Ա 170 *ենք* 59_{13}[80] Վկայումյուններ Թեքման մնացած ձևերի համար առկա են արդեն վերևում բերված բայաձևերի մեջ

Այդ դիմային վերջավորումյուններից եզակի 1-ին, 2-րդ դեմքը և հոգնակի 3-րդ դեմքը մնացել են անփոփոխ և գոյատևել են մինչև նոր հայերենը Եզակի 3-րդ դեմքում գրումյան մեջ գրեթե կանոնավոր ձևով պահպանվող *յ* տառը մեռած մի նշան է, որ վաղուց կորցրել է յուր հնչյունական արժեքը Նույնը կարելի է ասել *ա* հիմքերի հոգնակի 2-րդ դեմքի *ք*-ից առաջ գրվող *յ*-ի մասին, որ անհետացել է բոլոր ժամանակակից բարբառներում Էապես փոխվել է միայն հոգնակի 1-ին դեմքի *-նք* վերջավորումյունը

---

[80] Նույնիսկ այդ ժամանակի *դասական* գրականումյան մեջ շատ անգամ թափանցում է *-նք* վերջավորումյամբ ձևը Օրինակ. Վարդանի պատմումյունը /ԺԳ դար/ ունի հետևյալ բարբառային ներթափանցումները *ենք* էջ 157, 161, *չենք* էջ 157, 158 *չգիտենք* էջ 160 *յիշենք* էջ 160 *ուզենք* էջ 158

/փխ. դաս *-ար*[81]/, որ այս ձևով անցել է նաև նոր հայերենին Նրա ծագման մասին հմմտ Հնչյունաբ §142

Բ Անկատարի դիմային վերջավորությունները

§366

	Եզակի		Հոգնակի
I	*ի*	I	*աք*
II	*իր*	II	*իք*
III	*ր*	III	*ին*

Վկայությունները տե՛ս վերևում բերված բայաձևերի մեջ Կիլիկյան անկատարի վերջավորությունները, ինչպես տեսնում ենք, հին հայերենի հետ համեմատած չեն փոխվել· Միայն եզակի 3-րդ դեմքը մի մասնակի բայառությունիչ է կազմում· Նախ և առաջ, *ա* և *ու* հիմքերում *ր* դիմային վերջավորությունիչ առաջ երևացող *յ*-ն կորցրել է նախնական հնչյունական արժեքը և դարձել զուտ տառադրական նշան· Նոր հայերենում նույնպես այդ հին հնչյունիչ հետք չի մնացել Առանձին դեպքերում, ինչպես Լևոնի երգի մեջ /Dul. էջ 540/ *կու լար* /= դաս *լայր*/ ձևում այդ սոսկ տառադրական նշանը դուրս է ընկել նաև դրությյան մեջ· Եզակի 3-րդ դեմքի հին ձևերին, ինչպես *աղայր, թողոյր*, կիլիկյան հայերենում համապատասխանում են այսպիսով *աղար, թողուր* Ապա *ի* հիմքերի եզակի 3-րդ դեմքի մասին կարելի է ասել հետևյալը Հին լեզվի մեջ, ինչպես հայտնի է, *ի* հիմքերի անկատարը խոնարհվում է հետևյալ սխեմայի համաձայն եզ. *խօսէի, խօսէիր, խօսէր /խօսիւր* հոգն *խօսէաք, խօսէիք, խօսէին· Խօսէի, խօսէիր, խօսէաք* և այլ ձևերը, եզակի 3-րդ դեմքի բայառությամբ, օրինաչափորեն ծագում են *xausiyi, *xausiyir, *xausiyak և այլ ձևերից Ի տարբերություն դրա, *-էր* վերջավորությամբ երրորդ դեմքի ձևը՝ *խաւսէր*, կազմված է մնացած, արտաքնապես *ե* լծորդությանը պատկանող ձևերի անալոգիայով Եզակի 3-րդ դեմքի նախնական ձևը *-իւր* վերջավորությունն ունի *խաւսիւր* /*xausi-y-r[82]

---

[81] Հմ ներկայի հոգն. 1-ին դ *-ար* վերջավորությամբ ձևը ոչ այլ ինչ է, եթե ոչ *-ա* վերջավորությամբ եզակի 1-ին դեմքը, որին միացել է *-ք* հոգնակիակերտ վերջածանցը Այստեղ *-ք*-ն ոչ թե դեմքի այլ թվի ածանցն է

[82] Առհասարակ դաս. *իւ*-ը նայերից առաջ հաճախ կարելի է բխեցնել **իյ* ավելի հին կապակցությունից *Ալիւր, աղբիւր, եղջիւր* հնչունական ձևերն ենթադրում են ավելի հին **ալիյր *աղբիյր, *եղջիյր*, որովհետև միայն այդպես կարելի է բացատրել *-եր* վերջավորությամբ համապատասխան սեռականը· Նույն ձևով ես կարծում եմ, որ *ա-*

հմմտ 3-րդ դ եզ անկատար *աղա-յ-ր՝ աղամ* բայից, *թողո-յ-ր* /= tołu-y-r/ *թողում* բայից, *սիրէ-ր* /= sire-y-r/ *սիրեմ* բայից Եթե *իւր* ձևից դասական լեզուն հրաժարվել է և փոխարինել *էր*-ով կազմուվածքը - Այտընյանը /Altarm Gramm. էջ 67/ *իւր* ձևը համարում է ոչ դասական - այն պահպանվել է ժողովրդական լեզվի ենթաշերտերում, այնպես որ ոչ մաքուր դասական գրողների մոտ բազմիցս հասել է գրական արտահայտուվեյան. Փավստոս Բուզանդի մոտ *-ոյր* նոր հնչյունական ձևով[83] Այդ հնչյունական «տարազով» ձևն անցել է նաև կիլիկյան հայերենին Այն բանից, որ նրա կողքին կիլիկյան աղբյուրներում նույնքան հաճախ կանգնած է *-էր* վերջավորուվեյամբ ձևը, պետք է ընդունել, որ երկու ձևերն էլ կիլիկյան հայերենում համարվում էին գրեթե համարժեք Կրավորականի նոր թեքման մեջ *-ոյր /-իւր/* հին ձևը կարծես թե մուտք չի գործել Նոր հայերենում նույնպես *-ոյր* ձևը կարծես թե ընդհանուր մահացման է ենթարկվել և փոխարինվել *-էր* վերջավորուվեյուն ունեցող նոր ձևով

Անկատարի խոնարհումը կիլ հայերենում չի ենթարկվել ուրիշ փոփոխուվեյունների Այսպես. օրինակ, կիլիկյան միջին հայերենի հուշարձաններին դեռ ծանոթ չէ երկրորդային[84], էվֆոնիկ *յ*-ի առաջացումը ձայնավորներով սկսվող վերջածանցներից առաջ, ինչպես այդ հատուկ է, օրինակ, Ախալցխայի բարբառին /Том Ах. диал 63/, անկատ եզ 1-ին դեմք mar̥e-y-i = կիլ *մարէ-ի* 2-րդ դեմք mar̥e-y-ir = կիլ *մարէ-իր* հոգն 1-ին դ mar̥e-y-ink^{c} = դաս *մարէ-աք* 2-րդ դ mar̥e-y-ink^{c} = կիլ *մարէ-իք* 3-րդ դ mar̥e-y-in = կիլ *մարէ-ին* Կիլիկյան հայերենին դեռևս խորթ է mar̥e-y-ink^{c} ձևի մեջ առկա ընդհանուր[85] նոր հայերեն -ink^{c} վերջավորուվեյունը Վերջինս նոր հայերենի յուրահատուկ զարգացման արդյունք է և առաջացել է ներկայի 1-ին դեմքի հոգնակի -nk^{c} վերջավորուվեյան անալոգիայով, ընդ որում նույն ժամանակ բոլոր մնացած դիմային վերջավորուվեյուններում առկա i տարրը տարածվել է նաև այս դիմային ձևի վրա Նույն ձևով անց կատարյալի հին

րիւն ծագում է **արիյն*-ից, հաշվի առնելով *արեան* /=*արիան/* սեռականը, *ձիւն*< **ձիյն՝ ձեան* /=*ձիան/*սեռականից և այլն ւ/y > u/v անցումն առկա է *ի* հիմքերի հհ հոլովման մեջ, ինչպես՝ *հոգի* սեռ *հոգւոյ* /< *hogi-oy, *hogy-oy, հմմտ Ջևաք §182ա/

[83] *Հմմտ Փավստոս* Բուզ էջ 69 *տեսանոյր Փավստոսը* շատ ուրիշ դեպքերում էլ ցույց է տալիս արդեն միջին հայերենի հնչյունական վիճակը Հմմտ Հնչյունաբ § 72

[84] Լեհ Նիկ. Ակ և այլն հմմտ Hanusz WZKM 1 302 Դրա փոխարեն. երկու ժամանակակից գրական լեզուներն էլ ունեն գրքային հնաոճ ձևեր առանց *յ*-ի.

[85] Արևելահայերենում նույնպես տիրում է *-ինք* նոր վերջավորուվեյունն ինչպես անկատարի, այնպես էլ անցյալ կատարյալի մեջ

-աք վերջավորութիւնը նոր հայերենում փոխարինվել է -ink^{c} վերջավորութիւնով[86]: Տե՛ս ներկայի խոնարհման աղյուսակը:

[86] Որոշ ժամանակակից բարբառներում այն բոլոր բայերից չի կազմվում և որոշակիորեն զտնվում է անհետանալու ընթացքում. օր. լեհահայերենում: Ադուլիսի արևելահայ բարբառում այն լրիվ անհետացել է և փոխարինվել մի բաղադրյալ ժամանակով. որ կազմված է -el կամ -al վերջավորութիւնք դերբայից + էական բայի ներկայի ձև: Հմմտ. Ս. Սարգ. էջ 115 հաջ.:

ԳԼՈՒԽ III

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§367 Հին հայերենի անցյալ կատարյալը, որ դեռևս պահպանված է ժամանակակից բարբառներում, կարելի է գտնել կիլիկյան միջին հայերենում երկու ճյուղավորումով՝ որպես պարզ և բաղադրյալ անցյալ կատարյալ[87] Անցյալ կատարյալը կազմվում է *անցյալ կատարյալի հիմքից* պարզ անցյալ կատարյալը -անցյալ կատարյալի *պարզ հիմքից*, բաղադրյալ անցյալ կատարյալը - անցյալ կատարյալի *բաղադրյալ հիմքից* Տարբերությունը պարզ ու բաղադրյալ անցյալ կատարյալի միջև սոսկ հիմքի տարբերությունն է

I ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔ

§368 *Անցյալ կատարյալի պարզ հիմքը* նույնական է բայարմատի հետ ու մաքուր ճևով առկա է անց կատ 3-րդ դեմքում Այսպես, որպես հին լեզվի իրակությունների շարունակություն ունենք

Ներկայի հիմք		Անցյալ կատարյալի հիմք
հանե-	(*հանեմ* բայից)	*հան-*[1]
բերե-	(*բերեմ* բայից)	*բեր-*[2]
մտե-	(*մտեմ* բայից)	*մուտ-*[3]
ժողու-	(*ժողում* բայից)	*ժող-*[4]
ելնե-	(*ելնեմ* բայից)	*ել-*[5]
գտնու-	(*գտնում* բայից)	*գիտ-*[6]
իջնու-	(*իջնում* բայից)	*իջ-*[7]
տեսնու-	(*տեսնում* բայից)	*տես-*[8]
առնու-	(*առնում* բայից)	*առ-*[9]
լինի-	(*լինիմ* բայից)	*լին-*[10]
լինի-	(*լինիմ* բայից)	*լի-*[11]
մեռնի-	(*մեռնիմ* բայից)	*մեռ-*[12]
հասնի-	(*հասնիմ* բայից)	*հաս-*[13] և այլն

[87] Պակաս հաջող է նրանց անվանումը հունարենի օրինակով անցյալ կատարյալ I և անցյալ կատարյալ II

Վկայուվիյումներ 1) *ե-հան* Լևոնի երգ Dul 540 2) *քեր-ին* L 185_9 *քեր-էք* Սմբ Ժամ 612 3) *մտ-աւ* Սմբ Ժամ 631 4) *թող-ել* անց դերբայ 51_3 *թող-ած* անց դերբայ 55_8 5) *ել-աւ* 9_{24}, 25_{21} 6) *զի՛ս* եզ 2-րդ դ կատ հրամ Ագ Բ *զտ-այ* 63_{15} 7) *իջ-աւ* Սմբ Ժամ 648 8) *տես-էք* 11_{24} 9) *առ-ի* 11_{25} *առ-ին* 63_{22} 10) *ընկ-աւ* 33_7 ԴԳ խոզ 11) *լել* անց դերբայ (=**լի-եալ*) 45_{18} $47_{31\,38}$ 12) *մեռ-ել* անց դերբայ 23_{15} 13) *հաս-ել* անց դերբայ 77_{14} և այլն

§369 Սրան են վերաբերում նաև պատճառականի ձևերը, որոնք մինչև նոր հայերենի շրջանը /հմմտ Այտ Բ էջ 90, §248/ պահպանել են անցյալ կատարյալի կանոնավոր հիմքը՝ *-ուց-* կամ *-ցուց-* վերջածանցով, իսկ ներկայի հիմքը, ըստ §324 հաջ ընդունել է ավելի նոր հնչյունական ձև Օրինակ կիլ *լմնցնեմ լմնցուց-*[1] անցյալ կատարյալի հիմքը = դաս **լմնանացուց-* կիլ *կեցցնեմ, կեցնեմ կեցցուց-, կեցուց-*[2] անցյալ կատարյալի հիմքը = դաս *կեցուց-* կիլ *յաւելցնեմ՝ յաւելցուց-*[3] անցյալ կատարյալի հիմքը = դաս *առաւելացուց-* կիլ *ուսցնեմ ուսուց-*[4] անցյալ կատարյալի հիմքը = դաս *ուսուց-* կիլ *անցնեմ անուց-*[5] անցյալ կատարյալի հիմքը = դաս *անուց-* կիլ *հասցնեմ՝ հասուց-*[6] անցյալ կատարյալի հիմքը = դաս նույնը կիլ *յարցնեմ՝ յարուց-* անցյալ կատարյալի հիմքը = դաս նույնը, կիլ *փախցնեմ՝ փախուց-*[8] անցյալ կատարյալի հիմքը = դաս նույնը, կիլ *հովցնեմ՝ հովացուց*[9] անցյալ կատարյալի հիմքը = դաս *հովացուց-* կիլ *կակղացնեմ՝ կակղացուց-*[10] անցյալ կատարյալի հիմքը և այլն Կիլ *կորանեմ* նույնպես կանոնավոր ձևով պահպանվել է անցյալ կատարյալի *կորուս*[11] - ձևը, կիլ *դարձնեմ* - անցյալ կատարյալի *դարձուց* ձևը էապես ոչ պատճառական կիլ *ցուցնեմ* բայը, արտաքնապես համընկնելով պատճառականների հետ, իսնարհվում է պատճառականի նման և պատճառական բայերի անալոգիայով կազմում է անցյալ կատարյալի մի նոր հիմք *ցուցուց*[12] կանոնավոր դասական *ցուց* հիմքի դիմաց, կարծես թե նախնական ձևը լիներ *ցուցուցանեմ* Որպես պատճառական է խոնարհվում նոր հայերենում նաև իրենից ձևականորեն մի կարծեցյալ պատճառական ներկայացնող *հարցնեմ* բայը Սակայն վկայուվիյումների պակասի պատճառով դժվար է ասել, թե արդյոք կիլիկյան հայերենում *հարցուց* կատարյալի նոր հիմքը գրավե՞լ է, թե՞ ոչ՝ հին կանոնավոր *հարց-*հիմքի տեղը

Վկայուվիյումներ 1) *լմնցուց-աք* 9_{13} 2) *կեցցուց-ել* ներգործ անց դերբայ 35_{31} 3) *յաւելցուց-ել* ներգործ անց դերբայ 47_{20}, 57_2 4) *ուսուց-ին* ԴԳ լդ 5) *անուց-ած*, կրավ անց դերբայ 63_{15} 6) *հասոյց*, Սմբ Ժամ Dul 624 7) *յարոյց*, Սմբ Ժամ Dul. 622 8) *փախոյց* Սմբ Ժամ Dul 646 9) *հովցուց-*

ած կրավ անց դերբայ Մխ Հեր 17 10) *կակղայուց-ած* կրավ անց դերբայ, Վաստ 33 11) *կորուս-ի* 63_{12} *կորուս-ել* ներգործ անց դերբայ 63_{21}, ԴԳ, ճբ. *կորուս-ած* կրավ անց դերբայ, ԴԳ ճբ *կորոյս* 13_{22}, 57_{11}, 59_{8}, 67_{1} 12) *յուսյուց-ել* ներգործ անց դերբայ 9_{19} (Մխիթար Հերացու մոտ, էջ 134, դտնում ենք նոր հայերենում հանդիպող *ցցուցել* ձևը դուրս ընկնող *ու*-ով՝ *ցցընել* բայից)

§370 Հետևյալ բայերն անկանոն ձևով են կազմում պարզ անցյալ կատարյալի հիմքը *գամ-եկ-*[1], *տանիմ-տար-, ունիմ-կալ, ուտեմ- կեր-, տամ-տու-, երթնում- երթու-, այնեմ-արար-* և *այր-* դրանք բոլորն էլ հին լեզվից եկած և հետագայում նոր հայերենին անցած հիմքեր են՝ բացառությամբ *կալ-* հիմքի, որ նոր հայերենում փոխարինվում է *ունիմ* բայից կազմված անցյալ կատարյալի հիմքով Միջին հայերենում նույնպես հայտնվում է արդեն *ընդունած* անցյալ դերբայի ձևը /էջ 11_{19}, 59_{31}, 67_{13}, 81_{10}/ *ընկալած* ավելի հին ձևի փոխարեն

Այնեմ բայը կազմում է *այր-* անցյալ կատարյալի հիմքը՝ բացառությամբ եզակի 3-րդ դեմքի, որ դեռևս ունի արմատի *արար* ձևը *Այր-* հիմքն օրինաչափորեն ծագել է *արար* հիմքից *արար-ի, արար-իր, արար-աք* բազմավանկ ձևերն, ըստ Հնչյունաբ 34, դարձել են *արրի, արրիր, արրաք*, իսկ վերջիններս, ըստ Հնչյունաբ §§38 և 134, *արր-* դարձրել են *այր-* Երկվանկ ձևը, սակայն, հնչյունական օրենքների համաձայն պիտի պահպաներ Այսպիսով, հարաբերությունը կիլիկյան և հին հայերենի հիմքի ձևերի միջև հետևյալ տեսքն է ընդունում

Կիլիկյան	Դասական
այր-ի	*արար-ի*
այր-իր	*արար-եր*
արար	*արար*
այր-աք	*արար-աք*
այր-իք	*արար-իք*
այր-ին	*արար-ին*

Վկայություններ 1) *չեկ-իր* 9_{21}, 75_{17} *եկ-ին* 51_{16} *եկ-ել* 11, 17, 13_{13}, $59_{12\,13}$, 67_{15} *տար* Զքբ Հ, 156, *տար-աւ*, 93_{2}, *տար-ել*, ներգործ անց դերբայ 55, 21, ԴԳ ճիա, լգ *կալ*, ԴԳ ճբ *կալ-աւ* Սմբ Ժամ 616, 622, 643 *կալ-ել* ներգործ անց դերբայ $17_{1\,18}$, 23_{9}, $39_{16\,17}$, 57_{20}, $67_{9\,23\,28}$ *կեր-աւ* Սմբ Ժամ 611 *կեր-ան* Սմբ Ժամ 612, *ուտ-ել* ներգործ անց դերբայ 17_{13}, 23_{26}, 25_{6} 49_{12} և այլն *տուած* կրավ անց դերբայ 73_{21} *երթ-իր* 25_{24}, *երթ-ած* կրավ անց դերբ 39_{12}, 51_{16}, 65_{19} *երթու-ել* ներգործ անց դերբայ Սմբ Ժամ 651 *այր-ի* Զքբ մծդ.

արկին 15-րդ դարի ավելի ուշ ճև՝ փոխանակ ավելի հին *այրկին* Ամիրդովլաթի մոտ 348, 368 *արար* 71_{22}, ԴԳ ծդ, կ, ղէ, ճե, ճի, ճկա *այր-ել* ներգործ անց դերբայ 15_{12}, 28_{8}, $12_{14\,19}$, 29_{18}, 35_{17}, 57_{17}, $61_{9\,11}$, 63_{4}

§371 Որպես անցյալ կատարյալի յուրահատուկ միջին /և նոր/ հայերեն ճև երևան է գալիս *դիր-՝ դ-ն-եմ* ներկայից՝ հին հայերենի *դի-*, կամ հավելումով *ե-դի-* հիմքից Անցյալ կատարյալի *տար-* և *դիր-* հիմքերը կազմված են միևնույն սկզբունքով, այն տարբերությամբ, որ առաջինն ընդունված է արդեն դասական հայերենում, իսկ վերջինն ընդհանուր է դառնում միայն միջին հայերենի շրջանում *Տանիմ* ընդարձակ ներկային /= *տա+ն-+իմ* փխ **տա-ան-իմ*/ վերաբերում է *տար* հրամայականի եզ 2-րդ դեմքը, որ կազմված է *տա* բայարմատից + եզակի երկրորդ դեմքի *ր* վերջածանցը Նույն ճևով է *տամ* ներկայի համար *տու-* հիմքից կազմված *տուր* (=*տու+ր*) հրամայականը *դնեմ* ներկայի համար *դի-* հիմքից *դիր* /=*դի+ր*/ հրամայականը Պետք է ասել, որ պարզ կատարյալի հրամայականի եզակի ներգործ 2-րդ դեմքը կանոնավոր ճևով նույնական է լինում անցյալ կատարյալի հիմքի հետ և վերջինիցս, որպես արմատական ճևից, կազմվում են սահմանականի ճևերը Այսպես, օր. հրամ եզակի 2-րդ դեմք *հան*, սահմ եզ 1-ին դ *հան-ի* հրամ եզ 2-րդ դ *թող*, սահմ եզ 1-ին դ *թող-ի*. հրամ եզ 2-րդ դ *առ*, սահմ եզ 1-ին դ *առ-ի* Կազմուլթյան այդ սկզբունքի հետևանքով և վերջինիս տարածման հիման վրա արդեն հին հայերենում *տանիմ* բայի համար համապատասխանաբար կատ հրամայականի եզակի 2-րդ դեմքի *տար* ճևն ընդունվել է որպես մաքուր հիմք և հրամայականից տարածվել է անցյալ կատարյալի մնացած ճևերի վրա - սխալմամբ*, քանի որ, ինչպես ասված է, այդ ճևն իրենից ներկայացնում է ոչ թե սովորական մաքուր հիմք, այլ *ր* դիմային վերջավորությամբ ընդարձակված հիմքը.

Նույն երևույթը կրկնվել է միջին հայերենի շրջանում *դնեմ* բայի համար Արդեն հին լեզվի մեջ, որպես առանձին և ավելի շուտ ռամկական կիրառություններ, այդ բայի համար *դի-* նախնական հիմքից կազմված ճևերի կողքին երևում են *դիր-* հիմքից կազմված հետևյալ ճևերը *դրին* /= *դիր+ին*/ սահմ 3-րդ դեմք և *դրեալ* /= *դիր+եալ*/ դերբայը Միջին հայերենում սահմանականի անցյալ կատարյալի բոլոր ճևերը երևան են գալիս որպես *դիր-* նոր հիմքից կազմված այստեղ, *տանիմ* բայի նման, սխալ ճևով բայարմատ համարվող -ր վերջածանցով հրամայականի եզակի 2-րդ դեմքը իսկապես դարձել է կատարյալի ընդհանուր հիմք, որ դուրս է մղել նախնական *դի-* թեմայի Թեքման մեջ *դիր-* հիմքը վերջածանցից առաջ օրինաչա-

փորեն դառնում է *դր-* Ըստ այդմ, հիշյալ բայի անցյալ կատարյալի զարգացումը ներկայանում է հետևյալ կերպ

Դասական հին հայերեն	Կիլիկյան միջին հայերեն
ե-դ-ի	*դր-ի*
ե-դ-իր	*դր-իր*
ե-դ	*ե-դիր*
ե-դ-աք	*դր-աք*
ե-դ-իք	*դր-իք*
ե-դ-ին	*դր-ին*

Դրանից բայի եզակի 3-րդ դեմքում երևացող *երեդ-* ձևի մասին տե՛ս ատորև՝ §377 հաջ -Համապատասխանաբար, նոր արևմտահայերենը, հատկապես՝ Տաճկ և Լեհ ունի təri, tərir, tərink^{c} և այլն Վերջապես, կազմուվթյան նույն սկզբունքը շարունակում է գործել նոր հայերենում *ր*-ով հրամայականի երրորդ դեպքում ևս նոր արևմտահայերենում տիրող dur- հիմքը */տամ* - dam- բայից/ Տաճկ, Լեհ և այլ բարբառներում կազմում է այդ բայի հրամայականի հիմքը, իսկ հին հիմքը պահպանվում է ներգործականում Այսպես, Տաճկ /Այտ Բ 67/ dəv-i */տու-ի/*, dəv-ir */տու-իր/* կազմում է անցյալ կատարյալի ներգործականը, բայց dər-v-im */տր-ու-իմ/*, dər-v-is */տր-ու-իս/*, dər-v-ı */տր-ու-ի/* ներկայի կրավորականը *դր-ին* Սմբ Ժամ 625, 631, 648, 652, 653, 655, 656, 668, 669, 670, ԴԳ խազ և վերջաբանում *դիր* Զքբ լզ, լճ, խճ *դր-ել* ներգործ անց դերբայ 75_{84}, 55_{24}, ԴԳ կը, հբ, Բ օճ, ճծդ, միզ *դրած* կրավ անց դերբ 47_{26}, 65_{28}, 67_{7}, 77_{4} և այլն Հմմտ Վարդանի Պատմ մեջ /13-րդ դար/, դրի, էջ 157_{28}, *են դրել*, էջ 157 միայն հրամայականի հոգմ 2-րդ դեմքը հնչում է դեռևս *դիք*, ԴԳ խա

§372 *Երթամ* բայի անցյալ կատարյալի *չոգայ*[88], *չոքայ* ձևը միջին հայերենում վկայված չէ Նոր հայերենին այդ հիմքի ծանոթ չլինելը վկայում է այն մասին, որ վերջինս հնացած է եղել արդեն կիլիկյան հայերենում Նույն ձևով, դաս *արբ-ի* անցյալ կատարյալը */արբ-* հիմքից/ պետք է անհե-

[88] Սկզբնական ձևն ակնհայտ կերպով *չոքայ* տարբերակն է, որտեղից էլ առաջացած պիտի լինի *գ*-ով *չոգայ* տարբերակը *չոքայ* բառը կապված է *չու* բառի հետ /հմմտ Hubschmann, Gramm, էջ 485/ *Զոքայ* բառում առկա *ք* տարրի վերաբերյալ ես կազմում եմ հետևյալ հավասարումները

չո-ք-այ	երկո-ք-ին
չու	երկու

տապած լիներ արդեն կիլիկյան հայերենում, ինչպես նաև *լմպեմ* հին ներկան դուրս է մղվել *խմել* բայով: *Լսեմ* և *ճանաչեմ* բայերի անցյալ կատարյալի հին ձևերը *լուայ՝ լու* հիմքով և *ծանեայ- ծանի-* հիմքով դուրս են մղվել և փոխարինվել անցյալ կատարյալի նոր, ներկայի հիմքից կազմված բաղադրյալ հիմքերով /հմմտ. ստորև §375/: Նույնը վերաբերում է նոր հայերենին /օր. Տաճկ.. Ախ. և այլն/:

§373. *Անցյալ կատարյալի բաղադրյալ հիմքը* հավասար է բայարմատին + aç, -eç /< eaç/ կամ -ç- վերջածանցը և մաքուր ճևով առկա է անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի մեջ: Պարզ անցյալ կատարյալի նման, այստեղ նույնպես գործում է հին հայերենի կազմուվթյան կանոնը, որի համաճայն *բաղադրյալ* թեմանն առաջանում է հետևյալ կերպ.

1) Ներկայի պարզ հիմքերից *ց-ի* ավելացումով ներկայի հիմքին, միայն թե *ի* հիմքերի դեպքում ներկայի *ի* յօրոդը դառնում է *ե*: Օրինակ.

Ներկայի հիմք.		Անցյալ կատարյալի հիմք.
պրե-	(*պրեմ* բայից)	*պրեց-*[1]
խլե-	(*խլեմ* բայից)	*խլեց-*[2]
ծախե-	(*ծախեմ* բայից)	*ծախեց-*[3]
յեմե-	(*յեմեմ* բայից)	*յեմեց-*[4]
ուզե-	(*ուզեմ* բայից)	*ուզեց-*[5]
սղալե-	(*սղալեմ* բայից)	*սղալեց-*[6]
գնա-	(*գնամ* բայից)	*գնաց-*[7]
կարդա-	(*կարդամ* բայից)	*կարդաց-*[8]
մնա-	(*մնամ* բայից)	*մնաց-*[9]
ազատի-	(*ազատիմ* բայից)	*ազատեց-*[10]
դատըստնի-	(*դատըստնիմ* բայից)	*դատըստնեց-*[11]
լուծի-	(*լուծիմ* բայից)	*լուծեց-*[12]
կորի-	(*կորիմ* բայից)	*կորեց-*[13]
հալծի-	(*հալծիմ* բայից)	*հալծեց-*[14]
ճշմարտի-	(*ճշմարտիմ* բայից)	*ճշմարտեց-*[15]
ջնջի-	(*ջնջիմ* բայից)	*ջնջեց-*[16]
տրըստի-	(*տրըստիմ* բայից)	*տրըստեց-*[17] և այլն:

Վկայություններ. 1) *պրեց-ի* 93_{16}. *պրեց-աք* 25_2, 35_{18}, 67_{29}. 2) *խլեց-եր* 57_{20}. 3) *ծախեց-ի* 75_{18}. *ծախեց* Սմբ. Ժամ. 644. 4) *յեմեցին* ՋզՍ. 199. 5) *ուզեց* 35_{12}. Սմբ. Ժամ. 620. 6) *սղալեց* 81_{15}. 7) *գնաց* 81_{11}. ԴԳ ճհէ. *գնաց-ել* ներ-

գործ անց դերբայ 77_{11} *գնաց-աւղ* ենթակայական դերբայ ԴԳ ճլը 8) *կարդաց* $75_{12\,13}$ 9) *մնաց* 29_{11} 31_{20}, 33_{10}, 35_{1} *մնաց-եալ* ներգործ անց դերբայ 79_{18}, 83_{19} 10) *ազատեց-աւ* 67_{3} 11) *դատըստնեց-աւ* 43_{6} 69_{8} 12) *լուծեց-աւ* $67_{15\,16}$ 13) *կտրեց-աւ* 67_{12} $69_{10\,12}$ 14) *հալծեց-այ* 3_{18} 15) *ճշմարտեց-աւ* 29_{10} 16) *ջնջեց-աւ* 55_{12} 17) *տրըստեց-աւ* 11_{3}

2) Ներկայի պարզ հիմքերից *-ց-*ի միացումով արմատին կամ մաքուր հիմքին Օրինակ

Ներկայի հիմք	Անցյալ կատարյալի հիմք
ամր-ն-ա (մ)	*ամր-ց-*[1]
գող-ն-ա (մ)	*գող-ց-*[2]
լմն-ն-ա (մ)	*լմն-ց-*[3]
հարըստ-ն-ա (մ)	*հարըստ-ց-*[4]
յաւել-ն-ա (մ)	*յաւել-ց-*[5]
տառապել-ն-ա (մ)	*տառապել-ց-*[6]
լ-ն-ու (մ)	*լ-ց-*[7]
ընկե-ն-ու (մ)	*ընկե-ց-*[8] և այլն

Վկայութիւններ 1) *ամրց-աւ* 59_{24}, 69_{6} 2) *գողց-ած* կրաւ անց դերբայ ԴԳ ճիա 3) *լմնց-աւ* 75_{26} *լմնց-եալ* ներգործ անց դերբայ 75_{24} 4) *հարըստց-աւ* 35_{13} 5) *յաւելց-եալ* ներգործ անց դերբայ Մխ Հեր 124 6) *տառապելց-եալ* ներգործ անց դերբայ 53_{12} 7) *լց-ած* ԶգԱ Հ 144 8) *ընկէց* (< *ընկեաց*) Վարդ Պատմ Հ 439

§374 *Անկանոն ձևով* հին լեզվի մեջ բաղադրյալ անցյալ կատարյալ կազմում են *ասեմ* /հիմք *ասաց-*/, *գիտեմ* /հիմք *գիտաց-*/ և *կարեմ* /հիմք *կարաց-*/ բայերը Անցյալ կատարյալի այդ ձևերը պահպանվում են, մասամբ հնչյունափոխված տեսքով, նաև կիլիկյան հայերենում *ասաց* 9_{22}, ԴԳ ճհե, ԶգԱ 242 *ասցաք* 77_{5}, ԶգԱ 151 *ասցին* 29_{8}, ԶգԲ ճղ *ասցել* անց դերբայ $15_{10\,17}$, $23_{9\,10}$, 67_{10} *գիտացին* ԴԳ ճլզ *գիտացիր* L $178_{6\,20}$, L 185_{7} *գիտացիք* L. 186_{5}, ԴԳ խզ *կարցի* ԴԳ իա, լզ *կարցաք* ԴԳ ճհդ Ապա պահպանվել են *բառնամ* և *դառնամ* բայերի անցյալ կատարյալի անկանոն հիմքերը *բարձ-* և *դարձ-*

§375 Բաղադրյալ անցյալ կատարյալը շատ անգամ հանդես է բերում հետագա տարածման միտում Այսպես *ճանաչեմ* բայի նախնական *ծանեայ* անցյալ կատարյալը դուրս է մղվում *ճանաչեցի* ձևով ապա պարզ *լուայ*

/լսեմ բայից/ անցյալ կատարյալի տեղը գրավում է *լսեց-* բաղադրյալ հիմքը, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները *լսեց* **Սմբ Ժամ** Dul. 619, 620, 621 642. **Լևոնի երգ** Dul 540 *լսեցին* **Աես Ամատ** 47_2, **ԴԳ կգ, Սմբ Ժամ** Dul. 650 *լսեցէք* **Ողբ Եզ** Dul 227 *ճանչած* 9_{15}, 65_{15}, L. 156_{19} **Տարածման** նույն միտումի հետ է կապված նաև ԴԳ ճհէ վկայված *սպաննեց* ձևը */սպաննեմ* բայից/

§376 Ընդհանուր առմամբ, սակայն, *պատկանելության* երկկողմանի *հարաբերության* և պարզ ու բաղադրյալ անցյալ կատարյալի ներկայի տարբեր հիմքերի միջև բաշխման տեսակետից կիլիկյան հայերենը հիմնականում պահպանում է հին հայերենի հարաբերակցությունները Դասական լեզվի նման, այստեղ էլ անցյալ կատարյալի բաղադրյալ հիմքը կանոնավոր ձևով կազմվում է 1) պարզ *ե*-ով հիմքերի մեծ մասից 2) բոլոր *ա*-ով հիմքերից, ինչպես պարզ, այնպես էլ ընդարձակ (ածանցավոր) 3) պարզ *ի*-ով հիմքերի մեծ մասից 4) ընդարձակ *ու*-ով հիմքերի մի մասից Մնացած դեպքերում երևան է գալիս անցյալ կատարյալի պարզ հիմքը 1) բազմաթիվ պարզ *ե*-ով հիմքերից և բոլոր ընդարձակ *ե*-ով հիմքերից, այդ թվում նաև պատճառականներից 2) պարզ և բոլոր ընդարձակ *ի*-ով հիմքերից 3) ընդարձակ *ու*-ով հիմքերի մեծ մասից և բոլոր պարզ *ու*-ով հիմքերից Ըստ այդմ, բաղադրյալ անցյալ կատարյալը բնորոշ է ամենից առաջ ներկայում պարզ հիմքերով բայերին, իսկ պարզ անցյալ կատարյալն, ընդհակառակը, ներկայում ընդարձակ հիմքերով բայերին

Նոր հայերենում անցյալ կատարյալի երկու հիմքերի բաշխման տեսակետից պահպանվել է հին վիճակը հին /և միջին/ հայերենի անցյալ կատարյալի հիմքերը կանոնավոր ձևով անցել են որպես այդպիսիներ նաև նոր բարբառներին, իսկ բաղադրյալները մնացել են բաղադրյալ

Ծան Անցյալ կատարյալի *կրավորական հիմքի* մասին, որին համապատասխանում է կամ -vi վերջավորությամբ կրավորականի հիմքը /կանոն ներկա *ծախուիմ*, անց կատարյալի հիմք *ծախուեց-*/, կամ *ու* տարրով ընդարձակված անցյալ կատարյալի ներգործական հիմքը /կանոն ներգործական անց կատ *բաց-ի*, կրավորական անցյալ կատարյալի հիմք *բացու-*, կամ ներգործ անց կատ հիմք *դրի*, կրավ *դրու-*/, արդեն խոսվել է վերևում՝ §§357, 358

Անցյալ կատարյալի այս ձևով կազմված հիմքերի մի խումբ կարող է ընդարձակվել նախահավելվածի շնորհիվ, բայց միայն երեք հիմքի համար նախահավելվածն էական է

§377. Հնդեվրոպական նախահավելվածը՝ որպես ահհմանականի անցյալի հիմքի կազմուիչյան գործոն, արդեն հին հայերենում էական դեր չի խաղում. այլ ահհմանափակված է անցյալ կատարյալի միավանկ դիմային ձևերի նեղ ոլորտով. սակայն ընդհանուր չէ. որովհետև *ե* կամ *ի* ձայնավորով սկսվող բայերը նախահավելված չեն ընդունում, ոչ էլ այն բայարմիկ դեր է խաղում դեպքերի մեծամասնուիչյան մեջ, որովհետև նախահավելված ձևերի կողքին հանդիպում են նաև ձևեր՝ առանց հավելուման Այսպես, օրինակ, անց կատ 3-րդ դեմքի ձևը հնչում է *ե-կաց* և *կաց*, *ե-լից* և *լից*, *ե-հան* և *հան*, *ե-յոյց* և *յոյց*, *է-ած* և *ած* և այլն Ուրիշ դեմքերի դեպքում նախահավելվածը գտնում ենք միայն երեք բայի մոտ *գնեմ*, *գամ* և *առամ* բայերի անցյալ կատարյալի հավելումով կազմված ձևերում եղ 1 *ե-դ-ի*, 2 *ե-դ-իր*, 3 *եղ* հոգն 1 *ե-դ-աք*, 2 *ե-դ-իք*, 3 *ե-դ-ին* եղ 1 *ե-կ-ի*, 2 *ե-կ-իր*, 3 *ե-կն* հոգն 1 *ե-կ-աք*, 2 *ե-կ-իք*, 3 *ե-կ-ին* եղ 1 *ե-ա-ու*, 2 *ե-ա-ուր*, 3 *ե-ա* հոգն 2 *ե-առուք*, 3 *ե-առան* պահպանվել է նախահավելվածը՝ խուսափելու համար հայոց լեզվի ոգուն հակառակ միավանկ բայաձևերից, իսկ հոգն 1-ին դ *առաք* երկվանկ ձևի մեջ այն դուրս է ընկել[89] Ավելի շատ է սրվում և տարածվում հայոց լեզվի պատմուիչյան միջով անցնող միավանկ բայաձևերից խուսափելու սկզբունքը, - միջին և նոր հայերենում այն շատ ավելի ուժեղ է արտահայտված, քան հին հայերենում[90], - նույն չափով ետ են մղվում ու անհետանում անց կատ եղ 3-րդ դեմքի առանց նախահավելվածի միավանկ ձևերը, ինչպես՝ *կաց*, *լից*, *հան* Կիլիկյան հայերենում, որտեղ վերջիններս ամբողջովին հնացած ու անհետացած են, ավելի շատ են երևան գալիս նախահավելվածով ձևերը հին հավելումն այստեղ շարունակվում է որպես անց կատարյալի եզակի 3-րդ դեմքի միավանկ ձևերի կազմուիչյան կանոնավոր ու պարտադիր մի գործոն այսպես, միշտ կիլ *էած* եզ 3-րդ դեմքի անց. կատ Բ կք *էատ* 81_{27}, ԴԳ ճժէ *եզարկ* ԴԳ ճկէ *եֆծող* ԴԳ ծէ, ճծէ *եհան* Լևոնի երգ /Dul. էջ 540/ *եսպան* 93_{26}, ԴԳ ճկէ *եհաս* 93_{7} Դրա փոխարեն *գնեմ*

---

[89] Հմմտ այդ մասին նաև Meillet Notes sur quelques faits de Morphologie, էջ 11

[90] Խուսափելու այդ ձգտման վրա է հիմնված նոր հայերենում *գամ առամ*, *լամ* միավանկ բառերի մոտ ինչպես ահհմանականի *կու* լրիվ ձևի պահպանումը /այդ մասին հմմտ վերևում՝ §360 տողատակի ծան/. այնպես էլ *ի* նախդրի փրկումը ահհմանականի ժխտական խոնարհման մեջ /ավելի մանրամասն տե՛ս §422/ Այդ *ի*-ն նույն պատճառով, *գամ կամ*, *լամ* հիմքերին միանալով, տվել է որոշ բարբառներում երկվանկ հիմքեր Ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ §422 ծան

ու *տամ* բայերի անցյալ կատարյալի նոր երկվանկ ձևերը /հմմտ վերևում՝ §371 և ստորև §387,2/ հենց երկվանկ լինելու պատճառով կորցրել են իրենց նախահավելվածը, մինչդեռ միավանկումբյան պատճառով պահպանվել են *զամ* բայի անցյալ կատարյալի հավելումով ձևերը եզ *ե-կ-ի, ե-կ-իր,* հոգն *ե-կ-աք, ե-կ-իք, ե-կ-ին*

§378 Ոչ միայն պահպանվել է, այլ նույնիսկ ընդարձակվել է հին նախահավելվածը հենց այն երեք բայերի եզակի 3-րդ դեմքում, որտեղ *եկն, ետ* և *եղ* հին ձևերը տվել են միջին հայերենին հատուկ նոր կազմություններ *երեկ* «եկավ», *երետ* «տվեց», *երեղ* «դրեց» *Երեկ* ձևը ԺԲ դարի սկզբից երևում է Գրիգոր Երեցի մոտ *ի ֆռուին ՇՂԱ երեկ ֆազաւորն Յունաց,* Գր Եր Ժամ Dul. էջ 156 *եւ ի նմին աւուր, յորժամ անդ կարմիր ձիւն երեկ յերկիրս քրիստոնէից, երեկ ձիւն սպիտակ եւ մոխրախառն,* Գրիգ Եր Ժամ Dul էջ 166 նաև արդեն Մխ Հերայու մոտ էջ 14 *եւ երբ իմանաս որ ջերմ ի վճառ երեկ Երետ* ձևն, Այտընյանի վկայությամբ /Քնն քերակ Ա էջ 144/, նույնպես երևում է այդ ժամանակ[91] Հետագայում այդ ձևերն ընդհանուր են դառնում *երեկ* Անս Անտ էջ $11_{24\,26}$, 43_{6}, 73_{13}, 75_{13}, 93_{15} Սմբ Ժամ Dul էջ 611, 631, 644, 646, 648, 678, ԴԳ ճհէ նաև Վարդանի մոտ /ԺԳ դար/ էջ 155 *երեկ* հմմտ հրամ եզ 2-րդ դ *արեկ* Անս. Անտ 25_{12}, 75_{10} *երետ* Անս Անտ էջ 11_{25}, 29_{19}, 35_{21}, 83_{125} Սմբ Ժամ Dul. էջ 618, 619, 620, 629, 650, 668 Լևոնի երգ Dul էջ 539, ԴԳ ճխթ Որպես բարբառային ներխուժում՝ *երետ* երևում է Վարդանի Պատմուվյան մեջ /157, 161/, ինչպես նաև Ստեփ Օրբելյանի մոտ Բ 11_{5}, 71_{2}, 72_{1} *էրէտ* ձևափոխությամբ Անիի 1310 թվականի մի արձանագրության մեջ /Շիր 79/ *Երեղ* ձևը նույնպես, որից ես պատահաբար վկայություններ չունեմ, վատահությամբ կարող է համարվել միջին հայերեն[92], ինչպես հավատացնում է Այտընյանը /Քնն քերակ Բ էջ 72/

---

[91] Սակայն արդեն Ե դարի սկզբում հատուկենտ երևացող *երետ* ձևը պետք է մերժել, Այտընյանի ենթադրությամբ /Քնն քերակ Բ 72/, որպես անստույգ և բնագրերին անհարազատ

[92] Անց կատարյալի նույն ձևերին կարելի է հետևել ընդհուպ մինչև նոր հայերենը Աթրաապատիսում, Աղվեսագրքում Պղնձե քաղաքի պատմության մեջ դրանք սովորական են հմմտ *առ իս արեկ* Հ Բ 335_{8}, *Ամիրաթին երեկ* Հ Բ 335_{17}, *փաց ասէտրն ձայն երետ* Հ Բ 336_{13} և այլն Ուշ միջին հայերեն բանաստեղծության մեջ նույնպես դրանք երևում են օր, հրամ *արեկ* «արի» Կոստ Ժողով Ա 17 Գ 60 *երեկ* «եկավ» նույն տեղում Բ 9, Գ 39 *երետ* «տվեց» նույն տեղում Գ 38, 51 52, 53 Վաղ լեհահայերենում ունենք *երէկ* 1463 թ մի գրության մեջ /Մին Լեհ՝ 87/ *երետ,*

§379 Հարց է ծագում, թե ինչպե՞ս է առաջացել միջին հայերենի անցյալ կատարյալի այս ձևը Սկզբնապես պարզվում է, որ դասական լեզվի մեջ երեք բայերի՝ *գամ, տամ, դնեմ* անցյալ կատարյալի ձևերը *եկի. եկիր, եկն, եզի. եզիր. եզ. եատու, եատուր. եատ* էլ չեն գիտակցվում որպես նախահավելվածով ձևեր *ե* նախնական հավելումն արմատի անբաժանելի մասն էր դարձել Կիլիկյան հայերենում պետք է ամբողջապես մոռացված լիներ *ե*-ի նախահավելված լինելը, գուցե միայն նրա համար, որ այդ *ե*-ն առկա էր բոլոր դեմքերի մեջ, և երրորդ դեմքը, նախահավելվածի սովորական կրողը, այս տեսակետից այլևս չէր տարբերվում մնացած բայաձևերից Ապա, եթե անցյալ կատարյալի հին *բազմավանկ* ձևերը, ինչպես *եկի, եկիր* միջին հայերենին են անցել առանց փոփոխության, ապա շատ բնական էր, որ այլևս որպես նախահավելվածով ձևեր չընկալվող, մաքուր արմատների արժեք ունեցող *եկ, եատ, եզ* միավանկ ձևերը պետք է փոփոխության ենթարկվեին· Պետք է ասել, որ հհ *եկ, եատ. եզ.* ըստ Հնչյունաբ. §41, կիլիկյան հայերենում պետք է հնչեին որպես yeg, yed, yet Որպես *բաղաձայնով սկսվող միավանկ բայաձևեր* նրանք արդեն կարող էին նախահավելված ընդունել այլևս չընկալվելով որպես նախահավելվածով հին ձևեր միավանկությունից խուսափելու համար նրանք երկրորդ անգամ են ընդունել նախահավելվածը այդպիսով առաջացել են *e-yeg, *e-yed, *e-yet, որոնք, *ե*յ կապակցությունն անհնարին լինելով, ձևափոխվել են դեպի e-reg, e-red, e-ret^{c}, *e-γeg, *e-γed, *e-γet միջանկյալ ձևերի *ի*-ջնորդությամբ, ըստ երևույթին, *արեկ* հրամայականի ազդեցությամբ Վերջին ձևն առաջացել է մեր աչքի առաջ որպես *արի՛ ե՛կ* հրամայականների ճուլում, որոնք զուգորդվում են *արեկ* ձևի հետ[93] Հմմտ Ալիշան. Armenian popular songs. էջ 19 *արի՛ եկ ե՛լ յայս այգոյս*[94] Դրա

Մին Լեհ 149 երկու անգամ, 151 երկու անգամ Որպես *հնացած* մի ձև՝ Թ-ֆ. դեռևս ունի անց. կատ. եզ. 3-րդ դ erit /= կլի *երեատ*/ tɔvic ավելի նոր ձևի կողքին /Том. Тифл диал 239 և 246/ Ապա Ջղ ունի անց կատ եզ. 3-րդ դեմքի *արեկ* և *արեատ* հնացած ձևեր՝ *երեկ* և *երեատ* ձևերի փոխարեն, քանի որ Ջուղայի բարբառում դաս և կիլ *ե*-ին կանոնավոր ձևով համապատասխանում է *ա- եկաւ. տուաւ* և *տուեց* ավելի նոր ձևերի կողքին /Патк Диал 83/

[93] Նոր արևելահայերենի բարբառներում *արի՛* օգտագործվում է որպես *գամ* բայի հրամայականը. հմմտ. Պալաս էջ 94·

[94] Վիեննայի Մխիթարյանների №337 ձեռագրում պարունակվող «քերթողական և ռամկական բառերի» հհ բառարանն *արի=«քաջ» կամ «ուժեղ»* ածականից բացի գիտե նաև *արեկ= «խիստ» կամ «քաջ» կամ «առաւել»* ածականը: *Արեկ< *արի-ակ* բարբառային այդ ածականը նույնական է կիլիկյան ավելի նոր *արեկ* ածականի հետ և.

փոխարեն, բոլորովին անբնական և սխալ կլիներ ընդունել, թե իբր *արեկ* հրամայականը զարկ է տվել անցյալ կատարյալի **ե-արեկ* նախահավելվածով ձևի կազմությանն համար, որ տվել է *երեկ*, զուգե միայն նրա համար, որ *երկվանկ* ձևերը նախահավելված չեն ընդունում:

Այդ հատուկ միջին հայերեն ձևերի տեղը գրավում են, ինչպես հետևում է աղբյուրներից, արդեն վաղ նոր հայերենի շրջանում *եկաւ*[95], *դրաւ*, *տուաւ* նորակազմությունները, իսկ մնացած դեպքերում հաստատվում են անցյալ կատարյալի ներգործական վերջավորությունները. *եկի*, *եկիր*, *տուի*, *տուիր*, *դրի*, *դրիր* և այլն: *Ընդհանրապես, նոր հայերենում հին ու միջին հայերենի նախահավելվածը համարյա անհետացել է:* Էզդի ոգուն հակառակ եղող միավանկ ձևերից խուսափելու և դրանք փոխարինելու համար առանց նախահավելվածի միավանկ ձևը պետք է առանար մի նոր ածանց: Այն ձևը, որ մինչ այդ դիմային վերջավորությունից զրկված է եղել, ուրիշ դեպքերի անալոգիայով առանում է այն: Քանի որ ներգործականի անցյալ կատարյալը դիմային վերջավորություն չունի, դա կարող էր լինել միայն կրավորականի անցյալ կատարյալի *-աւ* վերջավորությունը: Դա առանձնապես հեշտ է, որովհետև *ու-* կրավորականի երևան գալուց հետո կրավորականի անցյալ կատարյալը կորցրել էր կրավորականի ֆունկցիան: Երևույթը կարելի է ներկայացնել նաև հետևյալ կերպ. անցյալ կատարյալի միավանկ հիմքերի *ներգործական* անց. կատ. եզ. 3-րդ դեմքի նախահավելվածով հնացած ձևի տեղը նոր հայերենում գրավել է *կրավորական* անցյալ կատարյալի համապատասխան ձևը, որը, իր նախնական դիրքերից դուրս մղվելով նոր *ու-* կրավորականի կողմից, ճեռք է բերել ներգործականի ֆունկցիա: Այսպիսով առաջացել է նոր հայերենի անցյալ կատարյալի «անկանոն» խոնարհումն *-աւ* վերջավորությամբ կրավորական ձևով եզ. 3-րդ դեմքի համար, այն ժամանակ, երբ մնացած դեմքերը ներգործականի վերջավորություններ ունեն: Այսպես, նոր գրական արևմտահայերենը ներգործականի անցյալ կատարյալի համար ունի. եզ. 1-ին դ. *քերի*, 2-րդ դ. *քերիր*, հոգն. 1-ին դ. *քերինք*, 2-րդ դ. *քերիք*, 3-րդ դ. *քերին*. սակայն եզ. 3-րդ դ. *քերաւ /եքեր* հին ձևի փոխարեն/. *առի*, *առիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *առաւ /էառ* հին ձևի փոխարեն/. *զարկի*, *զարկիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *զարկաւ /եզարկ* հին ձևի փոխարեն/. *բացի*, *բացիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *բացաւ /ա-*

պարզ է, կապված չէ *արեկ* հրամայականի հետ. առավելագույնը, այն կարող էր երկրորդական ազդեցություն գործած լինել առաջացման մեջ:

[95] *Եկաւ*, օրինակ, Ամիրդովլաթի մոտ /ԺԵ դար/: Սակայն կարելի է կասկածել չ-*եկաւ* ձևի /Մծբ. Ժամ. Dul. 651/ առումության մասին:

վելի հին. *եքայց*/. *լայի, լայիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *լայաւ* /ավելի հին. *ելայց*/: Ապա նման ավելի նոր ձևերը. *լսի* /կիլ. *ասյի*/, *լսիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *լսաւ. լրի* /= կիլ. *այրի*/, *լրիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *լրաւ. տարի, տարիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *տարաւ. դրի, դրիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *դրաւ /եդիր. երեդ* հին ձևի փոխարեն/. *տուի, տուիր* և այլն. սակայն եզ. 3-րդ դ. *տուաւ* /փոխ. կիլ. *երեա*/[96]: Նրանց կողքին, սակայն, հատկապես արևելյան բարբառախմբի մեջ զարգանում է խոնարհման մի նոր ձև հենց եզակի 3-րդ դեմքի համար, որի համաճայն անցյալ կատարյալի միավանկ հիմքին, *-աւ* վերջավորութ֊յան փոխարեն, միանում է *-եց* վերջածանցը: Բուն իմաստով հիմքի վերջին վանկը լինելով, այն ընկալվել է որպես իսկական դիմային վերջավորութ֊յուն և արդեն վաղուց տարածվել է խնդրո առարկա բայերի եզակիի 3-րդ դեմքի վրա *-աւ-* վերջավորութ֊յան կողքին: Այսպես. դրական արևելահայերենը, Աստրախանի բարբառի հետ միասին, ունի հետևյալ խոնարհումը. 3-րդ դ. եզ. ներգործ. անց. կատ. *առ-աւ* և *առ-եց, տարաւ* /*տար-եց* ձևի կողքին/. *սկս-աւ* /*սկս-եց* ձևի կողքին/. *տու-աւ* /*տու-եց* ձևի կողքին/. *ար-աւ* /*ար-եց* ձևի կողքին/. *դր-աւ* /*դր-եց* ձևի կողքին/. *քեր-աւ* /*քերեց* ձևի կողքին/: *-եց* վերջավորութ֊յան երևան գալն *-աւ* վերջավորութ֊յան կողքին բացատրվում է 3-րդ դեմքին, ուրիշ դեմքերի նման, *ներգործական* մի վերջավորութ֊յամբ օժտելու պահանջով, որը (*աւ-ը*) յուր կողմից իսկական դիմային վերջավորութ֊յուն լինելու առավելութ֊յուն ունի:

Այսպես. արդեն վաղ արևելահայերենի շրջանում խնդրո առարկա բայերի համար ընդհանուր է եղել հետևյալ խոնարհումը. եզ. 1-ին դ. *քերի*, 2-րդ դ. *քերիր*, 3-րդ դ. *քերաւ* /*քերեց* ձևի կողքին/, հոգն. 1-ին դ. *քերինք*, 2-րդ դ. *քերիք*, 3-րդ դ. *քերին*: Վաղ նոր հայերենի այդ աստիճանի վրա, որն արտացոլվում է երկու նոր *գրական լեզուներում*, կանգ չեն առել[97] սակայն կենդանի *ժողովրդական լեզուները*: Եզակիի երկու տեսակ ունեցող 3-րդ դեմքի նորմայի համաճայն, հետագայում հին խոնարհումը տարանջատվել է երկու ուղղութ֊յուններով. *-աւ* վերջավորութ֊յամբ եզ. 3-րդ դեմքի ազդեցութ֊յամբ. մի կողմից, հատկապես արևմտահայերենում[98], առաջ է եկել մի նոր խոնարհում՝ կրավորականի վերջածանցներով. *-եց* վերջավորութ֊յան նմա-

---

[96] Համմ. Այտ. Բ էջ 66 հաջ.. Պալաս. էջ 91 հաջ.:

[97] Միայն *եկ-* հիմքի դեպքում գրական լեզվի մեջ նույնպես կրավորականի ձևը տարածվել է անցյալ կատարյալի բոլոր դեմքերի վրա: Համմ. ստորև §382:

[98] Համմ. Այտ. Քնն. քերակ.. Han. Παπκ. Μαг., Том. Ах. диал.:

նուիրյանք, իսկ մյուս կողմից՝ արևելահայերենում[99] մի նոր խոնարհում ներգործական վերջածանցներով: Հին խոնարհումը. 1-ին դ. *բերի*, 2-րդ դ. *բերիր*, 3-րդ դ. *բերաւ* և *բերեայ* և այլն ճյուղավորվել է հետևյալ կերպ.

Նոր արևմտահայերեն	Նոր արևելահայերեն
per-a	ber-eç-i
per-ar	ber-eç-ir
per-av	ber-ʲeç
per-ankᶜ և այլն	ber-eç-inkᶜ և այլն

Նույնպես, օր., հին ֆեքումը. *տուի. տուիր, տուաւ* և *տուեայ* ընդունել է հետևյալ տեսքը.

Նոր արևմտահայերեն	Նոր արևելահայերեն
duv-a	təv-eç-i
duv-ar	təv -eç-ir
duv-av	təv -ʲeç
duv-ankᶜ և այլն	təv -eç-inkᶜ և այլն

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Խոնարհման բնույթը. ներգործաճև /*ի* ճայնավորով/ և կրավորաճև /*ա* ճայնավորով/ անցյալ կատարյալը

§380. Խոնարհման տեսակետից պահպանվել է այսպես կոչված ներգործաճև և կրավորաճև[100] անցյալ կատարյալի տարբերությունը՝ երկու բնորոշ ճայնավորներով. *ի* ներգործական, *ա* կրավորական անցյալ կատարյալի համար: Ներգործական և կրավորական անցյալ կատարյալի սահմանները, սակայն, դասական լեզվի հետ համեմատած տեղաշարժվել են. ներգործական անցյալ կատարյալը ետ է մղվել և նրա ոլորտը սահմանափակվել է: Դասական լեզվի մեջ ներգործաճև անցյալ կատարյալը կանոնավոր ձևով կազմում են ներգործական կամ, ավելի ճիշտ, անցողական բայերը: Կրավորաճև անցյալ կատարյալը բնորոշ է կրավորական և անանցողական բայերին:

---

[99] Հմմտ. Պալաս. էջ 91 հաջ.:

[100] «Ներգործաճև կամ կրավորաճև անցյալ կատարյալ» անվանումները, որոնք պարզ է, չեն նշանակում սեռի տարբերություն, պահպանված են այստեղ որպես հհ. քերականության մեջ գործածված անվանումներ, չնայած որ կիլիկյան հայերենի համար, անշուշտ, գերադասելի են *ի* և *ա* անցյալ կատարյալ անվանումները:

Սկզբում ոլորտների սահմանազատումը խստորեն պահպանված պիտի լիներ: Սակայն արդեն լեզվի զարգացման պատմական շրջանի սկզբում, հնագույն դասական շրջանում, անցյալ կատարյալի երկու ճևերն այլևս իրենց նախնական ոլորտների հետ խստորեն կապված չեն: Այսպես, ընդարձակ *ա* հիմքերի մոտ, որոնք մեծամասնությամբ անանցողական բայեր լինելով, կրավորաճև անցյալ կատարյալ են կազմում, նույն կրավորաճև անցյալ կատարյալը, մեծամասնության անալոգիայով տարածվել է նաև բազմաթիվ անցողական *ա* հիմքերի վրա, չնայած սկզբում խորթ է եղել վերջիններին: Նույն ճևով երկու անցողական *նի-* հիմքերի դեպքում, *տանիմ* և *ունիմ*, *տարայ* կամ *կալայ*, կրավորականի անցյալ կատարյալը նախնական չէ, այլ առաջացել է այն բանի շնորհիվ, որ այդ երկու անցողական *նի-* հիմքերը միացել են մնացած, առանց բացառության անանցողական կամ կրավորական *նի-* հիմքերին, որ կազմում են կրավորաճև անցյալ կատարյալը, իսկ նախնական ներգործաճև անցյալ կատարյալից մնացել են միայն հետքեր, ինչպես հրամ. եզ. 2-րդ դ. *տար, կալ*, ապառնի եզ. 2-րդ դ. *տարցես*, եզ. 3-րդ դ. *տարցէ /տարցիս, տարցի* և այլ ճևերի կողքին/, *կալցես, կալցէ* և այլն /*կալցիս, կալցի* ճևերի կողքին/:

§381. Կրավորաճև անցյալ կատարյալի տարածման այդ ճգտումը, որ նկատվում է արդեն հին լեզվի մեջ, ավելի որոշակի է դառնում *միջին հայերենում*: Այսպես, համապատասխան դասական *ներգործաճև* անցյալ կատարյալների տեղը գրավում են հետևյալ նոր *կրավորաճև* անցյալ կատարյալները.

գտնում	/դաս. *գտանեմ*/	բայիկ անց. կատ.	*գտ-այ*	/դաս. *գտ-ի*/
իջնում	/դաս. *իջանեմ*/	բայիկ անց. կատ.	*իջ-այ*	/դաս. *իջ-ի*/
տեսնում	/դաս. *տեսանեմ*/	բայիկ անց. կատ.	*տես-այ*	/դաս. *տես-ի*/
ելնեմ	/դաս. *ելանեմ*/	բայիկ անց. կատ.	*ել-այ*	/դաս. *ել-ի*/
մտնեմ	/դաս. *մտանեմ*/	բայիկ անց. կատ.	*մտ-այ*	/դաս. *մտ-ի*/
հասնեմ	/դաս. *հասանեմ*/	բայիկ անց. կատ.	*հաս-այ*	/դաս. *հաս-ի*/
**եղնիմ*	/դաս. *եղանիմ*/	բայիկ անց. կատ.	*եղ-այ*	/դաս. *եղ-է*/

Անցյալ կատարյալի այս նոր ճևերը երևում են արդեն ԺԲ դարի սկզբում: Այսպես, Մատթեոս Ուռհայեցու մոտ /հրատ. Dul./ գտնում ենք. *իջաւ* էջ 27, 143. *հասաւ* էջ 67. *մտաւ* էջ 107. Միխ. Ասորու մոտ /հրատ. Dul./ *ելաւ* էջ 342. *մտաւ* էջ 339, 341, 373. Մխ. Հերացու մոտ. *տեսայ* էջ 44, 63, 65, 126. *ելաւ* էջ 15. *հասաւ* էջ 22, 137. *եղաւ* էջ 13, 58, 76, 77, 128. *եղան*

էջ 59, 126 Վաստակոց գրքում *գտան* էջ 15 *մտաւ* էջ 31 *եղաւ* էջ 189 Աստր-Հռոմ ԴԳ *տեսաւ* §116 Անտ աստիղներում /ԺԲ դարի կեսը/ *գտայ* 63_{13} *տեսաւ* 75_{12} *եկաւ* 9_{24}, 25_{21}, 33_{6} *մտաւ* էջ $55_{12\,15}$ *եղաւ* 11_{4}, 35_{24}, $51_{4\,18}$, 55_{16}, 65_{1}, 83_{4} *եղան* 59_{37} Սմբ Ժամ /հրատ Dul./ *գտան* էջ 669 *իջաւ* էջ 629, 648 *իջան* էջ 667 *տեսաւ* էջ 612, 669 *տեսան* էջ 612, 669 *եկաւ* էջ 612, 620, 627 631, 646, 671 *եկան* էջ 622, 644, 650, 6§1, 658 *հասաւ* էջ 666 *մտաւ* էջ 612, 631, 649, 657 *մտաք* էջ 650 *մտան* էջ 649, 650, 667 *եղաւ* էջ 647 ՋգՔ *հասաւ* մի *մտաւ* ճկվճ ՋգԱ *եղան* 168 *հասաւ* 225 ԴԳ *գտայ* իա, ճհզ *չգտայ* հդ *եկաւ* լդ, ճհէ *եկան* կ *եղաւ* հզ, ճհէ *եղան* ծբ *մտաւ* ճկ *տեսաւ* ճկա *տեսան* հբ Լևոնի երգ *հասաւ* Dul. 540[101]

§382 Կրավորաճև անցյալ կատարյալն է՛լ ավելի է տարածվել հետագայում, երբ առաջացել է *ու* ձայնավորով նոր անցյալ կատարյալ, և կրավորականի նախնական. միջին հայերենում ղեռևս ամբողջովին չանհետացած ֆունկցիան աստիճանաբար /միջին հայերեն շրջանի վերջում/ անցել է *ու* ձայնավորով անցյալ կատարյալին Այսպիսով անհետացել է վերջին սահմանը, որ դեռևս խանգարում էր կրավորաճև անցյալ կատարյալի տարածմանը նաև *անցողական* բայերի վրա Նախահավելվածի մասին խոսելիս /§379, էջ 324-325/, մենք կանգ ենք առել այն բանի վրա, թե ինչպես նոր հայերենի ժամանակաշրջանի սկզբում եզ 3-րդ դեմքի նախահավելվածով հնացած ձևի փոխարեն առաջացել են *-աւ* վերջավորությամբ ձևերը, իսկ դրանից հետո եզ 3-րդ դեմքից արևմտահայերենում կրավորաճև խոնարհումը տարածվել է մնացած դիմային ձևերի վրա - Ուշ կիլիկյան հայերենում կարելի է նկատել այդ նորագոյացությամբ ամենաշատը մի թուլլ սկիզբ Լևոնի երգի մեջ վկայված է եզ 3-րդ դ *էկաւ* ձևը Բնորոշ է, որ ժամանակակից երկու գրական լեզուներն էլ *եկ-* հիմքի կրավորաճև խոնարհումն անց են կացնում ամբողջ սահմանական եղանակի միջով, իսկ մնացած միավանկ հիմքերի համար սահմանափակում են այն եզակի 3-րդ դեմքով Հմմտ Այտ Բ 67

[101] Արևելահայ Ստեփաննոս Օրբելյանը նույնպես գրում է *գտայ* Ա 149$_{14}$ *գտաւ* Ա 125$_{8}$, *իջայ* Ա 209$_{7}$ *իջաւ* Ա 118$_{7\,20}$, *իջան* Ա 118$_{7\,19}$ 129$_{12}$ *հասաւ* Ա 176$_{19}$, 179$_{1}$ Բ 81$_{4}$ *տեսայ* Ա 149$_{11}$ *տեսաւ* Բ 64$_{5}$, *եկաւ* Ա 76$_{19}$ և այլն. Վարդան պատմիչի մոտ գտնում ենք *իջաւ* էջ 154 *տեսաւ* էջ 158

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1 ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ /ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ/ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԸ

§383 Սահմանական եղանակի համար հին լեզվի դիմային վերջավորուվ֊ թյունները պահպանվել են անփոփոխ ձևով Նոր հայերենի անց կատ հոգն 1-ին դեմքի *-նք* վերջավորուվ֊թյունը կիլիկյան հայերենին /ինչպես նաև անկատարի մեջ, հմմտ վերևում §366/ դեռևս խորթ են Ներգործաձև և կրավորաձև երկու անցյալ կատարյալների միասնական դիմային վերջավորուվ֊թյուններն են

Եղակի		Հոգնակի	
II դ	*-ր*	I դ	*-ք*
		II դ	*-ք*
		III դ	*-ն*

Ներգործաձև անցյալ կատարյալի եզ 1-ին դ, ինչպես նաև եզ 3-րդ դեմքերը դիմային վերջավորուվ֊թյուն չունեն կրավորաձև անց կատ եզ 3-րդ դեմքն ունի *-ւ, -վ* վերջավորուվ֊թյունը

Ներգործաձև և կրավորաձև անցյալ կատարյալները տարբերվում են նրանց համար բնորոշ խոնարհիչ ձայնավորով

§384 *Դասական հայերենում* կրավորաձև անցյալ կատարյալը բոլոր դեմքերի համար ունի թեքման *ա* ձայնավորը, որը, դիմային վերջավորուվ֊թյան հետ կապակցվելով, կազմում է խոնարհման հետևյալ վերջածանցները *այ, ար, աւ, աք, այք, ան* Եզ 1-ին դեմքի *այ* կապակցուվ֊թյունն առաջացել է պարզ *ա*-ից, որ բառավերջում անհնարին է Հոգնակի 2-րդ դեմքի մեջ նույնպես երևում է *այ՝ ա*-ի համար, ինչպես նաև *ա* խոնարհման ներկայի հոգնակիի 2-րդ դեմքում Կիլիկյան հայերենում եզ 1-ին դեմքի –ay վերջավորուվ֊թյունը դարձել է a սակայն պահպանվել է *այ* դրուվ֊թյունը, որտեղ *յ*-ն զուտ տառագրական մի նշան է Հոգն 2-րդ դեմքում դրուվ֊թյան մեջ երևացող *այք* կապակցուվ֊թյան համար կիլիկյան հայերենում նույնպես պետք է ընդունել ak^{c} հնչյունական արժեքը Նոր հայերենում ևս այդ դիմային ձևն ունի -ak վերջավորուվ֊թյունը Մնացած վերջածանցները մնացել են անփոփոխ

§385 Ներգործաձև անցյալ կատարյալում դասական հայերենը նախընտրում է թեքման *ի* ձայնավորը այն առկա է եզ 1-ին և հոգն 3-րդ դեմ֊

քերում Դրա կողքին թեքման *և* ձայնավորն առկա է եզակի և հոգնակի 2-րդ դեմքում, թեքման *ա* ձայնավորը հոգն 1-ին դեմքում /կրավորաձև անցյալ կատարյալի նման/ Եթե ներգործաձև բաղադրյալ անցյալ կատարյալի հոգն 2-րդ դեմքը կանոնավոր ձևով ունենում է թեքման *և*, հազվադեպ *ի* ձայնավորը, ապա պարզ ներգործ անց կատ հոգն 2-րդ դեմքը *-ի*, հազվադեպ՝ *և* *Ըստ այդմ, դասական հայերենում* ներգործաձև անցյալ կատարյալի խոնարհումը հետևյալն է եզ 1-ին դ *-ի*, 2-րդ դ *-եր*, 3-րդ դ -հոգն 1-ին դ *-աք*, 2-րդ դ *-էք, -իք*, 3-րդ դ *-ին*

Ծան Հին հայերենի *եկի* և *եղի* անցյալ կատարյալներում թեքման *ի* i ձայնավորը տարածվել է նաև եզակիի 2-րդ դեմքի վրա[102] Նոր հայերենում, սակայն, թեքման i ձայնավորը ներգործաձև անցյալ կատարյալում ընդհանրացվել է ոչ միայն եզակի 2-րդ դեմքի, այլև հոգնակի 1-ին դեմքի վրա, այնպես որ նոր ներգործաձև անցյալ կատարյալը հանդես է բերում հետևյալ վերջավորուլթյունները եզ 1-ին դ -i, 2-րդ դ -ir, 3-րդ դ -, հոգն 1-ին դ -ink^{c}, 2-րդ դ -ik^{c}, 3-րդ դ -in

Կիլիկյան հայերենը, որ միջին տեղն է զրավում հին ու նոր լեզուների միջև, ճիշտ է, հոգնակի 1-ին դեմքում պահպանում է թեքման հին *ա* ձայնավորը եզակի 2-րդ դեմքի համար, սակայն, *պարզ* անցյալ կատարյալի մեջ պետք է ենթադրել թեքման *ի* ձայնավոր, իսկ եզ 2-րդ դեմքը նման է հոգնակիի *ի*-ով համապատասխան դեմքին Բաղադրյալ անցյալ կատարյալի եզ 2-րդ դեմքի համար, սակայն, կիլիկյան շրջանում ավանդված է *-եր* վերջավորուլթյունը՝ *և* ձայնավորով, չնայած որ այստեղ էլ ուշ կիլիկյան շրջանում արդեն երևում է *-իր* վերջածանցը Ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ներգործաձև անց կատարյալի հոգն 2-րդ դեմքի համար, սակայն, ես ընդունում եմ թեքման *ի* ձայնավորը Ըստ այդմ, ներգործաձև անցյալ կատարյալի համար կիլիկյան հայերենում առկա են հետևյալ դիմային վերջավորուլթյունները /լայն իմաստով/ եզ 1-ին դ *-ի*, 2-րդ դ. *-իր* -ir = *ի+ր* (i+r) պարզ անց կատարյալի համար, *-եր* -er=*և+ր* (e+r) բաղադրյալ անցյալ կատարյալի համար, 3-րդ դ -, հոգն 1-ին դ *աք=ա+ք* (a+k^{c}), 2-րդ դ *իք=ի+ք* (i+k^{c}), 3-րդ դ *ին=ի+ն* (i+n)

---

[102] Ընդհակառակը *եղանիմ* բայի դասական անցյալ կատարյալի 2-րդ դ *-ե-* բնորոշ նշանը տարածվել է ներկայի բոլոր դեմքերի վրա եզ 1 դ *եղ-է /=*եղ-ե-յ/*, II դ *եղ-ե-ր* III դ *եղ-ե-ւ* հոգն I դ *եղ-ե-ք* II դ *եղ-է-ք*, III դ *եղ-ե-ն* *եղէք* հոգն 2-րդ դ կազմված է նույն ձևով, ինչպես որ *սիրէք* ներկայի հոգն 2-րդ դ sire- հիմքից *եղ-ե-ք* հոգն 1-ին դ երկակի թեքում ունի

§386 *Վկայութիւնները* մասամբ արդէն բերված են, մասամբ էլ /*-եայ* վերջավորութիւնը եզ 3-րդ դէմքի համար/ բերվելու են հետագայում *Ներգործաձև* անցյալ կատարյալի համար հիշատակենք *առի* 11_{25} *այրի* **Զգբ Հ** 154 *կորուսի* 63_{12} *դրիր* **Սմբ Ժամ** 649 *եկիր* 9_{21}, 75_{17} *եբեր* 75_{18} *առին* 63_{22} **ԴԳ ճե** *բերին* L 185_{9} *եկին* 51_{16} *գրեցի* 93_{16} *խնդրեցի* 3_{6} *ծախեցի* 75_{18} *կարճեցի* **ԴԳ իա** *փնդռեցի* **ԴԳ ճհզ** *խլեցեր* 57_{20} *եփեցիր* ուշ մինչին հայերեն Ամիրդովլաթի մոտ 151 *գրեցաք* 25_{2}, 35_{18}, 49_{7}, **ԴԳ ժա, իա, իզ, լգ, կդ, ճգ, ղե** *համեցաք* **ԴԳ ճհէ** *պարգեւեցաք* L 154_{13}, 158_{12} *վկայեցաք* 59_{15} *գրեցին* **ԴԳ ղդ** *ճգեցին* 51_{16} *վկայեցին* 29_{9} *ասաց* 9_{22} *գնաց* 75_{9}, 81_{11}, **Սմբ Ժամ** 648 *կարդաց* $75_{12\,15}$ *մնաց* 29_{11}, 31_{20}, 33_{10}, 35_{1} *յիմաց* **ԴԳ իը** *ասցաք* 77_{5} *գնացին* **Սմբ Ժամ** 621, 644 *ասցին* 29_{8} Ամենից քիչ վկայված է եզակի և հոգնակի 2-րդ դէմքը Միևնույնն է, այդ դէպքերի համար վերևում ընդունված ենթադրման ձայնավորները կարելի է համարել վստահելի Կրավորաձև անց կատարյալի համար *ընկաւ* 33_{7}, **ԴԳ խզ** *դիպաւ* **ԴԳ իթ** *հազաւ* 29_{18}, 31_{-20}, 35_{1}, 63_{6} *փրթաւ* 63_{13} *կալաւ* **Սմբ Ժամ** 616, 622, 643 *տարաւ* 93_{2} *կերաւ* **Սմբ Ժամ** 611 *կերան* **Սմբ Ժամ** 612 *ուսան* **ԴԳ կ** *աշխատեցայ* 3_{14} *հալծեցայ* 3_{18} *ազատեցայ* 67_{3} *ամրցայ* 59_{24}, 69_{6} *բոզցայ* **ԴԳ հբ** *դատըստեցայ* 43_{6}, 69_{8} *լմնցայ* 75_{26} *լուծեցայ* $67_{15\,16}$ *խոստացայ* 27_{18}, 35_{14} *կորեցայ* 67_{12}, $69_{10\,12}$, 81_{11} *հաստատեցայ* 67_{7} *հարըստցայ* 35_{13} *հեռացայ* 75_{9} *ճշմարտեցայ* 29_{10} *ուրեցայ* **Մխ Հեր** 132 *ջնջեցայ* 55_{12} *տրըստեցայ* 11_{3}

Ծան 1 Ոչ ճևաբանական այլ զուտ հնչյունաբանական փոփոխութեան է ենթարկվել *ե-* հիմքերի *ներգործաձև բաղադրյալ անցյալ կատարյալի եզակի* 3-րդ դէմքը, որ հին լեզվի մեջ, անց կատարյալի հին հիմքի հետ նույնական լինելով, *-եայ* –eaç վերջածանցն ունի Կիլ հայերենում, ըստ Հնչյունաբ §79ա, բառավերջի *-եայ* դարձել է *-եյ* Այդ նոր տեսքով, որ պահպանվել է նոր հայերենում[103], ճևը հաճախակի է վկայված այսպես **Անս** *այրեյ* 93_{18}, *ծախեյ* 65_{1} *յուղարկեյ* 75_{13}, *ուզեյ* 35_{12}, *տղայեյ* 81_{15} **Սմբ Ժամ** *բռնեյ* էջ 619 624 628, 656, 670, *բռնկեյ* 612, *գնեյ* 655, *ժողովեյ* 648, 656, *լուծեյ* 646, *լսեյ* 619, 620, 621, 642, *խլեյ* 612, *խաստեյ* 611 *ծախեյ* 644, *ծածկեյ* 629, *ծեծեյ* 642, *կտրեյ* 619, *ճգեյ* 629, *յղարկեյ* 642, 649, *յուղարկեյ* 670, *ուզեյ* 620, 648, *պատկեյ* 620, *սաստեյ* 622, *սիրեյ* 619, *տիրեյ* 622, *քշեյ* 622 **ԴԳ** *անարգեյ* հբ, *առջևտրեյ* ճկը, *բռնեյ* ճհէ, *գահեյ* ճկը, *գնեյ* ճժ, *գործեյ* ճլ, *գաւեյ* ճհե, *ծախեյ* ժ, *կոխեյ* հբ, *համեյ* թ, *շինեյ* մկզ, *պտրեյ* ճկը, *աւերեյ*, *կոտրեյ* և *խանգրեյ* Լատն երգ *լըսեյ* Dul. էջ 540,

[103] Որոշ բարբառներում այն տարբեր ճևեր է ընդունում օրինակ *-եյ* Լհհ Նխ և Թֆ, *-ուց* Երևանի բարբառում /Պատ Դաւ էջ 25/

քաշեց Dul էջ 540 Հեթ Կոռ (Dul.) *աւերեց* 487, *խանգրեց* 481. 483, 486 և այլն

Ծան 2 Նկատած որ ներկայի 3-րդ դեմքը պատճառականների մեջ պահպանել է հին ձևը և դրվում է *-ոյց* (կամ *-ոյս*), հնչյունական առումով դասական -oiç կապակցությունը կիլ հայերենում դարձել է -uiç(-uç) /հմմտ Հնչյունաբ §9/ Օրինակ, *կորոյս* goruis /դաս korois/ 13_{22}, 57_{11}, 59_{8}, 67_{1}, ԴԳ ճա *խնդոյց* xəmçuiç (դաս xmçoiç) ԴԳ ճկ. *հավնեցոյց* havneçuiç /դաս havaneçoiç/ ԴԳ կ *յարոյց* haruiç /դաս yaroiç/ Սմբ Ժամ 622 *հասոյց* hasuıç /դաս hasoiç/ Սմբ Ժամ 624 *փախոյց* paxuiç /դաս paxoiç/ Սմբ Ժամ 646

§387 Դասական հայերենից տարբեր ձևով կիլիկյան հայերենում խոնարհվում են

1) *-եայ* վերջավորությամբ հին անցյալ կատարյալին համապատասխանող կրավորական անցյալ կատարյալը *-եայ* վերջավորությամբ դասական անցյալ կատարյալը կազմվում է 1-ին. 4-րդ. բայց հատկապես 3-րդ լծորդության ներկայի ընդարձակված հիմքերից, ինչպես դաս *յարեայ յառնեմ* բայից, *ծանեայ ճանաչեմ* բայից, *այտեայ այտնում* բայից, *զարթեայ զարթնում* բայից, *թաքեայ թաքնում* բայից, *խրտեայ խրտնում* բայից, *ոստեայ ոստնում* բայից, *սառեայ սառնում* բայից, *թռեայ թռչիմ* բայից, *հանգեայ հանգչիմ* բայից, *փախեայ փախչիմ* բայից, *կորեայ կորչիմ* բայից և այլն

Այստեղ առկա են բուն իմաստով երկվանկ արմատները, որովհետև *-եայ*-ն առաջացել է **իայ* կապակցությունից՝ արմատական *ի*-ով, օրինակ, *հանգեայ=*հանգի-այ յարեայ=*յարի-այ* /հմմտ *արի՛* հրամայականը/ **Հանգի-չ-իմ* ներկան դարձել է *հանգ-չ-իմ՝ ի* ձայնավորի կորստով[104] Կիլիկյան հայերենում այդ արմատական *ի* ձայնավորը կորչում է նաև *ճայնավորական* վերջածանցից առաջ. ինչպես որ անվանական *ի*-ով հիմքերի մեջ այդ *ի* ձայնավորը դուրս է ընկնում հոլովման ճայնավորական վերջավորությունից առաջ, ըստ §182ա Այդպես առաջանում են անցյալ կատարյալի նոր ձևերը

---

[104] Այդ բայերի անցյալ կատարյալի հիմքի ճայնավորական վերջավորության մեջ պետք է այն երևույթի բացատրությունն էլ փնտրել. որ հին լեզվում դրանք անցյալ դերբայը կազմում են ոչ թե պարզ բայի, այլ համապատասխան պատճառականի հիմքից Այսպես. օրինակ *այտեայ* անցյալ կատարյալի դիմաց ունենք *այտուց-եալ* դերբայը *զարթեայ* անց կատարյալի դիմաց - *զարթուց-եալ* դերբայը Երևի. դա արվում է **այտե-եալ<*այտի-եալ զարթե-եալ<*զարթի-եալ* ձևերում կրկնակ *ե*-ից խուսափելու համար

կորան Սմբ Ժամ 671 փոխ դաս *կորեան *կորի-ան հանգաւ* Սմբ Ժամ էջ 645 փոխ դաս *հանգեաւ *հանգի-աւ փախաւ* փոխ դաս *փախեաւ *փախի-աւ* Սմբ Ժամ էջ 624, 627, 649, 670 *փախան* փոխ դաս *փախեան *փախի-ան* Սմբ Ժամ էջ 667

2) *Տամ* բայի սահմանականի անցյալ կատարյալը Դասական հայերենում *տամ* բայի անցյալ կատարյալի *տու-* հիմքը, ձայնավորահանգ լինելով, կարիք չի զգում բաղաձայնահանգ հիմքերը կանոնավոր ձևով ուղեկցող թեքման ձայնավորի *Ու* ձայնավորն իր վրա է վերցնում թեքման ձայնավորի դերը, և դիմային վերջավորությունները միանում են անմիջապես հիմքին Կիլիկյան միջին հայերենում, սակայն, նոր լեզվի նման, միաձևության ձգտումին համապատասխան, որ այդքան բազմազան ձևով իրեն զգացնել է տալիս արդեն միջին հայերենում, անցյալ կատարյալի *տու-* հիմքի հին խոնարհումը մոռացվում է, այնպես որ վերջինս, բացառությամբ եզակի 3-րդ դեմքի /տե՛ս § 378 հաջ/, օգտագործվում է որպես ներգործականի անցյալ կատարյալի սովորական պարզ հիմք և հիմքի վերջի *ու* ձայնավորից բացի ընդունում է նաև թեքման *ի* ձայնավորը Այսպիսով առաջացած երկվանկ ձևերի մոտ բնականաբար դուրս է ընկնում նախահավելվածը, այնպես որ այդ հիմքի խոնարհումը հետևյալ ձևով է հակադրվում հին հայերենի համապատասխան խոնարհմանը

Կիլ միջ հայերեն		Դաս հին հայերեն	
		եզակի	
I	*տու-ի*	I	*ե-տու*
II	*տու-ի-ր*	II	*ե-տու-ր*
III	*երեա*	III	*ե-ա*
		հոգնակի	
I	*տու-ա-ք*	I	*տու-աք*
II	*տու-ի-ք*	II	*ե-տու-ք*
III	*տու-ի-ն*[105]	III	*ե-տու-ն*

Վկայությունները հետևյալներն են *տվի* Զքբ մծգ *տվին* Զքբ ժծգ, Հեթ Կոռ Ժամ 490 *տուին /տվին* բառը գրելու մեկ այլ ձև/ Աստր-հռոմ ԴԳ 57, 61, 63 *տուին* Սմբ Ժամ 620 648, 649, 655, 669, 670 նաև Ստեփ Օրբ ունի *տուի* բարբառային ձևը *Արձանագրություններում* վկայված են

[105] Հմմտ նոր արևմտահայերենում Տաճկ և Ախ dəvı, dəvır, dəvav, dəvınkᶜ, dəvıkᶜ, dəvın/Այտ Բ 67 Том 66/ Լեհ duva. duvar, duvav և այլ ձևերի կողքին /Han 43/ ըստ էջ 323 և հաջ

տուի և *տվի* 1042 թ. /Շիր. 114/. 1251 թ. /Շիր. 25/. 1253 թ. /Շիր. 26/. 1262 թ. /Շիր. 116/. 1266 թ. /Շիր. 26/. 1348 թ. /Շիր. 63/. *արձանագրություններում. տվաք* 1253 թ. /Շիր. 26/. *է տվել* 1228 թ. /Շիր. 23/. *էի տվել* 1215 թ. /Շիր. 77/. *էր տվել* 1262 թ. /Շիր. 116/ և այլն:

2. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

§388. Հրամայականի կազմությունը հիմնականում նույնն է դասական լեզվի հետ:

Հին լեզվի մեջ *ներգործաճև* հրամայականի համար գործում է հետևյալ կանոնը. ներգործաճև հրամայականի հոգն. 2-րդ դեմքը նույնական է սահմանականի համապատասխան ձևի հետ, որը, սակայն, ընդունում է *-էք* /բայաոիկ դեպքերում *-իք*/ վերջավորությունը. օրինակ, հրամայականի 2-րդ դ. *սիրեցէք, աղաչէք, հանէք*: Եզակի 2-րդ դեմքը նույնական է հիմքի մաքուր ձևի հետ, երբ վերջինս *միավանկ* է. օր. եզ. հրամ. 2-րդ դ. *լաց* (*լամ* բայից), *կաց* (*կամ* բայից), *կեաց* (*կեամ* բայից), *թաց* (*թանամ* բայից), *լից* (*լնում* բայից), *խից* (*խնում* բայից), *հան* (*հանեմ* բայից), *առ* (*առնում* բայից), *թող* (*թողում* բայից). սակայն եթե հիմքը, լինի այն պարզ, թե ընդարձակ, *բազմավանկ է*, ապա ներգործաճև հրամայականի եզ. 2-րդ դեմքում այն զրկվում է վերջին բաղաձայնից. այսպես, օրինակ, *սիրեայ* - բազմավանկ ընդարձակ հիմքից հրամ. եզ. 2-րդ դ. *սիրեա՛, գործեայ*- եզ. հրամ. 2-րդ դ. *գործեա՛, ազայ*- եզ. հրամ. 2-րդ դ. *ազա՛, լուայ*- եզ. հրամ. 2-րդ դ. *լուա՛, ամբարայոյց*- պարզ բազմավանկ հիմքից հրամ. եզ. 2-րդ դ. *ամբարայո՛*[106], *արբեցոյց*- եզ. հրամ. 2-րդ դ. *արբեցո՛, թաքոյց*- եզ. հրամ. 2-րդ դ. *թաքո՛, կորոյս*- եզ. հրամ. 2-րդ դ. *կորո՛, մատոյց*- եզ. հրամ. 2-րդ դ. *մատո՛*: Ապա *արար* բազմավանկ հիմքից հրամ. եզ. 2-րդ դ. *արա* հանառոտ ձևը: Բայառոլեյան կարդով *կալ* հրամայականի կողքին առկա է *կա՛* հանառոտ ձևը:

Նույն կանոնն ուժի մեջ է նաև կիլիկյան հայերենի համար, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները, որ իրենցից ներկայացնում են հին հայերեն հանապատասխան ձևերի պատմական շարունակությունը. հրամ. հոգն. 2-րդ դ. *հայցեցէ՛ք* 3_{23}. *պատռեցէ՛ք* ԴԳ լդ. *պատվեցէ՛ք* ԴԳ ա. *փլեցէ՛ք* ԴԳ լդ. *կացէ՛ք* Սմբ. Ժամ. 612. *առէ՛ք* Սմբ. Ժամ. 648. *այրէ՛ք* ԴԳ խա. *բերէ՛ք* Սմբ. Ժամ. 612. *տեսէ՛ք* 11_{24}, ԴԳ իղ, լդ. հրամ. եզ. 2-րդ դ. *ա՛ծ* Բ իը. *ա՛ո* Բ դ, է, ժդ, խե, հը. *զի՛ո* Բ միե, մծ[ի], մխա. *լի՛ց* Բ իէ, լը. *հա՛ն* Բ խ[ի], ծ,

[106] Բառավերջի *ց*-ի անկումից հետո *ոյ* երկբարբառը փոխարինվում է պարզ *ո* ձայնավորով:

ճիք, միզ. *հա՛ս* Բ իջ. *տե՛ս* Բ ծզ. *բա՛յ* Բ ճհդ, մկ. *ջա՛յ* Բ ճհզ, մլդ, մկը. *ա-ղա՛* Բ ա, դ, իը, լջ. Մխ. Հեր. 43, 44. *ավտա՛* Բ մկջ. *գնա* 13_{21}. *լվա՛, լվա՛յ* Ա 156, 237, 259, Բ իէ, ճժը, ճիդ, միե, մծը, մկ, մկզ: Քանի որ *պարզ ա* հիմքերի *աղա՛, ավտա՛* և այլն հրամայականի ձևերը համընկնում են ձևականորեն ներկայի եզ. 3-րդ դեմքի հետ, այն տպավորությունն է առաջվում, կարծես ջեե այդ հիմքերը հրամայական են կազմում ներկայի հիմքից: Դրա համար սխալ անալոգիայով առաջացել են նաև ներկայի հիմքից կազմված նոր ձևերը. *բանա* Ա 304. *լվանա* Ա 260, 304. Բ մկող, մկզ և այլն: -Հին ժառանգված ձևերից կարելի է հիշատակել նաև *արա՛ այնեմ* բայից 25_{12}, L. 179_4. Մխ. Հեր. 44, Բ ա, է, ը, ժիե, ճդ, ճկեե, մկը, մկզ. *կալ՛ ունիմ* բայից Բ մկող, ԴԳ ճժը. *կե՛ր ուտեմ* բայից: Պահպանվել են նաև *դնեմ, տանիմ, տամ* բայերից կազմված *դի՛ր, տա՛ր, տուր* հրամայականները - ներգործաձևի նման հրամայականները, որ ընդունում են ներկայի եզ. 2-րդ դեմքի *ր* դիմային վերջավորությունը. *դի՛ր* Բ ծա, ծե, ծզ, ծէ, ճծ, ճկե. *տա՛ր* Բ լջե, ճճե, ճճզ. *տո՛ւր* Բ է, ժը, ժդ, Մխ. Հեր. 44, 150: Սակայն հին հայերենի նման ձևով կազմված եզ. 2-րդ դ. *լո՛ւր* հրամայականը մոռացվել է և փոխարինվել մի նոր. միջին հայերենի *լսեց-* անց. կատ. հիմքից կազմված հրամայականով. 2-րդ դ. եզ. հրամ. *լսէ՛*, 2-րդ դ. հոգն. հրամ. *լսեցէ՛ք* Ներս. Շնորհ. Ողբ Եղ. /Dul./ 227: *Գիտեա՛* հրամայականը /**գիտեաց-* հիմքից/ նույնպես դուրս է մղվել *գիտաց*[107] հիմքից կազմված ձևերով. *գիտացի՛ր* L. $178_{6.20}$, 185_7. *գիտացի՛ք* L. 186_2. ԴԳ հբ, ճհ, Սմբ. Ժամ. 678:

§389. Հին հայերենի հրամայականի ներգործական ձևի զուտ *հնչյունաբանական* ձևափոխությունը եզ. 2-րդ դեմքի մեջ առկա է հետևյալ դեպքերում.

1) Պատճառականի դեպքում: Ինչպես արդեն ասվել է, վերջինս կիլ. հայերենում ունենում է *-ո* կամ *-ոյ* վերջավորությունը: Դասական և կիլիկյան ձևերի նույնությունը, սակայն, զուտ արտաքին է, տառագրական, որովհետև հին *ո* օ-ն կիլ. հայերենում, ըստ Հնչյունաբ. §7, ուժեղ կերպով տարբերակվել է դեպի u: Ապա *-ո* վերջավորությամբ ձևի կողքին երևում է արդեն *-ու* վերջավորությամբ ձևը, այնպես որ այդ դեպքում նոր հայերենի համար ընդհանուր *ո* o > *ու* u փոփոխությունն առկա է արդեն կիլիկյան հայերենում: Վկայություններ. *եղկոյ* Բ իա, *եոյո՛յ* Բ ծէ, ճա, ճժե, ճկե,

---

[107] *Գիտաց-* պատկանում է *գիտանամ* բային /անց. կատ. *գիտացայ*/, որ արդեն հին հայերենում. Նոր հայկազյան բառարանի տվյալներով, հանդիպում է որպես *գիտեմ* բայի ռամկական ձև:

ճճե. ճղզ. մ. մղ. մլը. մծա *թմանճրյո՛յ* Բ ծա. ճդ *կաթեցո՛յ* Բ ճժթ. ճղղ. ճղե *տաքցո՛յ* Բ ճկգ *յամքցո՛յ* Բ ճբ. մխե *մտո՛յ* Բ մլը. մծը. մկվճ *վերո՛* Ա. 137. 239 *վերո՛յ* Բ ճճա Դրա կողքին *իջո՛ւ* L. 179$_3$ *կակղցո՛ւ* Բ ե. *հովցո՛ւ* Բ ճա *շողցո՛ւ* Բ ճկգ. ճկգ *չորց՛ու* Բ գ. է. ը. ժգ. ժե. ժզ. իբ. իգ

Նույն ճևը մասամբ պահպանվել է նաև ժամանակակից արևմտահայերենում. օր. Ախ հրամ 2-րդ դ nəsdeçu (= դաս *նստեցո՛*). հոգն հրամ 2-րդ դ nəsdeçuçek (= դաս *նստեցուցէ՛ք*) Սակայն հրամ եզ 2-րդ դեմքով սովորական արևմտահայերեն ճևն ունենում է -ur վերջավորությունը օր. Տաճկ ləmənçur ՝ ləmənçuçı սահմանականից /Այտ Բ. էջ 90/ Այն ներկայացնում է լեզվի զարգացման ավելի նոր աստիճանը և առաջացել է այն պատճառով. որ անց կատ դեղչված հիմքը ներկայացնող ավելի հին -u-ով ճևն ընդունել է նաև 2-րդ դեմքի *-ր* վերջածանցը[108]

---

[108] Լեզվի զարգացման էլ ավելի նոր աստիճանին է վերաբերում արևելահայերենում /Թիֆլիսի բարբառ արևելյան գրական լեզու և այլն/ հրամայականի համապատասխան ճևը և. առհասարակ. պատճառականի անցյալ կատարյալը Այստեղ պատճառականը մի ժամանակ նույնպես *-ուր* վերջածանցով է կազմել հրամայականը Այդ ճևը հետագայում *դիր* հրամայականին հար և նման /հմմտ §371/. դարճել է կատարյալի հրամայականի հիմք. որին միացել են թեքույթները /հմմտ Պալաս էջ 79/ Այսպես. օրինակ. *հագցուր* հրամայականից /*հագցընեմ* բայից/ արևելահայերենում զարգացել է սահմանականի անցյալ կատարյալը

հագցրի	**հագցուր-ի*	= **հագուց-ուր-ի*
հագցրիր	**հագցուր-իր*	= **հագուց-ուր-իր*
հագցրեց (հագցրուց)	**հագցուր-եց*	= **հագուց-ուր-եց*
հագցրինք	**հագցուր-ինք*	= **հագուց-ուր-ինք*
հագցրիք	**հագցուր-իք*	= **հագուց-ուր-իք*
հագցրին	**հագցուր-ին*	= **հագուց-ուր-ին*

Սակայն լեզվի զարգացման ավելի հին աստիճանում մնացած *նոր արևմտահայերենն* ունի ամենուրեք *հագուց-ի հագուց-իր. հագուց. հագուց-ինք հագուց-իք. հագուց-ին* - Արևելահայ այդ հեղաշրջման հետևանքն այն էր որ *-ուր* վերջավորությամբ հրամայականը դրանով իսկ դարճել էր անցյալ կատարյալի հիմքի ճև այնպես որ *-ր* դիմային վերջավորությունն էլ չէր ընկալվում որպես այդպիսին և դիտվում էր որպես հիմքի մի մաս Վերջինս այժմ ընդունել է *-ու* դիմային վերջավորությունը. որ ծագում է մհ և նհ պատճառականի հրամայականի ավելի հին ճևի հիմքի վերջին *ու* ձայնավորից Այն կարող էր դիտվել որպես դիմային վերջավորություն և. որպես այդպիսին փոխանցվել մեզ հետաքրքրող դեպքին Այսպիսով առաջացել է հրամ եզ 2-րդ դ *հագցրու=*հագցուր-ու *հագուց-ուր-ու* Նույն ճևով *կարղացրու* հրամայականը *կարդացրի* անց կատարյալից. *մեծացրու* հրամայականը *մեծացրի* անց կատարյալից և այլն Ըստ այդմ եզ 2-րդ դ հրամայականի պատմական զարգացումը հետևյալ տեսքն է ընդունում

Մխիթար Հերացու բժշկական գրքում հանդիպող *-ուր* վերջավորությամբ պատճառական հրամայականները՝ *կերցո՛ւր* էջ 41, 46, *հովացո՛ւր* էջ 23, 24, *յաւելցո՛ւր* էջ 41, 43, *յամաքեցո՛ւր* էջ 41 նախնական չեն, այլ միայն նոր հայերենի շրջանում բնագիր են մտել արտագրողի ճեռքով, ինչպես նաև Մխիթարի մոտ ավելի հաճախ երևացող *-ո* վերջավորությամբ հին ձևերը *եղո՛ղ* էջ 41, *լմնո՛ց* էջ 61 *պատրաստեցո՛ց* էջ 99, *մոռ՛* էջ 17

2) Պարզ *ե* հիմքերի հրամայականի եզ 2-րդ դեմքի համար, որտեղ հին *-եա* ea կապակցությունն ըստ Հնչյունաբ §81 պիտի դառնար *-է* e Այսպիսով առաջացած միջին /և նոր/ հայերենի հրամայականի *-է* e վերջավորությամբ ձևը վկայված է Անա Անտ *վճարէ՛* 41$_5$, *թաւիւէ՛* 75$_{10}$ Վաստակ *բանէ՛* 34, *լսէ՛* 150 *նայէ՛* 195, *պահէ՛* 99 Զգր *աճռէ՛* խ, կղ *այրէ՛* ճհգ, միզ *աւծնէ՛*, *օծնէ՛* հ, ճբ, մլճ *եփէ՛* լճճ, խ, խէ *զինէ՛* մկ *թրջէ՛* ժբ, իա, լէ *լոսէ՛* ժ, իբ, ճհ, ճհե, ճհգ, ճհճ, ճճլճ, ճղգ, ճղճ, մդ, մե, մհ *խառնէ՛* ժգ, իէ, իբ, խգ, լճճ, ճհե *ծածկէ՛* խը *ծեծէ՛* ժա, ժբ, ժգ, իէ, խլճ, հ, մլճ *կեղեւէ՛* խլճ *կշռէ՛* լէ *կոտրէ՛* ճղ *կարէ՛* խլճ, կղ *ճգէ՛* կղ, ճղ *մաղէ՛* ժա, ժբ, իէ, իբ, հ, ճհ, ճճլճ *մանտրէ՛* խգ, խէ, կղ *շաղէ՛* ժ, ժա, ժբ, ժգ, խգ, խէ *շինէ՛* ժբ, ժը *պահէ՛* լճճ, խ, ճժէ *պարզէ՛* լը, լճճ *սրբէ՛* հ *վառէ՛* ճղ *վարէ՛* ճկը *տրորէ՛* լճճ, խէ *ցանէ՛* ճա, ճհ *քանէ՛* խ, խէ, ճժէ *քերէ՛* հ նմանապես Մխ Հեր մոտ *աղընձէ՛* (= դաս *աղանձեա՛*) էջ 150. *աճռէ՛* (= դաս *աճռեա՛*) 149, *բժշկէ՛* (= դաս *բժշկեա՛*) 15, *ընկէ՛* (= դաս *ընկեա՛*) 126, *խառնէ՛* (= դաս *խառնեա՛*) 9, 149 *մաղէ՛* (= դաս *մաղեա՛*) 44, *շաղէ՛*, *շաղվէ՛* (= դաս *շաղեա՛*) 72, 74, *պահէ՛* (= դաս *պահեա՛*) 71. *օծնէ՛* (= դաս *օծեա՛*) 10 և այլն

Ծան Ըստ §388 *-եայ* անց կատ զեղչված հիմքից ծագող *-է* վերջավորությամբ եզ 2-րդ դ հրամ միայն *առերևոյթ* կազմված է ներկայի հիմքից, մի բան որ զարկ է տվել նման հրամայականները ներկայի իրական հիմքից կազմելու համար Այսպես Գիրք վաստակոց եզ 32$_3$ *զինէ՛* եզ հրամ 2-րդ դ ներկայի հիմքից է կազմված փխ ավելի հին *զի՛ր* դաս dir կիլ tir անց կատ հրամ եզ 2-րդ դ [109]

հին հայերեն /դասական/ *մեծայո՛*

միջին հայերեն /կիլիկյան/ *մեծայո՛ւ*

նոր արևմտահայերեն *մեծայո՛ւր=մեծայու-ր*

նոր արևելահայերեն *մեծայրո՛ւ=մեծայու-ր-ու*

[109] Նոր հայերենում /Տաճկ արևմտյան և արևելյան գրական լեզուներ և այլն/ շարունակել է տարածվել *-է* վերջավորությամբ հրամայականի ձևը, որը ոչ միայն արտայոլում է *-եա* վերջավորությամբ հին հրամայականը այլև դուրս է մղել *ի* հիմքերի մոտ հրամայականի նախնական ձևը /դաս *-եայ* կիլ *-եիր*/ Օրինակ. Տաճկ *ապ-*

§390. Այսպես կոչված *կրավորաձև անցյալ կատարյալը* դասական լեզվի մեջ ընդունում է հետևյալ ճևը. եզակի 2-րդ դեմքը. ա) *-եայ* վերջավորուվիյամբ բաղադրյալ անցյալ կատարյալի դեպքում նույնական է *-եայ* վերջավորուվիյամբ հիմքի ճևի հետ. բ) բոլոր մնացած դեպքերում նույնական է թեքման *-իր* վերջածանցով ընդարճակված հիմքի հետ: Հոգնակի 2-րդ դեմքը= հիմք+*արուք* վերջածանցը: - Կիլիկյան հայերենում, սակայն, եզակի 2-րդ դեմքի համար ընդհանրացել է *-իր* վերջավորուվիյունը: *-եայ* վերջավորուվիյամբ դասական ճևը դուրս է մղվել արդեն ուշ դասական շրջանում երևացող *-իր* ճևով: Հոգնակի 2-րդ դեմքի մեջ *-արուք* վերջավորուվիյամբ հին ճևի անալոգիայով առաջ է եկել *-այք* ճևը, որ հանդիպում է արդեն ուշ դասական լեզվի մեջ: Վկայուվիյունները սակավաթիվ են և անբավարար. *երզվի՛ր* եզ. 2-րդ դ. 25_{24}, *ուսի՛ր* եզ. 2-րդ դ. ԴԳ ժա: Ջնայած դրան, կիլիկյան հայերենի համար կարելի է վստահուվիյամբ ընդունել եզ. 2-րդ դ *-իր* /դաս. *-եայ, -իր*/, հոգն. 2-րդ դ. *-այք* /դաս. *-արուք*/[110]:

րիմ՝ կատ. հրամ. *ապրէ՛* /դաս. *ապրեայ*. կիլ. *ապրեայի՛ր*/. *խօսիմ՝* կատ. հրամ. *խօսէ՛* /դաս. *խօսեա՛յ*. կիլ. *խօսեայի՛ր*/: Նույն ճևով, օր. կրավոր. *լսուիմ*, կատ. հրամ. *լսուէ՛*, *հանուիմ* կատ. հրամ. *հանուէ՛* /Այտ. Բ էջ 57 հաջ., Պալաս. 80 հաջ./: Հիշատակենք նաև Տաճկ. հրամայականները. *ըսէ՛* /հոգն. *ըսէ՛ք*/. *ըրէ՛* /հոգն. *ըրէ՛ք*/ փոխ. դաս. և կիլ. *ասա՛, արա՛*: Հատուկ նոր հայերեն այդ բոլոր ճևերում *-է* վերջավորուվիյամբ եզ. 2-րդ դեմքը կազմվել է հետին [ը]վով՝ *-էք, -եայէք* վերջավորուվիյամբ հոգն. 2-րդ դեմքից:

[110] Նոր հայերենում հրամ. հոգն. 2-րդ դ. *-այք* ճևն անհետացել է, և ներգործական հրամայականի *-էք* վերջավորուվիյունը տարածվել է նաև կրավորական հրամայականի վրա: *Ա* ճևը նոր *ու* կրավորականի առաջացման հետ կորցրել է իր նշանակուվիյունը, և պետք է դուրս մղվեր *ե*-ով ներգործական ճևով, քանի որ համընկել էր ահռնանականի հոգն. 2-րդ դեմքի հետ. և դա առաջ էր բերում երկիմաստուվիյուն: Նոր հայերենում ահռն. անց. կատարյալից դուրս մղված 2-րդ դ. -ե՛ք վերջավորուվիյունը հրամայականում դարձել էր ընդհանուր: Այն բանից հետո, երբ անց. կատ. կրավորաձև հրամայականն այսպիսով նման էր դարձել ներգործաճևին՝ հոգնակիի մեջ *-էք* ընդհանուր ճևի միջոցով, նոր լեզվի մեջ տիրող միօրինականացման սկզբունքի համաձայն եզակին նույնպես պետք է ձգտեր ներգործաճև եզակիին նմանվելու, մանավանդ որ վերջինս տիրապետող է հանդիսացել բայերի գերակշռող մեծամասնուվիյան մեջ: Ապա, քանի որ եզակի ներգործականի կանոնավոր *-է* կամ *-ա* ճևը վերջանում է ձայնավորով, կրավորաճև հրամայականի եզակին նույնպես դառնում է *ձայնավորահանգ*. *-իր* վերջածանցը կրճատվում է դեպի *-ի* /միայն ավելի հին վիճակից կառչող գրական լեզուն պահպանում է *-իր* լրիվ ճևը/:

Օրինակ. Ախ. /Том. էջ 69 հաջ./ հրամ. եզ. 2-րդ դ. paxi= դաս. *փախի՛ր*. koxçi= դաս. *գողայի՛ր*. Ագ. /Ս. Սարգ. էջ 119 հաջ./. məŕa-h-i= դաս. *մոռա-ց-ի՛ր*. hivanda-h-i= դաս. *հիւանդա-ց-ի՛ր*. t'la-h-i= դաս. *թուլա-ց-իր* և այլն: Ապա նման ճևով *-ր* վերջա-

Ծան. §381-ի մեջ քննարկված ավելի նոր յուրահատուկ կիլիկյան անցյալ կատարյալների համար բնորոշ կերպով պահպանվում է նախնական ներգործաճև հրամայականը: *Գտայ, իջայ, տեսայ* և սահմանական եղանակի այլ նման ձևերից անկախ գոյատևում են հրամայականի *զի՛տ, գտէ՛ք, տես, տեսէք* և այլ ձևերը: Վկայությունները տե՛ս §388:

§391. Այն բանից հետո, երբ նաև որպես կատարյալ հրամայական կիրառվող ապառնիի կորստի հետ (որ ճևականորեն իրենից ներկայացնում էր կատարյալի ստորադասականը, հմմտ. վերևում §359), լեզուն միաժամանակ կորցրել է հրամայականի 3-րդ դեմքի հատուկ արտահայտությունը, նրա տեղն է դրավել ըղճական ներկայի 3-րդ դեմքը *լծող* բայի հետ կապակցված: Ռուսերենի пусть, пускай + ներկա կատուցվածքին համապատասխանող *լծող* բառով բաղադրյալ հրամայականի այդ ձևը, որ դեռևս նոր հայերենում ընդհանուր կիրառություն ունի[111], վկայված է արդեն միջին հայերենում. օր., Անա. Անատ. *լծող հայնց այնէ* 13_{21}. *զգինն ի հետն լծող բերէ* 69_{18}. *լծող ամէն մարդ հայնց ունենայ զիր վճարն* $41_{9.10}$. *լծող հանչաք հանքերէ որք իր խամին* $33_{16.17}$. *լծող բերեն այլ անսիզվորքն զիրենց սիզուխին* $41_{9.10}$. նույն ձևով. *լծող ծախվորքն* ԴԳ հը. *լծող փնդռեն* ԴԳ ճիա. *լծող զիտենան* ԴԳ խզ. *լծող ունենայ* Գիրք վաստ. 60. *լծող կենայ* Գիրք վաստ. 114 և այլն:

§392. Դրանից բացի, եզ. անց. կատ. հրամ. 3-րդ դեմքի համար, ի տարբերություն դասական լեզվի, օգտագործվում է եզ. հրամ. անց. կատ. 2-րդ դեմքի ձևը հետևյալ դեպքերում. Անս. Անատ. 43_9. *նա ինէ զայ ի յօրն ու պայխուն այնէ, նա լեր բարի*. Լևոնի Արտոնագիր L. 185_{20}. *եղիր քեզ համանք*. Օշինի Արտ. L. 178_{15}. *եղիրս քեզ համանք*: *Եղիրս* ձևի մասին վերջին օրինակի մեջ Դյուլորիեն սխալմամբ գրում է /Recueil des Historiens des Croisades, I, էջ 756/. «Այս բառը, որ զգալի կերպով տարբերվում է ժամանակակից ռամկական բարբառից, իրենից ներկայացնում է *եղանել* կամ *եղանիլ* էական

վորումիյամբ հրամ. եզ. 2-րդ դեմքից առաջացել են նոր հայերեն ձևերը. ge /ger ձևի կողքին/ *կե՛ր* ավելի հին ձևից *ուտեմ* բայի համար. pe /per ձևի կողքին/< *բե՛ր բերեմ* բայի համար. du /dur ձևի կողքին/<*տո՛ւր տամ* բայի համար:

Վերջապես, նոր հայերենում *-ր* վերջավորությամբ հհ. և մհ. ժխտական հրամայականի եզակին նույն ձևով զրկվել է բառավերջի *ր*-ից և նմանվել հաստատական հրամայականի համապատասխան ձևին: Օր., Ալա. /Том. էջ 79/ եզ. 2-րդ դ. mi marę հոգն. mik^{c} marę, mi xosi հոգն. mik^{c} xosi. Թ-Ֆ. /Petermann, Abh. d. Ak. d. Wiss. zu Berlin 1866, էջ 83/. եզ. 2-րդ դ. *մի կրի, մի մնա*. Ագ. /Ս. Սարգ. 121/. եզ. 2-րդ դ. *կապի մա՛, հոգն. կապի մա՛ք /մի՛ք/, նահի մա՛, հոգն, նահի մա՛ք* և այլն:

[111] Լեհահայերենի համար հմմտ. էջ 119-120, տաճկահայերենի համար Այտ. Բ 268:

բայի ապառնիի եզ. 3-րդ դ. ձևը. գրական հայերենում *եղիցի*»: Ավելի ճիշտ կլիներ ասել - այնպիսի դեպքերից ելնելով, ինչպես՝ հրամ. եզ. 2-րդ դ. *պահէ՛, վճարէ՛, թափէ՛* /= դաս. *պահեա՛, վճարեա՛, թափեա՛*/ և դրանց կողքին հրամայականի եզ. 3-րդ դ. *պահէ՛, վճարէ՛, թափէ՛* ստորադ. ներկայի եզ. 3-րդ դ. /ըստ § 391/, կարող է լինել, թե հրամայականի 2-րդ դեմքը ծառայում է նաև հրամ. 3-րդ դեմքն արտահայտելու համար: Եթե այդպես լիներ, ապա մնացած դեպքերում էլ, սկսալ անալոգիայի համաձայն, հրամայականի 2-րդ դեմքի ձևերը կօգտագործվեին 3-րդ դեմքի փոխարեն և, օրինակ, *լո՛ր* և *եղի՛ր* ձևը՝ հրամայականի նախնական եզ. 2-րդ դեմքը, կընդհանրացվեր նաև 3-րդ դեմքի վրա:

Անցյալ կատարյալի զանազան ձևերն ու տարատեսակները ներկայացված են հետևյալ աղյուսակում: Այդտեղ մինչ այժմ օգտագործվող ներգործաձև և կրավորաձև անցյալ կատարյալ անվանումները, որ կապված են հին հայերենի քերականության հետ, փոխարինված են ավելի հարմար, ամեն երկիմաստություն բացառող *Ի* և *Ա* անցյալ կատարյալ անվանումներով:

Անցյալ կատարյալի աղյուսակները

1. Ընդհանուր աղյուսակ

	Պարզ անցյալ կատարյալ /անց. կատ. II/	Բաղադրյալ անցյալ կատարյալ /անց. կատ. I/
Ի անցյալ կատարյալ	ներգործ. *թող-ի* ներկա	*լուսեց-ի* ներկա
	կրավոր. *թող-ա-յ* թողում	*լուսե-ա-յ* լուսեմ
Ա անցյալ կատարյալ	ներգործ. *գո-այ* ներկա	*այրե-ա-յ* ներկա
	կրավոր. *գով-ա-յ* գտնում	*այրվե-ա-յ* այրիմ

2. Թեքման աղյուսակ

Ի անցյալ կատարյալ		*Ա* անցյալ կատարյալ
Պարզ անցյալ կատարյալ	Բաղադրյալ անցյալ կատարյալ	
Սահմանական		Սահմանական
թող-ի	*լուսեց-ի*	*գո-այ*
թող-իր	*լուսեց-եր, -իր*	*գո-ար*
ե-թող	*լուսեց*	*գո-աւ*
թող-աք	*լուսեց-աք*	*գո-աք*
թող-իք	*լուսեց-իք*	*գո-այք*
թող-ին	*լուսեց-ին*	*գո-ան*
Հրամայական		Հրամայական
եզ. *թո՛ղ*	*լուսէ՛*	եզ. *գի՛ւտ*
հոգն. *թող-է՛ք*	*լուսեց-է՛ք*	հոգն. *գո-է՛ք*

ԳԼՈՒԽ IV

ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐ

I. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

§393. *-ե, -ա, -ու* ձայնավորներով ներկայի հիմքերը պահպանել են հին անորոշ դերբայը: Օրինակներ.

ա) *ե* հիմքերից անորոշ դերբայներ. *ասել* 23_{8}, 47_{26}, *դիտել* $9_{5.6}$, *զրաւկնել* 71_{11}, 77_{18}, *ծախել* 47_{23}, $73_{11.18}$, Լ. 155_{12}. *կարգել* 21_{21}, *ճանչել* 25_{16}, 81_{15}, *ուզել* 17_{14}, 19_{16}, 23_{5}, 25_{8}, *պահլընջել* Լ. 158_{10}, *վճարել* 81_{18}, *զարձլնել* $79_{3.4}$, 81_{16}, *իջցնել* Լ. 186_{6}, *կեցցլնել* $23_{11.12}$, 31_{10}, 61_{7}, 67_{14}. *բլայլել* 19_{21}, *մունետակել* 75_{14}, *ջալլնջել* 19_{21}, $23_{17.18.24}$, 69_{18} և այլն:

բ) *Ա* հիմքերից անորոշ դերբայներ. *ամրնալ* 23_{20}, *աւտալ* 73_{8}, *զալ* $23_{8.17.20}$, *տալ* 9_{9}, 11_{17}, 21_{1}, 49_{19}, 53_{6} և այլն:

գ) *Ու* հիմքերից անորոշ դերբայներ. *առնուլ* $11_{14.16}$, $23_{17.20}$, 29_{4}, 69_{17}, *երդնուլ* 11_{2}, 73_{9}, *ֆծողուլ* 41_{18}, *տեսնուլ* 15_{25} և այլն:

Ի հիմքերի անորոշ դերբայը: - Այն բանից հետո, երբ դասական գրական լեզվի մեջ անկատ. եզ. 3-րդ դ. *-իւր* վերջավորումֆյունը դուրս էր մղվել *-էր* վերջավորումֆյամբ /հմմտ. վերևում §366/, *ի* հիմքերի անկատարի ձևերն արտաքնապես լրիվ համընկել էին *ե* հիմքերի համապատասխան ձևերի հետ, և բնական էր դարձել, որ *ի* հիմքերի *-իլ* վերջավորումֆյամբ նախնական անորոշ դերբայը ևս անալոգիայի սկզբունքով պետք է դուրս մղվեր ու փոխարինվեր *ե* հիմքերի *-ել* վերջավորումֆյուն ունեցող անորոշ դերբայով, հատկապես որ *-իլ* վերջավորումֆյամբ անորոշ դերբայը կազմում է *-ելոյ, - ելով*, այսինքն՝ *ե* ձայնավորով ֆեք հոլովները: Խիստ դասական գրական լեզուն այդ պատճառով *ի* հիմքերի համար ճանաչում է միայն *-ել* վերջավորումֆյամբ անորոշ դերբայը: Սակայն որոշ ոչ խիստ դասական հեղինակների մոտ մեկ-մեկ հանդիպող *իլ* վերջածանցով ձևերը ցույց են տալիս, որ հին հայերեն կենդանի ժողովրդական լեզվի մեջ այդ ձևը դեռևս չէր անհետացել ամբողջումֆյամբ: *Ի* հիմքերի անորոշ դերբայը կազմելիս կիլիկյան հայերենն ակնհայտ ճևով կապվում է ավելի հին ավանդումֆիի և ժողովրդական լեզվի մեջ դեռևս առկա «ենֆթահոսանքի» հետ: *-ւիլ* վերջավորումֆյամբ ներկայի հիմքերը կիլ. հայերենում ունենում են միայն *-իլ* վերջածանցով անորոշ դերբայ: Օրինակ, *պահուիլ* (ներկա՝ *պահուիմ*) 55_{4}. *վճարուիլ, վճարվիլ* (ներկա՝ *վճարուիմ*) 71_{12}, 81_{21}. *պահուիլ* (ներկա՝ *պահուիմ*) ԴԳ ճհ. *ուսուիլ* (ներկա՝ *ուսուիմ*) Գիրք վասա. 120. *կանուիլ* (ներկա՝ *կանուիմ*) Գիրք վասա. 66: Բուն *ի-* հիմքերից նույնպես առաջանում են *-իլ* վեր-

ջավորումբյամբ անորոշ դերբայները. *դատաստնիլ* (ներկա՝ *դատաստնիմ*) 23_5, 25_{27}, 59_{11}. *հագնիլ* (ներկա՝ *հագնիմ*) 73_{17}. *փոշմանիլ* (ներկա՝ *փոշմանիմ*) 83_{26}. *ապրիլ* (ներկա՝ *ապրիմ*) ԴԳ ճհ. *դառիլ* (ներկա՝ *դառիմ*) ԴԳ ճլե. *հաշտիլ* (ներկա՝ *հաշտիմ*) ԴԳ ճհ. *այրիլ* (ներկա՝ *այրիմ*) Մխ. Հեր. 119 և այլն: Ձիշտ է, որ նրանց կողքին դեռևս /հատկապես Անտիոքի ասսիղներում/ կարելի է գտնել *-ել* վերջավորումբյամբ դասական ձևը. օր.. *ապրել* (ներկա՝ *ապրիմ*) 9_8. *դառատնել* (ներկա՝ *դառատնիմ*) 27_{14}, 61_{11}, 67_{15}. *ծնանել* (ներկա՝ *ծնանիմ*) 19_{23}. *կռվել* (ներկա՝ *կռվիմ*) $33_{8.12}$, 59_{34}. *մեռնել* (ներկա՝ *մեռնիմ*) 9_8. *ունել* (ներկա՝ *ունիմ*) 19_{24}. *լինել* (ներկա՝ *լինիմ*) 9_7: Սակայն, քանի որ *-ել* վերջածանցով ձևը բնորոշ կերպով հանդիպում է այնպիսի հիմքերում, որոնք հիմնականում անփոփոխ ձևով ժառանգվել են հին լեզվից, իսկ *-իլ* վերջածանցով ձևը հանդիպում է մեծ մասամբ հնչյունապես փոփոխված և համապատասխան դասական հիմքերից շեղվող ներկայի հիմքերում, ինչպես նաև *-ի* վերջավորումբյամբ կրավորականի հիմքում. *-իլ* վերջածանցով անորոշ դերբայը պետք է վճռական կերպով ընդունել որպես իսկական կիլիկյան և ժողովրդական: *-ել* վերջածանցով ձևը սովորական *ի* հիմքերից ամբողջապես դուրս մղելու գործում որոշիչ դեր է խաղացել կրավորական հիմքի անալոգիան, քանի որ, ինչպես նկատել ենք վերևում. *-ի* վերջավորումբյամբ կրավորականի հիմքերը գրական լեզվի մեջ սկզբունքորեն կազմում են միայն *իլ* ձևը:

II. ՆԵՐԿԱ. ԱՆՑՅԱԼ ԵՎ ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅՆԵՐ

1. *-ող /-աւղ/ -ՁՂ* ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԴԵՐԲԱՅԸ

§394. Որպես ավելի շուտ անվանական, քան բայական բնույթ ունեցող ոչ բուն դերբայ, կիլիկյան հայերենում պահպանվել է նոր հայերենում[112] ևս գոյատևող *-ող* -օղ = կիլ. *-ող /-աւղ/* -ՁՂ վերջավորումբյամբ դերբայը /հմմտ. Հնչյունաբ., §71 ծան./: Կազմումբյան տեսակետից դեպքերի մեծամասնումբյան մեջ պահպանվել է հին նորման. այսպես. օր.. *գնող* (*-աւղ*) 69_{17}, 73_{13}, 81_{16}, 83_9, 85_5. ԴԳ ծղ, ճժ, ճհա. *գրաւկնող* (*-աւղ*) 71_{21}, 75_{27}, 79_6. *գրաւղ* ԴԳ լղ. *լսաւղ* ԴԳ խգ. *գրկող* (*-աւղ*) 29_{11}, 57_{28}, 59_5. *ծախող* (*-աւղ*) 65_4, 83_9. ԴԳ ճղ. *ծեծող* (*-աւղ*) $61_{1.20}$. *կարաւղ* ԴԳ ա, ծա, կ, ղղ, ճղ. *կորնչող* (*-աւղ*) 63_{16}. ԴԳ ճա. *հիլայող* (*-աւղ*) 33_{16}, $35_{5.25.30}$. *շահաւղ* ԴԳ ճա. *ուզող* (*-աւղ*) $23_{11.14.15}$, 63_{19}, 69_8. *ուսկսաւղ* ԴԳ ճլե. *ջալքնջող* (*-աւղ*) 69_4. *քշտող* (*-աւղ*) $31_{6.12}$.

---

[112] Օր. Թֆ. /Petermann Abh. d. Akad. d. Wiss zu Berl. 1866, էջ 81/. Ագ. /Ս. Սարգ. էջ 105/. Ախ. /Том. Ах. диал., էջ 66/ և այլն:

59_{38}, ԴԳ ճե, ճլ. *անկնաւղ* ԴԳ ղէ. *դատըստնօղ* (*-աւղ*) 59_{39}, $61_{7.8.12.18.22}$, $63_{5.7}$, $67_{13.14}$. *ունօղ* (*-աւղ*) 23_{18}, $63_{11.12.14}$, 77_{12}, ԴԳ ճք. *փնայօղ* (*-աւղ*) ԴԳ ճլք. *արքեայաւղ* ԴԳ լդ. *հոգյօղ* (*-աւղ*) = դաս. *հոգայող* 41_{17}. *տրւաւղ* ԴԳ կղ: Սակայն այս դերբայի կազմութիւնը մասամբ շեղվում է դասականից ու մոտենում նոր գրական հայերենում գործող սխեմային, որի համաձայն բոլոր բայերը, բացառութիւնով *ա* հիմքերի, *-ող* վերջածանցը միացնում են ներկայի հիմքին, իսկ *ա* հիմքերը կատարյալի հիմքին[113]: Այսպես. կիլ. *այնող* (*-աւղ*) $57_{10.21}$, 61_{14} փոխ. դաս. *արարող* (առանձին դեպքերում *առնող*), նհ. *ընօղ*. կիլ. *գոնօղ* (*-աւղ*) $63_{16.22}$ փոխ. դաս. *գտող*, նհ. *գտնող*. կիլ. *սպասնօղ* (*-աւղ*) ԴԳ ժա, իը, իթ, հբ, ճլ փոխ. դաս. *սպասող*, նհ. *սպասնօղ*. կիլ. *առնօղ* (*-աւղ*) ԴԳ կզ փոխ. դաս. *առող*, նհ. *առնօղ*:

Զարմանալի է Անս. Անտ. 9_{13} վկայված *հասկնօղաց* ձևը /ուղղ. *հասկնող*/, որ կազմված է ներկայի հիմքից և այսպիսով շեղվում է լթե՛ հհ. *հասկացող*, լթե՛ նհ. *հասկըցօղ* ձևերից:

2. ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

§395. *-լի* վերջավորութիւնով դերբայներից վկայված են *ընդունելի* 53_{6}, 59_{36}, ԴԳ ճժգ. *անլծողլի* ԴԳ խե. *անբժշկելի* ԴԳ ճհ: Նոր հայերենում այդ դերբայը դարձել է -lik^{c} վերջավորութիւնով բայանվան ձև[114]: Վերևում՝ §259 բերված հոդվածները վկայում են այն մասին, որ այդ նոր բայանվան ձևը արդեն միջին հայերեն շրջանում կազմավորման ընթացքի մեջ էր գտնվում. դրանով էլ բացատրվում է *-լի* վերջավորութիւնով կազմութեան հազվադեպութիւնը կիլիկյան հայերենում:

§396. *-լոյ* վերջավորութիւնով դասական կազմութիւնը դուրս է մղվել և փոխարինվել *-լոյ* վերջավորութիւնով նոր բայանվան ձևով, որ սկզբում եղել է անորոշ դերբայի եզակի տրականը, ինչպես որ *-լոյ* վերջավորութիւնով անհետացած ձևն իրենից ներկայացնում էր հոդնակի տրականը: Արդեն Սմբատն ունի. *ուտելոյ անսուն* ԴԳ ճհ. *որ քաղելու* /փխ. *-ոյ*/ *լինի* ԴԳ գ: Մի քիչ ավելի նոր Զգբ ձեռագրում այս ձևը սովորական է, այսպես, օրինակ, Գլուխ մ. *գհալելոյ դեղերն*. Գլուխ ճճը. *հալելոյ դեղերն*. Գլուխ ճճը.

---

[113] Հմմտ. Այտ. Բ §273:

[114] Այդ մասին, ինչպես նաև նոր հայերեն այլ դերբայների մասին հմմտ. Այտ. Բ 102 և 104: Միայն գրական լեզուն դեռևս պահպանում է *-լի*-ով դասական ձևը:

գայլ դեղերն որ հալելոյ է եւ գայլ դեղերն որ աղաղոյ է. Գլուխ ճբ. զհալելոյն հալէ. Գլուխ ճծ. յայս դեղերոյս զոր հալելոյն է հալէ. Գլուխ ճդե. զայն խիժերն որ չէ լուսելոյ. Գլուխ մ. ի վերոյ գրեալ դեղերոյս զլուսելոյն լուսէ. Գլուխ ճիե. զլուսելոյն /իմա՛ դեղերոյն/. Գլուխ ճզ. ի խիժերոյն որ չեն ծեծելոյ դուն ի ներս լիս. Գլուխ միա. զոր հեշտն է ճանչելոյ մենք այժմ գրեցաք. ԶգՄ. էջ 115. *զաղաղոյն ի դեղերոյս աղա.* էջ 116. *զաղալոյն աղա*: Օրինակները ցույց են տալիս, որ իր բնույթով այս դերբայական ձևը նույնքան քիչ կարող է հոլովվել, որքան *լոյ* վերջավորությամբ հհ. ձևը: Նոր հայերենում այն շարունակվում է որպես *-լու* վերջավորությամբ դերբայական ձև: Ավելի մանրամասն տե՛ս Այտընյան Բ 102 հաջ.:

3. ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

§397. *-ել* - *el վերջածանցով դերբայը*: -Հին հայերենի *-եալ* -eal վերջածանցով անցյալ դերբայը հնչյունական օրենքների համաձայն /ըստ Հնչյունաբ. §79 գ/ դարձել է *-ել* - el վերջավորությամբ դերբայ: Այդ նոր, միջին հայերենի հնչյունական ձևով այն կազմվում է բոլոր բայերից, նաև նոր *ու*-կրավորականից. և նման է դասական հիմնաձևին այն բանում, որ կանոնավոր ձևով պարզ անցյալ կատարյալ կազմող բայերն *ել* վերջավորությամբ դերբայը կազմում են անցյալ կատարյալի պարզ հիմքից, իսկ բաղադրյալ անցյալ կատարյալի հիմք ունեցողները՝ բաղադրյալ հիմքից: *-եց* ածանցով անցյալ կատարյալի բաղադրյալ հիմք ունեցող *է* և *ի* հիմքերը, սակայն, *-ել*-ով դերբայը կազմում են ոչ թե *-եց* վերջածանցով հիմքից, այլ արմատից, այսինքն՝ բայահիմքից: Բերենք վկայություններ:

§398. ա) *-եց* վերջածանցով անց. կատ. բաղադրյալ հիմք ունեցող բայերից. *անուանել*[1] (= դաս. *անուանեալ*) *անուանեմ* բայից. *գնել*[2] (= դաս. *գնեալ*) *գնեմ* բայից. *գոգել*[3] (= դաս. *գոգեալ*) *գոգեմ* բայից. *գրաւկնել*[4] (= դաս. *գրաւականեալ*) *գրաւկնեմ* բայից. *գրել*[5] (= դաս. *գրեալ*) *գրեմ* բայից. *զատել*[6] (= դաս. *զատեալ*) *զատեմ* բայից. *ընծայել*[7] (= դաս. *ընծայեալ*) *ընծայեմ* բայից. *թափել*[8] (= դաս. *թափեալ*) *թափեմ* բայից. *ժողվել*[9] (= դաս. *ժողվեալ*) *ժողվեմ* բայից. *խաբել*[10] (= դաս. *խաբեալ*) *խաբեմ* բայից. *խլել*[11] (= դաս. *խլեալ*) *խլեմ* բայից. *խնայել*[12] (= դաս. *խնայեալ*) *խնայեմ* բայից. *ծախել*[13] (= դաս. *ծախեալ*) *ծախեմ* բայից. *ծեծել*[14] (= դաս. *ծեծեալ*) *ծեծեմ* բայից. *կապել*[15] (= դաս. *կապեալ*) *կապեմ* բայից. *կարգել*[16] (= դաս. *կարգեալ*) *կարգեմ* բայից. *կտրել*[17] (= դաս. *կտրեալ*) *կտրեմ* բայից. *կչել*[18] (= դաս.

կցեալ՝ կցեմ բայից. *համել*[19] (= դաս. *հրամայեալ՝ համեմ* բայից. *հարկեւորել*[20] (= դաս. *հարկեւորեալ՝ հարկեւորեմ* բայից. *հրամայել*[21] (= դաս. *հրամայեալ՝ հրամայեմ* բայից. *հրաւիրել*[22] (= դաս. *հրաւիրեալ՝ հրաւիրեմ* բայից. *հաստատել*[23] (= դաս. *հաստատեալ՝ հաստատեմ* բայից. *մսխել*[24] (= դաս. *մսխեալ՝ մսխեմ* բայից. *յեմել*[25] (= դաս. *յամեալ՝ յեմեմ* բայից. *յիշել*[26] (= դաս. *յիշեալ՝ յիշեմ* բայից. *ներկել*[27] (= դաս. *ներկեալ՝ ներկեմ* բայից. *շանչկել*[28] (= դաս. **շանչկանեալ՝ շանչկեմ* բայից. *շարժվել*[29] (= դաս. *շարժեալ՝ շարժեմ* բայից. *շինել*[30] (= դաս. *շինեալ՝ շինեմ* բայից. *շրջրռնել*[31] (= դաս. **շրջրռնեալ՝ շրջրռնեմ* բայից. *պահել*[32] (= դաս. *պահեալ՝ պահեմ* բայից. *պարգեւել*[33] (= դաս. *պարգեւեալ՝ պարգեւեմ* բայից. *պնդել*[34] (= դաս. *պնդեալ՝ պնդեմ* բայից. *սահմանել*[35] (= դաս. *սահմանեալ՝ սահմանեմ* բայից. *սարել*[36] (= դաս. **սարեալ՝ սարեմ* բայից. *վճարել*[37] (= դաս. *վճարեալ՝ վճարեմ* բայից. *քամել*[38] (= դաս. *քամեալ՝ քամեմ* բայից. *քշտել*[39] (= դաս. **քշտեալ՝ քշտեմ* բայից. *օժտել*[40] (= դաս. *աւժտեալ՝ օժտեմ* բայից. *օկտել*[41] (= դաս. *աւկտեալ՝ օկտեմ* բայից. *աւդրել*[42] (= դաս. **աւդրեալ՝ աւդրեմ* բայից. *տահրկել*[43] (= դաս. **տահրկեալ՝ տահրկեմ* բայից. *տրջքնդել*[44] (= դաս. **տրջքնդեալ՝ տրջքնդեմ* բայից. *համբերել*[45] (= դաս. *համբերեալ՝ համբերեմ* բայից. *մռտել*[46] (= դաս. *մռտեալ՝ մռտեմ* բայից. *ուզել*[47] (= դաս. *յուզեալ՝ ուզեմ* բայից. *ստեղրել*[48] (= դաս. **ստեղրեալ՝ ստեղրեմ* բայից. *բաժնել*[49] (= դաս. *բաժանեալ՝ բաժնիմ* բայից. *դատրստնել*[50] (= դաս. *դատաստանեալ՝ դատրստնիմ* բայից. *դիպել*[51] (= դաս. *դիպեալ՝ դիպիմ* բայից. *եփել*[52] (= դաս. *եփեալ՝ եփիմ* բայից. *թափել*[53] (= դաս. *թափեալ՝ թափիմ* բայից. *խառնել*[54] (= դաս. *խառնեալ՝ խառնիմ* բայից. *խօսել*[55] (= դաս. *խաւսեալ՝ խօսիմ* բայից. *կարմրել*[56] (= դաս. *կարմրեալ՝ կարմրիմ* բայից. *հալծել*[57] (= դաս. *հալածեալ՝ հալծիմ* բայից. *հանդիպել*[58] (= դաս. *հանդիպեալ՝ հանդիպիմ* բայից. *հաւնել*[59] (= դաս. *հաւանեալ՝ հաւնիմ* բայից. *պաղել*[60] (= դաս. *պաղեալ՝ պաղիմ* բայից. *վատուժել*[61] (= դաս. *վատուժեալ՝ վատուժիմ* բայից. *վզենկել*[62] (= դաս. **վզենկեալ՝ վզենկիմ* բայից. *վճաել*[63] (= դաս. *վճասեալ՝ վճասիմ* բայից[115]:

---

[115] 1) *թէ չլինայ անուանել* 55_{8}. 2) *թէ գնել լինի* 47_{20}, 49_{3}. *(լինի) գնել* 47_{11}. *(լինին) գնել* 55_{25}. 3) *լինի գոգել Բ մեզ.* 4) *թէ լինի գրաւկնել* 71_{20}. *գրաւկնել են* 77_{19}. 5) *գրել է ԴԳ հը. ճեռ. գրել ենք* 47_{31}, 55_{13}. Ա. 273. ԴԳ լզ. լէ, կզ, հ, ճմբ, ճժե, ճլ, ճկ, Բ ճճղ. *ենք գրել Բ ծբ, մժզ, մեռա, մկե,* ԴԳ ճլղ, ճճբ, ճճղ. *թէ գրել էի* 93_{6}. ԴԳ լզ. *գրել էր* ԴԳ լզ, ճհղ. 6) *զատել /է/* 63_{20}. *չէ զատել* $63_{20,21}$. 7) *որ լինի ընծայել* 55_{5}. 8) *որ թափել էիր* 75_{13}. 9) *ժողվել է* 15_{15}. *ժողովել լինան* 35_{15}. 10) *լինի խաբել* ԴԳ հը. 11) *խլել ես* 57_{19}. *խլել է* 57_{24}. 12) *է խնայել* Սմբ. Ժամ. էջ 650. 13) *ծախել լինի* 17_{13}, 63_{23}, 65_{2}. *թէ լինան ծախել* 19_{23}. *ծախել է* 63_{20}, 65_{3}. *որ է ծախել* 65_{5}. 14) *ծեծել է* 61_{9}. 15) *լինի կապել Բ մեզ.* 16) *թէ կարգել լինին* 49_{11}. 17) *որ կտրել է* 79_{18}. 18) *թէ կցել լինի* 49_{14}. 19) *է հա-*

§399. բ) Անցյալ կատարյալի *-ա-* վերջածանցով բաղադրյալ հիմք ունեցող բայերից. *ասել*[64] (= դաս. *ասացեալ*՝ *ասեմ* բայից. *գնալ*[65] (= դաս. *գնացեալ*՝ *գնամ* բայից. *գաւազնել*[66] (= դաս. *գաւազնացեալ*՝ *գաւազնամ* բայից. *խլալ*[67] (= դաս. *խլացեալ*՝ *խլանամ* բայից. *խոստալ*[68] (= դաս. *խոստացեալ*՝ *խոստանամ* բայից. *ծանրալ*[69] (= դաս. *ծանրացեալ*՝ *ծանրանամ* բայից. *հովկալ*[70] (= դաս. *հովացեալ*՝ *հովնամ* բայից. *մաւտեալ*[71] (= դաս. *մաւտեցեալ*՝ *մաւտենամ* բայից. *մնալ*[72] (= դաս. *մնացեալ*՝ *մնամ* բայից. *շատալ*[73] (= դաս. *շատացեալ*՝ *շատնամ* բայից. *ողջալ*[74] (= դաս. *ողջացեալ*՝ *ողջանամ* բայից. *յիմալ*[75] (= դաս. *իմացեալ*՝ *յիմնամ* բայից. *կեալ*[76] (= դաս. *կեցեալ*՝ *կենամ* բայից. *լմալ*[77] (= դաս. **լմանացեալ*՝ *լմնամ* բայից. *յեւեղալ*[78] (= դաս. *յաւելացեալ*, իսկապես գոյութիւն ունի *առաւելացեալ*՝ *յեւեղնամ* բայից. *ուռեալ*[79] (= դաս. **ուռեցեալ*՝ *ուռենամ* բայից. *վատուժալ*[80] (= դաս. **վատուժացեալ*՝ *վատուժնամ* բայից. *տառապելալ*[81] (= դաս. **տառապելացեալ*՝ *տառապելնամ* բայից[116]։

մել ԴԴ կզ. ճծը. ճկա, ճկզ. չէ համել ԴԴ հբ. *թէ համել լինայ* 13_{31}. 20) է հարկեւորել ԴԴ ղզ. 21) է հրամայել ԴԴ կզ. *որպէս հրամայել ենք* L. $158_{11.12}$. 22) *որ չէ հրաւիրել* 9_{24}. 23) *որ է հաստատել* 29_{21}. *զոր էին զրով հաստատել* 3_{11}. 24) *թէ մախել լինի* 17_{12}. 25) *յեմել լինի* Բ ժէ. 26) *յիշել է* Բ կէ. *յիշել ենք* Բ ճը. *մին. յիշել են* Բ միա. 27) *լինի ներկել* Բ մկզ. 28) *թէ շանչկել լինի* 45_{18}. 29) *լինի շարժել* ՁԶԲ Հ 157. 30) է շինել Բ մկզ. *թէ լինի շինել* 47_{30}. *որ լինի շինել* 47_{11}. *թէ շինել (լինի)* 49_4. *լինին շինել* 55_{25}. ԴԴ հ. 31) շրպրռնել *(է)* 31_{13}. շրպրռնել *(լինան)* 31_3. 32) *պահել լինիս* Բ ճկզ. 33) է պարզեւել L. $185_{10.11\ 19.20}$. *էր պարզեւել* 3_{13}. 34) *պնդել լինի* Բ ճծզ. *որ պնդել լինայ* ԴԴ ճկը. 35) է *սահմանել* ԴԴ լզ. Բ ճճ. *մին, մծն. սահմանել ենք* Ա. 292. *սահմանել են* Բ ճկ. *մժթ. են սահմանել* ԴԴ ը. իա. ճկէ. 36) *սարել (լինան)* 35_{15}. 37) *վճարել լինի* 77_2. 81_{22}. 38) *քամել ես* Բ ծն. 39) *քշտել է* $31_{12.13}$. 61_9. 40) *օժտել է* 63_{20}. *օժտել (լինի)* 65_2. *թէ լինան օժտել* 19_{23}. 41) *է օծտել* Բ *մժզ.* 42) *աւզրել լինի* 21_{17}. *լինի աւզրել* 83_{17}. 43) *տահրկել է* Բ *մկզ.* *չէ տահրկել* Բ *մկզ.* 44) *աղՔընդել ես* 23_{19}. *տՔնդել է* ԴԴ ծէ. 45) *թէ համբերել լինայ* 23_{23}. 46) *մռտել էին* Հեթ. Կոռ. 481. 47) *որ ուզել լինայ* 23_{12}. 48) *որ ստեզրել լինայ* 13_{11}. 49) *որ բաժնել լինայ* 15_{11}. *որ բաժնել է* 13_9. 50) *(չես) զատրստնել* 67_{11}. *որ զատրստնել լինի* 43_{11}. *որ զատրստնել լինայ* 27_{17}. 51) *լինի դիպել* Ա. 245. 52) *եփել է* Բ *մլէ, մկզ.* 53) *լինի թծփել* Բ ճխթ. 54) *լինի խառնել* Բ *մկզ.* 55) *չես խօսել* 67_{28}. *չլինի խօսել* 23_{23}. 56) *կարծրել լինի* Բ *մկզ.* 57) *լինի հալծել* ԴԴ կը. 58)*լինի հանդիպել* Բ ճէ. 59) *հաւնել են* ԴԴ խզ. 60) *պաղել լինի* Բ ղզ. *մին.* 61) *վատուժել է* Բ *մկզ. վատուժել լինի* Բ ճկ. 62) *չէք վզենկել* 3_{23}. 63) *վնասել է* Բ *մծզ.*

64) *ասել ես* 15_{15}. 23_9. *չես ասել* $67_{10.11}$. *որ հայնց է նա անել* 11_{27}. *որ ասել լինայ* 15_{10}. *ասել է* Բ *մկզ. է ասել* ԴԴ ճխզ. *չլինի ասել* ԴԴ ճկը. 65) *թէ գնացել լինի* 77_{11}. *է գնացել* ԴԴ հբ. *գնացել է* Բ *մկզ.* 66) *թէ գաւազացել լինի* Բ *մժզ.* 67) *լինի խլացել* Բ *մկէ.* 68) *որ խոստացել լինայ* 27_{17}. 69) *ծանրցրել լինի* Բ ճկը. 70) *հովկել լինի* Բ *մժզ.* 71) *մաւտեցել է* Բ *մն. մկզ.* 72) *մնացել է* 79_{18}. 83_{19}. *է մնացել* ԴԴ խէ. ծէ. *մկզ.* Բ

[146] *Չի*-ով ճևերը Մխիթար Հերացու մոտ հետևյալներն են *չիընտես* 10 (=*չընտես*), *չիհովկնես* 23 (=*չհովկնես*), *չիյուլանաս* 29 (=*չյուլանաս*), *չիտաս* 69 (=*չտաս*), *չիյաւելկնես* 99 (= *չյաւելկնես*) *չիգտուի* 38 (=*չգտուի*), *չիգտվի* 44 (=*չգտվի*), *չիգտւի* 45 (=*չգտւի*) *չիդտատ* 46 (=*չդտատ*) *չիդտատի* 27 (=*չդտատի*), *չիմոռու* 55 (=*չմոռու*), *չիլինի* 21 26 38 41, 45 46 (=*չլինի*), *չիլուծանի* 87 (=*չլուծանի*), *չիլուծի* 44 (=*չլուծի*), *չիմնէ* 24 (=*չմնէ*), *չիխոսկաս* 96 (=*չխոսկաս*) *չիխսկի* 10 (=*չխսկի*), *չիկաս* 37 (=*չկաս*) *չիքաշէ* 131 (=*չքաշէ*), *չիկարէ* 25, 33, 69 135 (=*չկարէ*), *չիկենաս* 48 (=*չկենաս*), *չիմտէ* 24, 47 (=*չմտէ*) *չիյամէ* 23 (=*չյամէ*) *չիյաջողի* 24 (=*չյաջողի*), *չիշտապի* 33 (=*չշտապի*), *չիպատահի* 47 (=*չպատահի*) *չիսփռի* 41 (=*չսփռի*), *չիտանի* 48 (=*չտանի*), *չիմնաս* 39 (=*չմնաս*), *չիհանդիպեցաւ* 26 (=*չհանդիպեցաւ*) Հմմտ նաև հետևյալ ճևերը Մխ Հերացու մոտ *դիժար* (փոխ կիլ *դժար*) 49 53 55 57, 58 65 *դիժարնաս* (փոխ կիլ *դժարնաս*) 65 *իսպիտակ* (փոխ կիլ *սպիտակ*) 33 42 և այլն, *յիտակ յիտակած* 55 57 81 92 99 միայն վերջին դեպքն է որ նաև կիլիկյան է Նույն հեղինակի մոտ հանդիպում են նաև ավելի հին ճևեր ինչպես յուրյ են տալիս հետևյալ օրինակները *չ-բլկնես* 99 *չ-ժուժէ* 42 *չ-լինի* 134, *չ-լսեր* 136 *չ-շատանան* 23, *չ-անկի* 148, *չ-քաշեն* 139 *դժար* 51 53 54 99 136

Նոր հայերենի վաղ շրջանում սահմանականի մնացած ձևերն էլ ձևափոխվել են սահմանականի եզ 3-րդ դեմքի անալոգիայով Միջին հայերենի ձևերը *չեմ ի ծախել, չես ի ծախել, չենք ի ծախել, չէի ի ծախել* և այլն, սահ եզ 3-րդ դ «*չի* + անորոշ դերբայ» կառուցվածքի անալոգիայով, տվել են համապատասխանաբար *չեմ ծախել, չես ծախել, չենք ծախել, չէի ծախել* և այլն Միայն *գալ, տալ, լալ* և այլ միավանկ բայերի մոտ պահպանվել է հին ամբողջական ձևը *չեմ ի գալ, չեմ ի տալ, չեմ ի լալ* և այլն *ի* նախդրի պահպանման պատճառը միավանկ բառերի համար նույնն է, ինչը որ նույն երեք բայերի համար նպաստել է *կու* մասնիկի պահպանմանն ամբողջական ձևով, երբ մնացած, բազմավանկ բայերում *կու* մասնիկը կորցրել է իր *ու* ձայնավորը Հայոց լեզվի պատմությունն մեջ հնագույն ժամանակներից նկատվում է *միավանկ* բայաձևերից *խուսափելու միտումը* Այդ միտումի շնորհիվ է, որ դասական լեզուն պահպանել է հավելումը ան*կ* կատ եզ 3-րդ դեմքում կիլիկյան հայերենում *եկ, եղ, ետ* միավանկ ձևերը դարձել են երկվանկ *երեկ, երեղ, երետ*[147] Դրա հետ կապված է նաև ıkal «գալ», ıgal «գոյություն ունենալ», ilal «լալ» բայերի առաջացումը նոր հայերենում[148] Ժխտական բայի կազմության այս աստիճանն առկա է և պահպանվում է, օր, Նախիջևանի ժամանակակից բարբառում Բարբառների մեծամասնությունը, սակայն, կանգ չի առնում զարգացման այդ աստիճանում, այլ սահմանականի ժխտական ներկայի կազմի մեջ մնացող *-լ* վերջավորությամբ անորոշ դերբայի տեղը զրավում է *-ր* վերջավորությամբ համապատասխան ձևը այսպես *չեմ ծախել, չեմ սորվիլ, չեմ կարդալ, չեմ մոռնալ* ձևերը փոխարինվում են *չեմ ծախեր, չեմ սորվիր, չեմ կարդար, չեմ մոռնար* ձևերով *-ր* վերջավորությամբ այդ նորակազմ բայանունը (ներկա դերբայի ժխտականը) նույնական է *-ր* վերջավորությամբ ժխտական հրամայականի հետ, և այն պետք է բխեցնել առաջին հերթին ժխտական հրամայականից Ձևափոխությունը պետք է սկսվեր սահմ եզ 3-րդ դեմքից, որի *չի ծախել* ձևը համընկել

---

[147] Հմմտ վերևում §378

[148] *Չեմ ի գալ, չեմ ի տալ, չեմ ի լալ* առանձին ձևերի առկայությունից *չեմ*+ անորոշ դերբայ կանոնավոր ձևի կողքին կարող էր տպավորություն ստեղծվել, որ այստեղ բայաառության կարգով դրվող *ի* նախդիրը պատկանում է բայի հիմքին Վերջինիս հետ միանալով *ի* նախդիրը իրոք հեշտությամբ է վերաճել մի բառի որովհետև դրանով առաջվա միավանկ բայաձևերի տեղը գրավել են երկվանկ ձևերը Այդպես են առաջացել նոր հայերեն ձևերը ı-kalu /=գալ/ ı-lalu /=լալ/ լեհահայերենում ըստ Han 72 *իկայ /փոխ կայ/ իգայ /փոխ գայ/, իլայ /փոխ լայ/* և այլն Մեծ Հայքի բարբառում ըստ Այտ Ա 172 Հմմտ Ալիշանի "Armenian popular songs" էջ 41 կրկներգը *իգայ նատի դարպազ էնէ*, ինչպես նաև *իգայ նատի սեյրան անէ*

է համապատասխան ժխտ անորոշ դերբայի հետ *չհծախել* (< *չծախել*) *Մի ծախեր, մի սորվիր* հրամայականի նմանուվթյամբ *չի ծախել, չի սորվիլ* դարձել է *չի ծախեր, չի սորվիր* Զպետք է մոռանալ նաև, որ *-ր* վերջավորուվթյամբ հրամայականի ձևը սպեցիֆիկ ժխտական միակ բայաձևն է, և որ ընդհանրապես հրամայականի 2-րդ դեմքի ձևը հաճախ նույնական է լինում սահմանականի եզակի 3-րդ դեմքի հետ[149] Սահմ ներկայի եզ 3-րդ դեմքից *-ր* վերջավորուվթյամբ ձևը տարածվել է նաև մյուս դեմքերի վրա Համենայն դեպս անցյալ անկատարի դիմային ձևերի վրա *-ր* վերջավորուվթյամբ ձևի տարածման գործում ոչ աննշան դեր է խաղացել մեկ ուրիշ գործոն ևս Բանն այն է որ սահմանականի ժխտական անկատարի եզ 3-րդ դեմքում, *չէր ծախեր, չէր սորվեր, չէր կարդար, չէր մոռնար, -ր* վերջավորուվթյամբ բայանունն ի սկզբանե նույնական է հաստատական անկատարի համապատասխան դիմային ձևի հետ *չէր ծախեր* < *չէր ծախէր, չէր սորվեր* < *չէր սորվէր*, իսկ *կարդար* և *մոռնար* բայանունները ծագում են *կարդար* և *մոռնար* անցյալ անկատարի ձևերից Այսպիսով բացատրվում է այն հանգամանքը, որ *ի*-ով հիմքերը ժխտական անցյալ անկատարի մեջ կազմում են *-եր* վերջածանցով բայանուն, իսկ ժխտական ներկայի մեջ այն *-իր* վերջածանց ունի[150] Հիմա էլ կարելի է գտնել է-ով գրուվթյունը[151] *չէր ծախէր չէր ծախեր* ձևի կողքին *չէր սորվէր չէր սորվեր* ձևի կողքին /Այտ Բ 86/ որպես պատմական-ստուգաբանական գրուվթյուն՝ ավելի նոր հնչյունական գրուվթյան կողքին Այսպիսով ձևափոխված եզ 3-րդ դեմքին նմանվում են հետո սահմ անց անկատարի մնացած դիմային ձևերը Այդ ժամանակն էլ իր կողմից չէր կարող ազդեցուվթյուն չգործել ներկայի ձևավորման վրա - Հնարավոր է նաև, որ -er, -ar վերջածանցով օսմանյան բայանունը նույնպես մասնակցել է *-ր* վերջավորուվթյամբ ժխտական բայանվան կազմուվթյանը Իրոք, զարգացման նկարագրված ընթացքը վերաբերում է ամենից առաջ տաճկահայերենին, որ անշարժացել է զարգացման այդ աստիճանում, իսկ մնացած, օսմանյան ազդեցուվթյանը չենթարկված բարբառները, մի քայլով

---

[149] Հմմտ դաս եզ 2-րդ դ կատ հրամ *համ՝* սահմ անց կատ եզ 3-րդ դ *համ /հհամ/* ձևի կողքին դաս եզ կատ հրամ 2-րդ դ *ել* սահմ կատ եզ 3-րդ դ *ել* ձևի կողքին մհ կատ հրամ եզ 2-րդ դ *դիր՝* սահմ անց կատ եզ 3-րդ դ *եդիր* ձևի կողքին և այլն

[150] Այսպես ժխտ ներկա *չեմ սորվիր, չես սորվիր* և այլն՝ ժխտ անց անկատ ձևերի կողքին *չէի սորվիր չէիր սորվիր* և այլն /հմմտ Այտ Բ, էջ 82 հաջ /

[151] Ժամանակակից ուղղագրուվթյան տեսակետից սխալ է հայտարարված Այտընյանի կողմից /Բ 86/ բայց արդարացված է պատմական-ստուգաբանական տեսակետից

և առաջ են գնացել Բանն այն է, որ հրամայականի *-r* վերջավորությամբ եզ 2-րդ դեմքը ենթարկվել է վերնում (§3.9.0, տողատակի ծանոթագրություն) նկարագրված, նոր հայերենում այնքան ուժեղ անալոգիայի օրենքին, որի համաձայն հրամայականի *-r* վերջավորություն ունեցող բոլոր հին ձևերը ճգտում են վերաիոխվել համապատասխան ձայնավորահանգ ձևերի օրինակով Այնպես որ եզ 2-րդ դեմքի հրամայականը, հատատական հրամայականի համապատասխան ձևի անալոգիայով, դեն է նետել *r* վերջին բաղաձայնը և դարձել ձայնավորահանգ Դրա հետևանքն այն է եղել, որ *-r* վերջավորությամբ ժխտական հրամայականի հետ համընկնող *-r* վերջավորությամբ ժխտական բայանումը նույնպես ներքաշվել է անալոգիայի մեջ և, բառավերջի *-r* բաղաձայնը դեն գցելով, նույնպես ձայնավորահանգ է դարձել Այսպես, օրինակ, Լեհ և Ախ բարբառներում /Том. էջ 63/ սահմանականի նոր ձևն ընդունել է հետևյալ տեսքը

ċem mare̲	(< ավելի հին	ċem marer)
ċes aya	(< ավելի հին	ċes ayar)
ċi de̲sni	(< ավելի հին	ċi de̲snir)
ċeyi mare̲	(< ավելի հին	ċeyi marer)
ċeyir aya	(< ավելի հին	ċeyir ayar)
ċer de̲sni	(< ավելի հին	ċer de̲snir)[152]

Քանի որ սահմանականի բերված բոլոր ձևերում դիմային հարաբերությունն արտահայտվում է ոչ թե բուն բայահիմքի, այլ օժանդակ բայի օգնությամբ, անալոգիայի սկզբունքով նույն իրավիճակը փոխանցվել է նաև հրամայականին հոգն 2-րդ դ marek^{c} հրամայականը դարձել է mare̲, իսկ հոգնակիի ցուցիչը, սահմանականի անալոգիայով, փոխանցվել է mi նախամասնիկին և ստեղծվել է mik^{c} ձևը Այսպես, Ախ /ըստ Том էջ 70/ եզ 2-րդ դ mi mare̲ հոգն 2-րդ դ mik^{c} mare̲ եզ 2-րդ դ mi xosi հոգն 2-րդ դ mik^{c} xosi Նույն վիճակը, միայն հետադաս մասնիկով, ցույց է տալիս Ագուլիսի բարբառը /Ս Սարգ 121/ եզ 2-րդ դ կապի մ̆ի /մի/, հոգն 2-րդ դ կապի մ̆իք /միք/, եզ 2-րդ դ նահի մ̆ի /մի/, հոգն 2-րդ դ նահի մ̆իք /միք/ եզ 2-րդ դ հոռ̆նի մ̆ի /մի/ հոգն 2-րդ դ հոռ̆նի մ̆իք /միք/[153]

---

[152] Մասամբ *-r*-ով հին ձևերը դեռևս կենդանի են լեզվի մեջ ավելի նոր ձայնավորական դուստր ձևերի կողքին Այսպես Ախալցխայի բարբառում և ċem mare̲ ձևի կողքին կա նաև ċem marer ċem aya ձևի կողքին՝ նաև ċem ayar Հմմտ Том Ах диал էջ 70

[153] Դրանց կողքին նաև *l*-ով ձևեր *կապիլ մ̆ի, կապիլ մ̆իք, նահիլ մ̆ի* և այլն Ս Սարգ էջ 121

ԳԼՈՒԽ VI
ԱՆԿԱՆՈՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§423 Եթե հին ստորադասականի և ապառնիի կորուստը ընդհանուր է եղել բոլոր բայերի համար, ապա ներկայի համակարգի նույնատիպ վերակառուցումը /տե՛ս §360 հաջ/ չի ընդգրկել որոշ բայեր, որ կազմել են մի հատուկ խումբ՝ խոնարհման իրենց հատուկ ճևով Խոսքն այն բայերի մասին է, որոնք պարզ հիմքի կողքին ունեն նաև *-ենա* -ena /կամ -na/ ածանցով հիմքը *Կազմուիթյան և ընդհանուր ընուիթի* տեսակետից մենք ուսումնասիրել ենք այն վերևում /§§338-347/

§424 Այն բանից հետո, երբ հին հայերենի ստորադասականի ընդհանուր կորստի ժամանակ այն կորցրել են նաև խնդրո առարկա բայերը, դրա (= ստորադասականի) տեղը գրավել է ոչ թե սովորական, այլ *ընդարձակ հիմք ունեցող ահհմանականը Քանի որ ահհմանականի այդ ճևը* ներկայացնում է գործողուիթյունը որպես հեռավոր ու պայմանական /հմմտ §347/, այն կոչված ու ստեղծված է այն բանի համար, որ դառնա համապատասխան պարզ բայերի ստորադասական Դրա հետևանքն այն է եղել, որ հին սահմանականը կարող էր պահպանել իր նախնական ֆունկցիան Եվ այդպես այն հաստատվել է այդ բայերի մոտ որպես հհ ներկայի և անկատարի պարզ սահմանականի մնացորդ Որպես այդպիսին՝ այն պահպանվում է հիշյալ բայերի համար նաև նոր լեզվի մեջ Վկայուիթյուններն են, օր, *սահմանական ես որ ի չիմ ապրանքն եւ ի հարկիքն կամ* $21_{25\,26}$ *որ կան* L. 154 *զոր կան* L. 178, 185 *ու բաժին մի այլ անսիզվորք կան եւ կու առջնտրեն զիս* $41_{7\,8}$ *քո իրքն, որ առ իս զրաւական կայր* 75_{17} դրա փոխարեն ստորադասական *Թէ անհաւէրք ի ծառուիթիւն կենայ* 15_1 *եթէ ի հայնց տեղի կենայ* $15_{2\,3}$ *Թէ կենդանի կենայ կինն* 21_{12} *կենայ* ԴԴ ղե. *կապած կենայ* ԴԴ ծ *Թող կենայ* Բ մլթ, մկէ, ԴԴ ճհէ *հանգիստ կենայ* Մխ Հեր 25 *պատրաստ կենայ* Մխ Հեր 11, 21 *եւ կենան երկու խիսմն առջեւ պարոնին* 33_3 *կենան* ԴԴ լդ, խե *պատեհ է որ կենան* ԴԴ իա· - Սահմանական *ու ես ուզեմ որ իմ սիզերովս առջեւ վճարվիս* 41_{23} դրա փոխարեն ստորադասական *եւ հիլայօրն ուզենայ* 35_5 *ու Թէ ինք ուզենայ* 43_3 *եւ Թէ այրիկն ուզենայ* 49_{16} *Թէ ուզենա* Բ մժգ, մկզ *Թէ ուզենան* Բ մկզ. - Սահմանական *ունին գհասակն* 51_1 *զէդ ունի յիր ճեռք* 59_{21} *վկայնին իշխանուիթիւն ունին* 61_{15} դրա փոխարեն ստորադասական *եւ ունայ զիրքն* 59_{21} *պիտի որ ունայ* 19_{11} *նա ուն-*

նայ 23_{19} *ունևա* ԴԳ ղբ. ճհդ *ֆող ունևա* Բ ձծ. *ունևան* 25_{19}, ԴԳ ա. կ *ֆէչ ունևայ* 37_{15} - Սահմանական *գիտէ* $8\dot{3}_{1}$ *ով գիտէ* 39_{3}, 83_{15} ղրա փոխարեն ստորադասական *գիտենայ* ԴԳ խէ. *զոր գիտենայ* 59_{12} *որ գիտենայք* ԴԳ խբ *ֆող գիտենան* ԴԳ խզ. հղ. ճհէ - Սահմանական *պիտի. պարտի* ամենուրեք ղրա փոխարեն ստորադասական *եթէ ոք պարտք պարտենայ* 71_{17} *յաղագս ֆէչ մարդ մարդոյ պարտք պարտենայ* 71_{19} *քանի իր պիտենայ* 25_{26} *ֆէչ իրենց պիտենայ* 61_{15} և այլն

§425 Ապառնիի համար ստույգ վկայություններ մեր օգտագործած աղբյուրներում համարյա թե չկան Սակայն, քանի որ նոր հայերենի *կու* մասնիկով ապառնին /§347/ անհրաժեշտությամբ պետք է ծագած լինի միջին հայերենից, կարելի է այդ բայերի ապառնին կիլիկյան հայերենի համար վստահությամբ վերականգնել որպես *կու*+ ստորադասական Վերջինս ոչ այլ ինչ է, եթե ոչ ածանցավոր հիմքի սահմանական ներկան

§426 Անորոշ դերբայը կազմվում է ածանցավոր հիմքից Օրինակներ *լինալ /լինիմ* բայից/ 59_{33} *ունևալ /ունիմ* բայից/ 17_{24}, 47_{23}, 51_{21} *կենալ /կամ* բայից/ L 158_{25}. Գիրք վաստ էջ 23, 62, 64, 67, 129 *ունենալ /ունիմ* բայից/ Սմբ Ժամ 648. Գիրք վաստ էջ 14, 96, 100, 215 Պարզ հիմքից կազմված անորոշ դերբայները, որ դեռևս հանդիպում են մեկ-մեկ, դասական լեզվի ազդեցության հետքերն են

§427 Նոր հայերենի նման, կիլիկյան հայերենում նույնպես հիմքի ածանցավոր ձևը տարածվել է ներկայի համակարգից դուրս գտնվող ժամանակների վրա Այսպես, մենք գտնում ենք *որ կեցաւ* անց կատ եզ 3-րդ դ ԴԳ ճլ փոխ դաս *կաց, եկաց* ապա *կեցաւ* Սմբ Ժամ Dul. 678 *կեցան* հոգն 3-րդ դ Սմբ Ժամ Dul 649 փոխ դաս *կացին կեցել* անց դերբայ 57_{24}, 67_{12} փոխ դաս *կացեալ* և այլն սակայն *ունիմ* բայից դեռևս անց կատ *կալայ*, անցյալ դերբայ *կալել*

§428 Անկանոն բայի կիլիկյան-միջին հայերեն հարացույցը, *կամ* բայի օրինակով, ունի հետևյալ պատկերը

ԱՆԿԱՆՈՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

Կամ բայը

ՆԵՐԿԱ			
		Սահմանական	Ստորադասական
Եզակի	I դ	*կամ*	*կենամ*
	II դ	*կաս*	*կենաս*
	III դ	*կայ*	*կենայ*
Հոգա	I դ	*կանք*	*կենանք*
	II դ.	*կայք*	*կենայք*
	III դ	*կան*	*կենան*

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ			
		Սահմանական	Ստորադասական
Եզակի	I դ	*կայի*	*կենայի*
	II դ	*կայիր*	*կենայիր*
	III դ	*կայր*	*կենայր*
Հոգա	I դ	*կայաք*	*կենայաք*
	II դ	*կայիք*	*կենայիք*
	III դ	*կային*	*կենային*

ԱՊԱՌՆԻ		
Եզակի	I դ	*կու կենամ*
	II դ	*կու կենաս*
	III դ	*կու կենայ*
Հոգա	I դ	*կու կենանք*
	II դ	*կու կենայք*
	III դ	*կու կենան*

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ		
Եզակի	I դ	*կեցայ*
	II դ.	*կեցար*
	III դ.	*կեցաւ*
Հոգա	I դ	*կեցաք*
	II դ	*կեցայք*
	III դ	*կեցան*

Անցյալ դերբայ	*կեցել* *կեցած*
Անորոշ դերբայ	*կենալ*

Նույն ձևով են խոնարհվում ներկայի համակարգում[154] այդ տիպի այլ բայերը. օրինակ.

ՆԵՐԿԱ

Սահմանական	Ստորադասական
գիտեմ	*գիտենամ*
կամիմ	*կամենամ*
ունիմ	*ունենամ*
լինիմ	*լինամ*
ուզեմ	*ուզենամ*
կարեմ	*կարենամ* և այլն:

Ծան. 1. Վերևում բերված հարացույցն առանց սահմանափակումների վերաբերում է միայն Սմբատի զուտ կիլիկյան լեզվին: Սակայն ՋգԱ և ՋգԲ ձեռագրերում, ինչպես նաև Վաստակոյ գրքում ներկայացված ավելի ուշ լեզվական փուլը քնորոշվում է այդ հիմքերի օգտագործման ավելի մեծ ազատությամբ, երբ ածանցավոր հիմքը կիրառվում է նաև որպես սահմանական ներկա *կու* մասնիկով կամ առանց դրա: Այսպես, վկայված են սահմանականի հետևյալ ձևերը. *ունիմ* Բ մլդ. *կենամ* Բ մխե. մծդ. *թվենամ* Բ մլը. մխ: *Կու* մասնիկով սահմանականի ձևերից Վաստակոյ գիրքն ունի միայն *կու կենամ* 193$_3$, ՋգԲ *կու կենամ* մխե. մկզ. մկէ. մկխե:

Ծան. 2. *Լինիմ* և *ուզեմ* բայերի խոնարհման մեջ նկատվում է տատանում: Անկանոն խոնարհման կողքին՝ սահմ. ներկա *լինիմ*, ստորադ. ներկա *լինամ*, պահպանվում է նաև կանոնավոր խոնարհումը. սահմ. ներկա *կու լինիմ*, ստորադ. ներկա *լինիմ*[155], ինչպես նաև սահմ. ներկա *ուզեմ*, ստորադ. ներկա *ուզենամ* ձևերի կողքին առկա է նաև սահմ. ներկա *կու ուզեմ*, ստորադ. ներկա *ուզեմ*[156]: Երկու բայերի նույն զույգ խոնարհումն էապես պահպանվել է նոր հայերենում:

ԵՄ YEM ԷԱԿԱՆ ԲԱՅԸ

§429. Անկանոն ձևով խոնարհվում է նաև *եմ* yem օժանդակ բայը: Պետք է ասել, որ հհ. *իցեմ* ստորադասականի կորստից հետո այստեղ բացակա էր համապատասխան ածանցավոր հիմքը. **ենամ* բայ գոյություն չունի:

---

[154] Անցյալ կատարյալը մասամբ պահպանել է հին ձևը:

[155] Սահմանական. *կու լինի* 13$_{16}$, 25$_1$. ստորադասական. *լինի*. ամենուրեք:

[156] Սահմանական. *կու ուզէ* 15$_{18}$, 67$_3$. ստորադասական. *պիտի ուզէին* 17$_{15}$, *թէ ուզէին* 17$_{16}$ և այլն:

Այնուամենայնիվ, սահմանականի հին ներկան և անկատարը պահպանել են իրենց տեղը և չեն ընդունել. ըստ ընդհանուր օրենքի, ստորադասականի ֆունկցիան Վերջինիս համար ստեղծվել է *լինամ* ձևը /*լինիմ* բայից/. որ տարածվել է նաև ապառնիի վրա *կու լինամ* Այսպիսով կարողացել են պահպանվել սահմանականի *եմ, էի* նախնական ձևերը, և հնարավոր է եղել խուսափել **կու եմ, *կու էի* ձևերից, որոնք էական բայլին, համեմատ դեպս, բաղաղրյալ ձևերում, կիանգարեին Էական բայի կիլիկյան խոնարհումը, որ հիմնականում պահպանվել է նոր հայերենում, հետևյալ տեսքն ունի

ՆԵՐԿԱ			
		Սահմանական	Ստորադասական
Եզակի	I դ	*եմ* /դաս *եմ*/	*լինամ* /դաս *իցեմ*/
	II դ	*ես* /դաս *ես*/	*լինաս* /դաս *իցես*/
	III դ	*է* /դաս *է*/	*լինայ* /դաս *իցէ*/
Հոգն	I դ	*ենք* /դաս *ենք*/	*լինանք*/դաս *իցենք*/
	II դ	*էք* /դաս *էք*/	*լինայք* /դաս *իցէք*/
	III դ	*են* /դաս *են*/	*լինան* /դաս *իցեն*/

ԱՆՑՅԱԼ ԱՆԱՏԱՐ			
		Սահմանական	Ստորադասական
Եզակի	I դ	*էի*	*լինայի*
	II դ	*էիր*	*լինայիր*
	III դ	*էր*	*լինայր*
Հոգն	I դ	*էաք*	*լինայաք*
	II դ	*էիք*	*լինայիք*
	III դ	*էին*	*լինային*

ԱՊԱՌՆԻ					
Եզակի	I դ	*կու լինամ*	Հոգն	I դ	*կու լինանք*
	II դ	*կու լինաս*		*II դ*	կու լինայք
	III դ	*կու լինայ*		*III դ.*	կու լինան

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ
լինայ

Ծան Անց կատարյալի ձևն է *եղայ* հրամայական եղ 2-րդ *լեր*· անց դերբայ *լել, եղել, եղած* - Բավական թվով վկայություններ բերված են արդեն վերևում Ապառնիի ձևերը չնայած որ ավելի հաճախ վերականգնված են, քան վկայված, լիովին վստահելի են

Ծան Եղայ անց կատարյալից կազմված և արդեն հին հայերենում գրեթե չկիրառվող *եղանիմ* ներկան ամբողջովին անհետացել է, մինչին հայերենում այլևս չի կիրառվում նաև հհ *գոգ* պակասավոր հինքը

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§430 Ժխտական խոնարհման մեջ նույնպես անկանոն բայը տարբերվում է կանոնավորից Ըստ §418-ի, կանոնավոր ժխտական խոնարհմանը հատուկ նկարագրական սահմանականի ձևը կյանքի է կոչվել և յուր տարածման մեջ պայմանավորվել *չ-ծախեմ* ստորադասականին զուգահեռ և միաժամանակ նրանից տարբերվող այնպիսի պարզ մի ձևի բացակայությամբ, որ նշանակեր ժխտական սահմանականը Այդ բացակայությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ գոյություն չունի հաստատական *ստորադասականից* ձևաբանորեն *տարբեր հաստատական սահմանականը* Վերջինս՝ *կու ծախեմ* ձևով տարբերվում է համապատասխան *ծախեմ* ստորադասականից միայն *կու* նախամասնիկով, և եթե ժխտման ենթարկվեր, պետք է նույնպես հնչեր *չ-ծախեմ* և համընկներ ստորադասականի հետ Բոլորովին այլ պատկեր ունենք անկանոն բայի մոտ այստեղ սահմանականն ու ստորադասականն էապես տարբերվում են ձևով, որովհետև կազմվում են տարբեր հիմքերից *կամ* սահմանականի կողքին *կենամ* ստորադասականը, *գիտեմ* սահմանականի կողքին *գիտենամ* ստորադասականը Այդ բայերը պահպանել են բնականաբար հին ժխտական խոնարհումը բոլոր ժամանակաձևերն առանց տարբերությունների ընդունում են չ ժխտական նախամասնիկը Ժխտական սահմանականն ու ստորադասականն արդեն բավականաչափ տարբերվում են հիմքի ձևով, մի բան, որ չէր կարող պատահել, եթե ժխտականը կազմված լիներ նման ձևով կանոնավոր բայից, որի պատճառով էլ կանոնավոր բայերը փոխել են *ժխտական կազմության* ձևը Ի միջի այլոց, կանոնավոր բայի ժխտական խոնարհումը տարածվում է նաև անկանոն բայի վրա Այսպես, էջ 25 *չես ի կարել* փոխ սովորական *չկարես*[157] Անկանոն

[157] Նման ձևով արևմտյան գրական լեզուն հիմա էլ ունի սահմանականի հետևյալ ձևերը *չեմ կրնար* /< ավելի հին *չեմ ի կարենալ*/, *չեմ գիտեր* /ավելի հին *չեմ ի գիտել*/ *չգիտեմ, չիտեմ* ձևերի կողքին հմմտ Այտ Բ 86

բայի սովորական ժխտական խոնարհման համար բերենք հետևյալ վկայությունները. սահմանական. *զի առանց ճիաւորութեան չկայ հասակ* 17_{23}. *վասն զի նշանին ի պարոնին ճեռն կայ. չկայ ի դարպասն* 33_5. *նա այլ չկայ քան որ կռվին* 35_{23}: Ստորադասական. *թէ տղայ չկենայ* 19_{13}. *որ վկայ չկենայ* 33_{15}. *թէ չկենայ թուղթ* 39_{22}. *թէ չկենայ կենդանի տղայ* 45_{13}. *թէ թուխթ չկենայ* $59_{37.38}$. *թէ չկենայ վկայք* 81_{11} և այլն: - Սահմանական. *չունիմ այլ քեզ պապկոսն այնել* 23_{10}. *ես իսկի չունիմ քեզ պապկոսն* 67_8. *չունի այնուհետեւ իշխանութիւն* 9_{11}. *չունի հրամանք* 49_{12}. *եւ այս վանց այնոր է, որ պարոնն չունի կարողութիւն* 13_{25}: Ստորադասական. *որ կաւ չունայ* 25_{16}. *թէ չունայ* 31_{10}. *եթէ չունայ* 75_6. *որ չունան* 51_8. *թէ չունան* 51_{10}. *չունայ* 55_9 և այլն: Սահմանական. *չկարէ պարոնն մատղշկել* 17_{24}. *չկարէ գրել ու տալ* 21_1. *չկարէ այնել* 53_2. *չկարէ առնուլ* 53_{13}. *չկարէ լինալ* 59_{33} *չկարեն ուզել* 17_{11}: Ստորադասական. *որ տղայ չկարենայ բերել* 21_{19}. և սրան վերաբերող բոլոր մնացած բայերը, ինչպես. սահմ. *չլինիմ*, ստորադ. *չլինամ*. սահմ. *չկամիմ*, ստորադ. *չկամենամ*. սահմ. *չուզեմ*, ստորադ. *չուզենամ*. սահմ. *չգիտեմ*, ստորադ. *չգիտենամ*. սահմ. *չպարտիմ*, ստորադ. *չպարտենամ*. նաև սահմ. *չեմ*[158], ստորադ. *չլինամ*:

Ծան. Հաստատական խոնարհման նման, ժխտական խոնարհման մեջ նույնպես բայատուփյան կարգով կարելի է գտնել *չկարենամ*, *չունամ* և այլ ածանցավոր ձևերը սահմանական եղանակի պաշտոնով: Օր., եզ. 21_{19}. *նա պարոնն չկարենայ հարկել զինք* «պարոնը չի կարող նրան հարկադրել»: Ընդհանրապես այդ երևույթը տարածում է գտել միայն ավելի ուշ շրջանի բժշկական գրականության մեջ:

Ապառնին, թեև այն վկայված չէ, պետք է նույնացնել ստորադասականի ներկայի հետ: Մնացած դեպքերում անկանոն բայի ժխտական խոնարհումը հետևում է կանոնավոր բայի համապատասխան խոնարհմանը: Անկանոն բայի ժխտական խոնարհումը հիմնականում պահպանվել է մինչև նոր հայերենի շրջանը: Համմ. Այտ. Բ, էջ 86 §238:

---

[158] Հաճախակի վկայված է եզ. 3-րդ դ. *չէ. ոչ է* և որպես ժխտում արտահայտող մակբայ. $31_{5.19.24}$, 33_{10}, 35_{22}, $57_{11.16}$, 71_3 և այլն:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻ ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

ՆԵՐԿԱ			
		Սահմանական	Ստորադասական
Եզ.	I դ.	*հկամ*	*հկենամ*
	II դ.	*հկաս* և այլն	*հկենաս* և այլն

ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ			
		Սահմանական	Ստորադասական
Եզ.	I դ.	*հկայի*	*հկենայի*
	II դ.	*հկայիր* և այլն	*հկենայիր* և այլն

ԱՊԱՌՆԻ	
Եզ.	I դ. *հկենամ*
	II դ. *հկենաս* և այլն
ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ	
հկենալ	
ՀՐԱՄԱՅԱԿԱՆ	
մի կենար	
ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ	
Եզ. I դ.	*հկեցայ* և այլն
ԲԱՂԱԴՐՅԱԼ ԱՆՑՅԱԼ	
հեմ կեցել	

ՀԱՎԵԼՎԱԾ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ

§431 ա) Գոյականի որոշումը - *Անորոշ* հոդի համար Լծուլլ արտահայտություն ունի արդեն հին լեզուն ժողովրդական խոսքի մեջ այդ դեպքում օգտագործվում է *մի* թվական անունը հմմտ այդ մասին A Meillet, Mém d l. soc. d. ling. Paris X էջ 266 *Կիլիկյան* հայերենում այդ երևույթն այնպիսի զարգացում է ստանում, որ անորոշ հոդն արտահայտվում է *հետադաս*[159] և *չմեքվող մի* բառով Օրինակ *բաժին մի* 69_9, 77_2, 41_7 *մասն մի* ԴԳ լա *տարի մի ու օր մի* 67_{10} *տարոյ մի ու աւուր մի* ուղղ *տարի ու օր* 69_{17}, 77_{23} *ազգ մի* $71_{\text{ն}}$, ԴԳ ճժբ *բժիշկ մի* 25_{18} *կտոր մի* 79_6 *կին մի այլ* 47_{10} ապա ընդհանուր որոշումների մեջ, ինչպես *ոք մի* 79_{12}, *չաք մի* 75_{32}, *հանչաք մի* ԴԳ ճբ

Ծան Մեկ անգամ, ձայնավորով սկսվող բառից առաջ, գոնում ենք *մին* ձևը Անս Անտ 47_3 հետևյալ կոմտեքստում *չտայ փող մին ի յետ*

Սակայն անորոշ հոդը դեռևս ընդհանուր տարածում չունի, ինչպես նոր հայերենում ավելի ճիշտ, կիլիկյան հայերենում, որպես քերականական կարգ այն դեռևս գոնվում է զարգացման ընթացքում և, ինչպես կուշց են տալիս օրինակները, որոշ դեպքերում մենք գործ ունենք միայն եզակիության շեշտման հետ, որ լրիվ նույնական չէ մեր անորոշ հոդի հետ Ավելի ուշ միջին հայերեն աղբյուրներում կիլ *մի* կամ *մին* բառերի փոխարեն գոյականներին վերջահար դիրքով միանում են *ս* կամ *մն* կրճատ ձևերը Օրինակ, արդեն Մխ Հերայու մոտ *սակաւմն* «մի քիչ» էջ 9 և այլն[160] Նոր հայերենում այդ դեպքերում սովորաբար ունենք *mə* կամ *mən* անմիջապես հաջորդող ձայնավորից առաջ (հմմտ Այտ Բ, 24, 25)

---

[159] Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ *մի* հոդը դրվում է գոյականից *առաջ*

[160] mı>m կրճատումը շատ շուտ է կատարվել լեհահայերենում Այսպես Լվովի 1492 թ մի գրություն /Մխ Լեհ էջ 117/ ունի *դպալ ջօխօլ* ձևերը Ապա Կամենեց-Պոդոլսկի մի գրության մեջ /Մխ Լեհ էջ 141 հաջ / կարդում ենք *արծթէ բուրվառս խաչվարս շուրջառս խաչս արծթէ մեծ խաչս մեծ խուցս, ա արծթէ խաչս ոսկեջրած* Ապա նույն քաղաքից մեկ ուրիշ գրության /Մխ Լեհ էջ 149 հաջ / հետևյալ ձևերով *պատուական թագս մեծ խաչս, ա պատկերքս* Դրա կողքին նաև *պատկերքմն* Մխ Լեհ էջ 142 Հմմտ այդ մասին նաև Այտ Ա, 174

§432. Կիլիկյան հայերենում լիովին զարգացած է արդեն որոշիչ հոդը, որ ներկայացված է հետադաս *ն*-ով, ինչպես որ դա երևում է *ամեն քայլափոխին* մեր աղբյուրներից: Կիլիկյան հայերենը տարբերվում է դրանով մի կողմից հին լեզվից, որտեղ *ն* դերանվանական վերջածանցը, ինչպես հայտնի է, դեռ կրում է հիմնականում դերանվանական բնույթ. հմմտ. այսպես կոչված «հոդի» ցուցական բնույթի մասին հմմտ. A. Meillet, Syntaxe comparée de l'arménien: Mém. d. l. soc. d. ling. Paris X էջ 264 և 265: Մյուս կողմից, ճևական առումով այն տարբերվում է նաև նոր հայերենից, որտեղ հոդի հին *ն* ճևը լրևև պահպանվում է ձայնավորից հետո, բայց բաղաձայնից հետո դառնում է *ը*: Հմմտ. Այտ. Քնն. քերակ. Բ, էջ 22 հաջ.:

Ծան. Եթե *առջի, վերջի, յետի* և այլ նման ածականները գոյականական կիրառությամբ ընդունում են որոշիչ հոդ, ապա այդ հոդը միացվում է *-ին* վերջավորությամբ ձևին. օրինակ. *առջինն* 41_{12}, *ի յետինն* 41_{13} և այլն: Հմմտ. վերևում Զևաբ. էջ 250-251:

§433. բ) *Գոյականի ածականական որոշումը*: - Դասական հայերենում ածականը դրվում է կամ գոյականից առաջ, կամ հետո: Նախադաս դիրքում ածականը մեծ մասամբ չի հոլովվում: Հետադաս դիրքում այն հոլովվում է կանոնավոր ճևով. հոլովվում է նաև նախադաս ածականը, եթե այն միավանկ է: Կիլիկյան հայերենում, ինչպես նաև, օրինակ, նոր պարսկերենում, հին բազմազանությունը միօրինականացման է ենթարկվում, և նախադաս ածականով կառույցվածքը հաստատվում է որպես միակ հնարավոր ճև. գոյականից առաջ դրվող, նրա հետ մի միասնական հասկացության վերաճող որոշիչ ածականը դառնում է չհոլովվող, ինչպես կույլ են տալիս հետևյալ օրինակները. *ծեր եւ զիտուն մարդիքն* 39_{23}. *ճանչած չաւուշի* 9_{13}. *ճանչած համբերութիեններն ու օրերն* 23_{26}. *աղէկ վկայք* 19_{15}, 33_{17}. *աղէկ վկայնի* 53_{4}. *իր աւագ որդւոյն* 21_{17}. *ի վերայ երդված մարդոյն* 51_{16}. *առջի այրկանն* 37_{26}. *յետի կնկանն* 47_{17}. *ըղորդ յետմնայն* 21_{16}. *ամէն ապրնօքն* 21_{7}:

Միջին հայերեն լեզվական աստիճանի համար բնորոշ է, որ գործիականը ճևոք է բերում *ածականի* պաշտոն: Օրինակ, *զվաստուծ և զուժովն* ՋգԱ. 15. *ա՛ո սերկեւիլ զնեծն ու զջրովն* ՋգԲ խեթ. *այլ ուժով* Բ մի. *յեէ ուժով բնութիւն մարդ լինի* Բ իր: Բուն ածականների նման են օգտագործվում նաև ածականաբար կիրառվող գոյականները, օր.. *կոյս աղջկներոյն* 47_{28}. *կոյս աղջկան* ԴԳ ճբ. *լիճ ճորտեր* 13_{11}, 27_{4}. *լիճ ճորտերու* 3_{4} և այլն: Բուն ածականների դերում են հանդես գալիս վերջապես ածականական բնույթի հետևյալ կառույցվածքները. *ոչինչ ազգ, այլ ազգ, այս կեղ, այտ կեղ,*

այն կեղ, այս չաք այտ չաք, այն չաք /վերջինս նաև միասին է դրվում/ և այլն Օրինակ, *ոչինչ ազգ կերպով* 9_{12} *այս երեք ազգ կերպովս* 17_4 *վասն ոչինչ ազգ պատճառի* 79_7 *յայլ ազգ գործեր ԴԳ ճաք շատ ազգ յաւեր ԴԳ ճծա յայտ կեղ սարուխճենէդ* $45_{11\,12}$ *կիսայ չաք դեկանս ԴԳ ճժք* և այլն

§434 Ածականի կիրառուխճյան տեսակետից կիլիկյան հայերենը գտնվում է արդեն նոր հայերենի աստիճանում, որտեղ նույնպես ածականը միշտ դրվում է գոյականից առաջ և չի թեքվում Հմմտ Այտ Քնն քերակ Բ 26 Գոյականացված ածականը, բնականաբար, թեքվում է և դիտվում որպես գոյական օրինակ, *վասն աղէկի ԴԳ ճծա երորւածք* 57_9, 67_{16}, *յերկմնոյ* 51_{13} և այլն

§435 գ) Ածականի համեմատուխճյան աստիճանները -*գոյն* վերջածանցով հնացած դասական բաղդատական աստիճանի տեղը գրավում է մի նոր արտահայտուխճյուն այդ աստիճանի համար դրական աստիճանից առաջ դրվում է *այլ* մակբայը Օրինակ, *եա այլ հին եա չանափա* 41_{45} *իր սիրերն այլ հին է* 41_{20} *ինք այլ հին լիճ ճորտ* 41_{21} *զէդ այլ հին* 41_{23}, 43_1 *եթէ որ տուն վարձէ տարոյ եւ կամ ամսոյ պոմնով, եւ վարձվորն այլ կանուխ ուզենայ որ եվնէ* 71_{67} *հայնց որ այլ մեծ չկարէ լինել* 9_7 *թէ հազար այլ մօտեւոր ազգք լինի* 71_{34} *իմ սիրերն այլ հին է քան զայլ անսիրվորապդ* 41_5 Ապա Վաստակոց գրքից *քան զիւր զինին այլ աղեկ* 124_{15} *այն այլ պակաս է* 184_{19} *թէ այլ մեծ ուզես* 165_{19} *այլ մեծ լինի* 165_{21} *որ այլ աղեկ տեղի ախորժայ* 155 վերջին տողը *այլ աղէկ քան զայլ շինած վանճնատան* 221_1 *որպէս այլ յառաջ ասացաք* 3_8 *զոր այլ ի յետոյ յիշել կամիմ* 59_{67} *ծարան այլ շատ լինի քան* 90_{11} *ատրև այլ կարճ լինի* 115_9 *այլ յուշ զայ* 129_3

Այլ օրինակներից, համեմատական մակբայները ներառյալ, Դատաստանագրքում գտնում ենք նաև *այլ անուշ լա այլ աւագ ծէ այլ խիստ ղէ այլ կանուխ հը այլ հարուստ կ այլ մեծ հը, ճկ այլ շոյտ ճհէ ի յայլ պեղծն հը այլ յածքն հ զայլ յած հեծելովրքն հ այլ շատ ճէ այլ աւելի ճղ, ճլա այլ յետեւ ճլէ Զգբ այլ աղեկ ճղզ այլ զաւրաւոր ճղզ այլ թանձր ճճ այլ թեղեթեւ ղղ, ճղ այլ ծանդր ճկ այլ ուժով մի այլ սուր ճա այլ սպիտակ խղ այլ պակաս ճհղ, մժզ այլ աւելի ճճբ ԶզԱ այլ շուտով* 199 *այլ ուժով* 199 և այլն[161]

[161] Առանձին դեպքեր առկա են արդեն ուշ դասական դրականուխճյան մեջ Օրինակ, *այլ մեծ Վարդան Պատմ էջ* $158_{1\,18}$

§436 Համեմատության առարկան դրվում է *քանց*[162] բառից հետո հայկականով և կարող է դրվել թե՛ ածականից առաջ, թե՛ հետո Այն դեպքում, երբ համեմատության առարկան պարզորոշ կերպով անվանած է, բաղդատական աստիճանի արտահայտության համար բավական է նաև պարզ դրական աստիճանը օրինակ. *նա իրավունք չուան քանց սամսրչեքն* L. 156$_6$ *քանց սամսրչեքն այլ իրք չուան* L. 156$_6$ և այլն

Նոր հայերենում, որտեղ բաղդատական աստիճանը կազմվում է al /= կիլ *այլ*/ կամ արևել el, կամ էլ evel, eveli /= դաս *ավելի*/ և այլ նախադաս մակբայների օգնությամբ, համեմատության առարկան դրվում է մասամբ k^{e}an կամ k^{e}anç, k^{e}anz բառերից հետո հայկականով, մասամբ առանց այդ բառերի՝ բացառականով Հմմտ Том Тифл. диал. §351, 352, 353 և այլն, Այտ Բ էջ 27, 167

§437 Գերադրական աստիճանի համար կիլիկյան միջին հայերենը, հին և նոր հայերենի նման, չի մշակել արտահայտության սեփական և կայուն մի ձև Բաղդատական աստիճանի ձևը հաճախ ծառայում է որպես գերադրական, հատկապես երբ կապված է հոդի հետ Որ. Զգբ հե *այլ աղէկն*

Բ ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§438 *Ինքնուրույն, գոյականի* ֆունկցիայով բոլոր քանակական թվականները հոլովվում են որպես եզակի, ըստ Զևաք §274

§439 *Ածականի* ֆունկցիայով, այսինքն՝ թվարկվող առարկայի անվան հետ կապակցված, *դասական հայերենի* թվականները հետևյալ հարաբերությամբ են գոյականի հետ բոլոր քանակական թվականները կարող են կամ նախորդել, կամ հաջորդել գոյականին Գոյականի հետ համաձայնության տեսակետից թվականները բաժանվում են երկու խմբի առաջին խումբն ընդգրկում է *երկու, երեք, չորք* թվականները Դրանք արդեն վերջավորությամբ բնորոշվում են որպես հոգնակի, կամ էլ, *երկու* թվականի դեպքում որպես երկակի, և հոլովվում են միշտ գոյականի հետ միասին, երկուսն էլ հոգնակիով Երկրորդ խումբը, որ պարունակում է մնացած թվականները հինգից սկսած, նմանվում է առաջինին եթե թվականը հաջորդում է գոյականին, երկուսն էլ հոլովվում են

[162] Որպես արխայիկ ձև դրա կողքին երևում է նաև *քան* հին ձևը

հոգնակիով Սակայն եթե թվականը դրվում է գոյականից առաջ, այն չի հոլովվում իսկ գոյականը հոլովվում է կամ եզակիով, կամ հոգնակիով /հմմտ Այտ Գրաբարի քերակ, էջ 33-34/ Օրինակ

Ուղղ	*եւթն այր*	կամ	*եւթն արք*
Սեռ	*եւթն առն*	կամ	*եւթն արանց*
Հայց	*զեւթն այր*	կամ	*զեւթն արս*
Բացառ	*յեւթն առնէ*	կամ	*յեւթն արանց*
Գործ	*եւթն արամբ*	կամ	*եւթն արամբք*

Կիլիկյան հայերենում պահպանվել է բերված տիպերից միայն առաջինը և տարածվել է առաջին խմբի թվականների վրա Այլ կերպ ասած բոլոր քանակական թվականները, ներառյալ *մէկ* թվականը, կիլիկյան հայերենում ճեռք են բերել ածականի բնույթ և դրվում են գոյականից առաջ անթեք ճևով Գոյականը, սակայն, հոլովվում է եզակիով Օրինակներ *մէկ կէսմ* 49_5 *ի մէկ խօսք* 35_{17} *ի մէկ տարի* 93_{17} *մէկ կնկանն* 47_{15} *մէկ վկային* 59_{35} *երկու աղէկ վկայ* 81_8 *երկու բաժինն* 49_{19} *երկու երդված* 65_{19} *երկու չհճ ճորտ* 25_{13} *երկու խիսմն* 35_{15} *երկու տղայ* Սմբ Փաս Dul էջ 622 *երկու վկայ* 59_{39} *երկու շաբաթ* 65_{18} *երկու շաբթուն* 65_{18} *երկու դեհին* 39_{26} *երկու կնկանն* 47_{14} *յերկու խամէն* 65_{27} *երեք ազգէն* 17_3 *երեք լիճ ճորտ* 13_9, 15_{13} *երեք վկայած աղէկ կնիկ* 47_{12} *երեք օր* 77_7 *զերեք տարին* ԴԳ հճ *հետ երեք տարայի* ԴԳ *ժը այս երեք ազգ կերպով* 17_4 *երեք չորս հետ* Գիրք վաստ էջ 116 *իրեք չորս լիտր* էջ 124_4 *յայս երեք պատճառէս* 17_{11} *յերեք բաժնէն զմէկ* 53_{13} *յերեք բաժնէն մէկն* $53_{25\,26}$, 49_{18} *չորս ակն* Գիրք վաստ էջ 64 *երեք չորս անգամ* Սմբ Փաս Dul էջ 630 *չորս հինկ տարոյ ընդ ներքսէ* $17_{23\,24}$ *ի չորս տարոյ տունկն* Գիրք վաստ էջ 64 *ի չորս բաժնէն մէկն* 47_{13} *զհինկ պահումն աղաւթքն* ԴԳ *լգ ի վեց բաժնէն մէկ բաժին* 47_{12} *վեց ամ* ԴԳ հե *ութ տարի* ԴԳ հճ *տասնամէկ տարոյ* ԴԳ ճիզ *վաթսուն տարոյ* 11_6 *հազար դեկանի* 31_7 և այլն հետո նաև թվանշաններով *գ սոլ* 61_{21} *եճ կարմիր սուրի* 31_8 *ժե օր* 13_{15} *ժե տարի* 51_{20} *ժե տարոյ* 51_2 *ժե աւուրն* 13_{21}, 77_1 *լ լիվր* 61_{21} և այլն

Սակայն միշտ էլ կան հետադաս թվականների առանձին դեպքեր Օրինակ *ամիս երեք եւ օր երեք* 51_1 *նոր դրամ երեք* L 155_{26} *նոր դրամ հինկ* L 155_6 *նոր դրամ քսան* L 155_{16} Բայց նույնիսկ այդ առանձին դեպքերում կարելի է նկատել, որ կիլիկյան հայերենը պահպանել է նախնական վիճակը միայն պակասավոր ճևով Իրոք, հետադաս թվականի դեպքում գոյականը պետք է դրվի հոգնակիով, իսկ կիլիկյան հայերենում մենք ունենք եզակի

Դա պետք է դիտել որպես մի բացառիկ դեպք, որ զտնվում է անհետանալու ընթացքում Նոր հայերենին այն այլևս ծանոթ չէ

Նոր հայերենի համար, ինչպես արդեն կիլիկյան հայերենի, ընդհանուր է հետևյալ կանոնը չթեքվող քանակական թվականը հոլովվող գոյականից առաջ դրվում է եզակիով[163] Մի գուցե այստեղ մենք գործ ունենք նոր պարսկերենի ազդեցության հետ Կամ էլ, թերևս, համապատասխանություն ավելի շուտ պատահական է, և երկու երևույթներն առաջացել են իրարից անկախ

Ծան Ուշագրավ է, որ ժամանակ կամ տևողություն, ինչպես նաև դաս կամ աստիճան նշանակող գոյականների մոտ քանակական թվականը դրվում է մեր [գերմաներեն - թարգմ] դասական թվականի նշանակությամբ ու ֆունկցիայով Օրինակ *ի չորս օրն* 77_8. Սմբ Ժամ Dul էջ 647 *երեք պահ* Գիրք վասպ 38 *եօթն օրն* Գիրք վասպ 21 *ըղորդ հասակն տասնուհինգ տարին է* 17_{22} *որճ տղայքն ի տասնուհինգ տարին ունին զհասակն* 51_1 *տասնուերկու տարին* ԴԳ ճիզ *զտասնուհինգ տարին* ԴԳ ճը *զվաթսուն տարին* ԴԳ ճհէ *յուրե օրն* Բ մեղ *վեց ամիսն* Բ ժ *հինգ դասն* ԴԳ կ *վեց դասին* ԴԳ կ *ինչվի չորս երեսքն* ԴԳ ղղ

Գ ԴԵՐԱՆՈՒՆ

§440 ա) *Դերանվանական մասնիկներ* -ս, -դ, -ն վերջահար դերանվանական մասնիկներն այնքան են ընդլայնել կիրառության շրջանը, որ կարող են միանալ ոչ միայն գոյականներին, այլև նախդիրներին և նախադրական մակբայներին այն դեպքերում, որտեղ դասական լեզվի մեջ, որին դեռևս խորթ է բերված վերջահար կառուցվածքը, մասնիկը պահանջում է ինքնուրույն դերանուն թեթ հոլովով Կիլիկյան հայերենի վերջահար դերանվանական կառուցվածքների օրինակներ *պարոնն կամ պայլն պարոնին քերէ զինք առջեւն* /դաս *առաջեաւ իւր կամ նորա*/ 9_{20} *երբ երդնու չավուշն նա որըստեցաւ ի վերայն ու հերիք եղաւ* /դաս *ի վերայ նորա*/ 11_3 *որ թէ շատ վկայ քերեն կամ կեցուէիմն ի վերայն* /դաս *ի վերայ նորա*/ 11_{10} *նա ահա որ ճշմարտեցաւ վկայուէիմն ու ուժն ի վերայն* /դաս *ի վերայ նորա կամ այնր*/ $29_{10\,11}$ *թէ ունևայ տղայ ի մէջն* 37_{14} *որ տղայ է լել ի մէջն* 37_{17} *ու տղայ չկինի լել ի մէջն* 47_{21}, *փոխանակ ի մէջ իրենց*, 19_{56} *չհանգաւ ի հետն աղջիկն* Սմբ Ժամ Հ 665 *սալար զգինն ի հետն թողլ քերէ* 69_{1819} /կողքը

[163] Հմմտ Այտ Քնն քերակ Բ 32

կիլ. *ի հետ իր* 61_{16}. *հետ իր* 61_{17}/. *թէ ու մարդ այլ ուզես ի հետդ* /փոխ. *ի հետ քո*/ ԴԳ ճ. *առջեւս* ԴԳ ճհէ. *ի խէչն* ԴԳ հբ երկու անգամ. *ներքեւն* ԶգՔ մծթ, ծզ. *ի յառաջդ* Մխ. Հեր. էջ 61. *յերջեւն* ԶգԱ 222: Այս շարահյուսական երեւույթի մեջ կիլիկյան հայերենն արտացոլում է նոր հայերենի հարաբերութիւնները: Ինչ խոսք, նոր հայերենում այդ կառուցվածքը շարունակում է զարգանալ: Համմտ. Այտ. Բ, էջ 121, 123:

§441. բ) *Հարաբերական կառուցվածքը*. - Կիլիկյան հայերենը զուրկ է բուն հարաբերական դերանունից. ըստ Զևաթ. §303 հհ. *որ* հարաբերական դերանունը դարձել է սոսկ հարաբերական մասնիկ: Հոլովի և թվի հարաբերութիւնն արտահայտվում է նրանով, որ չթեքվող *որ* հարաբերական մակբայից հետո դրվում է 3-րդ դեմքի անճնական կամ ցուցական դերանուն՝ թվի և հոլովի այն ձևով, որ տրամաբանորեն համապատասխանում է հարաբերական դերանվանը. այդ ժամանակ ինքնուրույն ցուցական դերանունն, անշուշտ, կարող է արտահայտվել ցուցական մասնիկով: Օրինակներ. կիլ. *որ իր* փոխ. դաս. *որոյ. այրի իրիկնկինն՝ որ իր այրիկն յեկեղեցւոյն սպասաւորութիւնն լինի մեռել* ԴԳ լա. *այն՝ որ դատըստնած է ի յիր վերայ* (կիլ. *որ ի յիր վերայ* փոխ. դաս. *յ-որոյ վերայ*) 67_{5}. *ի ֆուլանայ վերայ, որ իր անսիզն յետեւ է քան զինն* 41_{22}. համանմանն *վասն կնոջ՝ որ ցուլն ի խէչն զտվի* ԴԳ հբ: Կիլ. *որ իր* փոխ. դաս. *որում. այն՝ որ ուժն իր լինի այրած* 57_{22}. *զայն մարդն՝ որ իր պարտեանայ* $81_{23.24}$: Կիլ. *որ յիրմէ* փոխ. դաս. *յորմէ. զոմանք՝ որ զգրաատն առին յիրմէ* 63_{22}: Կիլ. *որ իրենց* փոխ. դաս. *որոց. որ լինի իրենց սահմանն այսպէս* L. $154_{20.21}$ և այլն: Վաստակոց գիրքը նույնպես ունի այդ կառուցվածքի առանձին դեպքեր. էջ 93_{2} ներքև. *այն զինին՝ որ այն կնոջ հոտն ի յինքն դիպի*. էջ 104_{27}. *Թզենի փայտով՝ որ տերեւքն յինքն կենան*. էջ 126_{16}. *ջուր ած աղբիւրի, որ զինքն սուրբ մարդ առնու յաղբերէն*. էջ 129 վերջին տողը. *յայգին, որ շատ ագռեր կենայ յինքն*. էջ $190_{8.9}$. *եւ խոտ մի կայ՝ զոր արապերէն հաշա ասեն, որ մեղուն զինքն խիստ սիրէ*. էջ 155 ներքև. *էրէ մի կայ՝ որ իւր անուն սարու ասեն*. էջ $163_{2.1}$. ներքև. *եւ Թէ ուզես հազար շինել, որ Թրըմջի համ գայ յիւրմէ*: - Նույնպես Մխ. Հերապատ. մոտ. էջ 83_{15}. *ջուր յոր եփած լինի յինքն*. էջ 84_{6}. *ջուր տուր՝ որ յինքն եփած լինի*. էջ 38_{3}. *դառաջին կեղն, որ իւր պատճառն*. էջ $65_{9.10}$. *այն դէմսն, որ հաւասար եւ ի յար լինի տաքութիւնն*: - ԶգԱ-ից. *այն իրվին՝ որ իրենց քաւութիւն* 193. *այն իրվին՝ որ իրենց մարմինն* 193: - ԶգՔ-ից. *որ - յինք* պլ. կզ. մխե. *եւ կայ տունկն՝ որ արոյն եկնէ յիրմէ* պլ. մկա. *այնոց՝ որ ի փորցվումեն խիստ նիգ լինի հանդիպել իրենց* պլ. ճէ:

Միայն հարաբերական մասնիկ, առանց համապատասխան կուսյական դերանվան, ունենք Մխ Հեր 65_{45} ստորև *այնոց որ արիւնն շատ լինի ի մարմին* Անս Անտ $79_{10\,16}$ *չափ մարմնոյն -, որ քան զպարոնուհեանն մատնեհարն այլազգ կենայ ի վերայ·* - Զգբ հգ *լան այն է՝ որ զոյնն կարմրհեղձ լինի* Բ ճճէ *ի վերայ այն տեղոյն՝ որ լան է* Բ մկա *եւ կայ՝ որ չելնէ արոյն*

Միայն առանձին դեպքերում կարելի է այդ կառուցվածքին հանդիպել դասական լեզվի մեջ, այն էլ որպես սեմական[164] ազդեցուվթյան հետք, իսկ կիլիկյան հայերենում նույն կառուցվածքը հանդես է գալիս արդեն որպես *հայոց լեզվի* մի առանձնահատկուվթյուն, որ զարգացել է ինքնուրույն ձևով և կարիք չկա այն բխեցնելու նոր պարսկերենի կամ արաբերենի նույնատիպ կառուցվածքից Շարահյուսական այս երևույթը հիմա էլ առկա է հայերենում Հմմտ այդ մասին Այտ Բ 202

Դ ՄԱՍՆԻԿՆԵՐ

§442 *Նախդիրների խնդրառուվթյան* տեսակետից նշանակալից են հետևյալ դեպքերը էջ 51_{12} *ընդ որքերն բան կամ զանկատ ունանան ի վերայ ումեք* էջ 61_{5} *ի վերայ ումեք.* էջ $59_{26\,27}$ *զամէն յոյզն, վանց յում զատասատանն է* ԴԳ հբ. *հետ այլ ումեք* Այստեղից հետևում է, նախդիրները, ինչպես *ի վերայ* և *վասն* /կիլ *վանց*/, խնդիր են առնում ոչ թե սեռականով /ինչպես դասական լեզվի մեջ/, այլ տրականով Խնդրառուվթյան այս փոփոխուվթյունը նկատելի է միայն դերանունների մոտ, որովհետև ուրիշ խոսքի մասերի համար սեռականն ու տրականը ձևով համընկնում են

Հոլովների խնդրառուվթյունը փոխվել է նաև նոր պարսկահայերենում, Այտ Ա 200, որից բերենք հետևյալ օրինակները *իրար վրէն* /արևմտ *իրարու վրայ*/, *առանց էն* /արևմտ *առանց անոր*/, *էնը զնօրեայ* /արևմտ *անոր կէօրէ*/, ապա՝ *ինձ վրայ, մեզ վրայ, մեզ համար, ձեզ վրայ, ձեզ համար, մեզ պէս* և այլն Վերջին դեպքերում, կիլիկյան հայերենի նման, սեռականը փոխվել է տրականի, մի երևույթ, որին հանդիպում ենք լեզվի զարգացման ավելի նոր *աստիճաններում*

§443 Առհասարակ, պատկանելուվթյան հարաբերուվթյունն արտահայտվում է տրականով, ինչպես կուսյ են տալիս հետևյալ օրինակները 73_{10} *ընդ*

[164] Հմմտ Այտ Բ էջ 202

զրական ունայ որ առ ինք ունեք 61_5 *յաղագս դատաստանի ունեք ԴԳ ճհա ունեք անսուն ԴԳ ճհէ ունեք զրաստ ԴԳ ճհէ ունեք ընջուղ ԴԳ ճղ ունեք իրք ԴԳ հբ. ճա ունեք կին ԴԳ ճհէ զունեք անսուն հայց ԴԳ ճլզ ի յում անուն ԴԳ ա ի յում երկիր զովի՝ այնոր է ԴԳ կը ի յում վիճակ լինի*[165]

Ե ԲԱՅՆ ՈՒ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§444 1) Բայ-ստորոգյալի համաձայնությունը ենթակայի հետ - Եթե ենթական հոգնակի է, բայ-ստորոգյալը թվով միշտ համաձայնում է նրա հետ Սակայն այս դեպքում բայ-ստորոգյալը կարող է լինել նաև եզակի Օրինակ *մենք այնենք* 63_{18} *թէ շահին տղայքն ու թէ վզենկին* 51_{17} *ործ տղայքն ի տասնուհինկ տարին ունին գհասակն* 51_1 *ապա թէ վկայքն չկամենան զկռիւն* 59_{18} *ապա թէ վկայնին կամենան զկռիւն* 59_{23} *թէ յետմնայքն ամէնն աղջիկներ լինին* 21_5 Սակայն եզակիով *նա այլ վայր ունայ այնոր յետմնայքն* 23_{19} *նշանին ի պարոնին ձեռն կայ* 33_4 *թէ այլ օտար ապրներ կենայ ի դուրք* 21_9 *նա այս բայլճիս ջնջեցաւ* 55_{12} Եզակիով ստորոգյալը կանոն է այն դեպքում, երբ ենթական մի անեզական բառ է՝ եզակի նշանակությամբ Օր *թէ հայրենիք կենայ* 59_{19} *լինի վկայիկն խօսքն մէկ* 29_2

§445 2) *Բայի խնդրառությունը - Ասել* և *պատմել* նշանակող բայերից կախված՝ այսպես կոչված պատմական հոլովն այլևս չկա կիլիկյան հայերենում չկա նաև պարագական հոլովը Երկու հոլովներն էլ, բացառականն ու գործիականը, այլևս ի վիճակի չեն իրենք իրենցով և միայն *զ-* նախածանցի օգնությամբ արտահայտել այդ հարաբերությունները Համապատասխան հարաբերությունն ավելի շուտ արտահայտվում է նախդիրներով կամ նախդրային արտահայտություններով՝ *վանց* և *ի վերայ, շուրջ* և *ի վերայ*

Ծան Հետաքրքիր է, որ *ուղել* բայը կազմում է երկու տեսակ կառուցվածք 1) ուղիղ խնդիրը դրվում է հայցականով, իսկ անձի անունը՝ բացա-

---

[165] Բոլորովին զարմանալի չէ որ նույն կառուցվածքին կարելի է հանդիպել նաև ավելի ուշ շրջանի Վարդան պատմիչի մոտ /ԺԳ դար/ քանի որ վերջինս արևելահայ է Նրա պատմական երկից հիշատակենք *յորում աւուրս* կամ *յորում յաւուրս*, էջ 34, 40 61, 67 76, 85 87 *ի նմին աւուրս*, էջ 107 *յերեսներորդ վեցերորդ ամի թագաւորութեանն իւրում*, էջ 26 *ի մեռասաներորդ ամի թագաւորութեանն իւրում*, էջ 53 *յերկոտասաներորդ ամի հայրապետութեան իւրում* էջ 86 *յուս կրճաւորի միում*, էջ 122 *ի տուն հօր մերում* էջ 66

ռականով 2) ուղիղ խնդիրը դրվում է հայցականով, իսկ այն անձը, որից ուզում են նույնպես հայցականով, բայց *ի* նախդիրով Առաջին կառուցվածքի օրինակներ *ի պարոնէն պիտի ուզեն* 17_{15} *ոչ կարեն յայրկէն քնաւ իրք ուզել* 19_{16} Երկրորդ կառուցվածքի օրինակներ *ուզել զհայրենիքն ի յայն որ ունայ* 17_{14} *թէ յումեք ապրնայն ուզէին* 17_{16} *որ ի պարոնութիւնն ուզվի* 17_{20} Առաջին կառուցվածքը բուն հայերեն է երկրորդը կարող էր առաջանալ "demander quelque chose á quelqu'un" ֆրանսերեն կառուցվածքի ազդեցութեամբ, որ կարող էր առկա լինել Անտիոքի ասիղների հֆրանս բնագրում

§446 3) *Առանձին ժամանակների և եղանակների կիրառութիւնը* - Ժամանակները համապատասխան եղանակներով կիրառութեան տեսակետից հիմնականում շարունակում են դասական լեզվի ավանդութիւները «Անտիոքի ասիղների» համար նոր է անցյալ կատարյալի հաճախակի կիրառութիւնը որպես կատարյալ ներկա կամ տրամաբանական կատարյալ Վկայութիւնները հետևյալներն են *եւ մնաց զրկօղն տուփսաց ներքեւ* 29_{11} *եւ մնաց յաստուծոյ եւ ի դարպասն համանքն* 31_{20} *նա մնաց ի պարոնին համանքն* 33_3 *եւ մնաց ի պարոնին համանքն* $33_{9\,10}$ *եւ մնաց ի պարոնութեան ի համանքն* 35_1 *նա մնացել է շահն ու վզենն ամէնն ի յիր հաւատոյն ի վերայ* 83_{20} *նա զիտելի է որ ապա հազաւ զմեղանքն* 29_{17} *նա հազաւ զմեղանքն* 31_7 *նա ահա որ հազաւ զմեղանքն* 31_{20} *նա անդրէն հազաւ զմեղանքն* 35_1 *նա եկաւ ի ժամն ի հարկէ* 25_{21} *եւ եկաւ ի պարտուց* 9_{24} *նա ահա որ եկաւ այտ քրայթոտ ի դարպասէն, ու ի յիրենց շնին ընկաւ* 33_{67} *նա ժամ եղաւ իր* 51_4 *նա եղաւ* 51_{18} *ու հերիք եղաւ* 11_{34} *եւ ազգն քնաւ եկել են* 49_{15} *նա մշտնջենաւոր կորոյս զայն իրքն* 57_{11} *նա կորոյս զքրայթին* 59_8 *նա սպկիկ կորոյս* 67_1 *թէի չի կորոյս* 13_{22} *նա զնաց կորեցաւ* 81_{11} *նա մէկայլին բանն ամրցաւ* 69_6 *նա իր խիամ ազատեցաւ* 67_3 *նա լուծեցաւ դատաստանն* 67_{15} *նա ահա որ ի վերայ նորա հաստատեցաւ* 67· *նա կորեցաւ* 67_{12} *նա ահա որ ճշմարտեցաւ վկայութիւն* 29_{10}

Ուշագրավ է որ բոլոր բերված օրինակները վերջադաս կամ հետևանքի երկրորդական նախադասութիւններ են

§447 *Բայանուններ* - Դերբայների կիրառութիւնն էական բայի հետ միասին շատ ավելի տարածված և ընդհանուր է, քան հին հայերենում Պետք է նշածել այն դերի մասին, որ խաղում է անորոշ դերբայը ժխտական խոնարհման ժամանակ, ինչպես նաև դերբայների օգնութեամբ կազմված

բազմաթիվ ժամանակների մասին Կիլիկյան հայերենն այս տեսակետից մոտենում է արդեն նոր հայերենին

§448 Ինքնուրույն գործածության մեջ, սակայն, որպես ամբողջ նախադասության ներկայացուցիչ, հին հայերենի հետ համեմատած, բայանունները տեղի են տվել Այսպես՝ *ի + անորոշ դերբայ* հին հայերեն կառուցվածքը, ժամանակի երկրորդական նախադասության նշանակությամբ, չի պահպանվել կիլիկյան հայերենում Այն փոխարինվել է իսկական, շաղկապով ներմուծվող երկրորդական նախադասությամբ Շաղկապով երկրորդական նախադասությունը փոխարինում է մասամբ նաև դիմավոր բայից կախման մեջ գտնվող անորոշ դերբային Այսպես, օր, հին լեզվի մեջ անդեմ *պիտի*-ն միշտ պահանջում է անորոշ դերբայ Կիլիկյան հայերենում, սակայն պահանջվում է ստորադասական երկրորդական նախադասություն՝ *որ* շաղկապով կամ առանց դրա Օր, *պիտի որ առնու* 55_{15}, *պիտի որ ունիայ* 19_{11} *պիտի լինի* 47,- Անհետացել է նաև դասական լեզվի համար այնքան բնորոշ ինքնուրույնաբար գործածվող անցյալ դերբայը դիմավոր բայի իմաստով - *եալ* վերջածանցով դասական դերբային համապատասխանող *-ել* վերջածանցով կիլիկյան դերբայը կարելի է գտնել միայն էական բայի հետ *միասին բաղադրյալ ժամանակներում*· Հին հայերենին հատուկ բայարձակ դերբայական կառուցվածքների տեղ կիլ հայերենում երևան են գալիս դիմավոր բայով երկրորդական նախադասությունները Նախադասության և պարբերության կառուցվածքը, դասական լեզվի հետ համեմատած, դառնում է դրանով ավելի պարզ ու պակաս բազմազան, բայց միաժամանակ պակաս ծանր

§449 Ինքնատիպ տեսք է ընդունում կիլ հայերենի բարդ նախադասության կառուցվածքը հաճախակի հանդիպող շաղկապող բառերի շնորհիվ Արդեն վերևում /Զևաբ §316/ *որ* շաղկապը ներկայացվել է որպես հետևանքի, նպատակի և պատճողական նախադասություններ ներմուծվող մի բառ-մասնիկ, որ դրվում է դաս *թէ, եթէ, զի, որպէս զի* և այլ շաղկապների փոխարեն Հմմտ Բառարանը Նոր է նաև հետևյալ շարահյուսական օրենքը *ենթադրական, ժամանակի և հարաբերական պարբերությունների հետադաս երկրորդական նախադասությունները կանոնավոր ձևով ներմուծվում են նա (նայ) շաղկապական բառով* Դասական լեզվի մեջ դրա տեղում դրվում է, ինչպես հայտնի է, *եւ* շաղկապը, բայց միայն մեկ-մեկ, իսկ *նա* մասնիկի կիրառությունն այդ դերում կիլիկյան հայերենի համար պարտադիր է

ա) Պայմանի երկրորդական նախադասութիւններից հետո *ինձ լիճն երթնու՝ նա քիւր է սպկիկ* 11_9 *ինձ կարենան գտնուլ գինք ի տեղն՝ նա մէկն ասէ* 15_{14} *ինձ չգայ՝ նա պատեհ է որ ապա դարպասն յառաջ երթայ* 15_{24} *եւ ինձ ոչ՝ նա համբերէ պարոնն* 15_{26} *եւ ինձ տղայ կենայ տիկնոջն՝ նա պիտի որ ունենայ տիկինն զմէկայլ կէսն զպարնայն* 19_{11} Նոյն ձեւով էջ 9_{21}, 11_{10}, $21_{3\,13}$, $23_{7\,15}$, $25_{8\,10}$, $27_{6\,9}$, $29_{5\,7}$ և այլն, ապա հաճախ ԴԳ, ՋԶԱ, ՋԶՔ, Գիրք վասա , Մկ Հեր, Սմբ Ժամ և այլն Առանձին դէպքերում *նա* մասնիկն ուժեղացնելու համար կիրառվում են *ապա* և *ահա* բառերը *եւ ինձ խիսնն ֆայլէ ու չկուվի՝ նա ահա որ սուտ է* 61_{17} *եւ ինձ լիճ չկամենայ երթնուլ՝ նա ապա բերեն գչավուշն* 11_{20}

բ) Ժամանակի երկրորդական նախադասութիւններից հետո *երբ այնէ չավուշն գհրաւէրքն՝ նա պարտ է* 9_{16} *երբ լիճ ճորտն վաճառուն տարոյ լինի՝ նա այլ ծառութիւն չպարտի* 11_{16} *յորժամ ու գայ՝ նա մինակ ի ժամն առնու անյապաղ* 13_{28}

գ) Հարաբերական նախադասութիւններից հետո *վասն գի այն որ գապրանքն կալել լինի տարի մի եւ օր մի՝ նա իսկի իր պակասուն չպարտի որ այնէ* 17_{18} *որ իրաւ ու մօտեւոր լինի՝ նայ այն առնու գիրքն* 69_3[166]

§450 Որքան էլ ուժեղ լինի օտար լեզուների ազդեցութիւնը կիլիկեան հայերենի վրա, այն գրեթե չի դիպել շարահիւսական կառուցվածքին, որ հիմնականում մնացել է մաքուր հայկական, ի տարբերութիւն, օրինակ, արևմտահայ գրական լեզվի, որի շարահիւսութիւնը, ինչպես հայտնի է, օսմանեան թուրքերէն է[167] Մեր կիլիկեան աղբիւրներում մեկ-մեկ երևացող ոչ հայերեն շարահիւսական գծերն այլալեզու բնագրերի գրքային նմանութիւններն են, և խորթ են մնում բուն ժողովրդական լեզվին

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Էջ 29, §7 տողատակի ծան 3 Հին հայերէն *ո*-ի *նոր արևելահայերէն* համապատասխանութիւնից ելնելով, Շրյողերն, ինչպես հայտնի է, նույն հնչյունական արժեքը տարածել է նաև դասական հին հայերենի վրա, և դա-

---

[166] Հմմտ նույն ֆունկցիան ունեցող *նէ* մասնիկը նոր հայերենում /Տաճկ /, Այտ Բ 99 Նույնատիպ կիրառութիւն ունեն նաև ռուսերէն ro, գերմաներեն da

[167] Արևմտահայերենը ենթարկվել է թուրքերենի ուժեղ ազդեցութիւնը Ինչպես հայտնի է տաճկահայերը նույնքան լավ են խոսում օսմանյան թուրքերեն, որքան հայերեն

սական *n*-ն ամենուրեք տառադարձրել է որպես üe: Հմմտ Schröder Thes. ling arm. էջ 13

Էջ 63. տող ծան 11 Առանձնապես ուժեղ է արտահայտված այդ երևույթը կենտրոնական հայերենում, հատկապես *Արարատյան* բարբառում, ինչպես դա երևում է Նավասարդյանցի Թիֆլիսում հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներից» վերցված հետևյալ օրինակներից *ֆոտ, ֆուղը* (= դաս *հոտ, հուն*) է 4, 39.61 93 *ֆող, ֆողը* (= դաս *հող, հողն*) Զ 21, 22 է 42, 51 *սեւաֆողը* (= դաս *սեւահողն*) է 97 *ֆորըլի* (= դաս *որսալի*) է 96 Ասա *ֆոգի* (= դաս *հոգի*) Զ 4_{21}, $21_{15\ 10}$, է 16_{20}, $25_{18\ 19}$, 37_{3}, 97_{18} *անֆոգի* (= դաս *անհոգի*) է 93_{16} *ֆողէց-ֆոգի* Զ $61_{9\ 20}$, է 7_{1a}, *ֆոր, ֆորը* (= դաս *հոր, հորն*) է 30_{21}, 97_{6} *ֆորումը, ֆորումն* ներգ եզ է $30_{21\ 26\ 28}$ *ֆորերում* ներգ հոգն է 26_{1} *ֆորէ* (= մհ *հորէ*) եզ 3-րդ դ ներկա Զ 21_{25} *ֆորնց* (= մհ *հորնց*) եզ 3-րդ դ անց կատ Զ $15_{7\ 11}$, է 95_{9}

Էջ 80, §84 ծան սեռ san, ուղղ sun սեռ derután, ուղղ derut^{ci}en և այլ դեպքերի հետ կարելի է համադրել 3-րդ դ դերանվան այնպիսի ձևեր, որտեղ նհ *a* ձայնավորին համապատասխանում է *եա* երկբարբառը վերջին վանկում եզ-ար հայց *իրան*, բացառ *իրանից*, գործ *իրանով* ներգ *իրանում* Հոգն ուղղ *իրանք*, սեռ *իրանց*, տր-հայց *իրանց* բացառ *իրանցից* գործ *իրանցով*, ներգ *իրանցում* Այդպես է վիճակը գրական արևելահայերենում /Պալաս էջ 136/ Մի քիչ տարբեր է Ագուլիսի բարբառը սեռ *իրան*, տր-հայց *իրան*, *իւրան*, բացառ *իրանից*, *իրանանից* և *իւրանից*, գործ *իրանաւ*, ներգ *իրանում* և այլն /ըստ Սարգ Ագ բարբ/ ապա ԹՖ /ըստ Том Тифл диал §358/ եզ սեռ iran /ir և ira ձևերի կողքին/, տր-հայց iran, գործ irmov, բացառ irmen, ներգ iranum հոգն ուղղ irank^{c}, սեռ-տր-հայց iranç, գործ irançmov, բացառ irançmen և irançemen, ներգ irançum

Էջ 135, տող ծան 25 Դիոնիսոս Թրակացու հհ թարգմանության մեջ /ed. Cirbied, Paris, 1830/ վկայված ոչ դասական լեզվանյութին պատկանում է նաև *նը* նախդիրը /զուգահեռ ձևն է *նըն*/ /Դիոն Թր էջ 54, §19/ Այդ մասնիկը հաճախ երևում է հհ փիլիսոփայական գրականության մեջ /հատկապես Դավիթ Անհաղթի մոտ/ և ձևով այնպես, որ վերջինս, որպես ներգոյականի կանոնավոր նախածանց, ձայնավորով սկսվող գոյականներում ճշգրտորեն համապատասխանում է *բաղաձայնով* սկսվող գոյականների *ի* նախդրին Օրինակներ տե՛ս վերևում *Էջ 239* տողատակի ծան Հատկանշական է, որ Ագուլիսի հհ բարբառում ձայնավորով սկսվող հիմքերը սահմանականը կազմում են *ն*-նախածանցի օգնությամբ օրինակ, ըստ Патк. Диал., էջ 47 հայ *արել* /= կիլ *այնել*/ սահմ ներկա *նարամ-ըմ, -ըս, -այ* և

այլն, փոխ. ստորադաս. ներկա *արիմ, արիս, արի* և այլն. *լրհել* /= կիլ. *ասել*/ սահմ. ներկա *նահամ-լմ, -լս, -այ* և այլն, փոխ. ստորադաս. ներկա *ահիմ, ահիս, ահի* և այլն. *լրվալ* բայից /= կիլ. *երեւիլ*/ սահմ. ներկա *նլրվամ-լմ, -լս, -այ* և այլն, փոխ. ստորադաս. ներկա *լրվիմ, լրվիս, լրվի* և այլն. սակայն. առանց *ն-* նախածանցի. *տիանալ* բայից սահմ. ներկա *տիանամ-լմ*, ստորադաս. ներկա *տիանիմ*: Ադուլիսի բարբառի -am վերջավորությամբ *դերբայը հնչյունաբանական առումով համապատասխանում* է -um վերջավորությամբ արևելահայերեն դերբային, այսինքն՝ ներգոյական է, և հետևաբար հիշատակված *ն-ն* ներգոյականի նախածանց է և նույնական է փիլիսոփայական և քերականական գրականության մեջ երևացող *ն* կամ *նը-* նախածանցի հետ: Այդ մասին հմմտ. արդեն Патк. Диал., էջ 20: Ուրեմն, հին հայերենում վկայված այդ ձևերը ոչ մեծ քերականների կողմից հնարված բաներն են /!/, այլ վստահությամբ կարող են դիտվել որպես հին բարբառային, մի վկայություն ևս հին հայերենի բարբառային տրոհման մասին: *-ն /= նը, նըն* Դիոն. Թր./ նախդիրը բնականաբար, ինչպես նախապես ընդունել է դեռևս Պատկանյանը /Патк. Диал., էջ 20/, նույնական է և համադրելի հուն. ’εν, լատ., գոթ., գերմ. in և այլ ներգոյականի մասնիկների հետ: Արդեն Դավիթ Անհաղթի մոտ բաղաճայնով սկսվող գոյականները չեն ընդունում այդ նախդիրը, որի կիրառությունը գրեթե առանց բացառության սահմանափակված է ձայնավորով սկսվող բառերով, մի դիրք, որի մեջ նա արդեն վաղուց պետք է միակցվեր գոյականի հիմքի հետ: Միայն նրա համար, որ այդ մասնիկները լեզվական գիտակցության մեջ վաղուց մարել էին որպես այդպիսիք, և համարվում էին նրանց հետ միակցված գոյականի անբաժանելի մաս, վերջիններս կարող էին պահպանվել քարացած ձևով և գոյատևել այն ժամանակ, երբ հին լեզվի լծեքծան բոլոր նախածանցները դուրս էին մղվել նոր հայերենից:

Էջ 185, §245: Որպես միջին հայերեն vi- հոգնակիների ժամանակակից շարունակություն, Ակնա բարբառում հանդիպում են նաև դեպքեր, ինչպես *դռուիք, շնուիք, տնուիք*. ըստ Ճանիկ., էջ 284:

Էջ 187, §247: Հմմտ. նաև նհ. *կըճ-տի-ք* /<*կըն-տի-ք/, նհ. *տըկ-տի-ք* «արմատներ» Ակնա բարբառում /ըստ Ճանիկ., էջ 284/:

Էջ 187, §248: Որպես -vədi-ով հին ձևերի նոր հայերեն շարունակություն հմմտ. Ակնա բարբառի հետևյալ ձևերը. *ներ-ուըտաք* /<*ներ-ուը-տի-աք/ «արմատներ», *քուր-ուըտաք* /<*քուր-ուըտի-աք/ «քույրեր», *տալ-ուըտաք* /<*տալ-ուըտի-աք/ «տալեր». սակայն *աղբար* բազմավանկ բառից *աղբր-տաք* /=*աղբար-տի-աք/ հոգնակին, ըստ Ճանիկ., էջ 283:

